

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2006-2008 թթ

Հ² î àđ I

ՀՏԴ 374:343(479.25))
ԳՄԴ 67.99(2Հ)3+67.99(2Հ)8
Վ 718



Սույն տպագրությունը հնարավոր է դարձել
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության
ֆինանսավորմամբ:

**Վճռաբեկ դատարանի քրեական
Վ 718 գործերով որոշումների ժողովածու.-Եր
Աստղիկ, 2009թ.**

Ժողովածուն կազմեց
Հայաստանի Հանրապետության
Դատական դեպ³ րտամենտի կազմակերպա-իրավական
վարչության պետ
Մերգեյ Մարաբյանը

ISBN 978-9939-50-100-0

ԳՄԴ 67.99(2Հ)3+67.99(2Հ)8

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատախիրավական բարեփոխումների առանցքային հանգրվաններից մեկը ՀՀ դատական օրենսգրքի ընդունումն էր (2007թ. փետրվարի 21): Ի թիվս բազմաթիվ այլ նորությունների՝ այդ իրավական ակտն ամրագրեց հայրենական իրավաբանության համար հիրավի հեղափոխական իրավանորմեր: Այսպես, Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ՀՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները): Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Այսպիսով մեր երկրում դրվեց դատական-նախադեպային իրավական համակարգի ձևավորման հիմնաքարը: Իսկ պատմությունը վկայում է, որ շարունակական զարգացում են ապրել հատկապես այն իրավական համակարգերը, որոնցում արժանի տեղ են ունեցել դատավորների մշակած նախադեպային աղբյուրները՝ սկսած Հին Հռոմից մինչև մերօրյա արևմտյան ժողովրդավարություններ ու մարդու իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական ինստիտուտներ: Միևնույն ժամանակ, այդ զարգացումն ինքնանպատակ չէ. այն կոչված է բարձրացնելու իրավական վեճերի լուծման կանխատեսելիության մակարդակը և որպես արդյունք՝ ընդարձակելու մարդու իրավական պաշտպանվածությունը:

ՀՀ դատական օրենսգրքի նշված իրավակարգավորումը ենթադրում է ոչ միայն դատարանի դերի բարձրացում, այլև դրան գուգահեռ դատական իշխանության կրողների պատասխանատվության, դատական ակտերի որակի բարձրացում: Այն ենթադրում է, որ դատական ակտերը պետք է մատչելի դառնան իրավաբանական հասարակության համար, որ իրավաբանները պետք է ձեռք բերեն ու խորացնեն նախադեպերի հետ աշխատելու կարողություններ ու հմտություններ:

Նշված խնդիրները մեկ օրում չեն կարող լուծվել: Դրանք պահանջում են երկարատև նպատակալաց աշխատանք, իրավական արժեքաբանության հետևողական վերախնաստավորում: Ընդ որում, դրանց լուծման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նպատակային աշխատանքով: ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերը կարևոր են ոչ միայն այն պատճառով, որ դրանցում պարունակվող հիմնավորումները կրում են պարտադիր բնույթ, այլև այն պատճառով, որ Բարձրագույն դատական ատյանը բնականորեն պետք է ստանձնի իրավամտածողության վերափոխման առաջամարտիկի դերը:

Սույն հատորի նշանակությունն անհրաժեշտ է դիտարկել նշված գործընթացների համատեքստում: Ժողովածուն, մի կողմից, ամրագրում է ձեռք բերված հաջողությունները, իսկ մյուս կողմից, հիմք հանդիսանում նորերի համար:

Ժողովածուում զետեղված են բոլոր այն դատական ակտերը, որոնք ՀՀ վճռաբեկ դատարանը քրեական գործերով կայացրել է 2006-2008 թթ.: Ժողովածուի հետ աշխատանքը հեշտացնելու նպատակով դատական ակտերը ներկայացվում են առարկայական դասակարգմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի Քրեական պալատի որոշումների առաջին ամբողջական ժողովածուն հնարավոր է դարձել Ամերիկյան իրավաբանների միության Իրավունքի գերակայության նախաձեռնության (ABA/ROLI) հայաստանյան գրասենյակի հետ մեր երկարատև ու արդյունավետ համագործակցության շնորհիվ:

**ՀՀ վճռաբեկ դատարանի
Քրեական պալատի նախագահ,
Իրավագիտության թեկնածու,
ՀՀ վաստակավոր իրավաբան
Դ.Զ.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

**Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի
քրեական պալատի 2006 թվականի որոշումներ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

I. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդված՝ անհրաժեշտ պաշտպանությունը

1. Արման Սիերի Խաչատրյանի շահերի պաշտպան, փաստաբան Արթուր Աթարբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. հուլիսի 4-ի դատավճռի դեմ (*Արման Սիերի Խաչատրյանի վերաբերյալ 2006թ. հոկտեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԸ-223/06*).....

Էջ 9

2. Արթուր Հարությունի Բարսեղյանի վճռաբեկ բողոքը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 02-ի դատավճիռների դեմ (*Արթուր Հարությունի Բարսեղյանի վերաբերյալ 2006թ. հոկտեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԸ 273/06*)

Էջ 16

II. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը

1. Դատախազ Վ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը Դավիթ Լեմսիկի Փաշինյանի վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 30-ի դատավճռի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 13-ի դատավճռի դեմ (*Դավիթ Լեմսիկի Փաշինյանի վերաբերյալ 2006 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը, գործ ՎԸ - 231/06*)

Էջ 4

III. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված՝ համաներումը («Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2006թ. հուլիսի 7-ի որոշումը)

1. Հակոբ Սմբատի Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. նոյեմբերի 22-ի դատավճռի դեմ (*Հակոբ Սմբատի Կարապետյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-341/06*)

Էջ 23

IV. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդված՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը

1. Արթուր Հարությունի Բարսեղյանի վճռաբեկ բողոքը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 02-ի դատավճիռների դեմ (*Արթուր Հարությունի Բարսեղյանի վերաբերյալ 2006թ. հոկտեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԲ 273/06*)

Էջ 16

V. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը

1. Արման Միերի Խաչատրյանի շահերի պաշտպան, փաստաբան Արթուր Աթաբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. հուլիսի 4-ի դատավճռի դեմ (*Արման Միերի Խաչատրյանի վերաբերյալ 2006թ. հոկտեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԲ-223/06*).....

Էջ 9

VI. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված՝ խուլիգանությունը

1. Արման Միերի Խաչատրյանի շահերի պաշտպան, փաստաբան Արթուր Աթարբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. հուլիսի 4-ի դատավճռի դեմ *(Արման Միերի Խաչատրյանի վերաբերյալ 2006թ. հոկտեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԲ-223/06)* Էջ 9

Գատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդված՝ պաշտպանին և ներկայացուցչին վարույթից հեռացնելը

1. Էդգար Արմենի Հովհաննիսյանի և Գևորգ Սարգսի Սարգսյանի շահերի պաշտպան, փաստաբան Կրոմվել Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. փետրվարի 2-ի որոշման դեմ *(Էդգար Արմենի Հովհաննիսյանի և Գևորգ Սարգսի Սարգսյանի վերաբերյալ 2006թ. նոյեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ- 251/06)* Էջ 47

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված՝ ապացուցման ենթակա հանգամանքները

1. Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի, Արայիկ Ջալյանի, վերջիններիս պաշտպաններ Ջարուհի Փոստանջյանի և Ստեփան Ոսկանյանի, տուժողի իրավահաջորդ Մովսես Սկրտումյանի ներկայացուցիչ, փաստաբան Կարապետ Աղաջանյանի վճռաբեկ բողոքները Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մայիսի 18-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 30-ի դատավճիռների դեմ *(Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի, Արայիկ Ջալյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-176/06)* Էջ 67

III. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդված՝ գործերի նորոգման հիմքերն ու ժամկետները նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Միսակ Մխիթարի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեա-

կան օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 15-ի դատավճռի դեմ *(Միսակ Մխիթարի Խաչատրյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-340/06)*.....

Էջ 100

IV. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդված՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերի լուծման կարգը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Արայիկ Հնայակի Միմոնյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ *(Արայիկ Հնայակի Միմոնյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-329/06)*.....

Էջ 63

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Գարեգին Յուրիկի Միսակյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ *(Գարեգին Յուրիկի Միսակյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-331/06)*.....

Էջ 93

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Արշակ Վազգենի Հակոբյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ *(Արշակ Վազգենի*

Հակոբյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-333/06)..... Էջ 96

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Յուրի Սուրենի Սկրտչյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ (**Յուրի Սուրենի Սկրտչյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-328/06).....** Էջ 104

5. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Ռուբիկ Առաքելի Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ (**Ռուբիկ Առաքելի Հովհաննիսյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-330/06).....** Էջ 108

6. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Կարեն Սամվելի Մարդարյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ (**Կարեն Սամվելի Մարդարյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-332/06).....** Էջ 112

V. Սեկնաբանվող իրավադրույթ - «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդված՝ հանձնված՝ անձի քրեական հետապնդման սահմանները

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հասմիկ Գուրգենի Կուրդինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճիռների դեմ **(Հասմիկ Գուրգենի Կուրդինյանի վերաբերյալ 2006թ. հոկտեմբերի 13-ի որոշումը, գործ ՎԲ-234/06).....** Էջ 30

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Մարտին Լյովայի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. նոյեմբերի 11-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. դեկտեմբերի 20-ի դատավճիռների դեմ **(Մարտին Լյովայի Միքայելյանի վերաբերյալ 2006 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԲ-271/06).....** Էջ 36

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Սպարտակ Ջանվելի Ալավերդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և 117-րդ հոդվածով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճիռի դեմ **(Սպարտակ Ջանվելի Ալավերդյանի վերաբերյալ 2006թ. նոյեմբերի 24-ի որոշումը, գործ ՎԲ-279/06).....** Էջ 42

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արտակ Ռաֆիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 9-ի դատավճիռի դեմ **(Արտակ Ռաֆիկի Բրուտյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը ՎԲ - 293/06) ...** Էջ 52

5. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Արտյոմի Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով Երևան քաղաքի Էներունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի

2005 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճռի դեմ (*Կարեն Արսլանի Կարակեյյանի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը ՎԲ-320/06*)..... Էջ 57

6. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թվականի փետրվարի 23-ի դատավճռի դեմ (*Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ 2006 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը, գործ ՎԲ-324/06*)..... Էջ 115

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2007 թվականի որոշումներ

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

I. Սեկնարանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հազարապետ Ալբերտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին և 271-րդ հոդվածի 1-ին մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 22-ի դատավճռի դեմ (*Հազարապետ Ալբերտի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-50/07*) Էջ 127

2. Ռոբերտ Սուրենի Խատոյանի վճռաբեկ բողոքը Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ (*Ռոբերտ Սուրենի Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-55/07*) Էջ 156

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքն Արթուր Ալբերտի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 21-ի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 14-ի դատավճիռների դեմ **(Արթուր Ալբերտի Սարգսյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-142/07)** Էջ 210

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 7-ի դատավճիռի դեմ **(Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-145/07)** Էջ 216

5. Անուշ Արարատի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 8-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի դատավճիռների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը **(Անուշ Արարատի Մինասյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-185/07)** Էջ 244

6. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճիռի դեմ **(Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-201/07)** Էջ 264

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդված՝ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Ալբերտ Արիստակեսի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապե-

տության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճռի դեմ *(Ալբերտ Արիստակեսի Ստեփանյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը, գործ ՎԲ-118/07)*..... Էջ 174

III. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդված՝ հանցագործության հասկացությունը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Տիգրան Ժորայի Շնավոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճռի դեմ *(Տիգրան Ժորայի Շնավոնյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ - 107/07)*..... Էջ 189

IV. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդված՝ հանցագործությունների կրկնակիությունը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճռի դեմ *(Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ - 149/07)* Էջ 229

V. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդված՝ հանցագործությունների ռեցիդիվը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճռի դեմ *(Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ - 149/07)*..... Էջ 229

2. Տիգրան Արտավազի Դանիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 235-

րոյ հողվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 19-ի դատավճռի դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Գարեգին Մարգարյանի միջոցով դատապարտյալ Տիգրան Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը *(Տիգրան Արտավազդի Դանիելյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-187/07)*.....

Էջ 275

VI. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդված՝ տուգանքը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Ռուշան Վարդգեսի Նիկողոսյանի նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով նշանակված 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ տուգանքը 270 (երկու հարյուր յոթանասուն) ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով փոխարինելու և պատժի կատարումը կասեցնելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 3-ի որոշման դեմ *(Ռուշան Վարդգեսի Նիկողոսյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ - 171/07)*.....

Էջ 249

VII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդված՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները

1. ՀՀ զինվորական դատախազ Ա.Խաչատուրյանի վճռաբեկ բողոքը Մանուշակ Վարդի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռի դեմ *(Մանուշակ Վարդի Աբրահամյանի վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 6-ի որոշումը, գործ ՎԲ-63/07)*.....

Էջ 63

VIII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդված՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները

1. Ռոբերտ Սուրենի Խատոյանի վճռաբեկ բողոքը Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքն-

նիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ
(Ռոբերտ Սուրենի Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-55/07) Էջ 156

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Պարույր Ստյոպայի Բայրամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ *(Պարույր Ստյոպայի Բայրամյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը, գործ ՎԲ-84/07)* Էջ 168

IX. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդված՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները

1. Ռոբերտ Սուրենի Խատոյանի վճռաբեկ բողոքը Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ *(Ռոբերտ Սուրենի Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-55/07)* Էջ 156

2. Հրանտ Լևոնի Գաբրիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռի դեմ դատապարտյալ Հրանտ Գաբրիելյանի վճռաբեկ բողոքը *(Հրանտ Լևոնի Գաբրիելյանի վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 6-ի որոշումը, գործ ՎԲ-65/07)*..... Էջ 151

X. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը

1. Ռոբերտ Սուրենի Խատոյանի վճռաբեկ բողոքը Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ

(Ռոբերտ Մուրեանի Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-55/07) **Էջ 156**

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 7-ի դատավճռի դեմ *(Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-145/07)* **Էջ 216**

3. Անուշ Արարատի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 8-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի դատավճիռների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը *(Անուշ Արարատի Մինասյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-185/07)* **Էջ 244**

XI. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված՝ պատիժ նշանակելը հանցանքների համակցությանը

1. Տիգրան Արտավազդի Դանիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 19-ի դատավճռի դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Գարեգին Մարգարյանի միջոցով դատապարտյալ Տիգրան Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը *(Տիգրան Արտավազդի Դանիելյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-187/07)* **Էջ 275**

XII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հազարապետ Ալբերտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին և 271-րդ հոդվածի 1-ին մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին

ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 22-ի դատավճռի դեմ
(Հազարասպետ Այբերտի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-50/07) Էջ 127

2. Սուսաննա Սարգսի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հունիսի 22-ի դատավճռի դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Արթուր Ղազարյանի միջոցով բերված դատապարտյալ Սուսաննա Ներսիսյանի վճռաբեկ բողոքը *(Սուսաննա Սարգսի Ներսիսյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 12-ի որոշումը, գործ ՎԲ-124/07)* Էջ 179

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճռի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 11-ի դատավճռի դեմ *(Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ - 139/07)* Էջ 198

4. Թամարա Իշխանի Տեր-Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճռի դեմ հավատարմագրված փաստաբան Արմենուհի Գևորգյանի միջոցով դատապարտյալ Թամարա Տեր-Գրիգորյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը *(Թամարա Իշխանի Տեր-Գրիգորյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-192/07)* Էջ 234

5. Գագիկ Հրաչի Ազատյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը *(Գագիկ Հրաչի Ազատյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-195/07)* Էջ 254

6. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռի դեմ *(Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-201/07)*

Էջ 264

XIII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը

1. Արմենուհի Գևորգյանի միջոցով Հրաչ Զալաբի Զալաբյանի բերած վճռաբեկ բողոքը դատապարտյալ Հ.Զալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնելու և Հ.Զալաբյանին համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ *(Հրաչ Զալաբի Զալաբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ-136/07)*

Էջ 406

2. Իշխան Հովսեփի Ռուշանյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը *(Իշխան Հովսեփի Ռուշանյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-179/07)*

Էջ 240

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը Վարդան Միգիչի Մուխսիխաչոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշման դեմ *(Վարդան Միգիչի Մուխսիխաչոյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ - 212/07)*

Էջ 259

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը Արամայիս Հենրիկի Միրիբյանին պատժից պայմանական

վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին
ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումն անփոփոխ թողնելու մա-
սին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշման դեմ
*(Արամյախա Հենրիկի Միրիբյանի վերաբերյալ 2007 թվականի
նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ - 213/07)*

Էջ 270

**XIV. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 104-
րդ հոդված՝ սպանությունը (34-րդ հոդված՝ հանցափորձը)**

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռա-
բեկ բողոքը Պարզև Սամվելի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական
օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի առաջին
ատյանի դատարանի 2005 թվականի մարտի 14-ի և ՀՀ քրեական և
զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հու-
նիսի 16-ի դատավճիռների դեմ *(Պարզև Սամվելի Մանուկյանի
վերաբերյալ 2007թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-61/07)*

Էջ 138

**XV. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 175-
րդ հոդված՝ ավազակությունը (3-րդ մաս, 4-րդ կետ)**

1. Տիգրան Արտավազդի Դանիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական
օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 235-
րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վե-
րաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 19-ի դատավճռի դեմ
Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Գարեգին
Մարգարյանի միջոցով դատապարտյալ Տիգրան Դանիելյանի բերած
վճռաբեկ բողոքը *(Տիգրան Արտավազդի Դանիելյանի վերաբերյալ
2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-187/07)*

Էջ 275

**XVI. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 177-
րդ հոդված՝ գողությունը (3-րդ մաս, 3-րդ կետ)**

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռա-
բեկ բողոքը Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական
օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի
Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի
մարտի 29-ի դատավճռի դեմ *(Արմեն Սամվելի Պապիկյանի
վերաբերյալ 2007թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ -
149/07)*

Էջ 229

XVII. Սեկնաբանվող իրավադրույթ - 1961 թվականի քրեական օրենսգրքի 183-րդ հոդված՝ իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը

1. Արմեն Ալբերտի Ունուսյանի կողմից հավատարմագրված փաստաբան Ա.Ղազարյանի միջոցով բերված վճռաբեկ բողոքը 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշման դեմ *(Արմեն Ալբերտի Ունուսյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-151/07)*.....

Էջ 203

XVIII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդված՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Աղասու Փալանջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Պետրոս Արմենի Հարությունյանի և Հակոբ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի դատավճռի դեմ *(Կարեն Աղասու Փալանջյանի, Պետրոս Արմենի Հարությունյանի և Հակոբ Արմենի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-05/07)*.....

Էջ 120

XIX. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված՝ խուլիգանությունը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Աղասու Փալանջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Պետրոս Արմենի Հարությունյանի և Հակոբ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական

օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի դատավճռի դեմ *(Կարեն Աղասու Փայանջյանի, Պետրոս Արմենի Հարությունյանի և Հակոբ Արմենի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-05/07)*.....

Էջ 120

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կոլյա Գևորգի Մաթոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 113-րդ 1-ին մասերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի դեմ *(Կոլյա Գևորգի Մաթոսյանի վերաբերյալ 2007թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-33/07)*

Էջ 132

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճռի դեմ *(Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ 2007 թվականի ապրիլի 6-ի որոշումը, գործ ՎԲ-85/07)*

Էջ 143

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Սերյոժա Պատվականի Հովակիմյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 2-ի դատավճռի դեմ *(Սերյոժա Պատվականի Հովակիմյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ-125/07)*

Էջ 184

XX. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված՝ թմրամիջոցների, հոգեմեդրոնոն նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Մարտիկ Հակոբի Բոլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ և 215-րդ հոդվածի 2-րդ մասերով ՀՀ

քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 6-ի դատավճռի դեմ *(Մարտիկ Հակոբի Բոյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-135/07)*

Էջ 222

XXI. Մեկնաբանվող իրավադրույթ – ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդված՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Մամվել Սուրենի Ռևազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 5-ի դատավճռի դեմ *(Մամվել Սուրենի Ռևազյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ-112/07)*

Էջ 193

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդված՝ քրեական դատավարական օրենքի ներգործությունը ժամանակի մեջ

1. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը Աշոտ Հայկազի Հարությունյանին պատիժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդությունը բավարարելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 14-ի որոշման դեմ *(Աշոտ Հայկազի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը, գործ ՎԲ-111/07)*

Էջ 383

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված՝ քրեական դատավարության լեզուն

1. Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռների դեմ *(Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-72/07).....*

Էջ 372

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը

1. Նախրա Վախթանգի Գելաշվիլու վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռների դեմ (*Նախրա Վախթանգի Գելաշվիլու վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-72/07*).....

Էջ 372

IV. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդված՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից (5-րդ մաս)

1. Հենրիկ Ալբերտի Դանիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ (*Հենրիկ Ալբերտի Դանիելյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-08/07*)

Էջ 294

2. Արման Քրմոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշման դեմ (*Արման Քրմոյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ- 02/07*)

Էջ 289

3. Մնաց Ավետիսյանի, նրա ներկայացուցիչ, փաստաբան Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ (*Մնաց Ավետիսյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-59/07*)

Էջ 340

4. Վերոնիկա Սարգսյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ս.Համբարձումյանի 2007 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ (*Վերոնիկա Սարգսյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, ՎԲ - 96/07*).....

Էջ 356

5. Հրայր Միրզոյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման դեմ (*Հրայր Միրզոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-67/07*).....

Էջ 366

V. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդված՝ քաղաքացիական պատասխանողը

1. ՀՀ զինվորական դատախազ Ա.Խաչատուրյանի վճռաբեկ բողոքը Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճռի դեմ (*Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-150/07*)

Էջ 455

VI. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդված՝ թարգմանիչը

1. Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռների դեմ (*Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-72/07*).....

Էջ 372

VII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (կալանավորման հիմքերը)

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ. Սարգսյանի վճռաբեկ բողոքը Արամ Սեյրանի ճողորդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 351-րդ հոդվածով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ (*Արամ Սեյրանի ճողորդյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-132/07*)

Էջ 433

VIII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդված՝ կալանավորումը (կալանավորումը գրավով փոխարինելը)

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը մեղադրյալ Տարոն Ռազմիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տ.Հակոբյանին կալանքից գրավի կիրառմամբ ազատելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշման դեմ *(Տարոն Ռազմիկի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ-115/07)*.....

Էջ 419

IX. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդված՝ քաղաքացիական հայցի քննության ընթացքում կիրառվող օրենսդրությունը

1. Փայլակ Արգարի Էլիզարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ *(Փայլակ Արգարի Էլիզարյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-35/07)*.....

Էջ 312

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճռի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 11-ի դատավճռի դեմ *(Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ - 139/07)*

Էջ 198

3. Ռուզաննա Չուբարի Չաքարյանի կողմից հավատարմագրված փաստաբան Վ.Գևորգյանի միջոցով բերված վճռաբեկ բողոքը դատապարտյալներ Նարեկ Արտաշեսի Դազարյանի և Արման Գազիկի Համբարձումյանի վերաբերյալ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճռի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճռի դեմ *(Նարեկ Արտաշեսի Դազարյանի և Արման Գազիկի*

Հանրաքառման վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-178/07)..... Էջ 450

4. ՀՀ զինվորական դատախազ Ա.Խաչատուրյանի վճռաբեկ բողոքը Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճռի դեմ **(Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, գործ ՎԲ-150/07).....** Էջ 455

X. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված՝ քրեական գործի հարուցումը մերժելը (քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկումը)

1. Արմեն Աբրահամյանի վճռաբեկ բողոքը ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 07-ի որոշման դեմ **(Արմեն Աբրահամյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ- 30/07).....** Էջ 299

2. Էմմա Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշման դեմ **(Էմմա Կիրակոսյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ- 56/07).....** Էջ 330

3. Հրայր Միրզոյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման դեմ **(Հրայր Միրզոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-67/07).....** Էջ 366

XI. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդված՝ որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և կարգը

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և

271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճռի դեմ *(Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-46/07)*.....

Էջ 322

XII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը մեղադրյալ Տարոն Ռազմիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տ.Հակոբյանին կալանքից գրավի կիրառմամբ ազատելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշման դեմ *(Տարոն Ռազմիկի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ-115/07)*.....

Էջ 419

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ. Սարգսյանի վճռաբեկ բողոքը Արամ Մեյրանի Ճուղուրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 351-րդ հոդվածով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ *(Արամ Մեյրանի Ճուղուրյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-132/07)*

Էջ 433

XIII. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան

1. Վալերիկ Վազգենի Սարգսյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ - 12/07

2. Արման Քրմոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշման դեմ (*Արման Քրմոյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ- 02/07*) **Էջ 289**

3. Մնաց Ավետիսյանի, նրա ներկայացուցիչ, փաստաբան Սեղա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ (*Մնաց Ավետիսյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-59/07*) **Էջ 340**

4. Լևոն Քոչինյանի ներկայացուցիչ Արմեն Նավոյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Գանիելյանի 2007 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ (*Լևոն Քոչինյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-48/07*) **Էջ 345**

5. Վերոնիկա Սարգսյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ս.Համբարձումյանի 2007 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ (*Վերոնիկա Սարգսյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, ՎԲ - 96/07*)..... **Էջ 356**

XIV. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված՝ դատական քննության սահմանները

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվակա-

նի հունվարի 19-ի դատավճռի դեմ (*Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-46/07*)..... Էջ 322

XV. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը

1. Ռոբերտ Սուրենի Խատոյանի վճռաբեկ բողոքը Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ (*Ռոբերտ Սուրենի Խատոյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-55/07*) Էջ 156

XVI. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդված՝ առաջին ատյանի դատարանի՝ բողոքարկման ենթակա որոշումները (ուժը կորցրել է ՀՕ-270-Ն, 18.12.07)

1. Վալերիկ Վազգենի Սարգսյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Պողոսյանի 2006 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ (*Վալերիկ Վազգենի Սարգսյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ - 12/07*) Էջ 303

2. Արման Քրմոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշման դեմ (*Արման Քրմոյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ- 02/07*) Էջ 289

3. Արմենուհի Գևորգյանի միջոցով Հրաչ Չալաբի Չալաբյանի բերած վճռաբեկ բողոքը դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնելու և Հ.Չալաբյանին համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին ՀՀ քրեական

վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ
*(Հրաչ Չալաբի Չալաբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի
որոշումը, գործ ՎԲ-136/07)*

Էջ 406

**XVII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական
դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված՝ վերաքննիչ դատարանի
լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տե-
ղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Խաչատուրի Սե-
րոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օ-
րենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և
271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեա-
կան և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվակա-
նի հունվարի 19-ի դատավճռի դեմ *(Արթուր Խաչատուրի Սերոբյանի
վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-
46/07)*.....

Էջ 322

2. Արմենուհի Գևորգյանի միջոցով Հրաչ Չալաբի Չալաբյանի
բերած վճռաբեկ բողոքը դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի
կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագա-
ծոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի
23-ի որոշումը վերացնելու և Հ.Չալաբյանին համապատասխան
քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին ՀՀ քրեական
վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ
*(Հրաչ Չալաբի Չալաբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի
որոշումը, գործ ՎԲ-136/07)*

Էջ 406

**XVIII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական
դատավարության օրենսգրքի 408-րդ հոդված՝ գործերի նորոգման
հիմքերն ու ժամկետները նոր ի հայտ եկած հանգամանքների
հետևանքով (ուժը կորցրել է ՀՕ-270-Ն, 18.12.07)**

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռա-
բեկ բողոքը Գագիկ Արամայիսի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ քրեա-
կան օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական
գործով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով Աղավ-
նի Աղվանի Հովհաննիսյանի և Գագիկ Գառնիկի Բարսեղյանի վերա-

բերյալ քրեական գործի մասը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մարտի 30-ի որոշման դեմ ***(Գազիկ Արամայիսի Ասատրյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-04/07)***.....

Էջ 284

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Տիգրան Համոյի Սայադխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի դատավճռի դեմ ***(Տիգրան Համոյի Սայադխանյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի որոշումը, գործ ՎԲ-79/07)***

Էջ 361

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Ստեփան Վարազդատի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Արտյոն Աբգարի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 362-րդ հոդվածի 1-ին մասով, Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճռի դեմ ***(Ստեփան Վարազդատի Գալստյանի, Արտյոն Աբգարի Հակոբյանի, Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 12-ի որոշումը, գործ ՎԲ-126/07)***.....

Էջ 389

4. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանի վճռաբեկ բողոքը Սուրեն Կոլյայի Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի և այն անփոփոխ թողնելու

լու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 16-ի դատավճիռների դեմ *(Մորեն Կոլյայի Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի որոշումը, գործ ՎԲ-134/07)*.....

Էջ 399

XIX. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408.1-րդ հոդված՝ գործերի նորոգման հիմքերը նոր հանգամանքների հետևանքով (ուժը կորցրել է ՀՕ-270-Ն, 18.12.07)

1. Հենրիկ Ալբերտի Դանիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ *(Հենրիկ Ալբերտի Դանիելյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-08/07)*.....

Էջ 294

XIX Մեկնաբանվող իրավադրույթ - «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մյնսկի կոնվենցիայի 66-րդ հոդված՝ հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արմեն Արարատի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005թվականի հուլիսի 15-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռների դեմ *(Արմեն Արարատի Ոսկանյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-03/07)*.....

Էջ 307

2. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը Սարգիս Պետրոսի Չիլինգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարա-

նի 2005թ. հուլիսի 11-ի դատավճռի դեմ *(Մարզիս Պետրոսի Չիլինգարյանի վերաբերյալ 2007 թվականի փետրվարի 27-ի որոշումը, գործ ՎԲ-18/07)*..... Էջ 317

3. ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Մաջիթի Ավդալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճռի և նույն դատարանի պատժից վաղակետ ազատելու մասին 2005թ. մայիսի 03-ի որոշման դեմ *(Արթուր Մաջիթի Ավդալյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-44/07)* Էջ 335

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը Վարդան Սերգեյի Ասլիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով, և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճռի դեմ *(Վարդան Սերգեյի Ասլիկյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի որոշումը, գործ ՎԲ-38/07)* Էջ 350

5. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արամ Յուրիկի Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռի դեմ *(Արամ Յուրիկի Ալեքսանյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-130/07)* Էջ 427

6. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Գևորգ Լյովայի Միլիտոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռի դեմ *(Գևորգ Լյովայի Միլիտոսյանի վերաբերյալ 2007 թվականի օգոստոսի 30-ի որոշումը, գործ ՎԲ-153/07)* Էջ 440

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի բողոքը Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով և 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների համար մեղադրվող Ռաշիդ Աշոտի Խաչատրյանին Ռուսաստանի Դաշնությանը հանձնումը մերժելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. սեպտեմբերի 20-ի որոշման դեմ *(Ռաշիդ Աշոտի Խաչատրյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը, գործ ՎԲ-184/07)*

Էջ 445

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի որոշումներ

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

I. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճռի դեմ *(Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-25/08)*.....

Էջ 491

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը Սպարտակ Կարենի Նարոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հունիսի 11-ի որոշման դեմ *(Սպարտակ Կարենի Նարոյանի վերաբերյալ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը, գործ ԵՇԴ/0025/01/08)*

Էջ 515

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդված՝ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

1. ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը Լյովա Գառնիկի Շահինյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռի դեմ *(Լյովա Գառնիկի Շահինյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-76/08)*.....

Էջ 535

III. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդված՝ հանցակցության հասկացությունը

1. ՀՀ զինվորական դատախազի վճռաբեկ բողոքը Ալիկ Ռուդիկի Մաքևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ *(Ալիկ Ռուդիկի Մաքևոսյանի վերաբերյալ 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը, գործ ՎԲ-48/08)*.....

Էջ 501

IV. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդված՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Հակոբ Գազիկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի դեմ *(Հակոբ Գազիկի Հովհաննիսյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 29-ի որոշումը, գործ ՎԲ-13/08)*.....

Էջ 484

V. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդված՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները (1-ին մասի 4-րդ կետը՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը)

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճռի դեմ *(Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-25/08)*.....

Էջ 491

VI. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Սամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ *(Սամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 29-ի որոշումը, գործ ՎԲ-11/08)*.....

Էջ 473

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Հակոբ Գազիկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի դեմ *(Հակոբ Գազիկի Հովհաննիսյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 29-ի որոշումը, գործ ՎԲ-13/08)*.....

Էջ 484

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-

ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճռի դեմ *(Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-25/08)*..... Էջ 491

VII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը

1. Ռ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հուլիսի 2-ի դատավճռի դեմ *(Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 1-ի որոշումը, գործ ՎԲ-01/08)* Էջ 462

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը Սարգիս Մմբատի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ *(Սարգիս Մմբատի Մարգարյանի վերաբերյալ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը, գործ ԵԿԳ/0034/01/08)* Էջ 521

3. Հուսիկ Բաղդասարյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը Հուսիկ Սուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ *(Հուսիկ Սուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը, գործ ԱՎԳ-2/0059/01/08)* Էջ 526

VIII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված՝ սպանությունը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Կարեն Լյովայի Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 22-ի դատավճռի դեմ *(Կարեն Լյովայի Մարկոսյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 1-ի որոշումը, գործ ՎԲ-03/08)* Էջ 468

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Մամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ *(Մամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 29-ի որոշումը, գործ ՎԲ-11/08)*

Էջ 473

3. ՀՀ զինվորական դատախազի վճռաբեկ բողոքը Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ *(Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը, գործ ՎԲ-48/08)*

Էջ 501

IX. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (5-րդ մաս)

1. Հուսիկ Բաղդասարյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը Հուսիկ Մուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ *(Հուսիկ Մուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը, գործ ԱՎԳ2/0059/01/08)*

Էջ 526

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (4-րդ մաս)

1. Արթուր Ղազարյանի միջոցով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքը թիվ 55200706 քրեական գործով Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Սխիթարյանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի «Քրեական գործը կարճելու մասին» որոշման 2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսիյանի, Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասը հաստատելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշման դեմ *(Կարեն Թումանյանի բողոքի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-17/08)*

Էջ 542

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդված՝ քրեական գործ հարուցելու և հանցագործությունը բացահայտելու պարտականությունը

1. Արթուր Ղազարյանի միջոցով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքը թիվ 55200706 քրեական գործով Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Սխիթարյանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի «Քրեական գործը կարճելու մասին» որոշման 2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսիյանի, Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասը հաստատելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշման դեմ *(Կարեն Թումանյանի բողոքի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-17/08)*

Էջ 542

III. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված՝ քրեական գործերի միացումը և անջատումը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ *(Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-32/08)*.....

Էջ 559

IV. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդված՝ քաղաքացիական պատասխանողը

1. Քաղաքացիական պատասխանող Կարեն Քոսյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ *(Կարեն Քոսյանի բողոքի վերաբերյալ 2008 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-43/08)*.....

Էջ 572

V. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը

1. Ն.Ավետիսյանի միջոցով մեղադրյալ Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումների դեմ *(Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վերաբերյալ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի գործ ԱՎԳ/0022/06/08)*

Էջ 579

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ *(Տիգրան Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ԼԳ/0197/06/08)*.....

Էջ 630

VI. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդված՝ խափանման միջոց կիրառելու կարգը (կալանավորման մասով)

1. Ն.Ավետիսյանի միջոցով մեղադրյալ Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումների դեմ *(Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վերաբերյալ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի գործ ԱՎԳ/0022/06/08)* **Էջ 579**

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ *(Տիգրան Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ԼԳ/0197/06/08)* **Էջ 630**

VII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված՝ գրավը

1. Ն.Ավետիսյանի միջոցով մեղադրյալ Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումների դեմ *(Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վերաբերյալ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի գործ ԱՎԳ/0022/06/08)* **Էջ 579**

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ *(Տիգրան Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ԼԳ/0197/06/08)* **Էջ 630**

VIII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդված՝ քաղաքացիական հայցի հարուցումը

1. Քաղաքացիական պատասխանող Կարեն Քոսյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ *(Կարեն Քոսյանի բողոքի վերաբերյալ 2008 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-43/08)*

Էջ 572

IX. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդված՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործեր

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Արմեն Չախարի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ *(Արմեն Չախարի Աբրահամյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ՎԲ-73/08)*

Էջ 624

X. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված՝ որպես խախտման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը

1. Անուշ Սանասարի Ղևալայանի պաշտպան, Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ *(Անուշ Սանասարի Ղևալայանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը, գործ ԵԿԳ/0225/06/08)*

Էջ 590

2. Գևորգ Սուրիկի Շահինյանի պաշտպանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ *(Գևորգ Սուրիկի Շահինյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը, գործ ԼԳ/0162/06/08)*

Էջ 612

XI. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան

1. Արթուր Ղազարյանի միջոցով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքը թիվ 55200706 քրեական գործով Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Մխիթարյանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի «Քրեական գործը կարճելու մասին» որոշման 2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասը հաստատելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշման դեմ *(Կարեն Թումանյանի բողոքի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-17/08)*
.....

Էջ 542

2. Արա Ջոհրաբյանի միջոցով դիմող Ռոբերտ Սուքիասյանի բերած վճռաբեկ բողոքը գույքի վրա կալանք դնելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Ա.Ջոհրաբյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունվարի 16-ի որոշումն ուժի մեջ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ *(Ռոբերտ Սուքիասյանի բողոքի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-22/08)*
.....

Էջ 553

3. Վալերի Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ (**Վալերի Գրիգորյանի վերաքերյալ 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը, գործ ԵԿԳ/0031/11/08**)

Էջ 566

4. «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ, Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Արա Ջոհրաբյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ (**«Նարեկ» ՍՊ ընկերության բողոքի վերաքերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը, գործ ԵԿԳ/0050/11/08**)

Էջ 605

XII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված՝ առաջին ստյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը

1. Անուշ Սանասարի Ղավալյանի պաշտպան, հավատարմագրված փաստաբան Արա Ջոհրաբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ (**Անուշ Սանասարի Ղավալյանի վերաքերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը, գործ ԵԶԼԳ/0299/01/08**)

Էջ 598

2. Արա Ջոհրաբյանի միջոցով մեղադրյալ Կարինե Վահանի Մնացականյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ (**Կարինե Վահանի Մնացականյանի վերաքերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ԵԿԳ/0235/06/08**)

Էջ 617

XIII. Սեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդված՝ բողոքարկման ժամկետը վերականգնելու կարգը

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ (**Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի**

Այնքասանյանի վերաբերյալ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործ ՎԲ-32/08)..... Էջ 559

2. Արա Ջոհրաբյանի միջոցով մեղադրյալ Կարինե Վահանի Մնացականյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ *(Կարինե Վահանի Մնացականյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը, գործ ԵԿԴ/0235/06/08)* Էջ 617

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2006 թվականի նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ	4
Գործ ՎԲ - 231/06	4
Գործ ՎԲ-223/06	9
Գործ ՎԲ-273/06	16
Գործ ՎԲ-341/06	23
2006 թվականի դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ	30
Գործ ՎԲ-234/06	30
Գործ ՎԲ-271/06	36
Գործ ՎԲ-279/06	42
Գործ ՎԲ-251/06	47
Գործ ՎԲ-293/06	52
Գործ ՎԲ-320/06	57
Գործ ՎԲ-329/06	63
Գործ ՎԲ-176/06	67
Գործ ՎԲ-331/06	93
Գործ ՎԲ-333/06	96
Գործ ՎԲ-340/06	100
Գործ ՎԲ-328/06	104
Գործ ՎԲ-330/06	108
Գործ ՎԲ-332/06	112
Գործ ՎԲ-324/06	115
2007 թվականի նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ	120
Գործ ՎԲ-05/07	120
Գործ ՎԲ-50/07	127
Գործ ՎԲ-33/07	132
Գործ ՎԲ-61/07	138
Գործ ՎԲ-85/07	143
Գործ ՎԲ-63/07	148
Գործ ՎԲ-65/07	151
Գործ ՎԲ-55/07	156
Գործ ՎԲ-84/07	168
Գործ ՎԲ-118/07	174
Գործ ՎԲ-124/07	179
Գործ ՎԲ-125/07	184
Գործ ՎԲ - 107/07	189

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Գործ ՎԲ-112/07	193
Գործ ՎԲ - 139/07	198
Գործ ՎԲ-151/07	203
Գործ ՎԲ-142/07	210
Գործ ՎԲ-145/07	216
Գործ ՎԲ-135/07	222
Գործ ՎԲ - 149/07	229
Գործ ՎԲ-192/07	234
Գործ ՎԲ-179/07	240
Գործ ՎԲ-185/07	244
Գործ ՎԲ - 171/07	249
Գործ ՎԲ-195/07	254
Գործ ՎԲ - 212/07	259
Գործ ՎԲ-201/07	264
Գործ ՎԲ - 213/07	270
Գործ ՎԲ-187/07	275
2007 թվականի դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ	284
Գործ ՎԲ-04/07	284
Գործ ՎԲ- 02/07	289
Գործ ՎԲ-08/07	294
Գործ ՎԲ- 30/07	299
Գործ ՎԲ - 12/07	303
Գործ ՎԲ-03/07	307
Գործ ՎԲ-35/07	312
Գործ ՎԲ-18/07	317
Գործ ՎԲ-46/07	322
Գործ ՎԲ- 56/07	330
Գործ ՎԲ-44/07	335
Գործ ՎԲ-59/07	340
Գործ ՎԲ-48/07	345
Գործ ՎԲ-38/07	350
Գործ ՎԲ - 96/07	356
Գործ ՎԲ-79/07	361
Գործ ՎԲ-67/07	366
Գործ ՎԲ-72/07	372
Գործ ՎԲ-111/07	383
Գործ ՎԲ-126/07	389
Գործ ՎԲ-134/07	399

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Գործ ՎԲ-136/07	406
Գործ ՎԲ-115/07	419
Գործ ՎԲ-130/07	427
Գործ ՎԲ-132/07	433
Գործ ՎԲ-153/07	440
Գործ ՎԲ-184/07	445
Գործ ՎԲ-178/07	450
Գործ ՎԲ-150/07	455
2008 թվականի նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները	462
Գործ ՎԲ-01/08	462
Գործ ՎԲ-03/08	468
Գործ ՎԲ-11/08	473
Գործ ՎԲ-13/08	484
Գործ ՎԲ-25/08	491
Գործ ՎԲ-48/08	501
Գործ ԵՇԴ/0025/01/08	515
Գործ ԵԿԴ/0034/01/08	521
Գործ ԱՎԴ2/0059/01/08	526
Գործ ՎԲ-76/08	535
2008 թվականի դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ	542
Գործ ՎԲ-17/08	542
Գործ ՎԲ-22/08	553
Գործ ՎԲ-32/08	559
Գործ ԵԿԴ/0031/11/08	566
Գործ ՎԲ-43/08	572
Գործ ԱՎԴ/0022/06/08	579
Գործ ԵԿԴ/0225/06/08	590
Գործ ԵԶԲԴ/0299/01/08	598
Գործ ԵԿԴ/0050/11/08	605
Գործ ԼԴ/0162/06/08	612
Գործ ԵԿԴ/0235/06/08	617
Գործ ՎԲ-73/08	624
Գործ ԼԴ/0197/06/08	630

**2006 թվականի նյութական իրավունքի վերաբերյալ
որոշումներ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 231/06

Վերաքննիչ դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
Նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
Դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ վճռաբեկ դատարան/,

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ՄԻՄՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ
դատախազ Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2006 թվականի հոկտեմբերի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով դատախազ Վ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը Դավիթ Լեմսիկի Փաշինյանի վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 30-ի դատավճռի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 13-ի դատավճռի դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 30.05.2006թ. դատավճռով Դավիթ Լեմսիկի Փաշինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և նշանակվել է փորձաշրջան 1 տարի ժամկետով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը, դատավճիռը բողոք է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման: Վերաքննիչ դատարանը կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 1-ին կետի «ա» ենթակետը և Դ.Փաշինյանին ազատել նշանակված պատժից:

Վճռաբեկ դատարանի 07.08.2006թ. որոշմամբ դատախազ Վ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է և տրամադրվել մեկամսյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Դատախազ Վ.Գևորգյանը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 13.09.2006թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Դավիթ Լեմսիկի Փաշինյանը 2006 թվականի փետրվարի 18-ին, ժամը 21³⁰ –ի սահմաններում Մլիքայել Պողոսյանի հետ միմյանց քաշքշելու ընթացքում դանակով հարվածել է Մ.Պողոսյանի որովայնի շրջանին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

ա/ Պատիժ նշանակելիս խախտվել են պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի չի առնվել կատարված հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, և քրեադատավարական օրենքի էական խախտմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ:

բ/ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառության համար, կդառնա նախադեպ և կձևավորի դատական պրակտիկա:

Վճռաբեկ բողոք բերած անձը վերը նշված հիմքերով խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի դատավճիռներն ու քրեական գործը վերադարձնել վերաքննիչ դատարան՝ Դ.Փաշինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով «ազատազրկման ձևով պատիժ սահմանելու» և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2006

թվականի հուլիսի 7-ի որոշման 1-ին կետի «ա» ենթակետի կիրառմամբ նրան նշանակված պատժից ազատելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Նշված հիմքերի սահմաններում քննելով վճռաբեկ բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 30-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 13-ի դատավճիռը պետք է բեկանել և փոփոխել հետևյալ պատճառաբանությամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոմիտեի քիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»։ Այս հոդվածի բովանդակությունից երևում է, որ խոսքը վերաբերում է տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան՝ վերջնականապես ուժի մեջ մտած դատավճիռին։ Դատավճիռը համարվում է վերջնականապես ուժի մեջ մտած, եթե բացակայում են պաշտպանության այլ միջոցները, կամ կողմերն սպառել են պաշտպանության այդպիսի միջոցները, կամ անցել է պաշտպանության այդ միջոցների կիրառման ժամկետը։ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածում 2006 թվականի հուլիսի 7-ի օրենքով կատարված փոփոխության համաձայն (որն ուժի մեջ է մտել 2006 թվականի օգոստոսի 5-ին)՝ «վճռաբեկ բողոքը կարող է բերվել ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»։ Այսինքն՝ ՀՀ օրենքով սահմանվել է դատավճռի՝ վերջնական ուժի մեջ մտնելու 6-ամսյա ժամկետ։ Հետևաբար, անձի վիճակի վատթարացման առումով բերված վճռաբեկ բողոքները կարող են քննության առարկա դառնալ, և Վճռաբեկ դատարանն իր իրավասությունների շրջանակում կարող է համապատասխան որոշում կայացնել։

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե դատարանը, ազատագրկման ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին։ Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները։

Դավիթ Լենսիկի Փաշինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով կայացված դատավճռում որպես հանցավորի անձը բնութագրող տվյալներ նշվել են, որ Դ.Փաշինյանը սովորում է Բաֆֆու անվան դպրոցի 10-րդ դասարանում, նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրական, կամովին ընդունել է մեղքը, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, իսկ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ նրա անչափահաս լինելը և մեղալականով ներկայանալը։

Պալատը գտնում է, որ հանցավորի անձը բնութագրող վերոհիշյալ տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող նշված հանգամանքներն իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու այն հետևության, որ Դ.Փաշինյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Ինչպես երևում է գործի նյութերից, Դավիթ Փաշինյանը տևական ժամանակ (ըստ իր ցուցմունքի մոտ մեկ ամիս) իր մոտ մշտապես պահել է 185 մմ երկարությամբ ծալովի դանակ, որով էլ չնչին առիթով հարվածել է Սիբայել Պողոսյանի որովայնի շրջանին՝ նրան պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք: Դ.Փաշինյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի չեն առնվել կատարված արարքի ծանրությունը և վրա հասած վնասակար հետևանքները: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս բոլոր դեպքերում պետք է բազմակողմանի և օբյեկտիվ գնահատվեն պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող բոլոր հանգամանքները և պարտադիր մատնանշվեն ընդունված որոշման շարժառիթները:

Պալատը գտնում է, որ Դավիթ Փաշինյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով խախտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, համաձայն որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Բացի այդ, Դավիթ Փաշինյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Նկատի ունենալով, որ Դավիթ Փաշինյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի բխում օրենքի պահանջից, և այդ հիմքով վճռաբեկ բողոք է բերել դատախազը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա Դ.Փաշինյանի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի դատավճիռները պետք է բեկանել և փոփոխել՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս նման փոփոխության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Դավիթ Լենսիկի Փաշինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 30-ի դատավճիռը և այն անփոփոխ բողոքելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2006 թվականի հուլիսի 13-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ Դավիթ Լեմսիկի Փաշինյանի նկատմամբ որպես պատիժ նշանակել ազատազրկում 3 տարի ժամկետով:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 1-ին կետի «ա» ենթակետի և 12-րդ կետի հիման վրա Դավիթ Լեմսիկի Փաշինյանին ազատել նշանակված պատժից:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-223/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ 252/06թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա. Դանիելյան
դատավորներ՝ Մ. Արղամանյան, Ժ. Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/,
նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ

Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
պաշտպան

Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Ա. ԱԹԱՐԲԵԿՅԱՆԻ

2006 թվականի հոկտեմբերի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Արման Սիերի Խաչատրյանի շահերի պաշտպան, փաստաբան Արթուր Աթարբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. հուլիսի 4-ի դատավճռի դեմ՝ ըստ մեղադրանքի Արման Սիերի Խաչատրյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 235-րդ հոդվածի 4-րդ և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով,

ՊԱՐՁԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. մարտի 21-ի դատավճռով Արման Սիերի Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել.

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման՝ 3/երեք/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով ազատազրկման՝ 6/վեց/ ամիս ժամկետով՝ առանց տուգանքի:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ազատազրկման՝ 4/չորս/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառմամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4/չորս/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ առանց տուգանքի:

Պատիժը նշանակվել է կրելու ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում՝ պատժի սկիզբը հաշվելով 2005թ. հոկտեմբերի 30-ից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Տիգրան Հովհաննիսյանը և Արգար Չաքարյանը, որոնք վերաքննիչ բողոք չեն ներկայացրել:

Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել ամբաստանյալ Ա. Խաչատրյանը և նրա շահերի պաշտպան Ն. Բաղդասարյանը:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 04.07.2006թ. դատավճռով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. մարտի 21-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ ամբաստանյալի և պաշտպանի վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

Դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել դատապարտյալ Ա. Խաչատրյանի պաշտպան Ա. Աթաբեկյանը:

Վճռաբեկ դատարանի 07.08.2006թ. որոշմամբ պաշտպան Ա. Աթաբեկյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով մեկամսյա ժամկետ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Պաշտպան Ա. Աթաբեկյանը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 08.09.2006թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Դատարանը դատավճռով հաստատված է համարել, որ 2005թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 11⁰⁰-ի սահմաններում Արման Խաչատրյանն իր ավտոմեքենան կանգնեցրել է Պռոշյան փողոցի վրա գտնվող «Հայկ» խորտկարանից շուրջ 8-10 մետր հեռավորության վրա և խորոված պատվիրելու համար մտել է «Սուրենի մոտ» խորտկարան: «Հայկ» խորտկարանի տնօրեն Լուսինե Չաքարյանը, տեղեկանալով, որ այդ ավտոմեքենան իր խորտկարանի հաճախորդների ավտոմեքենան չէ, պահանջել է այն հեռացնել խորտկարանի մոտից: Երբ Արման Խաչատրյանը դուրս է եկել «Սուրենի մոտ» խորտկարանից, որպեսզի ավտոմեքենան կանգնեցնի այլ տեղ, տեսել է, որ իր ավտոմեքենան «Հայկ» խորտկարանի մոտքից հեռու է կանգնած: Վրդովվելով այն բանից, որ իրեն հանիրավի մեղադրում են, Արմանը Լուսինեի եղբոր՝ Արգար Չաքարյանի ներկայությամբ անհասցե հայիոյանք տալով, հարցրել է, թե ում է խանգարում իր մեքենան: Ավտոմեքենան կանգնեցնելու շուրջ վիճաբանություն է ծագել Արմանի և Արգարի միջև: Այնուհետև նրանց են մոտեցել Սուրեն Վարդանյանը, Մեղրակ Աղայանը, Լուսինե Չաքարյանը, Տիգրան Հովհաննիսյանը և Արմեն Հարությունյանը: Արմեն Խաչատրյանը նրանց բացատրել է, որ իր մեքենան ոչ ոքի չի խանգարում: Լուսինեն պնդել է, որ ավտոմեքենան խանգարում է խորտկարանի աշխատանքներին: Որոշ ժամանակ վիճաբանությունը դադարել է, սակայն երբ նրանք մոտեցել են Արման Խաչատրյանի ավտոմեքենային, ավտոմեքենան կայանելու հարցի շուրջ վիճաբանությունը շարունակվել է: Վիճաբանել են Արման Խաչատրյանը, Արգար Չաքարյանը և Տիգրան Հովհաննիսյանը: Արմանն առաջարկել է Արգարին միասին գնալ այլ վայր՝ զրուցելու, քանի որ ներկաները խանգարել են նրանց խոսակցությանը: Այդ

Ժամանակ նրանց է մոտեցել գործով չպարզված անձը և Արմանին հարցրել վիճաբանության պատճառը: Վերջինս մատնացույց է արել Լուսինե Չաբարյանին և հայտնել, որ նա խանգարում է իր և Աբգարի խոսակցությանը: Գործով չպարզված անձը քաշել է Լուսինեի ձեռքից և առաջարկել նրան հեռանալ: Չաբարյանով Լուսինե Չաբարյանն ապուսակել է նրան, իսկ Աբգար Չաբարյանը, տեսնելով այդ կռիվ է սկսել Արման Խաչատրյանի հետ, որին միջամտել է նաև Տիգրան Հովհաննիսյանը, և նրանք ծեծի են ենթարկել Արման Խաչատրյանին, որի ընթացքում Ա. Խաչատրյանը, վազելով դեպի իր ավտոմեքենան, ավտոմեքենայի սրահի բեռնախցիկից հանել է սառը գեներ հանդիսացող դանակը և դիտավորությամբ հարվածել է ծեծին և քաշքշուկին մասնակցող Տիգրան Հովհաննիսյանին՝ նրան պատճառելով առողջության ծանր վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ինչպես առաջին, այնպես էլ վերաքննիչ առյանի դատարանների կողմից թույլ են տրվել քրեական և դատավարական օրենքների խախտումներ, ինչն արտահայտվել է նրանում, որ չի կիրառվել այն օրենքը, որը ենթակա էր կիրառման և կիրառվել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման, որի արդյունքում էլ Արման Խաչատրյանի կատարած արարքին տրվել է ոչ ճիշտ իրավական գնահատական և նրան անհիմն կերպով դատապարտել են ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 4-րդ և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով այն դեպքում, երբ նրա արարքում բացակայում են նշված հոդվածների հանցակազմերը, իսկ նրա արարքը համընկնում է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ և 258-րդ հոդվածի 1-ին մասերին, որոնցով էլ պետք է որակվեր նրա արարքը, և դրանով էլ նա պետք է դատապարտվեր:

Արման Խաչատրյանի արարքում խուլիգանական գործողություններն ավարտված են եղել այն պահից, երբ նա նստել է ավտոմեքենան և փորձել է հեռանալ դեպքի վայրից: Նրա կողմից խուլիգանական գործողություններն ավարտվել են հենց այդ պահին և նրա արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ այդ ընթացքում Արման Խաչատրյանի մոտ դանակ չի եղել:

Ինչ վերաբերում է դանակով մարմնական վնասվածք պատճառելուն, ապա այն չպետք է դիտվեր սառը գեներ հանդիսացող գործիքի գործադրմամբ կատարված խուլիգանական գործողություն, այլ պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով, քանի որ Ա. Խաչատրյանը պարզապես պաշտպանվել է իրեն ծեծողներից, որի ընթացքում պատճառել է ծանր մարմնական վնաս:

Գործով հաստատված է, որ Արման Խաչատրյանի մոտ խուլիգանական գործողությունների ընթացքում, մինչև ավտոմեքենան նստելը դանակ չի եղել, նա դանակ չի կրել, քանի որ այն գտնվել է ավտոմեքենայի մեջ, որտեղից էլ վերցվել է: Հետևաբար նրա արարքում չկա ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմ և մեղադրանքի ծավալից պետք է հանվեր այդ մեղադրանքը:

Վճռաբեկ բողոքում խնդրվում է Արման Խաչատրյանի մասով մասնակիորեն բեկանել Երևան քաղաքի Արարիկի և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին առյանի դատարանի 2006թ. մարտի 21-ի ու ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. հուլիսի 4-ի դատավճիռները, Արման Խաչատրյանի մեղադրանքի ծավալից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասը և նրան այդ մասով ճանաչել անպարտ, իսկ նրա արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի

258-րդ հոդվածի 4-րդ և 112-րդ հոդվածի 1-ին մասերից վերադարձվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին և 116-րդ հոդվածի 2-րդ մասերով և նշված հոդվածներով նրան դատապարտել նվազագույն պատժի:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Խուլիզանությունը կարող է կատարվել միայն ուղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները:

Խուլիզանական արարքը կարող է կատարվել միայն խուլիզանական մղումներից ելնելով: Իսկ արարքը համարվում է խուլիզանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է լինում շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիզանական մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիզանություն:

Մեղադրյալի կողմից տուժողին վիրավորանքներ, մարմնական վնասվածքներ հասցվելու կամ նման այլ բռնարարքների կատարման դեպքում խուլիզանական մղումները և խուլիզանության հանցակազմը կարող է բացակայել, եթե նշված գործողությունները կատարվել են կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, քիչ թե շատ երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի արդյունքում:

Խուլիզանական մղումների առկայությունը զնահատելու համար էական նշանակություն կարող է ունենալ նաև տուժողի վարքագիծը:

Դատավճռից երևում է, որ վիճաբանության, կռվի և ծեծկռտուքի պատճառը եղել է «Հայկ» խորտկարանից 8-10 մետր հեռավորության վրա կանգնած Արման Խաչատրյանի ավտոմեքենան այնտեղից հեռացնելու Լուսինե Չաքարյանի անօրինական պահանջը, որին միացել են նրա եղբայր Աբգար Չաքարյանը և խոհարար Տիգրան Հովհաննիսյանը: Մինչդեռ, փողոցի այդ հատվածը Լուսինե Չաքարյանի տնօրինության տակ չի գտնվել, նրան չի պատկանել, այնտեղ ավտոմեքենայի կանգառ և կայանում թույլատրելու կամ արգելելու իրավունք նա չի ունեցել: Չնայած դրան, նա պահանջել է Արման Խաչատրյանից հեռացնել ավտոմեքենան՝ նկատի ունենալով, որ Ա. Խաչատրյանը, ավտոմեքենան կանգնեցնելով իր խորտկարանի շրջակայքում, օգտվում է մեկ այլ խորտկարանի ծառայությունից:

Ընդ որում, գործի նյութերից երևում է, որ Լուսինե Չաքարյանը հաճախ է նման վեճեր ունեցել: Այդ փաստը հաստատել է գործով վկա Չաբելա Վարդանյանը, որը ցուցմունք է տվել, որ ավտոմեքենայի կայանման հարցի շուրջ Լուսինեի մոտ միշտ եղել են վիճաբանություններ (հ. 1, գ.թ. 98-100):

Արման Խաչատրյանն իր ցուցմունքներում նշել է, որ վիճաբանության և կռվի պատճառը եղել է իր ավտոմեքենան կայանած տեղից հեռացնելու մասին Լուսինե Չաքարյանի, Աբգար Չաքարյանի և Տիգրան Հովհաննիսյանի անօրինական պահանջները: Չնայած ինքը բացատրել է, որ իր ավտոմեքենան ոչ մեկին չի խանգարում և նրանք իրավունք չունեն իրենից պահանջել հեռացնել ավտոմեքենան, սակայն դա արդյունք չի տվել: Նույնիսկ առաջարկել է Աբգար Չաքարյանին նստել ավտոմեքենա

նան և խոսել առանձին: Իսկ այն բանից հետո, երբ Աբգարի քույրն ապտակել է Սևակին, մի քանի հոգի հարձակվել են իր վրա և սկսել հարվածել:

Գործի նյութերով նաև հաստատվել է, որ միջադեպի ընթացքում հայիոյանք տարու համար Արման Խաչատրյանը դիտողություն է արել Աբգարին, որի մասին իրենց ցուցմունքներում հայտնել են վկա Մեղրակ Սողոյանը (հ.1 գ.թ. 143-148), դատապարտյալ Տիգրան Հովհաննիսյանը (հ.1 գ.թ. 151-154), առաջարկել է Աբգար Չաքարյանին առանձնաճակատ և խոսել, կոնկրետ որևէ մեկին չի հայիոյել, մինչև ծեծի ենթարկվելը որևէ մեկին չի հարվածել, տուժողին դանակով հարվածել է միայն այն բանից հետո, երբ վերջինս Աբգարի հետ հարձակվել է նրա վրա և փոխադարձ ծեծկռտուք է սկսվել: Այսպիսով, Արման Խաչատրյանի գործողությունները պայմանավորված են եղել Լուսինեի, Աբգարի և Տիգրանի ոչ իրավաչափ վարքագծով, այլ ոչ թե նրա խուլիզանական դրդումներով:

Նման պայմաններում վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ ատյանի հետևություններն այն մասին, որ Ա.Խաչատրյանը թույլ է տվել հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ ակնհայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում հակասում է գործի նյութերին, որովհետև նա, ինչպես վկայում են գործի նյութերը, տուժողին մարմնական վնասվածք է պատճառել ոչ թե խուլիզանական մղումներով, այլ տուժող կողմի անօրինական գործողությունների և կենցաղային հողի վրա առաջացած անբարյացակամ հարաբերությունների հետևանքով:

Այդպիսի հանգամանքների դեպքում Ա. Խաչատրյանի գործողություններն անհրաժեշտ է որակել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում անձի դեմ ուղղված հանցագործության համար:

Բացի այդ, անհիմն է նաև Արման Խաչատրյանի կողմից ապօրինի կերպով սառը զենք կրելու մեղադրանքը: Սառը զենքի ապօրինի կրում է համարվում դրա գտնվելը հագուստի մեջ կամ անմիջականորեն անձի մարմնի վրա, ինչպես նաև դրանց գտնվելը ձեռքի պայուսակում, կապոցում, այլ պահոցներում, այսինքն՝ զենք կրելու տակ պետք է նկատի ունենալ այն դեպքերը, երբ զենքը գտնվում է հանցավորի մոտ: Գործի նյութերով, այդ թվում՝ Արման Խաչատրյանի, Տիգրան Հովհաննիսյանի, Արթուր Տեր-Պողոսյանի ցուցմունքներով հիմնավորվել է, որ սառը զենք հանդիսացող դանակը գտնվել է ավտոմեքենայի սրահի բեռնախցիկում, որը համարվում է ոչ թե կրել, այլ պահել, որը քրեական պատասխանատվություն չի առաջացնում: Հետևաբար, Արման Խաչատրյանի արարքում ապօրինի կերպով սառը զենք կրելու հանցակազմը բացակայում է:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, թե Արման Խաչատրյանը Տիգրան Հովհաննիսյանի առողջությանը ծանր վնաս է պատճառել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ, ապա այն գործի նյութերում իր հաստատումը չի գտել: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը: Մինչդեռ կոնկրետ հանգամանքները, որոնցում Տիգրան Հովհաննիսյանի առողջությանը ծանր վնաս է պատճառվել, վկայում են այն մասին, որ հանցագործությունը կատարվել է ոչ թե անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ, այլ փոխադարձ կռվի ընթացքում: Գործի նյութերով, մասնավորապես՝ Տիգրան Հովհաննիսյանի, Արթուր Տեր-Պողոսյանի ցուցմունքներով հիմնավորվել է, որ ավտոմեքենան կայանելու շուրջ փոխադարձ կռվի ընթացքում Արման Խաչատրյանը վազել է դեպի իր մեքենան, նստել է դեկին, շրջադարձ կատարել,

այնուհետև կանգնեցրել է մեքենան, իջել և մեքենայի սրահի բեռնախցիկից վերցրած դանակով հարվածել է Տիգրանի կրծքավանդակին: Այս պայմաններում Արման Խաչատրյանի գործողությունները չի կարելի համարել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, քանի որ դրանք ուղղված են եղել փոխադարձ կռվի մասնակից Տիգրան Հովհաննիսյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուն: Ուստի, Արման Խաչատրյանի գործողությունները ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ճիշտ են որակված և դրանք 116-րդ հոդվածի 2-րդ մասով վերաորակելու հիմքեր չկան:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ Ա. Խաչատրյանի նկատմամբ թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, նրա նկատմամբ կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի և 258-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, որոնք տվյալ գործով կիրառման ենթակա չէին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ նշված խախտումներն այդ մասով դատավճիռը բեկանելու և Ա. Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք են: Հետևաբար, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. մարտի 21-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ հուլիսի 4-ի դատավճիռները պետք է բեկանել և այդ մասերով քրեական հետապնդումը դադարեցնել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով դատավճիռը պետք է թողնել անփոփոխ, սակայն Արման Խաչատրյանի նկատմամբ պետք է կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 07.07.2006թ. համաներման ակտը:

Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար, ինչպես նաև ստորադաս դատարանների կողմից սույն գործով թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները կարող են առաջացնել ծանր հետևանքներ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

Արման Մեերի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 235-րդ հոդվածի 4-րդ և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. մարտի 21-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. հուլիսի 4-ի դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով բեկանել և այդ մասերով Արման Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով դատավճիռը թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2.Արման Սիերի Խաչատրյանի նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 07.07.2006թ. օրենքի 1-ին հոդվածի «ա» կետը և նրան անհապաղ ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ազատագրվման ձևով նշանակված 3 /երեք/ տարի պատիժը կրելուց:

3.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-273/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ N 94/05 կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Աղամյան
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Ս.Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Ա.ՇԱՀԻՆՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի հոկտեմբերի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով դատապարտյալ Արթուր Հարությունի Բարսեղյանի վճռաբեկ բողոքը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 02-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռով Արթուր Բարսեղյանը ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոններով հաշվակցվել է ձերբակալման տակ գտնվելու երեք օր ժամկետը, թողնվել է կրելու 11 /տասնմեկ/ ամիս 25 /քսանհինգ/ օր, և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանվել է փորձաշրջան 1/մեկ/ տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Դատավճռով որոշվել է Արթուր Հարությունի Բարսեղյանից հոգուտ տուժող Արմեն Գալստյանի բռնագանձել 2.224.416 /երկու միլիոն երկու հարյուր քսանչորս հազար չորս հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ գումար՝ որպես պատճառված վնասի հատուցում:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով բողոքարկել է տուժողի իրավահաջորդ ճանաչված Հ.Մարգարյանը, որը խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության և Արթուր Բարսեղյանի կատարած արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով:

ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 02-ի դատավճռով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռն Արթուր Բարսեղյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով, քաղաքացիական հայցի մասով փոփոխվել է, և որոշվել է Արթուր Բարսեղյանից հոգուտ տուժող Արմեն Գալստյանի բռնագանձել 1.294.416 /մեկ միլիոն երկու հարյուր ինսուսն չորս հազար չորս հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործությանը պատճառված վնասի հատուցում:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Արթուր Բարսեղյանի արարքն առաջին ատյանի դատարանի կողմից որակված է ճիշտ, և նրա նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ:

Արթուր Բարսեղյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 11.10.2006 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Դատարանի դատավճռով հաստատված է համարվել, որ Արթուր Հարությունի Բարսեղյանը 2004 թվականի մայիսի 08-ին ժամը 12-ի սահմաններում, Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենց փողոցի 50 հասցեում գործող ավտոշուկայում տեսնելով, որ Արմեն և Անդրանիկ Գալստյանները, Արամ Մարգարյանը և Էռնեստ Աբրահամյանը ավտոմեքենայի գնի սակարկության առթիվ ծագած վիճաբանության ժամանակ ծեծի են ենթարկում և բռնություն գործադրում իր խնամակալության տակ գտնվող հաշմանդամ հորը՝ Հարություն Բարսեղյանին, սարսափահար լինելով նրան կորցնելու մտքից, հուզական գերլարվածությունից կորցրել է ինքնատիրապետումը և, հայտնվելով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, հորը պաշտպանելու նպատակով միջամտել է ծեծկռտուքին, տեղում պատահականորեն ձեռքն ընկած բահի փայտյա բռնակով անկանոն շարժում է կատարել և հարվածել կովին մասնակից Արմեն Գալստյանին, նրա առողջությանը դիտավորությանը պատճառել է ծանր վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանների կողմից թույլ են տրվել քրեական և դատավարական օրենքների խախտումներ, ինչն արտահայտվել է նրանում, որ չի կիրառվել այն օրենքը, որը ենթակա էր կիրառման, և կիրառվել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման, որի արդյունքում էլ Արթուր Բարսեղյանի կատարած արարքին տրվել է ոչ ճիշտ իրավական գնահատական, և նրան անհիմն կերպով դատապարտել են ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով այն

դեպքում, երբ նրա արարքում բացակայում է նշված հողվածի հանցակազմը: Արթուր Բարսեղյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, և նրա կողմից թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, քանի որ իր հաշմանդամ հոր կյանքը վտանգավոր ոտնձգությունից պաշտպանելու համար նա կարող է պաշտպանել միայն հոր նկատմամբ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով:

Վճռարեկ բողոքով Արթուր Բարսեղյանը խնդրում է «բեկանել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.12.2004 թվականի և վերաքննիչ դատարանի 02.03.2005 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով կայացված դատավճիռները և քրեական գործի վարույթը կարճել», իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել հանցակազմի բացակայության պատճառով:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Արթուր Բարսեղյանին առաջադրված մեղադրանքով մեղադրական եզրակացության և առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների դատավճիռների նկարագրական մասերից երևում է, որ ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ դատարաններն ըստ էության հաստատված են համարել, որ Ա. Բարսեղյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, սակայն այդ հարցն ընդհանրապես քննության չի առնվել, և նա դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Այն դեպքում, երբ հանցանքը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարելիս, ի տարբերություն անհրաժեշտ պաշտպանության, վնաս պատճառելը տեղի է ունենում հակաօրինական արարքն ավարտելուց կամ դադարեցվելուց հետո:

Սույն գործով, ինչպես ընդունված է նախաքննության մարմնի որոշումներով և դատարանների դատավճիռներով, Ա. Բարսեղյանն Արմեն Գալստյանի առողջությանը ծանր վնաս է պատճառել հենց Ա. Գալստյանի և մյուսների հակաօրինական արարք կատարելու ընթացքում: Այսպես՝ Ա.Բարսեղյանի նկատմամբ կայացված առաջին ատյանի դատարանի դատավճռում նշված է, որ դատարանը ապացուցված համարեց հետևյալը. «Ամբաստանյալ Արթուր Բարսեղյանը ... տեսնելով, որ գործով տուժող Արմեն Գալստյանը և վկաներ Անդրանիկ Գալստյանը, Արամ Մարգարյանը և Էռնեստ Աբրահամյանը ավտոմեքենայի զնի սակարկության ժամանակ, ծեծի են ենթարկում իր խնամքի տակ գտնվող հաշմանդամ հորը, Հարություն Բարսեղյանին, սարսափահար լինելով նրան կորցնելու մտքից, կորցրել է ինքնատիրապետումը և հայտնվելով հանկարծակի հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, հորը պաշտպանելու և տուժողի հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով միջամտել է ծեծկռտուքին, տեղում՝ պատահական ձեռքն ընկած փայտով, անկանոն շարժումներ է կատարել, որի ընթացքում հարվածել է կռվին մասնակից՝ Արմեն Գալստյանի գլխին, նրան պատճառելով առողջությանը ծանր վնաս» /հատ.2, գ. թ. 222/:

Գեպքը նման ձևով ապացուցված է համարվել նաև նախաքննությանը /տես մեղադրանք առաջադրելու որոշումը, մեղադրական եզրակացության նկարագրական ու պատճառաբանական մասերը հատ.1, գ.թ. 195, 317-318, 322/:

Նշված հանգամանքները նույն ձևով ապացուցված են նաև վերաքննիչ դատարանի դատավճռով /հատ. 2, գ. թ. 305-314/:

Այսպիսով՝ ինչպես նախաքննությանը, այնպես էլ առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների դատաքննություններով ապացուցվել է.

Կռվի նախահարձակները եղել են Արմեն Գալստյանը, Անդրանիկ Գալստյանը, Արամ Մարգարյանը և Էռնեստ Աբրահամյանը,

Արթուր Բարսեղյանը խառնվել է կռվին, երբ տեսել է, որ 1-ին կետում թվարկված անձինք ծեծի են ենթարկում իր խնամքի տակ գտնվող հաշմանդամ հորը՝ Հարություն Բարսեղյանին,

Արթուր Բարսեղյանը կռվին մասնակցել է հորը պաշտպանելու և տուժողի հակիրճակալան գործողությունը կանխելու նպատակով,

Արթուր Բարսեղյանն Արմեն Գալստյանի գլխին փայտով հարվածել է կռվի ընթացքում, այսինքն՝ հոր՝ Հարություն Բարսեղյանի վրա հարձակումը դեռ դադարեցված չլինելու պայմաններում:

Գործի նյութերով ապացուցված է նաև, որ կռվի ընթացքում Արթուր Բարսեղյանի հորը՝ Հարություն Բարսեղյանին, պատճառվել է միջին ծանրության վնաս: Համաձայն դատաբժշկական թիվ 459/Հ փորձագետի եզրակացության՝ «Քաղ. Հ.Բարսեղյանի ստացած մարմնական վնասվածքները՝ գլխուղեղի թեթև աստիճանի առանց ցողունային երևույթների սալջարդի, գլխի փափուկ հյուսվածքների սալջարդի, մեջքի շրջանի փափուկ հյուսվածքների արյունազեղումների ձևով, պատճառվել են բութ, կոշտ առարկանների ներգործությամբ, հնարավոր է նշված ժամկետում և առաջացրել է առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը 21 օրից ավելի: Ելնելով վնասվածքների բնույթից, տեղակայումից և հաշվի առնելով փորձաքննության ներկայացված փայտյա ձեռնափայտի ձևը, չափերը և այլ կառուցվածքային առանձնահատկությունները պետք է եզրակացնել, որ քաղ. Հ.Բարսեղյանի մարմնական վնասվածքների առաջացման մեխանիզմում տեղ է գտել բութ առարկայի անմիջական ազդեցությունը՝ հարվածը/ները/ և այդ վնասվածքները կարող էին պատճառվել ինչպես ներկայացված փայտյա ձեռնափայտի կտորներով, այնպես էլ այլ նույնանման բութ առարկայով» /հատ. 1, գ.թ. 156-157/:

Նախաքննությամբ քրեախրավական գնահատական է տրվել Էռնեստ Աբրահամյանի, Արամ Մարգարյանի, Անդրանիկ Գալստյանի և Արմեն Գալստյանի արարքներին:

Այսպես՝ 01.09.2004 թվականին Արամ Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «2004 թվականի մայիսի 08-ին՝ ժամը 12.00-ի սահմաններում Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենց փողոցի 50 հասցեում գործող ավտոշուկայում ավտոմեքենայի զնի սակարկության առիթով ծագած վիճարանության ժամանակ, դրսևորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ բարձրաձայն սեռական բնույթի հայտնայնքներ տալով, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որի ընթացքում որպես զենք օգտագործվող առարկայով՝ ձեռնափայտով, հարվածներ է հասցրել Հարություն Բարսեղյանին, վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Քաղաքացիների միջամտությամբ կռիվը մի պահ դադարեցնելուց հետո Արամ Մարգարյանն իր խուլիգանական գործողությունները շարունակել է Արմեն և Անդրանիկ Գալստյանների, Էռնեստ Աբրահամյանի հետ, որի ընթացքում նորից բարձրաձայն սեռական բնույթի հայտնայնքներ է տվել Բարսեղյանների հասցեին և բռնություն գործադրել նրանց նկատմամբ» /հատ.1, գ.թ. 219/:

Անդրանիկ Գալստյանի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով /հատ. 1, գ.թ. 277/:

Հետագայում Էռնեստ Աբրահամյանի և Անդրանիկ Գալստյանի մասով քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով՝ գործուն գոջալու հետևանքով /հատ.1, գ.թ. 248, 284/:

Նույն հիմքերով դադարեցվել է նաև Արամ Մարգարյանի նկատմամբ սկսված քրեական հետապնդումը /հատ. 1, գ.թ. 296/, իսկ Արմեն Գալստյանի նկատմամբ չի իրականացվել քրեական հետապնդում /հատ. 1, գ.թ. 299/:

Այսպիսով՝ Էռնեստ Աբրահամյանի, Արամ Մարգարյանի, Անդրանիկ և Արմեն Գալստյանների մասով առկա են ոչ արդարացման հիմքերով նախաքննության մարմնի վերջնական և ուժի մեջ մտած որոշումները: Նշված որոշումներից հետևում է, որ կռվի ու ծեծկռտուքի նախաձեռնողները եղել են Էռնեստ Աբրահամյանը, Արամ Մարգարյանը, Անդրանիկ և Արմեն Գալստյանները: Այդ որոշումներում ընդգծված է նաև, որ Արթուր Բարսեղյանը հորը պաշտպանելու նպատակով է միջամտել ծեծկռտուքին և այդ ընթացքում հարվածել Արմեն Գալստյանին՝ պատճառելով նրա առողջությանը ծանր վնաս:

Գործով հարցաքննված անձանց ցուցմունքներով նույնպես միանշանակորեն ապացուցվել է, որ Արթուր Բարսեղյանը ծեծկռտուքին մասնակցել է միայն այն ժամանակ, երբ կռիվն արդեն սկսված է եղել:

Մեղադրյալ Արթուր Բարսեղյանը ցուցմունքներ է տվել, որ 2004 թվականի մայիսի 08-ին՝ ժամը 11.30-ի սահմաններում, ավտոշուկայում վաճառքի համար իր «ՎԱՁ-2107» մակնիշի ավտոմեքենայից նկատել է, թե ինչպես տուժող Արմեն Գալստյանը հարվածել է իրենից քիչ հեռու կանգնած իր հաշմանդամ հոր դեմքին և դիմել փախուստի, իսկ հայրը գնացել է նրա հետևից: Հետևելով նրանց՝ տեսել է, որ եղբայրներ Արմեն և Անդրանիկ Գալստյանները, Արման Մարգարյանը և Էռնեստ Աբրահամյանը ծեծի են ենթարկում հորը, իսկ Արման Մարգարյանն այդ ընթացքում ձեռնափայտով փորձել է հարվածել հոր գլխին, բղավել է, որ հայրը գլխից հաշմանդամ է, քաղաքացիների ու իր միջամտությամբ կռիվը դադարել է, և իրենք մոտեցել են իրենց մեքենաների մոտ: Քիչ անց տեսել է, որ վերջիններս կրկին մոտեցել են հորը և նորից սկսել ծեծի ենթարկել նրան: Այդ ժամանակ բղավելով՝ ծեծողներին զգուշացրել է հոր հաշմանդամ լինելու մասին՝ սարսափելով հորը կորցնելու մտքից, ցանկանալով պաշտպանել նրան տուժողի և նրա ընկերների շարունակվող հարվածներից, կորցրել է ինքնատիրապետումը, միջամտել վիճաբանությանը, որի ընթացքում չի գիտակցել, թե ում է հարվածել և քանի անգամ: Այնուհետև տուն վերադարձի ճանապարհին հայրը հայտնել է, որ ինքը փայտով հարվածել է Արմեն Գալստյանի գլխին:

Համանման ցուցմունքներ տվել է նաև Արթուր Բարսեղյանի հայրը՝ գործով վկա Հարություն Բարսեղյանը:

Գործով վկա Գուրգեն Հովհաննիսյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2004 թվականի մայիսի 08-ին՝ ժամը 12.00-ի սահմաններում, ավտոշուկայում լսել է վիճաբանության ձայներ: Հետաքրքրությունից դրոված՝ գնացել է այդ ուղղությամբ: Ադմուկի մեջ լսել է Արթուր Բարսեղյանի բղավոցը. «հորս չխփեք նա հաշմանդամ է»: Դրանից հետո՝ քիչ անց լսել է «խփեցին եղբորս» մեկ այլ բղավոց, շրջվելով տեսել է Արմեն Գալստյանին գետնին ընկած վիճակում, իսկ ամբաստանյալին՝ փայտը ձեռքին կանգնած: Այդ ընթացքում տեսել է, թե ինչպես է ամբաստանյալի հայրը քաշում նրա թևից և կրկնում. «Արթուր ուշքի եկ»:

Համանման ցուցմունքներ տվել են վկաներ Սվետլանա Այդիկյանը, Արմեն Ծատուրյանը, Խաչատուր Ստեփանյանը և ուրիշները:

Իսկ այն, որ Արթուր Բարսեղյանի հայրը՝ Հարություն Բարսեղյանը, հանդիսացել է 2-րդ խմբի հաշմանդամ և դեռ 2001 թվականի դեկտեմբերի 25-ին Արթուր Բարսեղյանը ճանաչվել է հոր նկատմամբ որպես հոգաբարձու, հիմնավորված է Երևանի Էրեբունու թաղապետի 25.12.2001 թվականի թիվ 350 որոշմամբ /հատ.1, գ.թ.29/:

Գործով նշանակված դատահոգեբանական փորձաքննությանը ապացուցվել է, որ իրոք արարքը կատարելու պահին Ա. Բարսեղյանը գտնվել է աֆեկտի վիճակում:

Սակայն այս դեպքում պետք է կիրառվեր անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, քանզի աֆեկտի վիճակում գործած Արթուր Բարսեղյանը գտնվելիս է եղել անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Ի տարբերություն անհրաժեշտ պաշտպանության հանցանքը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարելիս բացակայում է իրավական շահերը պաշտպանելու նպատակը, և ընդհակառակը, անհրաժեշտ պաշտպանությունը ենթադրում է իրավական շահերի պաշտպանության նպատակի առկայություն:

Մույն քրեական գործով այդպիսի իրավական շահ է հանդիսացել հաշմանդամ հորն արդեն իսկ սկսված և շարունակվող ուսնձգություններից պաշտպանելը:

Վերը նշվածն ապացուցում է, որ դատապարտյալի հոր՝ Հարություն Բարսեղյանի նկատմամբ իրականացված ուսնձգությունը եղել է հանրորեն վտանգավոր, առկա և իրական:

Արթուր Բարսեղյանը պաշտպանությունն իրականացրել է հոր շահերի պաշտպանության համար: Պաշտպանությունն իրականացնելիս հոր նկատմամբ իրականացված ուսնձգությունը փաստացիորեն ավարտված չի եղել, և պաշտպանությամբ վնաս է պատճառվել ոչ թե 3-րդ անձի, այլ հորը ծեծողներից մեկին: Այսինքն՝ պաշտպանությունն իրականացվել է ժամանակին, և թույլ չի տրվել սահմանների անցում:

Վճռաբեկ դատարանը նկատի է ունենում նաև, որ վեճի ու կռվի նախահարձակները եղել են Արմեն և Անդրանիկ Գալստյանները, Արամ Մարգարյանն ու Էռնեստ Աբրահամյանը:

Վերոգրյալների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արթուր Բարսեղյանը կռվի մասնակից Արմեն Գալստյանի առողջությանը ծանր վնաս է պատճառել անհրաժեշտ պաշտպանության վիճակում և ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այն հանցագործություն չի համարվում: Ուստի Արթուր Բարսեղյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը:

Այսպիսով՝ դատարանը գտնում է, որ Ա. Բարսեղյանի նկատմամբ թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, նրա նկատմամբ կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասի որոշյալները, որոնք տվյալ քրեական գործով կիրառման ենթակա չէին, նրա նկատմամբ պետք է կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ նշված խախտումները դատավճիռը բեկանելու և Ա.Բարսեղյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք են:

Հետևաբար Արթուր Բարսեղյանի նկատմամբ կայացված առաջին ատյանի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանների վերը նշված դատավճիռները ենթակա են բեկանման, և քրեական գործի վարույթը՝ կարճման, ինչպես նաև Արթուր Բարսեղյանի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը՝ դադարեցման, որովհետև քրեական գործի վարույթի կարճման հիմքն առկա է եղել դեռևս առաջին ատյանի և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարաններում գործի քննության ժամանակ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 403-406-րդ հոդվածներով, 419-րդ հոդվածի 5-րդ կետով, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արթուր Հարությունի Բարսեղյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մարտի 02-ի դատավճիռները բեկանել և քրեական գործի վարույթը կարճել, Արթուր Բարսեղյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել նրա արարքում հանցակազմ չլինելու պատճառով:

2. Հարուցված քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-341/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանում դատավճիռ Գործ հ. 568-06/ 2006թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Ղազարյան,
դատավորներ՝ Ս.Համբարձումյան, Ա.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/՝

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՍՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Հակոբ Սմբատի Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. նոյեմբերի 22-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հակոբ Սմբատի Կարապետյանը Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. հուլիսի 28-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան 2 տարի ժամկետով:

Հակոբ Կարապետյանի և Ջավեն Մնացականյանի կողմից 2005թ. մարտի 22-ին հրազենի գործադրմամբ խուլիգանություն կատարելու փաստի առթիվ ոստիկանության Նաիրիի քննչական բաժանմունքում 2005թ. մարտի 23-ին հարուցվել է քրեա-

կան գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով: 2005թ. ապրիլի 12-ի որոշմամբ Հակոբ Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտարարվել է հետախուզում, և գործի վարույթը կասեցվել է: 2005թ. մայիսի 18-ի որոշմամբ Հակոբ Կարապետյանի մասն անջատվել է և նախաքննությունը շարունակվել է առանձին վարույթում: 2005թ. սեպտեմբերի 8-ին Հակոբ Կարապետյանը հայտնաբերվել է, գործի վարույթը վերսկսվել: Նախաքննության մարմնի 2005թ. սեպտեմբերի 23-ի որոշումներով Հակոբ Կարապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ հանցակազմի բացակայության պատճառով, և վերջինին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 2005թ. սեպտեմբերի 27-ի որոշմամբ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխվել է և խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Հակոբ Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով սույն քրեական գործը 2005թ. հոկտեմբերի 10-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան:

Դատական նիստերին չներկայանալու պատճառով Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006թ. հունվարի 10-ի որոշմամբ ամբաստանյալ Հակոբ Կարապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխվել է կալանքով, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և գործի վարույթը կասեցվել է: 2006թ. օգոստոսի 23-ին Հակոբ Կարապետյանը դիմումով կամովին ներկայացել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան, խնդրելով իր նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի 2006թ. հուլիսի 7-ի որոշումը: Դատարանի նույն օրվա որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և 2006թ. սեպտեմբերի 8-ի դատավճռով Հակոբ Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառմամբ նախորդ՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. հուլիսի 28-ի դատավճռով սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է և ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ նոր դատավճռով նշանակված պատժին մասնակիորեն զումարվել է նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 1 տարի ազատազրկումը, վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում 3 տարի 6 ամիս ժամկետով: Այնուհետև կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի 2006թ. հուլիսի 7-ի որոշման 7-րդ կետի «գ» ենթակետը և նշանակված պատիժը կրճատվել է մեկ երրորդով, վերջնական պատիժ սանմանելով ազատազրկում 2 տարի 4 ամիս ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2006թ. օգոստոսի 23-ից:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա վերստին քննելով գործը, 2006թ. նոյեմբերի 22-ի դատավճռով առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, ամբաստանյալի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Դատապարտյալ Հակոբ Կարապետյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ըստ դատավճիռների Հակոբ Կարապետյանը դատապարտվել է այն բանի համար, որ 1987-88թթ. Աղբեջանի Հանրապետության Ղազախ քաղաքից գործով չպարզված անձից ապօրինի կերպով ձեռք է բերել 1984թ. արտադրության «ԱԿՍ-74Ու» տեսակի առանց խզակոթի ինքնաձիգ և պահուցակի մեջ եղած 5,45 մմ. տրամաչափի 14 հատ փամփուշտներ, որոնք մինչև 22.03.05թ. պահել է Նոր Հաճրն քաղաքի Իսահակյան 2-րդ շենքի 21 հասցեում գտնվող իր տանը: Հետագայում՝ 08.09.05թ. Նոր Հաճրն գնալու ճանապարհին ինքնաձիգը և փամփուշտակարն իր փամփուշտներով պահել է ՆորԳեղի - Աբովյան ավտոճանապարհին կից թփերի մեջ, որը 13.09.05թ. Հ.Կարապետյանի նշված վայրից հայտնաբերվել է ոստիկանության Նաիրի բաժնի աշխատակիցների կողմից:

3. Վճարելի բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ դատապարտյալի բողոքի՝ թե առաջին, և թե վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատական սխալ, չկիրառելով համաներման ակտը: ՀՀ ԱԺ 07.07.06թ. համաներման ակտը պահանջում է մինչև 3 տարի ազատազրկում նախատեսող հանցավոր արարքներ կատարած անձանց նկատմամբ կարճել քրեական գործի վարույթը ցանկացած փուլում: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը սահմանում է ազատազրկում մինչև 3 տարի ժամկետով: Դատական երկու ստյանները, անտեսելով համաներման ակտի պահանջը, այն իր նկատմամբ սխալ են կիրառել, գործի վարույթը կարճելու փոխարեն իր նկատմամբ նշանակված պատժաչափը կրճատել են, որը նաև համաներման ակտի սխալ մեկնաբանման արդյունք է: Համաներման ակտի 8-րդ կետում թվարկված են այն արարքները և անձանց շրջանակը, որոնց վրա համաներում չի տարածվում, մինչդեռ իրեն մեղաազրկված արարքը թվարկվածների մեջ չէ և ինքը չի գտնվում թվարկված անձանց շրջանակում: Նշել է նաև, որ վատառողջ է, առողջական վիճակը վատթարանում է և ազատազրկման վայրում երկար մնալու դեպքում ծայրաստիճան կվատանա վիճակը, որը կարող է հանգեցնել ծանր հետևանքի: Բացի այդ, Վճարելի դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. նոյեմբերի 22-ի դատավճիռը և իր նկատմամբ կիրառել համաներման ակտը:

4. Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

Վճարելի բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճարելի դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառարանություններով.

Համաներումը՝ դա օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող արտադատական և որպես կանոն մարդասիրական բնույթ ունեցող նորմատիվ ակտ է, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը կամ վերացվել դատվածությունը: Համաներման ակտի նորմատիվ բնույթը պայմանավորված է նրանով, որ այն տարածվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի նկատմամբ: Համաներումը պետաիրավական, այլ ոչ թե քրեաիրավական ակտ է, սակայն

դրա կիրառման հետևանքները էականորեն շոշափում են քրեական իրավունքի ոլորտը:

Համաներումն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի հիմքում դրված են՝ մի կողմից համաներման ակտը որպես քրեական պատասխանատվությունից ազատելու կամ անձի վիճակն այլ կերպ բարելավելու հիմք համարող ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, մյուս կողմից՝ օրենսդիր մարմնի կողմից ընդունվող նորմատիվ ակտը, որում սահմանվում են վերը նշված նախապայմանները, առանց որի օրենսգրքերի նորմերը չեն կարող իրացվել: Որպես նորմերի միասնական համալիր, դրանց իրավական ուժն իրացվում է այդպիսիք համակցությամբ կիրառելու միջոցով: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը համաներման ակտի ընդունումը դիտում է որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանք: Նշված հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

Կոնկրետ անձի նկատմամբ համաներման ակտի կիրառման հարցը լուծվում է ակտում նշված մարմինների կողմից՝ անձի նկատմամբ անհատապես կայացվող դատավարական ակտով: Համաներման կիրառումը պայմանավորված է իրավական հիմքի (համաներման ակտի առկայությունը), և համաներման ակտով նախատեսված փաստական տվյալների համակցությամբ: Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում, համաներման կիրառման համար օրենսդրական սահմանափակումներ չկան, այլ այդպիսի սահմանափակումներ նախատեսվում են համաներման ակտով և դրանք պետք է պահպանվեն անվերապահորեն: Եվ քանի որ համաներման ակտն այն կիրառող մարմինների համար ունի համապարտադիր բնույթ, ուստի առաջնային է կիրառման ընթացքում օրինականության պահպանումը:

Համաներման ակտով նախատեսված են ընդհանուր սպառիչ բացառություններ, որոնք մատնանշում են այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներման ակտը չի կարող կիրառվել: Այդ բացառություններից շեղումները և դրանց շրջանակից դուրս գտնվող անձանց նկատմամբ համաներման կիրառման սահմանափակումները կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտմանը և կամայականության դրսևորմանը, առաջացնելով ծանր հետևանքներ և օրենքի ոչ միատեսակ կիրառություն:

Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի 2006թ. հուլիսի 7-ի որոշման 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ օրենքով սահմանված կարգով ենթակա են կարճման այն անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության, նախաքննության մարմինների կամ դատարանի վարույթում գտնվող՝ մինչև 2006թ. հունիսի 1-ը կատարած հանցագործություններով քրեական գործերը, որոնցով անձինք մեղադրվում են այնպիսի հան-

ցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում:

Սույն գործով Հակոբ Կարապետյանը մեղադրվում է մինչև 2006թ. հունիսի 1-ը կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ, որի համար նախատեսված է պատիժ կալանք՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:

Համաներման որոշման 8-րդ կետում շարադրված են այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում օրենսդիրը բացառել է համաներման կիրառումը:

Մասնավորապես, համաներման որոշման 8-րդ կետի «բ» ենթակետը որպես համաներման կիրառման սահմանափակման նախապայման է նշում այն դեպքերը, երբ անձանց նկատմամբ նշանակված պատժաչափը կրճատվել է, կամ ուլքեր դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատիժը կրելուց ազատվել են, կամ որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական գործերը կարճվել են Հայաստանի Հանրապետության համաներման մասին որոշումներով և այդ անձինք կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն: Այս սահմանափակումը վերաբերում է այն անձանց, ուլքեր համաներման ակտի կիրառմամբ քրեախրավական որոշակի հետևանքներից ազատվելուց հետո կրկին կատարել են դիտավորյալ հանցագործություն: Մինչդեռ գործի նյութերում չկան որևէ տվյալներ այն մասին, որ Հ.Կարապետյանին ինչպես սույն գործով, այնպես էլ նախորդ դատավճռով մեղազարկված հանցավոր արարքները կատարվել են նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության համաներման մասին որևէ որոշում կիրառելուց հետո: Հետևաբար համաներման կիրառման նշված բացառությունը Հ.Կարապետյանի նկատմամբ չի կարող տարածվել:

Գործի նյութերից երևում է, որ Հակոբ Կարապետյանը մինչև նշված համաներման ակտի ընդունելը գտնվելով հետախուզման մեջ, 2006թ. օգոստոսի 23-ին կամովին ներկայացել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան, խնդրելով իր նկատմամբ կիրառել համաներման ակտը, հետևապես 8-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված սահմանափակումը Հ.Կարապետյանի նկատմամբ նույնպես կիրառելի չէ:

Նույն կետի «գ» ենթակետի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ համաներման կիրառումը սահմանափակված չէ:

Համաներման որոշման 8-րդ կետի «ը» ենթակետը համաներման կիրառման սահմանափակում է նախատեսում այն անձանց նկատմամբ, ուլքեր դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են և կրկին դատապարտվել են պատժի չկրած մասի ընթացքում դիտավորությամբ կատարած հանցագործության համար: Մինչդեռ, Հակոբ Կարապետյանի նկատմամբ նախորդ դատավճռով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով չի կիրառվել պայմանականորեն, վերջինիս նկատմամբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը չի կիրառվել, հետևապես այս սահմանափակումը նրա նկատմամբ ևս կիրառելի չէ, իսկ հակառակ մոտեցումը կնշանակի քրեական իրավունքում արգելված անարդիարի կիրառում:

Գործի նյութերում բացակայում են մաս համաներման որոշման 8-րդ կետի մնացած ենթակետերում նշված այն սահմանափակումները, որոնք կարող էին արգելք հանդիսանալ համաներման ակտի կիրառմամբ Հակոբ Կարապետյանի նկատմամբ ինչպես սույն գործի վարույթը կարճելու, այնպես էլ նախորդ դատավճռով պայմանականորեն չկիրառված պատժից ազատելու համար:

Այս պայմաններում առաջին ատյանի դատարանն իրավացիորեն գտնելով, որ ՀՀ Ազգային ժողովի 07.07.06թ. համաներման ակտը Հակոբ Կարապետյանի նկատմամբ կիրառելի է, սխալմամբ կիրառել է որոշման 7-րդ կետը, որը վերաբերում է համաներման որոշման ուժի մեջ մտնելու դրույթյամբ նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատելուն:

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ առաջին ատյանի դատարանը Հ.Կարապետյանի նկատմամբ համաներման որոշումը սխալ է կիրառել, ինչպես նաև մերժելով Հ.Կարապետյանին նախորդ դատավճռով պայմանականորեն չկիրառված պատժից ազատելու մասին մեղադրողի միջնորդությունը, պատճառաբանել է, որ ՀՀ քրեական օրենսգրքը գերակայող ուժ ունի Ազգային ժողովի կողմից ընդունված որոշման նկատմամբ և օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով Հ.Կարապետյանը համաներման կիրառմամբ չի կարող ազատվել նախորդ դատավճռով պայմանականորեն չկիրառված պատժից: Վերաքննիչ դատարանի հիշյալ փաստարկը հիմնագուրկ է, քանի որ համաներման քրեական պատասխանատվությունից ազատող կամ պատիժը մեղմացնող ինքնուրույն գործող ինստիտուտ է, որի իրավական կարգավորումները տրված են ՀՀ քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածներով: Համաներման ակտի և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի միջև չկա որևէ հակասություն, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասում չկա համաներման կիրառման որևէ սահմանափակում, ավելին, համաներման որոշման 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված է այն անձանց պատժից ազատելու իրավական հիմքը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը և նկատի ունենալով, որ Հակոբ Կարապետյանի նկատմամբ համաներման որոշման կիրառման սահմանափակումները գործի նյութերում բացակայում են, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներման հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2006թ. հուլիսի 7-ի որոշման 6-րդ, 12-րդ կետերի «ա» ենթակետերի, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի կիրառմամբ սույն քրեական գործը ենթակա էր կարճման: Ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները Հակոբ Կարապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության պայմաններում կայացնելով մեղադրական դատավճիռ, թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ հոդվածների համաձայն հիմք են հանդիսանում դատավճիռները բեկանելու և գործի վարույթը կարճելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաներման որոշման կիրառմամբ Հակոբ Կարապետյանը ենթակա էր ազատման նաև նախորդ դատավճռով պայմանականորեն չկիրառված պատժից: Սակայն, համաներման ակտի կիրառմամբ սույն գործի վարույթի կարճման պայմաններում, երբ Հ.Կարապետյանի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետն ավարտված է, համաներման կիրառմամբ այդ պատժից ազատելու անհրաժեշտությունը վերացել է:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Հակոբ Սմբատի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի առաջին աստանի դատարանի 2006թ. սեպտեմբերի 8-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. նոյեմբերի 22-ի դատավճիռները բեկանել, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի 2006թ. հուլիսի 7-ի որոշման 6-րդ կետի «ա» ենթակետի կիրառմամբ գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, Հակոբ Սմբատի Կարապետյանին անհապաղ ազատել կալանքից:

Իրեղեն ապացույց հանդիսացող «474987» համարի «ԱԿՍ-74Ու» տեսակի ինքնաձիքը և պահունակը թողնել ՀՀ Ոստիկանության տնօրինությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**2006 թվականի դատավարական իրավունքի վերաբերյալ
որոշումներ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-234/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ N 281//2005թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի հոկտեմբերի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հասմիկ Գուրգենի Կուրդինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հասմիկ Գուրգենի Կուրդիյանի և մյուսների կողմից խարդախություն կատարելու փաստի առթիվ 2001թ. դեկտեմբերի 18-ին հարուցվել է սույն քրեական գործը 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության ընթացքում՝ 2002թ. փետրվարի 18-ին, որոշումներ են կայացվել Հասմիկ Կուրդիյանին ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և հետախուզում հայտարարելու մասին: Նույն օրվա որոշմամբ գործի վարույթը կասեցվել է:

2004թ. փետրվարի 11-ին Հասմիկ Կուրդիյանը ձերբակալվել է ՌԴ Խաբարովսկ քաղաքում, 2004թ. օգոստոսի 13-ին էտապավորվել է Երևան քաղաք և տեղափոխվել ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ:

2004թ. օգոստոսի 13-ին գործի վարույթը վերսկսվել է, Հ.Կուրդիյանին մեղադրված արարքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ 2004թ. հոկտեմբերի 7-ին նրան առաջադրված մեղադրանքը փոփոխվել է. Հասմիկ Կուրդիյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի դատավճռով Հասմիկ Կուրդիյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց տուգանքի: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2004թ. փետրվարի 11-ից:

Հասմիկ Կուրդիյանի կողմից արդարացման դատավճիռ կայացնելու հիմքով բերված վերաքննիչ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005թ. հունիսի 1-ի դատավճռով թողել է առանց բավարարման, առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի 07.08.06թ. որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով մեկ ամսյա ժամկետ վճռաբեկ բողոքը օրենսդրությանը համապատասխանեցնելու և կրկին ներկայացնելու համար:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 11.09.06թ. որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հասմիկ Կուրդիյանը դատապարտվել է այն բանի համար, որ նախնական համաձայնության գալով սույն գործով դատապարտյալ Անժելա Քիլինքարովայի հետ, տուժող Անահիտ Ալբերտի Պետրոսյանին և նրա անչափահաս որդուն՝ Հայկ Արայիկի Եղիազարյանին, Հունաստան ուղարկելու պատրվակով, չարաշահելով տուժողի վստահությունը՝ 2001թ. հուլիս-օգոստոս ամիսներին Անահիտ Պետրոսյանից վերցրել են խոշոր չափերի՝ 1.390.000 ՀՀ դրամին համարժեք 2.500 ԱՄՆ դոլար և խաբույթամբ տիրացել այդ գումարին:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործի նախաքննության ընթացքում Հասմիկ Կուրդիյանը ներգրավված է եղել որպես մեղադրյալ 1961թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, և քննությունից թաքնվելու պատճառով հայտարարված է եղել հետախուզում: 11.02.2004թ. Հ.Կուրդիյանը հայտնաբերվել է Ռ-Դ Խարաբովսկ քաղաքում, ձերբակալվել է և 13.08.2004թ. էտապավորվել Հայաստանի Հանրապետություն: Էտապավորման հարցը լուծելիս Ռ-Դ գլխավոր դատախազությունը համաձայնություն է տվել վերջինին քրեական պատասխանատվության ենթարկել 1961թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով, որն էլ համապատասխանում է 2003թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասին: Սակայն էտապավորելուց հետո Հ.Կուրդիյանին առաջադրված մեղադրանքը համապատասխանեցվել է 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածին, փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել նշված հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: Առաջին առյանի և վերաքննիչ դատարանների դատավճիռներով Հ.Կուրդիյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Արդյունքում դատարանների կողմից անտեսվել են «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ Ռ-Դ գլխավոր դատախազությունը համաձայնություն է տվել Հ.Կուրդիյանին քրեական պատասխանատվության ենթարկել 1961թ. ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով, որն էլ համապատասխանում է 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասին: Փաստորեն Հ.Կուրդիյանն առանց Ռ-Դ համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել:

Բողոքը բերած անձը խնդրել է բեկանել Հասմիկ Կուրդիյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին առյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճիռները, Հ.Կուրդիյանի արարքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով՝ սահմանելով ազատազրկում 1 տարի ժամկետով և այն կրած լինելու կապակցությամբ նրան ազատել պատժի կրումից:

Բողոքում նշվել է նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Մույն գործի նյութերից երևում է, որ Հասմիկ Կուրդինյանը նախաքննության մարմնի 2002թ. փետրվարի 18-ի որոշմամբ ներգրավվել է որպես մեղադրյալ 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց որակյալ հատկանիշի խարդախություն կատարելու համար: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտարարվել է հետախուզում, և գործի վարույթը կասեցվել է:

2004թ. փետրվարի 11-ին Հասմիկ Կուրդինյանը ձերբակալվել է ՌԴ Խաբարովսկ քաղաքում:

Հասմիկ Կուրդինյանին Հայաստանի Հանրապետություն էտապավորելու հարցը լուծելու համար ՌԴ գլխավոր դատախազությանը հայտնվել է, որ վերջինս մեղադրվում է 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով, որով և ստացվել է հանձնող կողմի համաձայնությունը:

2004թ. օգոստոսի 13-ին Հասմիկ Կուրդինյանը էտապավորվել է Երևան քաղաք և տեղափոխվել ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ:

Նույն օրը գործի վարույթը վերսկսվել է, Հ.Կուրդիյանի մեղադրանքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ 2004թ. հոկտեմբերի 7-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է. Հասմիկ Կուրդիյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերով կատարված խարդախության համար:

Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի դատավճռով Հասմիկ Կուրդիյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված խարդախության համար: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճռով թողնվել է անփոփոխ:

Դատարանների կողմից դատավճիռ կայացնելիս անտեսվել է, որ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի համաձայն՝ ՌԴ գլխավոր դատախազությունը համաձայնություն է տվել Հ.Կուրդիյանին հանձնել ՀՀ իրավապահ մարմիններին՝ 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար, որն էլ համապատասխանում է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Փաստորեն տվյալ դեպքում Հասմիկ Կուրդիյանն առանց ՌԴ համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի քննության ընթացքում միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը՝ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Հասմիկ Գուրգենի Կուրդիյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճիռները բեկանելու և փոփոխելու համար, քանի որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են նման հնարավորություն, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճարելի դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի վերը նշված նորմերի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Հասմիկ Գուրգենի Կուրդինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մարտի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. հունիսի 1-ի դատավճիռները բեկանել և փոփոխել՝ Հասմիկ Կուրդինյանի արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով՝ սահմանելով ազատազրկում 1 տարի ժամկետով, և նրան ազատել պատժի կրումից:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-271/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ N 695//2005թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ

Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար

Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

մասնակցությամբ

Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ

դատախազ

2006 թվականի նոյեմբերի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Մարտին Լյովայի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. նոյեմբերի 11-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. դեկտեմբերի 20-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Մարտին Լյովայի Միքայելյանին 1999թ. հունիսի 28-ին մեղադրանք է առաջադրվել 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և հայտարարվել հետախուզում: 1999թ. օգոստոսի 12-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է: 2004թ. դեկտեմբերի 19-ի որոշմամբ Մ.Միքայելյանին մեղսագրված արարքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և

նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով:

2002թ. հունվարի 31-ին ՌԴ-ից հաղորդում է ստացվել, որ հետախուզման մեջ գտնվող Մարտին Միքայելյանը գողություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է Մոծայսկի ՆԳ բաժնի աշխատակիցների կողմից: 2002թ. փետրվարի 4-ին որոշում է կայացվել Մարտին Միքայելյանին ՀՀ էտապավորելու մասին, որում նշվել է, որ վերջինս մեղադրվում է ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորյալ սպանություն կատարելու մեջ: Սակայն ՌԴ գլխավոր դատախազության կողմից Մ.Միքայելյանին ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու միջնորդությունը մերժվել է, քանի որ նրան մեղադրանք է առաջադրվել ՌԴ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մի խումբ անձանց հետ ՌԴ տարածքում գողություններ կատարելու համար: Մ.Միքայելյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան, և Մոծայսկ քաղաքի դատարանի 2003թ. հունիսի 2-ի դատավճռով Մ.Միքայելյանը դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով: Պատիժն ամբողջությամբ կրելուց հետո ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ Մարտին Միքայելյանն էտապավորվել է Հայաստան:

2005թ. հունիսի 22-ին գործի վարույթը վերսկսվել է: Մարտին Միքայելյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել ու լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով: Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մայիսի 11-ի դատավճռով Մարտին Լյովայի Միքայելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, և նա ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման 12 (տասներկու) տարի ժամկետով, իսկ 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով սահմանված 12 (տասներկու) տարի ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումից 3 տարին, և Մարտին Միքայելյանի նկատմամբ նշանակվել է ազատազրկում 15 (տասնհինգ) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2005թ. փետրվարի 8-ից: Գործը քննելով Մ.Միքայելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա, որով նա խնդրել է մեղմացնել պատիժը, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005թ. դեկտեմբերի 20-ի դատավճռով մասնակիորեն բավարարել է բողոքը և առաջին ատյանի դատարանի դատավճիռը նշանակված պատժի հաշվակցման մասով փոփոխել է: ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով Մ.Միքայելյանը դատապարտվել է ազատազրկման 12 (տասներկու) տարի ժամկետով, իսկ 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական սահմանվել է ազատազրկում 15 (տասնհինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ կետի կանոններով նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է ՌԴ Մոսկվայի մարզի

Մոծայսկի քաղաքային դատարանի 2003թ. հունիսի 2-ի դատավճռով նշանակված ու լրիվ կրած 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկումը, և պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2002թ. փետրվարի 8-ից:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը, գործը քննելով Մ.Միքայելյանի պաշտպանի վճռաբեկ բողոքի հիման վրա, որով նա խնդրել է դատապարտյալի նկատմամբ սահմանել մեղմ պատիժ, պաշտպանի վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը 2006թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Մ.Միքայելյանը դատապարտվել է այն բանի համար, որ 1999թ. հունիսի 11-ի լույս 12-ի գիշերը՝ ժամը 4 անց 30-ի սահմաններում, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով, հարձակում է կատարել Երևանի Արովյան փողոցի թիվ 33 շենքի 1-ին հարկում տեղակայված խաղասրահի աշխատակից Արթուր Մանուկյանի վրա և շահադիտական դրոշմներով նրան սպանելու դիտավորոթյամբ մտալ եղած որպես զենք օգտագործվող պտուտակահանով և հատակից վերցված աղյուսի կտորով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Մանուկյանի գլխին, պարանոցի աջ կեսին, կրծքավանդակի ձախ կեսին և մարմնի այլ շրջաններին, առանձին դաժանությամբ սպանել է նրան, հափշտակել է խաղասրահում եղած 296.420 ՀՀ դրամը և դիմել է փախուստի:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոնկալյալ հիմնավորումներով.

Մույն գործով նախաքննության ընթացքում Մարտին Միքայելյանը ներգրավված է եղել որպես մեղադրյալ 1961թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և հայտարարվել հետախուզում: 1999թ. օգոստոսի 12-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է: 2004թ. դեկտեմբերի 19-ի որոշմամբ Մ.Միքայելյանին մեղսագրված արարքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով: Ռ-Դ-ում հայտնաբերված Մ.Միքայելյանի էտապավորման հարցը լուծելիս Ռ-Դ գլխավոր դատախազությունը բավարարել է ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կատարած Մ.Միքայելյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության պահանջը: 2005թ. հունիսի 22-ին գործի վարույթը վերսկսվել է: Մ.Միքայելյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել ու լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով: Սակայն դրա վերաբերյալ չի ստացվել Ռ-Դ համապատասխան մարմինների համաձայնությունը, ինչը ուղղակիորեն նշված է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասում: Փաստորեն, անտեսվել են ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և 2005թ. նոյեմբերի 11-ի դատավճռով Մարտին Միքայելյանը մեղա-

վոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 15 (տասնհինգ) տարի ժամկետով: Փաստորեն, Մ.Միքայելյանն առանց ՌԴ համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Բողոք բերած անձը խնդրել է Մարտին Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 11.11.05թ. և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 20.12.05թ. դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի մասով բեկանել, գործի մասն այդ մեղադրանքով կարճել: Մ.Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 20.12.05թ. դատավճիռը և այդ հոդվածով 12 տարի ազատազրկման ձևով նշանակված պատիժը թողնել անփոփոխ, պատժի կրման սկիզբը հաշվել 2002թ. փետրվարի 8-ից:

Բողոքում նաև նշվել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Մ.Միքայելյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. նոյեմբերի 11-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. դեկտեմբերի 20-ի դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով պետք է բեկանել և գործն ուղարկել նոր նախաքննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, քնտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Գործի նյութերով հիմնավորվել է, որ ՌԴ դատախազությունը բավարարել է ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորյալ սպանություն կատարելու մեջ մեղադրվող Մ.Միքայելյանին հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության խնդրանքը: Գործի հետագա քննության ժամանակ նախաքննության մարմինը նրան մեղադրանք է առաջադրել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, որով Մ.Միքայելյանը հանձնված չի եղել, և նա քրեական պատասխանատվության ու պատժի է ենթարկվել նաև այդ հոդվածով: Դրանով խախտվել են 1993թ. հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների պահանջները, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հիմք են Մ.Միքայելյանի վերաբերյալ դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանելու համար: Քանի որ նախաքննության մարմնի և դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ միջազգային պայմանագրի և քրեադատավարական օրենքի էական խախտում, որը չի կարող վերացվել դատական քննության ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա Մ.Միքայելյանի վերաբերյալ դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ենթակա են բեկանման՝ գործը նոր նախաքննության ուղարկելով: Նոր նախաքննությամբ անհրաժեշտ է 1993թ. հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածով նախատեսված կարգով լուծել Հ.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով կատարած հանցագործության համար հանձնելու համաձայնության, ինչպես նաև դրա հետ կապված նշված հոդվածով նրան քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մարտին Լյովայի Սիբայելյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. նոյեմբերի 11-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թ. դեկտեմբերի 20-ի դատավճիռները ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանել և այդ մասով գործն ուղարկել նոր նախաքննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-279/06

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի
N 1/14-2005թ. դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Հարությունյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի նոյեմբերի 24-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Սպարտակ Զանվելի Ալավերդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և 117-րդ հոդվածով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Սպարտակ Զանվելի Ալավերդյանի կողմից դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու փաստի առթիվ 2004թ. հունիսի 17-ին հարուցվել է սույն քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով: Նախաքննության ընթացքում՝ 2004թ. հունիսի 21-ին, որոշում է կայացվել Սպարտակ Ալավերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին: 2004թ. հուլիսի 21-ին առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է, և Ս.Ալավերդյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և 147-րդ հոդվածի 2-րդ մասով: 2004թ. օգոստոսի 18-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Գործի դա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

տաքննության ընթացքում քննությունից թաքնվելու պատճառով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ Ս.Ալավերդյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխվել է կալանքով, և գործի վարույթը կասեցվել է:

2005թ. հունվարի 28-ին Սպարտակ Ալավերդյանը ձերբակալվել է Ռ-Դ Սոչի քաղաքում և ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ 2005թ. հուլիսի 13-ին հանձնվել է Հայաստանի Հանրապետությանն ու տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճռով Սպարտակ Ալավերդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և 117-րդ հոդվածով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով ազատազրկման՝ 4 ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով՝ ուղղիչ աշխատանքների՝ 6 ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ և 66-րդ հոդվածների 2-րդ մասի կանոններով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Սպարտակ Ալավերդյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5 (հինգ) ամիս 20 (քսան) օր ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2005թ. հունվարի 28-ից, և նկատի ունենալով, որ վերջինս նշված պատիժը կրել է, նա ազատ է արձակվել դատարանի դահլիճից:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2006թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Սպարտակ Ալավերդյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2004թ. հունիսի 6-ին, ժամը 19⁰⁰-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի 51/8 բնակարանի բնակչուհի Արմինե Արզումանյանի կամքին հակառակ, բռնություն գործադրելով, ապօրինի մուտք է գործել վերջինիս բնակարան, կենցաղային հողի վրա վիճաբանել և ծեծի ենթարկել նրան՝ դիտավորությամբ պատճառելով առողջության կարճատև քայքայումով թեթև վնաս:

Նույն օրը՝ ժամը 20⁰⁰-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի 51/11 բնակարանում, երբ Արմինե Արզումանյանի հայր Կառլեն Արզումանյանը ցանկացել է պարզաբանել դատերը ծեծի ենթարկելու պատճառները, Սպարտակ Ալավերդյանը ձեռքով հարվածներ է հասցրել նրան, դիտավորությամբ պատճառելով առողջության կարճատև քայքայումով թեթև վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործի նախաքննության ընթացքում Սպարտակ Ալավերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին: Գործի դատաքննության ընթացքում քննությունից թաքնվելու կապակցությամբ ամբաստանյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և գործի վարույթը կասեցվել է: Սպարտակ Ալավերդյանը հայտնաբերվել է Ռ-Դ Սոչի քաղաքում և ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ հանձնվել է Հայաստանի Հանրապետությանն ու տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ: Հանձնման

հարցը լուծելիս ՀՀ գլխավոր դատախազության միջնորդության կապակցությամբ Ռ-Դ գլխավոր դատախազի տեղակալի պատասխան գրության մեջ նշվել է, որ Սպարտակ Ալավերդյանը ՀՀ իրավապահ մարմիններին է հանձնվում միայն ծանրացուցիչ հանգամանքներում բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով, իսկ դիտավորությամբ առողջությանը թեթև մարմնական վնաս պատճառելու մեղադրանքի մասով ՀՀ մարմինների միջնորդությունը բավարարվել չի կարող, քանզի Ռ-Դ օրենսդրությամբ այդ հանցագործության համար ազատազրկման ձևով պատիժ չի նախատեսվում: Նշված պատճառաբանությամբ Ռ-Դ գլխավոր դատախազության կողմից Ս.Ալավերդյանին հանձնելու վերաբերյալ միջնորդության մերժումը պայմանավորված է եղել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի համապատասխան նորմի դրույթով: Սակայն Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, անտեսելով հիշյալ Կոնվենցիայի պահանջները, մասնավորապես 66-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածում ամրագրված՝ հանձնված անձի քրեական հետապնդման սահմանների մասին դրույթը, իր 18.07.05թ. դատավճռով Սպարտակ Ալավերդյանին մեղավոր է ճանաչել և ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, և ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով ու դատապարտել այդ հոդվածների սանկցիաներով պատիժների:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Սպարտակ Ալավերդյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի մասով և գործի մասն այդ մեղադրանքով կարճել, իսկ դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և այդ հոդվածով նշանակված պատիժը՝ 4 ամիս ազատազրկման ձևով, թողնել անփոփոխ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի նյութերից երևում է, որ դատաքննության ընթացքում քննությունից թաքնվելու պատճառով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2004թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ Սպարտակ Ալավերդյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, նրա նկատմամբ նախաքննության ընթացքում ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխվել է կալանքով, և գործի վարույթը կասեցվել է:

2005թ. հունվարի 28-ին Սպարտակ Ալավերդյանը ձերբակալվել է Ռ-Դ Սոչի քաղաքում և ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ 2005թ. հուլիսի 13-ին հանձնվել է Հայաստանի Հանրապետությանն ու տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ:

Հանձնման հարցը լուծելիս Ռ-Դ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Զվյագինցևն իր 18.05.2005թ. թիվ 35/1-124-05 գրությամբ (գ.թ.178) հայտնել է, որ ծանրացուցիչ հանգամանքներում բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով Սպարտակ Ալավերդյանին հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը բավարարվել է, իսկ դիտավորությամբ առողջությանը թեթև մարմնական վնաս պատճառելու մեղադրանքի մասով Ս.Ալավերդյանը հանձնման ենթակա չէ, քանի որ Ռ-Դ օրենսդրությամբ այդ հանցագործության համար ազատագրկման ձևով պատիժ նախատեսված չէ:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, անտեսելով այդ հանգամանքը, 2005թ. հուլիսի 18-ի դատավճռով Սպարտակ Ալավերդյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար:

Փաստորեն, տվյալ դեպքում Սպարտակ Ալավերդյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի՝ մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել, այսինքն՝ տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում:

Սույն գործի քննության ընթացքում միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը՝ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, նույն օ-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

րենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն հիմք են հանդիսանում Սպարտակ Ալավերդյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով բեկանելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Սպարտակ Ջանվելի Ալավերդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և 117-րդ հոդվածով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 18-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի մասով բեկանել և քրեական հետապնդումը դադարեցնել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով կայացված դատավճիռը և նշանակված՝ 4 ամիս ազատազրկումը, թողնել անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-251/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի որոշում կայացրած դատարանի կազմը նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան դատավորներ՝ Եվ.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան քրեական գործ հ. ԶԳ-Հ 11-91/06թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Մ.ՄԻՍՈՆՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Ա.ԵՐԻՅՅԱՆԻ**
փաստաբան **Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**

2006 թվականի նոյեմբերի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով մեղադրյալներ Էդգար Արմենի Հովհաննիսյանի և Գևորգ Սարգսի Սարգսյանի շահերի պաշտպան, փաստաբան Կրոմվել Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. փետրվարի 2-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի դատախազության վարույթում քննվող Էդգար Հովհաննիսյանի և Գևորգ Սարգսյանի վերաբերյալ քրեական գործով մեղադրյալները ներկայացրել են դիմում և ցանկություն են հայտնել, որ իրենց շահերը պաշտպանի փաստաբան Կրոմվել Գրիգորյանը:

Դիմումը ստացվելուց հետո գործի նախաքննությունը վարող քննչական խմբի անդամներից Արամ Գրիգորյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանն իր ազգականն է, որն էլ հիմք ընդունելով, քննչական խմբի ղեկավար Ս.Խաչատրյանը 25.07.2005թ. գրությամբ հայտնել է փաստաբանին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի

համաձայն՝ նա որպես պաշտպան չի կարող մասնակցել տվյալ քրեական գործով վարույթին:

Փաստարան Կ.Գրիգորյանը բողոքարկել է քննիչ Ս.Խաչատրյանի գործողությունները՝ պատճառաբանելով, որ քննիչ Ա.Գրիգորյանի հետ ազգակցական կապի մեջ չի գտնվում:

Երևան քաղաքի դատախազի ավագ օգնականի 01.08.2005թ. որոշմամբ նրա բողոքը մերժվել է:

Նշված որոշման դեմ փաստարանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որը 07.10.2005թ. որոշմամբ ևս մերժվել է:

Կ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն իր 27.10.2005թ. որոշմամբ բեկանել է առաջին ատյանի դատարանի 07.10.2005թ. որոշումը և Կ.Գրիգորյանին թույլատրել է մասնակցելու Էդ.Հովհաննիսյանի ու Գ.Սարգսյանի վերաբերյալ թիվ 12152005 քրեական գործով որպես պաշտպան:

Երևան քաղաքի դատախազի ավագ օգնական Վ.Մուրադյանի վճռաբեկ բողոքով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 25.11.2005թ. որոշմամբ վերաքննիչ դատարանի 27.10.2005թ. որոշումը բեկանել և նյութերը վերադարձրել է նույն դատարան՝ նոր քննության՝ նկատի ունենալով, որ նոր դատաքննությանը պետք է ճշտել Արամ և Կրոմվել Գրիգորյանների միջև ազգակցական կապի առկայության կամ բացակայության փաստը և հանգել համապատասխան եզրակացության:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, կրկին անգամ քննելով գործը, 02.02.2006թ. որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 07.10.2005թ. որոշումը թողել է անփոփոխ, իսկ Կ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 02.02.2006թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Կ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի 09.08.2006թ. որոշմամբ Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով մեկ ամսյա ժամկետ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Կ.Գրիգորյանը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 20.09.2006թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սույն վեճի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը, որը չպետք է կիրառեր, իսկ նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 39-րդ կետի համաձայն՝ ազգականներ են համարվում ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք:

Ըստ բողոք բերած անձի՝ Երևան քաղաքի դատախազի ավագ օգնական Վ.Մուրադյանի և Երևան քաղաքի դատախազության քննիչ Ս.Խաչատրյանի անօրինական և չիմնավորված գործողությունների հետևանքով խախտվել է իր և իր պաշտպանյալների պաշտպանության իրավունքը, որովհետև սկսած 21.07.2005թ. պաշտ-

պանի կարգավիճակ ձեռք բերելու պահից՝ իրեն հնարավորություն չեն ընձեռում իրականացնելու նրանց պաշտպանությունը:

Բողոքի հեղինակը նաև նշում է, որ ինքը և Երևան քաղաքի դատախազության ավագ քննիչ Արամ Գրիգորյանը որևէ ազգակցական կապի մեջ չեն գտնվում: Բացի այդ, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ հերքվել է նախաքննական մարմնի այն փաստարկը, որ ինքը և Ա.Գրիգորյանը Հաթերք գյուղի նախկին բնակիչներ են և իրենց պապի պապը նույն անձնավորությունն է:

Վճռաբեկ բողոք բերած անձը վերը նշված հիմքերով խնդրել է բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 07.10.2005թ., ինչպես նաև ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 02.02.2006թ. որոշումները և կարճել վարույթը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն վերաքննիչ դատարանի որոշմամբ հաստատված հետևյալ փաստերը՝

1. Երևան քաղաքի դատախազի 15.07.05թ. որոշմամբ 12152005 քրեական գործով նախաքննության կատարման համար կազմվել է քննչական խումբ, որում ընդգրկվել են նաև քննիչներ Ս.Խաչատրյանը և Ա. Գրիգորյանը:

2. Մեղադրյալներ Էդ.Հովհաննիսյանի և Գ.Սարգսյանի ցանկությամբ փաստաբան Կ.Գրիգորյանը 21.07.2005թ. ներգրավվել է որպես պաշտպան, և ձեռք է բերել պաշտպանի կարգավիճակ:

3. Կ.Գրիգորյանը քրեական գործով կազմված քննչական խմբի անդամ Ա.Գրիգորյանի 21.07.05թ. զեկուցագի հիման վրա հեռացվել է գործով վարույթից՝ վերջինս հետ ազգակցական կապի մեջ գտնվելու պատճառաբանությամբ:

4. Երևան քաղաքի դատախազի ավագ օգնական Վ.Մուրադյանի 01.08.2005թ. որոշմամբ Կ.Գրիգորյանի բողոքը մերժվել է:

5. Ա.Գրիգորյանը և Կ.Գրիգորյանը գտնվում են ազգակցական կապի մեջ:

6. Մեղադրյալներ Էդգար Հովհաննիսյանը և Գևորգ Սարգսյանը ամբողջ նախաքննության ընթացքում այլ պաշտպան ունենալ չեն ցանկացել և պնդել են, որ իրենց շահերը պաշտպանի միայն փաստաբան Կրոմվել Գրիգորյանը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Ծանոթանալով վճռաբեկ բողոքի փաստարկներին և բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Մարդու իրավունքների պաշտպանությունը և դրա իրականացման համար համապատասխան երաշխիքների սահմանումը իրավական համարվող պետության առաջնակարգ խնդիրն է:

Քրեական դատավարությունում մեղադրվող անձի համար պաշտպանության իրավունքի ապահովումն ունի առանցքային նշանակություն: Քրեական դատավարությունում մեղադրվող անձի պաշտպան ունենալու իրավունքը նրան վերապահված բոլոր իրավունքներից հիմնականն է:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ «յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ու-

նենալու իրավունք»։ Այսպիսով, քրեական դատավարությունում մեղադրվող անձի համար հայեցողական ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը ստացել է սահմանադրական կարգավորում։

Սահմանադրական հիշյալ կարգավորումը համահունչ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի պահանջներին, համաձայն որի՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի համար երաշխավորվում է իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պաշտպանը և ներկայացուցիչը գործի վարույթից հեռացվում են, եթե «գտնվում է ազգակցական կամ անձնական ծառայողական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցում կամ մասնակցել է քրեական գործի քննությանը»։

Ներկայացված նյութերից երևում է, որ մեղադրյալներ Էդգար Հովհաննիսյանի և Գևորգ Սարգսյանի շահերի պաշտպան Կրոմվել Գրիգորյանը քրեական գործի վարույթից հեռացվել է, քանի որ նա ազգակցական հարաբերությունների մեջ է գտնվում քննչական խմբի անդամներից մեկի՝ Արամ Գրիգորյանի հետ։ Գործի նյութերից նաև երևում է, որ մեղադրյալներ Էդգար Հովհաննիսյանը և Գևորգ Սարգսյանը ամբողջ նախաքննության ընթացքում այլ պաշտպան ունենալ չեն ցանկացել և պնդել են, որ իրենց շահերը պաշտպանի միայն փաստաբան Կրոմվել Գրիգորյանը։

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պայմաններում խախտվել է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով մեղադրյալներ Էդգար Հովհաննիսյանի և Գևորգ Սարգսյանի՝ իրենց հայեցողությամբ պաշտպան ընտրելու և ունենալու իրավունքը, քանի որ տվյալ դեպքում ՀՀ Սահմանադրության և Եվրոպական կոնվենցիայի նորմերը գերակայություն ունեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի նկատմամբ։

Բացի վերոգրյալից, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում նաև դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստը։

Նշված հոդվածում խոսք է գնում ոչ միայն դատավարությանը մասնակցող անձանց ազգակցական լինելու, այլ ազգակցական հարաբերությունների մեջ լինելու մասին, որի պայմաններում պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելու հիմք պետք է հանդիսանա ոչ միայն նրանց կենսաբանական կապը, այլ նաև ազգակցական հարաբերությունները։ Այդ առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթը չէր կարող քննարկվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 39-րդ կետի իմաստով։ Իսկ ազգակցական հարաբերություններն առկա են միայն այն դեպքում, երբ ազգակցական կապը գոյություն ունի է ազգակցական հարաբերություններով (մարդկային շփումներ, այդ կապը կարևորող դրսևորումներ և այլն)։

Սույն գործի փաստերը վկայում են, որ պաշտպան Կ. Գրիգորյանը չի ընդունել և չի ընդունում քննիչ Ա. Գրիգորյանի հետ ունեցած ազգակցական հարաբերությունները, իսկ քրեական վարույթ իրականացնող մարմինն այդպիսիք հիմնավորող փաստական տվյալներ չի ներկայացրել։

Միևնույն ժամանակ, ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ դատարանները պաշտպան Կ. Գրիգորյանին վարույթից հեռացնելու հիմք են համարել միայն նրա և

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

քննիչ Ա. Գրիգորյանի ազգական լինելու փաստը: Ընդ որում, այդ փաստը հաստատված համարվել չի կարող, քանի որ դրան վերաբերող տեղեկությունները հակասական են և իրարամերժ:

Վերոգրյալի հիման վրա Կ. Գրիգորյանին քրեական գործի վարույթից հեռացնելը չի բխում գործի փաստական տվյալներից և հակասում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածին ու Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

Հետևաբար վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, իսկ այդ կապակցությամբ ստեղծված վարույթը՝ կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 07.10.2005թ. և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 02.02.2006թ. որոշումները բեկանել և այդ կապակցությամբ ստեղծված վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 293/06

Վերաքննիչ դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
Նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան
Դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ՎՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արտակ Ռ-աֆիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 9-ի դատավճռի դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 5-ի դատավճռով Արտակ Բրուտյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ, 235-րդ հոդվածի 1-ին, 327-րդ հոդվածի 1-ին մասերով և դատապարտվել 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 4 տարի ժամկետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 տարի ժամկետով, 327-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 2 տարի ժամկետով: 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի ժամկետով, այն կլանվել է Ռ-Դ Մազնիտոգորսկ քաղաքի Լենինյան շրջանի դատարանի 2001 թվականի հոկտեմբերի 5-ի դատավճռով նշանակված 10 տարի ժամկետով ազատազրկման մեջ և վերջնական պատիժ նշանակվել ազատազրկում 10 տարի ժամկետով: Նշանակված պատժին հաշվակցվել է նրա կրած 5 տարի 4 օր ազա-

տագրկումը և վերջնական պատիժ նշանակվել ազատազրկում 4 տարի 11 ամիս 26 օր ժամկետով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը, բողոքը թողել է առանց բավարարման, իսկ դատավճիռը փոփոխել՝ գտնելով, որ առաջին ատյանի դատարանը հանցանքների համակացությամբ պատիժ նշանակելիս թույլ է տվել օրենքի խախտում, այն է՝ «առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին հաշվակցվել է ըստ էության երկու անգամ»: Վերաքննիչ դատարանի դատավճռով Արտակ Բրուտյանը մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ, 235-րդ հոդվածի 1-ին, 327-րդ հոդվածի 1-ին մասերով և դատապարտվել 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 4 տարի ժամկետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 տարի ժամկետով, 327-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի ժամկետով, այն կլանվել է ՌԴ Մագնիտոգորսկ քաղաքի Լենինյան շրջանի դատարանի 2001 թվականի հոկտեմբերի 5-ի դատավճռով նշանակված 10 տարի ժամկետով ազատազրկման մեջ և թողնվել կրելու ազատազրկում 10 տարի ժամկետով: Նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է 2001 թվականի հոկտեմբերի 5-ի դատավճռով նշանակված պատժի կրած մասը և պատժի սկիզբը հաշվվել 2000 թվականի դեկտեմբերի 1-ից:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արտակ Բրուտյանը 1993 թվականի նոյեմբերի 7-ին Էջմիածին քաղաքի Միչուրին փողոցում, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խուլիգանական հայտյանքներ տալով, իր կողմից ապօրինի ձեռք բերված և իր մոտ պահվող ավտոմատ տեսակի հրազենից կրակոցներ է արձակել ներկա գտնվող անձանց ուղղությամբ, որի հետևանքով Մարտունիկ Հարությունյանի և Հարություն Հարությունյանի առողջությանը պատճառվել է թեթև վնաս: Բացի այդ, Արտակ Բրուտյանը 1990 թվականին ընդունվել է զինվորական հաշվառման և ենթակա է եղել զորակոչման 1991 թվականի գարնանային զորակոչին, «սակայն ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու դիտավորությամբ նշված զորակոչից սկսած զինկոմիսարիատ չի ներկայացել»:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Արտակ Բրուտյանին ՌԴ-ից Հայաստան «էտապավորելու վերաբերյալ կայացված որոշման մեջ նշվել է, որ վերջինս հետախուզվում է ՀՀ քր. օր-ի 258 հոդ. 4-րդ և 235 հոդ. 1-ին մասերով նախատեսված արարքները կատարելու համար»: Վերսկսված նախաքննության ընթացքում պարզվել է, որ Արտակ Բրուտյանի նկատմամբ դեռևս 1996 թվականին հարուցվել է քրեական գործ՝ իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու համար: 2005 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացվել Արտակ Բրուտյանի նկատմամբ հարուցված երկու քրեական գործերը միացնելու մասին: Նախաքննության մարմինը անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, Արտակ Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ, 235-րդ հոդվածի 1-ին, 327-րդ հոդվածի 1-ին մասերով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան:

Առաջին ատյանի դատարանը, այնուհետև ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը նշված բոլոր հոդվածներով Արտակ Բրուտյանի նկատմամբ կայացրել են մեղադրական դատավճիռներ: Փաստորեն, Արտակ Բրուտյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել, այսինքն տեղի է ունեցել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմերի խախտում:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Արտակ Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 9-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և «գործի մասն այդ մեղադրանքով կարճել», իսկ դատավճռի մյուս մասը և նշանակված պատիժը թողնել անփոփոխ: Բողոքի հեղինակը նշել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ: Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով: «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել: Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապա-

տասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի նյութերից երևում է, որ Արտակ Բրուտյանը Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին է հանձնվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ և 235-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված արարքները կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար Ա.Բրուտյանին հանձնելու պահանջ չի էլ ներկայացվել: Նախաքննության մարմինը, խախտելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով գործը մեղադրական եզրակացությանը ուղարկել է դատարան: Նույնպես խախտելով վերոհիշյալ կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը, իրենց դատավճիռներով Ա.Բրուտյանին մեղավոր են ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել: Փաստորեն, տվյալ դեպքում Արտակ Բրուտյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել, այսինքն տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, համաձայն սույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների, հիմք են հանդիսանում Արտակ Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 9-ի դատավճիռը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով բեկանելու, այդ մեղադրանքով գործի մասը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար: Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա ինչպես 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված դրույթների միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արտակ Ռաֆիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 9-ի դատավճիռը բեկանել, այդ մեղադրանքով գործի մասը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել:

2. Արտակ Ռաֆիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ և 235-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ քրեական և զինվորական գործե-

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

րով վերաքննիչ դատարանի 2006 թվականի փետրվարի 9-ի դատավճիռը և այդ դատավճռով նշանակված պատիժը՝ 10 (տաս) տարի ժամկետով ազատազրկում, թողնել անփոփոխ: Պատժի սկիզբը հաշվել 2000 թվականի դեկտեմբերի 1-ից:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-320/06

Էրեբունի և Նուբարաշեն համայնքների
առաջին ատյանի դատարանի
Գործ Հ. 1-87 դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Գաբրիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
դատախազ Գ.ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Արտյոմի Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 8-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Կարեն Արտյոմի Կարակելյանին 2003թվականի հունվարի 24-ին մեղադրանք է առաջադրվել 1961թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին, 89-րդ հոդվածի 2-րդ և 86-րդ հոդվածի 2-րդ մասերով: 27.01.2003թ. որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, և հայտարարվել հետախուզում: 2003թ. փետրվարի 19-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է: 2004թ. օգոստոսի 20-ի որոշմամբ Կ.Կարակելյանին մեղսագրված արարքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2004թ. մարտի 17-ին ՌԴ Տուապսե քաղաքի Տրանսպորտային ՆԳԲ-ից հաղորդում է ստացվել, որ հետախուզման մեջ գտնվող Կարեն Կարակելյանը ձերբակալվել է:

ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ Կ.Կարակելյանը 21.06.2005թ հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

2005թվականի հունիսի 23-ին քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է: 24.06.2005թ. որոշմամբ Կարեն Կարակելյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը փոփոխվել է, և որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

26.07.2005թ. որոշմամբ Կարեն Կարակելյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով: Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. սեպտեմբերի 8-ի դատավճռով Կարեն Արտյոմի Կարակելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով, և նա ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով դատապարտվել է տուգանքի 400.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով տուգանքի 200.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով սահմանվել է պատիժ՝ տուգանք 500.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնների կիրառմամբ նշանակված պատիժը մեղմացվել է, և սահմանվել է պատիժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով:

Դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը 2006թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Կարեն Կարակելյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2002թ. աշնանը վստահությունը չարաշահելու և խաբեության միջոցով տուժողներ Մ.Նավասարդյանից, Գ.Տեր-Գրիգորյանից, Կ.Պետրոսյանից և Ս.Հունանյանից խարդախությամբ հափշտակել է ընդհանուր առմամբ 3.194.663 ՀՀ դրամ գումար, իսկ 2002թ. նոյեմբերի 25-ին գողության միջոցով հափշտակել է Կ. Պետրոսյանին պատկանող 450.966 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա զարդերը և Գ. Տեր-Գրիգորյանին պատկանող 527.103 ՀՀ դրամին համարժեք 900 ԱՄՆ դոլարը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստադրվածները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՌԴ դատախազությունը, բավարարելով Կ.Կարակելյանին Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ վերջինիս հանձնումը «կրկին անգամ կատարված հափշտակության»

համար բավարարել չի կարող, քանի որ Ռ-Գ օրենսդրությունը «կրկնակիության» հասկանիչ չի նախատեսում:

Սակայն 26.07.2005թ. որոշմամբ Կարեն Կարակելյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով:

Այսպիսով, Կ.Կարակելյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսվելուց հետո նախաքննական մարմինը չի փոփոխել վերջինիս առաջադրած մեղադրանքը, այն չի համապատասխանեցրել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և անտեսելով, ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան, որը, նույնպես անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2005թ. սեպտեմբերի 8-ի դատավճռով Կարեն Կարակելյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի կանոնների կիրառմամբ վերջնականապես սահմանել է պատիժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով:

Բողոքում խնդրվում է Կարեն Արտյոմի Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.09.2005թ. դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանել, գործի մասն այդ մեղադրանքով կարճել:

Կարեն Արտյոմի Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.09.2005թ. դատավճիռը և այդ դատավճռով նշանակված պատիժը՝ 200.000 ՀՀ դրամի տուգանքը, թողնել անփոփոխ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ Կարեն Կարակելյանը ներգրավված է եղել որպես մեղադրյալ 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին, 89-րդ հոդվածի 2-րդ և 86-րդ հոդվածի 2-րդ մասերով, նրա նկատմամբ որպես խոսիանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտարարվել հետախուզում, և 2003թ. փետրվարի 19-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է:

2004թ. օգոստոսի 20-ի որոշմամբ Կ.Կարակելյանին մեղսագրված արարքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով:

2004թ. մարտի 17-ին Կարեն Կարակելյանը հայտնաբերվել է ՌԴ Տուսպսե քաղաքում, ձերբակալվել և ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ 21.06.2005թ. հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը: ՌԴ դատախազությունը, բավարարելով Կ.Կարակելյանին Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ վերջինիս հանձնումը «կրկին անգամ կատարված հափշտակության» համար բավարարել չի կարող, քանի որ ՌԴ օրենսդրությունը «կրկնակիության» հատկանիշ չի նախատեսում:

Սակայն Կ.Կարակելյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսելուց հետո նախաքննական մարմինը չի փոփոխել վերջինիս առաջադրած մեղադրանքը, այն չի համապատասխանեցրել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվեն-

ցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և անտեսելով ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան, որը, նույնպես անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2005թ. սեպտեմբերի 8-ի դատավճռով Կարեն Կարակելյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի կանոնների կիրառմամբ վերջնականապես սահմանել է պատիժ՝ տուգանք 200.000 դրամի չափով:

Փաստորեն, տվյալ դեպքում Կ.Կարակելյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել, այսինքն տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում:

Սույն գործի բնույթյան ընթացքում ՀՀ-ի կողմից վավերացված 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Կարեն Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.09.2005թ. դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանելու, գործի մասն այդ մեղադրանքով կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա ինչպես 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված դրույթների միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Կարեն Արտյոմի Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.09.2005թ. դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանել, գործի մասն այդ մեղադրանքով կարճել և դադարեցնել քրեական հետապնդումը:

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2. Կարեն Արտյունի Կարակելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.09.2005թ. դատավճիռը և այդ դատավճռով նշանակված պատիժը՝ 200.000 ՀՀ դրամի տուգանքը, թողնել անփոփոխ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-329/06

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ գործ
համայնքների առաջին ատյանի դատարանի
որոշում կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Արայիկ Հմայակի Սիմոնյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Լռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 15-ի դատավճռով Արայիկ Սիմոնյանը ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով:

Ա.Սիմոնյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2006 թվականի ապրիլի 19-ին առաջին ատյանի դատավճիռը թողել է անփոփոխ՝ Ա.Սիմոնյանի նկատմամբ կիրառելով բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, այն է՝ հարկադիր բուժում «խրոնիկ ալկոհոլիզմից», որը պետք է իրականացվի նրա պատժի կրման ընթացքում:

2006 թվականի հուլիսի 27-ին Ա.Սիմոնյանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ հարկադիր բուժման համար:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2006 թվականի սեպտեմբերի 4-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական հանձնաժողովի կազմած թիվ 44 մասնագիտական ակտի համաձայն՝ դատապարտյալն ընդունել է հակաալկոհոլային բուժման լրիվ կուրս, և նրա բուժումն ավարտված է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Ա.Սիմոնյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին:

2006 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստում քննելով Ա.Սիմոնյանի հարկադիր բուժումը դադարեցնելու մասին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է այն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 20.11.06 թվականին բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 23.11.06 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արայիկ Սիմոնյանը ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով դատապարտվել է այն բանի համար, որ 2005 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Վանաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ փողոցի թիվ 14 տանը, որը պատկանել է նրա ընտանիքին, ծեծի է ենթարկել նախ իր 12-ամյա որդուն՝ Համիկ Սիմոնյանին, ապա նաև վերջինիս օգնության հասած իր մորը՝ Նարգիզ Թամազյանին, ու դուրյով ջուր է լցրել նրա գլխին: Նույն թվականի ապրիլին դարձյալ իրենց տանը վիճաբանել է մոր հետ ու երկաթյա ձողով դիտավորությամբ մի քանի անգամ հարվածել է նրան, հետո ծեծի է ենթարկել իր անչափահաս զավակներին՝ Տաթևիկին և Համիկին:

2005 թվականի սեպտեմբերի 15-ին տանը, առանց որևէ պատճառի, ծեծել է իր 15-ամյա դստերը՝ Հասմիկին ու մորը՝ Ն.Թամազյանին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնասվածքներ: Ընդ որում վերոհիշյալ բոլոր արարքները կատարելու ժամանակ Ա.Սիմոնյանը գտնվել է ոգելից խմիչք օգտագործած վիճակում:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի դատարանը Ա.Սիմոնյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին միջնորդագիրը 27.09.06 թվականի դատական նիստում քննելիս դատախազին մասնակից չի դարձրել, այսինքն՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ և 432-րդ հոդվածների պահանջների խախտում, համաձայն որոնց՝ դատական որոշումների հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատախազի մասնակցությամբ:

Բողոք բերած անձը, պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Օրինականությունն իրավունքի ընդհանուր սկզբունք է: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն հետաքննության և դատաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատարանի որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, իսկ ըստ 54-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատական նիստում քննության ենթարկելիս սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, անտեսելով օրենքի վերոհիշյալ պահանջները, 2006 թվականի սեպտեմբերի 27-ին քննելով «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Ա.Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.06 թվականի դատավճռով նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին, դատական նիստին դատախազին մասնակից չի դարձրել, որով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 398-րդ հոդվածի համաձայն՝ նշված խախտումը հիմք է առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և նյութերը նոր դատական քննության վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի միատեսակ կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արալիկ Հմայակի Սիմոնյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը վերացնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

նոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-176/06

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան, Ա.Պողոսյան
քրեական գործ N Զ-4-386/06

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Զ.ՓՈՍՏԱՆՁՅԱՆԻ
պաշտպաններ Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ
տուժողի իրավահաջորդի Կ.ԱՂԱՋԱՆՅԱՆԻ
ներկայացուցիչ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալներ Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի, Արայիկ Զալյանի, վերջիններիս պաշտպաններ Զարուհի Փոստանջյանի և Ստեփան Ոսկանյանի, տուժողի իրավահաջորդ Մովսես Սկրտումյանի ներկայացուցիչ, փաստաբան Կարապետ Աղաջանյանի վճռաբեկ բողոքները Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մայիսի 18-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 30-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Քրեական հետապնդման մարմնի կողմից Ռ-ազմիկ Սարգսյանին, Մուսա Սերոբյանին ու Արայիկ Ջալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 7-րդ և 10-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք 2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 20-ից 21-ի սահմաններում, սիասին, գորամասից դուրս՝ ԼՂՀ Մատաղիս գյուղի ջրանցքի հարևանությամբ գտնվող կիսաքանդ շինությունում, Ռ-ազմիկ Սարգսյանի ծնողների կողմից ուղարկված սննդի մի մասն ուտել-վերջացնելուց հետո՝ շինությունից դուրս գալու պահին, սննդի մյուս մասն իրենցից պահանջելու պատճառով վեճի են բռնվել նույն գորամասի շարքային զին-ծառայողներ Ռոման Արամի Եղիազարյանի ու Հովսեփ Մովսեսի Սկրտումյանի հետ, որն աստիճանաբար վերածվել է փոխադարձ ծեծկռտուքի: Այդ ընթացքում Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանն ու Ա.Ջալյանը ոտքերով, ձեռքերով, մետաղյա ձողով բազմաթիվ ծանր մարմնական վնասվածքներ են պատճառել նրանց. վերջիններիս գետնին ընկնելուց հետո Ռոման Եղիազարյանին ու Հովսեփ Սկրտումյանին մի խումբ անձանց կողմից, առանձին դաժանությամբ, առանց լուրջ պատճառի ու չնչին առիթով սպանելու դիտավորությամբ շարունակել են հարվածներ հասցնել, ինչի արդյունքում Ռ.Եղիազարյանն ու Հ.Սկրտումյանը տեղում մահացել են:

Իրենց կողմից կատարած հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով մոտ մեկ ժամ անց Մուսա Սերոբյանը, Ռ-ազմիկ Սարգսյանն ու Արայիկ Ջալյանը վերադարձել են կիսաքանդ շինություն և համոզվելով, որ Ռոման Եղիազարյանն ու Հովսեփ Սկրտումյանը մահացել են, կատարվածը որպես դժբախտ պատահար ներկայացնելու համար և նաև կատարվածի հետքերը թաքցնելու նպատակով Ռ.Սարգսյանի առաջարկությամբ նրանց դիակները գցել են հարակից ջրանցքը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը, գործի քննության արդյունքում հանգելով հետևության, որ ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի ու Ա.Ջալյանի արարքում խուլիգանական դրդումներով սպանություն կատարելու հատկանիշը չի ապացուցվել, այդ մասը հանել է նրանց առաջադրված մեղադրանքից և հաստատված համարելով, որ նրանք առանձին դաժանությամբ կատարել են երկու անձանց դիտավորյալ սպանություն, 2005 թվականի մայիսի 18-ի դատավճռով Ռ-ազմիկ Սարգսյանին, Մուսա Սերոբյանին ու Արայիկ Ջալյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 7-րդ կետերով և նրանցից յուրաքանչյուրին դատապարտել ազատազրկման 15 տարի ժամկետով:

Վճռվել է ամբաստանյալներ Ռ.Սարգսյանից, Մ.Սերոբյանից ու Ա.Ջալյանից համապարտության կարգով հոգուտ տուժողի իրավահաջորդներ Արթուր Եղիազարյանի ու Մովսես Սկրտումյանի բռնագանձել 1.500.000-ական դրամ՝ որպես հուղարկավորության և մնացած ծախսերի հատուցման գումար:

Իրեղեն ապացույց ճանաչված, տուժողների դիակներից հանված հագուստները, գարեջրի շիշն ու խտացրած կաթի մետաղյա տուփը, զինվորական գոտին ու գլխարկը որոշվել է ոչնչացնել, իսկ նամակի ծրարը՝ թողնել քրեական գործին կցված:

Նույն դատավճռով 33651 գորամասի ժամկետային զինծառայողներ Երվանդ Պետրոսյանն ու Վահե Հովհաննիսյանը մեղավոր են ճանաչվել ու դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-359-րդ հոդվածների 2-րդ մասի 1-ին կետով ու 375-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Ղևոնդ Եգորյանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքներում տուժողների իրավահաջորդներ Արթուր Եղիազարյանն ու Մովսես Սկրտումյանը խնդրել են ամբաստանյալներից դատապարտել ցմահ ազատազրկման:

Մեղադրողը վերաքննիչ բողոքում նշել է, որ առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալների մեղադրանքի ծավալից անհիմն կերպով հանվել է խուլիգանական դրդումների հատկանիշը, ինչը չի բխում գործի փաստական հանգամանքներից: Միաժամանակ գտել է, որ ամբաստանյալների նկատմամբ սահմանվել է մեղմ պատիժ, ուստի խնդրել է նրանց մեղավոր ճանաչել նաև խուլիգանական դրդումներով սպանության համար և դատապարտել ցմահ ազատազրկման:

Ամբաստանյալներ Ռազմիկ Սարգսյանը, Մուսա Մերոբյանը և Արայիկ Զալյանը վերաքննիչ բողոքներում նշել են, որ իրենք որևէ հանցանք չեն կատարել, ուստի խնդրել են վերանայել գործը, որպեսզի իրականությունը բացահայտվի:

Ամբաստանյալ Ռ.Սարգսյանի պաշտպան Ստեփան Ռսկանյանը և Ա.Զալյանի պաշտպան Զարուհի Փոստանջյանը բերել են նույնաբովանդակ վերաքննիչ բողոքներ և խնդրել են բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ դադարեցնել քրեական հետապնդումը, կայացնել արդարացման դատավճիռ և իրենց պաշտպանյալներին անհապաղ ազատել անհիմն կալանքից:

Ամբաստանյալ Մ.Մերոբյանի պաշտպան Աշոտ Աթոյանը վերաքննիչ բողոքում նշել է, որ նախաքննությունն ու դատաքննությունն իրականացվել են քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներով, ապացուցված չէ իր պաշտպանյալի մեղավորությունը կատարված սպանության մեջ, և խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը և կայացնել արդարացման դատավճիռ:

Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում տուժողի իրավահաջորդ Մ.Սկրտումյանը դատական վիճաբանությունների փուլում հրաժարվել է բողոքից՝ նշելով, որ ամբաստանյալներն անմեղ են, նրանք չեն իր որդու սպանողները, և հրաժարվել է նաև իր ներկայացրած քաղաքացիական հայցից:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը տուժողի իրավահաջորդ Ա.Եղիազարյանի բողոքը բավարարել է ամբողջությամբ, իսկ մեղադրողի բողոքը՝ մասնակիորեն և 2006 թվականի մայիսի 30-ի դատավճռով առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխել է. Ռ.Սարգսյանին, Մ.Մերոբյանին և Ա.Զալյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 7-րդ կետերով և դատապարտել ցմահ ազատազրկման, իսկ ամբաստանյալների և նրանց պաշտպանների վերաքննիչ բողոքները թողել է առանց բավարարման:

Դատապարտյալներ Ռազմիկ Սարգսյանի, Մուսա Մերոբյանի և Արայիկ Զալյանի, պաշտպաններ Զարուհի Փոստանջյանի և Ստեփան Ռսկանյանի վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 9-ի, իսկ տուժողի իրավահաջորդ Մովսես Սկրտումյանի լիազորված անձ Կարապետ Աղաջանյանի վճռաբեկ բողոքը 2006 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումներով ընդունվել են Վճռաբեկ դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, ՊԲ թիվ 33651 գործմասի 4-րդ հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի զինձառայողներ Ռո-

ման Եղիազարյանն ու Հովսեփի Սկրտումյանը քաղցրավենիք (գործի նյութերով՝ «վաֆլի») գնելու նպատակով դուրս են եկել գորամասի տարածքից և այլևս չեն վերադարձել:

ԼՂՀ արտակարգ իրավիճակների վարչության ջրատույզները 2004 թվականի հունվարի 9-ին Մատաղիսի ջրանցքից հայտնաբերել ու հանել են Հովսեփ Սկրտումյանի, իսկ հաջորդ օրը՝ Ռոման Եղիազարյանի դիակները:

2004 թվականի հունվարի 11-ին 33651 գորամասի 4-րդ գումարտակի շարքային Արման Գրիգորյանը, որը դրանից 3 ամիս առաջ ծառայության է տեղափոխվել ԼՂՀ ՊԲ 38862 գորամասից, դիրքերից փախուստի է դիմել և գնացել Մարտակերտ: Այստեղ նա բռնվել է և տեղափոխվել դիվիզիա, որտեղից հունվարի 12-ի կեսօրին 33651 գորամասի հրամանատարի անձնակազմի հետ աշխատանքների գծով տեղակալ, մայոր Կառլեն Մալիյանի միջոցով վերադարձվել է գորամաս:

Նույն օրը նա հարցաքննվել է որպես վկա և հայտնել, որ 2003 թվականի դեկտեմբերի 24-ի երեկոյան՝ ընթրիքից հետո, երբ գնացել է գուգարան, տեսել է, թե ինչպես համաձայնադրվել է Ղևոնդ Եգորյանը, Վահե Հովհաննիսյանը, Երվանդ Պետրոսյանը, որոնք գումարտակում «հեղինակություն» են եղել, Սամվել Պողոսյանի միջոցով գորամասից դուրս են տարել Ռոման Եղիազարյանին ու Հովսեփ Սկրտումյանին: Դրանից քիչ անց լավել են վերջիններիս օգնության կանչերը և Ղևոնդ Եգորյանի ու Վահե Հովհաննիսյանի խոսքերը. «Մա դեռ քիչ է, այնքան պետք է ծեծենք, որ մեռնեք»:

Հետագայում Արման Գրիգորյանը ցուցմունքներ է տվել, ինչպես նաև Ղևոնդ Եգորյանի, Վահե Հովհաննիսյանի, Երվանդ Պետրոսյանի ու Սամվել Պողոսյանի հետ առերես հարցաքննության ընթացքում պնդել, որ ձայները լսելուց հետո ինքը նույնպես գորամասից դուրս է եկել և տեսել, թե ինչպես նրանք չորսով ծեծելով սպանում են Ռոման Եղիազարյանին ու Հովսեփ Սկրտումյանին, որից հետո նրանց դիակները տանում և զգում են ջուրը:

Ռ.Եղիազարյանի ու Հ.Սկրտումյանի սպանությունը կատարելու կասկածանքով Ղևոնդ Եգորյանը, Վահե Հովհաննիսյանը, Երվանդ Պետրոսյանն ու Սամվել Պողոսյանը նախաքննության մարմնի կողմից 2004 թվականի հունվարի 16-ին ձերբակալվել են, հունվարի 19-ին նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, իսկ Ղ.Եգորյանին, Վ.Հովհաննիսյանին ու Ե.Պետրոսյանին՝ նաև այլ հոդվածներով: Որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը:

Վերջիններս ժխտել են իրենց առնչությունը սպանությանը և հայտնել, որ Արման Գրիգորյանն իրենց զրպարտում է:

2004 թվականի մարտի 6-ին որպես վկա լրացուցիչ հարցաքննվելիս Արման Գրիգորյանը քննիչին հայտնել է, որ ինքը ևս մասնակից է Ռ.Եղիազարյանի և Հ.Սկրտումյանի սպանությանն ու դիակները ջուրը գցելուն: Նման ցուցմունք նա տվել է զինդատախազություն հրավիրված հոր, եղբոր և ՊՆ ռազմական ոստիկանության վարչության ենթասպա հորաքրոջ տղայի ներկայությամբ, իսկ ձերբակալվելիս պաշտպանի ներկայությամբ գրել է, որ մասնակցել է Հովսեփ Սկրտումյանի և Ռոման Եղիազարյանի սպանությանը և դիակները ջուրը գցելուն:

2004 թվականի մարտի 6-ին որպես կասկածյալ հարցաքննվելիս, ինչը տեսաձայնագրված է, Ա.Գրիգորյանը պաշտպանի ներկայությամբ ցուցմունք է տվել և գրել, թե տեսել է, որ գումարտակի հրամանատար Իվանը (գործի նյութերով՝ Իվան Գրիգորյանը՝ թիվ 33651 գորամասի չորրորդ ՀԳ-ի հրամանատարը) և գնդի «գամապլիտ» մայոր Մալիյանը ինչպես են Իվանի ավտոմեքենայով կանգնել կամրջից ձախ, երկու

հոգու հանել են ավտոմեքենայի բեռնախցից, մեկին ջուրն են գցել կամրջի կողմից, իսկ մյուսին՝ շենքի կողմից: 2004 թվականի մարտի 9-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, որում նա իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել, որ 2003 թվականի դեկտեմբերի 24-ին տեսել է, որ «սամովոլկա» գնալու համար Ռոմանին ու Հովսեփին հայիոյում ու ծեծում են Ղևոնդը («Մաճին») և Վահանը: Նրանց է մոտեցել «կամբատ» Իվանը և իմանալով, որ նրանց ծեծում են «սամովոլկա» գնալու համար, գետնից ինչ-որ բան է վերցրել (փայտ, թե երկաթ՝ չգիտի, մոտ 50 սմ երկարությամբ) և սկսել է երկուսին հարվածել: «Չամպայիտը» և Վահանը ծեծել են Ռոմանին, իսկ «կամբատը» և «Մաճին»՝ Հովսեփին: Ծեծից հետո նրանք ընկել ու չեն շարժվել: Հովսեփին ու Ռոմանին գցել են «Վիլիս» ավտոմեքենայի բեռնախուցը, իսկ երբ նկատել են իրեն (Արման Գրիգորյանին), հետները տարել են և ստիպել, որ նրանց հետ դիակները ջուրը նետի: «Կամբատը» իրեն զգուշացրել է, որ եթե որևէ մեկն իմանա այդ մասին, ապա իրեն կսպանի:

Հաջորդ օրը՝ 2004 թվականի մարտի 10-ին, Արման Գրիգորյանը որպես մեղադրյալ լրացուցիչ ցուցմունք է տվել, որ Ռոման Եղիազարյանին ու Հովսեփ Մկրտումյանին գորամասից դուրս՝ գորամասի պարսպի և Ջոյայի խամութի մեջտեղը, մոտ 30 րոպե ծեծի են ենթարկել «կամբատ» Իվանն ու «զամպայիտ» Մայիլյանը, հետո ինչ-որ բան են գցել մեքենայի բեռնախուցն ու գնացել, որից հետո, թե ինչ է եղել, ինքը չի տեսել, իսկ սպանությանն իր մասնակից լինելու մասին հայտնել է, քանի որ վախեցել է քննիչից ու հորից:

Երկու օր անց՝ 2004 թվականի մարտի 12-ին, Արման Գրիգորյանը լրացուցիչ ցուցմունք է տվել, որ 2003 թվականի դեկտեմբերի 24-ին «օտբոյից» հետո Ռոմանին ու Հովսեփին ծեծելով սպանել են Վահե Հովհաննիսյանը, Ղևոնդ Եգորյանը, Երվանդ Պետրոսյանն ու Սամվել Պողոսյանը, իսկ «կամբատ» Իվանն ու «զամպայիտ» Մայիլյանը որևէ կապ չունեն սպանության հետ: Այս հարցաքննությունը նույնպես տեսաձայնագրված է:

Մեղադրյալ Արման Գրիգորյանի նկատմամբ 2004 թվականի մարտի 25-ին նշանակվել է ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ նա փորձաքննության ընթացքում լարված է եղել, պատասխաններում ինչ-որ բան թաքցրել է, ասել է անորոշ բաներ, խուսափել է քրեական գործի վերաբերյալ կոնկրետ պատասխանից: Արման Գրիգորյանը մինչև զորակոչվելը և ներկայումս խրոնիկ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում:

2004 թվականի ապրիլի 27-ին որպես մեղադրյալ հարցաքննվելիս նա հայտնել է, որ ինքը Ռոման Եղիազարյանի և Հովսեփ Մկրտումյանի սպանության վերաբերյալ որևէ տեղեկություն չունի, այդ առթիվ նախկինում սուտ ցուցմունքներ է տվել, անմեղ մարդկանց զրպարտել, որի համար պատրաստ է քրեական պատասխանատվություն կրել: Գտնելով, որ Արման Գրիգորյանը որևէ մասնակցություն չի ունեցել Ռ.Եղիազարյանի և Հ.Մկրտումյանի սպանությանը, քրեական հետապնդման մարմինը 2004 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով քրեական հետապնդումը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ դադարեցնելու մասին: Նույն հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ սուտ ցուցմունք տալու համար:

ԼՂՀ ՊԲ 34153 գորամասի շարքային, 2002 թվականի հունիսին Արտաշատի զինկոմիսարիատի կողմից բանակ զորակոչված Հարություն Հակոբյանը՝ մականունը

«Չախլակ», 2004 թվականի հունվարի 19-ին ինքնագլուխ թողել է գործառնար և գնացել Ստեփանակերտում ժամանակավորապես բնակվող ծնողների մոտ: Հաջորդ օրը՝ հունվարի 20-ին, նա բռնվել է զինուստիկանության աշխատակիցների կողմից և տեղափոխվել Ստեփանակերտի ռազմական ոստիկանության բաժին, որտեղ մոտ 1 ժամ պահվել է 2004 թվականի հունվարի 19-ին կալանավորված մեղադրյալ Սամվել Պողոսյանի և 33651 գործառնարի շարքային Արթուր Ալեքսանյանի հետ՝ ժամանակավոր պահպանման կալանախցում:

Երկու օր անց՝ 2004 թվականի հունվարի 23-ին, Հարություն Հակոբյանը ցուցմունք է տվել և առերես պնդել, որ կալանախցում գտնվելու ընթացքում մինչ այդ անձանոթ Սամվել Պողոսյանը Արթուր Ալեքսանյանի ներկայությամբ իրեն պատմել է, որ իրենց գործառնարի երկու զինծառայողներին սպանել են վեց հոգով՝ ինքը, Մաճին, Վահեն, Երոն, կիրովականցիներ Արթուրն ու Արմանը, որից հետո նրանց դիակները օգել են ջուրը: Թե՛ Սամվել Պողոսյանը և թե՛ Արթուր Ալեքսանյանը ժխտել են Հարություն Հակոբյանի ասածները և հայտնել, որ խոսակցությունը վերաբերել է նրան, որ Սամվել Պողոսյանն ու մյուսները կալանավորվել են Արման Գրիգորյանի սուտ ցուցմունքների հիման վրա այն մասին, թե իբր նա տեսել է, որ երկու զինվորներին սպանել են Սամվել Պողոսյանը, Վահե Հովհաննիսյանը, Երվանդ Պետրոսյանն ու Ղևոնդ Եգորյանը, ինչը իրականությանը չի համապատասխանում:

2004 թվականի մայիսի 5-ին վկա Հարություն Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ կալանախցում իրականում Սամվել Պողոսյանն իրեն ասել է, որ «իրենց վրա շատ է աճում» Արման Գրիգորյանը, քանի որ զինվորների սպանությունից իրենք տեղյակ չեն, սակայն մտածելով, որ Սամվել Պողոսյանի հետ խոսելու և իրականությունը պարզելու նպատակով իրեն այդ կալանախցուց ուղարկած զինուստիկանության աշխատակից Պողոս Մարտիրոսյանն իրեն չի հավատա, և նախկինում էլ ունեցած փախուստների համար կղատվի, որոշել է փախուստների համար ներվելու նպատակով ծառայություն մատուցել և սուտ ցուցմունք տալ, թե իբր Սամվել Պողոսյանն իրեն խոստովանել է, որ երկու զինվորների սպանությունները իրենք են կատարել: Զրեական հետապնդման մարմինը 2004 թվականի հուլիսի 30-ին որոշում է կայացրել վկա Հարություն Հակոբյանի նկատմամբ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ սուտ ցուցմունք տալու համար քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

2004 թվականի ապրիլի 19-ին թիվ 33651 գործառնարի հրամանատարի իրավական հարցերով օգնական Մնացական Ավագյանը հիշել է, որ երկու զինվորի անհետանալու հաջորդ օրը՝ դեկտեմբերի 25-ին, ջրանցքին կից շինության հատակից հայտնաբերել ու վերցրել է Կարեն Աղաբաբյանի կողմից ուղարկված ծրարը և դրել Մարտակերտի ոստիկանության քրեական հետախուզության օպերիվագոր Մանվել Սինասյանի ավտոմեքենայի պահախցիկը և մոռացել դրա մասին:

Մանվել Սինասյանից տեղեկանալով, որ ծրարը դեռևս ավտոմեքենայի պահախցիկում է, Մնացական Ավագյանն այն ներկայացրել է նախաքննության մարմնին: Այն բանից հետո, երբ պարզվել է, որ այդ ծրարը գտնվել է Գյումրի քաղաքից Ռազմիկ Սարգսյանին ուղարկված ծանրոցում, վերջինս հրավիրվել է հարցաքննության, որի ընթացքում խոստովանական ցուցմունքներ է տվել այն մասին, որ Մուսա Մերոբյանի և Արայիկ Չալյանի հետ ծանրոցի պատճառով վիճաբանել ու կռվել են Ռոման Եղիազարյանի ու Հովսեփ Մկրտումյանի հետ: Այդ ընթացքում նրանց սպանել են և դիակները նետել ջրանցքը: Իր այդ ցուցմունքները նա պնդել է նաև Մ.Մերոբյանի և Ա.Չալյանի հետ առերես հարցաքննության ժամանակ: Մ.Մերոբյանն ու Ա.Չալյանը ժխտել են Ռազմիկ Սարգսյանի հետ Ռոմանի և Հովսեփին սպանելու փաստը: Հե-

տագայում՝ նախաքննության ընթացքում, Ռազմիկ Սարգսյանը հրաժարվել է իր խոստովանական ցուցմունքներից և հայտնել, որ ինչպես ինքը, այնպես էլ Մուսան ու Արայիկը որևէ առնչություն չունեն Ռոմանի և Հովսեփի սպանությանը: Ինչ վերաբերում է իր խոստովանական ցուցմունքներին, ապա նա դրանք տվել է իր նկատմամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի կիրառած հոգեբանական և ֆիզիկական բռնության, խոշտանգումների արդյունքում:

Քրեական հետապնդման մարմինը, հիմնավորված համարելով, որ Վահե Հովհաննիսյանը, Երվանդ Պետրոսյանը, Ղևոնդ Եգորյանը և Սամվել Պետրոսյանը որևէ մասնակցություն չեն ունեցել Ռ.Եղիազարյանի և Հ.Մկրտումյանի սպանությանը, 2004 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ Վ.Հովհաննիսյանին, Ե.Պետրոսյանին և Ղ.Եգորյանին առաջադրված մեղադրանքից վերացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերը, իսկ Ս.Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով քրեական հետապնդումը դադարեցրել է նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջները.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատապարտյալ Ռազմիկ Սարգսյանը վճռաբեկ բողոքում նշել է, որ ամբողջությամբ բողոքարկում է անհիմն ու անօրինական դատավճիռները և միանում է իր պաշտպաններ Չարուհի Փոստանջյանի և Ստեփան Ռսկանյանի բերած վճռաբեկ բողոքին:

Դատապարտյալ Մուսա Մերոբյանը, Արայիկ Չալյանը, պաշտպաններ Չարուհի Փոստանջյանը և Ստեփան Ռսկանյանը նույնաբովանդակ վճռաբեկ բողոքներում նշել են, որ սույն գործի քննության ժամանակ խախտվել են գործի արդարացի քննության, անմեղության կանխավարկածի, կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի և դրա ապահովման, ցուցմունք տալու պատասխանատվությունից ազատ լինելու սկզբունքները:

Անտեսվել են խոշտանգումների արգելման, ինչպես նաև ազատության և անձնական անձեռնմխելիության վերաբերյալ Եվրոպական կոմիտեցիայի դրույթները:

Դատապարտյալներ Ռ.Սարգսյանը, Մ.Մերոբյանը և Ա.Չալյանը վկայի կարգավիճակով 5 օր՝ 2004 թվականի ապրիլի 19-ից 24-ը, զրկվել են ազատությունից, նրանք ենթարկվել են խոշտանգումների, բռնությունների, անմարդկային վերաբերմունքի, որի արդյունքում Ռազմիկ Սարգսյանից կորզվել են խոստովանական ցուցմունքներ, որոնք դրվել են դատապարտյալների մեղադրանքի հիմքում: Դիակների հայտնաբերման, դեպքի վայրի զննության արձանագրություններից և դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններից երևում է, որ Հովսեփ Մկրտումյանի և Ռոման Եղիազարյանի սպանության օրը, ժամը և վայրը իրականությանը չեն համապատասխանում: Նրանց դիակների դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններից երևում է, որ Հովսեփ Մկրտումյանի մահը վրա է հասել 2003 թվականի դեկտեմբերի 27-ին, իսկ Ռ.Եղիազարյանինը՝ դեկտեմբերի 28-ին, սակայն դատավճռով ընդունվել է, որ նրանք սպանվել են դեկտեմբերի 24-ին:

Բացի այդ, հաստատվել է, որ դատապարտյալները Գյումրի քաղաքից Ռազմիկ Սարգսյանին ուղարկված ծանրոցը վերցրել և դրա մեջ եղած սննդամթերքը ջրանցքի հարևանությամբ գտնվող շինությունում կերել են 2003 թվականի դեկտեմբերի 23-ին, հետևաբար այդ ծանրոցի համար հաջորդ օրը մարդ սպանել չէին կարող:

Չնայած դեպքի վայր է դիտվել ջրանցքի մոտ գտնվող շինությունը, գործում եղած ապացույցները հաստատում են, որ դեպքի վայրը գործնասի պատի մոտ է, որտեղից օգնության կանչեր են լսել գործով հարցաքննված վկաները:

Բացի այդ, չնայած բազմաթիվ արյունահոսող վերքերի առկայությանը, այդ շինությունում արյան ոչ մի հետք չի հայտնաբերվել:

Չեն պարզվել տուժողների կողմից ոգելից խմիչք օգտագործելու հանգամանքները:

Գործում առկա են այլ անձանց կողմից Հովսեփ Մկրտումյանին և Ռոման Երիզաբեյանին սպանելու փաստեր, սակայն դատարաններն անտեսել են դրանք և այդ ուղղությամբ պատշաճ քննություն չեն կատարել:

Դատապարտյալներ Մ.Մերոբյանն ու Ա.Ջալյանը, պաշտպաններ Ջ.Փոստանջյանն ու Ս.Ոսկանյանը նշել են, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատավարական և նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ. երեք երիտասարդ, որոնց մեղքը ապացուցված չէ, կրատապարտվեն ցմահ ազատազրկման, իսկ իրական հանցագործները, մնալով ազատության մեջ, կշարունակեն իրենց ոճրագործությունները: Ելնելով վերոգրյալներից՝ նրանք խնդրել են բեկանել Ռ.Սարգսյանի, Մ.Մերոբյանի, Ա.Ջալյանի վերաբերյալ դատավճիռները և նրանց արդարացնել:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, փաստաբան Կ.Աղաջանյանը, ելնելով դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններից, գործում առկա բազմաթիվ հակասություններից, վճռաբեկ բողոքում նշել է, որ սույն գործի քննությունը կատարվել է քրեական դատավարության սկզբունքների խախտումներով, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա: Արդյունքում Հ.Մկրտումյանի և Ռ.Երիզաբեյանի սպանությունը կատարողները երկու դատավարության ընթացքում չեն մեղադրվել, սպանության իրական կատարողները գտնվում են ազատության մեջ, և նրանց փոխարեն ցմահ ազատազրկման են դատապարտվել երեք անմեղ զինծառայողներ: Ուստի խնդրել է բեկանել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 18.05.2005 թվականի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 30.05.2006 թվականի դատավճիռները և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքներում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ դատապարտյալների և պաշտպանների բողոքները պետք է մերժել, իսկ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Աղաջանյանի բողոքը՝ բավարարել, բեկանել Ռ.Սարգսյանի, Մ.Մերոբյանի, Ա.Ջալյանի վերաբերյալ դատավճիռները և քրեական գործն ուղարկել նոր նախաքննության հետևյալ պատճառաբանությամբ.

Քրեական հետապնդում իրականացնող մարմինը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված՝ գործի արդարացի քննության սկզբունքը, չի ձեռնարկել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, չի պարզել ինչպես մեղադրյալների մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող բոլոր հանգամանքները:

Քրեական վարույթն իրականացնող մարմինները չեն կատարել նույն հոդվածի 4-րդ մասի պահանջները, այն է՝ մանրակրկիտ ստուգել գործով ամբաստանյալների, նրանց պաշտպանների հայտարարություններն իրենց անմեղության, ամբաստանյալ-

ներին արդարացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները:

Դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 21-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում հետազոտված փաստական տվյալներով, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, եթե գործով ուսումնասիրվել են ծագած բոլոր վարկածները, իսկ տեղ գտած հակասությունները պարզվել և գնահատվել են:

Դատավճիռ կայացնելիս դատարանները կոպիտ կերպով խախտել են դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները, որի 3-րդ մասի համաձայն՝ դատավճիռը հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար, և դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի առաջին մասի պահանջն այն մասին, որ դատարանը պարտավոր է գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության, երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ է տրված քրեադատավարական օրենքի էական խախտում, եթե դա չի կարող վերացվել դատական քննության ընթացքում:

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն այն մասին, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է բեկանել դատավճիռը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության, եթե թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա, և որոնք չեն կարող վերացվել դատական քննությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բեկանում է դատավճիռը՝ գործը նոր նախաքննության ուղարկելով, եթե թույլ է տրվել քրեադատավարական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի էական խախտում, որը չի կարող վերացվել դատական քննության ժամանակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա, և որոնք չեն կարող վերացվել դատական քննությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածը սահմանում է, որ միայն ապացույցների հիման վրա են հաստատվում դեպքն ու հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն), մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով արգելված արարքը կատարելու մեջ, հանցագործության կատարման շարժառիթը, այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները: Սակայն սույն գործով հանցագործության կատարման ժամանակի, տեղի և շարժառիթի հետ կապված դատարանի կողմից հաստատված

ճանաչված հանգամանքները չեն համապատասխանում նախաքննությանը հավաքված և դատարանում հետազոտված ապացույցներին:

Մասնավորապես, սույն գործով առկա են հետևյալ խախտումները, թերությունները և հակասությունները:

1. Հանցագործության կատարման ժամանակին վերաբերող հարցեր.

Նախաքննության մարմինը և դատարանները հաստատված են համարել, որ՝

1) տուժողներ Հ.Սկրտումյանն ու Ռ.Եղիազարյանը 2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, դուրս են եկել գորամասից և չեն վերադարձել:

2) այդ օրը՝ ժամը 21-ի սահմաններում, տանից ստացած ծանրոցում եղած սննդամթերքը գաղտնի ուտելու կապակցությամբ վիճաբանություն է տեղի ունեցել ամբաստանյալ Ռ.Սարգսյանի և տուժող Ռ.Եղիազարյանի միջև: Վերջինս պահանջել է իրեն տալ տանից ստացած ծանրոցը, Ռ.Սարգսյանը հրաժարվել է, որի արդյունքում տեղի է ունեցել ծեծկռտուք:

3) ամբաստանյալներ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Զալյանը սպանել են տուժողներ Հ.Սկրտումյանին ու Ռ.Եղիազարյանին և նրանց դիակները նետել ջուրը:

Ծանրոցի շուրջ ծագած վիճաբանության արդյունքում տուժողների սպանությունը 2003 թվականի դեկտեմբերի 24-ին կատարված լինելու մասին վարկածի համար հիմք է հանդիսացել գործով վկա Սիրանուշ Մուրադյանի 2004 թվականի ապրիլի 20-ի ցուցմունքը, որտեղ նա հայտնել է, որ 2003 թվականի դեկտեմբերի 24-ին Գյումրի քաղաքից եկել է Մատաղիս՝ այնտեղ ծառայող իր որդուն տեսնելու համար: Իր հետ համերկրացի զինվոր Ռ-ազմիկ Սարգսյանի համար ծանրոց է բերել, որը թողել է Վահան Սկրտչյանի մոտ, և իր որդուն տեսնելուց հետո՝ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 25-ին, վերադարձել է Գյումրի (հ. 7, գ.թ. 80-82):

Նախաքննության մարմինն ընդունել է, որ այդ նույն օրը Վահան Սկրտչյանի մոտից ծանրոցը վերցնելուց հետո՝ ժամը 21:00-ի սահմաններում, ջրանցքի մոտ գտնվող կիսակառույցում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում ամբաստանյալներ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Զալյանը սպանել են երկու տուժողներին: Ընդ որում, Ռ.Սարգսյանը նույնպես իր ցուցմունքում ընդունել է, որ Արկաղի Մուրադյանի ծնողների գալու օրը՝ դեկտեմբերի 24-ին, երեքով գնացել են Վահան Սկրտչյանի մոտ և վերցրել իրեն ուղարկված ծանրոցը (հ. 7, գ.թ. 89-91):

Մուսա Սերոբյանը 2004 թվականի ապրիլի 21-ին տված իր ցուցմունքում նշել է, որ Ա.Զալյանի և Ռ.Սարգսյանի հետ գնացել է ԿՄ-ներ՝ վերջինիս համար ուղարկված և Արկաղի Մուրադյանի ծնողների կողմից Վահան Սկրտչյանի մոտ թողնված ծանրոցը վերցնելու: Վահան Սկրտչյանն իրենց ասել է, որ Արկաղի Մուրադյանի ծնողները հենց այդ օրն էին ծանրոցը բերել, թողել իր մոտ և գնացել հոսպիտալ՝ Արկաղիին տեսնելու: Ընդ որում, նա ցուցմունքում նշել է, որ Ռ-ազմիկի ծնողները մեկ անգամ են տանից ուտելիք ուղարկել, դա եղել է նոր տարվա մոտերը, և օրը հիմա չի կարող հիշել (հ. 7, գ.թ. 93):

Այսպիսով, Մուսա Սերոբյանը, չհիշելով ծանրոցը վերցնելու կոնկրետ օրը, վկայակոչել է Վահան Սկրտչյանի ասածն այն մասին, որ Արկաղի Մուրադյանի ծնողների եկած օրն են իրենք ծանրոցը վերցրել Վահանի մոտից:

Քանի որ Արկաղիի մոր՝ Սիրանուշ Մուրադյանի ցուցմունքով ծանրոցը բերելու օրը եղել է 2003 թվականի դեկտեմբերի 24-ը, այդ փաստն ընդունվել է նախաքննության մարմնի կողմից:

Գործով վկա Վահան Սկրտչյանը 2004 թվականի հունիսի 20-ին և 21-ին ցուցմունքներ է տվել (որոնք պնդել է նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններ-

րում) այն մասին, որ 2003 թվականի դեկտեմբերի 20-ից հետո (կոնկրետ օր չի նշում)՝ ժամը 17:30-ից 18:00-ի սահմաններում, եկել են Արկաղիի ծնողները, որոնք իր մոտ են մնացել մոտ 20 րոպե, իրեն են տվել Ռ-ազմիկ Սարգսյանի ծնողների ուղարկած ծանուցը՝ նրան հանձնելու համար և գնացել են:

Նույն օրը՝ մոտ 2 ժամ անց՝ 20:30-ից 22:00-ի սահմաններում, Ռ-ազմիկը Մուսայի և Էլի մեկ տղայի հետ եկել ու տարել է ծանրոցը: Այդ օրն ինքը հերթապահել է մարտկոցում, ծանրոցը բերելու օրը պատասխանատուն եղել է կամ ավագ լեյտենանտ Գրիգորյանը, կամ կապիտան Ծատուրյանը: Երբ Արկաղիի ծնողները եկել են, ինքը բիհդաժում հանգստանալիս է եղել՝ վերակարգն ընդունելու համար: Արկաղիի ծնողներն իրեն են տվել 2 ծանրոց՝ մեկն իր համար, մյուսը՝ Ռ-ազմիկի:

Նույն օրը, երբ եկել են Արկաղիի ծնողներն ու թողել ծանրոցները, ինքը հերթապահել է, և հենց այդ օրը Ռ-ազմիկը Մուսայի և մեկ այլ տղայի հետ եկել ու տարել է ծանրոցը (հ. 10, գ.թ. 67-70, 115-118, հ. 15, գ.թ. 114-115):

Ինչպես երևում է հերթապահության մատյանների գնում կատարելու վերաբերյալ 20.06.04 թվականի արձանագրությունից, մատյանի 38-րդ թերթում գրանցված են 2003 թվականի դեկտեմբերի 20-ի, 21-ի, 22-ի, 23-ի և 24-ի հրահանգավորման տվյալները: Ըստ այդ մատյանի՝ սերժանտ Վահան Սկրտչյանը ԿՄ-19 ստորաբաժանման հերթապահության համար հրահանգավորվել է 2003 թվականի դեկտեմբերի 23-ին: Հրահանգավորումը կատարել է կապիտան Էդիկ Շահբազյանը: Հրահանգավորվել են նաև կրտսեր սերժանտ Տարոն Փիլոյանը, շարքայիններ Սերգեյ Գալստյանը և Արտյոմ Աղյանը: Մատյանի գնությանը մասնակցած ավագ լեյտենանտ Սարգիս Գրիգորյանը հայտարարել է, որ հրահանգավորումը կատարվում է տվյալ օրը՝ ժամը 18:00-ին, և ժամը 19:00-ից զինժառանգողներն անցնում են հերթապահության:

Ձևությամբ պարզվել է, որ Վահան Սկրտչյանը հրահանգավորվել է նաև դեկտեմբերի 19-ին, 21-ին, 27-ին և 30-ին: Ըստ նույն արձանագրության՝ Վահան Սկրտչյանը վերակարգում է գտնվել դեկտեմբերի 11-ին, 16-ին, 19-ին, 21-ին, 23-ին, 25-ին, 27-ին և 30-ին (հ.10, գ.թ. 73-74):

Այսպիսով, մատյանների գնումից երևում է, որ Վահան Սկրտչյանը դեկտեմբերի 24-ին չի հրահանգավորվել և չի հերթապահել:

Ինչպես երևում է Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի «Զարուղ» անցագրային կետում մեքենաների շարժի գրանցման մատյանից, «Վազ-2106» մակնիշի 45 ՕՍ 047 պետհամարանիշի ավտոմեքենան, որով Ղարաբաղ են գնացել Արկաղիի ծնողները, Ստեփանակերտի ուղղությամբ անցել է 2003 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 03:30-ին, և վերադարձել է դեկտեմբերի 24-ին՝ ժամը 15:55-ին (հ.10, գ.թ. 123-153):

Այս փաստը 2004 թվականի հունիսի 22-ին հայտնի է դարձել նախաքննության մարմնին, որը սակայն պատշաճ գնահատական չի տվել գործի՝ վերը շարադրված փաստական հանգամանքներին (մասնավորապես, Արկաղիի ծնողների գալու օրը, Վահան Սկրտչյանի հերթապահելու օրը), և չունենալով այլ ապացույցներ, որոնք հիմնավորում են ծանրոցը ամբաստանյալների կողմից ոչ թե Արկաղիի ծնողների գալու օրը՝ դեկտեմբերի 23-ին, այլ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 24-ին, վերցնելու փաստը, հանգել է նման հետևության, որ ծանրոցը ստացվել և վերցվել է դեկտեմբերի 24-ին:

Ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ վերաքննիչ դատարանն անտեսել են այն հանգամանքը, որ գործի նյութերում առկա են ապացույցներ, որոնք ծանրոցը վերցնելու օրը կապում են ոչ թե կոնկրետ ամսաթվի, այլ իրադարձության՝ Արկաղիի ծնողների գալու հետ: Այսպես՝ 2004 թվականի ապրիլի 21-ին, ընդունելով, որ ծանրոցը վերցրել է դեկտեմբերի 24-ին, Ռ.Սարգսյանը նշել է, որ դա այն օրն էր, երբ Արկաղիի ծնողները եկել էին Մատաղիս:

Մուսա Սերոբյանը նույնպես 2004 թվականի ապրիլի 21-ին տված ցուցմունքում նշել է, որ ծանրոցը վերցնելու օրը չի հիշում, սակայն դա այդ նույն օրն էր, երբ եկել էին Արկադիի ծնողները: Այսինքն՝ նա ծանրոցը վերցնելու օրը կապում է ոչ թե դեկտեմբերի 23-ի կամ 24-ի հետ, այլ Արկադիի ծնողների գալու օրվա հետ:

Ակնհայտ է, որ 2004 թվականի ապրիլ ամսին ինչպես Ռազմիկ Սարգսյանը, այնպես էլ Մուսա Սերոբյանը չէին կարող իմանալ, որ 2004 թվականի հունիսի 22-ին, այսինքն՝ իրենց տված ցուցմունքից 2 ամիս անց պետք է պարզվեր, որ Արկադիի ծնողները Մատաղիս են եկել ոչ թե դեկտեմբերի 24-ին, այլ 23-ին:

Նույն կերպ Վահան Սկրտչյանը ծանրոցն ստանալու և Ռ.Սարգսյանին հանձնելու օրը կապում է ինչպես Արկադիի ծնողների գալու, այնպես էլ իր հերթապահության հետ: Իսկ գործի նյութերից երևում է, որ այդ օրը դեկտեմբերի 23-ն է:

Գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմինն ու վերաքննիչ դատարանը երկակի վերաբերմունք են դրսևորել Վահան Սկրտչյանի ցուցմունքների նկատմամբ: Մասնավորապես, երբ Վահան Սկրտչյանը ժխտել է մինչև ծանրոցը վերցնելը Ռազմիկ Սարգսյանի՝ իրեն զանգահարելու փաստը, նախաքննության մարմինն ու դատարանը դա համարել են արժանահավատ: Միաժամանակ նույն ցուցմունքի այն մասը, թե ամբաստանյալները ծանրոցը վերցրել են Արկադիի ծնողների գալու օրը, համարել են անարժանահավատ այն պատճառաբանությամբ, որ Վահան Սկրտչյանը շուրջ 3 ամիս կորցրած է եղել հիշողությունը:

Այսպիսով, «հիշողությունը կորցրած» վկայի ցուցմունքի մի մասը համարվել է արժանահավատ, իսկ մյուս մասը՝ անարժանահավատ: Նախաքննության մարմինն ու դատարանը, հանգելով նման հետևության, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները կարող են հաստատվել՝ միայն որպես ապացույց ստանալով և հետազոտելով դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունն այն վկայի վերաբերյալ, որն ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու գործի փաստերը: Նկատի ունենալով, որ ծանրոցը վերցնելու հետ անմիջական առնչություն են ունեցել Ռազմիկ Սարգսյանը, Մուսա Սերոբյանը, Արայիկ Ջալյանը, Վահան Սկրտչյանը, և վերջինիս ցուցմունքները կարևոր նշանակություն ունեն գործի համար, նոր նախաքննությամբ անհրաժեշտ է ստուգել Վահան Սկրտչյանի ցուցմունքներում նշված փաստարկները, հետազոտել մատչյալների զննում կատարելու վերաբերյալ 2004 թվականի հունիսի 20-ի արձանագրությունը, հարցաքննել այնտեղ նշված զինձառայողներին, Վահան Սկրտչյանի նկատմամբ նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն և ձեռք բերած տվյալների հիման վրա հանգել համապատասխան հետևությունների, ինչպես նաև հանգել եզրակացության այն մասին, թե այն ծանրոցը, որը, ըստ նախաքննության վարկածի, առիթ է հանդիսացել տուժողների և մեղադրյալների միջև առաջացած վիճաբանության և տուժողների սպանության, արդյո՞ք ստացվել և օգտագործվել է դեկտեմբերի 24-ին (ինչպես ընդունել են նախաքննության մարմինը և դատարանները), թե դեկտեմբերի 23-ին (մինչև սպանության կատարումը):

2. Տուժողների մահվան օրվա հետ կապված հարցեր.

Գործով հաստատված է համարվել, որ ամբաստանյալներ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Ջալյանը տուժողներ Ռ.Եղիազարյանին և Հ.Սկրտումյանին 2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21⁰⁰-ի սահմաններում, սպանել են Մատաղիս գյուղի ջրանցքի հարևանությամբ գտնվող կիսաքանդ շինությունում և կատարվածը

որպես դժբախտ պատահար ներկայացնելու, կատարվածի հետքերը թաքցնելու նպատակով նույն օրը նրանց դիակները գցել են հարակից ջրանցքը:

Հ.Սկրտումյանի և Ռ.Եղիազարյանի մահվան պատճառը, ժամանակը, մեխանիզմը, վաղեմությունը և մի շարք այլ հարցեր պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության թիվ 34/2 եզրակացության համաձայն՝ Հ.Սկրտումյանի մահը վրա է հասել գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարումից, թոքերի արյունազեղումից, որը հետևանք է գլխի, կրծքավանդակի համակցված փակ, բուք վնասվածքի:

Ըստ նշված փորձաքննության եզրակացության՝ Հ.Սկրտումյանի դիակի ու շրջապատի փոփոխությունների զարգացվածության աստիճանից կարելի է ենթադրել, որ նրա մահը վրա է հասել դիահերձումից ոչ պակաս, քան մոտ 1-2 օր և ավելի առաջ (հ.3, գ.թ. 102-104): Ռ.Եղիազարյանի դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 35/3 եզրակացության համաձայն՝ նրա մահը վրա է հասել գլխուղեղի կենսական կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարումից, փակ, բուք գանգուղեղային վնասվածք ստանալու հետևանքով, որն էլ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ մահվան անմիջական պատճառի հետ: Հաշվի առնելով ու շրջապատի փոփոխությունների զարգացվածության, ինչպես նաև դիակի՝ ջրում գտնվելու նշանների արտահայտվածությունների աստիճանները՝ կարելի է ենթադրել, որ Ռ.Եղիազարյանի մահը վրա է հասել փորձաքննությունից ավելի քան 10-14 օր առաջ (հ.3, գ.թ.108-112):

Լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության թիվ 16 և 17 եզրակացությունների համաձայն՝ ելնելով ու շրջապատի փոփոխությունների արտահայտվածությունների աստիճաններից՝ պետք է ենթադրել, որ Ռ.Եղիազարյանի և Հ.Սկրտումյանի մահը վրա է հասել դիակը դատաբժշկական փորձաքննության ենթարկելուց մոտ 1-2 շաբաթ առաջ: Նշված է նաև, որ նկատի ունենալով դիակների դատաբժշկական փորձաքննության ընթացքում հայտնաբերված դիակային փոփոխությունները, ինչպես նաև հեղուկ միջավայրի մոտավոր ջերմաստիճանը՝ կարելի է ենթադրել, որ Ռ.Եղիազարյանի և Հ.Սկրտումյանի դիակները ջրի մեջ են գտնվել մոտ 1-2 շաբաթ (հ.8, գ.թ. 97-99, 100-101):

Գատաբժշկական փորձաքննությունների թիվ 34/2 և 35/3 եզրակացություններից երևում է, որ Հ.Սկրտումյանի դիակի դատաբժշկական փորձաքննությունն սկսվել է 2004 թվականի հունվարի 10-ին (հ.3, գ.թ. 102), իսկ Ռ.Եղիազարյանի դիակինը՝ 2004 թվականի հունվարի 11-ին (հ.3, գ.թ. 108): Քանի որ նրանց մահը վրա է հասել դիակների դատաբժշկական փորձաքննություն կատարելուց մոտ 1-2 շաբաթ առաջ, ապա նույնիսկ առավելագույն հաշվարկով (14 օր) Հ.Սկրտումյանի մահը պետք է վրա հասնե 2003 թվականի դեկտեմբերի 27-ին, իսկ Ռ.Եղիազարյանինը՝ դեկտեմբերի 28-ին:

Առաջին առյուծի դատարանում հարցաքննված փորձագետ Գ.Հարությունյանը պարզաբանել է, որ 1-2 շաբաթ ասելով՝ ի նկատի են ունեցել 7-14 օր: Իրենք եզրակացության մեջ նշել են 1-2 շաբաթ, քանի որ օրերով հստակ որոշելն անհնար է, կարող են օրերի մեջ սխալվել (հ. 15, գ.թ. 169-171):

Փորձագետ Գ.Հարությունյանը նաև նշել է, որ ելնելով ջրի ջերմաստիճանից, հնարավոր է, որ 1-2 շաբաթը լինի 14 օրից մեկ օր ավել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փորձագետի նման պարզաբանումը չի բխում դատաբժշկական փորձաքննության եզրակացություններից, որտեղ հաշվի է առնվել նաև ջրի ջերմաստիճանը և 1-2 շաբաթը նշվել է հստակ:

Բացի այդ, փորձագետի տվյալ պարզաբանումը գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Վերաքննիչ դատարանը, ունենալով դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններում, ինչպես նաև փորձագետների հարցաքննության արդյունքում հստակ ուրվագծված 1-2 շաբաթվա ժամկետը, փորձագետի վերը նշված պարզաբանումից արել է անհիմն հետևություն այն մասին, որ «1-2 շաբաթ ասելով կարող են օրերի մեջ սխալվել» (հ. 18, գ.թ. 171):

Փաստորեն, ընդունելով, որ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Ջալյանը Ռոմանին ու Հովսեփին սպանել են 2003 թվականի դեկտեմբերի 24-ին, վերաքննիչ դատարանն արել է դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա չհիմնված և Հովսեփ Սկրտումյանի ու Ռոման Եղիազարյանի դիակների հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններին և դրանք պարզաբանող ու հստակեցնող փորձագետի ցուցմունքներին ակնհայտորեն հակասող հետևություն այն մասին, որ տուժողների մահը վրա է հասել 17-րդ կամ 18-րդ օրը: Մինչդեռ ակնհայտ է, որ 17-18 օրը չի համապատասխանում փորձաքննության տվյալներով արձանագրված 1-2 շաբաթ ժամանակահատվածին:

Այդ մասին է վկայում նաև առաջին ատյանի դատարանում փորձագետ Գ.Հարությունյանի տված պարզաբանումն այն մասին, որ եթե այդ ժամկետը 2 շաբաթից անցնի, երրորդն իրենք ստույգ ասել չեն կարող (հ. 15, գ.թ. 171): Այսինքն՝ փորձագետը բացառել է 2 շաբաթից ավել ժամկետի գոյության հնարավորությունը:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացություններում նշված՝ տուժողներ Հ.Սկրտումյանի և Ռ.Եղիազարյանի մահը վրա հասնելու և նրանց դիակները ջրի մեջ գտնվելու 1-2 շաբաթվա ժամկետի և գործով հաստատված այլ փաստական հանգամանքների միջև առաջացած հակասությունները նախաքննության մարմնի և դատարանների կողմից չեն պարզվել, չեն հերքվել, և այդ եզրակացությունները դրվել են դատավճռի հիմքում:

Նոր նախաքննությամբ անհրաժեշտ է պատշաճ գնահատության ենթարկել դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները՝ դրանք համադրելով գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, և այդ ապացույցների հետազոտման ու գնահատման արդյունքում գալ համապատասխան եզրակացության տուժողների մահվան վրա հասնելու ժամանակահատվածի հարցում:

3. Հանցագործության դեպքի վայրի (կատարման տեղի) հետ կապված հարցեր.

3.1 Նախաքննության մարմինը և դատարանները, հետազոտելով ամբաստանյալ Ռազմիկ Սարգսյանի, գործով վկաներ Էդիկ, Մարեսա, Մարուսյա և Մարինե Հարությունյանների, Կարինե Գևորգյանի, Ալեքսան Հայրապետյանի, Սերյոժա Սահակյանի ցուցմունքները, դեպքի վայրի զննության արձանագրությունը, իրեղեն ապացույց ճանաչված զարեջրի շիշն ու խտացրած կաթի տուփը, հանգել են հետևության, որ ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի, Ա.Ջալյանի և տուժողներ Հ.Սկրտումյանի ու Ռ.Եղիազարյանի միջև վիճաբանությունը, կռիվը, ծեծկռտուքը տեղի են ունեցել Մատաղիս գյուղի ջրանցքի հարևանությամբ գտնվող կիսաքանդ շինությունում, որտեղ էլ վերջիններս սպանվել են:

Սակայն դատավճռից երևում է, որ հանցագործության վայրի վերաբերյալ դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները չեն համապատասխանում դատարանում հետազոտված ապացույցներին: Այսպես՝ նախաքննության սկզբում Ռազմիկ Սարգսյանը խոստովանական ցուցմունք է տվել, որ այդ շինությունում իրենք երեքով վիճաբանել ու կռվել են Ռոմանի և Հովսեփի հետ, ծեծել են նրանց, որի հետևանքով վերջիններս մահացել են: Նա նշել է, որ ծեծվելու ընթացքում տուժող-

ների կողմից օգնության կանչեր չեն եղել: Հետագայում նա հրաժարվել է իր այդ ցուցմունքներից՝ նշելով, որ դրանք տվել է բռնության և սպառնալիքի ազդեցության տակ:

Վկա Մարուսյա Հարությունյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, գորամասի ուղղությունից սարսափելի բղավոց է լսել: Հայրը նստել է իր մեքենան և գնացել գորամաս: Նրա գնալուց քիչ անց նույն ուղղությունից լսել է «վախ, մամա՛ ջան» և «օգնեցե՛ք» բղավոցները: Հաջորդ օրը դպրոցում իր դասղեկ Կարինե Գևորգյանից իմանալով, որ մի զինվոր է անհետացել գորամասից, նրան պատմել է, որ նախորդ երեկոյան բղավոցներ և օգնության կանչեր է լսել (հ. 1, գ. ք. 77-78, հ. 6, գ.ք. 19-22): Վկա Կարինե Գևորգյանը նույնպես ցուցմունք է տվել, որ իր աշակերտուհի Մարուսյան պատմել է, որ զիջերը գնդի պարսպի մոտ զինվոր են ծեծել (հ. 1, գ.ք. 79-83): Առերես հարցաքննված Կարինե Գևորգյանը և Մարուսյա Հարությունյանը պնդել են իրենց ցուցմունքները (հ. 1, գ.ք. 94-96):

Վկա Էդիկ Հարությունյանը հայտնել է, որ դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, գորամասի ուղղությունից սարսափելի բղավոց է լսել, ինչ-որ մեկը գոռացել է «վախ»: Քանի որ որդին այդ օրը խնամ է վերադարձել գորամաս, դրա համար ինքը նստել է իր ավտոմեքենան և գնացել է այնտեղ (հ. 1, գ. ք. 85-87, հ. 6, գ. ք. 23-28):

Վկա Մարետա Հարությունյանը ցուցմունք է տվել, որ դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:15-ի սահմաններում, գորամասի կողմից լսել է բարձր բղավոց՝ «վա՛յ, վա՛յ, մամա»: Մոտ 2 րոպե անց նորից նույն տեղից լսել է «վա՛յ, մամա, օգնեցե՛ք» ձայնը: Այդ ձայները լսվում էին գորամասի գուգարանի կողմից (հ. 1, գ. ք. 168-172, հ. 2, գ.ք. 48-49):

Վկա Մարինե Հարությունյանը նույնպես ցուցմունք է տվել, որ ժամը 20:30-ից հետո է եղել, երբ գորամասի գուգարանի կողմից լսել է բղավոց՝ «վա՛յ, մամա ջան»: Առաջին բղավոցից հետո հայրը՝ Էդիկ Հարությունյանը, գնացել է դեպի գորամաս, իսկ մայրն ու քույրը դուրս են եկել: Նորից մի քանի անգամ լսել է «վա՛յ, մամա ջան», հետո՝ «օգնեցե՛ք» բառերը (հ. 1, գ. ք. 173-174):

Վերը նշված վկաները նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև առաջին ատյանի դատարանում:

Մարուսյա Հարությունյանը պնդել է, որ լսել է օգնության կանչեր, հստակ լսել է բառերը, որոնք եկել են գորամասի ուղղությունից (հ. 15, գ. ք. 157-158):

Մարետա Հարությունյանը նույնպես հայտնել է, որ լսել է օգնության կանչեր, որոնք եկել են գորամասի կողմից, իսկ պաշտպանի հարցին պատասխանել է. «Այդ ձայները ավելի հեռվից էին գալիս, քան շինությունը: Ըստ ինձ՝ գորամասի կողմից էին գալիս» (հ. 15, գ. ք. 158-160):

Էդիկ Հարությունյանը ցուցմունք է տվել, որ լսել է «վախ, մամա» ձայնը, որը գալիս էր հեռվից՝ գորամասի կողմից, իսկ պաշտպանի հարցին պատասխանել է, որ հնարավոր չէ, որ ձայները շինությունից լինեին, դրանք լսվել են գորամասի մոտից (հ. 15, գ. ք. 160-163):

Գործով վկա Ալեքսանդր Հայրապետյանը նախաքննության ընթացքում և առաջին ատյանի դատարանում ցուցմունքներ է տվել, որ դեկտեմբերի 24-ին՝ ժամը 20:30-ից 21:00-ի սահմաններում, ջրանցքի կամրջի վրա հանդիպել է խանութի Էդոյի աղջկան ու կնոջը, վերջինս «վա՛յ, վա՛յ» է արել ու ցույց տալով Չոյայի խանութի կողմը՝ ասել, որ այնտեղից օգնություն են կանչում, կարող է իր տղան էլ այնտեղ էլ (հ. 2, գ. ք. 136-139, 140-142, հ. 3 գ. ք. 66-68, 81-83, հ. 7, գ.ք. 10-14, հ. 15, գ.ք. 145-146):

Ձոյայի խանութի մոտից «մամա՛ ջան» բարձր գոռոց լսելու մասին իր ցուցմունքներում հայտնել է նաև գործով վկա Սերյոժա Սահակյանը (հ. 3, գ. թ. 77-78, հ. 8, գ.թ. 229-232, հ. 15, գ.թ. 152-153):

Փաստորեն, դուռ ու ապակիներ չունեցող պատուհաններով շինությանը մոտ գտնված նշված բոլոր վկաները հաստատել են, որ օգնության կանչերը լսվել են գործամասի մոտից՝ գործամասի մոտ գտնվող Ձոյայի խանութի կողմից:

Այդ ձայները լսած վկաներից ոչ մեկը երբևիցե չի հայտնել, որ դրանք լսվել են ջրանցքի մոտի շինությունից:

Ընդհակառակը, Էդիկ Հարությունյանը հստակ նշել է, որ այդ ձայները հնարավոր չէ, որ շինությունից լինեին, դրանք լսվել են գործամասի մոտից: Այդ մասին է վկայում նաև Էդիկ Հարությունյանի վարքագիծը. ոգելից խմիչք օգտագործած վիճակում տանից դուրս եկած զինվոր որդու ճակատագրով մտահոգված, անհանգստացած հայրն ավտոմեքենայով շտապել է գործմաս, որտեղից լսել է օգնության կանչերը, այլ ոչ թե խանութից քիչ հեռու գտնվող շինություն:

Նույնը վերաբերում է նաև կամրջի վրա կանգնած, շինությունից շուրջ 20 մետր հեռավորության վրա գտնվող նրա կնոջն ու աղջկան, որոնք պնդել են, որ օգնության կանչերը լսել են ոչ թե շինությունից, այլ գործամասի կողմից:

Չանդարառնալով և չվերլուծելով վերը նշված հանգամանքները, գործով վկաներ Էդիկ, Մարետա, Մարուսյա և Մարինե Հարությունյանների, Կարինե Գևորգյանի, Ալեքսան Հարությունյանի, Սերյոժա Սահակյանի ցուցմունքներն՝ վերաքննիչ դատարանը հաստատված է համարել հետևյալը. «24.12.2003 թվականին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Մատաղիս գյուղի ջրանցքի շրջակայքում օգնության կանչեր են լսվել, որոնք սակայն գործամասի տարածքում լսելի չեն եղել, ինչը բացատրվում է նրանով, որ ջրանցքի շինությունը Էդիկ Հարությունյանի խանութից գտնվում է 50-60 մետր հեռավորության վրա, իսկ գործամասից այն գտնվում է մոտ 100-150 մետր ներքև և բացի այդ, շինության բաց պատուհաններն ու դուռը նայում են հենց գյուղի կողմը, իսկ գործամասի կողմից երևում է միայն փակ պատը»:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը խախտել է դատավճռի հիմնավորվածության մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, քանի որ դատավճռի հետևությունները հիմնված չեն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, և դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները չեն համապատասխանում դատարանում հետազոտված ապացույցներին:

Գործի համար էական նշանակություն ունեցող վերը նշված հանգամանքները ստուգելու և ճշտելու նպատակով, մասնավորապես, անհրաժեշտ է կատարել քննչական փորձարարություն, դրա արդյունքները համադրել համապատասխան վկաների ցուցմունքների հետ, ինչպես նաև կատարել այլ անհրաժեշտ դատավարական գործողություններ՝ նշված հակասությունները բացահայտելու և օբյեկտիվ իրականությունը պարզելու նպատակով:

3.2 Դատավճռով հաստատված է համարվել, որ շինության ներսում ամբաստանյալները ծեծել և առանձին դաժանությամբ սպանել են Հ.Մկրտումյանին և Ռ.Եղիազարյանին, ինչի ապացույց են նրանց վրա առկա բազմաթիվ մարմնական վնասվածքները: Սակայն, ըստ գործի նյութերի, շինության ներսում չի հայտնաբերվել և արձանագրվել այնտեղ տեղի ունեցած պայթյարի փաստը հաստատող որևէ հետք:

Մինչդեռ գործում առկա փաստական տվյալներն այլ բան են վկայում: Այսպես՝ դեպքի վայրի զննության արձանագրությունից երևում է, որ 2004 թվականի հունվարի 9-ին ջրանցքից հանված Հ.Մկրտումյանի դիակի դեմքի վրա եղել են արնանման հե-

դուլի հետքեր (հ. 1, գ.թ. 25-27): Իսկ Հ.Սկրտումյանի դիակի զննության արձանագրության համաձայն՝ նրա արտաքին շնչական ուղիներում աջից և ձախից կա վարդագույն հեղուկ արտադրություն (հ. 1, գ.թ. 29-31):

Գործով վկա, թիվ 33651 զինվորական մասի հրամանատար Միքայել Արզումանյանն իր ցուցմունքում նշել է, որ ջրից հանված Հովսեփ Սկրտումյանի դիակին նայելով՝ տեսել է, որ «քթից հոսած արյան հետք կար» (հ. 6, գ.թ. 184):

Փաստորեն, 2003 թվականի դեկտեմբերի 24-ին ջրանցքի մոտի շինությունում սպանված, շուրջ 1-2 շաբաթ ջրում մնացած և 2004 թվականի հունվարի 9-ին ջրից հանված Հովսեփ Սկրտումյանի դիակի դեմքի վրա եղել են արնանման հեղուկի հետքեր, արտաքին շնչական ուղիներում աջից և ձախից եղել է վարդագույն հեղուկ արտադրություն, սակայն դեպքի վայր շինությունում, որտեղ դաժան ծեծից հետո մոտ 1 ժամ մնացել են դիակները, արյան որևէ հետք չի հայտնաբերվել ինչպես դեկտեմբերի 25-ին շինությունում եղած Գևորգ Գրիգորյանի և Մնացական Ավագյանի կողմից, այնպես էլ 2004 թվականի հունվարի 9-ի դեպքի վայրի զննությամբ:

Այս հանգամանքը նախաքննության մարմնի և դատարանների կողմից գնահատման չի արժանացել:

3.3 Բացի այդ, 2004 թվականի հունվարի 9-ին որպես դեպքի վայր գնված ջրամբարի մոտ գտնվող շենքում հայտնաբերվել է «Կոտայք» գարեջրի դատարկ շիշ, որը ճանաչվել է իրեղեն ապացույց՝ կապված այն բանի հետ, որ դեկտեմբերի 24-ին, երբ Ռ.Եղիազարյանը մտել է նշված շինությունը, գարեջրի շիշը գտնվել է նրա ձեռքին: Այս եզրահանգման հիմքում դրվել են ամբաստանյալ Ռ.Սարգսյանի հակասական խոստովանական ցուցմունքները, որոնցից նա հետագայում հրաժարվել է: Գործի նյութերով չի հիմնավորվել, որ գարեջրի շիշը շինությունում է հայտնվել հենց դեկտեմբերի 24-ին և առնչություն ունի դեպքին: Նախաքննության մարմինը և դատարաններն այդ ուղղությամբ պատշաճ քննություն չեն իրականացրել:

Մասնավորապես, նրանց կողմից գնահատման չի ենթարկվել գործով վկա Գևորգ Գրիգորյանի ցուցմունքն այն մասին, որ 2003 թվականի դեկտեմբերի 25-ի առավոտյան մտել է այդ շինությունը, բայց այնտեղ գարեջրի շիշ չի եղել (հ. 3, գ.թ. 84-86, հ. 5, գ.թ. 181-187, հ. 15, գ.թ. 109-113): Գևորգ Գրիգորյանի այս ցուցմունքը չի հետազոտվել և չի գնահատվել:

Նախաքննության մարմինը ոչ մի միջոց չի ձեռնարկել պարզելու, թե որտեղից է գարեջրի շիշը (որի վրա համեմատական հետազոտության համար պիտանի մատնահետքեր չեն հայտնաբերվել) հայտնվել Ռ-ոման Եղիազարյանի մոտ, և ընդհանրապես նրա ձեռքին շիշ եղե՞լ է, թե ոչ:

Առանց հաշվի առնելու նշված հանգամանքները՝ դատարանները հաստատված են համարել, որ Ռ-ոման Եղիազարյանի ձեռքին դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, եղել է գարեջրի շիշ, որը հայտնաբերվել է դեպքի վայր հանդիսացող շինությունում և ճանաչվել իրեղեն ապացույց:

Նոր նախաքննությամբ անհրաժեշտ է պարզել, թե երբ, որտեղից և ինչ հանգամանքներում է գարեջրի շիշը հայտնվել շինությունում, և ինչ առնչություն ունի այն հանցագործության դեպքին:

3.4 Հանցագործության դեպքի վայրը (կատարման տեղը) պարզելու համար էական նշանակություն ունի նաև տուժողների դիակները հայտնաբերելու վայրի և դրա հետ կապված գործի փաստական այլ հանգամանքների միջև առկա հակասությունները բացահայտելու և պարզելու անհրաժեշտությունը:

Դեպքի վայրի զննության 09.01.2004 թվականի արձանագրությունից երևում է, որ Հովսեփ Սկրտումյանի դիակը հայտնաբերվել է կամրջից դեպի ջրաշափի շինութ-

յունը՝ մոտ 3 մետր հեռավորության վրա (հ. 1, գ.թ. 25-28), իսկ դեպքի վայրի գնմության 10.01.2004 թվականի արձանագրության համաձայն՝ Ռոման Եղիազարյանի դիակը հայտնաբերվել է կամրջի տակից՝ եզրից 2 մետր դեպի խորքը (հ. 1, գ.թ. 58-60):

Ըստ նախաքննության վարկածի, որը բացառապես հիմնված է Ռ-ազմիկ Սարգսյանի խոստովանական ցուցմունքների վրա (որոնցից նա հետագայում հրաժարվել է), սպանելուց հետո մեղադրյալները սկզբում ջուրն են գցել Ռոմանին, հետո՝ Հովսեփին:

Քննիչի հարցին, թե ում են կամրջին ավելի մոտ գցել, Ռ.Սարգսյանը պատասխանել է, որ Հովսեփին գցել են կամրջի և շինության մեջտեղից, իսկ Ռոմանին՝ շինության մոտից: Քանի որ նրա ցուցմունքներն ակնհայտորեն հակասել են դեպքի վայրի գնմության արձանագրություններին, քննիչը Ռ.Սարգսյանին հայտնել է, որ դիակները հայտնաբերվել են «նրա նշած տեղից հակառակ» (հ. 7, գ.թ. 217-222): Գործի համար նշանակություն ունեցող այդ տվյալները ստուգելու և ճշտելու նպատակով կատարված քննչական փորձարարության ժամանակ Ռ.Սարգսյանը ցույց է տվել և հայտնել, որ սկզբում Ռոմանին են գցել ջուրը: Շինության պատի և ջրանցքի միջև առկա բետոնի վրայով անցել են, Ռոմանին պառկեցրել են գետնին ու գցել ջուրը՝ հրելով: Հովսեփին գցել են շինության և կամրջի մեջտեղից՝ ավելի մոտիկ կամրջին:

Քանի որ նորից ակնհայտ է եղել անհամապատասխանությունը, և այդ կապակցությամբ քննիչը նշել է, որ ջրանցքի ջուրը չի հոսում, և դիակները Ռ-ազմիկ Սարգսյանի ցույց տված տեղից չեն հայտնաբերվել, վերջինս պատասխանել է, որ ինքն այդ մասին ոչինչ ասել չի կարող (հ. 8, գ.թ. 53-57):

Չնայած վերոգրյալ հակասություններին՝ վերաքննիչ դատարանը առանց որևէ հիմնավորման, խեղաթյուրելով իրականությունը, դատավճռում նշել է, որ Ռոմանին կամրջի մոտ դրել են գետնին և հրելով գցել ջուրը: Սա ակնհայտորեն հակասում է քննչական փորձարարության արձանագրությանը:

Գործով վկա, ԼԳՀ արտակարգ իրավիճակների վարչության փրկարար Տիգրան Լազարյանը ցուցմունք է տվել, որ 2004 թվականի հունվարի 9-ին կամրջից մոտ 2 մետր և ջրանցքի պատից մոտ 1,5 մետր հեռավորության վրա հայտնաբերվել է զինվորներից մեկի դիակը: Հունվարի 10-ին փրկարար Գազիկ Աղաջանյանը կամրջի տակից՝ մոտավորապես 2 մետր ներս, հայտնաբերել է 2-րդ զինվորի դիակը:

Տիգրան Լազարյանը նշել է, որ 2-րդ զինվորի դիակը կամրջի տակ հայտնվելու երկու տարբերակ կա. կամ զինվորը ողջ վիճակում է ընկել ջուրը և շարժվել է կամրջի տակ, կամ նրան ջուրն են գցել կամրջի մյուս կողմից: Կամրջի մյուս կողմում ջրանցքն ավելի նեղ է, և ջրի հոսք կար (հ. 6, գ.թ. 162-167, հ. 15, գ.թ. 107-109):

Վկա, ԼԳՀ արտակարգ իրավիճակների վարչության ջոկի հրամանատար Ալեքսանդր Մովսիսյանը ցուցմունք է տվել, որ 2004 թվականի հունվարին մեկնել են Մատաղիս և կորած զինվորներին հայտնաբերելու նպատակով ստուգել են ջրանցքը: Առաջին օրը փրկարար Տիգրան Լազարյանը կամրջից մոտ 2 մետր և ջրանցքի պատից մոտ 1,5 մետր հեռավորության վրա հայտնաբերել է զինվորներից մեկի դիակը, իսկ հաջորդ օրը Գազիկ Աղաջանյանը կամրջից մոտ 2 մետր դեպի խորքը հայտնաբերել է մյուս զինվորի դիակը: Երկրորդ դիակը հանելուց հետո ինքը մտածել է, որ այդ զինվորը ողջ վիճակում է հայտնվել ջրում, քանի որ եթե մահացած լիներ, բացառվում է, որ ջրի հոսանքով գնար կամրջի տակ: Ընդ որում, ջուրը հոսում է կամրջի տակից դեպի պատնեշը: Եթե մահացած վիճակում այդ զինվորին գցեին կամրջի մյուս կողմից, ապա ինչ-որ տեղ հնարավոր էր, որ նա հոսքով գար մինչև հայտնաբերման տեղը: Դիակը ջրում հայտնվելու և շլիմադրելու դեպքում կմնար գտնված տեղը: Եթե երկու դիակներն էլ սպանված վիճակում են հայտնվել ջրում, ապա հնարավոր չէ, որ

ցույց տված տեղից հասնեն այնտեղ, որտեղից հանել են (հ. 6, գ.թ. 168-174, հ. 15, գ.թ. 103-105):

Ըստ դատաբժշկական փորձաքննության թիվ 16, 17 եզրակացությունների՝ Ռոման Եղիազարյանի և Հովսեփի Սկրտումյանի մահը վրա է հասել մինչև նրանց՝ ջրի մեջ հայտնվելը (հ. 8, գ.թ. 97-99, 100-101): Հետևաբար, բացառվում է այն վարկածը, որ ողջ վիճակում ջրում հայտնված Ռոմանը կարող էր լողալով անցնել կամրջի տակ: Այս պայմաններում չպարզված է մնում գործի համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, թե ինչպես է նրա դիակը հայտնվել կամրջի տակ: Իսկ դա վկայում է այն մասին, որ այդ ուղղությամբ պատշաճ քննություն չի կատարվել, առաջ չեն քաշվել և չեն ստուգվել բոլոր հնարավոր վարկածները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել լրացուցիչ քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ պարզելու համար, թե՝

իրականում որտեղ է կատարվել տուժողների սպանությունը,

եթե տուժողների սպանությունը կատարվել է նախաքննության մարմնի մատնանշած վայրում, ապա ինչպես բացատրել բռնության և դիմադրության հետքերի բացակայությունը, դիակների հայտնաբերման վայրի հետ կապված հակասությունները, գարեջրի շշի՝ դեպքի վայրում հայտնվելը:

4. Տուժողների ալկոհոլային հարբածության հետ կապված հարցերը.

Տուժողների դիակների դատաբժշկական փորձաքննությունների թիվ 34/2, 35/2, 16 և 17 եզրակացություններից երևում է, որ Հ.Սկրտումյանի և Ռ.Եղիազարյանի դիակներից վերցրած արյան մեջ հայտնաբերվել է համապատասխանաբար 0,4 և 0,6 պրոմիլլը էթիլ ալկոհոլ, ինչը համապատասխանում է ալկոհոլային հարբածության թեթև աստիճանին (հ. 3, գ.թ. 104, 112):

Դատաբժշկական փորձաքննության թիվ 16 եզրակացության համաձայն՝ Ռ.Եղիազարյանն ալկոհոլը ընդունել է մահվանից մոտ 3-5 ժամ առաջ (հ. 8, գ.թ. 99):

Սակայն նախաքննության մարմինն ու դատարանները միջոցներ չեն ձեռնարկել պարզելու, թե մինչև սպանվելը զինվորական ծառայության մեջ գտնվող Ռոման Եղիազարյանն ու Հովսեփի Սկրտումյանը որտե՞ղ, ե՞րբ, ու՞մ հետ և ի՞նչ հանգամանքներում են օգտագործել ալկոհոլ: Այդ հարցի հետ կապված գործի նյութերում առկա փաստական տվյալները քննության առարկա չեն դարձել, իսկ տուժողների կողմից գարեջուր օգտագործելու վերաբերյալ նախաքննության մարմնի վարկածը հաստատող սպացույցներ չեն ներկայացվել:

Այսպես՝ 2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում՝ մինչև զորամասից դուրս գալը, գործով վկա Ռադիկ Հակոբյանը մոտ 5 լրպե Ռ.Եղիազարյանի դիմաց կանգնած գրուցել է նրա հետ և իր ցուցմունքում նշել է, որ ինքը չի զգացել, որ նա ալկոհոլ օգտագործած լինի: Նա նաև հայտնել է, որ չի տեսել կամ լսել, որ զորամասում Ռոմանը խմիչք օգտագործեր (հ. 8, գ.թ. 187-194):

Ըստ վկա Արթուր Հակոբյանի ցուցմունքի՝ նա Ա.Թադևոսյանից չի լսել, որ Ռոմանն ու Հովսեփին այդ օրը խմիչք օգտագործած լինեն (հ. 8, գ.թ. 204-208):

Մինչև զորամասից Ռոմանի և Հովսեփի դուրս գալը նրանց հետ եղած վկաներ Ա.Թադևոսյանն ու Ս.Պողոսյանը մույնպես տուժողների կողմից ոգելից խմիչք օգտագործած լինելու մասին որևէ ցուցմունք չեն տվել: Վերը նշված վկաներից ոչ մեկը չի նշել, որ զորամասի պատի վրայից անցնելիս Ռոմանի կամ Հովսեփի ձեռքին գարեջրի շիշ է եղել:

Ավելին, վերաքննիչ դատարանում հարցաքննված վկա Ս.Պողոսյանը ցուցմունք է տվել, որ գործաձախ պատի վրայից անցնելիս Ռոմանի ձեռքին զարեջրի շիշ չի տեսել:

Պատասխանելով քննիչի հարցին, թե մինչև 1 շիշ՝ 0,5 լիտր տարողությամբ, զարեջուր խմելուց կարող էր արդյոք առաջանալ ալկոհոլի նման քանակություն տուժողների արյան և մեզի մեջ, փորձագետ Ա.Քարայանը ցուցմունք է տվել, որ «Ռ.Ե. դիագնոզայանի արյան մեջ եղել է մոտ 30 և մի փոքր ավելի գրամ մաքուր սպիրտի պարունակություն, ավելի ճիշտ նա կարող էր այդքան սպիրտ ընդունած լինել: Գարեջրում կամ ուրիշ ոգելից խմիչքում սպիրտի քանակությունը կարելի է որոշել նրա պիտակի գրառմամբ» (հ. 9, գ.թ. 171-173):

Պարզելու համար այն հարցը, թե իրեղեն ապացույց ճանաչված 1 շիշ՝ 0,5 լիտր տարողությամբ զարեջրի՝ երկու տուժողների համատեղ օգտագործման արդյունքում կարող էր արդյոք նրանց արյան մեջ հայտնաբերվել համապատասխանաբար 0,4 և 0,6 պրոմիլլէ էթիլ ալկոհոլ, անհրաժեշտ էր իրեղեն ապացույց զարեջրի շիշը ներկայացնել փորձաքննության, ինչը չի կատարվել:

Նոր նախաքննության ընթացքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պարզելու համար, թե մինչև սպանվելը զինվորական ծառայության մեջ գտնվող Ռոման Ե. դիագնոզայանն ու Հովսեփ Մկրտումյանը որտե՞ղ, ե՞րբ, ու՞մ հետ, ի՞նչ քանակությամբ և ի՞նչ հանգամանքներում են օգտագործել ալկոհոլ:

5. Հանցագործության շարժառիթի հետ կապված հարցեր.

Գործի տվյալներից չեն բխում նաև սպանության կատարման շարժառիթի մասին դատարանի հետևությունները:

Վերաքննիչ դատարանը սպանության շարժառիթ է դիտել այն հանգամանքը, որ զինվորների մոտ ընդունված սովորույթի համաձայն՝ տանից ստացած ծանրոցը գաղտնի ուտելը լավ արարք չի համարվել, և քանի որ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Զալյանը ստացած ծանրոցը գաղտնի կերել են շինությունում, այդ առթիվ խոսակցություն է տեղի ունեցել Ռ.Սարգսյանի և Ռ.Եդիագարյանի միջև, որն աստիճանաբար վերածվել է վիճարկության: Ռոման Եդիագարյանը Ռազմիկ Սարգսյանից պահանջել է իրեն տալ տանից ստացած ծանրոցը, սակայն վերջինս հրաժարվել է: Դրա պատճառով կռիվ է սկսվել, և անբաստանյալները սպանել են տուժողներին: Ընդ որում, դատավճռում նշվել է, որ «տևական ժամանակով ինժեներաշինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով ուժասպառության, նաև հարձակման անսպասելիության պատճառով Ռոման Եդիագարյանն ու Հովսեփ Մկրտումյանը զրկված են եղել համարժեք դիմադրություն ցույց տալու հնարավորությունից»:

Սակայն վերը շարադրվածը ոչ միայն չի բխում գործի փաստական տվյալներից, այլև հակասում է դրանց:

Այսպես՝ նույնիսկ նախաքննության ընթացքում տված խոստովանական ցուցմունքներում, որոնցից հետագայում նա հրաժարվել է, Ռազմիկ Սարգսյանը նշել է, որ շինությունում սննդամթերքն ուտելուց հետո, երբ դուրս են եկել այնտեղից, գործաձախ կողմից իջնող անձանոթ երկու զինվորներից մեկը մոտեցել է իրեն և պահանջել իր ձեռքի ծանրոցը, իսկ իրենց միջև գործաձախից դուրս գաղտնի հաց ուտելու մասին խոսակցություն չի եղել:

Գործով վկա, զինծառայող Ռադիկ Հակոբյանը ցուցմունք է տվել, որ Ռոման Ե. դիագարյանը բնավորությամբ շատ համեստ ու խելոք էր, նա զինվորներին նեղացնելու բնավորություն չուներ: Տանից ստացած սնունդը գաղտնի ուտելը վատ արարք կդիտվեր, սակայն ոչ ոք իրավունք չունի գոռով պահանջել զինվորի ստացած սնուն-

ող: Ծառայության ընթացքում ինքը գորամասում նման դեպք չի լսել: Ռոմանը համեստ տղա է եղել, նա իրեն թույլ չէր տա որևէ ծանոթ կամ անծանոթ զինվորից պահանջել տանից ստացած սնունդը (հ. 8, գ.թ. 187-194):

Գործով վկա, զինծառայող Վահրամ Աղամյանը ցուցմունք է տվել, որ տանից սնունդ ստացող զինվորը սնունդն ուտում է՝ ում հետ ցանկանում է: Գաղտնի սնունդ ուտելը վատ արարք է համարվում: Ձորամասում ընդհանրապես ընդունված չէ, որ որևէ զինվոր պահանջի մեկ ուրիշի ստացած սնունդը: Անկախ այն հանգամանքից, թե ով է սնունդ ստացող զինվորը, ինչպես է նա իրեն զգում գորամասում, որևէ մեկն իրավունք չունի պահանջել ուրիշի ստացած սնունդը (հ. 10, գ.թ. 176-178):

Ռոպես մեղադրյալ հարցաքննված զինծառայող Երվանդ Պետրոսյանը ցուցմունք է տվել, որ գաղտնի հաց ուտելը լավ արարք չէ, սակայն միևնույն է, ոչ ոք իրավունք չունի վերցնել ուրիշի սնունդը: Ռոմանն ու Հովսեփը նորմալ տղաներ էին, եթե նրանք որևէ զինվորի մոտ տանից ստացած սնունդ տեսնեին, ստիպողաբար չէին պահանջի (հ. 9, գ.թ. 100-103):

Առանց հետազոտելու և գնահատելու վերը նշված ապացույցները՝ վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ 2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, դուրս գալով գորամասից և ջրանցքին կից շինության մոտ հանդիպելով իրենց անծանոթ երեք զինվորի, առանց տեղյակ լինելու, ովքեր են նրանք, ինչ ֆիզիկական տվյալներ ունեն, ինչ է Ռազմիկ Սարգսյանի ձեռքին եղածը, դրական բնութագրվող, «տևական ժամանակով ինժեներաշինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով ուժասպառ եղած» Ռոմանն ու Հովսեփը երեք ամբաստանյալներից պահանջել են տալ Ռազմիկի ձեռքի ծանրոցը: Իսկ երբ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Ջալյանը չեն կատարել նրանց անօրինական պահանջը, համարձակվել են դիմադրել Ռոմանին ու Հովսեփին, պայքարել են վերջիններիս դեմ, նրանք հանկարծակիի են եկել, քանի որ դա անսպասելի է եղել հոգնած, ուժասպառ տուժողների համար, որոնք չեն կարողացել համարժեք դիմադրություն ցույց տալ: Ընդ որում, ըստ վերաքննիչ դատարանի դատավճռի՝ ծանրոցը տալուց հրաժարվող Ռազմիկ Սարգսյանը գործադրել է շինությունում պատահաբար գտած մետաղյա ամրաձողը (արմատուրան), որով հարվածներ է հասցրել Ռոման Եղիազարյանին, իսկ երեք հոգուց ծանրոց պահանջող Ռոմանը, հարձակման ենթարկվելով, չի փորձել գործադրել իր ձեռքի գարեջրի շիշը, իսկ Հովսեփը՝ իր մոտ եղած դանակը, որը 2004 թվականի հունվարի 9-ին հայտնաբերվել է ջրից հանած դիակի բաճկոնի գրպանում (հ. 1, գ.թ. 29):

Այսպիսով, հանցագործության շարժառիթի հետ կապված, առաջանում են մի շարք տրամաբանական, ողջամիտ հարցադրումներ, որոնք պատասխան չեն ստացել նախաքննության վարկածում և դատարանների դատավճիռներում: Մասնավորապես՝ ողջամիտ կասկածի տեղիք է տալիս բուն շարժառիթն այն առումով, որ զինվորների շրջանում (ըստ զինծառայողների տված ցուցմունքների) ընդունված չի եղել զինվորի ստացած սնունդը նրանից պահանջելը, սակայն տուժողները, որոնք մույն զինծառայողների կողմից բնութագրվում են դրականորեն, որպես «նորմալ» և «համեստ» տղաներ, իրենց անծանոթ երեք այլ զինծառայողներից պահանջել են իրենց հանձնել նրանց մոտ եղած ծանրոցը.

1. Երբ այդ երեք զինծառայողները կամավոր հրաժարվել են կատարել տուժողների պահանջը, դիմադրել են նրանց, ինչու՞ է տուժողների համար դա եղել անսպասելի, և նրանք հանկարծակիի են եկել և չեն կարողացել համարժեք դիմադրություն ցույց տալ (անհասկանալի է, թե ինչպես կարող է տուժողների համար անսպասելի լինել իրենց ապօրինի պահանջի նկատմամբ ընդդիմացումը):

2.անհասկանալի է, թե ինչպես ծանրոցը տալուց հրաժարվող Ռ-ազմիկ Սարգսյանը կարողացել է գործադրել շինությունում պատահաբար գտած մետաղյա ամրաձողը (արմատորանք), որով հարվածներ է հասցրել Ռոման Եղիազարյանին, իսկ երեք հոգուց ծանրոց պահանջող Ռոմանը, հարձակման ենթարկվելով, չի փորձել գործադրել իր մոտ եղած գարեջրի շիշը, իսկ Հովսեփը, որը, ըստ գործի տվյալների, տիրապետում է մարտարվեստի՝ իր մոտ ե դած դանակը:

Այսպիսով, կատարված հանցագործության շարժառիթի վերաբերյալ նախաքննության վարկածը վերը շարադրված հարցադրումների անպատասխան մնալու պայմաններում հիմնավորված համարվել չի կարող և չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում:

6. Այլ հակասություններ.

6.1 Մեղադրական եզրակացության և դատավճիռների հիմքում դրվել են նաև Սամվել Պողոսյանի և Արման Թադևոսյանի ցուցմունքներն այն մասին, որ 2003 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, երբ գորամասի պատի մոտ սպասել են խանութ՝ քաղցրավենիք գնելու գնացած Ռոմանին ու Հովսեփին, զուգարանների մոտից 20 մետր դեպի շինհրապարակը պատի վրայով անցել ու գորամաս են մտել երկու զինվոր, որոնցից մեկը եղել է բարձրահասակ, մյուսը՝ կարճահասակ: Նրանցից հետո ներս է մտել ևս մի զինվոր, որի ծոցն ուռած է եղել: Վերջինիս Արման Թադևոսյանը հարցրել է, թե խանութում երկու հոգու չի՞ տեսել: Նա պատասխանել է, որ չի տեսել: Սամվել Պողոսյանը նշել է, որ այդ զինվորները եղել են տարբեր հասակների, սակայն ինքը չի մոտեցել և նրանց դեմքերը չի տեսել:

Վերաքննիչ դատարանում նա հայտնել է, որ ամբաստանյալներին չի ճանաչում, նրանց տեսել է միայն դատարանում, իսկ պատի վրայով անցած երեք զինվորներին չի կարող մտնեցնել որևէ մեկին, քանի որ մութ է եղել:

Նախաքննության ընթացքում մեղադրյալներ Ռ.Սարգսյանը, Մ.Սերոբյանը և Ա.Զալյանը ճանաչման չեն ներկայացվել Արման Թադևոսյանին:

Չնայած վերը շարադրվածին՝ ելնելով այն հանգամանքից, որ պատի վրայով գորամաս մտած զինվորների հասակները տարբեր են, իսկ ըստ դատապարտյալների գորակոչային գործերի՝ Ռ.Սարգսյանի հասակը 170 սմ է, Մ.Սերոբյանինը՝ 174 սմ, իսկ Ա.Զալյանինը՝ 164 սմ, վերաքննիչ դատարանը հանգել է չպատճառաբանված հետևության այն մասին, որ տարբեր հասակներ ունեցող դատապարտյալները և գորամասի պատի վրայով ներս մտած, հասակներով միմյանցից տարբերվող զինվորները նույն անձինք են:

6.2 Բացի այդ, ինչպես երևում է ցուցմունքը տեղում ստուգելու և 4-րդ ՀԳ-ի 2-րդ վաշտի գորանոցում զննում կատարելու մասին 2004 թվականի հունվարի 14-ի արձանագրությունից, զննմամբ վաշտի պահանոցից վերցվել է զինվորական անձրևանոց-թիկնոց (հ. 2, գ.թ. 42):

Քանի որ դրա եզրագծի վրա հայտնաբերվել է արնանման հեղուկի քսված հետք, 2004 թվականի հունվարի 17-ի որոշմամբ նշանակվել է կենսաբանական փորձաքննություն՝ պարզելու համար՝ արնանման հեղուկի հետքերը մարդու է, թե կենդանու, իսկ եթե մարդու է, ապա արյուն է, թե ոչ, ինչ խմբի է պատկանում, նշված արյան խումբը համընկնում է արդյոք հանգույցյալներ Հովսեփ Մկրտումյանի և Ռոման Եղիազարյանի արյան խմբերին:

Փորձաքննության թիվ 34 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված անձրևանոց-թիկնոցի ազատ եզրերից մեկի վրա տեղակայված կեղտոտ շագանակագույն հետքում հաստատվել է արյան առկայություն, որը պատկանում է

մարդու և առաջացել է Ա խմբի արյուն ունեցող որևէ անձից, այդ թվում նաև կարող էր առաջանալ ինչպես հանգուցյալ Հ.Մկրտումյանից, այնպես էլ հանգուցյալ Ռ.Եղիազարյանից (հ. 4, գ.թ. 58-60):

Նախաքննությունն այս եզրակացությունն ստանալուց հետո այդ ուղղությամբ որևէ քննություն չի կատարել:

Չի պարզվել նաև, թե գորանոցում զննում կատարելիս ինչու է վաշտի պահանգից վերցվել միայն և հատկապես այդ զինվորական անձրևանոց-թիկնոցը, այն ինչ առնչություն ունի հանցագործությանը:

Նոր նախաքննության ընթացքում անհրաժեշտ է կատարել ԴՆԹ-ի փորձաքննություն, որի արդյունքներով հնարավոր է հաստատապես պարզել, թե հայտնաբերված արյունը պատկանում է արդյոք տուժողներից որևէ մեկին, թե ոչ: Դրական արդյունք ստանալու դեպքում անհրաժեշտ է այդ ուղղությամբ կատարել խորացված քննություն:

7. Մեղադրյալ Ռազմիկ Սարգսյանի ինքնախոստովանական ցուցմունքների մասին.

Գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի և Ա.Զալյանի մեղադրանքի հիմքում դրված են Ռազմիկ Սարգսյանի՝ նախաքննության ժամանակ արված ցուցմունքները, որոնցից նա հրաժարվել է հենց նախաքննության ընթացքում: Մյուս երկու մեղադրյալները երբևէ չեն ընդունել իրենց կողմից հանցագործության կատարման փաստը և ժխտել են Ռազմիկ Սարգսյանի ցուցմունքներում արձանագրված փաստերը:

Նախաքննության ընթացքում մեղքն ընդունելը կարող է դրվել մեղադրանքի հիմքում միայն այն դեպքում, եթե դա հաստատվում է գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ:

Ամբաստանյալների մեղավորության մասին նախաքննության մարմնի և վերաքննիչ դատարանի հետևությունների հիմքում դրվել են նախաքննության ժամանակ Ռ.Սարգսյանի տված խոստովանական ցուցմունքները, որոնցում նա ընդունել է մեղքը և պատմել կատարած հանցագործության հանգամանքների մասին:

Այդ ցուցմունքները, որոնցից Ռ.Սարգսյանը հրաժարվել է նախաքննության ընթացքում, նախաքննության մարմնի և վերաքննիչ դատարանի կարծիքով հաստատվել են դեպի վայրի զննության տվյալներով, վկաների ցուցմունքներով, նախաքննության ընթացքում կատարված դատական փորձաքննությունների եզրակացություններով:

Մակայն, ինչպես երևում է Վճռաբեկ դատարանի վերը շարադրված եզրահանգումներից, Ռազմիկ Սարգսյանի խոստովանական ցուցմունքները գործի այլ օբյեկտիվ տվյալներով չեն հիմնավորվել: Ավելին, մի շարք ցուցմունքներ ոչ միայն չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, այլև ակնհայտորեն հակասում են դրանց:

Միաժամանակ գործի նյութերից երևում է, որ նախաքննության ժամանակ Ռ.-Սարգսյանի ցուցմունքները հետևողական չեն եղել, մեղադրյալը բազմիցս փոխել է դրանք, մեկ ընդունել, մեկ ժխտել է իր մեղքը, հետագայում՝ հենց նախաքննության ընթացքում, ինչպես նաև դատարաններում կտրականապես ժխտել է իր և ընկերների կողմից հանցագործություն կատարելը, հրաժարվել է այդ ցուցմունքներից՝ պատճառաբանելով, որ դրանք սովել է վախի, բռնության, խոշտանգումների ազդեցության տակ:

Այսպիսով, նոր քննության ընթացքում անհրաժեշտ է կատարել խոստովանական ցուցմունքներում արձանագրված տվյալների համադրում գործով ձեռք բերված մնացած ապացույցների հետ և արդյունքներով անդրադառնալ Ռ.Սարգսյանի խոստովանական ցուցմունքների արժանահավատության հարցին:

8. Սեղադրյալներին ազատությունից զրկելու հետ կապված հարցերը և խոշտանգումների մասին հայտարարությունը.

Գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Մերոբյանի և Ա.Զալյանի նկատմամբ 2004 թվականի ապրիլի 24-ին որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը: Վճռաբեկ բողոքներում նշվել է, որ ամբաստանյալները 5 օր շարունակ վկայի կարգավիճակում ենթարկվել են բռնությունների, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի, որի արդյունքում Ռ.Սարգսյանից կորզվել են խոստովանական ցուցմունքներ:

Թիվ 33651 գորամասի հրամանատարի 2004 թվականի ապրիլի 21-ի թիվ 112 հրամանի 5-րդ պարագրաֆի համաձայն՝ N-99 «մեկուսացման գրության» հիման վրա շարքային Մուսա Մերոբյանը «համարվել է մեկուսացված» Ստեփանակերտի ռազմական ոստիկանության կողմից և հանվել է կաթսայական բավարարումից:

Նույն հրամանի 6-րդ պարագրաֆի համաձայն՝ N-100 և 101 «մեկուսացման գրությունների» հիման վրա մարտական հերթապահությունում գտնվող զինծառայողներ Ռ-ազմիկ Սարգսյանն ու Արայիկ Զալյանը համարվել են «մեկուսացված Ստեփանակերտի ռազմական ոստիկանության կողմից» և հանվել կաթսայական բավարարումից:

Նոր նախաքննությամբ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում մեկուսացման գրությունների հիման վրա նշված զինվորներին «համարել մեկուսացված Ստեփանակերտի ռազմական ոստիկանության կողմից», ինչ բովանդակություն է ունեցել մեկուսացումը: Արդյո՞ք դա չի հանգեցրել օրենքով չնախատեսված սահմանափակումների, ազատությունից զրկելու, որոնք բնորոշ չեն զինված ուժերում սովորական պայմաններում կիրառվող միջոցներին:

Անհրաժեշտ է հանգամանորեն ստուգել նաև այդ օրերի ընթացքում ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Մերոբյանի և Ա.Զալյանի նկատմամբ բռնություններ կիրառելու, նրանց խոշտանգումների ենթարկելու մասին պաշտպանության կողմի բողոքներում բերված փաստարկները:

9. Նոր նախաքննության ընթացքում այլ վարկածների ուղղությամբ քննության իրականացման անհրաժեշտության մասին.

Ինչպես նշվել է սույն որոշման մեջ, թիվ 33 651 գորամասի 4-րդ գումարտակի շարքային Արման Գրիգորյանը բազմիցս ցուցմունքներ է տվել այն մասին, որ ինքը նույնպես մասնակցել է Ռ.Եղիազարյանի և Հ.Սկրտումյանի սպանությանը, որը կատարվել է համաձայնաբեր Ղ.Եգորյանի, Վ.Հովհաննիսյանի, Ե.Պետրոսյանի, Ս.Պողոսյանի, «կամբատ» Իվանի և «զամպալիտ» Մայիլյանի կողմից 2003 թվականի դեկտեմբերի 24-ի երեկոյան գորամասի պարսպի և Ջոյայի խանութի մեջտեղում՝ «սամովոլկա» զնալու համար: Նա նաև նշել է, որ տեսել է, թե ինչպես Իվանի ավտոմեքենան կանգնել է կամրջի ձախ կողմում, երկու հոգու հանել են ավտոմեքենայի բեռնախցից, մեկին ջուրն են գցել կամրջի կողմից, իսկ մյուսին՝ շենքի կողմից: Նշված ցուցմունքներից հրաժարվելու պայմաններում նախաքննության մարմինը նրա նկատմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը: Եվ դա այն դեպքում, երբ դեպքի

վայրի, դիակների գտնվելու տեղերի հետ կապված նրա ցուցմունքները համապատասխանում են գործի օբյեկտիվ տվյալներին: Իսկ երբ սույն գործով մեղադրյալ Ռ-ազմիկ Սարգսյանն է հրաժարվել իր խոստովանական ցուցմունքներից, որոնցից ոչ մեկը գործի այլ փաստերով չի հիմնավորվել, նախաքննության մարմինը դա հիմք չի համարել քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Նոր նախաքննության ընթացքում անհրաժեշտ է, հաշվի առնելով գործով ձեռք բերված բոլոր օբյեկտիվ տվյալները (դեպքի վայրի և դիակների գտնվելու վերաբերյալ անկողմնակալ վկաների ցուցմունքներ, դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններ, դիակների, դեպքի վայրի զննում կատարելու վերաբերյալ արձանագրություններ և այլն), քննության առարկա դարձնել սպանության բոլոր հնարավոր վարկածները:

Այսպիսով, նախաքննության մարմնի, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 107-108-րդ հոդվածների, 311-րդ հոդվածի 1-ին մասի, 358-րդ հոդվածի և 398-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների խախտումներ, որոնք քրեադատավարական օրենքի էական խախտում են, ազդել են դատավճռի օրինականության վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմք են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավճիռները բեկանելու համար: Քանի որ թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումները, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա, չեն կարող վերացվել դատական քննության ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի և Ա.Չալյանի վերաբերյալ դատավճիռները ենթակա են բեկանման՝ գործը նոր նախաքննության ուղարկելով:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ վերը նշված նկատառումներով մերժման են ենթակա դատապարտյալների վերաբերյալ դատական ակտերը բեկանելու և նրանց նկատմամբ արդարացման որոշում կայացնելու մասին Ռ.Սարգսյանի, Մ.Սերոբյանի և Ա.Չալյանի, պաշտպաններ Ջ.Փոստանջյանի և Ս.Ոսկանյանի վճռաբեկ բողոքները:

Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելիս դատարանը լուծում է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, այն փոփոխելու կամ վերացնելու հարցը, գտավ, որ Ռ-ազմիկ Սարգսյանի, Մուսա Սերոբյանի ու Արայիկ Չալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը պետք է վերացնել հետևյալ պատճառաբանությամբ.

Շուրջ երեք տարի նրանք գտնվել են անազատության մեջ, այդ ընթացքում կատարվել են նախաքննություն, երկու դատական քննություն, հավաքվել են բավականին ապացույցներ, որոնց պայմաններում նրանց ազատ մնալը չի խոչընդոտի գործով ճշմարտության բացահայտմանը:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ռ-ազմիկ Թորգոմի Սարգսյանի, Մուսա Արտուշի Սերոբյանի, Արայիկ Միքայելի Չալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 7-րդ կետերով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մայիսի 18-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

թվականի մայիսի 30-ի դատավճիռները բեկանել և նրանց մասով գործն ուղարկել նոր նախաքննության:

2. Ռ-ագմիկ Թորգոմի Սարգսյանի, Մուսա Արտուշի Սերոբյանի, Արայիկ Միքայելի Չալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնել և նրանց անհապաղ ազատել կալանքից:

3. Դատապարտյալներ Ռ-ագմիկ Թորգոմի Սարգսյանի, Մուսա Արտուշի Սերոբյանի, Արայիկ Միքայելի Չալյանի, պաշտպաններ Չարուհի Փոստանջյանի և Ստեփան Ոսկանյանի վճռաբեկ բողոքները թողնել առանց բավարարման:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-331/06

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Գարեգին Յուրիկի Միսակյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Մյուսիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հունիսի 6-ի դատավճռով Գարեգին Միսակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ և 271-րդ հոդվածի 1-ին մասերով, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ, ի վերջո, դատապարտվել է ազատազրկման՝ 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով և 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանքով: Միաժամանակ նրա նկատմամբ նշանակվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում թմրամոլությունից, որը պետք է իրականացվի նրա պատժի կրման ընթացքում:

2006 թվականի հուլիսի 27-ին Գ.Միսակյանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ հարկադիր բուժման համար:

2006 թվականի սեպտեմբերի 4-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական հանձնաժողովի կազմած թիվ 45 մասնագիտական ակտի համաձայն՝ դատապարտյալն ընդունել է հակաքննարանային բուժման լրիվ կուրս, և նրա բուժումն ավարտված է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Գ.Միսակյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին:

2006 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստում քննելով Գ.Միսակյանի հարկադիր բուժումը դադարեցնելու մասին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը չի բավարարել այն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 20.11.06 թվականին բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 23.11.06 թվականի որոշմամբ ընդունվել է վարյալ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Գ.Միսակյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2005 թվականի դեկտեմբերի 17-ին ապօրինաբար, առանց իրացնելու նպատակի, ձեռք է բերել ու պահել խոշոր չափերի հասնող՝ 22,1 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց, իսկ մինչ այդ առանց բժշկի նշանակման օգտագործել է նույն տեսակի թմրամիջոց:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի դատարանը Գ.Միսակյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին միջնորդագիրը 27.09.06 թվականի դատական նիստում քննելիս դատախազին մասնակից չի դարձրել, այսինքն՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ և 432-րդ հոդվածների պահանջների խախտում, համաձայն որոնց՝ դատական որոշումների հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատախազի մասնակցությամբ:

Բողոք բերած անձը, պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Օրինականությունն իրավունքի ընդհանուր սկզբունք է: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հակողություն հետաքննության և դատաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատարանի որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, իսկ ըստ 54-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատական նիստում քննության ենթարկելիս սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, անտեսելով օրենքի վերոհիշյալ պահանջները, 2006 թվականի սեպտեմբերի 27-ին քննելով «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Գ.Միսակյանի նկատմամբ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հունիսի 6-ի դատավճռով նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին, դատական նիստին դատախազին մասնակից չի դարձրել, որով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 398-րդ հոդվածի համաձայն՝ նշված խախտումը հիմք է առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և նյութերը նոր դատական քննության վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի միատեսակ կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Գարեգին Յուրիկի Միսակյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-333/06

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Արշակ Վազգենի Հակոբյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հուլիսի 25-ի դատավճռով Արշակ Հակոբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին, 268-րդ հոդվածի 1-ին և 271-րդ հոդվածի 1-ին մասերով, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման՝ 3 /երեք/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով և 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ տուգանքով: Միաժամանակ նրա նկատմամբ նշանակվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում «թմրամոլությունից և գիմեմոլությունից», որը պետք է իրականացվի պատժի կրման ընթացքում:

2006 թվականի օգոստոսի 11-ին Ա.Հակոբյանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ հարկադիր բուժման համար:

2006 թվականի սեպտեմբերի 7-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական հանձնաժողովի կազմած մասնագիտական թիվ 48 ակտի համաձայն՝ դատապարտյալն ընդունել է հակաթմրամոլային բուժման լրիվ կուրս, և նրա բուժումն ավարտված է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Ա.Հակոբյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին:

2006 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստում քննելով Ա.Հակոբյանի հարկադիր բուժումը դադարեցնելու մասին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է այն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 20.11.06 թվականի բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 23.11.06 թվականի որոշմամբ ընդունվել է վարյուք:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արշակ Հակոբյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2005 թվականի աշնանը Արարատի մարզի Մրգավետ գյուղում ապօրինի պատրաստել ու իր մոտ պահել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որից 1,82 գրամը 01.03.06 թվականին իրացրել է՝ հյուրասիրելով Երևան քաղաքի Նորքի 7-րդ զանգվածի 10-րդ շենքի թիվ 23 բնակարանում գտնված անձանց՝ Ռ.Սարգսյանին, Գ.Հարությունյանին և Ն.Հարությունյանին:

2005թ. աշնան ամիսների ընթացքում նա ապօրինի պատրաստել է 1,75 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որից 1,3 գրամը 11.03.06 թվականին պահել է իր հագի բաճկոնի աստառի մեջ, իսկ մի մասն էլ՝ իր ծանոթ Ռ.Սարգսյանի բնակարանի ննջասենյակի ներքնակի մեջ: Բացի այդ, նույն օրն առանց բժշկի նշանակման օգտագործել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի դատարանը Ա.Հակոբյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին միջնորդագիրը 27.09.06 թվականի դատական նիստում քննելիս դատախազին մասնակից չի դարձրել, այսինքն՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ և 432-րդ հոդվածների պահանջների խախտում, համաձայն որոնց՝ դատական որոշումների հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատախազի մասնակցությամբ:

Բողոք բերած անձը, պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Օրինականությունն իրավունքի ընդհանուր սկզբունք է: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն հետաքննության և դատաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատարանի որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, իսկ ըստ 54-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատական նիստում քննության ենթարկելիս սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, անտեսելով օրենքի վերոհիշյալ պահանջները, 2006 թվականի սեպտեմբերի 27-ին քննելով «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Ա.Հակոբյանի նկատմամբ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հուլիսի 25-ի դատավճռով նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին, դատական նիստին դատախազին մասնակից չի դարձրել, որով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 398-րդ հոդվածի համաձայն՝ նշված խախտումը հիմք է առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և նյութերը նոր դատական քննության վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի միատեսակ կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արշակ Վազգենի Հակոբյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-340/06

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն
համայնքների առաջին ատյանի դատարանում
դատավճիռ Գործ հ. 1-61/ 2005թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Կուբանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Միսակ Մխիթարի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թվականի հունիսի 15-ի դատավճիռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Սույն քրեական գործը հարուցվել է 2004թ. նոյեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հատկանիշներով: 2004թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ Միսակ Մխիթարի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով, իսկ 2005թ. հունվարի 29-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է Մ.Խաչատրյանի գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նշված որոշման օրինականության ստուգման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում 2005թ. փետրվարի 28-ին որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու և վարույթը վերսկսելու մասին: 2005թ. մայիսի 20-ին Մ.Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով, 2005թ. մայիսի 25-ին գործը մեղադրական եզրակա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

ցուքյանը ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հունիսի 15-ի դատավճռով Միսակ Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով և դատապարտվել տուգանքի 400.000 ՀՀ դրամի չափով:

Դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

2006թ. հունիսի 29-ին Երևան քաղաքի դատախազի կողմից որոշում է կայացվել նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Միսակ Խաչատրյանը դատապարտվել է այն բանի համար, որ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ծառայության Էրեբունու հարկային տեսչությունում, 2003թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2004թ. հունվարի 9-ն ընկած ժամանակահատվածում զբաղվելով ձեռնարկատիրական գործունեությամբ՝ Միացյալ Արաբական Էմիրություններից ՀՀ տարածք է ներմուծել տարբեր տեսակի ապրանքներ և իրացրել է դրանք, սակայն խախտելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջները՝ մինչև հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետը՝ 2004թ. մարտի 1-ը, պարտադիր հայտարարագրման ենթակա եկամտի մասին Էրեբունու հարկային տեսչություն հայտարարագիր չի ներկայացրել և չարամտորեն խուսափել է պետ. բյուջեի նկատմամբ եկամտահարկի գծով առաջացած 6.368.429 ՀՀ դրամ գումարով խոշոր չափերի հարկերի վճարումից:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքի՝ գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ և նախաքննության, և դատաքննության ընթացքում չեն ճշտվել գործի համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, Միսակ Խաչատրյանն ինչ եղանակով է առանց ԱՄԷ մեկնելու ապրանքներ ներմուծել, որտեղ և ում է վաճառել ներմուծված ապրանքները, որտեղ է դրանք պահեստավորել, իրացված ապրանքների գումարներն ինչպես է ուղարկել արտասահմանում բնակվող ազգականին:

Դատավճիռ կայացնելուց հետո նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում դատապարտյալ Միսակ Խաչատրյանը ցուցմունք է տվել, որ 2003թ. ծանոթացել է Վահրամ անունով անձնավորության հետ, որն իրեն առաջարկել է արտասահմանյան երկրներից ներմուծված ապրանքները մաքսագերծել իր անվամբ: Խոստացել է ներմուծված ապրանքների յուրաքանչյուր բեռնատար մեքենայի դիմաց վճարել 200 ԱՄՆ դոլար: Ինքը համաձայնվել է և Վահրամին է հանձնել անձնագիրը, իր անվամբ բացված անհատ ձեռնարկատիրոջ վկայականը և ձեռնարկության կնիքը: 2004թ. հունվարին Վահրամը եկել է իր տուն և անձնագրից, վկայականից ու կնիքից բացի տվել է նաև 2.000 ԱՄՆ դոլար: Վերջինս նաև հավաստիացրել է, որ իր կողմից լուծվել են հարկային պարտավորությունների հետ

կապված խնդիրները: Մ.Խաչատրյանը նշել է նաև, որ տնտեսական գործեցությանը երբեք չի զբաղվել, ապրանքներ չի ներմուծել և չի վաճառել:

Միսակ Խաչատրյանի անվամբ ներմուծված ապրանքները Մեղրիից Երևան տեղափոխած բեռնատար ավտոմեքենաների վարորդների հարցաքննությանը պարզվել է, որ ապրանքները տեղափոխվել են Երևան քաղաքում կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող ընկերությունների խանութներ կամ պահեստներ:

Վարույթի քննության ընթացքում Երևան քաղաքի բնակիչ Արթուր Բաբայանը ցուցմունք է տվել, որ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով Արաբական Միացյալ Եմիրություններից ապրանքների ներմուծումը կատարել է Միսակ Խաչատրյանի անվամբ: Հետագայում իրացրել է ներմուծված ապրանքները և հարկերը չի վճարել: Նշել է նաև, որ բացի Միսակ Խաչատրյանից ներմուծումներ է կատարել նաև անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների անվամբ:

Փաստորեն, դատավճիռ կայացնելիս առաջին ատյանի դատարանին անհայտ են մնացել էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, որոնք կարող են հաստատել ինչպես դատապարտյալ Մ.Խաչատրյանի անմեղությունը կամ նրա կատարած արարքի նվազ ծանր լինելը, այնպես էլ՝ այլ անձանց կողմից հանցավոր արարքներ կատարելու հանգամանքները:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Միսակ Խաչատրյանի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության:

4. Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

Վճարելի բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճարելի դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառարանություններով.

Ինչպես երևում է ներկայացված նյութերից, Միսակ Խաչատրյանի նկատմամբ դատավճիռ կայացնելուց հետո Երևան քաղաքի դատախազությունում նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում Միսակ Խաչատրյանը ցուցմունք է տվել, որ երբևէ տնտեսական գործունեություն չի իրականացրել, ապրանքներ չի ներմուծել և չի վաճառել, իր անվամբ ապրանքների ներմուծումը իրականացրել է Վահրամ ամուռով անձը: Վերջինս իր անունով ներմուծումներ կատարելու համար վճարել է 2.000 ԱՄՆ դոլար: Վկա Արթուր Բաբայանը ցուցմունք է տվել, որ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով Արաբական Միացյալ Եմիրություններից ապրանքների ներմուծումը կատարել է Միսակ Խաչատրյանի անվամբ: Հետագայում իրացրել է ներմուծված ապրանքները, սակայն հարկային մարմիններին հաշվետվություններ չի ներկայացրել և հարկեր չի վճարել: Նշել է նաև, որ բացի Միսակ Խաչատրյանից, ներմուծումներ է կատարել նաև անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների անվամբ:

Միսակ Խաչատրյանի անվամբ ներմուծված ապրանքները Մեղրիից Երևան տեղափոխած բեռնատար ավտոմեքենաների վարորդների հարցաքննությանը պարզվել է, որ ապրանքները տեղափոխվել են Երևան քաղաքում կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող ընկերությունների խանութներ կամ պահեստներ:

Այսպիսով, Միսակ Խաչատրյանի նկատմամբ դատավճիռ կայացնելուց հետո ի հայտ են եկել դատավճիռ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այնպիսի հանգամանքներ, որոնք մինչև այդ պարզված հանգամանքների հետ միասին ապացուցում են ինչպես դատապարտյալ Միսակ Խաչատրյանի կատարած հանցանքի նվազ ծանր լինելը, այնպես էլ այլ անձանց կողմից այդ հանցավոր արարքները կա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

տարելու փաստը, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն գործի նորոգման հիմք են հանդիսանում:

Հիմք ընդունելով վերը նշված հիմնավորումները, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումն ապահովելու նկատառումներով, ինչը հնարավոր չէ դատական քննությանը, Վճռաբեկ դատարանը գտավ, որ Միսակ Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հունիսի 15-ի դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Միսակ Մխիթարի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հունիսի 15-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-328/06

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ
համայնքների առաջին ատյանի դատարանի
որոշում կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ
դատախազ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Յուրի Մուրենի Սկրտչյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Լռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 10-ի դատավճռով Յուրի Սկրտչյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 268-րդ հոդվածի 1-ին և 271-րդ հոդվածի 1-ին մասերով, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման՝ 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով և 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ տուգանքով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ այդ պատժին մասնակիորեն գումարվել է նախորդ դատավճռով նշանակված, սակայն ոչ ամբողջությամբ կրած պատժի մի մասը և, ի վերջո, սահմանվել է ազատազրկում՝ 2 /երկու/ տարի 8 /ութ/ ամիս ժամկետով և տուգանք՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով: Միաժամանակ

նրա նկատմամբ նշանակվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում թմրամոլությունից, որը պետք է իրականացվի պատժի կրման ընթացքում:

2006 թվականի հունիսի 30-ին Յու.Սկրտչյանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ հարկադիր բուժման համար:

2006 թվականի սեպտեմբերի 4-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական հանձնաժողովի կազմած մասնագիտական թիվ 43 ակտի համաձայն՝ դատապարտյալն ընդունել է հակաթմրամոլային բուժման լրիվ կուրս, և նրա բուժումն ավարտված է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Յու.Սկրտչյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին:

2006 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստում քննելով Յու.Սկրտչյանի հարկադիր բուժումը դադարեցնելու մասին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է այն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 20.11.06 թվականին բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 23.11.06 թվականի որոշմամբ ընդունվել է վարյալ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Դատապարտյալ Յուրի Սկրտչյանը, նախկինում լինելով 3 անգամ դատապարտված, այդ թվում՝ նաև գողության համար, պատիժը դեռևս լրիվ չկրած, կատարել է նոր հանցագործություն, այն է՝ 2006 թվականի մարտի 2-ին փորձել է «Վանաձոր» երկաթգծի կայարանի 10-րդ բեռնատար գծի տարածքից գողանալ 10 հատ 5.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողության մետաղյա տակդիրներ, սակայն բռնվել է ոստիկանության աշխատակիցների կողմից:

Բացի այդ, 2005 թվականի հոկտեմբերի վերջին Վանաձորի հին գերեզմանատան տարածքից քաղել է կանեփի տերևներ, որոնցից ապօրինաբար պատրաստել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որի մի մասն առանց բժշկի նշանակման օգտագործել է, իսկ մի մասն էլ՝ 3,5 գրամը, պահել է իր մոտ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի դատարանը Յու.Սկրտչյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին միջնորդագիրը 27.09.06 թվականի դատական նիստում քննելիս դատախազին մասնակից չի դարձրել, այսինքն՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ և 432-րդ հոդվածների պահանջների խախտում, համաձայն որոնց՝ դատական որոշումների հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատախազի մասնակցությամբ:

Բողոք բերած անձը, պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունե-

նալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Օրինականությունն իրավունքի ընդհանուր սկզբունք է: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն հետաքննության և դատաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատարանի որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, իսկ ըստ 54-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատական նիստում քննության ենթարկելիս սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, անտեսելով օրենքի վերոհիշյալ պահանջները, 2006 թվականի սեպտեմբերի 27-ին քննելով «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Յու.Սկրտչյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 10-ի դատավճռով նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին, դատական նիստին դատախազին մասնակից չի դարձրել, որով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 398-րդ հոդվածի համաձայն՝ նշված խախտումը հիմք է առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և նյութերը նոր դատական քննության վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի միատեսակ կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Յուրի Սուրենի Սկրտչյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-330/06

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
դատախազ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Ռուբիկ Առաքելի Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Լռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի դատավճռով Ռուբիկ Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 4 /չորս/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ այդ պատժին գումարվել է նախորդ դատավճռով նշանակված, սակայն ոչ ամբողջությամբ կրած պատժի մի մասը և, ի վերջո, սահմանվել է ազատազրկում՝ 4 /չորս/ տարի 3 /երեք/ ամիս ժամկետով: Միաժամանակ նրա նկատմամբ նշանակվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում ակտիվամոլությունից, որը պետք է իրականացվի պատժի կրման ընթացքում:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2006 թվականի փետրվարի 23-ին ՀՀ քրեական և գինվորական գործերով վերաքննիչ դատարանը Ռ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով քրեական գործը՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ:

2006 թվականի հուլիսի 28-ին Ռ.Հովհաննիսյանը «Կոշ» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Գատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ հարկադիր բուժման համար:

2006 թվականի սեպտեմբերի 4-ին «Գատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական հանձնաժողովի կազմած թիվ 47 մասնագիտական ակտի համաձայն՝ դատապարտյալն ընդունել է հակաալկոհոլային բուժման լրիվ կուրս, և նրա բուժումն ավարտված է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը՝ «Գատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին:

2006 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստում քննելով Ռ.Հովհաննիսյանի հարկադիր բուժումը դադարեցնելու մասին «Գատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է այն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 20.11.06 թվականին բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 23.11.06 թվականի որոշմամբ ընդունվել է վալույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ռ.Հովհաննիսյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2005 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը 14-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած վիճակում գնալով Վանաձոր քաղաքի Ուսանողական 10 հասցեում գտնվող հանրակացարանի թիվ 411 սենյակ, փաստացի իրենից անջատ բնակվող իր նախկին կնոջից՝ Մ.Առաքելյանից պահանջել է ներս թողնել իրեն ու կերակրել: Ստանալով մերժում՝ նա նախ Մ.Առաքելյանից պահանջել ու ստացել է նախկինում իր կողմից գնված ու այդտեղ թողնված դանակը, ապա իրելու միջոցով բացելով սենյակի դուռը՝ մտել է ներս ու այնտեղ գտնվող հարևանների ներկայությամբ վիճարանել է կնոջ հետ, տվել է խուլիգանական հայիոյանքներ, բռունցքով և դանակով հարվածներ է հասցրել Մ.Առաքելյանի մարմնի տարբեր մասերին, սպառնացել է սպանել նրան: Այնուհետև հետապնդելով սենյակից դուրս փախած Մ.Առաքելյանին՝ միջանցքում ևս տվել է հայիոյանքներ ու դանակով հարվածել է նրան՝ պատճառելով առողջությունը կարճատև քայքայող թեթև վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի դատարանը Ռ.Առաքելյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին միջնորդագիրը 27.09.06 թվականի դատական նիստում քննելիս դատախազ մասնակից չի դարձրել, այսինքն՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ և 432-րդ հոդվածների պահանջների խախտում, համաձայն որոնց՝ դատական որոշում-

ների հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատախազի մասնակցությամբ:

Բողոք բերած անձը, պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Օրինականությունն իրավունքի ընդհանուր սկզբունք է: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն հետաքննության և դատաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատարանի որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, իսկ ըստ 54-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատական նիստում քննության ենթարկելիս սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, անտեսելով օրենքի վերոհիշյալ պահանջները, 2006 թվականի սեպտեմբերի 27-ին քննելով «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Ռ.Առաքելյանի նկատմամբ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 16-ի դատավճռով նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին, դատական նիստին դատախազին մասնակից չի դարձրել, որով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 398-րդ հոդվածի համաձայն՝ նշված խախտումը հիմք է առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և նյութերը նոր դատական քննության վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի միատեսակ կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Ռուբիկ Առաքելի Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-332/06

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ
դատախազ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Կարեն Սամվելի Սարդարյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հունիսի 20-ի դատավճռով Կարեն Սարդարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ և 271-րդ հոդվածի 1-ին մասերով, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման՝ 3 /երեք/ տարի ժամկետով և 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանքով: Միաժամանակ նրա նկատմամբ նշանակվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժում թմրամոլությունից, որը պետք է իրականացվի նրա պատժի կրման ընթացքում:

2006 թվականի հուլիսի 27-ին Կ.Սարդարյանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ հարկադիր բուժման համար:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2006 թվականի սեպտեմբերի 4-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բժշկական հանձնաժողովի կազմած մասնագիտական թիվ 46 ակտի համաձայն՝ դատապարտյալն ընդունել է հակաթմրամոլային բուժման լրիվ կուրս, և նրա բուժումն ավարտված է:

Հիմք ընդունելով հանձնաժողովի ակտը՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 13-ին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Կ.Սարդարյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին:

2006 թվականի սեպտեմբերի 27-ի դատական նիստում քննելով Կ.Սարդարյանի հարկադիր բուժումը դադարեցնելու մասին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է այն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 20.11.06 թվականին բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 23.11.06 թվականի որոշմամբ ընդունվել է վալույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Դատապարտյալ Կարեն Սարդարյանը 2006 թվականի մարտի 29-ին անձնական օգտագործման նպատակով ապօրինաբար ձեռք է բերել 18 մանր փաթեթներում առանձնացված «հերոին» տեսակի թմրամիջոց, որոնցից մեկ փաթեթի պարունակությունը օգտագործել է ներարկման միջոցով, իսկ մնացած 17-ը՝ 3,95 գրամ ընդհանուր քաշով, պահել է իր մոտ հետագա օգտագործման համար:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստադրվելը և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի դատարանը Կ.Սարդարյանի նկատմամբ նշանակված հարկադիր բուժումը դադարեցնելու մասին միջնորդագիրը 27.09.06 թվականի դատական նիստում քննելիս դատախազին մասնակից չի դարձրել, այսինքն՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ և 432-րդ հոդվածների պահանջների խախտում, համաձայն որոնց՝ դատական որոշումների հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատախազի մասնակցությամբ:

Բողոք բերած անձը, պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշումը և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Օրինականությունն իրավունքի ընդհանուր սկզբունք է: Այդ սկզբունքն իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող մյուս անձինք պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, սույն օրենսգրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն հետաքննության և դատաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատարանի որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, իսկ ըստ 54-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումների ի կատար ածելու հետ կապված հարցերը քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատական նիստում քննության ենթարկելիս սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի մասնակցությունը պարտադիր է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, անտեսելով օրենքի վերոհիշյալ պահանջները, 2006 թվականի սեպտեմբերի 27-ին քննելով «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված միջնորդությունը՝ Կ.Մարդարյանի նկատմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հունիսի 20-ի դատավճռով նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին, դատական նիստին դատախազին մասնակից չի դարձրել, որով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 398-րդ հոդվածի համաձայն՝ նշված խախտումը հիմք է առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և նյութերը նոր դատական քննության վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի միատեսակ կիրառման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-407-րդ, 415-419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Յ Ց

1.Վճռաբեկ բողոքը բավարարել:

Կարեն Մամվելի Մարդարյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու վերաբերյալ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և նյութերը վերադարձնել նոր դատաքննության:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՍԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-324/06

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի
Գործ թիվ 1-87-2006թ.դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Հ.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ՎՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՆՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2006 թվականի դեկտեմբերի 22-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թվականի փետրվարի 23-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ռահման Ռաշիդի Սավարենի հայտարարության հիման վրա նախապատրաստված նյութերով 27.06.1994թ. 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է թիվ 15107294 քրեական գործը: Կատարված նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ հանցագործությունը կատարել են Էլմիրա Մխիթարյանը և Սուսաննա Մարտիրոսովան: Էլմիրա Համիդի Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական գործը 04.10.1994թ. մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Մյասնիկյանի շրջանի ժող. դատարան, և 27.01.1995թ. դատավճռով վերջինս դատապարտվել է ազատազրկման 7 տարի ժամանակով: 03.10.1994թ. որոշում է կայացվել Սուսաննա Մարտիրոսովային որպես մեղադրյալ պատասխանատվության կանչելու մասին, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, և հայտարարվել է հետախուզում: Նրա վերաբերյալ քրեական գործի մասը անջատվել է, և 1994թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ գործով վարույթը

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

կասեցվել է: 2004թ. օգոստոսի 16-ի որոշմամբ Ս.Մարտիրոսովային մեղազարված արարքը համապատասխանեցվել է 2003թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

17.01.2005թ. ՌԴ Մոսկվա քաղաքի Մետրոպոլիտենի ՆԳ վարչության 8-րդ բաժնի կողմից հաղորդում է ստացվել, որ հետախուզման մեջ գտնվող Սուսաննա Մարտիրոսովան հայտնաբերվել է և ձերբակալվել:

ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ Սուսաննա Մարտիրոսովան հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

2005թ. նոյեմբերի 8-ին Ս.Մարտիրոսովայի վերաբերյալ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

09.11.2005թ. որոշմամբ Սուսաննա Մարտիրոսովային առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. փետրվարի 23-ի դատավճռով Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովան մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ, 13-րդ հոդվածների կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամանակով, առանց գույքի բռնագրավման:

Դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը 2006թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Սուսաննա Մարտիրոսովան դատապարտվել է այն բանի համար, որ 1994թ. հունիսի 19-ին՝ ժամը 13-ի սահմաններում, նախնական համաձայնության գալով Էլմիրա Համիդի Մխիթարյանի հետ, Երևան քաղաքի Այգեստան 11-րդ փողոցի 89-րդ շենքի 10-րդ բնակարանից գաղտնի հափշտակել են Իրանական Իսլամական Հանրապետության քաղաքացի Ռահման Ռաշիդի Սավարենին պատկանող 41.000 ՀՀ դրամ արժուրթյան երկու ճամպուրկները, որոնցից մեկի մեջ եղել է 15.000 ԱՄՆ դոլար, 17.000 իրանական բոման և 1.800 ՀՀ դրամ՝ ընդհանուր 6.192.800 ՀՀ դրամ և 17.000 իրանական բոման:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՌԴ դատախազությունը, բավարարելով Ս.Մարտիրոսովային Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ Ս.Մարտիրոսովային ՌԴ իրավապահ մարմինները այդ մեղադրանքով մեղադրվող արարքի համար չեն կարող հանձնել, քանի որ արարքը կատարելու պահին ՌԴ օրենսդրությունում այդ արարքը որակող հատկանիշը վերացված է եղել:

Սակայն, 09.11.2005թ. որոշմամբ Սուսաննա Մարտիրոսովային առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Ս.Մարտիրոսովային Հայաստանի Հանրապետությանը հանձնելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսվելուց հետո նախաքննական մարմինը չի կատարել ՌԳ դատախազության պահանջը, այն չի համապատասխանեցրել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, և անտեսելով ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որը, նույնպես անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2006թ. փետրվարի 23-ի դատավճռով Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովային մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 12, 13 հոդվածների կիրառմամբ դատապարտել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամանակով, առանց գույքի բռնագրավման:

Բողոքում խնդրվում է Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 23.02.2006թ. դատավճիռը բեկանել և Միսկի 22.01.1993թ. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի 66-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կայացնել համապատասխան որոշում:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճարելի դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահ-

մանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ Սուսաննա Մարտիրոսովան ներգրավված է եղել որպես մեղադրյալ 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 4-րդ մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտարարվել հետախուզում, և 1994թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է:

2004թ. օգոստոսի 16-ի որոշմամբ Ս.Մարտիրոսովային մեղսագրված արարքը համապատասխանեցվել է 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

17.01.2005թ. Սուսաննա Մարտիրոսովան հայտնաբերվել, ձերբակալվել է ՌԴ Մոսկվա քաղաքում և ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությամբ հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը: ՌԴ դատախազությունը, բավարարելով Ս.Մարտիրոսովային Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ Ս. Մարտիրոսովային ՌԴ իրավապահ մարմինները այդ մեղադրանքով մեղադրվող արարքի համար չեն կարող հանձնել, քանի որ արարքը կատարելու պահին ՌԴ օրենսդրությունում այդ արարքը որակող հատկանիշը վերացված է եղել:

Մակայն Ս.Մարտիրոսովային Հայաստանի Հանրապետությանը հանձնելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսվելուց հետո նախաքննական մարմինը չի փոփոխել վերջինիս առաջադրած մեղադրանքը, այն չի համապատասխանեցրել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և անտեսելով ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջինատյանի դատարան, որը, նույնպես անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2006թ. փետրվարի 23-ի դատավճռով Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովային մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ, 13-րդ հոդվածների կիրառմամբ դատապարտել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամանակով, առանց գույքի բռնագրավման:

Փաստորեն, տվյալ դեպքում Ս.Մարտիրոսովան ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի այն հանցագործության համար, որի համար նա չի

հանձնվել, այսինքն տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում:

Սույն գործի բնության ընթացքում ՀՀ-ի կողմից վավերացված 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. փետրվարի 23-ի դատավճիռը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն բեկանելու և փոփոխելու համար, քանի որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են նման հնարավորություն, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վերոհիշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. փետրվարի 23-ի դատավճիռը պետք է բեկանել, Ս.Մարտիրոսովայի արարքը վերավորակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և սահմանել համապատասխան պատիժ:

Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա ինչպես 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված դրույթների միատեսակ կիրառության համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. փետրվարի 23-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովայի արարքը վերադասակարգել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ սահմանելով ազատազրկում՝ 4 /չորս/ տարի ժամկետով: Դատավճռի մնացած մասերը թողնել անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

2007 թվականի նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Գործ ՎԲ-05/07

Էրեբունի և Նուբարաշեն համայնքների
առաջին ատյանի դատարանում
դատավճիռ կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա. Գաբրիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ

Բ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Ա.ՇԱՀԻՆՅԱՆԻ

2007թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Աղասու Փալանջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Պետրոս Արմենի Հարությունյանի և Հակոբ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի դատավճռով Կարեն Աղասու Փալանջյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Կարեն Փալանջյանը դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական սահմանվել է ազատազրկում 5 (հինգ) տարի ժամկետով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա այդ պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով: Կարեն Փալանջյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարվել է ՀՀ ԱՆ ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնին:

Պետրոս Արմենի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա այդ պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով: Նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարվել է ՀՀ ԱՆ ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնին:

Հակոբ Արմենի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա այդ պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով: Նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը հանձնարարվել է ՀՀ ԱՆ ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնին:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

2006 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 14 -30-ի սահմաններում, Կարեն Փալանջյանն ալկոհոլ օգտագործած վիճակում Երևանի Մուրազյան փողոցում հանդիպել է նախկին հարևան Արտյոմ Նիկոյանին, որը եղել է իր ազգական և Կ. Փալանջյանի հարևան, գործով տուժող Արմեն Արամայիսի Նանանյանին պատկանող «Ֆուլկավազեն-Գուլֆ» մակնիշի 07 LU 927 պետհամարանիշի ավտոմեքենայով: Տեղյակ լինելով, որ, իբր, Ա.Նանանյանը ցանկանում է վաճառել ավտոմեքենան, Կ.Փալանջյանն այդ թեմայով զրուցել է Ա.Նիկոյանի հետ և զննել մեքենան: Չրույցի ընթացքում Ա.Նիկոյանը և Կ.Փալանջյանն ավտոմեքենայի արժեքի շուրջ համաձայնության չեն եկել, այդ առիթով կոպիտ տոնով խոսել են միմյանց հետ, ինչը վերածվել է փոխադարձ քաշքշուկի:

Այնուհետև Ա.Նիկոյանից վրեժխնդիր լինելու նպատակով Կ.Փալանջյանը գնացել է իրենց տուն և բակում գտնվող խորդանոցից վերցնելով հարվածող-փշոող սառը գենթ հանդիսացող մահակը՝ վերադարձել է Մուրացան փողոց և տեսել, որ վերը նշված «Ֆոլկսվագեն-Գոլֆ» ավտոմեքենան կանգնած է նույն վայրում, իսկ Ա.Նիկոյանն այնտեղ չէ: Մոտենալով ավտոմեքենային՝ Կ.Փալանջյանն իր մոտի մահակով և մայթեզրին ընկած քարով հարվածել և դիտավորությամբ կոտրել է ավտոմեքենայի բոլոր ապակիները, վնասել թափքի մետաղական հատվածները՝ Ա.Նանանյանին պատճառելով 850.000 ՀՀ դրամի խոշոր չափի գույքային վնաս, որից հետո դիմել է փախուստի:

Բուռնագյան փողոցով հեռանալիս Կ. Փալանջյանը հանդիպել է Ա.Նիկոյանի հորեղբոր որդի Կարեն Վաղինակի Նիկոյանին և իր ընկերներ, եղբայրներ Գևորգ, Պետրոս, Հակոբ Հարությունյաններին, և ենթադրելով, որ Կ.Նիկոյանն ավտոմեքենան կոտրելու համար ցանկանում է իրենից վրեժխնդիր լինել, գործով մյուս դատապարտյալներ Պետրոս և Հակոբ Հարությունյանների հետ միասին վիճաբանել է Կ.-Նիկոյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և դրսևորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ՝ Կարեն Փալանջյանը, Պետրոս և Հակոբ Հարությունյանները շուրջ 5 րոպե աղմկել են, տվել խուլիգանական հայտյանքներ: Վիճաբանության ընթացքում Կ.Փալանջյանը և Հ.Հարությունյանը որպես գենթ օգտագործվող երկաթե մահակներով, իսկ Պ.Հարությունյանը մետաղյա խողովակով հարվածել և դիտավորությամբ կոտրել են Կ.Նիկոյանի անձնական օգտագործման «Ֆոլկսվագեն-Վեճտո» մակնիշի 04 ՍՕ 456 պետհամարանիշի ավտոմեքենայի ապակիները և վնասել թափքի մետաղական հատվածները՝ վերջինիս պատճառելով 1.000.000 ՀՀ դրամի գույքային վնաս, իսկ Կ.Փալանջյանը, գործադրելով բռնություն, նույն մահակով ծեծի է ենթարկել Կ.Նիկոյանին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:

3. Վճարելի բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքում նշվել է, որ նախաքննության ընթացքում թույլ տված նյութական և քրեադատավարական օրենքի խախտումներով քրեական գործն ուղարկվել է դատարան և արձակված դատավճռով Կ.Փալանջյանի ու մյուսների նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ:

Նախաքննության մարմնի կողմից Կարեն Փալանջյանին մեղադրանք է առաջադրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելու համար, սակայն համակատարողներ Պետրոս և Հակոբ Հարությունյաններին նշված հոդվածով մեղադրանք չի առաջադրվել, թեև նրանց կողմից նույնպես այդ հանցագործության կատարմանը մասնակից լինելու փաստը հիմնավորող բավարար ապացույցներ նախաքննության ընթացքում ձեռք են բերվել և շարադրվել վերջիններիս որպես մեղադրյալներ ներգրավելու որոշումներում: Կարեն Նիկոյանի ավտոմեքենան Պետրոս և Հակոբ Հարությունյանների կողմից դիտավորությամբ վնասելու հանգամանքը հիմնավորող ցուցմունքներ են տվել ինչպես տուժող Կարեն Նիկոյանն ու վկա Նուսյա Նիկոյանը, այնպես էլ ամբաստանյալ Պետրոս Հարությունյանը:

Բացի այդ, որպես վկա հարցաքննված Ռաֆայել Փալանջյանը հայտնել է, որ տեղեկանալով այն մասին, որ Մուրացան փողոցի հանրակացարանի մոտակայքում

կայանված է իր եղբոր՝ Կարեն Փալանջյանի կողմից դիտավորությամբ վնասված Արտյոմ Նիկոյանի վարած ավտոմեքենան, անմիջապես մտադրվել է այն թաքցնել իրավապահ մարմիններից, գնացել է այնտեղ և մեքենան տեղափոխել է մեկ այլ վայր: Նա նշել է, որ մեքենայի բանալին գտնվել է շարժիչը գործարկելու բնիկում, որով ինքը միացրել է շարժիչը: Ռաֆայել Փալանջյանի նշված արարքի հիմնավորումն ու գնահատումը ևս կատարվել է թերի քննության արդյունքներով՝ առանց այդ փաստերի շուրջ Ա.Նիկոյանին հարցաքննելու:

Նախաքննության առաջին իսկ փուլում տուժող Կարեն Նիկոյանի կողմից 10.04.2006 թվականին տրված հայտարարության մեջ նշվել են հանցագործություն կատարած անձանց անունները, սակայն մինչև ամբաստանյալներ Հ.Հարությունյանին 30.05.2006 թվականին, Կ.Փալանջյանին ու Պ.Հարությունյանին 17.07.2006 թվականին որպես կասկածյալներ հարցաքննելը (հանցագործության կատարման պահից 1 ամիս 20 օր և 3 ամիս 7 օր անց) նրանք չեն ներգրավվել որպես մեղադրյալներ, նրանց նկատմամբ չի ընտրվել խափանման միջոց և չի հայտարարվել հետախուզում: Բացի այդ, քրեական գործի նյութերով հիմնավորվել է, որ տուժող Կ.Նիկոյանի հետ տեղի ունեցած միջադեպի պատճառով փակվել է Սուրացան փողոցի ավտոմեքենաների երթևեկելի մասը և հավաքվել է բազմություն, որի կապակցությամբ նույնպես պատշաճ քննություն չի կատարվել, որով խախտվել է քննության լրիվությունն ապահովելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջը:

Քննության ընթացքում խախտվել է քրեական դատավարության կարևոր սկզբունքներից մեկը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված գործի քննության բազմակողմանիությունն ու լրիվությունը: Խախտվել են նաև ապացույցների ստուգման և գնահատման մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-127-րդ հոդվածների պահանջները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որանք համարվում են քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վճռաբեկ բողոք բերելու հիմք է:

Գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումն ու քրեադատավարական օրենքի էական խախտումները խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը՝ հանգեցնելով քրեախրավական սխալ եզրահանգման:

Նշված խախտումները վերացնելու համար անհրաժեշտ է հարցաքննել Արտյոմ Նիկոյանին պարզելու, թե արդյոք նա թողել է բանալին փականի վրա, թե դրանք մեկ այլ հանգամանքում են հայտնվել վկա Ռ.Փալանջյանի մոտ: Պետք է պարզել, թե ինչի շուրջ է ծագել նրա և ամբաստանյալ Կ.Փալանջյանի միջև վեճը, ինչ պատճառով է, որ քրեական գործով տուժող համարվող Ա.Նիկոյանը դեպքից անմիջապես հետո կատարվածի մասին հայտարարություն չի տվել իրավապահ մարմիններին, այլ մինչև դատավճռի արձակումը խուսափել է ներկայանալուց ու ցուցմունքներ տալուց:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է Կարեն Փալանջյանի, Պետրոս Հարությունյանի և Հակոբ Հարությունյանի վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 22.09.2006 թվականի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճարելի դատարանը գտավ, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության հետևյալ պատճառաբանությամբ.

Գործի նյութերից երևում է, որ խուլիզանությունը գուցողվել է Կարեն Նիկոյանի անձնական օգտագործման «Ֆոլկսվագեն-Վենտո» մակնիշի 04 ՍՕ 456 պետհամարանիշի ավտոմեքենան վնասելով: Սեղադրանք առաջադրելու որոշման, մեղադրական եզրակացության և դատավճռի համաձայն՝ Կարեն Փալանջյանը Պետրոս և Հակոբ Հարությունյանների հետ վիճարանել է Կարեն Նիկոյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ՝ շուրջ 5 րոպե աղմկել են, տվել խուլիզանական հայտոյանքներ: Վիճարանության ընթացքում Կարեն Փալանջյանը և Հակոբ Հարությունյանը որպես զենք օգտագործվող երկաթե մահակներով, իսկ Պետրոս Հարությունյանը մետաղյա խողովակով հարվածել և դիտավորությամբ կոտրել են Կ.Նիկոյանի ավտոմեքենայի ապակիները և վնասել թափքի մետաղական հատվածները՝ վերջինիս պատճառելով 1.000.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Այս պայմաններում խուլիզանություն կատարելու ընթացքում Կարեն Նիկոյանի գույքը դիտավորությամբ վնասելու համար Կարեն Փալանջյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Պետրոս և Հակոբ Հարությունյաններին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով գուցողված խուլիզանությունն իր մեջ ընդգրկում է զգալի չափի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը: Այսինքն՝ եթե խուլիզանությունը գուցողվում է ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով լրացուցիչ որակելու անհրաժեշտություն չկա, եթե պատճառվել է զգալի չափերի վնաս, որը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համարվում է հանցագործության կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Խուլիզանական գործողությունների ընթացքում կատարված ավելի ծանր, քան խուլիզանությունն է, հանցագործությունները (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորությամբ գույքը վնասելը կամ ոչնչացնելը), որոնք կատարվել են խուլիզանական գործողությունների ընթացքում, պետք է որակվեն խուլիզանության հետ համակցությամբ: Փաստորեն, եթե առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված՝ արարքը որակյալ դարձնող հատկանիշները, այն է՝ գույքը դիտավորությամբ վնասելը կամ ոչնչացնելը կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով, խոշոր չափերի վնաս է պատճառել, որը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համարվում է հանցագործության կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) և այլն, ապա արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ:

Խուլիզանություն կատարելու ընթացքում դատապարտյալների կողմից Կ.Նիկոյանի գույքը դիտավորությամբ վնասելու գործողություններին ճիշտ իրավական գնահատական տալու համար կարևոր նշանակություն ունի նրան պատճառված վնասի չափի հստակեցումը, քանի որ թերի քննության պատճառով տուժողին հասցված

վնասի չափի հարցում առկա է էական հակասություն, որը նախաքննության մարմնի և դատարանի կողմից չի վերացվել: Այսպես՝ մեղադրական եզրակացության և դատավճռի հիմքում դրված փորձագետի թիվ 325-ապ եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված «Ֆուլկավագեն-Վենտո» մակնիշի 04 ՍՕ 456 պետհամարանիշի ավտոմեքենայի սեփականատեր Կ.Նիկոյանին պատճառված նյութական վնասի ընդհանուր չափը 2006 թվականի ապրիլի 10-ի դրությամբ կազմում է 187.000 ՀՀ դրամ, որը զգալի չափ է: Իսկ տուժող Կ.Նիկոյանը հայտնել է, որ իրեն պատճառված վնասի չափը կազմում է 1 միլիոն ՀՀ դրամ, որը խոշոր չափ է: Դրա հիման վրա, անտեսելով փորձագետի նշված եզրակացությունը, առանց որևէ հիմնավորման և պատճառաբանման Կարեն Փալանջյանին, Պետրոս և Հակոբ Հարությունյաններին մեղադրանք է առաջադրվել Կ.Նիկոյանի գույքին խոշոր չափերի՝ 1 միլիոն ՀՀ դրամ վնաս պատճառելու համար: Մինչդեռ հանցագործությամբ պատճառված նյութական վնասի չափի մասին նախաքննության մարմնի և դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե տուժողի կամայական պահանջների, այլ պատճառված վնասի իրական գումարը սահմանող կոնկրետ նյութերի վրա:

Քանի որ հանցագործությամբ Կ.Նիկոյանին պատճառված գույքային վնասի չափը կարող է ազդել ամբաստանյալների արարքի որակման և մեղադրանքի ծավալի վրա, լրացուցիչ նախաքննությամբ անհրաժեշտ է վերացնել վերը նշված էական հակասությունը և հանգել համապատասխան հետևության:

Ինչ վերաբերում է բողոքի մնացած փաստարկներին, դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքում նշվել է, որ գործով վկա Ռաֆայել Փալանջյանի ցուցմունքի համաձայն՝ նա իր եղբայր Կարեն Փալանջյանի կողմից դիտավորությամբ վնասված Ա.Նիկոյանի ավտոմեքենան իրավապահ մարմիններից թաքցնելու համար տեղափոխել է այլ վայր, ընդ որում ավտոմեքենայի շարժիչը միացրել է շարժիչը գործադրելու բնիկում եղած բանալիով: Բողոքի հեղինակը գտել է, որ Ռաֆայել Փալանջյանի նշված արարքի հիմնավորումն ու գնահատումը կատարվել է թերի քննության արդյունքներով՝ առանց այդ հարցերի շուրջ Ա.Նիկոյանին հարցաքննելու: Ուստի անհրաժեշտ է համարել հարցաքննել վերջինիս պարզելու համար, թե արդյոք նա թողել է բանալին փակամի վրա, թե դա մեկ այլ հանգամանքում է հայտնվել Ռաֆայել Փալանջյանի մոտ:

Դատական քննության սահմանները կարգավորող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել: Մույն գործի քննությունը կատարվել է 3 ամբաստանյալների՝ Կարեն Փալանջյանի, Պետրոս և Հակոբ Հարությունյանների նկատմամբ: Ա.Նիկոյանի ավտոմեքենան գործարկելու և այն մեկ ուրիշ վայր տեղափոխելու Ռաֆայել Փալանջյանի գործողությունները ոչ մի կապ չունեն նշված ամբաստանյալների մեղադրանքի էության և ծավալի հետ: Ռաֆայել Փալանջյանի արարքի հիմնավորման ու գնահատման հետ կապված թերի քննության մասին բողոքի փաստարկներն անհիմն են և որևէ առնչություն չունեն բողոքարկվող դատավճռի հետ: Բացի այդ, գործում առկա է Ռաֆայել Փալանջյանի կողմից հանցագործության պարտակում կատարելու վերաբերյալ քրեական գործի մասը հանցակազմի բացակայության հիմքով կարճելու մասին քննիչի 2006 թվականի օգոստոսի 7-ի չվերացված որոշում:

Անհիմն է նաև բողոքի այն փաստարկը, թե տուժող Կ. Նիկոյանի հետ տեղի ունեցած միջադեպի պատճառով փակվել է Մուրացան փողոցի ավտոմեքենաների

երթևեկելի մասը, և հավաքվել է բազմություն, սակայն այդ կապակցությամբ նույնպես պատշաճ քննություն չի կատարվել, որով խախտվել է քննության լրիվությունն ապահովելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջը:

Կատարված քննությամբ միջադեպի պատճառով Մուրացան փողոցի ավտոմեքենաների երթևեկելի մասը փակելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել: Մինչդեռ դեպքի վայրում բազմություն հավաքվելու մասին իրենց ցուցմունքներում հայտնել են ամբաստանյալներ Կարեն Փալանջյանը, Պետրոս Հարությունյանը, տուժող Կարեն Նիկոյանը, վկաներ Գևորգ Հարությունյանը և Նուսյա Նիկոյանը, որը վկայում է հասարակական կարգը, քաղաքացիների անդորրը խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու մասին, և հանդիսանում է ամբաստանյալներին մեղսագրված խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի տարրերից մեկը: Այդ ուղղությամբ թերի քննություն կատարելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները խախտելու մասին բողոքի փաստարկները գործի նյութերից չեն բխում:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, թե նախաքննության առաջին փուլում Կ.Նիկոյանը հայտարարության մեջ նշել է հանցագործություն կատարած անձանց անունները, սակայն նրանք բավականին ուշ են ներգրավվել որպես մեղադրյալներ, նրանց նկատմամբ չի ընտրվել խափանման միջոց և չի հայտարարվել հետախուզում, ապա դա գործի օբյեկտիվ, բազմակողմանի, լրիվ քննության վրա ազդող քրեադատավարական օրենքի խախտում չէ, այլ նախաքննության մարմնի թերացում և լրացուցիչ նախաքննությունն այդ հարցադրման հետ կապված որևէ անելիք չունի:

Բողոքի հեղինակը նաև նշել է, որ դատապարտյալների նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ, սակայն դրա հետ կապված ոչ մի հիմնավորում չի բերել, ուստի այդ հարցը քննության առարկա լինել չի կարող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարեն Ադասու Փալանջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Պետրոս Արմենի Հարությունյանի և Հակոբ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-50/07

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն
համայնքների առաջին ատյանի
դատարանում դատավճիռ կայացրած
դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007 թվականի մարտի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հազարապետ Ալբերտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին և 271-րդ հոդվածի 1-ին մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 22-ի դատավճռի դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմնի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ Հազարապետ Ալբերտի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 22-ի դատավճռով Հազարապետ Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նա դատա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

պարտվել է ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ 271-րդ հոդվածի 1-ին մասով՝ նվազագույն աշխատավարձի 30ապատիկի (30.000 ՀՀ դրամի) չափով տուգանքի: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված պատիժները լրիվ գումարելու սկզբունքով Հազարապետ Հարությունյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի (30.000 ՀՀ դրամի) չափով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով: Հազարապետ Հարությունյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման բաժնի համապատասխան ստորաբաժանման վրա:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 5-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հազարապետ Հարությունյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2006 թվականի հոկտեմբերի 9-ին առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել և պահել խոշոր չափի՝ 1,4 գրամ չորացված «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որից 0,2 գրամը նույն օրը ծխելու միջոցով գործածել է, իսկ 1,2 գրամ թմրամիջոցը պահել է իր բանկոնի ծոցագրպանում:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքում նշվել է, որ առաջին ատյանի դատարանը ՀՀարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, հաշվի չի առել ինչպես կատարված հանցագործության հասարակական վտանգավորությունը, այնպես էլ ծանրության աստիճանը: Արդյունքում նյութական օրենքի էական խախտմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և նշանակվել ակնհայտ մեղմ պատիժ: Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Հազարապետ Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 22.11.2006 թվականի դատավճիռը և քրեական գործն ուղարկել Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ մեկ այլ կազմով նոր քննության առնելու, Հ. Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման ազատազրկման ձևով պատիժ սահմանելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն ամրապնդում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրել է, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում պատժի տեսակն ու չափը սահմանելիս կարևորագույն չափանիշ է տվյալ հանցագործության վտանգավորությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածը, ելնելով պատժատեսակից և պատժաչափից, ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, հանցագործությունները դասակարգել է ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ:

ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան նախատեսում է կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, ինչպես նաև ազատազրկում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Հետևաբար՝ Հազարապետ Հարությունյանի կողմից կատարված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը համարվում է ոչ մեծ ծանրության հանցագործություն:

Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն):

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին:

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անձնավորությունը միաժամանակ: Այդ պատճառով էլ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցագործության կազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները երկուսն են՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների սանկցիաներում նախատեսված հիմնական պատիժների տեսակները, որոնք կարող են անձի նկատմամբ պայմանականորեն չկիրառվել:

2. Դատարանի համոզված լինելը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը ռեալ (իրական) կրելու:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Ընդ որում, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքով ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել:

Բողոքի հեղինակը վճռաբեկ բողոքում նշել է, որ առաջին ատյանի դատարանը Հազարապետ Հարությունյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, ինչպես նաև մույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, սակայն իր հետևությունները ոչնչով չի պատճառաբանել: Բողոքում շարադրելով միայն ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածների բովանդակությունը և խնդրելով բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, բողոքի հեղինակն իր պահանջը հիմնավորող ոչ մի փաստարկ չի ներկայացրել: Նա չի հիմնավորել, թե ինչու՞մ է արտահայտվել արդարության, պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտումը, արարքի հասարակական վտանգավորության աստիճանն ու բնույթը հաշվի չառնելը:

Այս պայմաններում բողոքի հեղինակը հանգել է ոչնչով չպատճառաբանված հետևության, թե թույլ է տրվել նյութական իրավունքի էական խախտում:

Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ դատապարտյալ Հ.Հարությունյանը նախկինում արատավորված չի եղել, առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, ընդունել է հանցանքը և գղջացել կատարածի համար: Նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ գործում չկան: Այս պայմաններում առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Հ.Հարությունյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, եկել է այն համոզմունքի, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի իրավացիորեն որոշում է կայացրել նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը շարադրված հանգամանքների գնահատման արդյունքում առաջին ատյանի դատարանը հիմնավոր հետևության է հանգել Հ.Հարությունյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին: Նրա նկատմամբ նշանակվել է արդարացի պատիժ, որը որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները: Այն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Վերը շարադրվածը վկայում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքով նյութական օրենքի էական խախտում թույլ չի տրվել, այդ առումով առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Հազարապետ Ալբերտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 22-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-33/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ 644/06թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան
դատավորներ՝ Մ.Արղամանյան, Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ**
պաշտպան **Ա.ՋԱԲԱՐՅԱՆԻ**

2007թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կոլյա Գևորգի Մաթոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 113-րդ 1-ին մասերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռն ղեկավարելով,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի դատավճռով Կոլյա Գևորգի Մաթոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ պատիժները մասնակիորեն

գումարելու միջոցով Կ.Մաթոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Պատիժը նշանակվել է կրելու ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում՝ պատժի սկիզբը հաշվելով 2006 թվականի ապրիլի 17-ից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև այլ անձինք, որոնք վերաքննիչ բողոք չեն ներկայացրել: ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Կոլյա Մաթոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերստին քննելով գործը, 2006 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի դատավճիռը փոփոխել է. Կոլյա Մաթոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 113-րդ հոդվածի 1-ին մասերով և դատապարտել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման 3 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Կոլյա Մաթոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Կոլյա Մաթոսյանը 2006 թվականի ապրիլի 16-ին իր եղբոր՝ գործով դատապարտյալ Ռուբեն Մաթոսյանի և հոր՝ Գևորգ Մաթոսյանի հետ տանը խմել են մեկ շիշ օղի, ապա ժամը 14³⁰-ին այցելել են մոր գերեզման, որտեղ գատիկի տոնի արարողության կապակցությամբ կրկին մեկ շիշ օղի են օգտագործել: Վերադառնալով տուն՝ միասին ճաշել են և կրկին ոգելից խմիչք օգտագործել: Այդ վիճակում, ժամը 18⁰⁰-ի սահմաններում Կոլյա և Ռուբեն Մաթոսյանները գնացել են Երևանի Չարենցի փողոցում գտնվող կրպակը, որտեղ հանդիպել են այնտեղ աշխատող իրենց ծանոթներ՝ վկաներ Գագիկ և Գարիկ Ճաղարյաններին և գրուցել նրանց հետ: Քիչ անց նրանց են մոտեցել գործով մյուս դատապարտյալներ Ռուբեն Բարսեղյանը, Արման Մալխասյանը և վկա Արշավիր Աթանեսյանը, որոնք Ռուբեն Բարսեղյանի քեռու գատիկի արարողության կապակցությամբ նույնպես գտնվել են ալկոհոլային հարբածության վիճակում: Ռուբեն Բարսեղյանը, որը եղել է նույն թաղամասի բնակիչ և ճանաչել է ինչպես Կոլյա և Ռուբեն Մաթոսյաններին, այնպես էլ եղբայրներ Գագիկ և Գարիկ Ճաղարյաններին, կատակով դիմել է Ռուբեն Մաթոսյանին, հարցնելով. «Ուր ես, այ տղա, ողջ քաղաքը քեզ է փնտրում»: Հարցին ի պատասխան Ռուբեն Մաթոսյանը հայտնայնք է տվել «սաղ քաղաքի...»: Գագիկ Ճաղարյանը Ռուբեն Մաթոսյանին սաստելու և հանգստացնելու նպատակով նրան իջեցրել է Երևանի պետական համալսարանի՝ Մարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի ուղղությամբ, մեկ անգամ ապտակել է, հորդորել է հասարակական վայրում հայտնայնքներ չտալ և վերադարձել է կրպակ: Համալսարանի բակում մնացած Ռուբեն Մաթոսյանը ավելի է բորբոքվել և շարունակել է անհասցե հայտնայնքներ տալ: Ռուբեն Մաթոսյանին սաստելու համար այս անգամ համալսարանի բակ են իջել Ռուբեն Բարսեղյանը և նրա ընկերը՝ Արման Մալխասյանը: Նրանք փորձել են հանգստացնել Ռուբեն Մաթոսյանին, սակայն չեն կարողացել և վիճաբանության մեջ են մտել վերջինիս հետ և մոտ

հինգ թույլ տևողությամբ փոխադարձաբար հայտյանքներ են տվել միմյանց հասցեին, ապա ձեռքերով և ոտքերով սկսել են հարվածներ հասցնել միմյանց: Լսելով հայտյանքները, ապա տեսնելով, որ Ռուբեն Բարսեղյանը և Արման Մալխասյանը ոտքերով հարվածում են գետնին ընկած իր եղբորը՝ Ռուբեն Մաթոսյանին, Կոլյա Մաթոսյանը մոտեցել է նրանց և հայտյանքներ տալով՝ հարվածներ է հասցրել Ռուբեն Բարսեղյանին և Արման Մալխասյանին: Երբ վերջիններս հարձակվել են Կոլյա Մաթոսյանի վրա ու ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել նրան, Կոլյա Մաթոսյանն իր մոտ եղած ծալովի դանակով դիտավորությամբ հարվածել է նախ Ա.Մալխասյանին՝ վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս՝ կրծքավանդակի աջ կեսի շրջանի ծակած-կտրած, չթափանցող վերքի ձևով, այնուհետև Ռ.Բարսեղյանին՝ նրա առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգ սպառնացող ծանր վնաս՝ կրծքավանդակի աջ կեսի ծակած-կտրած թափանցող, կրծքավանդակի ձախ կեսի ծակած-կտրած չթափանցող վնասվածքների ձևով:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ վճռաբեկ բողոքի՝ գործով ապացուցված է, որ Ռուբեն և Կոլյա Մաթոսյանները կատարել են խուլիգանություն, այն է. ալկոհոլային հարբածության վիճակում փողոցի բանուկ մասում (Չարենցի փողոցում կանգառում՝ կրպակի մոտ) չնչին առիթով վիճաբանության մեջ են մտել նույն թաղամասի բնակիչ Ռուբեն Բարսեղյանի և նրա ընկեր Արման Մալխասյանի հետ՝ Ռ.Մաթոսյանի կողմից անհասցե սեռական բնույթի հայտյանքներ տալու կապակցությամբ, որը հետագայում վերածել է ծեծկռտուքի, որի ընթացքում Կոլյա Մաթոսյանը դանակով դիտավորությամբ հարվածել է Արման Մալխասյանին և Ռուբեն Բարսեղյանին՝ հասցնելով նրանց առողջությանը համապատասխանաբար միջին և ծանր վնաս:

Հետևաբար, ելնելով նշված հանգամանքներից և նկատի ունենալով, որ խուլիգանությունը Ռուբեն Մաթոսյանի կողմից կատարվել է ի սկզբանե ուղղակի դիտավորությամբ, որը դրսևորվել է հասարակական վայրում անհասցե սեռական բնույթի հայտյանքներ տալով, ինչը շարունակվելով վերածվել է խուլիգանությունը կանխել ցանկացող անձանց հետ վիճաբանության և ծեծկռտուքի, որին հայտյանքներ տալով միացել է նաև Ռուբեն Մաթոսյանի եղբայրը՝ Կոլյա Մաթոսյանը, որն էլ խուլիգանական գործողություններ կատարելու ընթացքում դանակով մարմնական վնասվածքներ է հասցրել Ա.Մալխասյանին և Ռ.Բարսեղյանին:

Այսինքն՝ Ռուբեն Մաթոսյանի կողմից ուղղակի դիտավորությամբ կատարված խուլիգանությունը կրել է տևական բնույթ, որի ընթացքում խուլիգանական գործողություններ է կատարել Կոլյա Մաթոսյանը՝ դրանք զուգորդելով դանակահարությամբ: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն խուլիգանական մղումներից ելնելով: Այսինքն, եթե այդ արարքը կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա և հանցավորի վարքը բացահայտ մարտահրավեր է՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, կոնկրետ վերը նկարագրված դեպքը որևէ նախադեպային առնչություն չունի վերաքննիչ դատարանի կողմից իր դատավճռում նշված վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի որոշման հետ:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրության և օրենքներից համապատասխան, հետևաբար Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը վերաքննիչ դատարանի կողմից պարտադիր հիմք չէր կարող հանդիսանալ առաջին աստիճանի դատարանի դատավճիռը փոփոխելու համար:

Բողոք բերած անձը խնդրել է Կոլյա Գևորգի Մաթոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 113-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ դատարանը, Կոլյա Մաթոսյանի կատարած արարքը որակելով որպես անձի առողջության դեմ ուղղված հանցագործություններ, պատճառաբանել է հետևյալը.

«Խուլիզանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները: Խուլիզանական արարքը կարող է կատարվել միայն խուլիզանական մղումներից ելնելով: Այսինքն, եթե այդ արարքը կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա և հանցավորի վարքը բացահայտ մարտահրավեր է՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, եթե հանցավորի գործողությունները կատարվել են ոչ խուլիզանական մղումներից ելնելով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիզանություն:

Գործով ձեռք բերված ապացույցների վերլուծությունից հետևում է, որ ամբաստանյալ Կոլյա Մաթոսյանը միջադեպին նախորդող պահին և նույնիսկ բուն միջադեպի ընթացքում նպատակ չի ունեցել կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հանրության նկատմամբ: Նա խուլիզանական բնույթի հայտյանքներ չի տվել նույնիսկ այն բանից հետո, երբ կրպակի աշխատողը՝ Գ.Ճաղարյանը, հանդիմանել է եղբորը՝ Ռուբեն Մաթոսյանին հասարակական վայրում անհասցե հայտնելու համար և իջեցնելով համալսարանի բակ՝ մեկ անգամ ապտակել է նրան: Կոլյա Մաթոսյանը չի միջամտել միջադեպին նաև, երբ Ռուբեն Բարսեղյանը և Արման Մալխասյանը, իջնելով համալսարանի բակ, հանդիմանել են Ռուբեն Մաթոսյանին և նրա հայտյանքներին ի պատասխան նույնպես սկսել են հայտնել և քաշքշել նրան: Միայն այն բանից հետո, երբ Կոլյա Մաթոսյանը նկատել է, որ չբավարարվելով դրանով՝ նրանք եղբորը զցել են գետին և ոտքերով ու ձեռքերով հարվածում են, շտապել է եղբորը օգնության և փոխադարձ կռվի մեջ է մտել նրանց հետ, որի ընթացքում դանակով հարվածել և մարմնական վնասվածքներ է պատճառել Արման Մալխասյանին և Ռուբեն Բարսեղյանին: Տվյալ պարագայում Կոլյա Մաթոսյանն ի սկզբանե նպատակ չի ունեցել կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ: Նման պարագայում Կոլյա Մաթոսյանի հանցավոր գործողությունները

պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածներով, որոնք պատասխանատվություն են նախատեսում անձի դեմ ուղղված հանցագործությունների համար:

Նման հետևության է հանգել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով պալատն իր 2006 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ նույնատիպ քրեական գործով՝ ըստ մեղադրանքի Արման Սիերի Խաչատրյանի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմինը և առաջին ատյանի դատարանը, Կոլյա Մաթոսյանի հանցավոր արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելով անտեսել են այդ արարքի քրեաիրավական գնահատման համար էական նշանակություն ունեցող գործի փաստական տվյալները, մասնավորապես՝ Կոլյա Մաթոսյանի կողմից ծեծկռտուքին միջամտելու պահը, պատճառը: Սինչդեռ, գործի փաստական տվյալներից երևում է, որ Չարենցի փողոցում, կանգառում՝ կրպակի մոտ, Կոլյա Մաթոսյանը որևէ խուլիգանական գործողություն չի կատարել՝ չի հայհոյել, չի վիճաբանել և չի կռվել: Խուլիգանություն կատարող Ռուբեն Մաթոսյանին կարգի հրավիրող Արման Մալխասյանի և Ռուբեն Բարսեղյանի միջև փողոցից շուրջ 30 մետր հեռավորության վրա՝ համալսարանի բակում ծագած վիճաբանությունը վերածվել է ծեծկռտուքի, որի ժամանակ Ռուբեն Մաթոսյանը վայր է ընկել: Կոլյա Մաթոսյանը միջամտել է կռվին միայն այն ժամանակ, երբ տեսել է, ինչպես Ա.Մալխասյանն ու Ռ.Բարսեղյանը հարվածում են գետնին ընկած իր եղբորը: Այսինքն, առկա է Ա.Մալխասյանի և Ռ.Բարսեղյանի անօրինական վարքագիծը: Այս պայմաններում Արման Մալխասյանին և Ռուբեն Բարսեղյանին մարմնական վնասվածքներ հասցնելիս Կոլյա Մաթոսյանի կողմից հայհոյանքներ տալու հանգամանքն ինքնին բավարար չէ հանգելու այն հետևության, որ նա գործել է խուլիգանական մղումներով՝ խուլիգանություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, ինչպես նշվել է վճռաբեկ բողոքում:

Կոլյա Մաթոսյանի արարքի սուբյեկտիվ կողմի բացահայտման համար վերջինիս եղբոր՝ Ռուբեն Մաթոսյանի գործողությունները, դրանց տևողությունը և վերջինիս դիտավորությունը նույնպես որևէ նշանակություն չունեն և չեն կարող ազդել նրա գործողությունների քրեաիրավական գնահատման վրա:

Վճռաբեկ բողոքում, չժխտելով գործի վերը շարադրված փաստական հանգամանքները և չհերքելով վերաքննիչ դատարանի հետևությունները, չի հիմնավորվել, թե Կոլյա Մաթոսյանի դրսևորած որ վարքագիծն է վկայում այն մասին, որ վերջինիս արարքը կատարվել է խուլիգանական մղումներով, հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, բացահայտ մարտահրավեր է՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ:

Իսկ վերաքննիչ դատարանի եզրահանգումները հիմնված են հետազոտված ապացույցների վրա և հաստատում են, որ Կոլյա Մաթոսյանի կողմից ծեծկռտուքին միջամտելը պայմանավորված է եղել Ա.Մալխասյանի և Ռ.Բարսեղյանի կողմից նրա եղբորը գետնին ընկած վիճակում ծեծելու հանգամանքով, որի պարագայում նրա գործողություններում խուլիգանական մղումները բացակայում են:

Խուլիգանության սուբյեկտիվ կողմին վերաբերող իրավական խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Արման Սիերի Խաչատրյանի վերաբերյալ գործով 2006 թվականի հոկտեմբերի 24-ին կայացրած որոշմամբ, որի վրա իրավացիորեն հղում է կատարել նաև վերաքննիչ դատարանն իր դատավճ-

ում: Հետևաբար, բողոքի այն փաստարկը, որ կոնկրետ վերը նկարագրված դեպքը որևէ նախադեպային առնչություն չունի Վճռաբեկ դատարանի 24.10.2006թ. որոշման հետ, հիմնավոր չէ:

Հիմնավոր չէ բողոքի նաև այն պնդումը, որ վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելու համար Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը չէր կարող պարտադիր հիմք հանդիսանալ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, նույնպիսի նորմ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասը: Բացի այդ, նույն հոդվածի 2-րդ կետում ամրագրված է, որ «1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ ... 2) վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը...»: Սահմանադրական և դատավարական այս նորմերից հետևում է, որ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու առաքելություն ունեցող Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, այդ թվում 2006 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումը, որտեղ խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի հետ կապված օրենքի միատեսակ կիրառության համար տրվել է դրա իրավական մեկնաբանությունը, պարտադիր բնույթ է կրում նույնանման գործերով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Կոլյա Մաթոսյանի գործողություններում բացակայում է խուլիգանության հանցակազմը, հիմնավոր են և բխում են գործի փաստական հանգամանքներից: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն Կոլյա Մաթոսյանի հանցավոր արարքը որակել է որպես անձի առողջության դեմ ուղղված հանցագործություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում բերված հիմքերի սահմաններում վերաքննիչ դատարանի դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, հետևաբար այն պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կոլյա Գևորգի Մաթոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 113-րդ 1-ին մասերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Բ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-61/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Ս.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

ընդհանուր դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Գ.Զիանգիրյանի վճռաբեկ բողոքը Պարզև Սամվելի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ ք-
րեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի առաջին ատյանի
դատարանի 2005 թվականի մարտի 14-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վե-
րաքննիչ դատարանի 2005 թվականի հունիսի 16-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Մույն քրեական գործը հարուցվել է 2004 թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ ք-
րեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2004 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ Պարզև Սամվելի Մանուկյանը ներգ-
րավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրվա որոշումներով նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և
խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամանակով:

2004 թվականի նոյեմբերի 15-ին Ա.Մանուկյանը հայտնաբերվել և կալանավոր-
վել է:

2004 թվականի դեկտեմբերի 30-ին գործը մեղադրական եզրակացությամբ ու-
ղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան:

2005 թվականի մարտի 14-ի դատավճռով Պ.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 7 /յոթ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի նոյեմբերի 15-ից:

Պ.Մանուկյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի հունիսի 16-ի դատավճռով փոփոխել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 14.03.05թ. դատավճիռը, այն է՝ Պ.Մանուկյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով՝ դատապարտել է ազատազրկման՝ 6 /վեց/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք չի բերվել, և այն մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007թ. մարտի 20-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Պարզև Մանուկյանը 2004 թվականի հոկտեմբերի 8-ին, ժամը 23-ին սահմաններում, Բյուրեղավան քաղաքի միջազգային հեռախոսակապի կետում պատահաբար հանդիպել է ընկերոջը՝ գործով տուժող Արման Մանուկյանին և կատակով նրան անվանել «բուլա»: Այդ առթիվ նրանց միջև վիճաբանություն է ծագել, որի ընթացքում քաշքշել են միմյանց և փոխադարձ հարվածներ հասցրել: Նրանց բաժանել ու վեճը դադարեցրել են ընկերները՝ գործով վկաներ Էդգար Ղարսոյանը, Գարիկ Հարությունյանը, Հայկ Սարգսյանը, ու Արման Մանուկյանը հեռացել է դեպքի վայրից: Հասնելով տուն՝ նա նկատել է, որ ձեռքի ոսկե շղթայով ժամացույցը չկա և մտածելով, որ այն հնարավոր է ընկած լինի դեպքի վայրում, կրկին վերադարձել է հեռախոսակապի կետի մոտ և հանդիպելով վերը նշված անձանց՝ խնդրել է բակում միասին փնտրել ժամացույցը:

Դատապարտյալ Պ.Մանուկյանը հայտնել է, որ ով ժամացույցը գտնի՝ նրան հալալ լինի: Տուժող Ա.Մանուկյանը հայտնելով պահանջել է, որ իր ժամացույցը գտնողն այն վերադարձնի և դատապարտյալին զգուշացրել է չխառնվել իրենց գրույցին: Դրանից հետո նրանք նորից են վեճի բռնվել և սկսել միմյանց փոխադարձ հարվածներ հասցնել: Ներկա գտնվող Է.Ղարսոյանը, Գ.Հարությունյանը, Հ.Սարգսյանը և դատապարտյալի եղբայրը՝ Կարեն Մանուկյանը, փորձել են նրանց բաժանել, սակայն դատապարտյալ Պ.Մանուկյանը գրպանից հանել է դանակը և սպանելու դիտավորությամբ հարվածներ հասցրել տուժողի որովայնին և մարմնի տարբեր մասերին՝ վնասելով լյարդն ու փայծախը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոնիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքի՝ ինչպես Կոտայքի մարզի առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանները, թույլ տալով քրեադատավարական և նյութական օրենքի էական խախտումներ, ճիշտ չեն կիրառել նյութական օրենքը՝ Պարզև Մանուկյանի արարքը սխալ որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, որի արդյունքում թույլ տրված դատական սխալը առաջացրել է ծանր հետևանքներ դատապարտյալի համար:

Համաձայն բողոքի փաստաթղթերի՝ գործի քննության ընթացքում հաշվի չեն առնվել դատապարտյալ Պ.Մանուկյանի պատճառաբանություններն այն մասին, որ նա Ա.Մանուկյանին սպանելու դիտավորություն չի ունեցել, պարզապես լինելով տուժողից ֆիզիկապես ավելի թույլ և գտնվելով ոչ հարմար դիրքում՝ ստիպված է եղել դանակով անկանոն հարվածներ հասցնել տուժողին՝ նրանից ազատվելու նպատակով: Նման պայմաններում ճիշտ չէ տուժողին հասցված մարմնական վնասվածքների տեղակայումը և քանակը մեխանիկորեն գնահատել որպես կյանքից զրկելուն ուղղված դիտավորություն, քանի որ քրեական գործի քննությամբ այդպիսի ապացույցներ ձեռք չեն բերվել:

Բողոք բերող անձը, գտնելով, որ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, խնդրում է ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և բեկանել ու փոփոխել Պարզ Ա.Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 14.03.05թ. և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 16.06.05թ. դատավճիռները, Պ.Մանուկյանի արարքը վերադարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և սահմանել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ պետք է բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հունիսի 16-ի դատավճիռը, քանի որ դրանում շարադրված հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին ու քննությամբ ձեռք բերված ապացույցներին, որոնց սխալ վերլուծության և գնահատման արդյունքում Պ.Մանուկյանի արարքը ստացել է ոչ ճիշտ քրեաիրավական գնահատական:

Գործի նյութերից երևում է, որ դեպքի օրը՝ 2004 թվականի հոկտեմբերի 8-ի զիջերը Բյուրեղավան քաղաքի միջազգային հեռախոսակապի կետի մոտ դատապարտյալի և գործով տուժող Ա.Մանուկյանի միջև առաջացած 2-րդ վիճաբանության ու կռվի ժամանակ, որի համար առիթ է հանդիսացել տուժողի կողմից հայտնաբերված տալը, ֆիզիկապես շատ ավելի ուժեղ տուժողը, մեկ ձեռքով բռնելով դատապարտյալի օձիքից, կռացրել է նրան ու սկսել հարվածել: Երբ նրանց բաժանելու մտադրությամբ միջամտել է դատապարտյալի եղբայրը՝ Կ.Մանուկյանը, տուժողը հարվածել և գետնին է տապալել նաև նրան ու շարունակել է հարվածներ հասցնել կռացած վիճակում գտնվող Պ.Մանուկյանին: Լինելով ֆիզիկապես շատ ավելի թույլ ու հասկանալով, որ կռվին միջամտած ընկերներին չի հաջողվում դադարեցնել այն ու կանխել տուժողի գործողությունները, ինչպես նաև տեսնելով տուժողի հարվածից գետնին ընկած եղբորը, դատապարտյալը գրպանից հանելով դանակը՝ անկանոն հարվածներ է հասցրել նրան, հիմնականում որովայնի շրջանին, որի հետևանքով Ա.Մանուկյանը ստացել է մարմնական ծանր վնասվածքներ:

Սպանության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի, իսկ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի՝ հանցավորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը /անգործություն/, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:

Գործի նախաքննության և դատաքննությունների ընթացքում ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ դատապարտյալ Պ.Մանուկյանը դիտավորություն է

ունեցել սպանել տուժող Ա.Մանուկյանին ու այն իր ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով: Իր ցուցմունքներում դատապարտյալ Պ.Մանուկյանը մշտապես նշել է, որ ինքը տուժողին սպանելու դիտավորություն չի ունեցել, պարզապես լինելով տուժողից ֆիզիկապես ավելի թույլ, գտնվելով ոչ հարմար դիրքում, քանի որ տուժողն իրեն սեղանձ է եղել գետնին, ինչպես նաև տեսնելով նրա հարվածի հետևանքով գետնին ընկած հիվանդ եղբորը՝ ստիպված է եղել նրանից ազատվելու նպատակով դանակով հարվածել նրան /գ.թ 65-66, 167-173/: Տուժողին սպանելու դատապարտյալի դիտավորությունը հիմնավորող ապացույցներ չկան նաև տուժող Ա.Մանուկյանի, դեպքին ակնմատես վկաների՝ Կ.Մանուկյանի, Գ.Հարությունյանի, Է.Ղարսոյանի, Հ.Սարգսյանի ցուցմունքներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ հոդվածները սահմանում են, որ գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերած ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու միջոցով: Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը ՀՀ քրեական օրենքի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումը, որը ենթակա է կիրառման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ դատարանները տուժողին հասցված մարմնական վնասվածքների տեղակայումը և քանակը մեխանիկորեն գնահատելով որպես կյանքից զրկելուն ուղղված դիտավորություն և Պ.Մանուկյանի արարքը որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ճիշտ չեն գնահատել գործով ձեռք բերված ապացույցները և ճիշտ չեն կիրառել նյութական օրենքը: Փաստորեն թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, որի հետևանքով դատապարտյալին մեղազգրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով որակելու փոխարեն որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, այսինքն՝ թույլ է տրվել դատավարական և նյութական իրավունքի խախտում, որի արդյունքում առաջացած դատական սխալը ծանր հետևանքներ է առաջացրել դատապարտյալ Պ.Մանուկյանի համար: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս նման փոփոխության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճռաբեկ դատարանը, ի նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի կողմից բացահայտվել են գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները և բացակայում է լրացուցիչ դատավարական գործողություններ կատարելու, ապացույցներ ձեռք բերելու և/կամ դրանք կրկին հետազոտելու և գնահատելու անհրաժեշտությունը, ինչպես նաև հաշվի առնելով, որ որ սույն քրեական գործը քննվում է 2004 թվականի հոկտեմբերից, իսկ գործի անհարկի ձգձգումները կարող են վտանգել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված անձանց արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ դրա բաղկացուցիչ տարրը հանդիսացող անձանց՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է բեկանել և փոփոխել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հունիսի 16-ի դատավճիռը՝ դատապարտյալի արարքը վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարել:

Բեկանել և փոփոխել Պարզև Սամվելի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հունիսի 16-ի դատավճիռը, այն է՝ Պարզև Մանուկյանի արարքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նրան դատապարտել ազատազրկման՝ 4 /չորս/ տարի ժամկետով:

Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-85/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ 13-600/07թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Ս.Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**

2007թվականի ապրիլի 6-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռն ղեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Արթուր Խաչատուրի Սերոբյանին 2006 թվականի մայիսի 18-ին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 15-ին կայացված դատավճռով Ա.Սերոբյանին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերադրակել է նույն հոդվածի 2-րդ մասով:

Առաջին ատյանի դատարանը Ա.Սերոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամանակով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Կիրառելով Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ ԱԺ 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 1-ին կետի (ա) ենթակետը՝ Ա.Սերոբյանին ազատել է պատժի կրումից, վերացրել է խափանման միջոցը և Ա.Սերոբյանին ազատ արձակել նիստերի դահլիճից:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազի օգնական Ա.Խոնդկարյանը բերել է վերաքննիչ բողոք:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի հունվարի 19-ին, քննության առնելով վերաքննիչ բողոքը, Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռի դեմ բերել է վճռաբեկ բողոք, խնդրելով բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռները և քրեական գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության, գտնելով, որ Ա.Սերոբյանի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, նկատի ունենալով, որ գիշերային ակումբում նրա կողմից արձակվել է ոչ թե մեկ, այլ երկու կրակոց և որ նրա կրակոցների հետևանքով ակումբում գտնվող անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ է ստեղծվել:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի մարտի 5-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով բողոքը ընդունել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 30.03.2007թ. որոշմամբ բողոքը մերժել է, պատճառաբանելով, որ նախաքննության մարմինը Ա.Սերոբյանին մեղադրանք չի առաջադրել գիշերային ակումբում երկու կրակոց արձակելու, ինչպես նաև արձակված կրակոցների հետևանքով անձանց կյանքին և առողջությանը իրական վտանգ ստեղծելու համար: Նշված հիմնավորմամբ բողոքի պահանջը չի բավարարվել, և Վճռաբեկ դատարանը Ա.Սերոբյանի արարքի փաստական հանգամանքներին ու քրեաիրավական որակման հարցերին չի անդրադարձել, նշելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն, գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջարկվել:

Գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանը 02.04.2007թ. վճռաբեկ բողոք է բերել նոր հիմքով, այն է՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու պահանջով:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմնի կողմից Ա.Սերոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2006 թվականի հունվարի 27-ի լույս 28-ի գիշերը՝ ժամը 01-ի սահմաններում, Նոր Նորքի 5-րդ զանգվածի Դ-ավիթ Բեկ փողոցին հարող տարածքում գործող «Քրեյզի Հորս» գիշերային ակումբում, ակտիվ օգտագործած վիճակում, բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով ակումբի աշխատակիցների նկատմամբ, շուրջ 20 րոպե տևողությամբ հայհոյանքներ է տվել ակումբի պարուհիների հասցեին, այնուհետև, ապօրինի կերպով ձեռք բերված և նշված խուլիգանական գործողությունների պահին իր կողմից կրվող թիվ 21137 համարի 7.65 տրամաչափի «Մաուզեր» տեսակի ատրճանակից կրակոց է արձակել և վնասել գիշերային ակումբի առաստաղը:

Բացի այդ, Ա.Սերոբյանն առանց բժիշկի թույլտվության գործածել է կանաքիսի և ափիոնի խմբի թմրամիջոց, որը հայտնաբերվել է նրանից վերցված փորձանմուշում:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ նախաքննության մարմինները թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ: Մասնավորապես, վճռաբեկ բողոքի հեղինակի կարծիքով, նախաքննական մարմինը ձեռք բերված բավարար ապացույցների առկայության պայմաններում, որոնցով հիմնավորվել է Ա. Սերոբյանի կողմից խուլիգանական գործողություններ կատարելու ընթացքում հրազենից երկու կրակոցներ արձակելու, ինչպես նաև Հ.Կարախանյանի և ակումբի մյուս աշխատակիցների կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիք տալու հանգամանքը, նրան ողջ ծավալով մեղադրանք չի առաջադրել որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ, չի նկարագրել Ա.Սերոբյանի կողմից երկու կրակոց արձակելու հանգամանքը, ինչպես նաև հրազենի գործադրմամբ Հ.Կարախանյանի և գիշերային ակումբի մյուս աշխատակիցների նկատմամբ բռնություն կամ բռնություն գործադրելու սպառնալիք տալու հանգամանքները, և որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ լիարժեք չի արտացոլել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիայի բոլոր տարրերը:

Ելնելով վերոգրյալից՝ վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Ա.Սերոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռները և քրեական գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Սույն գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի 2006 թվականի հունվարի 30-ի որոշմամբ Ա.Սերոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2006 թվականի հունվարի 28-ին, ժամը 01.30-ի սահմաններում, Նոր Նորքի 5-րդ զանգվածի Դավիթ Բեկ փողոցին հարող տարածքում գործող «Քրեյգի հորս» գիշերային ակումբում, ակտիվային հարբածության վիճակում, բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով ակումբի աշխատակիցների նկատմամբ, կազմալուծել է ակումբի բնականոն աշխատանքը, շուրջ 20 թույլ տևողությամբ հայիռյանքներ է հասցեագրել ակումբի պարուհիներին, այնուհետև ապօրինի կերպով ձեռք բերված և նշված խուլիգանական գործողությունների պահին իր կողմից կրվող թիվ 21137 համարի 7,65 տրամաչափի «Մաուզեր» տեսակի ատրճանակի գործադրմամբ կրակոց է արձակել նշված ատրճանակից, վնասել գիշերային ակումբի առաստաղը...» (գ.թ. 114): Առաջադրված մեղադրանքը լրացնելու մասին քննիչի 2006 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ խուլիգանության մասով Ա.Սերոբյանին առաջադրված մեղադրանքը չի փոփոխվել (գ.թ. 206): Այն նույն ձևակերպումն ունի նաև մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում (գ.թ. 261):

Այսինքն՝ նախաքննության մարմնի կողմից հաստատված է համարվել, որ Ա.Սերոբյանը «կրակոց է արձակել», ինչից չի կարելի հետևություն անել, որ երկու կրակոց է արձակվել: Մինչդեռ գործի նյութերի վերլուծությունը վկայում է, որ առկա են հակասական տվյալներ կրակոցների քանակի վերաբերյալ: Մասնավորապես, դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն՝ գիշերային ակումբի սրահից հայտնաբերվել և առգրավվել են երկու հատ 7,65 մմ տրամաչափի պարկուճներ և մեկ հատ 7,65 մմ տրամաչափի զնդակ, իսկ ակումբի առաստաղին՝ պարահարթակի ուղղությամբ, առկա է 8 x 6 սմ չափերի մոտ 0.5 սմ խորությամբ վնասվածք: Երկրորդ պարկուճից արձակված զնդակը և դրա խոցման տեղը չեն հայտնաբերվել: Բացի այդ, ամբաստանյալ Արթուր Սերոբյանն իր սկզբնական ցուցմունքներում պնդել է, որ իր մոտ եղած ատրճանակից արձակել է երկու կրակոց, սակայն հետագայում նշել է մեկ կրակոց արձակելու մասին: Քրեական գործով որպես վկա հարցաքննված անձանց մի մասը ցուցմունք է տվել երկու, իսկ մյուս մասը՝ մեկ կրակոց լսելու մասին:

Բացի այդ, համաձայն Ա.Սերոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրան առաջադրված մեղադրանքը լրացնելու մասին քննիչի որոշումների, ինչպես նաև մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի՝ «Ա.Սերոբյանը ... խուլիգանական գործողությունների պահին իր կողմից կրվող թիվ 21137 համարի 7,65 տրամաչափի «Մաուզեր» տեսակի ատրճանակի գործադրմամբ կրակոց է արձակել նշված ատրճանակից, վնասել գիշերային ակումբի առաստաղը...»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմով՝ զենքի և որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն որակելու համար բավարար չէ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հատկանիշը: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի համար պարտադիր է, որպեսզի հանցավորը խուլիգանական գործողություններ կատարելու ընթացքում զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայով մարմնական վնասվածք հասցնի կամ փորձի հասցնել, կամ էլ նրա գործողությունների հետևանքով անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծվի: Նման մոտեցում է արտահայտված նաև վճռաբեկ բողոքում: Մինչդեռ նախաքննության մարմնի կողմից չեն ձեռնարկվել բավարար միջոցներ՝ խուլիգանական

գործողություններ կատարելու ընթացքում Ա.Սերոբյանի կողմից արձակված կրակոցների քանակը, հաջողականությունը և ուղղվածությունը, ինչպես նաև դրանց հետևանքով անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծելու հարցը պարզելու համար: Այսպիսով, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Դրանք քրեադատավարական օրենքի էական խախտումներ են, չեն կարող վերացվել դատական քննության ժամանակ, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ Ա.Սերոբյանի վերաբերյալ դատավճիռները ենթակա են բեկանման՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով: Լրացուցիչ նախաքննության ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար և արդյունքներով հանգել համապատասխան եզրակացության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. սեպտեմբերի 15-ի և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռները բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-63/07

Սյունիքի մարզի առաջին ատյանի
դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Աղաբեկյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**

2007 թվականի ապրիլի 6-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ զինվորական դատախազ Ա.Խաչատուրյանի վճռաբեկ բողոքը Մանուշակ Վալոդի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռի դեմ,

ՊԱՐՁԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռով Մանուշակ Վալոդի Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ զինվորական դատախազը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 22-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

Մանուշակ Վալոդի Աբրահամյանը 2006 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 9⁰⁰-ի սահմաններում, Մարտակերտ քաղաքի Մախարովի փողոցի 6-ից 10-րդ բնակելի շենքերի միջև ընկած հատվածում, վիճաբանության մեջ մտնելով Մարտակերտ քաղաքի բնակիչ Նվեր Ռադիկի Մանուչարյանի հետ, անպարկեշտ ձևով ստորացրել է նրա պատիվն ու արժանապատվությունը, հայեցողյունը, ինչով իսկ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել և դիտավորությանը կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում և քրեական օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հազարապատիկի չափով: Սակայն Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից խախտվել է վերը նշված հոդվածի պահանջը և նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժի՝ տուգանքի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ, այսինքն՝ թույլ է տրվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վճռաբեկ բողոքում խնդրվում է պատժի մասով բեկանել Մանուշակ Վալոդի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը և քրեական գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Մանուշակ Վալոդի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Օրինականության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

Պատիժ նշանակելիս օրինականության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պատժի տեսակն ու չափը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որի դիսպոզիցիայի հատկանիշներին համապատասխան անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ: Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը պարտադրում է դուրս չգալ Հատուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից: Նշանակվող պատիժը չի կարող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի

խիստ կամ մեղմ լինել: Այդ պահանջից բացառություն կարող է անել միայն օրենքը, որը Ընդհանուր մատում նախատեսված հատուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից: Մասնավորապես, տվյալ հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի նորմերով:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ խուլիգանությունը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով: Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հազարապատիկի չափով:

Ինչպես երևում է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռից, Մանուշակ Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Առաջին ատյանի դատարանը Մ.Աբրահամյանի նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով սահմանված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Փաստորեն, առկա է դատավարության մասնակիցների նյութական և դատավարական իրավունքի խախտում, որը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի համաձայն, վճռաբեկ բողոք բերելու հիմք է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատավճիռը ենթակա է բեկանման՝ գործը նոր դատական քննության ուղարկելով, եթե թույլ է տրվել նյութական և քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է դատավճռի օրինականության վրա: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Բեկանել Մանուշակ Վալոդի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-65/07

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Արամյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Գ.ԵՐԵՄՅԱՆԻ

2007 թվականի ապրիլի 6-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Հրանտ Լևոնի Գաբրիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռի դեմ դատապարտյալ Հրանտ Գաբրիելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Սույն քրեական գործը հարուցվել է 2003 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2003 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ Հրանտ Լևոնի Գաբրիելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2003 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ Հ.Գաբրիելյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է:

2003 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ փոփոխվել է Հ.Գաբրիելյանին առաջադրված մեղադրանքի ծավալը, այն լրացվել է, ու նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2003 թվականի նոյեմբերի 20-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, 2003 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճռով Հ.Գաբրիելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 /չորս/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 22.11.2002թ. դատավճռով նշանակված և 11.08.2003թ. գործող քրեական օրենսգրքին համապատասխանացնելու վերաբերյալ որոշմամբ սահմանված պատժի չկրած մասից 6 /վեց/ ամիս ժամկետով ազատազրկումը, ի վերջո, թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

Պատժի սկիզբը հաշվվել է 2003 թվականի հոկտեմբերի 24-ից:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք չի բերվել, և այն մտել է օրինական ուժի մեջ:

Գատապարտյալ Հ.Գաբրիելյանի բերած վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007թ. մարտի 20-ի որոշմամբ 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հրանտ Գաբրիելյանը, նախկինում հափշտակություններ կատարելու համար հինգ անգամ լինելով դատապարտված և պայմանական վաղաժամկետ ազատված լինելով պատժի կրումից, ունենալով ազատազրկման ձևով պատժի չկրած մաս՝ կատարել է նոր հափշտակություններ:

2003 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 00.30-ի սահմաններում, Նորքի այգիներ թաղամասում շրջազայելիս թիվ 282 տան մոտ նկատելով գործով տուժող Լևոն Եղիազարյանի անձնական օգտագործման «ԲՄՎ» մակնիշի 06 US 008 պետհամարանիշի ավտոմեքենան՝ քարով կոտրել է մեքենայի առջևի աջակողմյան դռան ապակին, բացել է դուռն ու մտել սրահ, որտեղից իր հետ վերցրած պտուտակահանի և մկրատի միջոցով հանելով 73.000 ՀՀ դրամ արժողության «ՋՎՍ» ձայնագրիչն ու 3.000 ՀՀ դրամ արժողության 6 հատ լազերային սկավառակները՝ հեռացել է:

Դրանից հետո, տեսնելով նույն թաղամասի թիվ 287 տան բակում կայանված Սամվել Կարապետյանին պատկանող «ՎԱՋ 2106» մակնիշի 25 LS 065 պետհամարանիշի ավտոմեքենան, պտուտակահանի միջոցով իջեցրել է առջևի աջակողմյան դռան ապակին, մտել սրահ ու դանակի գործադրմամբ հանելով 28.000 ՀՀ դրամ արժողության «Սոնի» ֆիրմայի ձայնագրիչը՝ հեռացել:

Այնուհետև, Հ.Գաբրիելյանը մոտեցել է քիչ հեռու կանգնած տուժող Կարեն Կարապետյանին պատկանող «ՎԱՋ 2106» մակնիշի 64 ՕՕ 470 պետհամարանիշի ավտոմեքենային և իջեցնելով առջևի աջակողմյան դռան ապակին՝ պտուտակահանի և դանակի գործադրմամբ մեքենայի սրահից հափշտակել է 21.000 ՀՀ դրամ արժողության «Սոնի» ֆիրմայի ձայնագրիչն ու ընդհանուր 500 ՀՀ դրամ արժողության երկու ձայներիզներ:

Հ.Գաբրիելյանը վերը նշված երեք ավտոմեքենաներից հափշտակված ձայնագրիչներն ու ձայներիզները տեղավորել է պոլիէթիլային տոպրակի մեջ և քայլելով

զմացել դեպի տուն: Ճանապարհին Հ.Գաբրիելյանին են մոտեցել ոստիկանության աշխատակիցները և գողություն կատարելու կասկածանքով բերման ենթարկել ոստիկանության Մարաշի բաժանմունք, որտեղ անձնական զենությամբ Հ.Գաբրիելյանի մոտից հայտնաբերվել և առգրավվել են ձայնագրիչներն ու ձայներիզները:

3.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Համաձայն բողոքի՝ պատիժ սահմանելիս առաջին ատյանի դատարանը որպես իր պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է դիտել նախկինում համանման արարքներ կատարելու համար մի քանի անգամ դատապարտված լինելը, այն դեպքում, երբ իրեն արդեն իսկ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ու պատիժը դեռ չկրած նոր հանցագործություն կատարելը, հանգամանք, որը նշված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասում, և իր նկատմամբ նշանակվել է խիստ պատիժ:

Միաժամանակ պատճառաբանելով, որ հանցագործությունը կատարել է նյութական վատ վիճակում գտնվելու հետևանքով, բացի այդ, վերականգնված են տուժողներին պատճառված նյութական վնասները, Հ.Գաբրիելյանը խնդրել է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը և նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է թողնել անփոփոխ, սակայն նրա նկարագրական-պատճառաբանական մասից պետք է հանել «որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է դիտում այն, որ նախկինում մի քանի անգամ դատապարտված է եղել նույնանման արարքի համար և հանցագործությունը կատարել է պատիժը չկրած» արտահայտությունը հետևյալ պատճառաբանությամբ.

Գործի նյութերից երևում է, որ դատապարտյալ Հ.Գաբրիելյանը, նախկինում լինելով մի քանի անգամ դատապարտված հափշտակություններ կատարելու համար, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելուց ընդամենը մեկ ամիս անց դարձյալ կատարել է գողություն, այն է՝ մեկ գիշերվա ընթացքում տեխնիկական միջոցների գործադրմամբ նույն թաղամասի տարբեր տեղերում կայանված երեք ավտոմեքենաներից հափշտակել է ձայնագրիչներ ու այլ ապրանքներ: Նկատի ունենալով, որ նա մինչև վերջին հանցագործությունները կատարելն արդեն իսկ 2-ից ավել անգամ դատապարտված է եղել հափշտակություններ կատարելու համար, նախաքննության մարմինը Հ.Գաբրիելյանի արարքը որակել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, որով էլ նա դատապարտվել է ազատազրկման:

Ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի, որը դատարաններին թույլ է տալիս բացի այդ հոդվածում նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներից հաշվի առնել նաև այլ հանգամանքներ, նույն օրենսգրքի 63-րդ հոդվածը տալիս է ծանրացնող հանգամանքների սպառնիչ ցանկը: Համաձայն այդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի՝ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող չի կարող հաշվի առնվել այն հանգամանքները, որոնք մատնանշված չեն այդ հոդվածում, ինչպես նաև նրանք, որոնք ՀՀ քրեական օրենսգրք-

քի հատուկ մասի համապատասխան հողվածով նախատեսված են որպես հանցագործության հատկանիշ:

Դատավճռում մատնանշելով հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձին բացասականորեն զնահատող այն հանգամանքները, որոնք թվարկված չեն քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածում, դատարանը կարող է դրանք դիտել որպես հանցավորի անձը բնութագրող հանգամանքներ:

Անտեսելով օրենքի այդ պահանջը՝ առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս Հ.Գաբրիելյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների թվում մատնանշել է նաև համանման արարքների համար նախկինում մի քանի անգամ դատապարտված լինելը, այսինքն՝ հանցագործության հատկանիշը, և պատիժը դեռ լրիվ չկրած նոր հանցագործություններ կատարելը, հանգամանք, որը նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասում:

Նկատի ունենալով, որ դատարանի կողմից խախտվել է օրենքի պահանջը և դատապարտյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ են դիտվել որպես այդպիսիք չհանդիսացող հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտավ, որ դրանք պետք է հանվեն դատավճռից:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու մասին դատապարտյալի խնդրանքին, ապա այն չի կարող բավարարվել հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար որպես հիմք պետք է հանդիսանան բացառիկ այն հանգամանքները, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը: Ընդ որում, բացառիկ հանգամանքների հարցը լուծվում է՝ ելնելով կոնկրետ հանցագործության հանգամանքներից, ինչպես նաև հանցագործին բնութագրող տվյալներից:

Հ.Գաբրիելյանի վերաբերյալ գործի նյութերից երևում է, որ չկան այնպիսի հանգամանքներ, որոնք բացառիկ են և էականորեն կարող են նվազեցնել հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը, իսկ ինչ վերաբերում է մեղմացնող հանգամանքներին՝ դատարանը նրա նկատմամբ պատիժ նշանակելիս արդեն իսկ նկատի է ունեցել դրանք ու սահմանել է համաչափ պատիժ, հետևաբար դատապարտյալի բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի իրավաչափության հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հրանտ Լևոնի Գաբրիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի դեկտեմբերի 24-ի դատավճիռը թողնել անփոփոխ: Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասի վերջնամասից հանել «որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է դի-

տում այն, որ նախկինում մի քանի անգամ դատապարտված է եղել նույնանման արարքի համար և հանցագործությունները կատարել է պատիժը չկրած» արտահայտությունը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-55/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Կ.Ղազարյան, Գ.Մելիք-Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ	Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար	Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
դատախազ	Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2007թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

ընթաց դատական գիտում, քննության առնելով դատապարտյալ Ռոբերտ Սուրենի Խատոյանի վճռաբեկ բողոքը Ռոբերտ Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմինը 2006 թվականի մարտի 9-ին Ռոբերտ Սուրենի Խատոյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի դատավճռով Ռոբերտ Սուրենի Խատոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նույն դատավճռով Վարդան Գեղամի Վարդանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վճռվել է տուժողներից 18-ին հանցագործությանը պատճառված վնասը բռնագանձել Վարդան Վարդանյանից:

Միաժամանակ որոշվել է Վ.Վարդանյանից և Ռ.Խատոյանից համապարտության կարգով հոգուտ տուժող Անուշ Սիմոնյանի բռնագանձել 5.500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, հոգուտ Աբրահամ Թորոսյանի՝ 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, հոգուտ Գառնիկ Սահակյանի՝ 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել տուժող Անուշ Սիմոնյանը:

Զննության առնելով տուժողի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռով Ռոբերտ Խատոյանի մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռը փոփոխել է. Ռոբերտ Սուրենի Խատոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Դատավճռի մնացած մասը թողնվել է անփոփոխ:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ռոբերտ Խատոյանը :

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի մարտի 22-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ամբաստանյալ Վարդան Վարդանյանը, 2002 թվականի օգոստոսի 12-ին ստեղծելով և ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցելով «Վ.Վ.ՍԱԻՏ» ՍՊԸ-ն, Երևան քաղաքի տարբեր վարձակալած գրասենյակներում 2004 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2005 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում զբաղվել է անշարժ գույքի առուվաճառքի միջնորդական գործունեությամբ: Հանդիսանալով նշված ՍՊԸ-ի տնօրեն և մտադրվելով վստահությունը չարաշահելու միջոցով տիրանալ քաղաքացիների գույքին, 2005 թվականի ընթացքում բնակարան ձեռք բերելու պատրվակով 21 քաղաքացիներից նա ստացել է 35.970.212 ՀՀ դրամին համարժեք 77.850 ԱՄՆ դոլար, 87.000 ՀՀ դրամ և խարդախությամբ հափշտակել:

Երեք դրվագով Ռ.Խատոյանն օժանդակել է Վ.Վարդանյանին խարդախությամբ տիրանալ քաղաքացիների գույքին:

Այսպես՝ 2005 թվականի հուլիսի 22-ին Վ.Վարդանյանը Ռ.Խատոյանի հետ գնացել է իր ծանոթուհի, գործով տուժող Աշխեն Մարդարյանի՝ Երևանի Ֆրունզեի փողոցի 10-րդ շենքի 48 բնակարան, որտեղ խարդախությամբ նրա գումարին տիրանալու դիտավորությամբ չարաշահել է Ա.Մարդարյանի վստահությունը և 2 ժամ հետո վերադարձնելու մտացածին պայմանով խաբեությամբ նրանից ստացել են 1.401.820 ՀՀ դրամին համարժեք 3.100 ԱՄՆ դոլար և 47.000 ՀՀ դրամ, որոնք հետագայում չեն վերադարձրել, այլ հափշտակել ու ծախսել են իրենց անձնական կարիքների համար, իսկ գումարը վերադարձնելու մասին Ա.Մարդարյանի պահանջներին ի պատասխան՝

նրա վատահոբյունն ամրապնդելու համար Վ.Վարդանյանը կազմել և նրան է տվել գումարը վերադարձնելու բովանդակությամբ ձևական պարտավորագիր:

Այնուհետև Վ.Վարդանյանը և Ռ.Խատոյանը վերջինիս հետ ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող գործով տուժող Լուսաբեր Շխրդումյանից պատուհան տեղադրելու պատրվակով վերցրել են նրան պատկանող Երևանի Շիրակի փող. 2ա 2-րդ մասնաշենքի թիվ 812 բնակարանի մուտքի դռան բանալին և սեփականության վկայականի պատճենը, որոնց օգտագործմամբ, Լ.Շխրդումյանից գաղտնի, 2005թվականի հոկտեմբեր ամսի տարբեր օրերի առանձին-առանձին, բնակարան գնելու ցանկությամբ «Վ.Վ.ՍԱԻՏ» ՍՊԸ-ին դիմած հաճախորդներ, գործով տուժողներ Գառնիկ Սահակյանին և Անուշ Սիմոնյանին ցույց են տվել Լ.Շխրդումյանի վերը նշված բնակարանը և ներկայացնելով իբրև վաճառվող բնակարան, նշելով ակնհայտ ցածր արժեք, խաբեությամբ՝ որպես բնակարանի ձեռքբերման նախավճար, 2005թվականի հոկտեմբերի 8-ին և 17-ին Գ. Սահակյանից մաս-մաս ստացել են 1.357.000 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար, իսկ որպես բնակարանի ձեռքբերման նախավճար և վերանորոգման վճար Ա.Սիմոնյանից 2005թ. հոկտեմբերի 9-ին և հոկտեմբեր ամսվա վերջերին մաս-մաս ստացել են 2.507.000 ՀՀ դրամին համարժեք 5.500 ԱՄՆ դոլար: Վատահոբյունն ամրապնդելու համար նրանք «Վ.Վ.ՍԱԻՏ» ՍՊԸ-ի անունից կազմել և Ա.Սիմոնյանին տրամադրել են կապալի թիվ ԱՖ 33 առ 09.10.2005թվականի ձևական պայմանագիրը, առուվաճառքի առ 09.10.2005թվականի թիվ ԱՖ 114 ձևական պայմանագիրն ու գումարի վճարման նույն ամսաթվի թիվ ԱՖ 115 ձևական անդորրագիրը, իսկ Գ.Սահակյանին տրամադրել են առուվաճառքի առ 08.10.2005թվականի թիվ ԱՖ 113 ձևական պայմանագիրն ու գումարի վճարման ԱՖ 113 առ 08.10.2005թվականի և ԱՖ 115 17.10.2005թվականի անդորրագրերը: Խոստացված գործարքները նրանք չեն իրականացրել, ստացած գումարները հափշտակել և ծախսել են իրենց անձնական կարիքների համար:

Այնուհետև, բնակարան գնելու ցանկությամբ «Վ.Վ.ՍԱԻՏ» ՍՊԸ-ին դիմած Լիբանանի քաղաքացի, գործով տուժող Աբրահամ Թորոսյանին ամբաստանյալներ Վ.Վարդանյանն ու Ռ.Խատոյանը ցույց են տվել գործով վկա Գագիկ Հովհաննիսյանի կողմից վաճառքի ներկայացված, նրան պատկանող Երևանի Սարի Թաղ 18-րդ փողոցի 69 տունը՝ նշելով ակնհայտ ցածր արժեք, խաբեությամբ և վատահոբյունը չարաշահելու միջոցով տան ձեռքբերման նախավճարի վճարման և վերանորոգման ծախսերի կատարման պատրվակով Ա.Թորոսյանից 2005 թվականի հոկտեմբերի 14-ին ստացել են 3.154.900 ՀՀ դրամին համարժեք 7.000 ԱՄՆ դոլար: Վատահոբյունն ամրապնդելու համար նրանք «Վ.Վ.ՍԱԻՏ» ՍՊԸ-ի անունից կազմել և Ա.Թորոսյանին են տրամադրել կապալի թիվ ԱՖ 33 առ 14.10.2005թվականի ձևական պայմանագիրը, առուվաճառքի առ 14.10.2005 թվականի թիվ ԱՖ 114 ձևական պայմանագիրը, նույն տվյալներով գումարի վճարման անդորրագիրը: Մինչև տուժողից գումար ստանալը ամբաստանյալները Ա.Թորոսյանին և նրա ազգական Վարդուհի Վերանյանին ցույց են տվել գործով վկա Վարդանուշ Շահբազյանի բնակարանում իրականում այլ անձանց կողմից կատարված վերանորոգումը, տուժողին խաբել են, թե իբր վերանորոգումն իրենց ընկերությունն է կատարել և կեղծ խոստում են տվել տուժող Ա.Թորոսյանի կողմից իբր գնվելիք տանը ևս այդ որակի վերանորոգում կատարել: Գումարները ստանալուց հետո խոստացված գործարքները նրանք չեն իրականացրել, ստացված գումարը հափշտակել և ծախսել են իրենց անձնական կարիքների համար: Ավելի ուշ տուժողի ներկայացուցիչ Մելանյա Բադալյանի պահանջով ամբաստանյալները վերցրած գումարը վերադարձնելու վերաբերյալ նրան տվել են առ 01.11.2005 թվական-

նի ձևական պարտավորագիր, որտեղ ամբաստանյալ Ռ.Խատոյանը խարեությանը ներկայացել է որպես Ռոբերտ Մարտիրոսյան:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, վիստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքում բողոքի հեղինակը նշել է, որ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի նորմը, քանի որ դա այն դեպքերի համար է, երբ մեղմացնող հանգամանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմով իբրև հանցակազմի տարր՝ հանցագործության հատկանիշ: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն անձի մասնակցության աստիճանը հանցագործության կատարմանը խարդախության հանցակազմի տարր կամ այդ հանցագործության հատկանիշ չի համարում, և 178-րդ հոդվածի 3-րդ մասում ընդհանրապես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող նման հանգամանքի մասին որևէ նշում չկա:

Բացի այդ, վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասը, որով նախատեսված է, որ հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը: Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով հանցագործությանն իր մասնակցության աստիճանը, այն է՝ որ ինքը Վ.Վարդանյանի բազմադրվագ գործողություններին մասնակցել է ընդամենը երեք է-պիզոնով, որ ոչ մեկից որևէ գումար չի վերցրել, իրավացիորեն այն համարել է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանի դատավճռում նշված «դատարանը որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առնում հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը» պարբերությունից երևում է, որ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված նորմերը, քանի որ 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը կիրառելի է միայն այն դեպքում, երբ ծանր հետևանքները ոչ թե հանդիսանում են հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ, այլ երբ այդ հետևանքներն ավելի վտանգավոր են և էապես բարձրացնում են հանցագործության վտանգավորության աստիճանը և բնույթը, այսինքն՝ «հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը» դատարանը կարող է պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք համարել միայն այն դեպքում, երբ պատճառվել են տվյալ հանցագործության համար սովորականից ավելի ծանր հետևանքներ, մինչդեռ դատարանի կողմից դատավճռում չի նշված, թե որոնք են իր կատարած հանցանքի համար սովորականից առավել ծանր հետևանքները:

Դատարանը, նշված հանցագործությունը դասելով ծանր հանցագործությունների շարքին, նշել է նաև, որ ամբաստանյալ Ռ.Խատոյանը որևէ միջոց չի ձեռնարկել հարթելու տուժողներին պատճառված նյութական վնասը և գտել է, որ նշված հանգամանքներն էականորեն մեծացնում են հանցավորի և հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը: Բողոքի հեղինակը գտնում է, որ դրանով խախտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջն այն մասին, որ պատիժ նշանակելիս դատարանի չի կարող հաշվի առնել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով չնախատեսված այլ հանգամանքներ, ըստ այդ հոդվածի, ոչ մի կետ տուժողներին պատճառված նյութական վնասը հարթելու ուղ-

դուքյանը միջոցներ չձեռնարկելն անձի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք չի համարում:

Խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջը. չի պարզվել իր պատասխանատվությունը մեղմացնող բոլոր հանգամանքները, մասնավորապես այն հանգամանքը, որ Վ.Վարդանյանի գործողությունների ուրոշ մասին ինքը մասնակցել է ստիպված, քանի որ ինչպես մյուս տուժողներին, այնպես էլ իրեն Վ.Վարդանյանը գումար է եղել պարտք, ինքը ցանկացել է ետ բերել իր գումարները, և դատարանը պետք է հաշվի առներ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հանգամանքը, այն է՝ հանցանքը նյութական կամ այլ կախվածության ազդեցության տակ կատարելը:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է իր նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 13.02.2007 թվականի դատավճիռը և լրացուցիչ պարզաբանում տալով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռն՝ օրինական ուժի մեջ թողնել առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռը, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ իր նկատմամբ նշանակված 2 տարի ժամկետով ազատազրկումը թողնել անփոփոխ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Ռ. Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով պետք է բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռն հետևյալ պատճառաբանությամբ.

Ինչպես երևում է դատավճռից, վերաքննիչ դատարանը, քննության առնելով Ռ. Խատոյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի նշանակված պատժաչափի և պատժատեսակի հարցը, գտել է, որ առաջին ատյանի դատարանը բավարար չափով ստուգման ու գնահատման չի ենթարկել նրա կողմից կատարած հանցանքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները և հաշվի առնելով հանցագործության կատարմանը նրա մասնակցության աստիճանն ու առողջական վիճակը, վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, ինչը չի բխում մատնանշված հոդվածի պահանջներից և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Վերաքննիչ դատարանը դատավճռում նշել է.

1. Հանցագործությունը դատվում է ծանր հանցագործությունների շարքը, բացի այդ, Ռ.Խատոյանը որևէ միջոց չի ձեռնարկել հարթելու տուժողներին պատճառված վնասը, որոնք էականորեն մեծացնում են հանցավորի և հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը:

2. Առաջին ատյանի դատարանը հանցագործության կատարմանը Ռ. Խատոյանի մասնակցության աստիճանը դիտել է որպես նրա պատասխանատվությունն ու

պատիժը մեղմացնող հանգամանք, սակայն այն պետք է հանել հանցավորի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների շարքից, քանի որ նշված հանգամանքը սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ և չի կարող կրկին հաշվի առնվել որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

3. Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առնում հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն ամրագրել է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը:

Պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անձնավորությունը միաժամանակ: Այդ պատճառով էլ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա:

Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներին վերաբերող ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պատիժ նշանակելիս դատարանը չի կարող հաշվի առնել սույն հոդվածի առաջին մասով չնախատեսված այլ հանգամանքներ, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Օրինականության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով: Պատիժ նշանակելիս օրինականության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պատժի տեսակը և չափը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որի դիսպոզիցիայի հատկանիշներին համապատասխան անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի առաջին մասը պարտադրում է դուրս չգալ Հատուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից: Նշանակվող պատիժը չի կարող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել: Այս պահանջից բացառություն կարող է անել միայն ՀՀ քրեական օրենսգրքի, որը Ընդհանուր մասում նախատեսված հատուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից: ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ: Բանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը չի բովանդակում հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն էականորեն նվազեցնող բացառիկ հանգամանքների ցանկը, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն իրավունք ունի բացառիկ ճանաչել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը: Ընդ որում, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել:

Գործի նյութերից երևում է, որ առաջին ատյանի դատարանը Ռ.Խատոյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից վերադասվել է նույն օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ինչը զգալիորեն փոքրացնում է սկզբնական մեղադրանքի ծավալը և վկայում կատարված հանցագործության նվազ հասարակական վտանգավորության աստիճանի մասին: Բացի այդ, Ռ.-Խատոյանը հանցանք է կատարել առաջին անգամ, նախկինում ոչնչով արատավորված չի եղել, վատառողջ է, տառապում է «խրոնիկական երկկողմանի պիելոնեֆրիտ» 3-րդ աստիճանի (ծանր ձև) հիպերտոնիկ հիվանդությամբ: Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել նրա կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները և ելնելով ամբաստանյալի առողջական վիճակից, հանցագործության կատարմանը մասնակցության աստիճանից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ: Ըստ էության, առաջին ատյանի դատարանը Ռ.Խատոյանի պատիժը ծանրացնող հանգամանք չի գտել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա բացառիկ է ճանաչել առանձին մեղմացնող հանգամանքները՝ առողջական ծանր վիճակը և հանցագործության կատարմանը մասնակցության աստիճանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը շարադրված հանգամանքների գնահատման արդյունքում առաջին ատյանի դատարանը հիմնավոր հետևության է հանգել Ռ.Խատոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին: Դատարանը նրա նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի նորմերին համապատասխան արդարացի պատիժ, որը որոշվել է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի 64-րդ հոդվածի դրույթները: Այն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Անհիմն են վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ առաջին ատյանի դատարանը բավարար չափով ստուգման և գնահատման չի ենթարկել Ռ.-Խատոյանի կատարած հանցանքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հաշվի չի առել, որ նա կատարել է ծանր հանցագործություն, միջոցներ չի ձեռնարկել հարթելու տուժողներին պատճառված վնասը, որոնք էականորեն մեծացնում են հանցավորի և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

Առաջին ատյանի դատարանի դատավճռից երևում է, որ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առել Ռ.Խատոյանի կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Նշելով, որ Ռ.Խատոյանի կողմից կատարված արարքը դասվում է ծանր հանցագործությունների շարքը, վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատիժ նշանակելիս պետք է ելնել ոչ միայն տվյալ տեսակի հանցագործության հասարակական վտանգավորության ընդհանուր գնահատականից, այլև ամբաստանյալի կատարած կոնկրետ գործողությունների գնահատականից, նրա անձից, ինչպես նաև գործով պարզված պատասխանատվոթ-

յունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներից, որոնք առաջին աստիճանի դատարանը լիովին հաշվի է առել ու գնահատել: Բացի այդ, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի այն փաստարկին, թե տուժողներին պատճառված նյութական վնասը հարթելու ուղղությամբ Ռ.Խատոյանի կողմից որևէ միջոց չձեռնարկելը էականորեն մեծացնում է հանցավորի և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ապա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները սահմանած ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատիժ նշանակելիս դատարանը չի կարող հաշվի առնել սույն հոդվածի առաջին մասով չնախատեսված այլ հանգամանքներ: Դա վկայում է այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված ծանրացնող հանգամանքների ցանկը սպառնիչ է և տարածական մեկնաբանման ենթակա չէ: Քանի որ տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողություն չկատարելը նշված չէ այդ ցանկում, այն Ռ.Խատոյանի պատիժը ծանրացնող հանգամանք դիտվել չի կարող:

Վերաքննիչ դատարանը որպես Ռ.Խատոյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առել հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը: Հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելու տակ պետք է նկատի ունենալ ոչ թե հողվածում նախատեսված ծանր հետևանքը, որը համարվում է տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշը, այլ այն հետևանքները, որոնք ավելի վտանգավոր են և էապես բարձրացնում են հանցագործության վտանգավորության աստիճանն ու բնույթը:

Ծանր հետևանքների առաջացումը ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածներում հանդիսանում է հանցագործության հատկանիշ և դրա ուժով այդ հետևանքները չեն կարող լինել պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ: Դրա հետ միասին ՀՀ քրեական օրենսգրքում կան մի շարք հանցագործություններ, որոնցով ծանր հետևանքները հանցագործության հատկանիշներ չեն, սակայն դրանց կատարման արդյունքում ծանր հետևանքներ վրա են հասնում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ, 225-րդ, 242-րդ հոդվածներ և այլն): Այս դեպքում դատարանն իրավունք ունի ծանր հետևանքների առաջացումը ճանաչել պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Այդ հետևանքները պետք է արարքի հետ գտնվեն պատճառական կապի մեջ և ընդգրկվեն հանցավորի դիտավորությամբ:

Քանի որ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների պարզումն էական նշանակություն ունի հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելու հարցը ճիշտ լուծելու համար, անհրաժեշտ է բազմակողմանի հետազոտել պատիժը ծանրացնող հանգամանքների առկայության մասին վկայող գործի նյութերը՝ դատավճռում նշելով ընդունված որոշման շարժառիթը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված են յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքները: Այդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները հաստատվում

են միայն ապացույցների հիման վրա: Մինչդեռ Ռ.Խատոյանի նկատմամբ նշանակված պատժատեսակի և պատժաչափի հարցը քննելիս վերաքննիչ դատարանը դատավճռում չի նշել, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան քրեական օրենքով նախատեսված պատիժը խստացնող ինչ հանգամանքներ են ապացուցված քրեական գործի քննության ընթացքում: Նշելով, որ որպես Ռ.Խատոյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առել հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը, վերաքննիչ դատարանը դատավճռում շարադրված իր հետևությունները պարտավոր էր հիմնավորել կոնկրետ ապացույցներով: Սակայն հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը հիմնավորող փաստական տվյալները դատավճռում բացակայում են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ առումով Ռ.Խատոյանի վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատավճիռը հիմնավորված և պատճառաբանված չէ, չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավճիռը հիմնավորված է, եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար, դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Իսկ դատավճիռը պատճառաբանված է, եթե ապացուցման տրամաբանական և իրավական կանոններին համապատասխան՝ նրանում շարադրված են դատավճռի նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերում բովանդակվող հետևությունները և որոշումները հաստատող բոլոր փաստարկները: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները: Քանի որ օրինական կարող է լինել միայն այն դատավճիռը, որը կայացվել է քրեական դատավարության ընթացքում՝ քրեադատավարական օրենքի նորմերին համապատասխան, չհիմնավորված և չպատճառաբանված դատավճիռն օրինական չէ: Բացի այդ, անհիմն կերպով Ռ.Խատոյանին վերագրելով ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պատիժը ծանրացնող հանգամանքը՝ հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը, վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել է այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են:

Վերաքննիչ դատարանը դատավճռում նշել է, որ առաջին ատյանի դատարանը հանցագործության կատարմանը Ռ.Խատոյանի մասնակցության աստիճանը դիտել է որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, սակայն այն պետք է հանել հանցավորի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների շարքից, քանի որ նշված հանգամանքը սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ և չի կարող կրկին հաշվի առնվել որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Վերաքննիչ դատարանի նշված հետևությունն անհիմն է և չի բխում գործի տվյալներից: Նախ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասում, նշված պա-

տիժը մեղմացնող հանգամանքներից բացի, գոյություն ունեն մի շարք հանգամանքներ, որոնք նույնպես ազդում են արարքի հասարակական վտանգավորության աստիճանի վրա և պետք է հաշվի առնվեն պատիժն անհատականացնելիս: Այդ մասին են վկայում նաև նույն հոդվածի 2-րդ մասի նորմերը, որոնց համաձայն, պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի 1-ին մասում: Այսպես՝ պատիժը մեղմացնելու անհրաժեշտության մասին կարող են վկայել չավարտված հանցավոր գործունեությունը՝ ավարտված հանցավոր գործունեության համեմատությամբ, օժանդակողի ֆունկցիան՝ կազմակերպչի ֆունկցիայի համեմատությամբ և այլն: Առաջին ատյանի դատարանը, ելնելով ամբաստանյալ Ռ.Խատոյանի օժանդակողի դերից և ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, իրավացիորեն հանցագործության կատարմանը նրա մասնակցության աստիճանը դիտել է որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասը և թույլ տալով նույն օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի սխալ կիրառում, Ռ.Խատոյանի մասնակցության աստիճանը որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք հանել է մեղմացնող հանգամանքների շարքից: Ընդ որում, վերաքննիչ դատարանն իր այդ հետևությունը չի հիմնավորել և չի պատճառաբանել, որով թույլ է տվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի խախտում:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքը զգալիորեն ընդլայնել է հանցավոր արարքը բացառող հանգամանքները: Եվ եթե անձը հանցագործություն է կատարում ՀՀ քրեական օրենսգրքի 42-44-րդ, 46-47-րդ հոդվածներում նշված արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների իրավաչափության պայմանների խախտմամբ, ապա քրեական պատասխանատվությունը վրա է հասնում, սակայն այդ հանգամանքները, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, համարվում են պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ: Այստեղ կարևոր է մեկ պայման. դրանք կարող են ճանաչվել մեղմացնող, եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայի մաս չեն, ինչպես, օրինակ՝ հանցամարտ կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 107-րդ հոդված), անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդված) և այլն: Դրանով էլ պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որ եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

Ինչպես երևում է դատավճռից, վերաքննիչ դատարանը չի նշել, թե հանցագործության կատարմանը Ռ.Խատոյանի մասնակցության աստիճանը ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի որ հոդվածով է նախատեսված որպես հանցագործության հատկանիշ, որի ուժով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ հանցագործության կատարմանն անձի մասնակցության աստիճանը խարդախության հատկանիշ չէ, հետևաբար վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները նույնպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են:

Անհիմն է բողոքի այն փաստարկը, թե խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, չեն պարզվել Ռ.Խատոյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող բոլոր հանգամանքները, մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված այն հանգամանքը, որ նա հանցանքը կատարել է նյութական կամ այլ կախվածության ազդեցության տակ: Գործի նյութերում չկան ապացույցներ, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, հաստատեն, որ դատապարտյալը հանցանքը կատարել է նյութական կամ այլ կախվածության ազդեցության տակ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռ.Խատոյանի պատիժը խստացնելու մասին վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված չեն, հետևաբար նրա վերաբերյալ դատավճիռն օրինական չէ: Վերաքննիչ դատարանի կողմից դատական քննության ընթացքում թույլ տրված վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումներն ազդել են պատժի մասով գործով ճիշտ դրոշում կայացնելու վրա: Քանի որ գործի նյութերով հերքվում են վերաքննիչ դատարանի դատավճռում նշված՝ Ռ.Խատոյանի պատիժը խստացնելու մասին բոլոր փաստարկները, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա բեկանել նրա վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատավճիռը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել:

Բեկանել Ռոբերտ Սուրենի Խատոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 2-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-84/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ 102/07թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007թվականի հունիսի 1-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Պարույր Ստյոպայի Բայրամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Պարույր Ստյոպայի Բայրամյանին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը Պ.Բայրամյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 2007 թվականի հունվարի 11-ի դատավճռով դատապարտել ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով:

Ամբաստանյալ Պ.Բայրամյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված պատիժը մեղմացրել է՝ սահմանելով ազատագրվում 1 տարի ժամկետով:

Գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Պ.Բայրամյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, նախկինում աշխատելով «Անի Պլազա» հյուրանոցում որպես անվտանգության աշխատակից, տիրապետելով հյուրանոցի սենյակների դասավորությանը, գողություն կատարելու նպատակով 2006 թվականի հունիսի 20-ին՝ ժամը 04⁰⁰-ի սահմաններում, բաց պատուհանից մուտք է գործել Երևան քաղաքի Մայաթ-Նովա փողոցում գտնվող «Անի Պլազա» հյուրանոցի թիվ 803 սենյակ և այնտեղից գաղտնի հափշտակել է Ֆրանց Փասլերին պատկանող խոշոր չափերի՝ 1 096 334 ՀՀ դրամին համարժեք 2 070 Եվրո, 60 000 ՀՀ դրամ և 4904. 9 ՀՀ դրամին համարժեք 770 սերբիական դինար:

Այնուհետև Պ.Բայրամյանը, շարունակելով իր հանցավոր գործողությունները, նույն օրը, նույն ժամին մուտք է գործել «Անի Պլազա» հյուրանոցի թիվ 809 սենյակը և այնտեղից գաղտնի հափշտակել է Երվանո Կարապետի Նովուգյանին պատկանող խոշոր չափերի՝ 336 512 ՀՀ դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար, 300 000 ՀՀ դրամ, 41 200 ՀՀ դրամ արժողության «Մոտոռուլ» տեսակի բջջային հեռախոս՝ լիցքավորման սարքով և 6 000 ՀՀ դրամ արժողության «Իզի» քարտով:

Բացի այդ, Պ.Բայրամյանը ապօրինի մուտք է գործել նույն հյուրանոցի թիվ 918 սենյակ և այնտեղից գաղտնի հափշտակել Նորա Քեշիշյանին պատկանող խոշոր չափերի՝ 387 000 ՀՀ դրամ արժողության «Քենոն» տեսակի թվային ֆոտոխցիկ:

Վերը նշված հափշտակությունները կատարելուց հետո, Պ.Բայրամյանը դուրս է եկել հյուրանոցից և հեռացել, սակայն Երևան քաղաքի Տերյան փողոցում բռնվել է ոստիկանության աշխատակիցների կողմից և բերման ենթարկվել ոստիկանության Կենտրոնական բաժին:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը պատիժ սահմանելիս խախտել է պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի չի առել կատարված հանցագործության ինչպես հասարակական վտանգավորության, այնպես էլ ծանրության աստիճանը, նյութական օրենքի էական խախտմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը և նշանակել է ակնհայտ մեղմ պատիժ: Պ.Բայրամյանի նկատմամբ նշանակված պատիժը չի կարող ծառայել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրագործմանը:

Ըստ վճռաբեկ բողոքի հեղինակի՝ դատարանը Պ.Բայրամյանի նկատմամբ պատիժ սահմանելիս խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականության սկզբունքը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները:

Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից որպես բացառիկ հանգամանքի տարր նշված է այն, որ Պ.Բայրամյանը հանցագործությունը կատարել է առաջին անգամ՝ կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ: Սակայն քրեական գործում այդ փաստը հաստատող որևէ ապացույց չկա. Պ.Բայրամյանը հայտարարել է միայն, որ գողությունը կատարել է իր ունեցած պարտքերը մարելու համար:

Մեղմ պատիժ նշանակելու բացառիկ հանգամանքների շարքում նշվել է նաև ամբաստանյալի կողմից վնասը կանոնված վերականգնելը և հանցագործության բացահայտմանը մինչև վերջ ակտիվորեն աջակցելը: Այնինչ հանցագործություն կատարելուց հետո Պ.Բայրամյանը փողոցում կասկածանքով բռնվել և բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, որտեղ և նրա մոտից առգրավվել է գողոնը:

Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի՝ Պ.Բայրամյանի բարձրագույն իրավաբանական կրթության առկայության հանգամանքը դատարանի կողմից արհեստականորեն դիտվել է որպես բացառիկ հանգամանքի տարր, որն իբր էականորեն նվազեցնում է կատարած արարքի հասարակական վտանգավորությունը: Մինչդեռ այս հանգամանքին, ինչպես նաև գործի այն տվյալներին, որ ամբաստանյալը հանդիսացել է «Անի Պլազա» հյուրանոցի անվտանգության ծառայության նախկին աշխատակից, պետք է տրվեր հակառակ գնահատական:

Բողոք բերած անձը գտնում է, որ դրական բնութագիրը և կատարած հանցագործության համար ամբաստանյալի զղջալու հանգամանքներն ընդամենը պատասխանատվությունը մեղմացնող են և կարող են հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ օրենքով նախատեսված սանկցիայի սահմաններում պատիժ նշանակելու համար, և դրանք չպետք է դիտվեին որպես ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման հիմքեր:

Բողոքում նշված հիմքերով խնդրվում է բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճիռը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունվարի 11-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանություններով.

Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պատիժ նշանակելիս գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող դատարանները՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, ունեն հայեցողություն դրսևորելու ընդարձակ հնարավորություն: Դա, նախ, պայմանավորված է այն հանգամանքով, որ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները սահմանելիս օրենսդիրը լայնորեն օգտագործում է գնահատողական ձևակերպումներ՝ «արդարացի պատիժ», «հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճան»: Բացի այդ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Դատավորները քրեական գործերը և նյութերը լուծում են իրենց ներքին համոզմամբ՝ ներկայացված ապացույցների պատշաճ հետազոտման հիման վրա»:

Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է նաև անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և զննահատման օրենսդրական պահանջները:

Տվյալ գործով կայացված դատավճռում վերաքննիչ դատարանը պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է ճանաչել և Պ.Բայրամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել այն, որ նա «տուժողներին պատճառված նյութական վնասները վերականգնել է՝ գողոնը ետ վերադարձնելու եղանակով»: Այս հանգամանքը չի կարելի համարել իրական ու Պ.Բայրամյանի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող: Գործի նյութերից երևում է, որ գողոնը տուժողներին հետ վերադարձնելը կախված չի եղել Պ.Բայրամյանի կամքից, քանի որ նա բռնվել և ոստիկանության բաժին բերման է ենթարկվել հանցանքը կատարելուց քիչ անց, իսկ ողջ գողոնը, որը Պ.Բայրամյանի մոտ է եղել, առգրավվել է:

Բարձրագույն իրավաբանական կրթություն ունենալը ևս տվյալ գործով չի կարող դիտվել որպես մեղմացնող հանգամանք, քանի որ այն ողջամտության սահմաններում չի կարող համարվել Պ.Բայրամյանի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք:

Ինչ վերաբերում է «կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ» հանցանքը կատարելուն, ապա վերաքննիչ դատարանի կողմից պատիժը մեղմացնող ճանաչված այս հանգամանքը հաստատվում է միայն ամբաստանյալ Պ.Բայրամյանի ցուցմունքներով այն մասին, որ ինքը պարտքեր է ունեցել: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ դատարանը պարտավոր էր այդ ապացույցը ենթարկել բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու կամ ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով: Այսինքն՝ Պ.Բայրամյանի «կյանքի ծանր հանգամանքների» առկայությունը, ինչպես նաև հանցագործության կատարման հետ այդ հանգամանքների պատճառական կապը (դրանց զուգորդումը) կարող էր հաստատված ճանաչվել միայն ապացուցման պատշաճ ընթացակարգի արդյունքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Պ.Բայրամյանի կողմից հանցանքը առաջին անգամ կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ կատարելը, տուժողներին պատճառված նյութական վնասները գողոնը հետ վերադարձնելու եղանակով վերականգնելը, ինչպես նաև Պ.Բայրամյանի բարձրագույն իրավաբանական կրթությունը նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ դիտելով՝ վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածը:

Ուստի ներկայացված նկատառումներով «առաջին անգամ կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ», «տուժողներին պատճառված նյութական վնասները վերականգնել է՝ գողոնը ետ վերադարձնելու եղանակով», «ունի բարձրագույն իրավաբանական կրթություն» արտահայտությունները ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասի՝ վերջից հինգերորդ պարբերությունից պետք է հանել:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի պահանջին, գտավ, որ այն չի կարող բավարարվել: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կարող է բեկանվել կամ փոփոխվել ի վնաս դատապարտյալ Պ.Բայրամյանի միայն նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքների առկայության դեպքում, ինչպես նաև այն պարագայում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Բողոք բերած անձը բողոքում չի հիմնավորել, որ սույն գործով վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումներն իրենց բնույթով հիմնարար են, և որ դրանց արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը, խախտվել է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վճռաբեկ դատարանը, քննության առնելով սույն գործով վերաքննիչ դատարանի թույլ տված նյութական և դատավարական իրավունքի խախտումների բնույթի հարցը, գտնում է, որ դրանք հիմնարար չեն, քանի որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի՝ 2006 թվականի հունիսի 20-ին՝ հանցագործության կատարման օրը, գործող խմբագրության՝ Պ.Բայրամյանի կատարած հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի շրջանակներում և առանց օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված) ինստիտուտի գործադրման՝ դատարանը կարող էր նշանակել նաև ազատությունից զրկելու հետ չկապված հիմնական պատժատեսակ՝ տուգանք: Այսինքն՝ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայության և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության պայմաններում վերաքննիչ դատարանը, ունենալով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի շրջանակներում առավել մեղմ պատժատեսակ (տուգանք) կիրառելու հնարավորություն, Պ.Բայրամյանի նկատմամբ նշանակել է առավել խիստ պատժատեսակ՝ ազատագրկում: Հետևաբար, վերաքննիչ դատարանի դատավճռով արդարադատության բուն էությունը չի խաթարվել և սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը չի խախտվել:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը մերժել:

Պարույր Ստյոպայի Բայրամյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի փետրվարի 14-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ՝ դրա նկարագրական-պատճառաբանական մասի՝ վերջից հինգերորդ պարբերությունից հանելով «սռաջին անգամ կյանքի ծանր հանգամանքների գուգորդմամբ», «տուժողներին պատճառված նյութական վնասները վերականգնել է՝ գողոնը ետ վերադարձնելու եղանակով», «ունի բարձրագույն իրավաբանական կրթություն» արտահայտությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-118/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ 449/05
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Մ.Պետրոսյան, Հ.Տեր-Աղամյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007թվականի հունիսի 1-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Ալբերտ Արիստակեսի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Ալբերտ Արիստակեսի Ստեփանյանին 2005 թվականի մարտի 9-ին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը 2005 թվականի հունիսի 21-ին կայացրած դատավճռով Ա.Ստեփանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ

հողվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հողվածի 1-ին մասով և դատապարտել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հողվածի 1-ին մասով ազատազրկման 10 (տասը) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հողվածի 3-րդ մասի 3-րդ կետով ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 1-ին մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց տուգանքի:

Առաջին ատյանի դատարանը 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հողվածի կարգով հանցագործությունների համակցությանը պատիժները մասնակիորեն զումարելու սկզբունքով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 11 (տասնմեկ) տարի ժամկետով՝ առանց տուգանքի:

Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2004 թվականի հոկտեմբերի 8-ից:

Ամբաստանյալ Ա.Ստեփանյանի պաշտպան Լ. Բաղալյանը բերել է վերաքննիչ բողոք:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճռով վերաքննիչ բողոքը թողել է առանց բավարարման, իսկ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 21-ի դատավճիռը՝ փոփոխել:

Վերաքննիչ դատարանը Ա.Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հողվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադարձրել է նույն հողվածի 1-ին մասով՝ նկատի ունենալով խուլիգանություն կատարելու համար նրա նախկինում ունեցած դատավճիռները մարվելու հանգամանքը:

Ա. Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հողվածի 1-ին մասով, 258-րդ հողվածի 1-ին մասով, 235-րդ հողվածի 1-ին մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հողվածի 1-ին մասով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հողվածների կիրառմամբ 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 100-րդ հողվածի սանկցիայի սահմաններում ազատազրկման 8 (ութ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հողվածի 1-ին մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 1-ին մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց տուգանքի:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հողվածների հիման վրա 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հողվածի կիրառմամբ նվազ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու սկզբունքով Ա.Ստեփանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց տուգանքի:

Պատիժը նշանակվել է կրելու ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում՝ պատժի սկիզբը հաշվելով 2004 թվականի հոկտեմբերի 8-ից:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճռի դեմ բերել է վճարելի բողոք:

Վճարելի դատարանը 2007 թվականի մայիսի 23-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ա.Ստեփանյանը և գործով տուժող Ա. Խաչատրյանը մանկությունից ճանաչել են միմյանց և գտնվել նորմալ հարաբերությունների մեջ: 1991 թվականի մայիսի 25-ին Ա.Խաչատրյանը, «Պրագա» ռեստորանի մոտ նկատելով, որ Ա. Ստեփանյանը ոգելից

խմիչքի ազդեցության տակ հայտնաբերվել է տալիս քաղաքացիներին, նրան կարգի է հրավիրել: Դրանից փրոկված Ա.Ստեփանյանը սկսել է վիճաբանել Ա.Խաչատրյանի հետ, որը կանխվել է շրջապատի բնակիչների միջամտությամբ: Այդ միջադեպից հետո՝ 1991 թվականի մայիսի 28-ին՝ ժամը 23.30-ի սահմաններում, Ա.Ստեփանյանը «Պրագա» ռեստորանում հանդիպել է Ա.Խաչատրյանին և, հիշելով 3 օր առաջ տեղի ունեցած անախորժ գրույցը, նորից սկսել է վիճաբանել նրա հետ, որը վերածվել է խուլիգանության: Քաղաքացիների միջամտությամբ Ա.Ստեփանյանը դադարեցրել է իր խուլիգանական գործողությունները և հեռացել: Սակայն որոշ ժամանակ անց իր հետ նախօրոք վերցված, ապօրինաբար ձեռք բերված հրազենով վերադարձել է և մոտ տարածությունից դիմահար կրակել Ա.Խաչատրյանի սրտի շրջանին: Վերջինս ստացած վնասվածքից հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է: Հանցագործությունը կատարելուց հետո Ա.Ստեփանյանը մինչև 2004 թվականի հոկտեմբերի 8-ը գտնվել է փախուստի մեջ, իսկ այնուհետև հայտնաբերվել և ձերբակալվել է:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը բնմվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճիռը պատիժը մեղմացնելու առումով ենթակա է փոփոխման՝ նկատի ունենալով, որ դատապարտյալ Ա.Ստեփանյանը տառապում է «տրանզիտոր զարկերակային հիպերտենզիա» հիվանդությամբ և առողջական վիճակի վատթարացման կապակցությամբ շուրջ մեկ տարի գտնվում է «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՀ-ում: Բացի այդ, պետք է հաշվի առնել Ա.Ստեփանյանի դրական բնութագրվելը, կատարածի համար անկեղծորեն զղջալը: Հաշվի պետք է առնել տուժողի իրավահաջորդի՝ հանգուցյալ Ա.Խաչատրյանի կնոջ՝ Ն.Բաղդասարյանի դիրքորոշումը պատիժ նշանակելու հարցում և որևէ պահանջ չունենալու հանգամանքը:

Վճռաբեկ բողոքի հեղինակի կարծիքով, պետք է նկատի ունենալ նաև, որ 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության սահմանված 15 (տասնհինգ) տարվա պայմաններում Ա.Ստեփանյանը հանցագործություն կատարելուց հետո շուրջ 13 (տասներեք) տարի 6 (վեց) ամիս գտնվել է ազատության մեջ և որևէ հանցագործություն չի կատարել:

Ելնելով վերոգրյալից՝ վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է Ալբերտ Արիստակեսի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճիռը փոփոխել՝ Ա.Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտել ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածների հիման վրա 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառմամբ նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու սկզբունքով նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով: Դատավճիռի մնացած մասը բողոքն անփոփոխ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու պահին գործող քրեական օրենքով: Ըստ նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Ա.Ստեփանյանի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելիս ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը ճիշտ է կիրառել 1961 թվականին ընդունված քրեական օրենսգրքի դրույթները, քանի որ Ա.Ստեփանյանի կողմից հանցանքները կատարելու պահին գործել է 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքը, որի 37-րդ հոդվածով նախատեսված՝ նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու սկզբունքն ավելի մեղմ է, քան ներկայումս գործող քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվածը:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ դատապարտյալ Ա.Ստեփանյանը տառապում է «տրանզիտոր զարկերակային հիպերտենզիա» հիվանդությամբ և առողջական վիճակի վատթարացման կապակցությամբ շուրջ մեկ տարի գտնվում է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում: Ա.Ստեփանյանը բնութագրվում է դրական և անկեղծորեն զղջում կատարածի համար: Հաշվի պետք է առնել նաև տուժողի իրավահաջորդ Ն.Բաղդասարյանի դիրքորոշումը պատիժ նշանակելու հարցում և որևէ պահանջ չունենալու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ստեփանյանի պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում վերաքննիչ դատարանը բավարար չափով հաշվի չի առել նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ինչի արդյունքում թույլ է տվել նյութական օրենքի խախտում:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա պետք է բեկանել և փոփոխել, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս նման փոփոխության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արբերտ Արիստակեսի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի դատավճիռը բեկանել և փոփոխել:

Արբերտ Արիստակեսի Ստեփանյանի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտել ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով, ՀՀ քրեա-

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

կան օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածների հիման վրա 1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառմամբ նվազ խիստ պատիժը ավելի խիստ պատժով կլանելու սկզբունքով նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով:

Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-124/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռ կայացրած դատարանի կազմը նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան, Ս.Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ**
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՄԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
փաստաբան **Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻ**
դատախազ **Ա.ԱՎԱԳՅԱՆԻ**

2007 թվականի հունիսի 12-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Սուսաննա Սարգսի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հունիսի 22-ի դատավճռի դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Արթուր Ղազարյանի միջոցով բերված դատապարտյալ Սուսաննա Ներսիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 16-ի դատավճռով Ս.Ներսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ու դատապարտվել է ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 4 /չորս/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ 2 /երկու/ տարի ժամկետով և 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանքով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 4 /չորս/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով ու տուգանք՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով: Կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և սահմանված պատիժը

պայմանական կերպով չի կիրառվել, նշանակվել է փորձաշրջան՝ 2 /երկու/ տարի ժամկետով: Միաժամանակ վճռվել է Ս.Ներսիսյանից հոգուտ գործով տուժող Շ.Միսակյանի բռնագանձել 7.284.100 ՀՀ դրամ, իսկ հոգուտ պետքությունի՝ 643.200 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությանը պատճառված նյութական վնասի հատուցում:

Գործով տուժող Շ.Միսակյանի և դատապարտյալ Ս.Ներսիսյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2006 թվականի հունիսի 22-ի դատավճռով փոփոխել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 16.02.2006 թվականի դատավճիռը, այն է՝ Ս.Ներսիսյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ դատապարտել է ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 4 /չորս/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ 2 /երկու/ տարի ժամկետով և 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ տուգանքով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 4 /չորս/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով ու տուգանք՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Ա.Ղազարյանի միջոցով դատապարտյալ Ս.Ներսիսյանի բերած վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007թ. մայիսի 29-ի որոշմամբ 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Դատապարտյալ Մուսաննա Ներսիսյանը, տեղեկանալով, որ իր ծանոթներից Շուշիկ Միսակյանին գումար է պետք անասնակեր գնելու համար, 1998 թվականի փետրվարին փոխարինարար նրան է տվել 2.500 ԱՄՆ դոլար՝ որպես գրավ վերցնելով ոսկյա զարդեր:

Որոշ ժամանակ անց, համոզված լինելով, որ տուժողն արդեն ծախսել է այդ գումարը, նրանից պահանջել է կամ հետ վերադարձնել գումարը, կամ էլ դրա համար յուրաքանչյուր ամիս վճարել դրա 10 տոկոսը՝ պատճառաբանելով, որ գումարն ինքը վերցրել է իր մորեղբորից:

Դատապարտյալի պահանջած տոկոսաչափը 4 ամիս վճարելուց հետո Շ.Միսակյանը հայտնել է նրան, որ գտնվում է նյութական ծանր վիճակում և այլևս ի վիճակի չէ տոկոսագումար վճարել: Դրանից հետո Ս.Ներսիսյանը դարձյալ պարտքի անվան տակ նրան է տվել 1.500 ԱՄՆ դոլար, սակայն որոշ ժամանակ անց այդ գումարի համար ևս տոկոս է պահանջել, որը Շ.Միսակյանը վճարել է մինչև 1999 թվականի հուլիսը, սակայն նյութական ծանր վիճակում գտնվելու պատճառով չկարողանալով շարունակել վճարումները՝ դատապարտյալից հետ է վերցրել նրա մոտ գրավադրված ոսկյա զարդերը՝ մեկ տարվա ընթացքում ամբողջ մայր գումարը՝ տոկոսների հետ ընդամենը 7.600 ԱՄՆ դոլար, վճարելու պայմանով՝ գրավ դնելով իր առանձնատունը:

Իմանալով, որ տուժողը գումար աշխատելու նպատակով ցանկանում է ամուսնու հետ մեկնել արտագնա աշխատանքների և որպեսզի ճանապարհածախսի համար գումար ձեռք բերի՝ վաճառում է տան գույքը, դատապարտյալը համոզել է նրան կահույքի վաճառքի գործը վստահել իրեն՝ խոստանալով ճանապարհածախսի համար նրա տալ 800 ԱՄՆ դոլար, իսկ վաճառքից ստացված մնացած գումարը հաշվարկել պարտքի դիմաց: Համաձայնվելով նրա հետ՝ Շ.Միսակյանը 2000 թվականի ապրիլի 28-ին ցուցակագրել է վաճառվելիք կահույքը և այն հանձնել Ս.Ներսիսյանին՝ փոխադարձ համաձայնությամբ որպես վաճառքի վերջնական գին ընդունելով 2.700 ԱՄՆ դոլարը: Դատապարտյալը, խախտելով տուժողի հետ ունեցած իր պայմանավորվածությունը, նույն օրը ցուցակում տեղ գտած կահույքը 2.700 ԱՄՆ դոլարի փո-

խարեն ընդամենը 700 ԱՄՆ դոլարով վաճառել է մինչև այդ տոկոսով իրենից պարտքով գումարներ վերցրած Արծրուն Ղարիբյանին և Քաղցրիկ Պապիկյանին, սակայն ոչ այդ գումարը և ոչ էլ ճանապարհի ծախսի համար խոստացած 800 ԱՄՆ դոլարը չի տվել տուժողին: Իր այդ գործողությամբ նա վերջինիս պատճառել է 2.700 ԱՄՆ դոլարին համարժեք 1.439.100 ՀՀ դրամի վնաս:

Այնուհետև, 2001 թվականի փետրվարի վերջին, չսպասելով արտագնա աշխատանքների մեկնած տուժողի վերադարձին, Ս.Ներսիսյանը, ներկայանալով որպես տուժողի տան սեփականատեր, վերջինիս հարևանուհուց պահանջել և ստացել է Շ.-Միսակյանի առանձնատան մուտքի դռան բանալին և տունը վարձով հանձնել տարբեր քաղաքացիների՝ բնակվելու համար, իսկ բնակարանի սենյակներից մեկում պահվող տուժողի գույքի մնացած մասը 2001թվականի մայիսից մինչև 2002 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում գաղտնի հափշտակել է՝ Շ.Միսակյանին պատճառելով 5.845.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Բացի այդ, Ս.Ներսիսյանը, սկսած 1997թ. փետրվարի 4-ից, տարբեր քաղաքացիների՝ պարտքի անվան տակ տոկոսով կանխիկ գումարներ տրամադրելու, ինչպես նաև տուժող Շ.Միսակյանին պատկանող տունը 2001թ. մարտ ամսից վարձով տալու միջոցով պարբերաբար ստացել է եկամուտներ, սակայն 1999թ. սկսած՝ ամեն տարի աղքատության ընտանեկան նպաստ նշանակելու խնդրանքով դիմել է Երևան քաղաքի Էրեբունի համայնքի սոցժառայություն և չունենալով դրա իրավունքը՝ 1999թ. հունվարի 1-ից մինչև 2005թ. հոկտեմբեր ամիսը որպես նպաստ խաբեությամբ ստացել ու հափշտակել է խոշոր չափի՝ 643.200 ՀՀ դրամ գումար:

Այսպիսով՝ անբաստանյալ Ներսիսյանը տուժող Միսակյանի տանից գաղտնի հափշտակել է առանձնապես խոշոր չափի՝ 5.845.000 ՀՀ դրամի գույք, կրկին անգամ խաբեությամբ հափշտակել է նրա առանձնատան կահույքի վաճառքից առաջացած 2.700 ԱՄՆ դոլարին համարժեք 1.439.100 ՀՀ դրամ գումարը, նաև անօրինական կարգով խաբեությամբ ստացել է խոշոր չափի նպաստ՝ 643.200 ՀՀ դրամ:

3.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը, գտնելով, որ վերաքննիչ դատարանի դատավճռով Ս.Ներսիսյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ է, խնդրում է նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և հիմնական պատիժը պայմանական կերպով չկիրառել՝ հաշվի առնելով, որ Ս.Ներսիսյանը 2-րդ կարգի հաշմանդամ է և ունի մշտական նեղ մասնագիտացված բժշկական հսկողության տակ գտնվելու կարիք, ամուսնալուծված է, խնամքին է անչափահաս երեխան, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ամբողջությամբ հատուցել է տուժողին և պետության պատճառած վնասը, ինչը հիմնավորված է տուժող Շ.Միսակյանի հայտարարությամբ ու «ՎՏԲ Հայաստան» բանկի Էրեբունու մասնաճյուղի վճարման տեղեկանքով:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Փաստարան Ա.Ղազարյանի բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ պետք է բեկանել Մուսաննա Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 16-ի դատավճիռին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի՝ դատապարտյալի նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանը մի շարք այլ հարցերի հետ միասին պետք է լուծի նաև այն հարցը, թե անբաստանյալը պատժի ենթակա է, թե ոչ, պատժի ինչ տեսակ պետք է նշանակվի, և պետք է արդյոք նա այն կրի:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ եթե կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելիս դատարանը հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է կայացնել որոշում այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Այդ հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում: Դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

Ինչպես երևում է գործի տվյալներից՝ Ս.Ներսիսյանը նախկինում ոչնչով արատավորված չի եղել, բնութագրվել է դրական, վատառողջ է, որի պատճառով նրան անժամկետ տրվել է հաշմանդամության 2-րդ կարգ, միայնակ իրականացրել է անչափահաս զավակի խնամքը:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ինչպես նրա կողմից կատարած հանցավոր արարքների հանրության համար վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող վերոգրյալ հանգամանքները և ըստ էության չգտնելով պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ, դատապարտել է նրան ազատագրկման և դրամական տուգանքի ու ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ հնարավոր համարելով նրա ուղղումն առանց պատիժ կրելու:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի դատավճիռն ու նրան վերոհիշյալ հոդվածներով դատապարտել ազատագրկման ու դրամական տուգանքի՝ պատճառաբանելով, որ Ս.Ներսիսյանը ոչ միայն չի ընդունել կատարած հանցագործություններն ու չի զղջացել դրանց համար, այլ նաև չի վերականգնել պատճառված նյութական վնասը:

Վերաքննիչ դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Ս.Ներսիսյանն ամբողջությամբ վերականգնել է ինչպես պետությանը, այնպես էլ տուժող Շ.Սիսակյանին պատճառված նյութական վնասը, ինչը հիմնավորվել է ինչպես վճարման անդորրագրերով, այնպես էլ նոտարի կողմից հաստատված տեղեկանքով:

Այսպիսով, գործի տվյալներով հիմնավորված է, որ Ս.Ներսիսյանը նախկինում արատավորված չի եղել, բնութագրվում է դրական, վատառողջ է ու 2-րդ խմբի հաշմանդամ, նրա խնամքին է գտնվում անչափահաս երեխան, ինչպես նաև պատճառված վնասն ամբողջովին վերականգնել է, և տուժողը խնդրել է նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Նշված նկատառումներով դատարանն անհրաժեշտ է համարում բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և օրինական ուժ տալ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 16-ի դատավճռին:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Բեկանել Սուսաննա Սարգսի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 16-ի դատավճռին:

Սուսաննա Սարգսի Ներսիսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-125/07

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
առաջին ատյանի դատարանի դատավճիռ
Գործ թիվ 1-48-07թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Պ.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
դատախազ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ

2007թվականի հուլիսի 13-ին p. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիդյանի վճռաբեկ բողոքը Սերյոժա Պատվականի Հովակիմյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 2-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Սերյոժա Պատվականի Հովակիմյանին 2006 թվականի սեպտեմբերի 11-ին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 2007 թվականի մարտի 2-ին կայացրած դատավճռով Սերյոժա Պատվականի Հովակիմյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտել ազատազրկման 4 տարի ժամկետով:

Գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիդյանը 2007 թվականի մայիսի 30-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 2-ի դատավճռի դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի հունիսի 1-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ս.Հովակիմյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա հարբած վիճակում 2006 թվականի սեպտեմբերի 6-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, իր ընկերուհի, գործով դատապարտյալ Լիանա Սահակյանի հետ միասին Երևան քաղաքի Նորագյուղ թաղամասի թիվ 118 տան բակում վիճարանել են Մուսաննա Ղարիբյանի և Մարիետա Ասատրյանի հետ՝ վերջիններիս կողմից իրենց դիտողություն անելու պատճառով: Վիճարանության ընթացքում Ս.Հովակիմյանը սեռական բնույթի հայտյանքներ է տվել և քաշքշել նրանց՝ Մ.Ասատրյանի առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ. աջ բազկի, աջ ազդրի շրջանների արյունազեղումների, ձախ սրունքի շրջանի քերծվածքի տեսքով: Այդ ժամանակ վեճին միջամտել է Ս.Ղարիբյանի անչափահաս որդին՝ Լևոն Պետրոսյանը և պահանջել բաց թողնել իր մոր թևերը, սակայն Ս.Հովակիմյանը գետնից վերցրած քարերով հարվածներ է հասցրել նրա ձախ ձեռնաթափին և գլխի շրջանին (ձախ ականջին)՝ վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս, որից հետո Լ.Պետրոսյանը փախել է և մտել իրենց տուն: Լ.Պետրոսյանի հայրը՝ Պետիկ Պետրոսյանը, տեսնելով իր անչափահաս որդու վնասվածքները, դուրս է եկել տանից և պահանջել վեճը դադարեցնել, սակայն Ս.Հովակիմյանը, հարվածելով նաև Պ.Պետրոսյանի դեմքին, նրա առողջությանը նույնպես պատճառել է թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ աջ հոնքի, աջ այտային շրջանների քերծվածքների ձևով: Այնուհետև Ս.Հովակիմյանը, նկատելով Մ.Ասատրյանի մյուս քույր Ս.Ղարիբյանին, նրա հասցեին ևս սեռական բնույթի հայտյանքներ տալով, ձեռքով հարվածել է նրա շրթունքին՝ պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ մեղսագրվող արարքի որակման առումով Ս.Հովակիմյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 2-ի դատավճիռը հիմնավորված չէ և ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ, քանի որ քրեական գործի փաստական հանգամանքների սխալ վերլուծության և գնահատման արդյունքում դատապարտյալ Ս.Հովակիմյանի արարքը ստացել է ոչ ճիշտ քրեաիրավական գնահատական:

Ըստ բողոք բերած անձի՝ քրեական գործի նյութերից երևում է, որ Ս.Հովակիմյանի խուլիգանություն կատարելու ընթացքում տուժողներին մարմնական վնասվածք է պատճառել դեպքի վայրից վերցրած քարով, ինչը թե՛ նախաքննության մարմինը և թե՛ դատարանը դիտել են որպես արարքը որակյալ դարձնող հատկանիշ, այսինքն՝ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ կատարված խուլիգանություն:

Ըստ բողոքի հեղինակի՝ դեպքի վայրից վերցված քարի անմիջական գործադրումը չի կարող դիտվել որպես զենքի գործադրմամբ կատարված խուլիգանություն, քանի որ քրեական իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում որպես զենք օգտագործված են գնահատվում այն առարկաները, որոնք հանցավորի կողմից հատուկ

հարմարեցվում են անձանց մարմնական վնասվածք հասցնելու համար մինչև հանցագործություն կատարելը կամ կատարման ընթացքում:

Բողոք բերած անձը գտնում է, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, քանի որ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածի այն մասը, որը ենթակա չէր կիրառման, և չի կիրառվել հոդվածի այն մասը, որը ենթակա էր կիրառման:

Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի՝ չի պահպանվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ հոդվածներով նախատեսված՝ սպացույցների ստուգմանը և գնահատմանը վերաբերող քրեադատավարական օրենքով ներկայացված պահանջները: Այսինքն՝ տվյալ գործով ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ առաջին ատյանի դատարանը, թույլ տալով քրեադատավարական և նյութական օրենքի էական խախտումներ, ճիշտ չեն կիրառել նյութական օրենքը՝ Ս.Հովակիմյանի կատարած հանցանքը սխալմամբ որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Վերը նշված հիմնավորումներով վճռաբեկ բողոքում խնդրվում է բեկանել և փոփոխել Սերյոժա Պատվականի Հովակիմյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 2-ի դատավճռը և Ս.Հովակիմյանին մեղսագրվող արարքը վերադարձնել 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ու սահմանել պատիժ ազատազրկում 3 տարի ժամկետով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանություններով.

Բողոք բերած անձի կողմից Վճռաբեկ դատարանին առաջադրած հարցը հանգում է հետևյալին. կարո՞ղ է արդյոք խուլիգանական գործողությունների ընթացքում դեպքի վայրից վերցրած քարի գործադրումը համարվել խուլիգանության հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) որակյալ դարձնող հատկանիշ, թե՞ ոչ:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի՝

(1) Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև մեկ ամիս ժամկետով:

(2) Նույն արարքը, որը գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

(3) Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝ 1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, 2) գուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով, 3) կատարվել է նախկինում խուլիգանություն կատարած անձի կողմից, 4) գուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով, 5) գուգորդվել է բացառիկ ցինիզմով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

(4) Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշ է արարքը «զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ» կատարելը:

Մինչ այդ գործող օրենսդրությամբ, այն է՝ ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքով տվյալ հանցակազմի ձևակերպումն այլ էր: Այդ օրենսգրքի 222-րդ հոդվածի 4-րդ մասում (վերջին խմբագրություն) օգտագործվում էր «հրազենի կամ դանակի, կատետի կամ սառը զենքի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաների գործադրում» արտահայտությունը:

Ինչպես երևում է, գործող և նախկին քրեական օրենսգրքերը ծանրացնող հանգամանքներում կատարված խուլիգանության հանցակազմի քննարկվող հատկանիշը նկարագրելիս օգտագործում են տարբեր ձևակերպումներ. մեկը՝ «որպես զենք օգտագործվող առարկաների գործադրում» (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 258-րդ հոդված), իսկ մյուսը՝ «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված առարկաների գործադրում» (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 222-րդ հոդված):

Դատարանը գտնում է, որ նշված ձևակերպումների միջև առկա է ոչ միայն խմբագրական (ոչ նորմատիվային), այլև նորմատիվային տարբերություն. ՀՀ նոր քրեական օրենսգրքի 258 հոդվածի տեքստից բացակայում է մարմնական վնասվածքներ հասցնելու (կենդանի նշանակետ խոցելու) համար օգտագործվող առարկայի այն հատկանիշը, որ դա պետք է հատուկ հարմարեցված լինի մարմնական վնասվածքներ հասցնելու համար:

Հետևաբար 2003 թվականի օգոստոսի 1-ից՝ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո, արարքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության հանցակազմով որակելու համար անհրաժեշտ չէ, որ այդ առարկաները հատուկ հարմարեցված լինեն. դրանք կարող են վերցված լինել նաև դեպքի վայրում:

Բննարկվող իրավանորմի դիսպոզիցիայի կառուցվածքից որպես զենք օգտագործվող առարկաների՝ հատուկ հարմարեցված լինելու հատկանիշի դուրս բերումը պետք է գնահատել որպես խնդրող առարկայի վերաբերյալ օրենսդրի մոտեցման ակնհայտ փոփոխություն՝ պայմանավորված դեպքի վայրում վերցված առարկաները որպես զենք օգտագործելու հետ զուգորդված խուլիգանության հանրային վտանգավորության վերագնահատմամբ: Եթե նախկինում դրա աստիճանը գնահատելիս օրենսդիրն էական նշանակություն էր տալիս որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման վաղորդ ծագած դիտավորությանը, ապա ներկայում առավել էական է ինքնին գործադրման փաստը:

Այսպիսով, օրենսդրի դիրքորոշման փոփոխության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ խուլիգանության արդյունքում խաթարվող հասարակական հարաբերությունների բնույթը, ինչպես նաև տուժողին հասցվող վնասի աստիճանը էապես պայմանավորված չէ այն հանգամանքով, թե հանցագործության գործիքը՝ որպես զենք օգտագործվող առարկան, հատուկ հարմարեցված է, թե ոչ, և այն հանցավորի կողմից բերվել է, թե վերցվել է դեպքի վայրից:

Գործի նյութերից երևում է, որ Ս.Հովակիմյանը խուլիզանական գործողությունների ընթացքում գետնից վերցրած քարով երկու անգամ հարվածներ է հասցրել տուժող Լ.Պետրոսյանի ձախ ձեռնաթափին և գլխի շրջանին (ձախ ականջին)՝ նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Քանի որ հանցանքը կատարվել է 2006 թվականի սեպտեմբերի 6-ին՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի գործողության պայմաններում, ուստի առաջին ատյանի դատարանը, Ս.Հովակիմյանի արարքը որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասով, քրեական օրենքը ճիշտ է կիրառել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ գեներլ կամ որպես գեներ օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանության հանցակազմի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը մերժել: Սերյոժա Պատվականի Հովակիմյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 2-ի դատավճռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 107/07

Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի
առաջին ատյանի դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը նախագահող
դատավոր՝ Գ.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
դատախազ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆ

2007թվականի հուլիսի 13-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Տիգրան Ժորայի Շնավոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճիռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Տիգրան Ժորայի Շնավոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճռով Տ.Շնավոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Տ.Շնավոնյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով Ս.Շմավոնյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով նա արդարացվել է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանը Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճիռի դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի մայիսի 30-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ս.Շմավոնյանը 2007 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 13.00-ի սահմաններում, Չարբախի մթերային շուկայի մոտ գտնվող երթուղային տաքսիների կանգառում ձեռք է բերել (գտել է) 3 հատ՝ յուրաքանչյուրը 0.05 գրամ (դեղապատիճ) և 1 հատ 0.1 գրամ (դեղահաբ) «Տրամադոլ» տեսակի հոգեներգործուն բաղադրատարր պարունակող դեղամիջոցներ, որոնք ապօրինի, առանց իրացման նպատակի, անձնական օգտագործման համար պահել է իր մոտ: Դրանցից 2 հատ 0.05 գրամ (դեղապատիճ) դեղամիջոցները 2007 թվականի հունվարի 22-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Երևան քաղաքի Շիրակի փողոցի 2-րդ նրբանցքի 1-ին շենքի թիվ 16 բնակարանում առանց բժշկի թույլտվության գործածել է: Մնացած 1 հատ 0.05 գրամ (դեղապատիճ) և 1 հատ 0.1 գրամ (դեղահաբ) դեղամիջոցներն անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են Ս.Շմավոնյանի բաճկոնի ձախ գրպանից՝ նրան 2007 թվականի հունվարի 23-ին Երևան քաղաքի Արշակունյաց և Շիրակի փողոցների խաչմերուկի մոտակայքից Ոստիկանության Շենգավիթի բաժին բերման ենթարկելուց հետո:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Ս.Շմավոնյանի վերաբերյալ դատավճիռն անհիմն է և այն պետք է բեկանել հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-274-րդ հոդվածները քրեական պատասխանատվություն են նախատեսում թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության համար և ներառված են ՀՀ քրեական օրենսգրքի «Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում:

ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի դիսպոզիցիայում թմրամիջոցներ գործածելու տակ, անկասկած, պետք է նկատի ունենալ նաև թմրադեղերն ու հոգեներգործուն նյութերը. այդպիսին է ՀՀ քրեական օրենսգրքի 266-274-րդ հոդվածների կառուցման տրամաբանությունը:

Վճռաբեկ բողոքի հեղինակի կարծիքով, օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի վերագրում և դիսպոզիցիայում օգտագործված «թմրամիջոցներ» հասկացության մեջ թմրամիջոցներից բացի ներառել է նաև հոգեներգործուն նյութերը: Հակառակ դեպքում կխախտվեր վերոհիշյալ հոդվածների տրամաբանական կառուցվածքը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-274-րդ հոդվածներով նախատեսված արարքները նույնաբնույթ են, և անտրամաբանական է, որ նույնիսկ հոգեներ-

գործուն նյութերի գործածմանը հակելը համարվի քրեորեն պատժելի, իսկ անմիջականորեն գործածելը՝ ոչ:

Բացի այդ, դատարանը հենվել է ուժը կորցրած ճանաչված ենթաօրենսդրական ակտի վրա, քանի որ ինչպես հանցավոր արարքի կատարման, այնպես էլ անձի դատապարտման ժամանակ գործել է «Թմրամիջոցների կամ հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի հունվարի 19-ի թիվ 59 հրամանը, և դատարանը պետք է ղեկավարվեր այդ հրամանով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հեղինակը եզրահանգել է, որ Տ.Շմավոնյանը պետք է մեղավոր ճանաչվեր նաև ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Ելնելով վերոգրյալից՝ վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Տիգրան Ժորայի Շմավոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճիռը և քրեական գործն ուղարկել Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Նույն օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «հանցագործություն է համարվում մեղավորությանը կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»: Հետևաբար՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի՝ Տ.Շմավոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումը ճիշտ է:

Արարքը ճանաչվում է հանցավոր միայն այն դեպքում, երբ առկա են քրեական օրենքով նախատեսված բոլոր հատկանիշները: Հանցագործությունն իրենից ներկայացնում է չորս պարտադիր տարրերի միասնություն, այն է՝ օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ: Նշվածներից թեկուզ մեկի բացակայությունը անձի արարքում վկայում է հանցակազմի բացակայության մասին: ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում առանց բժշկի թույլտվության թմրամիջոցներ, այլ ոչ թե հոգեներգործուն նյութեր գործածելու համար, հետևաբար հոգեներգործուն նյութեր գործածած Տ.Շմավոնյանը չէր կարող քրեական պատասխանատվության ենթարկվել վերոհիշյալ հոդվածով, որը պատասխանատվություն չի սահմանում հոգեներգործուն նյութեր գործածելու համար:

Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Ուստի անհիմն են վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի վերնագրում և դիսպոզիցիայում օգտագործված «Թմրամիջոցներ» հասկացության ներքո պետք է նկատի ունենալ նաև հոգեմերգործուն նյութերը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ Թմրամիջոցների կամ հոգեմերգործուն նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող 266-274-րդ հոդվածները ներառված են «Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում, նույնաբնույթ են և դա բխում է հիշյալ գլխում սահմանված հոդվածների կառուցման տրամաբանությունից:

Իհարկե, ՀՀ քրեական օրենսգրքի «Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում ներառված 266-274-րդ հոդվածներով սահմանված են հանցագործությունների այն տեսակները, որոնք նույնաբնույթ են և ուղղված են համասեռ հասարակական հարաբերությունների որոշակի շրջանակի դեմ: Սակայն համապատասխան արարքը որպես հանցագործություն որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ արարքի հատկանիշները ոչ թե նույնաբնույթ լինեն, այլ ուղղակիորեն նախատեսված լինեն քրեական օրենքով: Ուստի, հոգեմերգործուն նյութեր գործածելը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն հանգամանքին, որ առաջին ատյանի դատարանը հենվել է ինչպես հանցավոր արարքի կատարման, այնպես էլ անձի դատապարտման ժամանակ ուժը կորցրած ճանաչված «Թմրամիջոցների կամ հոգեմերգործուն (հոգեմետ) նյութերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի օգոստոսի 12-ի թիվ 691-Ն հրամանի վրա, ապա հանցանքի կատարման ժամանակ գործել է այդ հրամանը: Դրանից զատ, «Թմրամիջոցների կամ հոգեմերգործուն (հոգեմետ) նյութերի մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի հունվարի 19-ի թիվ 59-Ն հրամանով տրամադրվել վերստին սահմանված է որպես հոգեմետ նյութ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել:

Տիգրան Ժորայի Շմավոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-112/07

Լուռու մարզի առաջին ատյանի
դատարանում դատավճիռ կայացրած
դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Վ.Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ
դատախազ

2007 թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Սամվել Սուրենի Ռևազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 5-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Անհայտ անձի կողմից Ադելինա Հակոբյանի պայուսակը բացահայտ հափշտակելու փաստի առթիվ 2006 թվականի նոյեմբերի 15-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով:

2006 թվականի նոյեմբերի 18-ին ձերբակալվել է Սամվել Սուրենի Ռևազյանը, որը նոյեմբերի 21-ին ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2007 թվականի հունվարի 9-ին Սամվել Ռևազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով և 176-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի հունվարի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 5-ի դատավճռով Սամվել Ռևազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով, 324-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով վերջնական սահմանվել է ազատազրկում 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2006 թվականի նոյեմբերի 18-ից:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 3-րդ կետերով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Սամվել Ռևազյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2006 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 21.00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի 2-5 Ա տան դիմաց բացահայտ հափշտակել է Ադելինա Հակոբյանի՝ 15.000 ՀՀ դրամ արժեքով ձեռքի պայուսակը, որի մեջ եղել են 6000 դրամ, 15.000 ՀՀ դրամ արժեքով 1 հատ «Սոնի Էրիկսոն» մակնիշի բջջային հեռախոս՝ խոսելաքարտով, 10.000 ՀՀ դրամ արժեքով 1 հատ ոսկյա մատանի, 3100 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով բիժուտերիա հանդիսացող զարդեր, ինչպես նաև Ադելինա Հակոբյանի անձնագիրը, սոցիալական քարտը, փաստաբանի վկայականը և գրասենյակի ու տան բանալիները:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Գործի նյութերով հիմնավորվել է, որ Սամվել Ռևազյանը, նկատելով պայուսակը ձեռքին տուժողին, համոզված է եղել, որ այնտեղ կարող են լինել արժեքավոր իրեր, գումար և դրանց տիրանալու ուղղակի դիտավորությամբ բացահայտ հափշտակել է այն: Նա կողոպուտը կատարել է հիվանդանոցում գտնվող հորը ֆինանսական օգնություն ցույց տալու համար: Իր բոլոր ցուցմունքներում Ս.Ռևազյանը նշել է, որ պայուսակը հափշտակելուց և այնտեղ եղած արժեքավոր իրերն ու դրամը վերցնելուց հետո դրանում հայտնաբերել է նաև տուժողի փաստաթղթերը: Գիտակցելով վերջինիս համար այդ փաստաթղթերի կարևորությունն ու նշանակությունը, դրանք պայուսակի հետ գետը չի նետել, այլ պահել է տանը՝ հետագայում որևէ կերպ տուժողին հանձնելու նպատակով: Նա նշել է նաև, որ տուժողի փաստաթղթերն օգտագործելու նպատակ չի ունեցել: Չնայած վերը շարադրվածին, Ա.Հակոբյանի փաստաթղթերը հափշտակելու վերաբերյալ Ս.Ռևազյանի ուղղակի կամ անուղղակի դիտավորությունը հիմնավորող որևէ ապացույց ձեռք չբերելով, նախաքննության մարմինն անհիմն կերպով նրան մեղաազրել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով արարքը: Ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ դատարանը չեն հիմնավորել տուժողի փաստաթղթերը հափշտակելու Ս.Ռևազյանի դիտավորությունը: Հետևաբար Ս.Ռևազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետր-

վարի 5-ի դատավճիռն անօրինական է: Փաստորեն թույլ է տրվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, ուստի բողոքի հեղինակը խնդրում է բեկանել և կարճել Սամվել Ռևազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 5-ի դատավճիռը և այդ մասով դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իսկ դատավճռի մնացած մասը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով թողնել անփոփոխ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանել փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու համար: Այն կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն է: ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածը պարունակում է երկու ինքնուրույն հանցակազմ: Այս հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում քաղաքացու անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթղթեր հափշտակելու համար: Նշված հանցագործության անմիջական օբյեկտը անձնական փաստաթղթերի հետ վարվելու սահմանված կարգն է: Քաղաքացիներից կարևոր անձնական փաստաթղթերի հափշտակությունը տուժողի համար նրա օրինական իրավունքների և շահերի իրականացման դժվարություններ է ստեղծում:

Անձնագրից բացի, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա կարող են լինել կարևոր այլ անձնական փաստաթղթերը (ծառայական վկայականը, կենսաթոշակային գրքույկը, աշխատանքային գրքույկը, ատեստատը, բարձրագույն կրթության վկայականը և այլն):

Այս հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է քաղաքացու անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթղթերը հափշտակելու՝ օրինական տիրապետողից ապօրինաբար և անհատույց վերցնելու մեջ: Փաստաթղթերի հափշտակության եղանակները նույնն են, ինչ որ գույքի հափշտակության դեպքում: Այն կարող է կատարվել ցանկացած ոչ բռնի միջոցով (զաղտնի, բացահայտ, խաբեության միջոցով և այլն): Փաստաթղթերը հափշտակելիս բռնության կիրառումը՝ կախված կիրառված բռնության բնույթից, պետք է լրացուցիչ որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ գլխի հոդվածներով (կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ):

Քաղաքացու անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթուղթ հափշտակելը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը գիտակցի, որ հափշտակում է հատկապես կարևոր անձնական փաստաթղթեր և ցանկանում է կատարել դա: ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթուղթը հափշտակելու ուղղակի դիտավորության ապացույցների առկայության դեպքում: Տուժողի գույքի փոխարեն սխալմամբ կարևոր անձնական փաստաթղթեր հափշտակելը պետք է որակվի որպես անձնական գույքի հափշտակության փորձ: Եթե այդ փաստաթղթերը հափշտակվել են այլ իրերի հետ, օրինակ՝ գտնվել են հափշտակված հագուստի գրպանում, ապա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով կարող է որակվել միայն այն դեպքում, եթե հանցավորը տեղյակ

է, որ իրերի հետ հափշտակում է նաև կարևոր փաստաթղթեր: Ինքնըստիներյան հափշտակված իրերի մեջ անճանազրի կամ կարևոր այլ փաստաթղթերի գտնվելը, եթե չի պարզվել դրանք հափշտակելու դիտավորությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն առաջ բերող հանգամանք չէ:

Այսպիսով՝ անճանական իրերի հետ կարևոր անճանական փաստաթղթերի հափշտակությունը, եթե բացակայում է այդ փաստաթղթերը հափշտակելու դիտավորությունը, չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով:

Ինչպես երևում է գործի նյութերից, որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննվելիս Սամվել Ռևազյանը ցուցմունքներ է տվել, որ իրենց ընտանիքը գտնվել է նյութապես ծանր վիճակում, հիվանդանոցում բուժվող հորը դուրս գրելու համար գումար է պետք եղել, իր ծանոթներից չի կարողացել պարտքով գումար վերցնել և տուժողի պայուսակը հափշտակել է միայն գումար հայթայթելու համար: Պայուսակում եղած փաստաթղթերի մասին տեղյակ չի եղել և դրանք տեսնելով՝ մոլորվել է, սակայն գետը չի նետել՝ մտածելով, որ որոշ ժամանակ անց կտանի և աննկատ կզցի Հալաբյան փողոցում, որպեսզի կարողանան փաստաթղթերը գտնել: Դրա համար էլ այդ փաստաթղթերը պահել է տանը, սակայն իր մտադրությունը չի հասցրել իրականացնել: Ինքը չի իմացել, որ պայուսակում փաստաթղթեր կան, փաստաթղթեր հափշտակել չի ցանկացել, դրանք իրեն պետք չեն եղել և այդ փաստաթղթերից օգտվելու նպատակ չի ունեցել (գ/թ 38-43,63-67):

Դատապարտյալի մայրը՝ Անահիտ Ռևազյանը նույնպես հայտնել է, որ իրենց ընտանիքը գտնվել է նյութապես ծանր վիճակում, իր ամուսինը երկար ժամանակ բուժվել է հիվանդանոցում, նրան դուրս գրելու համար գումար էր պետք, ընտանիքի ողջ հոգսը Սամվելի վրա էր (գ/թ 98-99):

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև դատապարտյալի եղբայր Արա Ռևազյանը (գ/թ 100-102):

Այսպիսով՝ դատապարտյալ Սամվել Ռևազյանը բացահայտ հափշտակել է տուժողի պայուսակը, որի մեջ այլ իրերի հետ (բջջային հեռախոս, ոսկյա մատանի, 6.000 ՀՀ դրամ, բիժուտերիա հանդիսացող զարդեր և այլն) եղել է նաև տուժող Ա.Հակոբյանի անճանազիրը, սոցիալական քարտը և փաստաբանի վկայականը: Ինչպես մինչև պայուսակը տուժողից հափշտակելը, այնպես էլ հափշտակման բուն պրոցեսում Ս.Ռևազյանը տեղյակ չի եղել պայուսակում անճանազրի կամ կարևոր այլ փաստաթղթերի առկայության մասին:

Փաստորեն Ս.Ռևազյանի գործողություններում բացակայում է Ա.Հակոբյանի անճանազիրը և կարևոր այլ փաստաթղթերը հափշտակելու սուբյեկտիվ կողմը՝ ուղղակի դիտավորությունը, ուստի նրա արարքում չկա ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը: Այս պայմաններում անհիմն կերպով Ս.Ռևազյանին վերագրելով ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Կիրառել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են: Հետևաբար անհրաժեշտ է Ս.Ռևազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի առաջին մասով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 5-ի դատավճիռը բեկանել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 415-419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Սամվել Սուրենի Ռևազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 5-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով բեկանել և դադարեցնել քրեական հետապնդումը՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 139/07

Վերաքննիչ դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը՝
Նախագահող դատավոր՝ Մ.Ղազարյան
Դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Ս.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
 Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
 Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
դատախազ Ա.ԱՎԱԳՅԱՆ
պաշտպան Ա.ԵՍԱՅԱՆ
դատապարտյալ Ա.ԴԱՎԹՅԱՆ

2007թվականի օգոստոսի 30-ին p.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճռի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 11-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Արարատ Հովելի Դավթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճռով Ա.Դավթյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով՝ պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելով 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա դատարանը որոշել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ նշանակելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով: Նրանից հօգուտ պետական բյուջեի որոշվել է բռնագանձել 11.297.500 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պետությանը պատճառված նյութական վնասի հատուցում: Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրողը, խնդրելով Ա.Դավթյանի նկատմամբ «պատիժ սահմանել ազատազրկման ձևով»: Վերաքննիչ բողոք է ներկայացրել նաև պաշտպանը, խնդրելով կայացնել արդարացի

ման դատավճիռ: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 11-ի դատավճիռով Ա.Դավթյանի վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանվել է այն պատճառաբանությամբ, որ «քաղիայց չի ներկայացվել», գործում չկա հայցադիմում, այսինքն խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխի, մասնավորապես 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանը վերոհիշյալ դատավճիռների դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը, 2007 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, բողոքն ընդունել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

«Դիլիջան» Ազգային պարկի տեղամասի պետ Արարատ Դավթյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, 2005-2006 թվականներին, իր ենթակայությամբ աշխատող, թիվ 5 պահաբաժնի տեսուչ Գևորգ Անտիյանից պարբերաբար պահանջել է կենդանի խոզեր և դրանց դիմաց թույլատրել է կտրել ծառեր ու փայտանյութը տանել: 2006 թվականի օգոստոսի 25-ին, ստացված ահազանգի հիման վրա, Ազգային պարկի տնօրինության կողմից կազմվել է հանձնաժողով, որը թիվ 5 պահաբաժնում հայտնաբերել է 59 ծառերի ապօրինի անտառահատում: Կատարված հաշվարկի համաձայն պետությանը պատճառված վնասը սակագնային արժեքով կազմում է 2.874.500 ՀՀ դրամ, իսկ ընդհանուր վնասը՝ 14.300.000 ՀՀ դրամ:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Ա.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածների պահանջները: Հաշվի չեն առնվել Ա.Դավթյանի կատարած արարքի հասարակական վտանգավորության աստիճանն ու բնույթը, վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքները՝ այն, որ ապօրինի ծառահատվել է մի ամբողջ անտառամաս, և պատճառված էկոլոգիական վնասի վերականգման համար անհրաժեշտ են տասնյակ տարիներ: Դատարանները անտեսել են նաև այն, որ Ա.Դավթյանը չի ընդունում մեղքը և չի հատուցել պատճառված վնասը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի կողմից դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանելուն, այն պատճառաբանությամբ, որ ոչ նախաքննական մարմնին, ոչ առաջին ատյանի դատարանում, ոչ էլ վերաքննիչ դատարանում քաղաքացիական հայց չի ներկայացվել, ապա բողոքաբերը նշում է, որ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննությունների ժամանակ որպես քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ մասնակցել է «Դիլիջան» Ազգային պարկի աշխատակից Ա.Բեգլարյանը, որն էլ իր ցուցմունքներում պնդել է պետությանը նյութական վնաս պատճառված լինելու փաստը և այն վերականգնելու պահանջը: Բողոքի հեղինակը այդ առնչությամբ նշել է նաև հետևյալը՝ «նկատի ունենալով, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալը ընդգրկել է նաև Ա.Դավթյանի կողմից պետության-

ըն պատճառված վնասի չափը, հետևաբար առանձին քաղաքացիական հայց ներկայացնելու անհրաժեշտություն չի եղել»:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատավճիռը և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 11-ի դատավճիռն ու Ա.Դավթյանի մասով քրեական գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման, ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և քաղաքացիական հայցը բավարարելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե դատարանը, ազատազրկման ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ կայացված դատավճռում որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ նշվել են նրա նախկինում արատավորված չլինելը, դրական բնութագրվելը, խնամքին մեկ անձի առկայությունը, ինչպես նաև հաշվի է առնվել վերջինիս վատառողջ լինելը:

Պալատը գտնում է, որ հանցավորի անձը բնութագրող վերոհիշյալ տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող նշված հանգամանքներն իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու այն հետևության, որ Ա.Դավթյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Ա.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի չեն առնվել կատարված արարքի ծանրությունը և վրա հասած վնասակար հետևանքները: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս բոլոր դեպքերում պետք է բազմակողմանի և օբյեկտիվ գնահատվեն քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները և պարտադիր մատնանշվեն ընդունված որոշման շարժառիթները:

Պալատը գտնում է, որ Ա.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով խախտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, համաձայն որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Բացի այդ, Ա.Դավթյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչ-

պես նաև կանխել հանցագործությունները: Նկատի ունենալով, որ Ա.Դավթյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, այս պայմաններում, չի բխում օրենքի պահանջից, և այդ հիմքով վճռաբեկ բողոք է բերել դատախազը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա Ա.Դավթյանի վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Ինչ վերաբերում է բողոքի՝ քաղաքացիական հայցին վերաբերող մասին, ապա համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի՝ «քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով»: Նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին»: Ինչպես երևում է գործի նյութերից, քրեական գործի քննության ընթացքում հայցադիմում չի ներկայացվել, իսկ հայցադիմումի բացակայության պայմաններում, «Դիվիզան» Ազգային պարկի աշխատակցի ցուցմունքի հիման վրա, քաղաքացիական հայցի բավարարումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից: Ուստի վերաքննիչ դատարանը իրավացի է գտնվել, բեկանելով դատավճիռի այն մասը, որով, առանց հայցադիմումի առկայության, լուծում է տրվել քաղաքացիական հայցին: Սակայն վերաքննիչ դատարանը, բեկանելով դատավճիռը քաղաքացիական հայցի մասով, անորոշ է թողել, չի մատնանշել, թե ինչպիսի հանգուցարումում պետք է ունենա պետությանը պատճառված վնասի հատուցման հարցը: Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածին, որի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց չհարուցելու դեպքում անձն իրավունք ունի քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով»:

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին:

Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, որով անհիմն և չարդարացված կերպով բարելավվել է դատապարտյալի վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված դատական ակտը չի համապատասխանում արդարության պահանջներին: Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճիռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 11-ի դատավճիռը ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-151/07

ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի
դատական կոլեգիայի դատավճիռը
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Հ.Դանիելյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
փաստաբան **Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻ**
դատապարտյալ **Ա.ՈՒՆՈՒՄՅԱՆԻ**

2007 թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դեռևս գ դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Արմեն Ալբերտի Ունուսյանի կողմից հավատարմագրված փաստաբան Ա.Ղազարյանի միջոցով բերված վճռաբեկ բողոքը 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճիռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Արմեն Ալբերտի Ունուսյանը ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճռով ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով, 99-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով և 37-րդ հոդվածի համակցությամբ դատապարտվել է ազատազրկման 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ Արմեն Ունուսյանի վերաբերյալ ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճիռը թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ գանգատները՝ առանց բավարարման:

ՀՀ նախագահի 1999 թվականի ապրիլի 30-ի ՆՀ-244 հրամանագրով Ա.Ունուսյանի պատիժը կրճատվել է 4 (չորս) տարով և թողնվել է կրելու ազատազրկում 11 (տասնմեկ) տարի ժամկետով:

Մալաթիա-Մերաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 1999 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ Ա.Ունուսյանը, համաձայն ՀՀ ուղիչ աշխատանքային օրենսգրքի 65-րդ հոդվածի, ուժեղացված ռեժիմի ուղիչ աշխատանքային գաղութից տեղափոխվել է գաղութ-բնակավայր՝ մնացած 3 (երեք) տարի 7 (յոթ) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով պատիժը կրելու համար:

Վճռաբեկ դատարանը ՀՀ գլխավոր դատախազի բողոքի հիման վրա 2000 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ Արմեն Ունուսյանի վերաբերյալ ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշման մեջ մտցրել է փոփոխություն, այն է՝ Ա.Ունուսյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով մեղսագրված հանցագործությունը վերաորակել է նույն օրենսգրքի 102-րդ և 103-րդ հոդվածներով և սահմանել ազատազրկում երեքական տարի ժամկետով, իսկ 183-րդ հոդվածի 2-րդ մասով նշված դատավճիռն ու որոշումը թողել է անփոփոխ: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները համակցել է նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժի մեջ կլանելու սկզբունքով ու վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 10 (տասը) տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանը Ա.Ունուսյանի նկատմամբ կիրառել է «ՀՀ անկախության հռչակման տարեդարձի առթիվ ամնիստիայի մասին» 1992 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՀ օրենքի 5-րդ կետի «բ» ենթակետը, «ՀՀ Սահմանադրության ընդունման կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 1995 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման 4-րդ կետի «բ» ենթակետը և «ՀՀ անկախության հռչակման 7-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման 4-րդ կետի «բ» ենթակետը և նրան ազատել պատժի հետագա կրումից:

Դատապարտյալ Ա.Ունուսյանի կողմից հավատարմագրված փաստաթղթերի միջոցով բերված բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ա.Ունուսյանը աշխատել է ՀՀ ներքին գործերի (այսուհետ՝ ՆԳ) նախարարության հասարակական կարգի պահպանության բաժնում որպես տեսուչ: 1992 թվականի հունիսի 5-ին ՆԳ նախարարության կողմից կազմակերպված ստուգայցային միջոցառմանը մասնակցելու նպատակով ընդգրկվել է միլիցիայի 5 աշխատակիցներից կազմված օպերատիվ խմբում: ՆԳ նախարարության շենքի բակում անցկացված հրահանգավորումից հետո խումբը պետավտոտեսչության «ԳԱԶ-24» մակնիշի 01-09 ԱԴԱ պետհամարանիշի ավտոմեքենայով Երևանի նախկին Կալինինի փողոցով մեկնել է իրենց համար առանձնացված ծառայության վայրը՝ Էջմիածնի շրջանի Փարաբար գյուղ: Կալինինի և Մալիսի 9-ի փողոցների խաչմերուկում նկատելով իրենցից առաջ համընթաց ուղղությամբ խաչմերուկին մոտեցած «ՎԱԶ-2107» մակնիշի, առանց հետևի պետհամարանիշի, մզեցված ապակիներով ավտոմեքենան՝ խմբի անդամ Գ.-Հովհաննիսյանը նշան է արել կանգնել, սակայն հիշյալ ավտոմեքենայի վարորդ, գործով տուժող Արման Եսայանը չի կատարել միլիցիայի աշխատակցի պահանջը և դիմել է փախուստի:

Օպերատիվ խումբը հետապնդել է փախչող ավտոմեքենան, որի ընթացքում Արմեն Ունուսյանն իր մոտ եղած «Կալաշնիկով» տեսակի ինքնաձիգ գեներով նախագուշական կրակոցներ է արձակել, սակայն Արման Եսայանը դարձյալ չի կանգնել և շարունակել է փախչել դեպի Մերաստիա փողոցի կողմը:

Երբ Երևանյան լճի և Էջմիածնի խճուղու միջև ընկած տարածքում պետավտոտեսչության ավտոմեքենան ձախ կողմից մոտեցել է փախչող ավտոմեքենային, Ա.Ունուսյանը այն կանգնեցնելու նպատակով դրա ուղղությամբ արձակել է կրակոցներ և հետևի նստատեղին նստած ուղևոր Սիեր Գաբրիելյանին պատճառել կյանքի հետ անհամատեղելի ծանր մարմնական վնասվածք, որի հետևանքով վերջինս նույն օրը հիվանդանոցում մահացել է:

Շարունակելով հետապնդումը՝ Սերաստիա և Շահումյան 1-ին փողոցների խաչմերուկի մոտ միլիցիայի ավտոմեքենան հասել-անցել է հետապնդվող ավտոմեքենան և փակել նրա ճանապարհը: Ա.Ունուսյանը, ընթացքի ժամանակ իջնելով «ԳԱԶ-24» մակնիշի ավտոմեքենայից և հայտնվելով դեպի իրեն ընթացքը շարունակող «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի առջևի ձախ մասում, վերջինիս ուղղությամբ արձակել է կրակոցներ՝ այն կանգնեցնելու նպատակով: Դրա հետևանքով ավտոմեքենայի վարորդ Արմեն Արայի Եսայանին պատճառվել է մահ, իսկ մյուս ուղևոր Կարեն Մարգարյանին՝ նվազ ծանր մարմնական վնասվածք:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Ա.Ունուսյանի վերաբերյալ ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշումը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ:

Տուժող Ա.Եսայանը փախուստի դիմելու ընթացքում «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան վարել է անթույլատրելի բարձր արագությամբ և խախտելով երթևեկության կանոնները՝ իր գործողություններով ստեղծել է բազմաթիվ վթարային իրավիճակներ, իրական վտանգի տակ դրել երթևեկության մյուս մասնակիցների կյանքն ու առողջությունը: Բացի այդ, «ՎԱԶ-2107» ավտոմեքենայի հետևի պետհամարանիշի բացակայությունը, մզեցված ապակիներով լինելն ու միլիցիայի աշխատակիցների օրինական պահանջներին չենթարկվելն օպերատիվ խմբի մոտ տպավորություն է ստեղծել, որ իրենք գործ ունեն հանցագործների հետ:

Բողոքի հեղինակի կարծիքով, դատարանը հաշվի չի առել այն, որ ավտոմեքենան կանգնեցնելու համար ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները՝ տրվել են լուսային և ձայնային ազդանշաններ, արձակվել նախազգուշական կրակոցներ: Միայն դրանից հետո է Ա.Ունուսյանը կրակոցներն ուղղել «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ՝ փորձելով վերջինիս անվաղողը վնասելու միջոցով հարկադրել նրան կանգնելու:

Ըստ բողոք բերած անձի՝ Ա.Ունուսյանի կողմից «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի առջևի ձախ մասի ուղղությամբ արձակված կրակոցները նույնպես հետապնդել են նշված ավտոմեքենան կանգնեցնելու նպատակ: Մասնավորապես, երբ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան մոտեցել է Սերաստիա և Շահումյան 1-ին փողոցների խաչմերուկի մոտ գտնվող կանգառին և ընթացքը դանդաղեցրել է, հետապնդողների ավտոմեքենան առաջ է անցել վերջինից: Այդ պահին Ա.Ունուսյանը դուրս է թռչել ավտոմեքենայից ու հայտնվել ընթացքը դեպի իրեն շարունակող «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի առջևի ձախ մասում: Վերջինիս դեպի իրեն ընթանալը ընկալելով՝ որպես իր անձի դեմ ուղղված ոտնձգություն՝ արձակել է կրակոցներ՝ այն կանգնեցնելու նպատակով: Միայն այդ բանից հետո է «ՎԱԶ-2107» մակնիշի ավտո-

մեքենան թեքվել աջ, բարձրացել մայրի վրա և առաջ ընթանալով՝ բախվել է ցանկապատին ու կանգ առել:

Քրեական գործի քննությանը պարզվել է, որ Ա.Ունուսյանի գործողությունները հիմնված են եղել ՀՀ նախագահի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի հրամանագրի և ՀՀ գլխավոր դատախազի 1992 թվականի ապրիլի 10-ի միջնորդության, «Զինված հանցագործ խմբավորումների դեմ պայքարի ակտիվացման, հետախուզվող անձանց և ավտոմեքենաների հայտնաբերման, ապօրինի պահվող զենքի ու զինամթերքի առգրավման ուղղությամբ միջոցառումների» վերաբերյալ ՀՀ ՆԳ նախարարի 1992 թվականի մայիսի 27-ի հրամանի, «Ժողիրդային միլիցիայի մասին» 1991 թվականի մայիսի 6-ի ԽՍՀՄ օրենքի պահանջների վրա:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հեղինակը եզրահանգել է, որ Ա.Ունուսյանի գործողություններում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները բացակայում են:

Ելնելով վերոգրյալից՝ վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է Արմեն Ալբերտի Ունուսյանի վերաբերյալ ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշումը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել և նրան այդ մասով ճանաչել արդարացված:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Համաձայն 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի՝

«Իշխանագանցությունը կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից դիտավորյալ կերպով այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են գալիս օրենքով նրան վերապահված իրավունքների և լիազորությունների սահմաններից, եթե այն էական վնաս (նյութական վնասի դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարի (արժեքի)) է պատճառել պետական կամ հասարակական շահերին, կամ քաղաքացիների՝ օրենքով պաշտպանվող իրավունքներին ու շահերին՝ պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև երեք տարի ժամանակով և տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև վաթսուհինգապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև երկու տարի ժամանակով և տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև վաթսուհինգապատիկի չափով, կամ պաշտոնական կարգից հեռացվելով և տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև վաթսուհինգապատիկի չափով:

Իշխանագանցությունը կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը, եթե այն զուգորդվել է բռնության, զենք գործադրելու, կամ տուժողի համար տանջալից և նրա անձնական արժանապատվությունը վիրավորող գործողությունների հետ՝ պատժվում է ազատազրկմամբ երեքից մինչև տասը տարի ժամանակով և տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսուհինգապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Ա.Ունուսյանի կողմից իշխանագանցություն թույլ տալու կամ իր պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելու փաստը հավաստելու համար անհրաժեշտ է պարզել, թե կոնկրետ որ օրենքով են եղել սահմանված նրա լիազորությունները:

րը, ինչումն է եղել դրանց բնույթը, ինչպես նաև վեր հանել այն հատուկ պայմանները, որոնց առկայությամբ նա կարող էր գործել:

Անհրաժեշտ է նաև բացահայտել նկարագրված հանցակազմը բնութագրող այնպիսի պարտադիր հատկանիշի առկայությունը, ինչպիսին է պաշտոնատար անձի կողմից օրենքով իրեն վերապահված իրավունքների և լիազորությունների սահմաններից ակնհայտորեն դուրս գործողություններ կատարելը: Սա նշանակում է, որ պաշտոնատար անձը պետք է հստակ գիտակցի, որ գործում է օրենքով իրեն վերապահված իրավունքների և լիազորությունների սահմաններից բացահայտ դուրս:

Համաձայն 1992 թվականի հունիսի 5-ի դրությամբ գործող 1991 թվականի մարտի 6-ին ընդունված «Խորհրդային միլիցիայի մասին» ԽՍՀՄ օրենքի 15-րդ հոդվածի՝ միլիցիայի աշխատակիցները տրանսպորտային միջոցները կանգնեցնելու համար դրանք վնասելու միջոցով իրավունք ունեն օգտագործել զենք, եթե վարորդն իրական վտանգի տակ է դնում քաղաքացիների կյանքը և առողջությունը և չի ենթարկվում կանգնելու՝ միլիցիայի աշխատակիցների մեկից ավելի պահանջներին:

Ընդ որում, 2001 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը նույնպես ոստիկանության ծառայողներին իրավունք է վերապահում հրազեն օգտագործել տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդը իրական վտանգ է ստեղծում քաղաքացիների կյանքի ու առողջության համար և չի ենթարկվում ոստիկանության ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին:

Ինչպես երևում է գործի նյութերից, Երևանի նախկին Կալինինի և Մայիսի 9-ի փողոցների խաչմերուկի մոտ ժամը 19-20-ի սահմաններում միլիցիայի աշխատակիցները նկատել են առանց հետևի պետհամարանիշի, մզեցված ապակիներով «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան և ստուգման նպատակով այն կանգնեցնելու նշան են արել: Սակայն «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան լուսացույցի կարմիր ազդանշանի պայմաններում դիմել է փախուստի: Միլիցիայի աշխատակիցները, կարծելով՝ մեքենան գողացված է, սկսել են այն հետապնդել: Այդ ընթացքում լուսային ու ձայնային ազդանշաններով փորձել են կանգնեցնել փախչող ավտոմեքենան, սակայն վերջինս չի ենթարկվել միլիցիայի աշխատակիցների պահանջներին: Այնուհետև Ա.Ունուսյանն արձակել է նախազգուշական կրակոցներ, սակայն «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ա.Եսայանը դարձյալ չի ենթարկվել կանգնելու՝ միլիցիայի աշխատակիցների պահանջներին և բարձր արագությամբ շարունակել է փախուստը Գարեգին Նժդեհի հրապարակի ուղղությամբ: Այնուհետև Ա.Ունուսյանը կրակոցներն ուղղել է դեպի «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան՝ փորձելով վերջինիս անվաղորդ վնասելու միջոցով հարկադրել նրան կանգնելու: Շարունակելով հետապնդումը՝ Սերաստիա և Շահումյան 1-ին փողոցների խաչմերուկի կանգառի մոտ միլիցիայի աշխատակիցներին հաջողվել է շրջանցել «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան և փակել դրա ճանապարհը: Այդ պահին Ա.Ունուսյանը դուրս է թռչել ավտոմեքենայից ու հայտնվելով «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի առջևի ձախ մասում՝ դրա ընթացքը կասեցնելու նպատակով արձակել է կրակոցներ: Դրանից հետո «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան թեքվել է դեպի աջ, հարվածել ցանկապատին ու կանգ առել:

Գործի նշված փաստական հանգամանքները հիմնավորվել են ինչպես դատապարտյալ Ա.Ունուսյանի (հ.1 գ.թ. 29-34, 196-203, 243-249, հ.2 գ.թ. 170-174, հ. 3 գ.թ. 26-161), այնպես էլ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայում գտնված տուժող Կ.Մարգարյանի (հ.1 գ.թ. 55-57, 63-66, 149-161, 243-249, հ.2 գ.թ. 17-19, 20-25, հ. 3 գ.թ. 26-161), որպես վկա հարցաքննված օպերատիվ խմբի անդամեր Ռ.-Քոչարյանի, Գ.Հովհաննիսյանի, Գ.Գրիգորյանի և Ս.Առաքելյանի (հ.1 գ.թ. 35-37, 38-42, 43-46, 47-50, 102-112, 113-117, 141-148, 183-192, հ.2 գ.թ. 20-25, 162-164, հ.3 գ.թ. 26-161), դեպքի ականատես Ա.Պիվազյանի (հ.1 գ.թ. 258-262) ցուցմունքներով:

Փաստորեն, տուժող Ա.Եսայանը Երևան քաղաքի բանուկ հատվածով ժամը 19-20-ի սահմաններում, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան վարել է անթույլատրելի բարձր արագությամբ: Դրանով իսկ ստեղծել է վթարային իրավիճակներ և իրական վտանգի տակ դրել քաղաքացիների կյանքն ու առողջությունը: Չնայած «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան կանգնեցնելու նպատակով միլիցիայի աշխատակիցների կողմից տրված բազմաթիվ լուսային և ձայնային ազդանշաններին՝ Ա.Եսայանը որևէ կերպ չի ցանկացել կանգնեցնել այն: «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան չի կանգնել նույնիսկ այն ժամանակ, երբ Ա.Ունուսյանն արձակել է նախագուշակյան կրակոցներ: Հետևաբար, նման պայմաններում Ա.Ունուսյանի կողմից գեներ օգտագործելը եղել է իրավաչափ, քանի որ ուղղված է եղել տուժողների հակաիրավական վարքագիծը կանխելուն: Բացի այդ, Ա.Ունուսյանի կողմից դեպի «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան արձակված կրակոցները ոչ թե ուղղված են եղել դրա մեջ գտնվող անձանց, այլ նպատակ են հետապնդել վնասելու միջոցով կանգնեցնել այդ ավտոմեքենան: Դա հաստատվել է նաև դատաձգաբանական, ինչպես նաև դատաբժշկական, դատաձգաբանական և դատահետքաբանական համալիր փորձաքննությունների եզրակացություններով (հ.2 գ.թ. 113-131, 154-161):

Այսինքն՝ կոնկրետ դեպքում Ա.Ունուսյանը գործել է «Խորհրդային միլիցիայի մասին» ԽՍՀՄ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

Ա.Ունուսյանի նկարագրված գործողությունները հիմնված են եղել նաև ՀՀ նախագահի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի հրամանագրի և ՀՀ գլխավոր դատախազի 1992 թվականի ապրիլի 10-ի միջնորդության, «Ձիմված հանցագործ խմբավորումների դեմ պայքարի ակտիվացման, հետախուզվող անձանց և ավտոմեքենաների հայտնաբերման, ապօրինի պահվող զենքի ու զինամթերքի առգրավման ուղղությամբ միջոցառումների» վերաբերյալ «Հրազեն-92» պայմանական անվամբ ՀՀ ՆԳՆ 1992 թվականի մայիսի 27-ի հրամանով հաստատված պլանի պահանջների վրա:

Ուստի անհիմն է որպես մեղադրյալի պատասխանատվության կանչելու մասին որոշման, ինչպես նաև ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճռում տեղ գտած հետևությունը Ա.Ունուսյանի կողմից առանց անհրաժեշտության գեներ օգտագործելու վերաբերյալ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են եղել օրենքով նախատեսված հատուկ պայմաններ, որոնց առկայությամբ Ա.Ունուսյանը կարող էր գեներ օգտագործել: Հետևաբար, նրա արարքում բացակայում է ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Նման պայմաններում անհիմն կերպով Ա.Ունուսյանին վերագրելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-ին մասով նախատեսված արարքը՝ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման:

Վերը նշված ռյութական իրավունքի խախտումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 397-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշումը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանելու և հանցակազմի բացակայության պատճառով այդ մասով գործի վարույթը կարճելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ գործով կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 415-419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Բողոքը բավարարել: Արմեն Ալբերտի Ունուսյանի վերաբերյալ ՀՀ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1993 թվականի մայիսի 27-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ գերագույն դատարանի նախագահության 1993 թվականի հուլիսի 16-ի որոշումը 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել և այդ մասով գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Բ` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-142/07

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի
գործ հ.245/07 դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ժ.Հովսեփյան
դատավորներ՝ Մ.Արղամանյան, Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻԻՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**

2007թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքն Արթուր Աբերտի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 21-ի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 14-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Սույն քրեական գործը հարուցվել է 2006 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

2007 թվականի հունվարի 2-ի որոշմամբ Արթուր Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով:

2007 թվականի փետրվարի 20-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 21-ի դատավճռով Արթուր Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 1 տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Դատարանը միաժամանակ վճռել է Ա.Սարգսյանից հօգուտ պետրոյջեի բռնագանձել 10.715.000 ՀՀ դրամ, որից 3.601.500 ՀՀ դրամը որպես հանցագործությանը պատճառված վնասի հատուցում:

Ամբաստանյալ Ա.Սարգսյանի կողմից իր նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնելու առումով բերված վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի մայիսի 14-ի դատավճռով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը 2007 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արթուր Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ աշխատելով «Հայանտառ» ՊՈԱԿ «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Սյունիքի անտառպետության անտառապետ, հանդիսանալով պաշտոնատար անձ, պաշտոնական դիրքն օգտագործելու միջոցով՝ իր պահպանությանը հանձնված Սյունիքի անտառպետության թիվ 5 պահաբաժնի «Յանցախ» կոչվող անտառամասից 2006 թվականի հունիս-օգոստոս ամիսների ընթացքում Սյունիքի մարզի Կաղնուտ գյուղի բնակիչներ Սամվել Օհանյանի, Արման Հայրապետյանի և Արմեն Օհանջանյանի միջոցով, բենզաօդոցի գործադրմամբ ապօրինի կերպով հատել է 265 հատ կաղնի, բոխի, հացենի և տանձենի տեսակի տարբեր տրամագծի ծառեր, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 3.601.500 ՀՀ դրամի գույքային վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը գտնում է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները Ա.Սարգսյանին դատապարտելով ազատազրկման 1 տարի ժամկետով՝ թույլ են տվել նյութական իրավունքի խախտումներ, այն է՝ խախտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված արդարության և պատասխանատվության անհատականացման ու ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի չի առնվել հանցագործության բնույթը, կատարված հանցագործության հասարակական բարձր վտանգավորությունն ու ծանրության աստիճանը, այն, որ կարճ ժամանակահատվածում ապօրինի կարգով ծառահատվել է ամբողջ անտառամաս՝ կտրվել է կաղնի, բոխի, հացենի և տանձենի տեսակի 265 հատ ծառ և բնությանը պատճառվել է 10.715.000 ՀՀ դրամի վնաս: Դատարանն անտեսել է պատճառված էկոլոգիական վնասը, որ անտառահատված տարածքի վերականգնման համար անհրաժեշտ են տասնյակ տարիներ: Անտեսվել է նաև, որ պատճառված վնասից ոչ մի դրամ չի վերականգնվել: Մինչդեռ հանցագործություն կատարած անձը, որը կոչված է եղել անտառն ապօրինի անտառահատումներից պահպանելու, ինքն է կատարել նշված հանցագործությունը և դատավճռով մույնիսկ չի գրկվել հանցագործության բնույթի հետ առնչվող որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

Գտնելով, որ սույն գործով թույլ են տրվել նյութական օրենքի էական խախտումներ և Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն

Էական նշանակություն կունենա դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառության համար, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Արթուր Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի 2007 թվականի մարտի 21-ի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 14-ի դատավճիռները և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Բողոքում նշվել է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը չի բացառում ավելի խիստ պատիժ նշանակելը, եթե գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն ամրագրել է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս հանդգլի, որ դրանով կհասնի պատժի վերը նշված նպատակներին, որոնք փոխկապակցված և փոխհամաձայնեցված են (մեկ նպատակը ենթադրում է մյուսները և յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին): Այսինքն՝ պատժի նպատակներին հասնելու երաշխիք է հանցագործություն կատարած անձի նկատմամբ արդարացի, արարքի ծանրությանը և հասարակական վտանգավորությանը համապատասխան պատիժ նշանակելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, որոշիչ հանգամանքներ են պատժի տեսակը և չափը որոշելու հարցում:

Այսինքն՝ դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության համար վտանգավորության աստիճանի վրա (հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, վնասի չափը և այլն): Դատարանը հանրության համար վտանգավորության բնույթը որոշելու ժամանակ պետք է պարզի և հաշվի առնի նաև պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը հանցանքի կատարման պահին:

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը: Դրանք բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում են պատժի վրա:

Քրեական օրենքի Ընդհանուր մասի վերը թվարկված դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի, այնպես էլ պատժաչափի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

Մույն գործով առաջին ատյանի դատարանը Ա.Սարգսյանի նկատմամբ ազատազրկման ձևով գրեթե նվազագույն պատիժ նշանակելիս դատավճռում նշել է, որ հաշվի է առնում կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, իսկ դատապարտյալի խոստովանական ցուցմունք տալը, խնամքին երեք անչափահաս երեխա (մեկը՝ մինչև տասնչորս տարեկան) ունենալը դիտել է որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ: Միևնույն ժամանակ դատարանն արձանագրել է, որ նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ գործի նյութերում չկան:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքը՝ պատժի մեղմացման խնդրանքով, առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ բողոքն առանց բավարարման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը բավարար չափով ստուգման ու գնահատման չի ենթարկել դատապարտյալ Ա.Սարգսյանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները, անտեսել է գործի նյութերում առկա՝ դատապարտյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքը:

Մասնավորապես, գործի նյութերից երևում է, որ Ա.Սարգսյանը, հանդիսանալով «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Մյուսիքի անտառպետության անտառապետ, ի պաշտոնե կոչված լինելով անտառը պահպանել այլ անձանց կող-

մից կատարվող ապօրինի անտառահատումներից, ինքն է կատարել այդպիսի հանցավոր գործողություններ: Նրա կողմից կարճ ժամանակահատվածում ապօրինի հատվել է մի ամբողջ անտառամաս՝ 265 հատ տարբեր տեսակի ծառեր: Այդ հանցագործությանը պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափի նյութական վնասը կազմել է 3.601.500 ՀՀ դրամ: «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված սակագների համաձայն՝ տվյալ դեպքում հատուցման ենթակա գումարի ընդհանուր չափը կազմում է 10.715.000 ՀՀ դրամ: Պատճառված վնասից որևէ գումար հատուցված չէ:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածը կոչված է պաշտպանելու մարդկանց առողջության և կենսագործունեության պայման հանդիսացող բնական միջավայրի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Իսկ այդ հարաբերությունները սոցիալական տեսանկյունից Հայաստանի Հանրապետության համար ունեն կենսականորեն կարևոր նշանակություն: Դա հաշվի առնելով, ինչպես նաև սույն գործի փաստական հանգամանքները, մասնավորապես հատված ծառերի թվաքանակը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության հետևանքով պատճառվել է Էկոլոգիական այնպիսի վնաս, որի վերականգնման համար անհրաժեշտ կլինի երկարատև ժամանակ և մեծ ջանք: Այսինքն՝ դատապարտյալն իր հանցավոր գործողություններով պատճառել է ծանր հետևանքներ, որոնք պատճառական կապի մեջ են գտնվում հանցավոր արարքի հետ: Հետևապես առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ դատապարտյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք, որը բարձրացնում է կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, և որը դատարանի կողմից հաշվի չի առնվել:

Փաստորեն, առաջին ատյանի դատարանը Ա.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս զնահատության չի արժանացրել գործի բոլոր հանգամանքները, հաշվի չի առել նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքի առկայությունը, պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, բնույթը, որոնք բարձրացնում են կատարած հանցագործության վտանգավորության աստիճանը: Արդյունքում Ա.Սարգսյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ:

Վճռաբեկ դատարանը վերոշարադրյալ հիմնավորումներով գտնում է, որ առաջին ատյանի դատարանը Ա.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս խախտել է քրեական օրենսդրության՝ արդարության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները: Հիշյալ սկզբունքների խախտումները հանգեցրել են Ա.Սարգսյանի նկատմամբ ակնհայտ մեղմ անարդարացի պատիժ սահմանելուն:

Նյութական իրավունքի նշված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի և 397-րդ հոդվածի համաձայն, հիմք են հանդիսանում Արթուր Սարգսյանի վերաբերյալ դատավճիռները բեկանելու համար: Նկատի ունենալով նաև այն, որ վերաքննիչ դատարանը, գործը քննելով պատժի մեղմացման առումով բերված ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա, վերջինիս վիճակը վատթարացնելու իրավունք չուներ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված նյութական իրավունքի հիմնարար խախտումները հանգեցրել են դատական սխալի, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Վերագրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը բավարարել: Արթուր Ալբերտի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 21-ի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 14-ի դատավճիռները բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-145/07

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն
համայնքների առաջին ատյանի
դատարանում դատավճիռ կայացրած
դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Օհանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազներ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**
Լ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2007թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 7-ի դատավճիռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմնի 2006 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Հարություն Տիգրանի Հաբեշյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով: 2007 թվականի մայիսի 8-ի որոշմամբ ՀՀ Հաբեշյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին, 258-րդ հոդվածի 4-րդ մասերով, և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 7-ի դատավճիռով Հարություն Հաբեշյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին, 258-րդ հոդվածի 4-րդ մասերով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

սով, ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով սահմանվել է ազատազրկում 1 (մեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժի մեջ հաշվակցվել է ձերբակալման ձևով արգելանքի տակ գտնվելու 3 (երեք) օրը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 1 (մեկ) տարի 2 (երկու) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2007 թվականի մայիսի 5-ից:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հարություն Հաբեշյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2006 թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 20⁴⁰ -ի սահմաններում, իր անձնական օգտագործման «Ուազ» մակնիշի 67 ՕՏ 003 պետհամարանիշի ավտոմեքենան Երևան քաղաքի Էրեբունի փողոցով վարելու ընթացքում վազանց կատարելու համար ճանապարհի չտալու առիթով դիտողություն է արել «Դ-ոն և Մանետրո» տաքսի ծառայության վարորդ Համլետ Թադևոսյանին, սակայն վերջինս դիտողությունը չի ընդունել և իր «ՎԱԶ 2103» մակնիշի 63 ՍՏ 088 պետհամարանիշի ավտոմեքենայով հեռացել է: Հ. Հաբեշյանը, ավտոմեքենայով նրան հետապնդելով, գնացել է Երևան քաղաքի Էրեբունի փողոցի թիվ 17 հասցեում գտնվող տաքսի ծառայության գրասենյակ, որտեղ գործով չպարզված անձնավորության հետ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, շուրջ 10 լուրջ փողոցում հայիռյել և բռնություն գործադրելով՝ ծեծի է ենթարկել Հ. Թադևոսյանին, վիճաբանել է աղմուկի ձայներից հավաքված տաքսի ծառայության աշխատակիցների հետ: Այնուհետև՝ նույն օրը՝ ժամը 22⁰⁰-ի սահմաններում, Հ. Հաբեշյանը վերադարձել է «Դ-ոն և Մանետրո» տաքսի ծառայության գրասենյակ, որտեղ շարունակել է աղմուկ և, բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով հասարակության նկատմամբ, իր հետ նախապես վերցրած, ապօրինաբար ձեռք բերած և պահած հրազեն հանդիսացող «ԱԿՍՌԻ» տեսակի ինքնաձիգը խուլիգանական գործողությունների ընթացքում գործադրելով, մենահատ 5 կրակոց է արձակել քարաշեն փակ տարածք հանդիսացող գրասենյակում՝ իրական վտանգ ստեղծելով ներկա գտնվող տաքսի ծառայության աշխատակիցներ Արման Կարապետյանի և Գևորգ Մխիթարյանի կյանքի ու առողջության համար, վնասել է «Դ-ոն և Մանետրո» տաքսի ծառայության 22.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույքը, խաթարել ծառայության բնականոն գործունեությունը, խանգարել շրջակայքում առևտրով զբաղվող անձանց աշխատանքը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքում նշվել է, որ առաջին ատյանի դատարանի կողմից Հարություն Հաբեշյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտորեն մեղմ է և չի համապատասխանում կատարած արարքի բնույթին և հասարակական վտանգավորության աստի-

ճանին: Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը՝ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, համաձայն որոնց՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը պետք է լինի արդարացի՝ համապատասխանի հանցանքի ծանրությանը և դա կատարելու հանգամանքներին: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի՝ որպես բացառիկ դիտվող հանգամանքները պետք է կապված լինեն հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ, սակայն, ինչպես երևում է քրեական գործի նյութերից, Հ. Հաբեշյանը, դեպքի օրը սկսելով իր խուլիգանական գործողությունները, վիճաբանելով դեպքի վայրում հավաքված մարդկանց հետ, դրանով չի բավարարվել և այնտեղից հեռանալով՝ մեկ ժամ հետո վերադարձել է ինքնաձիգը ձեռքին և դարձյալ կատարել խուլիգանություն՝ այս անգամ արդեն զենքի գործադրմամբ: Բացի այդ, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք ընտրելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 11-ի որոշումը կայացնելուց հետո Հ. Հաբեշյանը շուրջ 7 ամիս թաքնվել է քննությունից և գտնվել է հետախուզման մեջ: Այսինքն՝ Հ. Հաբեշյանի վարքագիծը հանցանք կատարելիս և դրանից հետո բացառում է նրա նկատմամբ մեղմ պատիժ սահմանելու հնարավորությունը: Հ.Հաբեշյանի նկատմամբ պատիժ նշանակելիս խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներում ամրագրված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև սոցիալական արդարությանը վերաբերող ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները: Արդյունքում նյութական օրենքի էական խախտմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ: Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մեղմության առումով բեկանել Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 07.06.2007 թվականի դատավճիռը և քրեական գործն ուղարկել նոր դատաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն ամրագրել է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը:

Պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ

թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Օրինականության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով: Պատիժ նշանակելիս օրինականության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պատժի տեսակը և չափը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որի դիսպոզիցիայի հատկանիշներին համապատասխան անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի առաջին մասը պարտադրում է դուրս չգալ Հատուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից: Նշանակվող պատիժը չի կարող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել: Այս պահանջից բացառություն կարող է անել միայն ՀՀ քրեական օրենսգրքը, որը Ընդհանուր մասում նախատեսված հատուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից: ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը՝

գործի բացառիկ հանգամանքները.

խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

Ինչպես նշված է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում, բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել պատժի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա:

Պատիժը մեղմացնելու բացառիկ հիմքին հավասարազոր է խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակ-

տիվորեն աջակցելը: Պատիժը մեղմացնելու հարցում դա ունի նույն դերը, ինչ գործի բացառիկ հանգամանքն է:

Ինչպես երևում է գործի նյութերից, խուլիզանությունը կատարվել է խմբի կողմից և հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դեր է ունեցել Հ.Հաբեշյանը, որը մեղադրվել է ծանր հանցագործության՝ զենքի գործադրմամբ խուլիզանություն կատարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մաս) և միջին ծանրության հանցագործության՝ ապօրինի կերպով զենք և ռազմամթերք ձեռք բերելու ու պահելու մեջ (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս): Սույն գործի նախաքննության ընթացքում Հ.Հաբեշյանն օգտվել է իր իրավունքից և հրաժարվել է ցուցմունք տալուց, չի աջակցել խմբի կողմից կատարված հանցագործությունը բացահայտելուն: Արդյունքում նախաքննության մարմինը մինչև վերջ չի բացահայտել հանցագործությունը, անհայտ են մնացել Հ.Հաբեշյանի հետ խուլիզանություն կատարած անձինք: Քանի որ Հ.Հաբեշյանի հետ խուլիզանական գործողություններին մասնակցած անձանց ինքնությունը հնարավոր չի եղել պարզել, նախաքննության մարմինը 2007 թվականի մայիսի 18-ին որոշում է կայացրել քրեական գործից մաս անջատելու և առանձնացված մասով վարույթը կասեցնելու մասին: Բացի այդ, հանցանք կատարելուց հետո, գտնվելով ազատության մեջ, մեղադրյալ Հ.Հաբեշյանը դիմել է փախուստի, թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, որի համար 2006 թվականի հոկտեմբերի 16-ին նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և քրեական գործի վարույթը կասեցվել է: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նա հայտնաբերվել է շուրջ 7 ամիս անց՝ 2007 թվականի մայիսի 8-ին: Ինչ վերաբերում է Հ.Հաբեշյանի կատարած հանցագործության շարժառիթներին, ապա առկա է յուրահատուկ շարժառիթը՝ խուլիզանական դրոշումը:

Դատապարտյալ Հ.Հաբեշյանի հանցանքի շարժառիթն ու նպատակը, նրա դերը, հանցավորի վարքագիծը հանցանք կատարելիս և դրանից հետո, ինչպես նաև խմբակալին հանցագործության՝ մինչև վերջ չբացահայտվելը բացառում են նրա նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հնարավորությունը:

Դատարանի կողմից բացառիկ ճանաչված դատապարտյալի և նրա կնոջ հիվանդությունները չեն վկայում այն հասարակական վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Հ.Հաբեշյանի կատարած հանցագործություններին: Դրանք էականորեն չեն նվազեցնում դատապարտյալի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Հ.Հաբեշյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմք չեն:

Փաստորեն առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով գործի վերը նշված հանգամանքները, Հ.Հաբեշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում նրա կատարած հանցագործությունների ծանրությանը և դատապարտյալի անձին:

Վճարելի դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը սխալ հետևության է հանգել Հ.Հաբեշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին:

Դատարանը Հ.Հաբեշյանի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և

պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չհիմնավորված դատավճիռ կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մատով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա պատիժը մեղմ լինելու պատճառաբանությամբ բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Մույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, երբ ակնհայտ մեղմ պատիժ է նշանակվել դատապարտյալի նկատմամբ և չարդարացված բարելավվել է նրա վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճիռ՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Բողոքը բավարարել: Հարություն Տիգրանի Հաբեշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ և 235-րդ հոդվածի 1-ին մասերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 7-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-135/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Ս.Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
դատախազ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**

2007թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Մարտիկ Հակոբի Բոլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ և 215-րդ հոդվածի 2-րդ մասերով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 6-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմինը 2006 թվականի հունիսի 20-ին Մարտիկ Հակոբի Բոլյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ, 215-րդ հոդվածի 2-րդ մասերով, և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 2006 թվականի սեպտեմբերի 28-ին ուղարկել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 15-ի դատավճռով Մարտիկ Հակոբի Բոլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ, 215-րդ հոդվածի 2-րդ մասերով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ հօգուտ ՀՀ-ի բռնագրավելով 250.000 ՀՀ դրամ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական նշանակվել է ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով՝ հօգուտ ՀՀ-ի բռնագրավելով 250.000 ՀՀ դրամ:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ա.Վարդանյանը, Վ.Գևորգյանը, Ա. Դավթյանը, Վ.Առաքելյանը, Ս.Խաչատրյանը և Ա.Կարապետյանը:

Մ.Բոլյանի պաշտպան Կ.Քամայանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի մարտի 6-ի դատավճռով Մ. Բոլյանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 15-ի դատավճիռը փոփոխել է. Մարտիկ Հակոբի Բոլյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ, 215-րդ հոդվածի 2-րդ մասերով և դատապարտել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական նշանակվել է ազատազրկում 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 6-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանը:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Մարտիկ Բոլյանը 2006 թվականի մայիս ամսվա վերջին Ագարակ քաղաքի Մեղրու մաքսակետի տարածքում պարսիկ բեռնատարի վարորդից 200 ԱՄՆ դոլարով գնել է 100 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց և նույն օրը, պայմանավորվածության համաձայն, տվել է Սաշա Խաչատրյանին:

2006 թվականի հունիս ամսին Մ.Բոլյանը մեկնել է ԻԻՀ Ջուլֆա քաղաք, որտեղ իր ծանոթ Ջաֆարից Ս.Խաչատրյանի խնդրանքով և նրա տված 600 ԱՄՆ դոլարով գնել է 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց: Ջուլֆա քաղաքում Մարտիկ Բոլյանը հանդիպել է իր փեսա Ալեքսան Կարապետյանին, որը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար նրան տվել է ևս 200 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց: Սոխի պարկում թաքցրած 500 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը Մ.Բոլյանը ԻԻՀ-ից Մեղրու մաքսակետով՝ թաքցնելով մաքսային հսկողությունից 2006 թվականի հունիս ամսվա սկզբին տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն: Ագարակ քաղաքում 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը նա հանձնել է Սաշա Խաչատրյանին, իսկ 200 գրամը պահել է իրենց տանը:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննությունների ընթացքում ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ Մ.-Բոլյանը կրկին անգամ ԻԻՀ-ում ապօրինի ձեռք է բերել և իրացման նպատակով մաքսանենգ ճանապարհով Հայաստան է տեղափոխել առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց, որից 200 գրամը հայտնաբերվել է նրա բնակարանի թաքստոցից:

Մ.Բոլյանի կողմից թմրամիջոցի իրացմամբ զբաղվելու հանգամանքը հիմնավորվել է ինչպես նրա տան թաքստոցից հայտնաբերված առանձնապես խոշոր չափի թմրամիջոցի առկայությամբ, այնպես էլ թմրամիջոցը տեղափոխելու և Ս.Խաչատրյանին հանձնելու փաստով: Մինչդեռ վերաքննիչ դատարանը, ճիշտ չգնահատելով վե-

րոհիչյալ հանգամանքներն ու գործի մյուս նյութերը, Մ.Բոլյանի կատարած արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել է սխալ եզրակացության:

Գտնելով, որ վերաքննիչ դատարանի կողմից Մարտիկ Բոլյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասից ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով վերաորակելը ճիշտ չէ, բողոքի հեղինակը խնդրել է Մարտիկ Հակոբի Բոլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 6-ի դատավճիռը բեկանել և օրինական ուժ տալ նրա նկատմամբ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 15-ի դատավճիռն:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Բնակչության առողջության պահպանումն ու ամրապնդումը հասարակության կյանքի անբաժանելի պահանջն է: Բնակչության առողջության իրավական պաշտպանության հիմքը ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածում ամրագրված այն դրույթն է, որի համաձայն, յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Բնակչության առողջության իրավական պաշտպանության ձևերից մեկն էլ քրեաիրավական պաշտպանությունն է, որն իրականացվում է մարդկանց առողջությանը վնաս պատճառող կամ այն վտանգի տակ դնող որոշակի արարքների համար քրեական պատասխանատվություն սահմանելով:

Թմրամիջոցները և հոգեմետ նյութերը պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու, իրացնելու, ինչպես նաև հաշվառելու, բաց թողնելու և գործածելու ապօրինությունը որոշվում է 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարը ոչ միայն ներպետական, այլև միջազգային խնդիր է, որով էլ պայմանավորված էր թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ուղղված Կոնվենցիաների ընդունումը. ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիան, ՄԱԿ-ի 1971 թվականի «Հոգեմետ նյութերի մասին» կոնվենցիան, ՄԱԿ-ի 1988 թվականի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիան:

Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններից իր բնույթով և հանրության համար վտանգավորության աստիճանով առանձնանում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով սահմանված՝ իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը: Այս հանցագործության հասարակական վտանգավորությունը նրանում է, որ թմրամիջոցների և հոգեներգործուն միջոցների ապօրինի շրջանառությունը հանգեցնում է դրանց անկառավարելի տարածմանն ու չարաշահմանը և լրջորեն ազդում է բնակչության առողջական վիճակի, սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վրա, բացասաբար անդրադառնում տնտեսության, քաղաքականության և իրավակարգի վրա:

Նշված հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսել իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեներգործուն նյութեր ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի

իրացնելու համար: Այս հանցագործության անմիջական օբյեկտը բնակչության ամուլության անվտանգությունն է: Միաժամանակ բննարկվող արարքները կարող են ոտնձգել նաև ուրիշ օբյեկտների դեմ, վնաս պատճառել այլ հասարակական հարաբերությունների, ինչպես, օրինակ, թմրամիջոցների և հոգեներգործուն միջոցների շրջանառության սահմանված կարգը, հասարակական անվտանգությունը, պետական ձեռնարկությունների և հիմնարկների կանոնավոր գործունեությունը և այլն:

Նշված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ակտիվ վարքագծով՝ գործողությամբ: Այն արտահայտվում է իրացման նպատակով թմրամիջոցներ, հոգեներգործուն նյութեր ապօրինի պատրաստելով, վերանշակելով, ձեռք բերելով, պահելով, փոխադրելով, առաքելով կամ դրանք ապօրինի իրացնելով:

Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ կատարում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի դիսպոզիցիայում նշված ապօրինի գործողությունները թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի հետ և ցանկանում է դրանք կատարել: Ընդ որում, օրենսդիրը շարժառիթն ու նպատակը չի դասում պարտադիր հատկանիշների շարքը: Այստեղ պարտադիր է ինչպես իրացման նպատակի առկայությունը, այնպես էլ ապօրինի իրացումը:

Իրացման նպատակի տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութերի տարածման ցանկացած եղանակ, այդ թվում նաև նախնական պատվերով: Իրացման նպատակի մասին կարող է վկայել ինչպես ձեռք բերողի (ստացողի, սպառողի) հետ համապատասխան պայմանավորվածության առկայությունը, այնպես էլ գործի մյուս հանգամանքները. թմրամիջոցներ ձեռք բերելը և պահելը դրանք չգործածող անձի կողմից, զգալի քանակությունը, իրացման համար հարմար փաթեթավորումը և այլն: Ընդ որում, հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնըստիներյան դրանք իրացնելու անվիճելի ապացույց չէ. դա պետք է գնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ:

Ապօրինի իրացումը թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի ցանկացած եղանակով օտարումն է: Ապօրինի իրացման տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի՝ հատուցմամբ կամ անհատույց այլ անձանց հանձնելու, փոխանցելու ցանկացած եղանակ՝ վաճառք, նվիրատվություն, փոխանակում, փոխատվություն, պարտքի մարում, ուրիշի ներարկում և այլն: Իրացման առանձնահատկությունն այն է, որ նշված գործողությունների հետևանքով թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին տիրանում է մեկ այլ անձ, որն այս դեպքում հանդես է գալիս որպես ձեռք բերող, ստացող կամ գնորդ, սպառող: Ապօրինի իրացումը համարվում է ավարտված, երբ մեկ այլ անձ տիրանում է թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին: Մեկ ուրիշ անձին փոխանցելու եղանակը կարող է տարբեր լինել, սակայն դա արարքի որակման համար նշանակություն չունի: Ապօրինի իրացման հանցակազմի համար նշանակություն չունի, թե թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին տիրացած անձն ինչպես է այն տնօրինելու, դրա հետ վարվելու:

Գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմինը Մարտիկ Բոլյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ և 266-րդ հոդվածի 3-րդ մասերով՝ թմրամիջոցների մաքսանենգության և իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և ապօրինի իրացնելու համար:

Մյուսիքի մարզի առաջին ատյանի դատարանը Մ. Բոլյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել վերը նշված հոդվածներով:

Մինչդեռ վերաքննիչ դատարանը գտել է, որ Մ. Բոլյանի գործողություններում առկա են առանձնապես խոշոր չափի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելը, պահելը,

փոխադրելը, սակայն դրանք իրացման նպատակ չեն ունեցել: Վերաքննիչ դատարանը դա հիմնավորել է այն բանով, որ Մ. Բոլյանը թմրամիջոցներ ձեռք է բերել ոչ թե իր նախաձեռնությամբ, այլ գործով մյուս դատապարտյալ Մաշա Խաչատրյանի խնդրանքով և նախաձեռնությամբ, որ թմրամիջոց ձեռք բերելու համար Մ. Բոլյանին նախապես գումար է տրամադրել և հայտնել նրան, որ այն անհրաժեշտ է անձնական օգտագործման համար, քանի որ տառապում է ստամոքսի խոցով: Իրանում ապօրինի ձեռք բերելով թմրամիջոցը՝ Մ. Բոլյանն այն պահել է իր ավտոմեքենայում, փոխադրել և հանձնել է Ս. Խաչատրյանին՝ առանց օգուտ ստանալու: Նույն ձևով նա փոխադրել է նաև իր փեսա Ա. Կարապետյանի տված թմրամիջոցը:

Ելնելով վերոգրյալից՝ վերաքննիչ դատարանը Մ. Բոլյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով (առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելը, պահելը, փոխադրելը) և 215-րդ հոդվածի 2-րդ մասով (թմրամիջոցների մաքսանենգություն):

Սակայն վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված չեն գործի հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատման վրա:

Որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննվելիս սույն գործով դատապարտյալ Մաշա Խաչատրյանը ցուցմունքներ է տվել, որ երբ իր ընկեր Արմեն Վարդանյանի համար թմրամիջոց ձեռք բերելու խնդրանքով դիմել է որպես վարորդ հաճախակի Իրան մեկնող ընկերոջը՝ Մարտիկ Բոլյանին, նա համաձայնվել է և ասելով, որ իր մոտ փող չկա, պահանջել է 100 ԱՄՆ դոլար: Այդ գումարը վերցնելուց մեկ շաբաթ անց Մ. Բոլյանը բերել է 100 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց և պահանջել ու ստացել է ևս 100 ԱՄՆ դոլար: Երկրորդ անգամ Մ. Բոլյանը նախապես վերցրել է 600 ԱՄՆ դոլար, որի դիմաց Իրանից բերել է 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց (հ. 1, գ/թ 35-37, 69-71): Մաշա Խաչատրյանը նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել Արմեն Վարդանյանի հետ առերես հարցաքննության ժամանակ (հ. 2, գ/թ 44-48), ինչպես նաև առաջին ատյանի (հ. 2, գ/թ 228-232) և վերաքննիչ դատարաններում:

Որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննվելիս Մարտիկ Բոլյանը ցուցմունքներ է տվել, որ մայիսի վերջին Մաշիկ Խաչատրյանի խնդրանքով՝ վերջինիս տված 200 ԱՄՆ դոլարով Ազարակի մաքսակետում պարսիկ բեռնատարի վարորդից գնել է 100 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց և հանձնել Մաշային: Հունիսի սկզբին Մաշա Խաչատրյանի խնդրանքով, նախապես նրանից վերցրած 600 ԱՄՆ դոլարով, Իրանում իր ծանոթից գնել է 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց, թաքցրել է սոխի պարկի մեջ, անցել է մաքսակետով, բերել է Հայաստան և տվել Մաշային (հ. 1, գ/թ 29-31, 64-65): Մ. Բոլյանը նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել նաև առաջին ատյանի (հ. 2, գ/թ 224-227) և վերաքննիչ դատարաններում:

Ըստ փորձագետի 2006 թվականի հունիսի 23-ի եզրակացության՝ հետազոտման պահին՝ 19.06.2006 թվականին, Մարտիկ Բոլյանից վերցրած մեզի փորձանմուշում կանաքիսի և ափիոնի խմբերի թմրամիջոցների և հոգեմետ դեղամիջոցների հետքեր չեն հայտնաբերվել (հ. 1, գ/թ 109):

Այսպիսով՝ գործի նյութերով հիմնավորվել է, որ

Առկա է Մ. Բոլյանի նախնական պայմանավորվածությունը թմրամիջոց գնող, սպառող Մաշա Խաչատրյանի հետ՝ վերջինիս համար Իրանի Իսլամական Հանրապետությունից թմրամիջոց ձեռք բերելու մասին: Ընդ որում, Մ. Բոլյանը նրանից պահանջել է դրա համար նախապես իրեն գումար տալ:

Նախնական պատվերով Ս. Խաչատրյանին թմրամիջոցով ապահովելու համար Մ.Բոլյանը ԻԻՀ-ում ապօրինի ձեռք է բերել, պահել, փոխադրել և մաքսանենգությամբ Հայաստանի Հանրապետություն է տեղափոխել «ափիոն» տեսակի թմրամիջոց:

Երկու դեպքում էլ թմրամիջոցը՝ «ափիոնը», եղել է առանձնապես խոշոր չափերի (100 գրամ և 300 գրամ):

Թմրամիջոց ապօրինի ձեռք բերող, պահող և փոխադրող Մ. Բոլյանը թմրամիջոց չի գործածում:

Մ. Բոլյանի գործողությունների հետևանքով թմրամիջոցին տիրացել է մեկ այլ անձ՝ Սաշա Խաչատրյանը:

Վերը շարադրվածը վկայում է, որ Մ. Բոլյանը իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել, փոխադրել և ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, այսինքն՝ կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված փաստարկների առկայության պայմաններում անհիմն են վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Մ. Բոլյանի գործողություններում բացակայում են թմրամիջոցի իրացման նպատակն ու ապօրինի իրացումը, քանի որ նա թմրամիջոց է ձեռք բերել ոչ թե իր նախաձեռնությամբ, այլ գործով մյուս դատապարտյալ Մ. Խաչատրյանի խնդրանքով ու նախաձեռնությամբ, վերջինիս կողմից նախապես տրամադրված գումարով, և Մ. Բոլյանը դա արել է առանց որևէ օգուտ ստանալու:

Մյուսիքի մարզի առաջին ատյանի դատարանը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հանգել է ճիշտ հետևության: Իսկ վերաքննիչ դատարանը, Մ. Բոլյանի արարքը վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման: Դա ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել է առանձնապես ծանր և ծանր հանցագործություններ կատարած անձի նկատմամբ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելու:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են:

Քանի որ գործի նյութերով հերքվում են վերաքննիչ դատարանի դատավճռում նշված՝ Մ. Բոլյանի արարքի վերաորակման մասին բոլոր փաստարկները և հաստատվում Մյուսիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա բեկանել Մ. Բոլյանի վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատավճիռը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Մույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, երբ անհիմն, չարդարացված բարելավվել է դատապարտյալի վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Բողոքը բավարարել: Բեկանել Մարտիկ Հակոբի Բոլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 6-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 15-ի դատավճռին:

2.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 149/07

Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի
առաջին ատյանի դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը՝
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
դատախազ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆ**

2007թվականի հոկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճիռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Արմեն Սամվելի Պապիկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճռով Ա.Պապիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանը վերոհիշյալ դատավճռի դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը, 2007 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիման վրա, բողոքն ընդունել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

1988 թվականին ծնված Արմեն Սամվելի Պապիկյանը, անչափահաս տարիքում՝ 2004 թվականին, երկու անգամ դատապարտվել է գույքի հափշտակությունների համար. առաջին անգամ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, իսկ երկրորդ անգամ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով ու 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Դրանից հետո, 2005 թվականի դեկտեմբերի 1-ին, Երևանի Հանրապետության հրապարակում Արմեն Պապիկյանը հանդիպել է քաղաքացի Ռ.Քոչինյանին, որը, խոճալով Ա. Պապիկյանին, հրավիրել է իր վարձակալած սենյակում ժամանակավոր բնակվելու: 2005 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 16-ի սահմաններում, օգտվելով այն հանգամանքից, որ տանը ոչ ոք չկա, Արմեն Պապիկյանը գաղտնի հափշտակել է նույն տանը ժամանակավոր բնակվող Նինա Թեմուրովային պատկանող «Սամսոնգ Ա-800» տեսակի բջջային հեռախոսը՝ հեռախոսաքարտով:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ նախաքննության մարմնի և դատարանի կողմից Արմեն Պապիկյանի արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական չի տրվել, անտեսվել է ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, ըստ որի՝ «այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»: Հետևաբար, Արմեն Պապիկյանի արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, այլ նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է Արմեն Պապիկյանի վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճռը բեկանել և փոփոխել՝ արարքը վերադասել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և «նրան դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով», ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 3 տարի 6 ամիս ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2005 թվականի դեկտեմբերի 10-ից:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանություններով.

Բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցն ըստ էության հանգում է հետևյալին. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցակազմի նկատմամբ տարածվում է ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի («Հանցագործությունների կրկնակիությունը») 4-րդ մասով, թե՞ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի («Հանցագործությունների ռեցիդիվը») 4-րդ մասով սահմանված կանոնը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հանցագործությունների կրկնակիություն է համարվում սույն օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը»: Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ «Սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում»: Համաձայն նույն հոդվածի 4-րդ մասի՝ «Կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված հիմքերով, կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել է կամ հանվել»:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար»: Համաձայն նույն հոդվածի 4-րդ մասի՝ «Այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»:

Ինչպես երևում է, հանցագործությունների կրկնակիությունը և հանցագործությունների ռեցիդիվը հանցագործությունների բազմակիության ինքնուրույն տարատեսակներ են, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա ինքնուրույն նորմատիվային արժեք և ուրույն դեր քրեաիրավական հարաբերությունների կարգավորման կառուցակարգում: Հակառակ պարագայում կատարվել, որ օրենքի կոնկրետ դրույթներ՝ հանցագործությունների կրկնակիության կամ հանցագործությունների ռեցիդիվի իրավական ինստիտուտները կազմող իրավադրույթները, հասարակական հարաբերությունների որևէ շրջանակ չեն կանոնակարգում և առարկայագուրկ են, որպիսի են՝ քաղաքացիները չի բխում օրենսդրական կարգավորման տրամաբանությունից, արդյունքում վտանգվում է քրեական օրենսդրության խնդիրների իրականացումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներում ամրագրված իրավանորմները ՀՀ քրեական օրենսգրքի ամբողջական համակարգում մեկնաբանելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը հանցագործությունների կրկնակիության և հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտներից յուրաքանչյուրին հատուրդել է ինքնուրույն քրեաիրավական իմաստ:

Այսպես, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված հանցակազմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների ռեցիդիվն ինքնին չի հանդիսանում որևէ հանցակազմ որակյալ դարձնող հանգամանք: Մինչդեռ հանցագործությունների կրկնակիությունը հանդիսանում է բազմաթիվ հանցակազմեր, այդ թվում՝ գողության հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված) ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանք:

Հետևաբար՝ հանցագործությունների ռեցիդիվի կանոններն անհրաժեշտ է կիրառել պատիժն անհատականացնելիս, իսկ հանցագործությունների կրկնակիության կանոնները՝ արարքը որակելիս:

Այս հարցում օրենսդրի մոտեցումը հետևողական է և տրամաբանական: ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքում սահմանված չէր «Հանցագործության ռեցիդիվ» հասկացությունը, իսկ այժմ գործող 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած սկզբունքային նորամուծություններից մեկն այն է, որ օրենսդիրը հրաժար-

վել է «ռեցիդիվիստ» և «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հասկացություններից՝ հանցագործությունների որակման համար կարևորելով ոչ թե հանցանք կատարածի անձը, այլ նրա արարքը, ապահովելով ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը, ըստ որի՝ հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

Դատարանը Արմեն Պապիկյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքը (գողությունը, որը կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից) կատարելու համար՝ նկատի ունենալով, որ Ա.Պապիկյանն իրեն մեղսագրված արարքը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով երկու դատվածություն ունենալու պայմաններում:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը փաստարկել է, որ դատարանի կողմից Արմեն Պապիկյանի արարքին քրեախրավական ճիշտ գնահատական չի տրվել և անտեսվել է ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի այն պահանջը, որ ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում մինչև անձի տասնութ տարին լրանալը կատարված հանցանքները: Այս հիմքով բողոքը ներկայացրած անձը պահանջել է Ա.Պապիկյանի արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով՝ որպես կրկին անգամ կատարված զգալի չափերով գողություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հեղինակի փաստարկները չեն բխում օրենքից, քանի որ օրենքի նշված պահանջն արարքը որակելիս չի գործում: Դրա փոխարեն գործում են ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի պահանջները, որոնց թվում բացակայում է կրկնակիությունը գնահատելիս անչափահաս տարիքում կատարված հանցանքները հաշվի չառնելու կարգադրագիր:

Բացի դրանից, բողոքի հեղինակի ներկայացրած փաստարկները համարժեք չեն բողոքի պահանջին: Եթե ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը սույն գործով ենթակա լիներ կիրառման, ապա Ա.Պապիկյանի արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի ոչ թե 2-րդ, այլ 1-ին մասով, քանի որ գողության համար Ա.Պապիկյանի երկու դատվածություններն էլ կապված են եղել մինչև տասնութ տարին լրանալը կատարված հանցագործությունների հետ: Մինչդեռ բողոքի պահանջն է արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Ա.Պապիկյանի վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճիռը պետք է թողնել ուժի մեջ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել:

Արմեն Սամվելի Պապիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին աստիճանի դատարանի 2006 թվականի մարտի 29-ի դատավճիռը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-192/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
դատավորներ՝ Ժ.Հովսեփյան, Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007թվականի հոկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Թամարա Իշխանի Տեր-Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճռի դեմ հավատարմագրված փաստաբան Արմենուհի Գևորգյանի միջոցով դատապարտյալ Թամարա Տեր-Գրիգորյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 19-ի դատավճռով Թամարա Տեր-Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով նա դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով, առանց տուգանքի, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 4 տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5 (հինգ) տարի ժամկետով:

տով առանց տուգանքի և գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիմքով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 4 տարի ժամկետով՝ վարքի հսկողությունը դնելով այն իրականացնող իրավասու մարմնի վրա:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Էդգար Միրզոյանը:

Վճռվել է նաև Թամարա Տեր-Գրիգորյանից և Էդգար Միրզոյանից հոգուտ տուժողներ Վլադիմիր և Տատյանա Ավագյանների բռնագանձել 11.300 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, Թ.Տեր-Գրիգորյանից հոգուտ տուժող Մուսաննա Հովհաննիսյանի՝ 4.050 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, հոգուտ տուժող Թադևոս Մելքոնյանի՝ 471.110 ՀՀ դրամ:

Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել ամբաստանյալների պաշտպան Կրոմվել Գրիգորյանը և տուժողներ Մուսաննա Հովհաննիսյանը, Զվարթ Սարգսյանը, Թադևոս Մելքոնյանը և Վլադիմիր ու Տատյանա Ավագյանները:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, վերադառնալով գործը և գտնելով, որ Թամարա Տեր-Գրիգորյանը պետք է կրի նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը, 2006 թվականի մարտի 3-ի դատավճռով առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխել է. Թամարա Տեր-Գրիգորյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով՝ ազատագրկման 2 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատագրկման 4 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Թ.Տեր-Գրիգորյանի նկատմամբ վերջնականապես պատիժ է սահմանվել ազատագրկում 5 (հինգ) տարի ժամկետով: Հաշվակցելով նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ նրան վերջնական թողնվել է կրելու ազատագրկում 4 տարի 2 ամիս 7 օր ժամկետով:

Տուժող Ս.Հովհաննիսյանի քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Թ.Տեր-Գրիգորյանից հոգուտ նրա բռնագանձվել է 4.050 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ գանձման պահի փոխարժեքով:

Տուժող Զ.Սարգսյանի քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել Երևանի Լենինականի փող. 6/54 հասցեի բնակարանի 04.12.1997 թվականի առուժախի պայմանագիրը:

Տուժող Թ.Մելքոնյանի քաղաքացիական հայցը բավարարվել է ամբողջությամբ՝ Թ.Տեր-Գրիգորյանից հոգուտ նրա բռնագանձվել է 457.110 ՀՀ դրամ:

Տուժողներ Վլադիմիր և Տատյանա Ավագյանների քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Թ.Տեր-Գրիգորյանից հոգուտ նրանց բռնագանձվել է 9.500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ գանձման պահի փոխարժեքով, որից 7.000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամը համապարտությամբ բռնագանձվել է նաև գործով մյուս դատապարտյալ Է. Միրզոյանից:

Հավատարմագրված փաստաբան Արմենուհի Գևորգյանի միջոցով դատապարտյալ Թամարա Տեր-Գրիգորյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Թամարա Տեր-Գրիգորյանը դատապարտվել է այն բանի համար, որ 1996-2000 թվականների ընթացքում Սուսաննա Հովհաննիսյանից ստացել և խարդախությամբ հափշտակել է 2.163.267 ՀՀ դրամին համարժեք 4.050 ԱՄՆ դոլար: Բացի այդ, կազմակերպելով և 1997 թվականի դեկտեմբերի 4-ի առուծախի պայմանագրով բնակարանը ձևակերպելով իր մտերիմ Մարիետա Պետրոսյանի անվամբ, խաբեությամբ տիրացել է Չվարթ Սարգսյանին պատկանող 6.498.310 ՀՀ դրամին համարժեք 13.000 ԱՄՆ դոլար արժողությամբ Երևանի Լենինական փողոցի 6/54 հասցեի երեք սենյականոց բնակարանին: Բացի այդ, 1998 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին խարդախությամբ հափշտակել է Թ.Մելքոնյանի 457.110 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 19 կտոր ոսկյա զարդերը: Բացի այդ, Թամարա Տեր-Գրիգորյանը խարդախությամբ հափշտակել է մինչև 2001 թվականի դեկտեմբերի 15-ը Վլադիմիր և Տատյանա Ավագյաններից վերցրած 8.049.965 ՀՀ դրամին համարժեք 14.500 ԱՄՆ դոլարը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստադրվելը և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ վճռաբեկ բողոքի՝ տուժողներին պատճառված նյութական վնասն ամբողջությամբ հարթվել է, որի կապակցությամբ վերջիններս գրել են հայտարարություն առ այն, որ դատապարտյալի նկատմամբ պահանջ չունեն, ինչի հետևանքով էլ հարուցված կատարողական վարույթները կարճվել են:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածում ամրագրված ի թիվս այլ հանգամանքների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների թվին է դասվում նաև հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին հատուցելը:

Բացի այդ, դատապարտյալը վատառողջ է՝ տառապում է «հիպերտոնիկ» և «դեմքի շրջանի դերմատոզ» հիվանդություններով և այժմ էլ բուժվում է «Արովյան» քրեակատարողական հիմնարկի բուժապասարկման բաժնում ու գտնվում է բժիշկների հսկողության տակ:

Ըստ բողոքի՝ քրեական վերաքննիչ դատարանը քրեական գործի նյութերում գտնվող միևնույն ապացույցների, փաստերի առկայության պայմաններում, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, կայացրել է առաջին ատյանի դատարանի դատավճռից էականորեն տարբերվող դատավճիռ:

Վերաքննիչ դատարանը դատավճիռ կայացնելիս ոչ միայն պետք է հենվել պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների վրա, այլ պետք է հաշվի առնել նաև պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որը չի արել:

Բողոք բերած անձը խնդրել է իր վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճիռը բեկանել մասնակի և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը.

ենթակա է արդյո՞ք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

ին՞չ պատիժ պետք է նշանակվի նրա նկատմամբ.

ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի մի շարք դրույթներով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը բնարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով, դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

Քրեական օրենքի Ընդհանուր մասի վերջ թվարկված դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Ընդ որում, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օ-

րենսգաղարկը ինչպես հանցագործությունների տեսակների, հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի ու բնույթի, այնպես էլ անձանց շրջանակի հետ կապված որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել:

Այսինքն՝ օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարում դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց որոշակի պատժատեսակները ռեալ կրելու:

Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ դատարանը հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

Երևան քաղաքի Մալաթիա-Մերաստիա համայնքի առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարած հանցավոր արարքների հանրության համար վտանգավորության աստիճանը նրա անձը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ պատճառված նյութական վնասը մասնակիորեն վերականգնված է և, ըստ էության չգտնելով պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ, նրան դատապարտել է ազատագրկյման ու ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ հնարավոր համարելով նրա ուղղումն առանց նշանակված պատիժը կրելու:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Թամարա Տեր-Գրիգորյանի նկատմամբ նշանակված ազատագրկյման ձևով պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու մասով փոփոխել է ու նրան դատապարտել ազատագրկյման՝ պատճառաբանելով, որ հաշվի է առնում հանցագործությունների բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դրվագների քանակը, առաջացրած հետևանքները, նրա անձը բնութագրող հանգամանքները: Մինչդեռ, վերաքննիչ դատարանի կողմից բերված պատճառաբանությունները ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը բացառող հանգամանքներ չեն:

Վերաքննիչ դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո տուժողներ Սուսաննա Հովհաննիսյանին, Թադևոս Մելքոնյանին, Վլադիմիր և Տատյանա Ավագյաններին պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնվել է, ինչը հիմնավորվել է ինչպես տուժողների կողմից գրված հայտարարություններով, այնպես էլ հարկադիր կատարողի կողմից դատապարտյալից նրանց օգտին գումարներ բռնագանձելու վերաբերյալ հարուցված կատարողական վարույթները կարճելու մասին որոշումներով: Չվարթ Մարգարյանին պատկանող բնակարանի վերադարձման հարցը լուծվել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճռով՝ քաղաքացիական հայցի մասով կայացված որոշմամբ:

Այսպիսով՝ գործի տվյալներով հիմնավորված է, որ Թ.Տեր-Գրիգորյանը նախկինում դատապարտված չի եղել, վատառողջ է, պատճառված նյութական վնասն ամբողջովին վերականգնել է:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձը և նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, այդ թվում՝ հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնած լինելը, ինչն էականորեն նվազեցնում է հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է հետևության, որ դատապարտյալ Թամարա

Տեր-Գրիգորյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Այն բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Նշված նկատառումներով դատարանն անհրաժեշտ է համարում բեկանել Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճիռը՝ Թամարա Տեր-Գրիգորյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժը կրելու մասով, և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 19-ի դատավճիռին՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով: Վերաքննիչ դատարանի դատավճիռի մնացած մասերը պետք է թողնել անփոփոխ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Թամարա Իշխանի Տեր-Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճիռը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 19-ի դատավճիռին, որով Թամարա Տեր-Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված 5 (հինգ) տարի ժամկետով ազատագրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել 4 (չորս) տարի փորձաշրջանով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մարտի 3-ի դատավճիռը մնացած մասերով թողնել անփոփոխ:

Թամարա Իշխանի Տեր-Գրիգորյանին անհապաղ ազատել ազատագրկման ձևով պատժի կրումից:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-179/07

Էրեբունի և Նուբարաշեն համայնքների
առաջին ատյանի դատարանի որոշում
կայացրած կազմը նախագահող
դատավոր՝ Վ.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
դատապարտյալ
Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Ա.ՍԻՐՈՒՆՅԱՆԻ
Ի.ՌՈՒՇԱՆՅԱՆԻ

2007 թվականի հոկտեմբերի 26-ին

ք.Երևանում

ըռնբաց դատական նիստում, քննելով Իշխան Հովսեփի Ռուշանյանին պատի-
ժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Էրեբունի և Նուբա-
րաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի ո-
րոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 29-
ի դատավճռով Իշխան Ռուշանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի
109-րդ հոդվածի 1-ին մասով և 292-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ու ՀՀ քրեական
օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել ազատազրկման՝ 1 /մեկ/
տարի 6 /վեց/ ամիս ժամկետով, 292-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ տուգանքի՝
նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով՝ 300.000 ՀՀ դրամ: ՀՀ
քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառմամբ պատիժները մասնակի
գումարելու միջոցով Ի.Ռուշանյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել
ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշ-
խատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200.000 ՀՀ դրամ: Պատժի սկիզբը
հաշվվել է 30.11.2006թ.

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Միաժամանակ վճռվել է Ի.Ռուշանյանից հոգուտ տուժողի իրավահաջորդ Ռ.-Գալստյանի բռնագաձեղ 800.000 /ուր հարյուր հազար/ ՀՀ դրամ` որպես թաղման ծախսերի փոխհատուցում:

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք չի բերվել, և այն մտել է օրինական ուժի մեջ:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովը 2007 թվականի հունիսի 6-ին միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան` Իշխան Ռուշանյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի որոշմամբ բավարարվել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչական հանձնաժողովի միջնորդությունը, և դատապարտյալ Ի.Ռուշանյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է նշանակված պատժի չկրած մասի` 11 /տասնմեկ/ ամիս ժամկետով ազատագրելու կրելուց:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007թ. հոկտեմբերի 3-ի որոշմամբ 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ընդունվել է վարույթ:

2.Գործի փաստական հանգամանքները.

Իշխան Ռուշանյանը 2006 թվականի հունիսի 30-ին Կոտայքի մարզի Հանքավան գյուղի տարածքով հոսող Մարմարիկ գետում զանգվածային ոչնչացման եղանակով` հոսանքալարերի օգնությամբ, բեղլու և այլ տեսակի ձկներ է ապօրինի արդյունահանել, որի ընթացքում` ժամը 13.30-ի սահմաններում, գետի հուն մտած Դավիթ Ռոբերտի Գալստյանը, անզգուշությամբ ձեռք տալով գետի ջրերում գտնվող հոսանքալարերին, էլեկտրահարվել է և մահացել:

3.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը գտնում է, որ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը, Ի.Ռուշանյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում, այն է` չի կիրառել այն օրենքը, որը պետք է կիրառել:

Համաձայն բողոքի` դատարանը Ի.Ռուշանյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս գնահատել է քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում վերջինիս կողմից խախտումներ թույլ չտալու և դրականորեն բնութագրվելու հանգամանքները` անտեսելով, որ Ի.Ռուշանյանը տուժողի իրավահաջորդին ամբողջ ծավալով չի փոխհատուցել դատավճռով սահմանված գումարը: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն` պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը, որը դատարանը տվյալ դեպքում հաշվի չի առել և որոշման մեջ չի գնահատել: Բացի այդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում չի կիրառվում, երբ հանցագործությունը առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը:

Վերը նշված հիմնավորումներով վճարելի բողոքում խնդրվում է բեկանել Իշխան Հովսեփի Ռուշանյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճարելի դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հիմքերը, որի 1-ին մասի համաձայն՝ ազատագրված կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձն կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը:

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Ի.Ռուշանյանը դատապարտվել է ազատագրված՝ 1 տարի 6 ամիս ժամկետով և տուգանքի՝ 200.000 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ վճռվել է Ի.Ռուշանյանից հօգուտ տուժողի իրավահաջորդի բռնագանձել 800.000 ՀՀ դրամ՝ որպես թաղման ծախսերի փոխհատուցում:

Ինչպես երևում է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչական հանձնաժողովի ներկայացրած 2007 թվականի հունիսի 20-ի միջնորդությունից՝ Ի.Ռուշանյանը դատավճռով սահմանված 800.000 ՀՀ դրամ հօգուտ տուժողի իրավահաջորդի փոխհատուցումից մոծել է ընդամենը 15.000 ՀՀ դրամը:

2007 թվականի հունիսի 29-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագրի հիման վրա քննարկելով դատապարտյալ Ի.Ռուշանյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, հանգել է հետևության, որ դատապարտյալ Ի.Ռուշանյանն ապացուցել է իր ուղղված լինելը, նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի և բավարարել է միջնորդությունը: Այդ որոշումը դատարանը հիմնավորել է հետևյալ հանգամանքներով. Ի.Ռուշանյանը դատավճռով նշանակված պատժից կրել է 1/3- ից ավելին, պատիժը կրելու ընթացքում կարգապահական խախտումներ թույլ չի տվել, բնութագրվում է դրական,

իր օրինակելի վարքագծով ապացուցել է հաստատապես ուղղման ճանապարհի բռնած լինելը: Սակայն դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և չի անդրադարձել դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասի հարթման հարցի քննարկմանը: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այդ հանգամանքը հաշվի առնելու անհրաժեշտությունը, իսկ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինումն արգելող ուղղակի նորմ այն դեպքերում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը:

Ինչպես երևում է Ի.Ռ-ուշանյանի վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 29.11.2006 թվականի դատավճռից՝ դատապարտյալի գործողությունների հետևանքով անգոյություն մահ է պատճառվել:

Այսպիսով, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Ի.Ռ-ուշանյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում, այն է՝ չի կիրառել այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Այսինքն՝ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Հետևաբար՝ դատապարտյալ Ի.Ռ-ուշանյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ դատարանի 29.06.2007 թվականի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

Վերը նշված հիմնավորումները հիմք են Ի.Ռ-ուշանյանի վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան 2007 թվականի հունիսի 29-ի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում քննարկվող հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը բավարարել:

Բեկանել Իշխան Հովսեփի Ռ-ուշանյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-185/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի դատավճռի կայացրած կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Ավետիսյան
դատավորներ՝ Հ.Տեր-Աղամյան, Ռ.Ափինյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՄԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ
դատախազ

2007 թվականի հոկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դեմքաց դատական նիստում, քննելով Անուշ Արարատի Մինասյանի վերաքեր-
յալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Մալա-
թիա-Մերաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 8-
ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի
հուլիսի 6-ի դատավճիռների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյա-
նի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Անուշ Արարատի Մինասյանը 2004 թվականի դեկտեմբերի 1-ին ներգրավվել է
որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-
րդ հոդվածի 4-րդ մասով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

Երևան քաղաքի Մալաթիա-Մերաստիա համայնքի առաջին ատյանի դատա-
րանի 2005 թվականի ապրիլի 8-ի դատավճռով Ա.Մինասյանը մեղավոր է ճանաչվել
ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ու դատա-
պարտվել ազատազրկման՝ 7 /յոթ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ա.Մինասյանի փաստաբան Սամվել Միրզոյանի վերաքննիչ բողոքի հիման
վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն
իր 2005թ. հուլիսի 6-ի դատավճռով Մալաթիա-Մերաստիա համայնքի առաջին ատյա-
նի դատավճիռը թողել է անփոփոխ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Էդուարդ Լեոնիդի Խաչատրյանը ԱՄՆ-ում, ՌԴ-ում և ՀՀ-ում թմրամիջոցների ապօրինի շրջանառություն իրականացնելու, ՀՀ տարածքը որպես թմրամիջոցների փոխադրման տարանցիկ ճանապարհի օգտագործելու, այն է՝ ՀՀ թմրամիջոցներն ընդունելու, պահելու և ՌԴ տեղափոխելու նպատակով ստեղծել է կազմակերպված խումբ, որում տարբեր ժամանակ ընդգրկել է տարբեր մարդկանց:

Իր հանցավոր մտահղացումը կյանքի կոչելու նպատակով նա 2002-2004 թվականների ընթացքում ԱՄՆ-ից Միլենա Աբրահամյանի անունից տարբեր ընկերությունների միջոցով Երևանի Գարեգին Նժդեհի փողոցի 28 շենքի թիվ 27 բնակարանի բնակիչ Աշոտ Իսկանդարյանին է ուղարկել 8 ծանրոց, որոնք վերջինս ստացել ու պահել է իր տանը, իսկ երբ Է.Խաչատրյանը վերադարձել է Երևան, հանձնել է նրան, որը ստանալով ծանրոցը՝ տարել է Մոսկվա:

2004 թվականի ապրիլի 7-ին Է.Խաչատրյանը հերթական ծանրոցը Ա.Իսկանդարյանին ուղարկելուց հետո, երբ պարզել է, որ վերջինս արդեն ՀՀ-ից տեղափոխվել է Կիև, հանցավոր խմբում ընդգրկել է գործով դատապարտյալ Սուրեն Միմասյանին և նրան է վերահասցեագրել ծանրոցը՝ հանձնարարելով դրանում գտնվող թմրանյութի փաթեթը պահել տանը մինչև իր Հայաստան գալը: 2004 թվականի ապրիլի 23-ին նա վերադարձել է Հայաստան, և նույն օրը Ս.Միմասյանի հետ թմրամիջոցը տեղափոխել են Մոսկվա:

Ս.Միմասյանի հետ թմրամիջոցի առաջին խմբաքանակը ՌԴ տեղափոխելուց հետո Է.Խաչատրյանը կազմակերպված խմբում ընդգրկել է նաև Անուշ Միմասյանին և ԱՄՆ-ից 2004 թվականի հունիսի 6-ին թմրամիջոցի երկրորդ խմբաքանակն է ուղարկել Միմասյանների հասցեով, որը վերջիններս հունիսի 6-ին ստացել և պահել են իրենց բնակարանում: Պատճառաբանելով, որ ինքը չի կարող ժամանել Երևան՝ Է.Խաչատրյանը հանձնարարել է Ս.Միմասյանին փաթեթը տեղափոխել Մոսկվա և «Դոմոդեդովո» օդանավակայանում հանձնել ՌԴ քաղաքացի Անատոլի Վալենտինի Կուրոպովին: 2004 թվականի հունիսի 11-ին թմրամիջոցով փաթեթը տեղափոխելով գոտկատեղում՝ Ս.Միմասյանը օդանավակայանից Ա.Միմասյանի միջոցով Է.Խաչատրյանի հետ կապ պահպանելու նպատակով նրա հետ մեկնել է «Զվարթնոց» օդանավակայան ու փորձել «Զվարթնոց» մաքսատնով Երևան-Մոսկվա թիվ 512-րդ չվերթով, իր գոտկատեղում թաքցրած, ՌԴ տեղափոխել 943,8 գրամ քաշով «կոկաին» տեսակի թմրամիջոցը, սակայն դա նրան չի հաջողվել, քանի որ մաքսային գոտին հատելուց հետո օդանավակայանի անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից կրկնակի զննմամբ թմրամիջոցով փաթեթը Ս.Միմասյանի գոտկատեղից հայտնաբերվել և առգրավվել է:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը գտնում է, որ առկա է բացառիկ հանգամանքների համակցություն, որը հնարավոր է դարձնում փոփոխել դատապարտյալ Անուշ Միմասյանի վերաբերյալ Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 8-ի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի դատավճիռները և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ մեղմացնել նրա նկատմամբ նշանակված պատիժը:

Համաձայն բողոքի փաստարկների՝ Անուշ Մինասյանը նշված հանցագործության կատարման խմբի կազմում ակտիվ դերակատարում չի ունեցել, հանցագործության կատարմանը մասնակցել է մեկ դրվագով, որն արտահայտվել է Է.Խաչատրյանին ընդամենը հեռախոսով տեղեկություններ հայտնելով: Դատապարտյալը խմբի կազմում հայտնվել է ինքնաբերաբար, հանգամանքների պատահական զուգադիպությամբ, քանի որ նա Հայաստան է վերադարձել կարճ ժամանակով՝ բուժման նպատակով: Բացի նշվածից, որպես դատապարտյալի պատիժը մեղմացնող հանգամանքներ պետք է գնահատել այն, որ նա կին է, մայր, նախկինում ոչնչով արատավորված չի եղել, ֆիզիկապես վատառողջ է, հանցագործությունը կատարելիս որևէ շահադիտական նպատակ չի հետապնդել, կատարել է իր ամուսնու եղբոր հանձնարարությունը:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վերը նշված հիմնավորումներով վճռաբեկ բողոքում խնդրվում է բեկանել Անուշ Արարատի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 8-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի դատավճիռները՝ պատժի մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Մինասյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժաչափը կրճատել ու սահմանել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով:

Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում, համաձայն որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն ու քրեախրավական ներգործության մնացած միջոցները պետք է լինեն արդարացի, այն է՝ համապատասխանեն կատարված հանցավոր արարքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Նույնանման պահանջ է ամրագրված նաև քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում: Հանցանք կատարած անձի նկատմամբ անհատական մոտեցումը պատիժ նշանակելիս անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժատեսակն ու չափն ընտրելիս հանգի համոզման, որ դրանով կհասնի պատժի նպատակների:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները: Պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով ու բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով:

Նշանակվող պատիժը չի կարող հողվածի սանկցիայում նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել, այսինքն՝ դուրս գալ հատուկ մասի հողվածի սանկցիայի սահմաններից: Այդ պահանջից բացառություն կարող է անել միայն ՀՀ քրեական օրենսգիրքը, որի Ընդհանուր մասում նախատեսված հատուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից: ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը սահմանում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը, որի բովանդակությունից երևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմք են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքները, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Բացառիկ կարող են ճանաչվել նաև այլ հանգամանքներ, որոնք բնութագրում են հանցավորի անձը՝ որպես նվազ վտանգավոր:

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը: Ինչպես երևում է գործի նյութերից, Ա.Մինասյանը հանցանք է կատարել հանգամանքների պատահական գուգորդմամբ. երկար ժամանակ բացակայելուց հետո Հայաստանի Հանրապետություն է վերադարձել բուժման նպատակով և հանցագործության կատարմանը ներգրավվել է ամուսնու եղբոր՝ Սուրեն Մինասյանի կողմից, որևէ շահադիտական նպատակ չի ունեցել, հանցագործությանը մասնակցել է ընդամենը մեկ դրվագով, նրա դերը եղել է երկրորդական և արտահայտվել է միայն Ե.Խաչատրյանին հեռախոսով ինքնաթիռի թռիչքի մասին տեղեկություն հայտնելով: Բացի այդ, նա հանցանք է կատարել առաջին անգամ, նախկինում ոչնչով արատավորված չի եղել, կին է, մայր, վատառողջ, պատիժ նշանակելու պահին տառապել է «երկկողմանի կիստոզ-ֆիբրոզ մասթոպատիա» հիվանդությունով, մշտապես եղել է բժիշկների հսկողության տակ և ըստ քրեակատարողական հիմնարկի կողմից արված տեղեկանքի՝ ունի մասնագիտացված բուժհիմնարկում ստացիոնար հետազոտման ու բուժման կարիք:

Պալատը գտնում է, որ վերը շարադրված բոլոր հանգամանքներն իրենց համակցությամբ էականորեն նվազեցնում են ինչպես հանցագործության, այնպես էլ հանցավորի վտանգավորության աստիճանը և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում օբյեկտիվ հիմք են օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Մինասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով կապահովվի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Վերաքննիչ դատարանը, անտեսելով արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն ամրագրող ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթները, Ա.Մինասյանի նկատմամբ նշանակել է ակնհայտ խիստ պատիժ:

Այսպիսով՝ վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել:

Անուշ Արարատի Սինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Երևանի Մալաթիա-Մերաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 8-ի և ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի դատավճիռները պատժի մասով բեկանել և փոփոխել:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Սինասյանի նկատմամբ նշանակել պատիժ ազատազրկման ձևով՝ 4 /չորս/ տարի ժամկետով:

Դատավճիռները մնացած մասերով թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 171/07

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն
համայնքների առաջին ատյանի դատարանի
որոշում կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Վ.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007թվականի հոկտեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը դատապարտյալ Ռուշան Վարդգեսի Նիկողոսյանի նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով նշանակված 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ տուգանքը 270 (երկու հարյուր յոթանասուն) ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով փոխարինելու և պատժի կատարումը կասեցնելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 3-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.

Ռուշան Վարդգեսի Նիկողոսյանը 2006 թվականի հոկտեմբեր ամսվա վերջերին առանց իրացնելու նպատակի ապօրինի պատրաստել է 19 գրամ չորացված «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որից 1 գրամն առանց բժշկի թույլտվության գործածել է, իսկ մնացած 18 գրամը պահել է իրենց թոնրատանը, որը հայտնաբերվել է 2006 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված խուզարկությամբ:

Նշված արարքների համար Ռուշան Նիկողոսյանն Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով մեղավոր է ճա-

նաչվել է՝ 2-րդ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով և է՝ 2-րդ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է է՝ 2-րդ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 6 ամիս ժամկետով, է՝ 2-րդ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքի 30.000 է՝ դրամի չափով: է՝ 2-րդ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները գումարելու միջոցով Ռ.Նիկողոսյանը դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանքի 30.000 (երեսուն հազար) է՝ դրամի չափով: Պատժի սկիզբը հաշվարկվել է 2006 թվականի դեկտեմբերի 23-ից:

2007 թվականի մարտի 7-ին Ռուշան Նիկողոսյանի վերաբերյալ կայացված դատավճիռը ուղարկվել է է՝ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի, որտեղից 2007 թվականի մարտի 16-ին փոխանցվել է նույն բաժնի Էրեբունի և Նուբարաշեն բաժանմունք:

2007 թվականի մարտի 22-ին հիշյալ բաժանմունքը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Ռ.Նիկողոսյանի նկատմամբ նշանակված 30.000 է՝ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը 2007 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ միջնորդությունը բավարարել է՝ Ռ.- Նիկողոսյանի նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով նշանակված 30.000 է՝ դրամ տուգանքը փոխարինել է 270 ժամ հանրային աշխատանքներով և պատժի կատարումը կասեցրել է՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի կրման ժամկետով:

2007 թվականի մայիսի 4-ին Ռ.Նիկողոսյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է ազատազրկման ձևով պատժի կրումից, 2007 թվականի հունիսի 22-ին նրա անձնական գործը փոխանցվել է է՝ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունք:

է՝ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ է՝ 2-րդ քրեական օրենսգրքի 414.2-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի հիմքով վարույթ է ընդունվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ վճռաբեկ բողոքի՝ է՝ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Էրեբունի և Նուբարաշեն բաժանմունքը, ստանալով Ռուշան Նիկողոսյանի վերաբերյալ կայացված դատավճիռը, առանց ստուգելու տուգանքի վճարման փաստը, 2007 թվականի մարտի 22-ին միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Ռ.Նիկողոսյանի նկատմամբ նշանակված 30.000 է՝ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը միջնորդության քննարկմանը դատապարտյալ Ռ.Նիկողոսյանի մասնակցությունը չի ապահովել և առանց պարզելու տուգանքի վճարման հանգամանքը, 2007

թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Ռ.Նիկողոսյանի նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով նշանակված 30.000 ՀՀ դրամ տուգանքը փոխարինել է 270 ժամ հանրային աշխատանքներով և պատժի կատարումը կասեցրել է՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի կրման ժամկետով:

Դատապարտյալ Ռ.Նիկողոսյանի պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո՝ 2007 թվականի հունիսի 22-ին, նրա թիվ 36/07 անձնական գործը փոխանցվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունք:

2007 թվականի հուլիսի 3-ին Ռ.Նիկողոսյանը ներկայացել է նշված բաժանմունք և հայտնել, որ 30.000 ՀՀ դրամ տուգանքը վճարել է դեռևս 2007 թվականի փետրվարի 26-ին՝ դատավճիռը կայացնելուց 6 օր անց: Այդ կապակցությամբ հարցում է արվել Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան՝ վճարման հանգամանքը պարզելու համար:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի 2007 թվականի հուլիսի 12-ի թիվ Ե-183 գրությամբ հայտնվել է, որ Ռուշան Նիկողոսյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավճռով սահմանված տուգանքը 2007 թվականի փետրվարի 26-ին թիվ 7022600327857 համարի անդորրագրով վճարվել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Արմավիրի մասնաճյուղ և ներկայացվել է անդորրագրի պատճենը:

Այսպիսով՝ Ռ.Նիկողոսյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով նշանակված տուգանքը վճարվել է դեռևս 2007 թվականի փետրվարի 26-ին, սակայն վճարման անդորրագիրը ժամանակին դատարան չներկայացնելու պատճառով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը, 2007 թվականի ապրիլի 3-ին բավարարել է ՀՀ ԱՆ ԶԿՎ նույն համայնքների այլընտրանքային պատիժների բաժնի պետի միջնորդությունը և Ռ.Նիկողոսյանի նկատմամբ դատավճռով սահմանված տուգանքը փոխարինել է հանրային աշխատանքներով:

Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը, առանց պարզելու Ռ.Նիկողոսյանի կողմից դատարանի դատավճռով սահմանված պատժի կատարման հանգամանքը, նրա նկատմամբ նշանակված տուգանքը փոխարինելով հանրային աշխատանքներով, Ռ.Նիկողոսյանի նկատմամբ կրկին անգամ պատիժ է նշանակել, որը կարող է վերջինիս համար ծանր հետևանքներ առաջացնել:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել դատապարտյալ Ռուշան Նիկողոսյանի նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատժատեսակը փոփոխելու և պատժի կատարումը կասեցնելու մասին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 3-ի որոշումը և վարույթը կարճել:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու օրենսդրական կարգավորումները տրված են ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահման-

ված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ նույն հողվածի չորրորդ մասով սահմանված կարգով: Իսկ 4-րդ մասը սահմանում է, որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հողվածի համաձայն՝ տուգանքը չվճարելու դեպքում այն փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով: Նշված հողվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատապարտյալի նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը:

Այդպիսի միջնորդության քննարկման ընթացակարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հողվածով: Նշված հողվածի 1-ին մասի համաձայն՝ դատական որոշման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատական նիստում՝ դատապարտյալի մասնակցությամբ: Նույն հողվածի 5-րդ մասը սահմանում է, որ գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները և լսում է դատական նիստին ներկայացած անձանց և դատախազի կարծիքները: Վերջինը ելույթ է ունենում դատապարտյալը կամ նրա պաշտպանը:

Օրենսդրական այս կարգավորումներից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հողվածի 4-րդ մասում նշված «տուգանքի վճարման անհնարինությունը» պետք է հիմնավորվի դատական քննության ընթացքում հետազոտված որոշակի ապացույցներով: Այսինքն՝ տուգանքի ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ միջնորդության հետ միասին միջնորդություն ներկայացրած մարմինը պարտավոր է ներկայացնել նաև իր միջնորդությունը հիմնավորող ապացույցներ: Դրանք պետք է մանրակրկիտ հետազոտվեն, ստուգվեն և գնահատվեն դատարանի կողմից, որպիսի պայմաններում միայն հնարավոր է տուգանքը չվճարելու պատճառների վերաբերյալ հանգել հիմնավորված հետևության և տալ համապատասխան գնահատական:

Դատական նիստին դատապարտյալին պարտադիր կերպով մասնակից դարձնելու դրույթը հնարավորություն է ընձեռում վերջինիս կողմից ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու միջոցով իրականացնել իր իրավունքների իրացումն ու պաշտպանությունը:

Ինչպես երևում է ներկայացված նյութերից, Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով Ռուշան Նիկողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հողվածով նշանակվել է տուգանք՝ 30.000 ՀՀ դրամի չափով: Նշված տուգանքը վճարվել է 2007 թվականի փետրվարի 26-ին, ինչը հաստատվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի 2007 թվականի հուլիսի 12-ի թիվ Ե-183 գրությամբ այն մասին, որ նշված գումարը վճարվել է թիվ 7022600327857 անդորրագրով «Ինեկորանկ» ՓԲԸ-ի Արմավիրի մասնաճյուղ:

Փաստորեն, դատապարտյալ Ռուշան Նիկողոսյանն ամբողջությամբ կրել է իր նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հողվածով տուգանքի ձևով նշանակված պատիժը:

Չնայած դրան՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը 2007 թվականի ապրիլի 3-ին բավարարել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Էրեբունի և Նուբարաշեն բաժանմունքի պետի միջնորդությունը և Ռ.Նիկողոսյանի նկատմամբ դատավճռով սահմանված տուգանքը փոխարինել է հանրային աշխատանքներով:

Ինչպես միջնորդություն ներկայացրած մարմինը, այնպես էլ դատարանն իր որոշմամբ Ռ.Նիկողոսյանի կողմից տուգանքի վճարման անհնարինությունը պատճառաբանել են սոսկ վերջինիս կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատժի կրումով:

Դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի կատեգորիկ պահանջը, միջնորդության քննարկմանը դատապարտյալին մասնակից չի դարձրել, տուգանքի գումարը վճարած լինելու հանգամանքի շուրջ քննություն չի կատարել և արդյունքում վերջինիս նկատմամբ նշանակված և վճարված տուգանքը անհիմն փոխարինել է հանրային աշխատանքներով:

Այսպիսով, դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք նույն օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Ռուշան Նիկողոսյանի վերաբերյալ կայացված որոշումը բեկանելու և վարույթը կարճելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Ռուշան Վարդգեսի Նիկողոսյանի նկատմամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով նշանակված 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ տուգանքը 270 (երկու հարյուր յոթանասուն) ժամ տևողությամբ հանրային աշխատանքներով փոխարինելու և պատժի կատարումը կասեցնելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 3-ի որոշումը բեկանել և վարույթը կարճել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-195/07

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում
դատավճիռ կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ռ.Ափիհյան
դատավորներ՝ Հ.Տեր-Աղամյան, Ժ.Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Գ.ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ**
տուժողի և քաղհայցվորի
ներկայացուցիչ **Լ.ՍԱՀԱԿՅԱՆ**

2007թվականի հոկտեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գագիկ Հրաչի Ազատյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռների դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Գագիկ Հրաչի Ազատյանը Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ կետի կարգով նախորդ դատավճռով նշանակված պատժից մասնակիորեն՝ 3 ամիս ազատազրկումը գումարելով, Գ.Ազատյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 4 (չորս) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալի շահերի պաշտպանը և քաղհայցվորի ներկայացուցիչը:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, պաշտպանի, տուժողի և քաղաքացիական հայցվորի ներկայացուցչի բողոքների հիման վրա վերստին քննելով գործը, 2007 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով Լուու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի դատավճիռը թողել է անփոփոխ, վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Գազիկ Ազատյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

Ախթալայի լեռնահարստացման համակարգի վերականգնման և գունավոր մետաղների խտանյութի արտադրության կազմակերպման նպատակով 2000 թվականի մարտի 1-ին «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ և «Մեթըլ-Փրինս ԷԼ ԹԻ ԴԻ» կորպորացիայի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր: Դրա համաձայն՝ վերջինիս կողմից ներդրված գումարներով «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում 2000 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2001 թվականի հոկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում Գազիկ Ազատյանն իրականացրել է կոմբինատի վերակառուցման և վերականգնման աշխատանքներ: Կանխիկ գումարով սարքավորումներ ձեռք բերելու նպատակով «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի տնօրեն, գործով դատապարտյալ Գ.Ազատյանի հրամանով ստեղծվել է գնման հանձնաժողով: Նշված ծրագրի իրականացման ընթացքում Գ.Ազատյանը, իր պաշտոնական դիրքն օգտագործելով, ներդրված գումարներից հափշտակություն կատարելու դիտավորությամբ ձեռք բերված ապրանքանյութական արժեքների իրական գները գնման հանձնաժողովից թաքցնելով, հանձնարարել է հանձնաժողովի նախագահին իր կողմից ներկայացված և ձեռք բերվածից ավել նշված գների ցուցակով կազմել շուկայից ձեռք բերման միակողմանի գնման ակտեր և այդ միջոցով յուրացման եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 9.155.500 ՀՀ դրամ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ վճռաբեկ բողոքի՝ Գազիկ Ազատյանի հարազատները նրա կողմից հանցագործությամբ «Մեթըլ-Փրինս ԷԼ ԹԻ ԴԻ» կորպորացիային պատճառված 9.155.400 ՀՀ դրամի չափով նյութական վնասն ամբողջությամբ վերականգնել են, ներկայացնելով վճարման վերաբերյալ բանկային համապատասխան անդորրագիր, ինչը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն, հանդիսանում է պատիժը մեղմացնող հանգամանք: Բացի այդ, Գազիկ Ազատյանը ֆիզիկապես վատառողջ է, 3-րդ կարգի հաշմանդամ է:

Գազիկ Ազատյանի վերաբերյալ քրեական գործով բողոքի քննարկումը և բավարարումը էական նշանակություն կունենա պատիժ նշանակելիս հաշվի առնել հափշտակության վերաբերյալ գործերով հանցագործությամբ պատճառված նյութական վնասի հատուցված լինելը:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Գազիկ Ազատյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լուու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի դա-

տավճիռները, Գագիկ Ազատյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառել՝ նրան ազատելով կալանքից:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Դատավճիռ կայացնելիս դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաջորդականությամբ լուծելով այն հարցերը, թե ենթակա է արդյո՞ք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար և ին՞չ պատիժ պետք է նշանակվի նրա նկատմամբ, պետք է լուծի նաև այն հարցը, թե ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշանակված պատիժը կրելու պարտականությունից ազատելու հնարավորություն է նախատեսում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի այն դրույթները, որոնք վերաբերում են պատժին և պատժի նպատակներին: Նշված դրույթներն են, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածները, որոնք սահմանում են պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Նշված իրավադրույթների լույսի ներքո գնահատելով գործի հանգամանքները՝ կատարած հանցագործության առանձնահատկությունները, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները միայն դատարանը կարող է հանգել որոշակի հետևության, թե հանցանք կատարած անձի կողմից պատիժը կրելն անհրաժեշտ պայման է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին հասնելու համար, թե ոչ:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման օրենսդրական պայմանները Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է և այդ խնդրի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն արտահայտել է Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192 որոշմամբ:

Սույն գործով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով լուծելով այն հարցերը, թե ենթակա է արդյո՞ք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար և ի՞նչ պատիժ պետք է նշանակվի նրա նկատմամբ, հանգել են ճիշտ հետևության՝ Գագիկ Ազատյանի նկատմամբ ընտրված պատժատեսակի և

պատժաչափի հարցում: Սակայն դատարանները, անտեսելով լուծման ենթակա նաև այն հարցը, թե ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, քննարկման առարկա չեն դարձրել նշանակված պատիժը Գագիկ Ազատյանի կողմից կրելու նպատակահարմարության հարցը:

Ըստ գործի տվյալների՝ Գագիկ Ազատյանը նախկինում դատապարտված չի եղել, վատառողջ է՝ տառապում է շաքարային դիաբետ հիվանդությամբ, 3-րդ կարգի հաշմանդան է, համաձայն թիվ 0401002 վճարման հանձնարարականի հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնվել է, ինչն էականորեն նվազեցնում է հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը: Պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները գործի նյութերում բացակայում են:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ սույն գործի փաստական տվյալները հնարավորություն են տալիս դատարանին գալ այն համոզման, որ տվյալ գործով դատապարտյալ Գագիկ Ազատյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու և վերջինիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել չէ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը:

Նշված նկատառումներով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Ազատյանի վերաբերյալ չէ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի և չէ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռները Գագիկ Ազատյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու մասով պետք է փոփոխել և չէ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ այն պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Այսպիսով, դատարանները թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը չէ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն հինք է հանդիսանում Գագիկ Ազատյանի նկատմամբ կայացված դատավճիռները բեկանելու և փոփոխելու համար:

Չէ գլխավոր դատախազության ղեկավար հաշվին որպես պատճառված վնասի հատուցում մուծված չէ դրան գումարը պետք է փոխանցել «Մեթրլ-Փրինս ԷԼ ԹԻ ԴԻ» կորպորացիայի հաշվին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով չէ Սահմանադրության 92-րդ հոդվածով, չէ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ չէ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Գագիկ Հրաչի Ազատյանի վերաբերյալ չէ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի և չէ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռները բեկանել և փոփոխել. չէ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված 4 (չորս) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատագրկումը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Գագիկ Հրաչի Ազատյանին անհապաղ ազատել ազատագրկման ձևով պատժի կրումից:

2. ՀՀ գլխավոր դատախազության դեպոզիտ հաշվին մուծված 9.155.400 (ինը միլիոն մեկ հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարը փոխանցել «Սեթըլ-Փրինս ԷԼ ԹԻ ԴԻ» կորպորացիայի հաշվին՝ որպես պատճառված վնասի հատուցում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 212/07

Վերաքննիչ դատարանում որոշում
կայացրած դատարանի կազմը՝
Նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
Դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար
դատախազ
դատապարտյալ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Շ.ՏԻԳՐԱՆՅԱՆ
Վ.ՄՈՒՆՍԻԻԱՉՈՅԱՆ

2007թվականի նոյեմբերի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը Վարդան Միգիչի Մոլխախաչյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին աստիճանի դատարանի 27.08.2007թ. որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Վարդան Միգիչի Մոլխախաչյանը ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 18.06.1997թ. դատավճռով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 17-99 հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 17-15-99 հոդվածի 4-րդ կետով, 88-րդ հոդվածի 2-րդ մասով, 232-րդ հոդվածի 1-ին մասով, 37-րդ հոդվածով սահմանված կանոններով դատապարտվել է ազատազրկման 15 /տասնհինգ/ տարի ժամկետով, անձնական ամբողջ գույքի բռնագրավումով: Որոշվել է գործով դատապարտված 4 անձանցից համապարտության կարգով հոգուտ տուժողի ներկայացուցչի բռնագանձել 1.000.000 և 4.930.000 ՀՀ դրամ:

Արագածոտնի մարզի առաջին աստիճանի դատարանի 22.08.2003թ. որոշմամբ Վ.Մոլխախաչյանի արարքը համապատասխանեցվել է 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 5-րդ կետերին, 34-38-

104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, 175-րդ հոդվածի 3-րդ մասին, 235-րդ հոդվածի 1-ին մասին: Նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ՝ ազատագրկում 15 /տասնհինգ/ տարի ժամկետով:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը 27.08.2007թ. որոշում է կայացրել Վարդան Միգիչի Մուխսիխաչոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, որը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշմամբ թողնվել է անփոփոխ: Վարդան Մուխսիխաչոյանը պատժից կրել է 11 տարի 7 ամիս 22 օր, պատժի չկրած մասը կազմում է 3 տարի 4 ամիս 8 օր:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշման դեմ բերել է վճարելի բողոք:

Վճարելի դատարանը, 2007 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, բողոքն ընդունել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Վարդան Միգիչի Մուխսիխաչոյանը դատապարտվել է այն բանի համար, որ 1996թ. հուլիսի 1-ին, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնության գալով, կատարել են ավագակային հարձակում, որի ընթացքում նա օժանդակել է ավագակային հարձակման մյուս մասնակից Կ.Ղայրամանյանին՝ Կարինե Մխիթարյանին սպանելու, ինչպես նաև Թամարա Բախտիկյանին սպանելու փորձ կատարելու հանցավոր գործողություններում, ինչպես նաև ապօրինաբար պահել և կրել է հրազեն հանդիսացող ինքնաձիգ և ինքնաշեն ատրճանակ:

3. Վճարելի բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճարելի բողոք բերած անձը գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս հաշվի չի առնվել, որ Վարդան Մուխսիխաչոյանը կատարել է առանձնապես ծանր հանցագործություն՝ առանձին դաժանության մեծ և շահադիտական դրդումներով: Դատարանը Վարդան Մուխսիխաչոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս անտեսել է պատիժը կրելու սահմանված կարգի խախտումների համար 8 անգամ կարգապահական տույժի ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ Վարդան Մուխսիխաչոյանը տուժողի ներկայացուցչին ամբողջ ծավալով չի փոխհատուցել դատավճռով որոշված գումարը: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Բացի այդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում չի կիրառվում, «երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»: Բողոքաբերը նշում է նաև, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տված բնութագրերը «կրել են ձևական բնույթ», «կատարված հանրօգուտ և շինարարական աշխատանքների»՝ Վարդան Մուխսիխաչոյանի մասնակցելը հիմնավորող որևէ փաստաթուղթ չկա:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Վ.Մուխսիխաչոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի

դատարանի 27.08.2007թ. որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշումը, «փոփոխել դատական ակտը և «Կոշ» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը մերժել», «հաշվի առնելով, որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են հնարավորություն փոփոխելու դատական ակտը և դա բխում է արդարադատության շահերից»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի՝ ազատագրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Իսկ ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»:

Ինչպես երևում է ներկայացված նյութերից, դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը: ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 18.06.1997թ.դատավճռով որոշված 1.000.000 և 4.930.000 ՀՀ դրամ գումարները, որոնց հատուցումը համապարտության կարգով դրվել է դատապարտյալների վրա, տուժողի ներկայացուցչին ամբողջությամբ չի հատուցվել: Ինչպես երևում է Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումից, Վարդան Մուխսիխաչյանի կողմից հոգուտ տուժողի ներկայացուցիչ Փայլակ Միքայելյանի մուծվել է 375.000 ՀՀ դրամ, 1.130.160 ՀՀ դրամ և 1.300.000 ՀՀ դրամ: Գործով մյուս դատապարտյալ Ա.Միրիբյանի կողմից մուծվել է 856.800 և 341.700 ՀՀ դրամ: Այսպիսով, դատավճռով որոշված հատուցման ենթակա գումարը տուժողի ներկայացուցչին ամբողջությամբ չի հատուցվել: Չնայած դրան, առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ նշելով, թե «դատապարտյալը հարթել է տուժողին պատճառված վնասը», որոշել է Վարդան Մուխսիխաչյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատել, անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը հաշվի առնելու անհրաժեշտության վերաբերյալ, և խախտելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասը, որն ամրագրում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումն արգելող ուղղակի նորմ այն դեպքերի համար, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը:

Ինչ վերաբերում է առաջին ատյանի դատարանի այն հետևությանը, որ Վարդան Մուխսիխաչյանը ուղղվել է և պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը լուծելով պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը, պետք է նկատի

ունենար, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն այն դատապարտյալի նկատմամբ, որը կրելով նշանակված պատժի՝ օրենքով սահմանված մասը, վարքով ապացուցել է իր ուղղված լինելը, հետևաբար՝ ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունենալը:

Դատապարտյալ Վարդան Մուխսիխաչոյանի անձնական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նա չի ուղղվել, պատիժը կրելու ընթացքում թույլ է տվել իրավախախտումներ, որոնց համար ութ անգամ ենթարկվել է կարգապահական տույժերի: Վերոհիշյալ տույժերին նա ենթարկվել է հիմնարկի ներքին կանոնակարգը պարբերաբար խախտելու, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի օրինական պահանջները չկատարելու, պարբերաբար անհարգելի պատճառով հաշվառման չներկայանալու, քաղաքացիական հագուստ կրելու, գիշերային ժամերին իրեն հատկացված տեղում չքնելու, իր գործողություններով մյուս դատապարտյալների վրա բացասական ազդեցություն թողնելու համար: Խրախուսանքի է արժանացել 2 անգամ՝ 30.12.2005թ. հանվել է նախկինում ստացած տույժը, 03.07.2007թ. հատկացվել է լրացուցիչ երկարատև տեսակցություն: Վերջին խրախուսանքը տրվել է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու գործընթացում: Նշանակված տույժերը համաձայն օրենքի մարվել են, սակայն դատապարտյալի վարքը գնահատելիս նրա կատարած իրավախախտումները ենթակա են ուսումնասիրության և գնահատման: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատապարտյալի ուղղված լինելու մասին դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի գտնված լինելու ամբողջ ժամանակահատվածում վերջինիս վարքի մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա: Դատարանը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ ապահովի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրականացումը, այն է՝ պատժի ենթարկված անձին ուղղելը, սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հանցագործությունների կանխումը: Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլ նաև անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա:

Այսպիսով, Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը, Վարդան Միգիչի Մուխսիխաչոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ իր 27.08.2007թ. որոշմամբ, և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը՝ այդ որոշումը անփոփոխ թողնելու վերաբերյալ իր 04.10.2007թ. որոշմամբ, անտեսել են ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ուստի այդ որոշումները օրինական և հիմնավորված չեն:

Ելնելով վերը շարադրվածից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարդան Միգիչի Մուխսիխաչոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա պետք է ամբողջությամբ բեկանել և փոփոխել՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

հնարավորություն են տալիս նման փոփոխության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի կիրառման օրենսդրական պայմանները Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է և այդ խնդրի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն արտահայտել է նաև Իշխան Հովսեփի Ռուշանյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-179 որոշմամբ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Բեկանել դատապարտյալ Վարդան Միգիչի Մուխսիխաչյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդությունը բավարարելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 27-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումները և «Կոշ» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը մերժել:

Վարդան Մուխսիխաչյանին տեղափոխել «Կոշ» քրեակատարողական հիմնարկ՝ պատիժը կրելու:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-201/07

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի
դատավճիռ կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան
դատավորներ՝ Ռ.Ափիմյան, Մ.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /սյուսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ	Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Դ.ՎԵՏՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
դատախազ	Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ
պաշտպան	Ա.ԱԹԱՐԲԵԿՅԱՆԻ

2007թվականի նոյեմբերի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմնի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ Կարեն Տիգրանի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: 2006 թվականի սեպտեմբերի 26-ին մեղադրյալ Կարեն Հարությունյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով: 2006 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ մեղադրյալ Կարեն Հարությունյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին և 258-րդ հոդվածի 4-րդ մասերով վերացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 2007 թվականի մարտի 30-ին ուղարկվել է Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 7-ի դատավճռով Կարեն Տիգրանի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

Գործով մեղադրող, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազության դատախազ Ա.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով Կ. Հարությունյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 7-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Կարեն Տիգրանի Հարությունյանի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի՝ նրա բնակության վայրի բաժանմունքի վրա:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջիանգիրյանը:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Անչափահաս Կարեն Հարությունյանը եղբոր հետ 2006 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 23⁰⁰-ի սահմաններում, Երևանի Գյուլբենկյան փողոցի 38-րդ շենքի և Ակսել Բակունցի թիվ 5 տան դիմաց վիճաբանել են հարբած վիճակում գտնվող Նարեկ Մարտիրոսյանի հետ, որից հետո վիճաբանությունը փողոցի բանուկ մասից հեռու գտնվող վայրում շարունակելու համար խմբով գնացել են Երևանի Ակսել Բակունցի փողոցի թիվ 13 տան մոտ: Այնտեղ վիճաբանության ընթացքում Կ.Հարությունյանը գրպանում եղած դանակով 4 անգամ հարվածել է Ն.Մարտիրոսյանին, նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս և դիմել է փախուստի:

Ն.Մարտիրոսյանը մոտակա տների բնակիչների ջանքերով տեղափոխվել է «Արմենիա» ՀԲԿ, որտեղ վիրահատվել է և ստացել ստացիոնար բուժօգնություն:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ դատարանը պատիժ սահմանելիս խախտել է պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի չի առել կատարված հանցագործության ծանրության աստիճանը, այն, որ տուժողի կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքները պատճառվել են դանակի չորս հարվածներով, որոնցից երեքը՝ որովայնի շրջանին, վնասվել են տուժողի կենսական մի շարք օրգաններ: Դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմքում նշելով ամբաստանյալի անչափահաս լինելու հանգամանքը, մեղայականով ներկայանալը, մանկահասակ տարիքում հոր, հորեղբոր, պապիկի դաժանաբար սպանությունների դառնությունների պայմաններում դատախարակվելը, միակողմանի

ծնողագուրկ լինելով, արյան վրեժի, սպանության թեմաների քննարկումների պայմաններում մեծանալը, որն իբր պատճառ է հանդիսացել ամբաստանյալի կողմից գրպանում դանակ պահելուն, չեն կարող ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմք հանդիսանալ, չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի հասարակական վտանգավորության աստիճանը և չեն արդարացնում ամբաստանյալի կողմից դանակ կրելու հանգամանքը: Բացի այդ, տուժողը, որն ուներ ամբաստանյալի կրկնակի տարիքը, ընդհանրապես որևէ կապ չի ունեցել ամբաստանյալի հարազատների սպանությունների և նրա դաստիարակության պայմանների հետ: Նշվածը վկայում է, որ Կ.Հարությունյանի անձն իրենից ներկայացնում է հանրորեն մեծ վտանգավորություն, և նա պատիժը պետք է կրի միայն ազատազրկման ձևով, որի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել նրա կողմից նոր հանցագործությունների կատարումը: Արդյունքում, ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները ճիշտ չեն կիրառել քրեական օրենքը, այսինքն՝ Կ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառվել է առանց բավարար հիմքերի:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճիռը բեկանել և քրեական գործը վերադարձնել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման Կ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով 3 /երեք/ տարի ժամկետով ազատազրկում սահմանելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի բովանդակությունից: Այն սահմանում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Պատիժ նշանակելու արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգա-

մանքներով: Պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարատակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Փաստորեն պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ նշանակելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, կանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը:

Ինչպես երևում է գործի նյութերից, անչափահաս Կ.Հարությունյանը, որն իր գրպանում մշտապես դանակ է պահել, 2006 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 23-ի սահմաններում, վիճաբանել է 29 տարեկան Նարեկ Մարտիրոսյանի հետ, որի ընթացքում նրա առողջությանը ծանր վնաս պատճառելու ուղղակի դիտավորությամբ դանակով 4 անգամ հարվածել է տուժողի մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ կենսականորեն կարևոր օրգաններին: Դրա հետևանքով Ն.Մարտիրոսյանի առողջությանը պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս ձախ ուսահողի, նստատեղի ձախ կեսի շրջանների ծակած-կտրած վերքերի, կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի շրջանի ծակած-կտրած, պլևրալ խոռոչը թափանցող վերքի, կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի շրջանի ծակած-կտրած պլևրալ և որովայնի խոռոչները թափանցող վերքի ձևով՝ ձախ թոքի ստորին բլթի, ստամոքսի վնասումներով: Ծանր վիրավորված, արնաքամ տուժողին թողնելով դեպքի վայրում՝ Կ.Հարությունյանը դիմել է փախուստի: Գիտակցությունը կորցրած Ն.Մարտիրոսյանը մոտակա տների բնակիչների ջանքերով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ վիրահատվել է և ստացել ստացիոնար բուժօգնություն: Դատապարտյալ Կ.Հարությունյանի կողմից ծանր հանցագործության կատարման վերը նշված հանգամանքները վկա-

յում են նրա անձի հասարակական վտանգավորության բարձր աստիճանի մասին և բացառում են նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

Այս պայմաններում անչափահաս տարիքում հանցանք կատարելը, մեղապահանով ներկայանալը, մեղքն ընդունելը և անկեղծորեն գոջալը չեն վկայում այն հասարակական վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Կ.Հարությունյանի կատարած հանցագործությանը: Դրանք չեն նվազեցնում դատապարտյալի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Կ.Հարությունյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

Ինչ վերաբերում է դատարանի կողմից հաստատված ճանաչված այն հանգամանքներին, թե Կ.Հարությունյանի հորը, հորեղբորը, պապին դաժանաբար սպանել են, և նա մանկահասակ տարիքում տարել է նրանց դաժանաբար սպանության դառնությունը, դատախարակվել է պապի և տատի կողմից արյան վրեժի, սպանության թեմաների քննարկումների ոլորտում, որի պատճառով գրպանում դանակ է կրել, ապա դրանք չեն համապատասխանում դատարանում հետազոտված ապացույցներին: Գործի նյութերում չկան և դատարանի կողմից չեն հետազոտվել օբյեկտիվ փաստական տվյալներ այն մասին, որ դատապարտյալ Կ.Հարությունյանի հայրը, հորեղբայրը և պապը դարձել են անձի կյանքի դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործության գոհեր: Բացի այդ, ոչինչ չի կարող արդարացնել անչափահասի կողմից մշտապես դանակով զինված շրջելը և դանակի բազմաթիվ հարվածներով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը մի անձի, որը որևէ առնչություն չունի Կ.Հարությունյանի և նրա հարազատների հետ:

Փաստորեն առանց հաշվի առնելու գործի վերը նշված հանգամանքները, Կ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ինչն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և դատապարտյալի անձին:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սխալ հետևության են հանգել Կ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին:

Դատարանը Կ.Հարությունյանի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված դատավճռի կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մատով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա պատիժը մեղմ

լինելու պատճառաբանությամբ բեկանել վերաքննիչ դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, երբ ակնհայտ մեղմ պատիժ է նշանակվել դատապարտյալի նկատմամբ և չարդարացված բարելավվել է նրա վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել:

Կարեն Տիգրանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 213/07

Վերաքննիչ դատարանում որոշում
կայացրած դատարանի կազմը՝
Նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
Դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

**Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

քարտուղար
դատախազ
դատապարտյալ

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Շ.ՏԻԳՐԱՆՅԱՆ
Ա.ՄԻՐԻԲՅԱՆ**

2007թվականի նոյեմբերի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը Արամայիս Հենրիկի Սիրիբյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին աստանի դատարանի 27.08.2007թ. որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշման դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Արամայիս Հենրիկի Սիրիբյանը ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 18.06.1997թ. դատավճռով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 17-99 հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 17-15-99 հոդվածի 4-րդ կետով, 88-րդ հոդվածի 2-րդ մասով, 232-րդ հոդվածի 1-ին մասով, 37-րդ հոդվածով սահմանված կանոններով դատապարտվել է ազատազրկման 15 /տասնհինգ/ տարի ժամկետով, անձնական ամբողջ գույքի բռնագրավումով: Որոշվել է գործով դատապարտված 4 անձանցից համապարտության կարգով հոգուտ տուժողի ներկայացուցչի բռնագանձել 1.000.000 և 4.930.000 ՀՀ դրամ:

Արագածոտնի մարզի առաջին աստանի դատարանի 09.09.2003թ. որոշմամբ Ա.Սիրիբյանի արարքը համապատասխանեցվել է 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 8-րդ կետերին, 38-34-104-

րոյ հողվածի 2-րդ մասի 1-ին կետին, 175-րդ հողվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին, 235-րդ հողվածի 1-ին մասին: Նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ՝ ազատագրվում 15 /տասնհինգ/ տարի ժամկետով: Պատժից կրել է 11 տարի 7 ամիս 19 օր, պատժի չկրած մասը կազմում է 3 տարի 4 ամիս 11 օր:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը 27.08.2007թ. որոշում է կայացրել Ա.Միրիբյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, որը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշմամբ թողնվել է անփոփոխ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշման դեմ բերել է վճարելի բողոք:

Վճարելի դատարանը, 2007 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, բողոքն ընդունել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արամայիս Հենրիկի Միրիբյանը դատապարտվել է այն բանի համար, որ 1996թ. հուլիսի 1-ին, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնության գալով, կատարել են ավագակային հարձակում, որի ընթացքում նա օժանդակել է ավագակային հարձակման մյուս մասնակից Կ.Ղայրամանյանին՝ Կարինե Մխիթարյանին սպանելու, ինչպես նաև Թամարա Բախտիկյանին սպանելու փորձ կատարելու հանցավոր գործողություններում, ինչպես նաև ապօրինաբար կրել է հրազեն հանդիսացող ինքնաձիգ:

3. Վճարելի բողոքի պահանջը, փաստարկերը և հիմքերը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճարելի բողոք բերած անձը գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս հաշվի չի առնվել, որ Արամայիս Միրիբյանը կատարել է առանձնապես ծանր հանցագործություն՝ առանձին դաժանությանը և շահադիտական դրդումներով: Դատարանը Արամայիս Միրիբյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս անտեսել է պատիժը կրելու սահմանված կարգի խախտումների համար 8 անգամ կարգապահական տույժի ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ Ա.Միրիբյանը տուժողի ներկայացուցչին ամբողջ ծավալով չի փոխհատուցել դատավճռով որոշված գումարը: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հողվածի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Բացի այդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հողվածի 1-ին մասը սահմանում է, որ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում չի կիրառվում, «երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»: Բողոքաբերը նշում է նաև, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տված բնութագրերը «կրել են ձևական բնույթ», «կատարված հանրօգուտ և շինարարական աշխատանքներին» Ա.Միրիբյանի մասնակցելը հիմնավորող որևէ ճշգրիտ փաստաթուղթ չկա:

Վճարելի բողոք բերած անձը խնդրել է բեկանել Արամայիս Հենրիկի Միրիբյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի

մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշումը, «փոփոխել դատական ակտը և «Կոշ» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը մերժել», «հաշվի առնելով, որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են հնարավորություն փոփոխելու դատական ակտը և դա բխում է արդարադատության շահերից»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի՝ ազատագրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատիժը կրելուց

պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

Իսկ ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը»:

Ինչպես երևում է ներկայացված նյութերից, դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը: ՀՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 18.06.1997թ.դատավճռով որոշված 1.000.000 և 4.930.000 ՀՀ դրամ գումարները, որոնց հատուցումը համապարտության կարգով դրվել է դատապարտյալների վրա, տուժողի ներկայացուցչին ամբողջությամբ չի հատուցվել: Ինչպես երևում է Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումից, Ա.Միրիքյանի կողմից հօգուտ տուժողի ներկայացուցչի Փայլակ Միքայելյանի մուծվել է 1.198.500 ՀՀ դրամ: Գործով մյուս դատապարտյալ Վարդան Մուխսիխաչյանի կողմից մուծվել է 375.000 ՀՀ դրամ, 1.130.160 ՀՀ դրամ և 1.300.000 ՀՀ դրամ: Այսպիսով, դատավճռով որոշված հատուցման ենթակա գումարը տուժողի ներկայացուցչին ամբողջությամբ չի հատուցվել: Չնայած դրան, առաջին ատյանի դատարանը որոշել է Արամայիս Միրիքյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատել, անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը հաշվի առնելու անհրաժեշտության վերաբերյալ, և խախտելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասը, որն ամբողջում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումն արգելող ուղղակի նորմ այն դեպքերի համար, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացել է մարդու մահ, և դատապարտյալն ամբողջությամբ չի հարթել տուժողին պատճառված վնասը:

Ինչ վերաբերում է առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ Արամայիս Միրիքյանը ուղղվել է և պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը լուծելով պատժից պայման-

նական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը, պետք է նկատի ունենար, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն այն դատապարտյալի նկատմամբ, որը կրելով նշանակված պատժի՝ օրենքով սահմանված մասը, վարքով ապացուցել է իր ուղղված լինելը, հետևաբար՝ ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունենալը:

Դատապարտյալ Արամայիս Միրիբյանի անձնական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նա չի ուղղվել, պատիժը կրելու ընթացքում թույլ է տվել իրավախախտումներ, որոնց համար ութ անգամ ենթարկվել է կարգապահական տույժերի: Վերոհիշյալ տույժերին նա ենթարկվել է հիմնարկի ներքին կանոնակարգը պարբերաբար խախտելու, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի օրինական պահանջները չկատարելու, անկայուն իրավիճակ ստեղծելու, ոգելից խմիչք և արգելված իրեր թաքցնելու, տուգանային մեկուսարանում գտնվող դատապարտյալներին օդի փոխանցելու փորձեր կատարելու, դատապարտյալների բնակելի գոտի ոգելից խմիչք տեղափոխելու փորձ կատարելու համար: Խրախուսանքի է արժանացել 3 անգամ՝ 2002 թվականին հանվել է նախկինում ստացած տույժը, 20.10.2006թ. և 03.07.2007թ. տրամադրվել է լրացուցիչ երկարատև տեսակցություն: Վերջին երկու խրախուսանքները տրվել են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու գործընթացում: Նշանակված տույժերը համաձայն օրենքի մարվել են, սակայն դատապարտյալի վարքը գնահատելիս նրա կատարած իրավախախտումները ենթակա են ուսումնասիրության և գնահատման: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատապարտյալի ուղղված լինելու մասին դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի գտնված լինելու ամբողջ ժամանակահատվածում վերջինիս վարքի մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա: Դատարանը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենքի պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ ապահովի չ՛չ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրականացումը, այն է՝ պատժի ենթարկված անձին ուղղելը, սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հանցագործությունների կանխումը: Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլ նաև անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա:

Այսպիսով, Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը, Արամայիս Հենրիկի Միրիբյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ իր 27.08.2007թ. որոշմամբ, և չ՛չ քրեական վերաքննիչ դատարանը՝ այդ որոշումը անփոփոխ թողնելու վերաբերյալ իր 04.10.2007թ. որոշմամբ, անտեսել են չ՛չ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի և չ՛չ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ուստի այդ որոշումները օրինական և հիմնավորված չեն:

Ելնելով վերը շարադրվածից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արամայիս Հենրիկի Միրիբյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2007թ. որոշումը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ չ՛չ քրեական վերաքննիչ դատարանի 04.10.2007թ. որոշումը, չ՛չ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա պետք է ամբողջությամբ բեկանել և փոփոխել՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավոր

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

րություն են տալիս նման փոփոխության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի կիրառման օրենսդրական պայմանները Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է և այդ խնդրի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն արտահայտել է նաև Իշխան Հովսեփի Ռուշանյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-179 որոշմամբ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Բեկանել դատապարտյալ Արամայիս Հենրիկի Միրիբյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդությունը բավարարելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 27-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումները և «Կոշ» քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը մերժել:

Արամայիս Միրիբյանին տեղափոխել «Կոշ» քրեակատարողական հիմնարկ՝ պատիժը կրելու:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-187/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի դատավճիռ կայացրած կազմը
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Կ.Ղազարյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

**Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**

2007 թվականի նոյեմբերի 30-ին

ք. Երևանում

ընթաց դատական նիստում, քննելով Տիգրան Արտավազդի Դանիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 19-ի դատավճռի դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Գարեգին Մարգարյանի միջոցով դատապարտյալ Տիգրան Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հուլիսի 12-ի դատավճռով Տիգրան Դանիելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 3-րդ մասով ու դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով՝ 10 /տաս/ տարի ժամկետով, անձնական գույքի բռնագրավմամբ, 235-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 5 /հինգ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 12 /տասներկու/ տարի ժամկետով, անձնական գույքի բռնագրավմամբ: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի՝ նշանակված պատժին մասնակիորեն գումար-

վել է նախորդ՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հոկտեմբերի 29-ի դատավճռով նշանակված պատիժը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 15 /տասնհինգ/ տարի ժամկետով, անձնական գույքի բռնագրավմամբ, բայց ոչ ավել քան հանցագործությանը հասցված վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է նախորդ դատավճռով նշանակված պատժի կրած մասը, և պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի հուլիսի 21-ից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Արտակ Զարգանդի Դանիելյանը, Գուրգեն Ռադրի Համբարձումյանը, Գևորգ Վազգենի Ավդալյանը, Արտավազ Զարգանդի Դանիելյանը, Քաջիկ Արարատի Կիրակոսյանը:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, Տիգրան Դանիելյանի, Գևորգ Ավդալյանի, Արտակ Դանիելյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը, 2007 թվականի մարտի 19-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հուլիսի 12-ի դատավճիռը թողել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Գ.Մարգարյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007թ. հոկտեմբերի 16-ի որոշմամբ 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով ընդունվել է վարյույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հափշտակություններ կատարելու համար նախկինում լինելով երկու անգամ դատապարտված՝ Տիգրան Դանիելյանը 11.09.2003 թվականի պատժի կրումից պայմանական վաղակետ ազատվելուց հետո, քաղաքացիների գույքը ավազակային հարձակման միջոցով հափշտակելու նպատակով 2004 թվականի հունվարի սկզբներին ստեղծել է կազմակերպված խումբ, որում ընդգրկել է իր եղբոր որդիներ՝ Արտակ և Արտավազ Դանիելյաններին, քրոջ որդուն՝ Գևորգ Ավդալյանին, Գուրգեն Համբարձումյանին, Միքայել Լուկասյանին, գործով չպարզված այլ անձանց, ղեկավարել խմբի գործողությունները և 2004 թվականի հունվար-հուլիս ամիսներին խմբի տարբեր կազմերով կատարել ավազակություններ: Այսպես՝

2003 թվականի վերջերին Գ.Համբարձումյանից տեղեկանալով, որ Երևան քաղաքի բնակիչ Հովակիմ Օհանջանյանը վաճառել է Թումանյան փողոցի 19-րդ շենքի 30-րդ բնակարանը և ունի 33.000 ԱՄՆ դոլար՝ Տ.Դանիելյանն առաջարկել է Արտավազը և Արտակ Դանիելյաններին ու Գ.Ավդալյանին զինված ավազակային հարձակմամբ հափշտակել այդ գումարը: Մշակվել է պլան, համաձայն որի՝ Տ.Դանիելյանը պետք է սպասեր շենքի մուտքի մոտ, իսկ մյուսները զինված և դիմակավորված ներխուժեին բնակարան:

2004 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 19-ի սահմաններում, այդ կազմով գալով հիշյալ շենքի մոտ՝ բացառությամբ Արտակ Դանիելյանի՝ դիմակավորվել են ու զինվել դանակներով, իսկ Գ.Ավդալյանը՝ նաև ատրճանակով, երեքով ապօրինի մուտք գործելով թիվ 30 բնակարանը՝ զենքերի և տաքացրած արդուկի օգտագործման սպառնալիքով Հ.Օհանջանյանից, նրա կնոջից՝ Ամժելիկա Աշոտյանից և նրանց դուստր Շուշանիկ Օհանջանյանից պահանջել են 30.000 ԱՄՆ դոլարը, որը չստանալով՝ հեռախոսի լարերով կապել են վերջիններին, նրանց կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով շուրջ 1,5 ժամ ծեծի են ենթարկել Հ.Օհանջանյանին ու համոզվելով, որ պահանջված գումարը տանը չէ՝ հափշտակել են տանը գտնվող 560.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույք:

2004 թվականի գարնանը Տ.Գանիելյանը, Գ.Համբարձումյանի միջոցով ծանոթանալով Արարատ քաղաքի բնակիչ Քաջիկ Կիրակոսյանի հետ և նրանից ստանալով տեղեկություններ նույն քաղաքի ոսկերչական սրահի սեփականատեր Ալիկ Խաչատրյանի վերաբերյալ, որոշել է ավագակային հարձակում գործել Ա.Խաչատրյանի բնակարանի վրա և հափշտակել նրա ունեցվածքը: Իր հանցավոր մտահաղացումն իրականացնելու նպատակով նա և հանցավոր խմբում ընդգրկված Մ.Դուկասյանը, Արտավազ Դանիելյանը, Գ.Ավդալյանը 21.05.04թ. ժամը 23.⁴⁰-ի սահմաններում դիմակավորված մուտք են գործել Ա.Խաչատրյանի բնակարան, հարձակվել վերջինիս, նրա կնոջ՝ Հասմիկ Վարդանյանի, դստեր՝ Տաթևիկ Խաչատրյանի վրա՝ սպառնալու նպատակով օգտագործելով խաղալիք ատրճանակ, որպես զենք օգտագործելով դանակներ, գազի մետաղական բալոն, առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել ու նրանց պատճառելով թեթև վնաս՝ հափշտակել են 935.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության գույք:

Այնուհետև, Տ.Գանիելյանը, Մասիս քաղաքի բնակիչ Արմեն Գրիգորյանից տեղեկություններ ստանալով այն մասին, որ համաքաղաքացի Աշոտ Յուզբաշյանը տանը ունի 30-40 հազար ԱՄՆ դոլար, 2004 թվականի հունիսի 10-ի գիշերը Գ.Ավդալյանի ու Գ.Համբարձումյանի հետ, դիմակավորված, Տ.Գանիելյանը՝ զինված ավտոմատ հրազենով, իսկ Գ.Ավդալյանը՝ դանակով և մահակով, պատուհանից ապօրինի մուտք են գործել Ա.Յուզբաշյանի բնակարան, վերջինիս և ընտանիքի անդամների կյանքին ու առողջությանը վտանգավոր բռնություն գործադրելով ու թեթև վնաս պատճառելով՝ հրազենի ու դանակի գործադրմամբ հափշտակել խոշոր չափի՝ 2.783.886 ՀՀ դրամին համարժեք 5.100 ԱՄՆ դոլար և 42.000 ՀՀ դրամ:

Դրանից հետո՝ Տ.Գանիելյանը և Գ.Համբարձումյանը 2004 թվականի հուլիսի 9-ին՝ ժամը 02.³⁰-ի սահմաններում, ավտոմատ հրազենով և դանակներով զինված ու դիմակավորված, ավագակային հարձակում են գործել Երևան քաղաքի Գրիբոյեդով 60 հասցեում գտնվող «Հախվերդյան շինմոնտաժ» ԲԲԸ-ի վրա, մտել ընկերության գրասենյակ, հարձակվել պահակ Ռ.Ավագյանի վրա, նրան կապել աթոռին և տեխնիկական սարքերի գործադրմամբ հափշտակել ընկերության տնօրեն Վ.Հախվերդյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի՝ 41.572.440 ՀՀ դրամին համարժեք 78.000 ԱՄՆ դոլարը, 1.500.000 ՀՀ դրամը, 20.000 ՀՀ դրամին համարժեք թուրքական լիրաներ, 1.598.940 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլարը, ընկերությանը պատկանող 1.800.000 ՀՀ դրամը և զանձնապահ Ս.Սկրտչյանին պատկանող 160.000 ՀՀ դրամ արժողության անվանական բաժնետոմսերը:

Բացի այդ, Տ.Գանիելյանն իրացնելու նպատակով ապօրինաբար ձեռք է բերել, պատրաստել և իր տանը պահել խոշոր չափի՝ 7,7 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Հիշյալ վերջին էպիզոդով ավտոմատ զենքի և դանակների գործադրմամբ ավագակային հարձակում կատարելու, ինչպես նաև խոշոր չափի «մարիխուանա» տեսակի թմրամիջոց ձեռք բերելու, պատրաստելու և պահելու համար Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հոկտեմբերի 29-ի դատավճռով Տ.Գանիելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 268-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 67-րդ հոդվածներով սահմանված կարգով դատապարտվել է ազատազրկման՝ 11 /տասնմեկ/ տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի հուլիսի 21-ից:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը, գտնում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 19.03.2007 թվականի դատավճռով խախտվել է դատավարության մասնակցի՝ Տիգարան Դանիելյանի նյութական իրավունքը:

Համաձայն բողոքի՝

1. Դատարանը Տ.Դանիելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով վերջնական պատիժ նշանակելիս խախտել է օրենքով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի՝ հանցագործությունների համակցություն է համարվում քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել: Տ.Դանիելյանի կողմից 2004 թվականի հունվար-հուլիս ամիսներին կատարած երեք ավագակային հարձակումները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով: 2004 թվականի հուլիսի 9-ին կատարած ավագակայությունը նույնպես որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով: Այսինքն՝ տեղի է ունեցել հանցագործությունների կրկնակիություն՝ միևնույն հոդվածի կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանքի կատարում:

Ըստ բողոքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի պատիժների լրիվ կամ մասնակի գումարում է նախատեսում միայն հանցանքների և դատավճիռների համակցության դեպքում: Հանցանքների կրկնակիության դեպքում պատիժը, անկախ դրվագների քանակից, նշանակվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայի սահմաններում: Այդ առումով Արարատի մարզի առաջին ատյանի դատարանն իր 2006 թվականի հուլիսի 12-ի դատավճռով նշանակված պատժին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հոկտեմբերի 29-ի դատավճռով նշանակված պատիժը մասնակիորեն գումարելիս ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը կարող էր կիրառել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժի նկատմամբ և չպետք է կիրառեր ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով նշանակված պատժի նկատմամբ: Բացի այդ, Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հուլիսի 12-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով Տ.Դանիելյանի նկատմամբ նշանակվել է այն ժամանակվա գործող օրենքով առավելագույն պատիժ՝ ազատազրկում՝ 10 /տաս/ տարի ժամկետով, ուստի նախորդ դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով նշանակված պատիժը հաշվի առնելու հարցը՝ տվյալ հոդվածի մասով սանկցիայի սահմանափակվելու պատճառով կարող էր լուծվել միայն կլանելու միջոցով: Այսինքն՝ հանցանքների կրկնակիության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի սխալ կիրառումը հանգեցրել է Տ.Դանիելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի սահմանները գերազանցող պատժի նշանակման, որով խախտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը, և անձը ենթարկվել է անօրինական ու անարդարացի խիստ պատժամիջոցի:

2. Բացի այդ, Տ.Դանիելյանի նկատմամբ չպետք է կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը:

ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով ավագակոմիտուներ որակվում է այն դեպքերում, երբ անձը ՀՀ քրեական օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունի: Այսինքն՝ տվյալ հանցակազմը որպես պարտադիր պայման է նախատեսում նշված հոդվածներով երկու և ավելի դատվածության առկայությունը: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի 18 տարին լրանալը: Այդ առումով որպես կրկնակի ռեցիդիվ և արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով որակող հատկանիշ չպետք է հաշվի առնվեր Տ.Դանիելյանի 04.12.1979 թվականի դատավճռով սահմանված դատվածությունը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով /գործող ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված/ հանցանքը նա կատարել է մինչև 18 տարին լրանալը: Հետևաբար, 14.12.1979թ. դատավճռով Տ.Դանիելյանի դատվածությունը օրենքի ուժով՝ 1992 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ պետք է համարել մարված: Ուստի, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով Տ.Դանիելյանին առաջադրված մեղադրանքը պետք է հանել մեղադրանքի ծավալից:

Վերը նշված հիմնավորումներով վճռաբեկ բողոքում խնդրվում է Տ.Դանիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 19-ի դատավճիռը բեկանել ու փոփոխել, այն է՝ ա) Տ.Դանիելյանի նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածը, բ) նրա մեղադրանքի ծավալից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված մեղադրանքն ու սահմանված պատժաչափը մեղադրանքի ծավալի նվազեցման առումով մեղմացնել:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակի՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ավագակոմիտուներ, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով,
- 2) կազմակերպված խմբի կողմից,
- 3) առողջությանը ծանր վնաս պատճառելով,

4) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից:

Այսինքն՝ մյուս ծանրացնող հանգամանքների շարքում դիտարկվում է նաև վերոհիշյալ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն առկա է, երբ անձը նախկինում երկու կամ ավելի անգամ դատապարտվել է միաբնույթ հանցագործությունների համար, և դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ, ու անձը նորից կատարում է համասեռ հանցագործություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածը սահմանում է հանցագործությունների ռեցիդիվը, որի 4-րդ կետը սահմանում է, որ այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն

հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

Ի տարբերություն նախկին՝ 1961 թվականի մարտի 7-ի օրենքով հաստատված քրեական օրենսգրքի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքը տարբերակված մոտեցում է դրսևորում չափահաս և անչափահաս տարիքում հանցանք կատարած անձանց դատավաճության մարման հարցում: Ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 96-րդ հոդվածի՝ մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձանց համար դատավաճությունը մարվելու ժամկետները կրճատվում են և համապատասխանաբար հավասար են՝

1) մեկ տարվա՝ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո.

2) երեք տարվա՝ ծանր հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո.

3) հինգ տարվա՝ առանձնապես ծանր հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո:

Համաձայն նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատավաճություն:

Գործի տվյալներով հիմնավորվել է, որ Տ.Դ-անիելյանը Երևանի Սովետականի շրջանի ժողդատարանի 04.06.1979 թվականի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 8 /ուր/ տարի ժամկետով: Նույն թվականի դեկտեմբերի 4-ին նա Արուսյանի շրջանի ժողդատարանի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով, նույն օրենսգրքի 38-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման՝ 10 /տաս/ տարի ժամկետով: Ընդ որում, վերոհիշյալ երկու հանցագործություններն էլ նա կատարել է անչափահաս տարիքում: Պատժի կրումից ազատվել է 31.10.1989 թվականին՝ ժամկետի լրացումով: Նոր հանցագործությունները, որոնց համար 3-րդ անգամ՝ ՀՀ Գերագույն դատարանի 28.11.1994թ. դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ, 15-229¹-րդ հոդվածի 3-րդ և 232-րդ հոդվածի 1-ին մասերով դատապարտվել է ազատազրկման՝ 14 տարի ժամկետով, նա կատարել է 1994 թվականի ապրիլի 25-ին, այսինքն վերոհիշյալ պատժից ազատվելուց 4 տարի 25 օր հետո:

Պալատը գտնում է, որ Տ.Դ-անիելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք առաջադրելով ու այդ կետով դատապարտելով՝ ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի խախտում, քանի որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով հանցանքը նա կատարել է մինչև 18 տարին լրանալը, հետևաբար այդ դատավաճությունն օրենքի ուժով 1992 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ մարվել է: Ուստի, դատավճռից պետք է հանել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով դատապարտումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում սույն օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել.

2) այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է սույն օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը վերաբերում է հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելուն, համաձայն որի՝

1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական եւ լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով:

2. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, գումարելիս վերջնական պատիժը չի կարող գերազանցել կատարված հանցանքներից առավել ծանրի համար նախատեսված առավելագույն պատիժը:

3. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության կամ միջին ծանրության եւ ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատագրկման ձեռով վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասը տարին:

4. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատագրկման ձեռով վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասնհինգ տարին: Եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմախ ազատագրկում, ապա վերջնական հիմնական պատիժը որոշվում է կլանելու միջոցով:

5. Կանցանքների համակցությամբ նշանակված հիմնական պատժին կարող են միացվել համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները: Լրացուցիչ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում վերջնական լրացուցիչ պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

6. Պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը:

Այսինքն՝ եթե գործով դատավճիռ կայացնելուց հետո պարզվել է, որ դատապարտյալը մեղավոր է այլ հանցագործության մեջ, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը և եթե ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դատավճիռներով հանցագործությունները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով /ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս, 112-րդ հոդվածի 2-րդ մաս, 175-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասեր և այլն/, ապա վերջնական պատիժը նշանակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 66-

րոյ հողվածի 6-րդ մասի կանոններով, սակայն այն չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հողվածի համապատասխան մասով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետը:

Ինչպես երևում է գործի նյութերից՝ 9.07.2004թ «Հախվերդյան շինմոնտաժ» ԲԲԸ-ի գրասենյակի վրա ավագակային հարձակում գործելու և ապօրինաբար քնրանյութ պահելու համար Տ.Դանիելյանն Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների 1-ին ատյանի դատարանի 2004 թվականի հոկտեմբերի 29-ի դատավճռով դատապարտվել է ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով 8 /ութ/ տարի, իսկ 268-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 2 /երկու/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ պատիժները մասնակի գումարելու միջոցով նշանակվել է ազատազրկում 9 /ինը/ տարի ժամկետով, որին մասնակի գումարվել է նախկին դատավճռով նշանակված, սակայն ոչ ամբողջովին կրած պատժի մի մասը՝ 2 /երկու/ տարի ժամկետով ազատազրկումը և ի վերջո նշանակվել է ազատազրկում՝ 11 /տասնմեկ/ տարի ժամկետով: Վերոհիշյալ դատավճռի կայացումից հետո պարզվել է, որ Տ.Դանիելյանը և նրա կողմից կազմակերպված խմբի անդամները 2004 թվականի հունվարի 5-ից մինչև մայիսի 21-ն ընկած ժամանակահատվածում ավագակային հարձակում են գործած եղել նաև Երևան քաղաքի բնակիչ Հ.Օհանջանյանի, Արարատ քաղաքի բնակիչ Ա.Խաչատրյանի, Մասիս քաղաքի բնակիչ Ա.Յուզբաշյանի ընտանիքի անդամների նկատմամբ՝ գործադրելով բռնություն և զենք, որի համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 3-րդ մասով:

Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը, 2006 թվականի հուլիսի 12-ին Տ.Դանիելյանին Հ.Օհանջանյանի, Ա.Խաչատրյանի և Ա.Յուզբաշյանի ընտանիքի անդամների նկատմամբ կատարված երեք ավագակային հարձակումների համար դատապարտելով ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով 10 /տաս/ տարի՝ այսինքն՝ հանցագործության կատարման ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի մասով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետով, իսկ 235-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 5 /հինգ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ նշանակված վերոհիշյալ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով սահմանել է ազատազրկում՝ 12 /տասներկու/ տարի ժամկետով, ապա նույն հոդվածի 6-րդ հոդվածի կարգով այդ պատժին մասնակիորեն գումարել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների 1-ին ատյանի դատարանի 29.04.2004թ. դատավճռով նշանակված պատժի մի մասը և նշանակել ազատազրկում՝ 15 /տասնհինգ/ տարի ժամկետով՝ դրա մեջ հաշվակցելով նախորդ դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ պատժի սկիզբը հաշվվելով 2004 թվականի հուլիսի 21-ից:

Փաստորեն, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը 2004 թվականի հոկտեմբերի 29-ի դատավճռով Տ.Դանիելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով դատապարտել է ազատազրկման՝ 8 /ութ/ տարի ժամկետով, իսկ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը 2006 թվականի հուլիսի 12-ի դատավճռով երեք ավագակային հարձակումների համար ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով դատապարտել է ազատազրկման՝ 10 /տաս/ տարի ժամկետով: Այսինքն՝ երկու առաջին ատյանի դատարաններն էլ չեն գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ազատազրկման առավելագույն 10 տարի ժամկետը: Այդ ժամկետը գերազանցվել է միայն հանցագործություն-

ների համակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ պատիժ նշանակելիս: Տ.Գանիելյանի կողմից 4 դրվագներով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով կատարված հանցանքների համար պատիժ նշանակելիս դատարանները դրանք դիտարկել են ոչ թե հանցագործությունների համակցություն, այլ կրկնակիություն և պատիժ նշանակելով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան, չեն գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ազատազրկումը:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը օրինական և հիմնավորված է: Դատարանը միաժամանակ գտնում է, որ Տ.Գանիելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով առաջադրված մեղադրանքի ծավալից հանելով 4-րդ կետը՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պետք է թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով նրա կողմից կատարված հանցավոր արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև նրան բնութագրող տվյալները:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տիգրան Արտավազի Գանիելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 19-ի դատավճիռը բեկանել և փոփոխել, այն է՝ նրա մեղադրանքի ծավալից հանել քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը:

Դատավճռի մնացած մասերը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

2007 թվականի դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Գործ ՎԲ-04/07

Արագածոտնի մարզի առաջին
ատյանի դատարանում որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Մնոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ՝ Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար՝ Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ
դատախազ՝ Գ.ՊԱՊՈՅԱՆԻ

2007թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Գագիկ Արամայիսի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով Աղավնի Աղվանի Հովհաննիսյանի և Գագիկ Գառնիկի Բարսեղյանի վերաբերյալ քրեական գործի մասը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մարտի 30-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Գագիկ Ասատրյանի կողմից առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով սույն քրեական գործը հարուցվել է 2004 թվականի հոկտեմբերի 20-ին: 2004 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Գագիկ Արամայիսի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: 2004 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ

հողվածի 2-րդ մասով որպես մեղադրյալներ ներգրավվել են նաև Աղավնի Աղվանի Հովհաննիսյանը և Գագիկ Գառնիկի Բարսեղյանը: 2004 թվականի դեկտեմբերի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 4-ի դատավճռով Գագիկ Ասատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում՝ մինչև դատաքննության ավարտը, դատախազը, հայտարարելով ամբաստանյալներ Գագիկ Բարսեղյանի և Աղավնի Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին, միջոցառել է վերջիններիս նկատմամբ քրեական գործի մասը կարճել նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Դատարանի 2005թվականի մարտի 30-ի որոշմամբ Գագիկ Բարսեղյանի և Աղավնի Հովհաննիսյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճվել է, և քրեական հետապնդումը դադարեցվել նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

«Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահի 2006 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ գլխավոր դատախազությունն ներկայացված նյութերի հիման վրա դատարաններում քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության վարչությունում նոր ի հայտ եկած հանգամանքների փաստով վարույթ է հարուցվել «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի «Թալին» մասնաճյուղի նախկին կառավարիչ Գագիկ Գառնիկիին Բարսեղյանի և գլխավոր հաշվապահ Աղավնի Աղվանի Հովհաննիսյանի նկատմամբ, որի վերաբերյալ քննության կատարումը հանձնարարվել է ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությանը:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմինը Գագիկ Արամայիսի Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Գագիկ Գառնիկի Բարսեղյանին և Աղավնի Աղվանի Հովհաննիսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրել հետևյալ արարքների համար.

Գագիկ Ասատրյանը, աշխատելով «Արդշինհիմվեստբանկ» ՓԲ ընկերության «Թալին» մասնաճյուղում որպես ավագ գանձապահ, 2004 թվականի հոկտեմբերի 4-ից 15-ն ընկած ժամանակահատվածում իր վստահության տակ գտնվող մասնաճյուղի ամենօրյա մնացորդային գումարներից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 8.964.434 ՀՀ դրամ, 3.848.130 դրամին համարժեք 7.605 ԱՄՆ դոլար և 6.270 ՀՀ դրամին համարժեք 10 եվրո՝ ընդհանուր գումարով 12.818.834 ՀՀ դրամ, որն օգտագործել է տարբեր քաղաքացիներին ունեցած պարտքի գումարները մարելու համար: Այսպես՝ Գագիկ Ասատրյանը, օգտվելով մասնաճյուղի կառավարիչ Գագիկ Բարսեղյանի և գլխավոր հաշվապահ Աղավնի Հովհաննիսյանի՝ ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքից, դրամական միջոցներն անձամբ ստուգելու և հաշվառելու պարտականությունների կատարման թերացումից, վերոհիշյալ ժամանակահատվածում՝ աշխատանքային օրվա ավարտից հետո, դրա-

մարկղում հավաքված և իր վստահությանը հանձնված բանկի մնացորդային գումարներից՝ մինչև դրանց հաշվառելն ու դրամապահոց տեղափոխելը, վերցրել է իրեն անհրաժեշտ որոշակի չափաքանակ, իսկ գումարները հաշվելու ընթացքում հաշվառել է նաև հափշտակված դրամաչափը: Այդ գումարներից Գագիկ Ասատրյանը վճարել է Թալին քաղաքի բնակիչներ Վ.Մնացականյանին, Ա.Սահակյանին, Լ.Խաչատրյանին, Զ.Պետրոսյանին, Ս.Եսայանին և այլոց ունեցած իր անձնական մեծաքանակ պարտքերի մի մասը: Գագիկ Բարսեղյանը, աշխատելով «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Թալին» մասնաճյուղում որպես կառավարիչ, իսկ Աղավնի Հովհաննիսյանը՝ որպես գլխավոր հաշվապահ, իրենց պաշտոնական պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորել են հանցավոր անփութ և անբարեխիղճ վերաբերմունք, պատշաճ կարգով չեն կատարել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ համակարգում դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի 6.4 կետի պահանջները, անձամբ չեն ստուգել և հաշվառել դրամն ու մյուս արժեքները, որից օգտվելով՝ ավագ գանձապահ Գագիկ Ասատրյանը 2004 թվականի հոկտեմբերի 4-ից 15-ն ընկած ժամանակահատվածում բանկի ամենօրյա մնացորդային գումարներից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 8.964.434 ՀՀ դրամ, 3.848.130 ՀՀ դրամին համարժեք 7.605 ԱՄՆ դոլար և 6.270 ՀՀ դրամին համարժեք 10 եվրո՝ ընդհանուր գումարով 12.818.834 ՀՀ դրամ, որն օգտագործել է տարբեր քաղաքացիներին ունեցած իր անձնական մեծաքանակ պարտքերի մի մասը մարելու համար:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոիշխյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքում բողոքի հեղինակը նշել է, որ Գ.Ասատրյանի կողմից յուրացում կատարելու վերաբերյալ գործով Գ.Բարսեղյանի և Ա.Հովհաննիսյանի մասը կարճելիս Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանին անհայտ են մնացել գործի համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, որոնք հիմնավորում են այդ անձանց մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, այն է՝ 2004 թվականի հոկտեմբերի 15-ին, հայտնաբերելով գանձապահ Գ.Ասատրյանի կողմից առանձնապես խոշոր չափերի հասնող գումարների յուրացման փաստը, այն կանխելու և նրան դրամարկղից մեկուսացնելու փոխարեն իրենց կարգադրիչ և այլ լիազորությունները հակառակ բանկի շահերին և հօգուտ գանձապահ Գ.Ասատրյանի օգտագործելով, օրվա հաշվառված գումարները թողել են նրա մոտ, ապա ինկասացիոն գումարները վստահել նրան, որից էլ օգտվելով՝ վերջինս կրկին հափշտակել է 2.000.000 ՀՀ դրամ և 2.400 ԱՄՆ դոլար՝ բանկին պատճառելով էական նյութական վնաս՝ բանկի համար առաջացնելով ծանր հետևանքներ:

Ելնելով վերոգրյալներից՝ բողոքի հեղինակը խնդրել է Գագիկ Ասատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական գործով Գագիկ Բարսեղյանի և Աղավնի Հովհաննիսյանի մասով քրեական գործի մասը կարճելու և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ վերջիններիս ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Ինչպես երևում է դատախազության եզրակացությունից, որը հիմնված է «Արդշինիմվեստբանկ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահի ներկայացրած նյութերի, դատապարտյալ Գագիկ Ասատրյանի, վկաներ Եղիշ Մարտիրոսյանի, Ազնիվ Հակոբյանի, Մանվել Քոչարյանի, Հասմիկ և Մանիկ Հարությունյանների ցուցմունքների, «Արմենթեյ» ՓԲԸ-ից վերցրած հեռախոսագրերի վերծանումների վերաբերյալ տվյալների վրա, երբ 2004 թվականի հոկտեմբերի 15-ին բանկի դրամարկղում կատարված ստուգմամբ պարզվել է, որ ավագ գանձապահ Գագիկ Ասատրյանի մոտ առկա է 6 միլիոն ՀՀ դրամի պակասորդ, «Արդշինիմվեստբանկ» ՓԲԸ առևտրային կազմակերպության ծառայողներ հանդիսացող բանկի մասնաճյուղի կառավարիչ Գագիկ Բարսեղյանը և գլխավոր հաշվապահ Աղավնի Հովհաննիսյանը ոչ միայն չեն կատարել «Արդշինիմվեստբանկ» ՓԲԸ համակարգում գործառնությունների իրականացման վերաբերյալ սահմանված կարգի 7.15 և 7.16 կետերով նախատեսված իրենց կարգադրիչ և այլ լիազորությունները, այն է՝ պակասորդի փաստի հայտնաբերումից հետո այդ մասին անմիջապես տեղյակ պահել և գրավոր հայտնել բանկի վարչության նախագահին, մեկուսացնել հափշտակություն կատարած անձին և կազմել համապատասխան ակտ, այլ այդ լիազորություններն օգտագործել են իրենց կազմակերպության շահերին հակառակ: Ընդառաջելով գանձապահի խնդրանքին՝ նրանք հաշվառված գումարները թողել են նրա տնօրինության տակ, գնացել են իրենց աշխատասենյակները և սպասել ինկասացիոն գումարները ստանալուն: Երբ որոշ ժամանակ անց ստացել են 3 միլիոն ՀՀ դրամ և 5.000 ԱՄՆ դոլար ինկասացիոն գումարները, հաշվապահությունում հաշվելուց հետո դարձյալ գործելով ծառայության շահերին հակառակ՝ Գ. Բարսեղյանն ու Ա. Հովհաննիսյանն այդ գումարները վստահել են Գ. Ասատրյանին՝ դրանք դրամարկղում գտնվող օրվա մնացորդային գումարների հետ դրամասայլակ տեղավորելու և դրամապահոց տեղափոխելու համար: Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ մինչև դրամարկղ գնալը Գ. Ասատրյանը հափշտակել է նաև այդ գումարներից՝ վերցնելով 2 միլիոն ՀՀ դրամ (մեկ արմատ 20.000-անոց թղթադրամներով) և 2.400 ԱՄՆ դոլար (5.000 ԱՄՆ դոլարի արմատից):

Այսպիսով՝ Գ. Բարսեղյանի և Ա. Հովհաննիսյանի կողմից իրենց լիազորությունները բանկի շահերին հակառակ և ուրիշի անձանց օգտին օգտագործելու հետևանքով Գագիկ Ասատրյանը 2004 թվականի հոկտեմբերի 4-ից 15-ն ընկած ժամանակահատվածում «Արդշինիմվեստբանկ» ՓԲ ընկերության «Թալին» մասնաճյուղից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող 8.964.434 ՀՀ դրամ, 3.848.130 ՀՀ դրամին համարժեք 7.605 ԱՄՆ դոլար և 6.270 ՀՀ դրամին համարժեք 10 եվրո՝ ընդհանուր գումարով 12.818.834 ՀՀ դրամ, որով էական վնաս է պատճառել բանկի օրինական շահերին՝ առաջացնելով ծանր հետևանքներ:

Չնայած վերը շարադրված հանգամանքները գոյություն են ունեցել սույն գործի նախաքննության և դատական քննության պահին, սակայն նախաքննության մարմնին և գործը քննող դատարանին հայտնի չեն եղել: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով քրեական գործերը նորոգվում են, եթե ի հայտ են եկել դատավճիռ կամ որոշում կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է: Գործի նյութերից երևում է, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մարտի 30-ի որոշմամբ Գագիկ Բարսեղյանի և Աղավնի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործի մասը կարճվել

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

է, և քրեական հետապնդումը դադարեցվել է նրանց արարքում հանցակազմի բացակայությամբ: Զննության նյութերում առկա Գազիկ Բարսեղյանի և Աղավնի Հովհաննիսյանի մեղավորությանը վերաբերող փաստական տվյալները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նոր երևան եկած հանգամանքներ են, որոնք գործի նորոգման հիմք են:

Ելնելով վերը շարադրվածից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մարտի 30-ի որոշումը, որով Գազիկ Բարսեղյանի և Աղավնի Հովհաննիսյանի նկատմամբ քրեական գործի մասը կարճվել, և քրեական հետապնդումը դադարեցվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա պետք է ամբողջությամբ բեկանել և այդ մասով գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Գազիկ Գառնիկի Բարսեղյանի և Աղավնի Աղվանի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործի մասը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի մարտի 30-ի որոշումը բեկանել և գործն այդ մասով ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ- 02/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի որոշում գործ ՔԳՀ 100/06
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՍՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**

2007 թվականի փետրվարի 27-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով տուժողի իրավահաջորդ Արման Քրմոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Տուժողի իրավահաջորդ Ա.Քրմոյանի դիմումի հիման վրա Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազության կողմից 2005 թվականի օգոստոսի 16-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով: Դատախազության ավագ քննիչ Ա.Վարդանյանը 2005 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ Ե.Հարությունյանի, Ս.Խաչատրյանի և Շ.Գրիգորյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Ա.Քրմոյանը բողոք է ներկայացրել Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Առաջին ատյանի դատարանի որոշումը տուժողի իրավահաջորդ Ա.Քրմոյանը բողոքարկել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության:

Տուժողի իրավահաջորդ Ա.Քրմոյանը ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել:

Վճռաբեկ բողոքը 2006 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Տուժող Սյուզաննա Բաղայանը 2005 թվականի ապրիլի 13-ին դիմել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Որտեղ ուրոլոգի կողմից որոշում է կայացվել հրատապ կարգով կեսարյան հատում, այնուհետև՝ նեֆրեկտոմիա (երիկամի հեռացում) և ստորին սիներակի թրոմբեկտոմիա (թրոմբի հեռացում) կատարելու վերաբերյալ: Կեսարյան հատումից հետո ուրոլոգ Երվանդ Հարությունյանը անցել է նեֆրեկտոմիայի և ստորին սիներակի թրոմբեկտոմիայի կատարմանը: Վիրահատության սկզբում ստորին սիներակի վրա թրոմբից վեր և վար դրվել են սեղմիչներ: Սեղմիչների դրման փուլում տեղի է ունեցել փորոքների ֆիբրիլյացիա, որը արձանագրվել է անեսթեզիոլոգի կողմից: Դեֆիբրիլյացիա է կատարվել, որի արդյունքում սրտի աշխատանքը վերականգնվել է, սակայն հինգ րոպե անց կրկին ֆիբրիլյացիա է տեղի ունեցել: Այս անգամ նորից սրտի աշխատանքը վերականգնվել է: Սակայն հինգ րոպե անց տեղի է ունեցել երրորդ ֆիբրիլյացիան, որից հետո սրտի աշխատանքը չի վերականգնվել, և ռեանիմացիայի 45-րդ րոպեին արձանագրվել է կենսաբանական մահ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ա.Քրմոյանը, իր բողոքում բարձրացնելով երկու հարց, խնդրել է պարզաբանել, թե արդյոք քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշման դեմ բերված բողոքի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումները ենթակա են բողոքարկման վերաքննիչ դատարան, թե ոչ, և երկրորդ՝ արդյոք վերաքննիչ բողոքը կարող է առանց քննության թողնվել դատավորի միանձնյա կայացրած որոշմամբ, թե այն պետք է կայացվի դատարանի կոլեգիալ կազմով:

Բողոք բերած անձը գտել է, որ վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Դանիելյանի որոշմամբ խախտվել են իր դատավարական իրավունքները: Ա.Քրմոյանը պատճառաբանել է, որ վերաքննիչ դատարանի դատավորը բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն չունի, քանի որ «վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու» հասկացություն քրեական դատավարության մեջ գոյություն չունի: Այսինքն դատավորը կատարել է մի գործողություն, որը առհասարակ օրենքով նախատեսված չէ:

Վճռաբեկ բողոք բերած անձը վերը նշված հիմքերով խնդրել է բեկանել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Դանիելյանի 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշումը և գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ բողոքն ըստ էության քննելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

1/ Քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը վերացնելու մասին պահանջը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը.

Դիմող Ա.Քրմոյանը, բողոքարկելով քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը, հիմնվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշ-

խատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր շլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»։ Մինևույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի սահմանում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն։

Այնուհանդերձ, քրեական գործով վարույթը կարճելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, 384-րդ հոդվածով և այլն։

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Զննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»։

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»։ Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանվում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»։

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելը ըստ էության։

Ներկայացված նյութերից երևում է, որ տուժողի իրավահաջորդ Ա.Քրմոյանը վերաքննիչ դատարան է բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը քննիչի՝ գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին։ Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին, այն է՝ այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը։

Ա.Քրմոյանի բողոքը համապատասխանում էր վերաքննիչ բողոքին ներկայացվող այլ օրենսդրական պահանջներին ևս։ Մասնավորապես, այն բերվել է պատշաճ սուբյեկտի կողմից, քանի որ տուժողի իրավահաջորդը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված է՝ որպես վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող դատավարության մասնակից, այն ներկայացվել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդված), բողոքատուի բաց թողած վերաքննիչ բողոքարկման ժամկետը առաջին ատյանի դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով ճանաչվել է հարգելի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մաս), բողոքի բովանդակությունը համապատասխանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին։

Հետևաբար Ա.Քրմոյանը իրավունք ուներ քննիչի՝ գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը իրավասու չէր տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այլ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

2/ Վերաքննիչ դատարանում գործի քննությունը մեկ դատավորի կազմով.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 387-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորի կազմով: Այս ընդհանուր իրավանորմից գատ գոյություն չունի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեությունը կանոնակարգող որևէ հատուկ իրավադրույթ, որը սահմաներ քրեական գործ քննող վերաքննիչ դատարանի այլ կազմ, քան երեք դատավորից բաղկացած դատական կազմն է:

Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավասու չէր Ա.Քրմոյանի բողոքը քննել մեկ դատավորի կազմով:

Այսպիսով, խախտվել է օրինակաբանության սկզբունքը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

Գործը մեկ դատավորի կազմով քննելով և լուծելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է քրեական դատավարության ևս մեկ սկզբունք՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»: Օրենքով վերաքննիչ դատարանի մեկ դատավորին վերապահված չէ քրեական գործ քննելու լիազորություն: Ուստի Ա.Քրմոյանը գրկվել է իր գործը այն դատարանում և այն դատավորների կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով, այսինքն՝ իր գործը վերաքննիչ դատարանի երեք դատավորի կազմով քննվելու իրավունքից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի համատեքստում վերաքննիչ դատարանի մեկ դատավորը Ա.Քրմոյանի գործով չի կարող դիտվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Ուստի վերաքննիչ դատարանում բողոքատու, տուժողի իրավահաջորդ Ա.Քրմոյանի գործի քննությունը մեկ դատավորի կազմով խախտում է դիմողի՝ արդարացի դատաքննության իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերաքննիչ դատարանի թույլ տված քրեադատավարական օրենքի խախտումներն էական են, քանի որ դրանք քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներ-

րի խախտումներ են, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, և տուժողի իրավահաջորդ Ա.Քրմոյանին արդարացի դատաքննության իրավունքից զրկելու ճանապարհով այդ խախտումները անվերապահորեն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

3/ Բողոքն առանց քննության թողնելը.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Իսկ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության»: Ուստի բացի նշված երկու դեպքից վերաքննիչ դատարանը լիազորված չէ բողոքը թողնել առանց քննության:

Ա.Քրմոյանի վերաքննիչ բողոքը ստորագրված էր և պարունակում էր նշում բողոքարկվող որոշման մասին:

Թեև Ա.Քրմոյանի վերաքննիչ բողոքը բերվել էր բողոքարկման 15-օրյա ժամկետն անցնելուց հետո, այնուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված կարգով ժամկետը բաց թողնելը վերականգնված էր:

Հետևաբար վերաքննիչ դատարանը լիազորված չէր որոշում կայացնել Ա.Քրմոյանի բողոքն առանց քննության թողնելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ քրեական գործով վարույթը կարճելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը վերացնելու պահանջը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորության, վերաքննիչ դատարանի կողմից քրեական գործը մեկ դատավորի կազմով քննելու իրավասության, վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու իրավաչափության հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Տուժողի իրավահաջորդ Արման Քրմոյանի բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ ըստ էության քննելու համար:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Բ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-08/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի որոշում գործ ՔԳՀ 119/06
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻԲՈՍՅԱՆԻ**

2007 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հենրիկ Ալբերտի Դանիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հենրիկ Ալբերտի Դանիելյանը 2004 թվականի սեպտեմբերի 27-ին և 2004 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ զլխավոր դատախազին դիմում է ներկայացրել քրեական գործ հարուցելու մասին, որն էլ հանձնարարվել է Արաբկիրի ոստիկանությանը հետաքննություն իրականացնելու համար: Դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով 2004 թվականի դեկտեմբերի 20-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Հ.Դանիելյանը 2006 թվականի ապրիլի 3-ին դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության՝ բողոքը ժամկետանց լինելու հիմքով:

Առաջին ատյանի դատարանի որոշումը Հ.Դանիելյանը բողոքարկել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերջինս 2006 թվականի մայիսի 4-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը Հ.Դանիելյանը բողոքարկել է Վճռաբեկ դատարան, որն իր 2006 թվականի հունիսի 16-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության:

Հ.Դանիելյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը Հ.Դանիելյանի բողոքը ընդունել է վարույթ և 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը Հ.Դանիելյանը բողոքարկել է Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ բողոքը 2006 թվականի հունվարի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հենրիկ Ալբերտի Դանիելյանը 1983 թվականին ամուսնացել է Ուստիան Սարգսյանի հետ: 1996 թվականին նա վաճառել է իր երկուսենյականոց բնակարանը և գնել մեկսենյականոց բնակարան, որը ձևակերպել է իր կնոջ՝ Ու.Սարգսյանի անվամբ: Վերջինս մահացել է 2003 թվականի օգոստոսի 24-ին: Նրա մահից հետո Հ.Դանիելյանին հայտնի է դարձել, որ այդ մեկսենյականոց բնակարանը 2003 թվականի հունիսի 27-ին կտակվել է իր կնոջ քրոջը՝ Մ.Սարգսյանին, որն էլ ըստ կտակի ընդունել է ժառանգությունը: Հ.Դանիելյանը գրավոր դիմում է ներկայացրել նոտարին՝ պահանջելով գործում եղած բոլոր փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև Հ.Դանիելյանը նոտարից բանավոր բացատրություն է ստացել այն մասին, որ իրեն Ու.Սարգսյանի մայր Մանուշակ Մինասյանը փաստաթուղթ է ներկայացրել այն մասին, որ Ու.Սարգսյանն ամուսին չունի: Նոտարը, այդ փաստաթուղթը հիմք ընդունելով, տվյալ բնակարանի նկատմամբ Մ.Սարգսյանին ըստ կտակի տվել է ժառանգության վկայական: Հետագայում՝ որոշ ժամանակ անց, Հ.Դանիելյանին նոտարի կողմից տրվել է երկրորդ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայական, որտեղ նշված բնակարանի կեսը հատկացվում է Հ.Դանիելյանին:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Հ.Դանիելյանն իր բողոքը հիմնավորել է ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման 5-րդ կետում շարադրված դիրքորոշմամբ, որում նշված է, որ «ըստ քննության առարկա գործի հանգամանքների՝ գործնականում չի ապահովվել ու պաշտպանվել քաղաքացու՝ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները»:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 4-ի և 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշումները և գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով քննելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

1/ Վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը.

Դիմող Հ.Դանիելյանն իր վճռաբեկ բողոքում նշել է, որ վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը հիմնավորված չէ, քանի որ վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը,

որը, դիմողի կարծիքով, իրեն վերապահում է քննվող գործով դատարան դիմելու իրավունք:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հնարավորություն: Այն ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408¹-րդ հոդվածով: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ նոր հանգամանքների հետևանքով քրեական գործերը նորոգվում են այն դեպքում, երբ ՀՀ սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ վճռաբեկ բողոք բերելու համար հիմք են նոր հանգամանքները, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի՝ «Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները վճռաբեկ բողոքների հիման վրա վերանայում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)»:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը սահմանում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա բողոք բերելու հետևյալ պայմանները.

ա) սահմանադրական դատարանն իր որոշմամբ պետք է տվյալ գործով կիրառված օրենքը հակասահմանադրական ճանաչած լինի,

բ) բողոքը կարող է ներկայացվել միայն ՀՀ վճռաբեկ դատարան՝ վճռաբեկության կարգով այն վերանայելու համար:

Նշվածից գատ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա քրեադատավարական վարույթ իրականացնելու այլ հիմք և կարգ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Տվյալ գործով կիրառված օրենքը սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական չի ճանաչվել, իսկ դիմողի բողոքը նախապես ներկայացվել է ոչ թե ՀՀ վճռաբեկ դատարան, այլ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան, ուստի վերաքննիչ դատարանն իրավասու չէր նորից բողոքը քննության առնել և արդյունքում որոշել, որ տրված բողոքը ենթակա է քննության առաջին ատյանի դատարանում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով: Ուստի վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը ենթակա է բեկանման:

2 / Վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 4-ի որոշումը.

Դիմող Հ.Դանիելյանն իր վճռաբեկ բողոքում ըստ էության խնդրել է նաև բեկանել վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 4-ի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի որոշման դեմ բողոքն առանց քննության թողնելու մասին:

Հաշվի առնելով տվյալ գործով օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2007թ. փետրվարի 27-ի՝ Ա.Քրմոյանի վերաբերյալ համանման գործով ձևավորված մոտեցմամբ (ա/ վերաքննիչ դատարանը կարող է վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության միայն այն դեպքում, երբ այն ստորագրված չէ, կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին, կամ ժամկետանց է, բ/ վերաքննիչ դատարանում գործը չի կարող քննվել մեկ դատավորի կազմով) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 4-ի որոշումը ևս ենթակա է բեկանման:

3/ Վերաքննիչ դատարանում գործի քննությունը մեկ դատավորի կազմով.

Գործի նյութերից երևում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, գործը քննելով մեկ դատավորի կազմով, թույլ է տվել մի շարք դատավարական իրավունքի խախտումներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 387-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորի կազմով: Այս ընդհանուր իրավանորմից գատ գոյություն չունի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեությունը կանոնակարգող որևէ հատուկ իրավադրույթ, որը սահմաներ քրեական գործ քննող վերաքննիչ դատարանի այլ կազմ, քան երեք դատավորից բաղկացած դատական կազմն է:

Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավասու չէր Հ.Դանիելյանի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնել մեկ դատավորի կազմով:

Այսպիսով, խախտվել է օրինականության սկզբունքը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

Գործը մեկ դատավորի կազմով քննելով և լուծելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է քրեական դատավարության ևս մեկ սկզբունք՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»: Օրենքով վերաքննիչ դատարանի մեկ դատավորին վերապահված չէ քրեական գործ քննելու լիազորություն: Ուստի Հ.Դանիելյանը զրկվել է իր գործը այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով, այսինքն՝ իր գործը վերաքննիչ դատարանի երեք դատավորի կազմով քննվելու իրավունքից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի համատեքստում վերաքննիչ դատարանի մեկ դատավորը տվյալ գործով չի կարող դիտվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Ուստի վերաքննիչ դատարանում Հ.Դանիելյանի գործի քննությունը մեկ դատավորի կազմով խախտում է դիմողի արդար դատաքննության իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերաքննիչ դատարանի թույլ տված քրեադատավարական օրենքի խախտումներն էական են, քանի որ դրանք քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների խախտումներ են, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, և Հ.Դանիելյանին արդար դատաքննության իրավունքից զրկելու ճանապարհով այդ խախտումներն անվերապահորեն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վերոգրյալի հիման վրա՝ վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 4-ի որոշումը ենթակա է րեկամման:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր, որը պայմանավորված է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա ընդհանուր իրավասության դատարան դիմելու հնարավորության, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու իրավաչափության, վերաքննիչ դատարանի կողմից քրեական գործը մեկ դատավորի կազմով քննելու իրավասության հարցերով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հենրիկ Ալբերտի Գանիելյանի բողոքը բավարարել. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 4-ի և 2006 թվականի նոյեմբերի 3-ի որոշումները բեկանել և նյութերն ուղարկել նույն դատարան քննության առնելու համար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ- 30/07

ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի որոշումով գործ ՔԳՀ N-125/06
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /սյուտիետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ բողոք բերող անձ **Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ**

2007 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Աբրահամյանի վճռաբեկ բողոքը ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 07-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Արմեն Աբրահամյանի կնոջ՝ Արաբայա Մաքունցի հայտարարության հիման վրա ոստիկանության Գորիսի բաժնում, նյութերի նախապատրաստման արդյունքում 2005թվականի հոկտեմբերի 21-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 2-րդ մասով մերժելու մասին: Նշված որոշման դեմ Արմեն Աբրահամյանը 04.11.2005թ. բողոք է բերել ՀՀ Գլխավոր դատախազություն: 16.12.2005թ. ՀՀ Գլխավոր դատախազության որոշմամբ վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ նշված որոշումը և նյութերը լրացուցիչ նախապատրաստման համար ուղարկվել են Սյունիքի մարզի դատախազություն: 10.05.2006թ. որոշում է կայացվել նախապատրաստված լրացուցիչ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Ա.Աբրահամյանը դիմել է ՀՀ Գլխավոր դատախազություն՝ քրեական գործ հարուցելու համար, և 07.09.2006թ. գրությամբ հայտնվում է, որ 10.05.2006թ. Սյունիքի մարզի դատախազության կողմից կայացված որոշումը օրինական է և այն վերացնելու հիմքեր չկան:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Ա.Աբրահամյանը բողոք է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Առաջին ատյանի դատարանի որոշումը Ա.Աբրահամյանը բողոքարկել է ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 07-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանն իրավասու չէ դատական ստուգման ենթարկել քրեական գործ հարուցելը մերժելու մասին նախաքննության մարմնի որոշման, ինչպես նաև նշված որոշման վերաբերյալ ընդունված առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Ա.Աբրահամյանը ՀՀ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել:

Վճռաբեկ բողոքը 2007 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արմեն Աբրահամյանի կինը՝ Արաքսյա Մաքունցը, հայտարարություն է տվել ոստիկանության Գորիսի բաժին այն մասին, որ 30.09.2005թ. ժամը 12.00-ի սահմաններում, Խնձորեսկ գյուղի միջնակարգ դպրոցում իր որդուն՝ Գևորգ Արմենի Աբրահամյանին ծեծի են ենթարկել նույն դպրոցի աշակերտները և պատճառել են մարմնական վնասվածք: Ոստիկանության Գորիսի բաժնի հետաքննիչ Ա.Խաչատրյանի կողմից նախապատրաստվել են նյութեր, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ, որոնցով հաստատվել է, որ Գևորգ Աբրահամյանի մոտ եղած հիվանդությունները տրավմատիկ բնույթ չունեն:

Գևորգ Աբրահամյանին ծեծի ենթարկելու դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվել է Վ.Սողոմոնյանի և Հ.Կարապետյանի կողմից Գ.Աբրահամյանին դիտավորությամբ հարվածներ հասցնելու հանգամանքը, սակայն նկատի ունենալով, որ վերջիններիս գործողություններով էական վնաս չի պատճառվել, ելնելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթից, 10.05.2006թ. որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքի, ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեական և դատավարական օրենքների խախտումներ:

Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար, մաս ստորադաս դատարանների կողմից սույն գործով թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները կարող են առաջացնել ծանր հետևանքներ, Արմեն Աբրահամյանը խնդրում է բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 22.11.06թ. և ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 07.12.2006թ. որոշումները:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Դիմող Արմեն Աբրահամյանը, բողոքարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, հիմնվել է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Մինևույն ժամանակ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն:

Այնուհանդերձ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով, այլ նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածով, 384 հոդվածով և այլն:

Մասնավորապես, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Ըստ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 384 հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Իսկ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելը ըստ էության:

Ներկայացված նյութերից երևում է, որ Ա.Աբրահամյանը Վերաքննիչ դատարան է բողոքարկել Սյունիքի մարզի դատախազության կողմից նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելը մերժելու առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին էլ. այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Բացի այդ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող ո-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

որոշումը կամ հաստատում այն »: Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածը, քանի որ այն չի բացառում Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը քննելու հնարավորությունը:

Հետևաբար Ա.Արրահամյանը իրավունք ուներ քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չուներ նրա վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորության, վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու իրավաչափության հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածով, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արմեն Արրահամյանի բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ Քրեական և գինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 07-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան ըստ էության քննելու համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 12/07

Վերաքննիչ դատարանում որոշում
կայացրած դատարանի կազմը
Նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ՝ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՍՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
ղիմող **Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻ**

2007թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վալերիկ Վազգենի Սարգսյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Պողոսյանի 2006 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ մերժել է Վալերիկ Վազգենի Սարգսյանի բողոքը՝ բերված թիվ 18200606 քրեական գործի վարույթը կարճելու մասին Շիրակի մարզի դատախազության 2006 թվականի ապրիլի 21-ի որոշման դեմ: Վ.Սարգսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով վերացնել Շիրակի մարզի դատախազության 2006 թվականի ապրիլի 21-ի որոշումը և գործն ուղարկել նախաքննության: ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Պողոսյանը 2006 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ Վ.Սարգսյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Գյումրու թիվ 32 միջնակարգ դպրոցի տնօրեն Հ.Հակոբյանի կողմից չարաշահումներ, այն է՝ ավելորդ հաստիքներ պահելու միջոցով հասփշտակություն կատարելու, աշակերտներից գումարներ հավաքելու և յուրացնելու վերաբերյալ Վալերիկ Սարգսյանի ղիմումների հիման վրա Շիրակի մարզի դատախազության կողմից 2006 թվականի հունվարի 24-ին հարուցվել է թիվ 18200606 քրեական գործը ՀՀ քրեական

օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նույն թվականի ապրիլի 21-ին քրեական գործի վարույթը կարճվել է Հ.Հակոբյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ մերժել է քրեական գործի վարույթը կարճելու մասին Շիրակի մարզի դատախազության 2006 թվականի ապրիլի 21-ի որոշման դեմ Վ.Սարգսյանի ներկայացրած բողոքը: Վ.Սարգսյանը դատարանի վերոհիշյալ որոշումը բողոքարկել է վերաքննիչ դատարան, սակայն վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Պողոսյանն իր որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության, պատճառաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանն իրավասու չէ դատական ստուգման ենթարկել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի որոշման, ինչպես նաև այդ որոշումը դատական ստուգման ենթարկելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

3. Վճռարեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Համարելով, որ իր վերաքննիչ բողոքն «առանց քննության թողնելն անօրինական է», չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջներից, բողոք բերած անձը խնդրել է վերացնել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Պողոսյանի 2006 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը և իր «բողոքը ուղարկել քրեական գործերով վերաքննիչ դատարան՝ ըստ էության քննելու համար»:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռարեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ:

1) Քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ պահանջը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը:

Դիմող Վալերիիկ Սարգսյանը, բողոքարկելով քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը, հիմնվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Մինևույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն: Այնուհանդերձ, քրեական գործով վարույթը կարճելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, 384-րդ հոդվածով և այլն:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Զննչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերահաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթը սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելն ըստ էության:

Ներկայացված նյութերից երևում է, որ Վալերիկ Սարգսյանը վերաքննիչ դատարան է բողոքարկել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին էլ. այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Վ.Սարգսյանի բողոքը համապատասխանում էր վերաքննիչ բողոքին ներկայացվող այլ օրենսդրական պահանջներին ևս: Մասնավորապես, այն ներկայացվել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդված), բողոքի բովանդակությունը համապատասխանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Հետևաբար Վ.Սարգսյանն իրավունք ուներ քննիչի՝ գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չուներ այդ վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

2) Բողոքն առանց քննության թողնելը.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Իսկ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության»: Ուստի, բացի նշված երկու դեպքից վերաքննիչ դատարանը լիազորված չէ բողոքը թողնել առանց քննության:

Վալերիկ Սարգսյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց չէր, ստորագրված էր, պարունակում էր նշում բողոքարկվող որոշման մասին: Հետևաբար, վերաքննիչ դատարանը լիազորված չէր որոշում կայացնել Վալերիկ Սարգսյանի բողոքն առանց քննության թողնելու մասին:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վալերիկ Վազգենի Մարգսյանի վերաբերյալ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ քննության առնելու համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-03/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան
դատավորներ՝ Ռ.Ափիյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
ղիմուղ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**

2007թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջիանգիրյանի վճռաբեկ բողոքը Արմեն Արարատի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005թվականի հուլիսի 15-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2004 թվականի մարտի 4-ին ակցիզային կեղծ որոշմանիշերի իրացման փաստի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Արմեն Արարատի Ոսկանյանը քննությունից խուսափելու նպատակով հեռացել է Հայաստանի Հանրապետությունից: Արմեն Արարատի Ոսկանյանին 2004 թվականի մայիսի 26-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով: 2004 թվականի մայիսի 31-ի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը և հայտարարվել հետախուզում: Ա. Ոսկանյանի վերաբերյալ քրեական գործի մասը անջատվել է, և 2004 թվականի հունիսի 4-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին Ռ-Դ-ից հաղորդում է ստացվել, որ հետախուզման մեջ գտնվող Արմեն Ոսկանյանը հայտնաբերվել և ձերբակալվել է Ռ-Դ Դոնի-Ռոստով քաղաքի ՆԳ վարչության աշխատակիցների կողմից:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով դրոշումների ժողովածու 2006-2008թթ

ՀՀ գլխավոր դատախազությունը 2004 թվականի դեկտեմբերի 28-ին որոշում է կայացրել Ա.Ոսկանյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին: 30.04.2005 թվականին Ա.Ոսկանյանը հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

2005 թվականի մայիսի 2-ին քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

2005 թվականի հունիսի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Արմեն Ոսկանյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 15-ի դատավճռով Արմեն Արարատի Ոսկանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2004 թվականի դեկտեմբերի 12-ից:

Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Ա.Ոսկանյանը:

Գործը քննելով Ա.Ոսկանյանի վերաքննիչ բողոքի հիման վրա, որով նա խնդրել է մեղմացնել պատիժը, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով մասնակիորեն բավարարել է բողոքը և առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 15 դատավճիռը պատժի մասով փոփոխել է. Արմեն Արարատի Ոսկանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել է ազատազրկման 2 տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2004 թվականի դեկտեմբերի 12-ից:

Դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջեմալյանը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը 2006 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արմեն Ոսկանյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2004 թվականի հունվար-մարտ ամիսներին իրացնելու նպատակով Երևան քաղաքի բնակիչ Աշոտ Սարգսյանից մաս-մաս ձեռք է բերել 20.000 հատ 2003 թվականի մմուշի կեղծ ակցիզային դրոշմանիշեր, որոնցից 15.000 հատը նախատեսված է եղել կոնյակի, իսկ 5.000 հատը՝ օղու համար: Կոնյակի համար նախատեսված կեղծ ակցիզային դրոշմանիշերը ձեռք է բերել 1 հատը 58 ՀՀ դրամով, իսկ օղունը՝ 37 ՀՀ դրամով, որոնցից 10.000 հատը իրացրել է քննությանը չպարզված անձանց: Կոնյակի կեղծ դրոշմանիշերն իրացրել է 1 հատը 65 ՀՀ դրամով, օղունը՝ 1 հատը 45 ՀՀ դրամով, իսկ 10.000 հատ կոնյակի համար նախատեսված կեղծ դրոշմանիշերը 2004 թվականի հունվար-մարտ ամիսներին 1 հատը 65 ՀՀ դրամով իրացրել է Երևան քաղաքի բնակիչ Նորայր Գասպարյանին:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՌԴ դատախազությունը, բավարարելով Ա.Ոսկանյանին Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ վերջինիս հանձնումը խոշոր չափերով ակցիզային կեղծ դրոշմանիշերի իրացման համար բավարարել չի կարող, քանի որ ՌԴ օրենսդրությունում տվյալ հանցակազմը «խոշոր չափերով» որակյալ հատկանիշ չի նախատեսում:

Սակայն Ա.Ոսկանյանին Հայաստան տեղափոխելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսելուց հետո նախաքննության մարմինը չի փոփոխել վերջինիս առաջադրած մեղադրանքը, ինչն անհրաժեշտ էր կատարել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի պահանջները ապահովելու համար, և խախտելով ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարան: Վերջինս նույնպես, անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2005 թվականի հուլիսի 15-ի դատավճռով Արմեն Արարատի Ոսկանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 /տարի/ 6 /ամիս/ ժամկետով: Այնուհետև, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով Արմեն Արարատի Ոսկանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով:

Բողոքում խնդրվում է Արմեն Արարատի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 15-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռները բեկանել և փոփոխել, Արմեն Արարատի Ոսկանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով և սահմանել ազատազրկում 2 տարի ժամկետով: Նկատի ունենալով, որ Ա.Ոսկանյանն արդեն իսկ կրել է նշանակված պատիժը, նրան ազատել պատժի կրումից:

Բողոքում նաև նշվել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարած-

քում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Գործի նյութերից երևում է, որ ՌԴ դատախազությունը, բավարարելով Ա.Ոսկանյանին Հայաստանի իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը, միաժամանակ տեղեկացրել է, որ վերջինիս հանձնումը խոշոր չափերով ակցիզային կեղծ դրոշմանիշերի իրացման համար բավարարել չի կարող, քանի որ ՌԴ օրենսդրությունում տվյալ հանցակազմը «խոշոր չափերով» որակյալ հատկանիշ չի նախատեսում:

Սակայն Ա.Ոսկանյանին Հայաստանի Հանրապետություն տեղափոխելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսելուց հետո նախաքննության մարմինը չի փոփոխել վերջինիս առաջադրած մեղադրանքը, ինչն անհրաժեշտ էր կատարել «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները ապահովելու համար, և խախտելով ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարան: Վերջինս նույնպես, անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2005 թվականի հուլիսի 15-ի դատավճռով Արմեն Արարատի Ոսկանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: Այնուհետև, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով Արմեն Արարատի Ոսկանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով:

Փաստորեն, տվյալ դեպքում Ա.Ոսկանյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի այն հանցագործության համար, որի համար նա չի

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

հանձնվել, այսինքն՝ տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում:

Սույն գործի բնության ընթացքում 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են Արմեն Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 15-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն բեկանելու և փոփոխելու համար, քանի որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են մնան հնարավորություն, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վերոհիշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն Արարատի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 15-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռները պետք է բեկանել, Ա. Ոսկանյանի արարքը վերադասվել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով և սահմանել համապատասխան պատիժ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արմեն Արարատի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հուլիսի 15-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռները բեկանել և փոփոխել: Արմեն Ոսկանյանի արարքը վերադասվել ՀՀ քրեական օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով և նշանակել ազատազրկում 2 /երկու/ տարի ժամկետով, որը նա արդեն կրել է: Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-35/07

ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի որոշումով քրեական գործ N- 429/06
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ռ.Ափիյան,
դատավորներ՝ Հ.Տեր-Աղամյան, Գ.Մելիք-Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
դատավորներ
**Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ**

քարտուղար
մասնակցությամբ
դատապարտյալ
**Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Փ.ԷԼԻԶԲԱՐՅԱՆԻ**

2007 թվականի փետրվարի 27-ին

ք. Երևանում

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով Փայլակ Արզարի Էլիզարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Փայլակ Արզարի Էլիզարյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի հունիսի 22-ի դատավճռով ՀՀ Քրեական օրենսգրքի 215 հոդվածի 1-ին մասով, 205 հոդվածի 1-ին մասով և 325 հոդվածի 1-ին մասով, ՀՀ Քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով նշանակված պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով, դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: Ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Քաղաքացիական հայցը բավարարվել է ամբողջությամբ. վճռվել է իրեղեն ապացույց ճանաչված 26 ամուն «ՎԱԶ» մակնիշի տարբեր ավտոմեքենաների վրա բռնագանձում տարածել 32.354.372 ՀՀ դրամի չափով հոգուտ Հայաստանի Հանրապետության, մնացած ավտոմեքենաները հանձնել Փայլակ Էլիզարյանի տնօրինմանը, իսկ մյուս իրեղեն ապացույցները պահել քրեական գործի հետ մասին:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա վերստին քննելով գործը՝ ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ քրեական գործի վարույթը ըստ մեղադրանքի Փայլակ Էլիզբարյանի ՀՀ Քրեական օրենսգրքի 215 հոդվածի 1-ին մասով, 205 հոդվածի 1-ին մասով և 325 հոդվածի 1-ին մասով, կարճել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի կիրառմամբ և Փ.Էլիզբարյանի նկատմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը:

Նույն որոշմամբ իրեղեն ապացույց ճանաչված 26 հատ ավտոմեքենաներից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է 32.354.372 ՀՀ դրամի չափով գումար, մնացած ավտոմեքենաները վերադարձվել են Փ.Էլիզբարյանին:

Փայլակ Էլիզբարյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Փայլակ Արգարի Էլիզբարյանը Թուրքիայից ձեռք է բերել 76.428.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 26 հատ «ՎԱԶ» մակնիշի տարբեր ավտոմեքենաներ և նպատակ ունենալով խուսափել այդ ավտոմեքենաների մաքսային արժեքի 10 տոկոսի՝ 4.908.970,5 ՀՀ դրամի չափով նախատեսված մաքսատուրքի վճարումից, 2005 թվականի մարտի 20-ին ՀՀ Մաքսային պետական կոմիտեի Գուգարքի տարածաշրջանային մաքսատան «Բագրատաշեն» մաքսակետով Վրաստանից այդ ավտոմեքենաները ներմուծել է Հայաստան՝ որպես ձեռք բերման և ներմուծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր ներկայացնելով Հարավային Օսիայի Ցխինվալի քաղաքի և շրջանի բնակիչներից գնման ակնհայտ կեղծ ակտեր և կեղծ տեխնիկական անձնագրեր, որը հայտնաբերվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից:

Բացի այդ, Փայլակ Էլիզբարյանը 2004-2005 թվականների ընթացքում «Փայ Լուզ» ՍՊԸ-ի անվամբ նույն եղանակով, ակնհայտ կեղծ փաստաթղթեր խաբեությամբ օգտագործելու միջոցով, մաքսանենգ ճանապարհով ՀՀ է ներմուծել Թուրքիայից ձեռք բերված 323.543.729 ՀՀ դրամ ընդհանուր մաքսային արժեքով 201 հատ «ՎԱԶ» մակնիշի տարբեր ավտոմեքենաներ՝ չվճարելով 32.354.372,9 ՀՀ դրամի չափով մաքսատուրք:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքի՝ ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը «Փայլուզ» ՍՊԸ-ի վրա դրված դրամական պարտավորությունների դիմաց բռնագանձումը 26 հատ «ՎԱԶ» մակնիշի ավտոմեքենաների վրա տարածելու մասով հակասում է նյութական իրավունքի նորմերին:

Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, Փ.Էլիզբարյանը խնդրել է բեկանել ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը՝ բռնագանձումը ավտոմեքենաների վրա տարածելու մասով, և քաղաքացիական հայցն այդ մասով մերժել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննությունը և լուծումը կանոնակարգված է օրենսգրքի 154-164 հոդվածներով (գրուխ 20-րդ՝ քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում): Օրենսգրքի 154 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է քրեական դատավարության օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն քրեական դատավարության օրենսգրքով:

Այսինքն քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության և լուծման ընթացքում կիրառվում են քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխով, ինչպես նաև տվյալ օրենսգրքի այլ հոդվածներով սահմանված կանոնները, իսկ այլ կանոններ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 163 հոդվածը սահմանում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով: Ի դեպ, օրենսդիրը տվյալ դեպքում տարբերություն չի դնում, թե դատավճիռը մեղադրական է, թե արդարացման է (ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 364-366 հոդվածներ):

Քաղաքացիական հայցի լուծմանը վերաբերող օրենսդրական պահանջն արտացոլված է նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 360 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում, համաձայն որի՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝ ... 10) քաղաքացիական հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել»: Փաստորեն, տվյալ նորմերը քաղաքացիական հայցի լուծումը կապում են դատավճռի կայացման հետ:

Քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման կարգը նախաքննության փուլում նախատեսված է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 261 հոդվածով, իսկ գործը դատարանում ստացվելուց հետո՝ 294 հոդվածով: Այդ հոդվածներում թվարկված են այն հարցերը, որոնք կարող են ընդգրկվել գործով վարույթը կարճելու մասին որոշման մեջ, և այդ հոդվածների համաձայն՝ գործով վարույթը կարճելու հետ մեկտեղ քաղաքացիական հայցը լուծելու հնարավորություն նախատեսված չէ:

Ինչպես երևում է գործի նյութերից, առաջին ատյանի դատարանի կողմից Փ.Է. լիզբարյանի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, և միաժամանակ լուծվել է նաև վերջինիս դեմ հարուցված քաղաքացիական հայցը՝ վճռվել է նրանից պետության օգտին բռնագանձել պետությանը պատճառված վնասը:

Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը, 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Փ.Է.լիզբարյանի նկատմամբ կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժո-

դովի 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը, և ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 102, 313 և 394 հոդվածներով, քրեական գործի վարույթը ըստ մեղադրանքի Փայլակ Էլիզբարյանի ՀՀ Քրեական օրենսգրքի 215 հոդվածի 1-ին մասով, 205 հոդվածի 1-ին մասով և 325 հոդվածի 1-ին մասով, կարճել է և Փ.Էլիզբարյանի նկատմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը: Վերաքննիչ դատարանը, համաներման ակտի ընդունումը դիտելով որպես Փ.Էլիզբարյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը բացառող հանգամանք, իր որոշմամբ այն դադարեցրել է և գործի վարույթը կարճել:

Դրա հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանը որոշման եզրակիսկիչ մասում նշել է.

«Իրեղեն ապացույց ճանաչված 26 հատ ավտոմեքենաներից հոգուտ ՀՀ-ին բռնագանձել 32.354.372 ՀՀ դրամի չափով, մնացած ավտոմեքենաները վերադարձնել Փ.Էլիզբարյանին»:

Փաստորեն, համաներման ակտի կիրառմամբ գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ քրեական դատավարության շրջանակներում քննության է առնվել և ըստ էության լուծվել է նաև քաղաքացիական հայցը, ինչով խախտվել է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 163 և 360 հոդվածների այն պահանջը, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով: Այնինչ համաներման ակտի կիրառմամբ գործի վարույթի կարճման պայմաններում քաղաքացիական հայցը պետք է թողնվեր առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին պարզաբանելով այն հետագայում քաղաքացիական դատավարության կարգով ներկայացնելու նրա իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել օրինականության սկզբունքի խախտում, որը որպես քրեադատավարական օրենքի էական խախտում, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 398 հոդվածի հիման վրա հիմք է հանդիսանում Վերաքննիչ դատարանի որոշումը քաղաքացիական հայցի մասով բեկանելու համար:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանն առանց քննության է թողնում քաղաքացիական հայցը, եթե դրա հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ:

Սակայն, քանի որ ներկայացված նյութերից երևում է, որ Փայլակ Էլիզբարյանը «Փայ Լուգ» ՍՊԸ-ի պարտավորությունների դիմաց 2007 թվականի փետրվարի 15-ին ՀՀ Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի համապատասխան հաշվին է փոխանցել 32.355.000 (երեսուներկու միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ և քաղաքացիական հայցվորի պահանջը բավարարված է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս պարագայում գործի վարույթը քաղաքացիական հայցի մասով նույնպես ենթակա է կարճման: Նկատի ունենալով, որ Վճռաբեկ դատարանի դատական նիստի ընթացքում Փայլակ Էլիզբարյանը հայտարարեց, որ իրեղեն ապացույց հանդիսացող 26 ավտոմեքենաները վերադարձվել են իրեն, ուստի դրանց տնօրինման հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Փայլակ Աբգարի Էլիզբարյանի վերաբերյալ ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը քաղաքացիական հայցի մասով բեկանել և այդ մասով գործի վարույթը կարճել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-18/07

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ
համայնքների առաջին ատյանի դատարանի
դատավճռով՝ քրեական գործ N 1-233/2005թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ռ.Ներսիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ

Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ

Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ

քարտուղար

Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

մասնակցությամբ

դատախազ

Մ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007թվականի փետրվարի 27-ին

ք. Երևանում

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը Սարգիս Պետրոսի Չիլինգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 11-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Սարգիս Չիլինգարյանը նախապես հանցավոր համաձայնության գալով մորաքրոջ տղայի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.02.2001թ. թիվ 1-60 դատավճռով մույն գործով դատապարտված Հրաչյա Սահակյանի հետ, 2000թ. մայիսի 28-ին ժամը 24.00-ից մինչև մայիսի 29-ի ժամը 06.00-ն ընկած ժամանակահատվածում, գողություն կատարելու նպատակով, գնացել են Երևան քաղաքի Նորքի 9-րդ փողոցի 84 տուն, պատշգամբի պատուհանի երկաթյա ճաղերը սրոցով կտրելու միջոցով, մուտք են գործել բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել են գործով տուժող Լիլյա Գրիգորյանին պատկանող 4.367.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողության իրեր՝ արտասահմանյան ջախեր, նախաարախի կահույք, լվացքի մեքենա, տարբեր չափի վարագույրներ, ժամացույց, թեյնիկներ, գավաթներ, ճաշասենյակի կահույք, աման լվանալու մեքենա, տարբեր չափսերի գորգեր, ննջարանի կահույքի մի մասը, անկողնու ծածկոցներ, ճենապակյա ծաղկաման-

ներ, մոնակալներ, դանակների ու պատառաքաղների կոմպլեկտ, սուրճի կոմպլեկտներ, սփռոցներ, սրբիչներ և այլ ապրանքներ: Գողացված իրերը Ս.Չիլինգարյանն ու Հ.Սահակյանը տեղափոխել են Ս.Չիլինգարյանի Երևան քաղաքի Նորքի 9-րդ փողոցի 108 տան ավտոտնակի նկուղ: Հաջորդ օրը առավոտյան նրանք բաժանել են գողուցը, ապա Հ.Սահակյանը իր հոր՝ վկա Անդրանիկ Սահակյանի հետ միասին, վերջինիս «Մոսկվիչ-408» մակնիշի մեքենայով գողացված իրերի մի մասը տեղափոխել են Կոտայքի մարզի Չորաղբյուր գյուղում գտնվող իրենց տուն: Ս.Չիլինգարյանը մնացած իրերի մի մասը տեղափորել է իր տանը, իսկ մնացած մասը գողությունից մի քանի օր անց վաճառել է Մալաթիայի տոնավաճառում պատահական գնորդների:

Նախաքննության ընթացքում Սարգիս Չիլինգարյանը չարամտորեն թաքնվել է քննությունից, որի հետևանքով նրա վերաբերյալ 2000թ. հոկտեմբերի 27-ին որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, խափանման միջոց է կիրառվել կալանք և 2000թ. հոկտեմբերի 29-ին որոշում է կայացվել թիվ 13113900 քրեական գործից Ս.Չիլինգարյանի մասը անջատելու մասին, իսկ 2000թ. նոյեմբերի 30-ին անջատված մասի վարույթը կասեցվել է: 2001թ. փետրվարի 19-ին Հրաչյա Սահակյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 86 հոդվածի 4-րդ մասով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

2004թ. դեկտեմբերի 20-ին Սարգիս Չիլինգարյանը հայտնաբերվել և ձերբակալվել է Ղազախստանի Հանրապետությունում: 2005թ. ապրիլի 14-ին տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և նույն օրը քրեական գործի վարույթը վերսկսվել է: Նշված հանցավոր արարքը կատարելու համար Սարգիս Չիլինգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նշված հոդվածով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 11-ի դատավճռով Սարգիս Չիլինգարյանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ Քրեական օրենսգրքի 64 հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2004թ. դեկտեմբերի 21-ից:

Վճռաբեկ դատարանի 07.12.06թ. որոշմամբ ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ հիմնավորված չլինելու պատճառով:

ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 26.01.07թ. որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Սարգիս Չիլինգարյանը դատապարտվել է այն քանի համար, որ նախապես հանցավոր համաձայնության գալով սույն գործով դատապարտյալ Հրաչյա Սահակյանի հետ, 2000թ. մայիսի 28-ին ժամը 24.00-ից մինչև մայիսի 29-ի ժամը 06.00-ն ընկած ժամանակահատվածում, գողություն կատարելու նպատակով, գնացել են Երևան քաղաքի Նորքի 9-րդ փողոցի 84 տուն, պատշգամբի պատուհանի երկաթյա ճաղերը սղոցով կտրելու միջոցով, մուտք են գործել բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել են գործով տուժող Լիդա Գրիգորյանին պատկանող 4.367.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողության իրեր:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործի նախաքննության ընթացքում Ս.Չիլինգարյանը ներգրավված է եղել որպես մեղադրյալ ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, և քննությունից թաքնվելու պատճառով հայտարարված է եղել հետախուզում: 20.12.2004թ. Ս.Չիլինգարյանը հայտնաբերվել է Ղազախստանի Հանրապետությունում, ձերբակալվել և 14.04.2005թ. էտապավորվել է Հայաստանի Հանրապետություն: Էտապավորման հարցը լուծելիս Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, որ Ս.Չիլինգարյանին Ղազախստանի Հանրապետության իրավապահ մարմինները այդ մեղադրանքով մեղսագրված արարքի համար չեն կարող հանձնել, քանի որ իրենց քրեական օրենսդրությունում այդ որակող հատկանիշը վերացված է ու բացակայում է, և հանձնումը կատարում են խոշոր չափի հափշտակության համար պատասխանատվության ենթարկելու պայմանով:

Չնայած Ղազախստանի գլխավոր դատախազության այդ պահանջի մասին տեղեկացվել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների և դատախազությունը, և դատարանը, այդուհանդերձ այն չի պահպանվել, որով խախտվել են «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. կնքված Միսկի կոնվենցիայի 66 հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499 հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ Ս.Չիլինգարյանը ենթարկվել է պատասխանատվության և պատժի այն հանցանքի համար, որի համար հանձնված չի եղել:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Սարգիս Չիլինգարյանի վերաբերյալ ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 11-ի դատավճիռը, Ս.Չիլինգարյանի արարքը վերաորակել ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանելով ազատագրկում 2 տարի ժամկետով:

Բողոքում նշվել է նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 499 հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հա-

յաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66 հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 499 հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Մույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության ընթացքում Ս.Չիլինգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, քննությունից թաքնվելու պատճառով հայտարարվել է հետախուզում և գործի վարույթը կասեցվել է: 20.12.2004թ. Ս.Չիլինգարյանը հայտնաբերվել և ձերբակալվել է Ղազախստանի Հանրապետությունում: Էտապավորման հարցը լուծելիս Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, որ Ս.Չիլինգարյանին Ղազախստանի Հանրապետության իրավապահ մարմինները այդ մեղադրանքով մեղաագրված արարքի համար չեն կարող հանձնել, քանի որ իրենց քրեական օրենսդրությունում այդ որակող հատկանիշը վերացված է ու բացակայում է, և հանձնումը կատարում են խոշոր չափի հափշտակության համար պատասխանատվության ենթարկելու պայմանով, որով և ստացվել է հանձնող կողմի համաձայնությունը:

2005թ. ապրիլի 14-ին Ս.Չիլինգարյանը էտապավորվել է Երևան քաղաք և տեղավորվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

Նույն օրը գործի վարույթը վերսկսվել է, Ս.Չիլինգարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նշված հոդվածով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 11-ի դատավճռով Սարգիս Չիլինգարյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս անտեսվել է, որ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի համաձայն՝ Ղազախստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

տանի Հանրապետության գլխավոր դատախազությունը համաձայնություն է տվել Ս.-Չիլինգարյանին հանձնել ՀՀ իրավապահ մարմիններին խոշոր չափի հափշտակություն կատարելու համար պատասխանատվության ենթարկելու պայմանով, որն էլ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Հետևաբար տվյալ դեպքում Ս.Չիլինգարյանը առանց Ղազախստանի Հանրապետության համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի քննության ընթացքում միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը՝ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66 հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3, 480 և 499 հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, նույն օրենսգրքի 406 հոդվածի 2-րդ մասի, 397 և 398 հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Սարգիս Պետրոսի Չիլինգարյանի վերաբերյալ ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 11-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու համար, քանի որ Վճռաբեկ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են մնան հնարավորություն, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա ինչպես ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի վերը նշված նորմերի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406, 419, 422-424 հոդվածներով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Սարգիս Պետրոսի Չիլինգարյանի վերաբերյալ ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հուլիսի 11-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ Սարգիս Պետրոսի Չիլինգարյանի արարքը վերադարձնելով ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ սահմանելով ազատազրկում 2/երկու/ տարի ժամկետով, որն արդեն վերջինս կրել է:

Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-46/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ 13-600/07թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան
դատավորներ՝ Ա. Խաչատրյան, Ս. Դազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Ս.ՍԱՀԱԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2007 թվականի մարտի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջիանգիդյանի վճռաբեկ բողոքը Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճռի դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Արթուր Խաչատուրի Սերոբյանին 2006 թվականի մայիսի 18-ին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 15-ին կայացված դատավճռով որոշել է Ա.Սերոբյանին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերադարձնել նույն հոդվածի 2-րդ մասով:

Առաջին ատյանի դատարանը Ա.Սերոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 271-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամանակով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Կիրառելով Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ ԱԺ 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 1-ին կետի (ա) ենթակետը՝ Ա.Սերոբյանին ազատել է պատժի կրումից, վերացրել է խափանման միջոցը և Ա.Սերոբյանին ազատ արձակել նիստերի դահլիճից:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազի օգնական Ա.Խոնդկարյանը բերել է վերաքննիչ բողոք:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, 2007 թվականի հունվարի 19-ին քննության առնելով վերաքննիչ բողոքը, Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռի դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի մարտի 5-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմնի կողմից Ա.Սերոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2006 թվականի հունվարի 27-ի լույս 28-ի գիշերը՝ ժամը 01-ի սահմաններում, Նոր Նորքի 5-րդ զանգվածի Գավիթ Բեկ փողոցին հարող տարածքում գործող «Քրեյզի Հորս» գիշերային ակումբում, ակոհոլ օգտագործած վիճակում, բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով ակումբի աշխատակիցների նկատմամբ, շուրջ 20 ռուպե տևողությամբ հայիոյանքներ է տվել ակումբի պարուհիների հասցեին, այնուհետև ապօրինի կերպով ձեռք բերված և նշված խուլիգանական գործողությունների պահին իր կողմից կրվող թիվ 21 137 համարի 7.65 տրամաչափի «Մաուզեր» տեսակի ատրճանակից կրակոց է արձակել և վնասել գիշերային ակումբի առաստաղը:

Բացի այդ, Ա.Սերոբյանը առանց բժիշկի թույլտվության գործածել է կանաքիսի և ափիոնի խմբի թմրամիջոց, որը հայտնաբերվել է նրանից վերցված փորձանմուշում:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի և այն

անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճիռները և քրեական գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Վճռաբեկ բողոք բերած անձը իր պահանջները հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Առաջին ատյանի դատարանը և վերաքննիչ դատարանը գործով ձեռք բերված ապացույցները ճիշտ չեն գնահատել և հանգել են սխալ հետևության՝ արժանահավատ համարելով ամբաստանյալի և վկաների դատաքննության ընթացքում տված ցուցմունքները՝ հաշվի չառնելով վերջիններիս նախաքննական ցուցմունքները:

Մասնավորապես, վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ վերաքննիչ դատարանը, հետևելով առաջին ատյանի դատարանի օրինակին, գործի տվյալներից չբխող հետևություն է արել, որ Ա.Սերոբյանի կողմից արձակվել է ոչ թե 2, այլ 1 կրակոց: Սինչդեռ 2 կրակոց արձակելու փաստը, ըստ վճռաբեկ բողոքի, հաստատվում է գործում առկա բազմաթիվ ապացույցներով:

Բացի այդ, վճռաբեկ բողոք բերած անձի կարծիքով անհիմն է վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ քրեական գործի նախաքննության ընթացքում միայն վկա Հ.Մանգասարյանն է ցուցմունք տվել այն մասին, որ ակումբի պարուհիները վախից դուրս չեն եկել պարելու: Վճռաբեկ բողոք բերած անձը փաստարկում է, որ այդ հանգամանքը հաստատվում է գործում առկա այլ ապացույցներով և՛ վկաներ, ակումբի աշխատակիցներ Հեղինե Ջինչեցկոյի, Լաուրա Անտոնյանի, Գայանե Ավագյանի ցուցմունքներով, վկաներ, ակումբի պարուհիներ Հերմինե Կարախանյանի, Արմինե Քալաշյանի, Լիանա Հակոբյանի, վկա, ակումբի երգիչ Հրաչյա Վարդանյանի ցուցմունքներով և այլն:

Վերը նշվածի հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերած անձը անհիմն է համարում վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ Ա.Սերոբյանի կողմից կրակոցի արձակումը անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ չի ստեղծել:

Այսպիսով, բողոքում խնդրվում է բեկանել ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի դատավճիռները, որպեսզի արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնի մեղադրական դատավճիռ՝ հաստատված համարելով, որ դեպքի օրը Ա.Սերոբյանն արձակել է ոչ թե մեկ, այլ երկու կրակոց, և որ նրա կրակոցները իրական վտանգ են ստեղծել մարդկանց կյանքի և առողջության համար:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ բողոքի հեղինակը եզրահանգել է, որ տվյալ գործով ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ և սխալ են կիրառել նյութական օրենքը: Դատավարական օրենքի էական խախտումներ են համարվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ հոդվածներով նախատեսված գործով ձեռք բերված ապացույցների ստուգման և գնահատման կարգի խախտումները: Դրա հետ մեկտեղ դատարանը սխալ է կիրառել նյութական օրենքը՝ ամբաստանյալ Ա.Սերոբյանի արարքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանություններով.

4.1. Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու պահանջը.

Վճռաբեկ բողոքում բողոքատուն ներկայացրել է հարաբերականորեն ինքնուրույն երեք պահանջ.

ա) բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը,

բ) բեկանել Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը և

գ) գործն ուղարկել Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Թեև օրենսդիրը նախատեսում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը վճռաբեկության կարգով բողոքարկելու և վճռաբեկ վարույթի արդյունքում գործը առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու հնարավորություն, այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան գործը նոր քննության ուղարկելու բողոքատուի պահանջի հետ զուգորդված՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու պահանջը չի կարող բավարարվել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի՝ «Գործի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

(1) առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը թողնում է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման.

(2) բեկանում է առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը և կայացնում է արդարացման դատավճիռ կամ կարճում է գործով վարույթը և դադարեցնում՝ քրեական հետապնդումը.

(3) բեկանում է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը և կայացնում է մեղադրական դատավճիռ.

(4) փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը.

(5) բեկանում է դատավճիռը կամ որոշումը և, սույն օրենսգրքի 311-րդ հոդվածի հիմքերով, գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության:

Եթե բողոքը բավարարելով Վճռաբեկ դատարանը բեկանի առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավճիռները և գործն ուղարկի վերաքննիչ դատարան՝ նոր քննության, ապա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426-րդ հոդվածի հիման վրա գործը ընդհանուր հիմունքներով ըստ էության քննող վերաքննիչ դատարանը չի կարող կայացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված և վերը թվարկված որոշումներից որևէ մեկը, քանի որ օրենքով նախատեսված չէ արդեն իսկ բեկանված դատավճիռը վերաքննիչ դատարանի կողմից կրկին բեկանելու, փոփոխելու կամ անփոփոխ թողնելու հնարավորություն:

Հետևաբար առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու մասին բողոք բերած անձի խնդրանքը չի բխում օրենքի պահանջներից և չի կարող բավարարվել:

4.2. Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում»: Միևնույն ժամանակ վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանների հարցը կանոնակարգվում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածով, ըստ որի՝ «Գործի քննությունը դատարանում կատար-

վում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել: Թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սուսկ «քրեաիրավական որակում» իմաստով, և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայագուրկ է:

Մինչդեռ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող վերացական լինել:

Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Արտիկոյի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (Artico v. Italy, 13.05.1980թ., կետ 33):

Այսպիսով, դատարանը գտնում է, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը:

Հետևաբար այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները դուրս են անձին առաջադրված մեղադրանքի սահմաններից, ապա վճռաբեկ դատարանում գործի քննության և լուծման սահմանները պետք է համապատասխանեցվեն անձին առաջադրված մեղադրանքի այն սահմաններին, որոնց շրջանակներում անձը իրական հնարավորություն է ունեցել իրականացնելու իր պաշտպանության իրավունքը:

2006 թվականի հունվարի 30-ին սույն գործով Ա.Սերոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշմամբ նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2006 թվականի հունվարի 28-ին, ժամը 01.30-ի սահմաններում, Նոր Նորքի 5-րդ զանգվածի Դավիթ Բեկ փողոցին հարող տարածքում գործող «Քրեյ-զի հորս» գիշերային ակումբում, ակոնիոլային հարբածության վիճակում, բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով ակումբի աշխատակիցների նկատմամբ, կազմալուծել է ակումբի բնականոն աշխատանքը, շուրջ 20 րոպե տևողությամբ

հայտնաբերվում է հասցեագրել ակումբի պարուհիներին, այնուհետև ապօրինի կերպով ձեռք բերված և նշված խուլիգանական գործողությունների պահին իր կողմից կրվող թիվ 21137 համարի 7,65 տրամաչափի «Մամուլ» տեսակի ասորճանակի գործադրմամբ կրակոց է արձակել նշված ասորճանակից, վնասել զիջերային ակումբի առաստաղը...» (գ.թ. 114): Առաջադրված մեղադրանքը լրացնելու մասին 2006 թվականի փետրվարի 24-ի քննիչի որոշմամբ խուլիգանության մասով Ա.Սերոբյանին առաջադրված մեղադրանքը չի փոփոխվել (գ.թ. 206): Այն նույն ձևակերպումն ունի նաև մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում (գ.թ. 261):

4.3. Դատարանների կողմից Ա.Սերոբյանին երկու կրակոց չմեղադրելը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի՝

«(1) Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է:

(2) Սույն հոդվածի առաջին մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

(3) Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են մեղադրյալի անունը, ազգանունը և նրա անձի մասին այլ տվյալներ, մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը:

Ըստ Ա.Սերոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրան առաջադրված մեղադրանքը լրացնելու մասին քննիչի որոշումների, ինչպես նաև համաձայն Ա.Սերոբյանի նկատմամբ հաստատված և դատարան ուղարկված մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության հանցակազմով Ա.Սերոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «կրակոց է արձակել», ինչից չի կարելի հետևություն անել, որ երկու կրակոց է արձակվել, ինչպես պնդում է բողոքատուն: Ուստի անկախ իր ներքին հանդգնումներից՝ վերաքննիչ դատարանն իր դատավճռով չէր կարող դուրս գալ Ա.Սերոբյանին առաջադրված մեղադրանքի սահմաններից և հաստատված ճանաչել Ա.Սերոբյանի կողմից երկրորդ կրակոցի արձակման հանգամանքը: Այդ պայմաններում ապացույցների ստուգման և գնահատման կանոնների խախտում վերաքննիչ դատարանը թույլ չի տվել: Այդ նկատառումներով վճռարեկ դատարանը ևս չի կարող դուրս գալ Ա.Սերոբյանին առաջադրված մեղադրանքի սահմաններից և օրենքի խախտում համարել վերաքննիչ դատարանի կողմից երկրորդ կրակոցի արձակման փաստը չընդունելը:

4.4. Արձակված կրակոցի հետևանքով անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծելը.

Համաձայն Ա.Սերոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրան առաջադրված մեղադրանքը լրացնելու մասին քննիչի որոշումների, ինչպես նաև Ա.Սերոբ-

յանի նկատմամբ հաստատված և դատարան ուղարկված մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի՝ «Ա.Սերոբյանը ... խուլիզանական գործողությունների պահին իր կողմից կրվող թիվ 21137 համարի 7,65 տրամաչափի «Մաուգեր» տեսակի ատրճանակի գործադրմամբ կրակոց է արձակել նշված ատրճանակից, վնասել գիշերային ակումբի առաստաղը...»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմով՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանություն որակելու համար բավարար չէ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հատկանիշը: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի համար պարտադիր է, որպեսզի հանցավորը զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայով մարմնական վնասվածք հասցնի կամ փորձի հասցնել, կամ էլ նրա գործողությունների հետևանքով անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծվի: Նման մոտեցում արտահայտված է նաև վճռաբեկ բողոքում:

Քանի որ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելը Ա.Սերոբյանին մեղսագրված հանցակազմի էությունը հանդիսացող հատկանիշ է, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ, որպես պարզված հանգամանք, այն պետք է մեղսագրված լիներ Ա.Սերոբյանին: Հակառակ դեպքում անկախ իր ներքին համոզմունքից՝ վերաքննիչ դատարանը չէր կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից և հաստատված ճանաչել Ա.Սերոբյանի արձակած կրակոցի հետևանքով անձանց կյանքի և առողջության համար իրական վտանգի առաջացման հանգամանքը: Հետևաբար՝ Ա.Սերոբյանին առաջադրված մեղադրանքի պայմաններում վերաքննիչ դատարանը չէր կարող հաստատված ճանաչել նրան մեղսագրվող արարքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի առկայությունը:

Այսպիսով, բերված հիմքերի սահմաններում քննելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի կարող բավարարվել:

Ինչ վերաբերում է գործի փաստերին (իրականում արձակվել է մե^օկ, թե^օ երկու կրակոց, ակումբի աշխատակիցների կյանքի և առողջության համար իրական վտանգ ստեղծվե^օլ է, թե^օ ոչ) և վճռաբեկ բողոքի մնացած իրավական հիմնավորումներին (Ա.Սերոբյանի արարքը պետք է որակվի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258 հոդվածի երկրորդ, թե^օ չորրորդ մասով), ապա դատարանը հանգում է հետևության, որ Ա.Սերոբյանին առաջադրված մեղադրանքի շրջանակները և վճռաբեկ բողոքի պահանջը և հիմքերը դրանց անդրադառնալու հնարավորություն չեն ընձեռում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանության հանցակազմի, գործը վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու հետ գուցորդված՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու պահանջի իրավաչափության, ինչպես նաև դատարաններում քրեական գործի քննության սահմանների հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բերված հիմքերով դատախազի վճռաբեկ բողոքը մերժել: Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 271-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի դատավճռը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ- 56/07

ՀՀ Քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի որոշումով
Գործ ՔԳՀ N-104/06 կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
բողոք բերող անձ **Է.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ**

2007 թվականի մարտի 30-ին

ք. Երևանում

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով Էմմա Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Էմմա Կիրակոսյանի հայտարարության հիման վրա ոստիկանության Արաբկիրի բաժնում, նյութերի նախապատրաստման արդյունքում 2006 թվականի հունիսի 23-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 37 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նշված որոշման դեմ Էմմա Կիրակոսյանը 14.07.2006թ. բողոք է ներկայացրել Արաբկիր և Բանաքեռ-Ջեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի օգոստոսի 04-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Առաջին ատյանի դատարանի որոշումը Է.Կիրակոսյանը բողոքարկել է ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն հետաքննության աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մամինների որոշումների և գործողությունների դեմ բողոքներ կարող են ներկայացվել դատարան, ինչը և արվել է բողոքաբերի կողմից, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը բողոքի հիման վրա կայացրած որոշումների հետագա բողոքարկում չի նախատեսում:

Է.Կիրակոսյանը Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 28.08.2006թ. վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 13.10.2006թ. որոշմամբ վերադարձվել է: Է.Կիրակոսյանը 22.02.2007թ. կրկին դիմել է Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ բողոքը 2007 թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Էմմա Կիրակոսյանը հայտարարություն է տվել ոստիկանության Արաբկիրի բաժին այն մասին, որ 27.04.2006թ. ժամը 16.00-ի սահմաններում, Երևան քաղաքի Կովկասյան փողոցի 78 տան բակում իր հարևաններ Օնիկ և Դուստրիկ Գրիգորյանները հարվածներ են հասցրել իր դեմքի և մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ, որոնցով հաստատվել է, որ Է.Կիրակոսյանը ստացել է վերին շրթունքի արյունազեղում, որը առողջության թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

Էմմա Կիրակոսյանին ծեծի ենթարկելու դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվել է Օնիկ Գրիգորյանի կողմից Է.Կիրակոսյանին դիտավորությամբ հարվածներ հասցնելու հանգամանքը, սակայն նկատի ունենալով, որ վերջինիս գործողություններով էական վնաս չի պատճառվել, ելնելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 37 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներից, 23.06.2006թ. որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքի, առաջին ատյանի դատարանի որոշման դեմ 15-օրյա ժամկետում վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը Վերաքննիչ դատարանի կողմից թողնվել է առանց քննության՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը վերաքն-

նիչ բողոքարկում չի նախատեսում հիմնավորմամբ, որով թույլ են տրվել քրեական և դատավարական օրենքների խախտումներ:

Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար, նաև ստորադաս դատարանների կողմից սույն գործով թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները կարող են առաջացնել ծանր հետևանքներ, Էմմա Կիրակոսյանը խնդրում է բեկանել և ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 22.08.2006թ. որոշումը և գործը վերադարձնել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Դիմող Էմմա Կիրակոսյանը, բողոքարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, հիմնվել է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Մինևս ժամանակ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն:

Այնուհանդերձ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով, այլ նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածով, 384 հոդվածով և այլն:

Մասնավորապես, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Ըստ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 384 հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված

չէ»: Իսկ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելը ըստ էության:

Ներկայացված նյութերից երևում է, որ Է.Կիրակոսյանը Վերաքննիչ դատարան է բողոքարկել Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազության կողմից նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին էլ. այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Բացի այդ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ « Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն »: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածը Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը քննելու հնարավորությունը չի բացառում:

Հետևաբար Է.Կիրակոսյանը իրավունք ուներ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չունեի նրա վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորության, Վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու իրավաչափության հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածով, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Էմմա Կիրակոսյանի բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ Քրեական և գինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան ըստ էության քննելու համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-44/07

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն
համայնքների առաջին ատյանի դատարանի
դատավճռով՝ քրեական գործ N 1-46/2005թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

**Տ.ՍԱՀԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ

**Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ**

2007թվականի մարտի 30-ին.

ք. Երևանում

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արթուր Մաջիթի Ավդալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճռի և նույն դատարանի պատժից վաղապես ազատելու մասին 2005թ. մայիսի 03-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Սույն քրեական գործը 03.03.2004թ. հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Նախաքննության ընթացքում 08.04.2004թ. որոշումներ են կայացվել Արթուր Ավդալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և հետախուզում հայտարարելու մասին:

10.09.2004թ. Ա. Ավդալյանը ձերբակալվել է ՌԴ Կրասնոդար քաղաքում և 21.01.2005թ. տեղափոխվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

22.01.2005թ. քրեական գործի վարույթը վերսկսվել է: 28.03.2005թ. Ա. Ավդալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նա որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով: Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճռով Արթուր Ավդալյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով ազատազրկման 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին մասով ուղղիչ աշխատանքների 1 (մեկ) տարի ժամանակով: ՀՀ քրեական օրենսգրքի 68 հոդվածի կիրառմամբ ուղղիչ աշխատանքները փոխարինվել է ազատազրկմամբ՝ ուղղիչ աշխատանքների 3 (երեք) օրը հաշվելով ազատազրկման մեկ օրվա դիմաց և պատիժ սահմանել ազատազրկում 4 (չորս) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կիրառմամբ, պատիժները լրիվ գումարելու սկզբունքով վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 1 (մեկ) տարի 10 (տասը) ամիս ժամկետով:

Պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2004թ. սեպտեմբերի 10-ից:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. մայիսի 03-ի որոշմամբ Արթուր Ավդալյանը պայմանական վաղապես ազատվել է պատժի մնացած մասը կրելուց:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 02.03.2007թ. որոշմամբ վարույթ է ընդունվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արթուր Ավդալյանը դատապարտվել է այն բանի համար, որ իր մորաքույր Բասե Բաբայանը հանգուցյալ ծնողների Երևան քաղաքի Թամանյան փողոցի 1 շենքի 16 բնակարանը 1994 թվականին սեփականաշնորհել է իր անվամբ, որը 2001 թվականի մարտ ամսին, իր ամուսնու՝ Մուրադ Բաբայանի հետ վաճառել են Հ.Գևորգյանին: Բնակարանի վաճառքից հետո Ա.Ավդալյանի մայրը՝ Գյուլիգար Ավդալյանը բողոքից և նրա ամուսնուց բազմիցս պահանջել է հանգուցյալ ծնողների բնակարանի վաճառքից ստացած գումարի իր փայտբաժինը: Արթուր Ավդալյանը 2004թ. հունվար ամսին հերթական անգամ մորաքրոջ ամուսին Մ.Բաբայանից պահանջել է իր մոր հասանելիք 5500 ԱՄՆ դոլար փայտբաժինը: Մերժում ստանալուց հետո Ա.Ավդալյանը իրականացնելով իր ենթադրյալ իրավունքները, օրենքով սահմանված կարգի խախտմամբ, օգտագործելով ակնհայտ կեղծ պայմանագիրը, Մ.Բաբայանին պատկանող 4.24.000 դրամ արժողությամբ միկրոավտոբուսը 2.837.350 դրամին համարժեք 5000 ԱՄՆ դոլարով վաճառել է Վ.Օհանյանին և ինքնիրավչությամբ Մ.Բաբայանին պատճառել է էական վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստադրկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործի նախաքննության ընթացքում Արթուր Ավդալյանը ներգրավված է եղել որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և քննությունից թաքնվելու պատճառով հայտարարված է եղել հետախուզում: 10.09.2004թ. Ա.Ավդալյանը հայտնաբերվել է ՌԴ Կրասնոդար քաղաքում, ձեր-

բակավել է 21.01.2005թ. էտապավորվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ ծանրացուցիչ հանգամանքներում կատարած խարդախության համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Մինչդեռ նախաքննական մարմինը, անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավափորձությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի պահանջները, չստանալով ՌԴ գլխավոր դատախազության համաձայնությունը, Արթուր Ավդալյանի արարքը վերաորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1- ին և 325 հոդվածի 2-րդ մասերով և նույն մեղադրանքով քրեական գործը ուղարկվել է առաջին ստյանի դատարան, որի համար նա ենթարկվել է քրեական պատասխանատվության: Հետևաբար, խախտվել են «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66 հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499 հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ Ա.Ավդալյանը ենթարկվել է պատասխանատվության և պատժի այն հանցանքի համար, որի համար հանձնված չի եղել:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Արթուր Ավդալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1- ին և 325 հոդվածի 2-րդ մասերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ստյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճիռը և նույն դատարանի 03.05.2005թ. պատժից վաղալկետ ազատելու վերաբերյալ որոշումը և քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության, որով հնարավորություն կընձեռնվի ուղղել նախաքննական մարմնի և ստորադաս դատարանի սխալը:

Բողոքում նշվել է նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից, ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499 հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրա-

կանացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66 հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499 հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության ընթացքում Ա.Ավդալյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, քննությունից թաքնվելու պատճառով հայտարարվել է հետախուզում, և գործի վարույթը կասեցվել է: 10.09.2004թ. Ա.Ավդալյանը հայտնաբերվել և ձերբակալվել է ՌԴ Կրասնոդար քաղաքում: 2005թ. հունվարի 21-ին Ա.Ավդալյանը էտապավորվել է Երևան քաղաք և տեղափոխվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարած խարդախության համար քրեական պատասխանատվության ենթարկվելու համար:

22.01.2005թ. քրեական գործի վարույթը վերսկսվել է: Նշված հանցավոր արարքը կատարելու համար Արթուր Ավդալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով: Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճռով Արթուր Ավդալյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով և դատապարտվել է ազատազրկման 1 (մեկ) տարի 10 (տասը) ամիս ժամկետով: Նույն դատարանի 2005թ. մայիսի 03-ի որոշմամբ Արթուր Ավդալյանը պայմանական վաղապես ազատվել է պատժի մնացած մասը կրելուց:

Դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս անտեսվել է, որ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի համաձայն՝ ՌԴ գլխավոր դատախազությունը համաձայնություն է տվել Ա.Ավդալյանին հանձնել ՀՀ իրավապահ մարմիններին ծանրացուցիչ հանգամանքներում խարդախություն կատարելու

համար պատասխանատվության ենթարկելու նպատակով, որն էլ համապատասխանում է ՀՀ Քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Հետևաբար տվյալ դեպքում Ա.Ավդալյանը առանց Ռ-Դ-ի համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի քննության ընթացքում միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը՝ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66 հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3, 480 և 499 հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, քրեադատավարական օրենքի էական խախտումներ են, նույն օրենսգրքի 406 հոդվածի 2-րդ մասի, 397 և 398 հոդվածների համաձայն, հիմք են հանդիսանում Արթուր Մաջիթի Ավդալյանի վերաբերյալ ՀՀ Քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճիռը և նույն դատարանի 03.05.2005թ. պատժից վաղակետ ազատելու վերաբերյալ որոշումը բեկանելու համար: Քանի որ թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումները չեն կարող վերացվել դատական քննության ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421 հոդվածի 3-րդ մասի հիման վրա Ա. Ավդալյանի վերաբերյալ դատավճիռը ենթակա է բեկանման՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով:

Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի վերը նշված նորմերի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406, 419, 422-424 հոդվածներով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արթուր Մաջիթի Ավդալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 1-ին և 325 հոդվածի 2-րդ մասերով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. ապրիլի 14-ի դատավճիռը և նույն դատարանի պատժից վաղակետ ազատելու մասին 2005թ. մայիսի 03-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-59/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՈՒՐ ԿԱՏԱՐԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դիմող **Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
ներկայացուցիչ **Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ**

2007 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով դիմող Մնաց Ավետիսյանի, նրա ներկայացուցիչ, փաստաբան Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2006 թվականի մայիսի 5-ին Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղի բնակիչ Մնաց Վարազդատի Ավետիսյանի դիմումի հիման վրա Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 17204206 քրեական գործը:

2006 թվականի հունիսի 30-ին դատախազության ավագ քննիչ Մ.Բաղդեյանը որոշում է կայացրել հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու մասին:

2006 թվականի նոյեմբերի 29-ին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը որոշմամբ մերժել է թիվ 17204206 քրեական գործի վարույթը կարճելու մասին Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության 2006 թվականի հունիսի 30-ի որոշման դեմ Մնաց Ավետիսյանի բերած բողոքը:

2006 թվականի դեկտեմբերի 12-ին Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ, փաստաբան Սեդա Սաֆարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ քրեական և զինվորա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

կան գործերով վերաքննիչ դատարան՝ խնդրելով դատական ստուգման ենթարկել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 29.11.2006թ. որոշումը և քրեադատավարական օրենքի էական խախտումների հիմքով բեկանել այն:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Կ.-Ղազարյանի 2006 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

2007 թվականի մարտի 7-ին Մնաց Ավետիսյանը և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը վերաքննիչ դատարանի դատավորի այդ որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել:

Վճռաբեկ բողոքը 2007 թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2.Գործի փաստական հանգամանքները.

2006 թվականի մայիսի 1-ին ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում Մ.Ավետիսյանի կողմից հայտարարություն է տրվել այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղի բնակիչ Նվեր Ավետիսյանը 2006 թվականի ապրիլի 27-ի առավոտյան տանից դուրս է եկել Երևանից ՌԴ Մոսկվա քաղաք մեկնելու նպատակով և Երևան քաղաքի Ավան թաղամասի բուսաբանական այգու հարևանությամբ գտնվող կանգառում իջեցվելով ավտոբուսից՝ անհետացել է:

Հայտարարության հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում՝ 2006 թվականի մայիսի 3-ին, Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում գտնվող «Մամա Ֆլորա» ծաղկի խանութի հանդիպակաց ձորում՝ «Արքայաձոր» ռեստորանային համալիրից մոտ 100 մետր հեռավորությամբ, ծառից կախված վիճակում հայտնաբերվել է Ն.Ավետիսյանի դիակը:

3.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերող անձինք գտնում են, որ վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով փաստարանի վերաքննիչ բողոքը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 103-րդ, 263-րդ, 376-րդ, 384-րդ, 387-րդ հոդվածների, 395-րդ հոդվածի 2-րդ կետի և 398-րդ հոդվածի պահանջների խախտումներ, որի հետևանքով Մ.Ավետիսյանը զրկվել է իր՝ որպես տուժողի իրավահաջորդի, օրենքով երաշխավորված իրավունքներից:

Ըստ բողոքի հեղինակների, ունենալով առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք, Մ.Ավետիսյանի ներկայացուցիչն անհիմն կարգով զրկվել է այդ իրավունքից օգտվելու հնարավորությունից, քանի որ վերաքննիչ դատարանի դատավոր Կ.Ղազարյանի միանձնյա որոշմամբ, որը կայացնելու իրավունք նա չուներ, այն թողնվել է առանց քննության:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասը հստակ սահմանում է բողոքն առանց քննության թողնելու դեպքերը, որոնք բացակայում են Մ.Ավետիսյանի բողոքում:

Բողոք բերող անձինք պատճառաբանելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ նյութերով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար, խնդրում են բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 14.12.06թ. որոշումն ու նյութերն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4.Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ պալատը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

1/ Քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ պահանջը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը:

Գիմող Մնաց Ավետիսյանը, բողոքարկելով քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը, հիմնվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Մինևույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն:

Այնուհանդերձ, քրեական գործով վարույթը կարճելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, 384-րդ հոդվածով և այլն:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Զննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանինը՝ վերադաս դատարան»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով» («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթը սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելն ըստ էության:

Ներկայացված նյութերից երևում է, որ Մ.Ավետիսյանի ներկայացուցիչը վերաքննիչ դատարան է բողոքարկել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին էլ. այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Ս.Սաֆարյանի բողոքը համապատասխանում էր վերաքննիչ բողոքին ներկայացվող այլ օրենսդրական պահանջներին ևս: Մասնավորապես, այն ներկայացվել է

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդված), բողոքի բովանդակությունը համապատասխանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Հետևաբար Մ.Ավետիսյանի ներկայացուցիչն իրավունք ուներ քննիչի՝ գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չուներ այդ վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

2/ Բողոքն առանց քննության թողնելը. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Իսկ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության»: Ուստի, բացի նշված երկու դեպքից վերաքննիչ դատարանը լիազորված չէ բողոքը թողնել առանց քննության:

Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց չէր, ստորագրված էր, պարունակում էր նշում բողոքարկվող որոշման մասին:

Հետևաբար, վերաքննիչ դատարանը լիազորված չէր որոշում կայացնել Ս.Սաֆարյանի բողոքն առանց քննության թողնելու մասին:

3/ Վերաքննիչ դատարանում գործի քննությունը մեկ դատավորի կազմով.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 387-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորի կազմով: Այս ընդհանուր իրավանորմից գատ գոյություն չունի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեությունը կանոնակարգող որևէ հատուկ իրավադրույթ, որը սահմաներ քրեական գործ քննող վերաքննիչ դատարանի այլ կազմ, քան երեք դատավորից բաղկացած դատական կազմն է:

Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավասու չէր Ս.Սաֆարյանի բողոքը քննել մեկ դատավորի կազմով:

Այսպիսով, խախտվել է օրինակաչության սկզբունքը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

Գործը մեկ դատավորի կազմով քննելով և լուծելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է քրեական դատավարության ևս մեկ սկզբունք՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»: Օրենքով վերաքննիչ դատարանի մեկ դատավորին վերապահված չէ քրեական գործ քննելու լիազորություն: Ուստի Մ.Ավետիսյանը գրկվել է իր գործն այն դատարանում և այն դատավորների կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով, այսինքն՝ իր գործը վերաքննիչ դատարանի երեք դատավորի կազմով քննվելու իրավունքից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի համատեքստում վերաքննիչ դատարանի մեկ դատավորը չի կարող դիտվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Ուստի վերաքննիչ դատարանում բողոքատու Մ.Ավետիսյանի գործի քննությունը մեկ դատավորի կազմով խախտում է դիմողի՝ արդարացի դատաքննության իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերաքննիչ դատարանի թույլ տված քրեադատավարական օրենքի խախտումներն էական են, քանի որ դրանք քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների խախտումներ են, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, և դիմող Մ.Ավետիսյանին արդարացի դատաքննության իրավունքից զրկելու ճանապարհով այդ խախտումներն անվերապահորեն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Հաշվի առնելով տվյալ գործով օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 27-ի՝ Ա.Քրմոյանի վերաբերյալ համանման գործով ձևավորված մոտեցմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը ենթակա է բեկանման:

Նկատի ունենալով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մնաց Վարագդատի Ավետիսյանի և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը բավարարել:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը բեկանել և նյութերն ուղարկել նույն դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-48/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ
դատարանում հ. գործ 04-Ն-01 որոշումը
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**

2007թվականի մարտի 30-ին.

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Լևոն Քոչինյանի ներկայացուցիչ Արմեն Նավոյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Դանիելյանի 2007 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազության քննիչ Գ.Գևորգյանի կողմից 2006 թվականի օգոստոսի 3-ին կայացվել են որոշումներ՝ Լևոն Քոչինյանի և մյուսների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու, թիվ 10205306 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Նույն համայնքների առաջին ատյանի դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ, բավարարելով Արմեն Նաջարյանի բողոքը, վերացրել է քննիչի նշված որոշումները:

Լևոն Քոչինյանի ներկայացուցիչ Արմեն Նավոյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Դանիելյանը 2007 թվականի հունվարի 22-ի որոշմամբ, ղեկավարվելով ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածներով, Լ.Քոչինյանի ներկայացուցիչ Ա.Նավոյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների բողոքարկման արդյունքում վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարանի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ Լևոն Քոչինյանի ներկայացուցիչ Արմեն Նավոյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 5-ի որոշմամբ ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Քաղաքացի Արմեն Նաջարյանի բազմաթիվ բողոքների հիման վրա՝ 2004 թվականի հոկտեմբերի 26-ին Արարատի մարզի դատախազի կողմից Երևան քաղաքի բնակիչներ Լևոն Քոչինյանի և Վազգեն Մարդոյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

2006 թվականի մարտի 28-ին ՀՀ գլխավոր դատախազությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով կարճել է Լ.Քոչինյանի և Վ.Մարդոյանի նկատմամբ հարուցված քրեական գործը՝ նկատի ունենալով, որ առկա է անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին նախաքննական մարմնի չվերացված որոշում, որը քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

2006 թվականի ապրիլի 11-ին քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն՝ վարույթ հարուցելու և նյութեր նախապատրաստելու ցուցումով:

2006 թվականի հունիսի 15-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը հաստատել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշումները վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի 1-ին կետերի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշումը՝ նկատի ունենալով, որ հարուցված վարույթով ի հայտ են բերվել նոր երևան եկած հանգամանքներ՝ Լ.Քոչինյանի և մյուսների կողմից Արմեն Նաջարյանին ապօրինի ազատությունից զրկելու միջոցով, ֆիզիկական սպառնալիքների ներքո նրանից ստացական և լիազորագիր ձեռք բերելու, դրանց ապօրինի օգտագործմամբ նրա առանձնապես խոշոր չափերի գույքին խարդախությամբ տիրանալու, տան առուվաճառքը վավերացնելու ընթացքում նոտարական գրասենյակի կողմից խախտումներ թույլ տալու, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակցի կողմից պաշտոնական դիրքի չարաշահումներ կատարելու վերաբերյալ:

2006 թվականի հունիսի 20-ին քրեական գործն ընդունվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազության քննիչ Գ.Գևորգյանի վարույթ:

2006 թվականի օգոստոսի 03-ին քննիչը որոշումներ է կայացրել՝ Լևոն Քոչինյանի և մյուսների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով, հարկադիր կատարողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Ըստ վճռաբեկ բողոքի՝ այն բերելու հիմք են Լևոն Քոչինյանին իր գործը վերաքննիչ դատարանում քննելու իրավունքից զրկելու արդյունքում քրեադատավարական օրենքի էական և նյութական իրավունքների խախտումները: Մասնավորապես խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ և 379-րդ հոդվածների համաձայն՝ քննիչի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի գործողությունները և որոշումները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան:

Ըստ բողոք բերած անձի՝ խախտվել է նաև ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Բացի այդ, վերաքննիչ դատարանն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի՝ իրավասու է առանց քննության թողնել միայն ժամկետանց բողոքները:

Վերաքննիչ դատարանի կողմից նշված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածները բողոքն առանց քննության թողնելու հիմքեր ու կարգ չեն սահմանում, դրանք չեն արգելում նաև առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկումը վերաքննիչ դատարան:

Գտնելով, որ վերաքննիչ դատարանի որոշումը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածների սխալ կիրառման դատական նախադեպի ստեղծմանը, ըստ որի՝ նմանատիպ դեպքերում առաջին ատյանի դատարանի որոշումները կհամարվեն վերջնական և բողոքարկման ոչ ենթակա, բողոք բերած անձն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով խնդրել է վերացնել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 22-ի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

1/ Քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Ներկայացված նյութերից երևում է, որ Լևոն Քոչինյանը վերաքննիչ դատարան է բողոքարկել իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը: Առաջին ատյանի դատարանի որոշումը հնարավորություն է տալիս Լ.Քոչինյանի նկատմամբ քրեական գործը նորոգել և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել: Հետևաբար տվյալ դեպքում առաջին ատյանի դատարանի որոշման բողո-

քարկումը վերաքննիչ դատարան բխում է անմիջապես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածից:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր շինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Մինևույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքակելու հնարավորություն:

Այնուհանդերձ, քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Սույն գործով Լևոն Քոչինյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը համապատասխանում էր վերաքննիչ բողոքին ներկայացվող այլ օրենսդրական պահանջներին ևս: Մասնավորապես, այն սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ, 379-րդ հոդվածներ), բողոքի բովանդակությունը համապատասխանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Հետևաբար Լ.Քոչինյանն իրավունք ուներ իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չուներ այդ վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

2/ Վերաքննիչ դատարանում գործի քննությունը մեկ դատավորի կազմով.

3/ Բողոքն առանց քննության թողնելը.

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 27-ի՝ Ա.Քրնոյանի վերաբերյալ, Հ.Դանիելյանի վերաբերյալ համանման գործերով ձևավորված մոտեցմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է իր դիրքորոշումը բողոքում բարձրացված իրավական այս խնդիրների վերաբերյալ:

Տվյալ գործով օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 22-ի որոշումը ենթակա է բեկանման, նյութերն ուղարկելով նույն դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 22-ի որոշումը բեկանել և նյութերն ուղարկել նույն դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-38/07

Լուռու մարզի առաջին ատյանի
դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Հարությունյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ

2007թվականի մարտի 30-ին
ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը Վարդան Մերգեյի Ասլիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով, և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով Լուռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Վարդան Մերգեյի Ասլիկյանին 1994 թվականի հունվարի 22-ին մեղադրանք է առաջադրվել 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտարարվել հետախուզում, և գործով վարույթը կասեցվել է: 2004 թվականի մարտի 10-ի որոշմամբ Վ.Ասլիկյանին մեղաազրված արարքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2003 թվականի ապրիլի 18-ին ՌԴ-ից հաղորդում է ստացվել, որ հետախուզման մեջ գտնվող Վարդան Ասլիկյանը ՌԴ քրեական օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «դ» կետերով 26.02.2003 թվականին ՌԴ Կրասնոդար քաղաքի Խոփիր-

դային շրջանի ժողդատարանի կողմից դատապարտվել է ազատազրկման 4 (չորս) տարի ժամանակով, և պատժի կրման սկիզբը հաշվվել է 27.06.2001 թվականից: ՀՀ գլխավոր դատախազությունը որոշում է կայացրել Վարդան Ասիկյանին ՀՀ տեղափոխելու մասին, սակայն ՌԴ գլխավոր դատախազության կողմից Վ.Ասիկյանին ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու միջնորդությունը մերժվել է մինչև Վ.Ասիկյանի կողմից ՌԴ դատարանի կողմից նշանակված պատժի կրման ավարտը: Նշվել է նաև, որ Վ.Ասիկյանին տեղափոխելու հարցը կարող է լուծվել միայն Վ. Ասիկյանի պատիժը կրելուց հետո, եթե ՀՀ համապատասխան մարմինները կհաստատեն իրենց միջնորդությունը: 25.05.2005 թվականին ՌԴ գլխավոր դատախազությունը բավարարել է ՀՀ դատախազության միջնորդությունը, և Վ. Ասիկյանը տեղափոխվել է Հայաստան:

2006 թվականի հունվարի 27-ին գործի վարույթը վերսկսվել է: 2006 թվականի մայիսի 22-ին Վարդան Ասիկյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով: Նշված հոդվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճռով Վարդան Սերգեյի Ասիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, և նա ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով՝ ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով վերջնական նշանակվել է ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը վերջնական պատժի ժամկետին հաշվակցելով՝ պատժի կրման սկիզբը հաշվարկվել է 2001 թվականի հունիսի 27-ից: Պատիժը նշանակվել է կրելու ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը, գործը քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքի հիման վրա, որով խնդրվել է բեկանել Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 15.09.2006 թվականի դատավճիռը և արձակել Սիմսկի 22.01.1993 թվականի կնքված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի 66-րդ հոդվածի պահանջին համապատասխան՝ քրեական պատասխանատվության սահմանների մասին մեղադրանքի ծավալով դատավճիռ, 25.12.2006 թվականի որոշմամբ դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վերադարձրել է, և թերությունները վերացնելու, վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանել է մեկամսյա ժամկետ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից կրկին վճռաբեկ բողոք է ներկայացվել, որը վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

Վ.Ասլիկյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա 1993թվականի հունիսի 17-ին ավագակային հարձակում գործադրելու միջոցով ավտոմեքենա հափշտակելու նպատակով, նախապես հանցավոր համաձայնության գալով Վանաձոր քաղաքի բնակիչներ Ալեքսան Չիլինգարյանի, վերջինիս կնոջ՝ Կարինե Ասատրյանի, Հրաչիկ Մխիթարյանի և գործով չպարզված ևս մի կնոջ հետ, մեկնել են Գյումրի քաղաք, որտեղ իրենց Ալավերդի տեղափոխելու պատրվակով վարձակալել են Գյումրի քաղաքի բնակիչ Վարդան Պալյանի «ԳԱԶ-2410» մակնիշի 98-88 ՊԱՐ պ/հ ավտոմեքենան: Հասնելով Ալավերդի՝ Վ.Պալյանը նրանց խնդրանքով ճանապարհը շարունակել է դեպի Շամլուղ գյուղ: Ալավերդի-Շամլուղ ճանապարհահատվածում Վ.Ասլիկյանը և նրա հանցակիցները, իրագործելով իրենց նախնական պայմանավորվածությունը, Վարդան Պալյանի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, մետաղյա պարանով սեղմել են նրա պարանոցը, հասցրել ուշագնաց վիճակի, կապել են ձեռքերն ու ոտքերը և մեքենայի դեկից տեղափոխել են ավտոմեքենայի բեռնախցիկը: Այդ կերպ առևանգելով Վ. Պալյանին՝ նրանք հափշտակել են վերջինիս 1.500.000 ՀՀ դրամ արժողությամբ ավտոմեքենան, տեղափոխել են Վրաստանի Հանրապետության Բրդանոր գյուղ և Վ.Պալյանին 4 օր ապօրինաբար ազատությունից զրկելով՝ պահել են Վ.Ասլիկյանի հայրական տան ավտոտնակի փոսի մեջ: Վ.-Պալյանի ավտոմեքենան վաճառել են գործով չպարզված Աղբրեջյանի Հանրապետության քաղաքացու, որից հետո Վ.Պալյանին բաց են քողել:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոիշխյալ հիմնավորումներով.

Մույն գործով նախաքննության ընթացքում Վարդան Ասլիկյանը ներգրավված է եղել որպես մեղադրյալ 1961 թվականի ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, և հայտարարվել է հետախուզում: 1994 թվականի հունվարի 22-ի որոշմամբ գործով վարույթը կասեցվել է: 2004 թվականի մարտի 10-ի որոշմամբ Վ.Ասլիկյանին մեղաազրված արարքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

25.05.2005 թվականին ՌԴ գլխավոր դատախազությունը բավարարել է ծանուրացուցիչ հանգամանքներում ավագակություն կատարելու համար Վ.Ասլիկյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը, և Վ. Ասլիկյանը տեղափոխվել է Հայաստան:

2006 թվականի հունվարի 27-ին գործի վարույթը վերսկսվել է:

Հանձնելուց հետո քրեական հետապնդման մարմինը, խախտելով միջազգային պայմանագրով սահմանված կարգը, առանց հանձնող կողմի համաձայնության, ինչը ուղղակիորեն նշված է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Սինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասում, 2006 թվականի մայիսի 22-ին Վարդան Ասլիկյանին առաջադրված մեղադրանքը լրացրել է, նրան նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով:

Փաստորեն, անտեսվել են ինչպես նշված Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Նշված

հողվածներով գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճռով Վարդան Սերգեյի Ասլիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և վերջնական դատապարտվել ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման:

ՌԴ գլխավոր դատախազությունը միջնորդել է ՀՀ գլխավոր դատախազությանը միջոցներ ձեռնարկել Վ. Ասլիկյանին հանձնող երկրի պայմաններով քրեական պատասխանատվության ենթարկելու՝ խախտված իրավունքը վերականգնելու ուղղությամբ:

Փաստորեն, Վ.Ասլիկյանն առանց ՌԴ համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի չհանձնված հանցագործության համար:

Բողոք բերած անձը խնդրել է Վարդան Սերգեյի Ասլիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 15.09.2006 թվականի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի մասով բեկանել, գործի մասն այդ մեղադրանքով վերադարձնել լրացուցիչ նախաքննության: Դատավճիռը մնացած մասով բողոքն անփոփոխ:

Բողոքում նաև նշվել է, որ «Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Վարդան Սերգեյի Ասլիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 15.09.2006 թվականի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով պետք է բեկանել և այդ մասով գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարած-

քում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Քաղաքացիական, քննանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Գործի նյութերով հիմնավորվել է, որ ՌԳ դատախազությունը բավարարել է ծանրացուցիչ հանգամանքներում ավագակություն կատարելու մեջ մեղադրվող Վ.Ասլիկյանին հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության խնդրանքը: Գործի հետագա քննության ժամանակ նախաքննության մարմինը նրան մեղադրանք է առաջադրել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով, որով Վ.Ասլիկյանը հանձնված չի եղել, և նա քրեական պատասխանատվության ու պատժի է ենթարկվել նաև այդ հոդվածով: Դրանով խախտվել են 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների պահանջները, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հիմք են Վ.Ասլիկյանի վերաբերյալ դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով բեկանելու համար: Քանի որ նախաքննության մարմնի և դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ միջազգային պայմանագրի և քրեադատավարական օրենքի էական խախտում, որը չի կարող վերացվել դատական քննության ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա Վ.Ասլիկյանի վերաբերյալ դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով ենթակա է բեկանման՝ գործը նոր նախաքննության ուղարկելով: Նոր նախաքննությամբ անհրաժեշտ է 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածով նախատեսված կարգով լուծել Վ.Ասլիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով կատարած հանցագործության համար հանձնելու համաձայնության, ինչպես նաև դրա հետ կապված նշված հոդվածով նրան քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վարդան Սերգեյի Ասլիկյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով բեկանել և այդ մասով գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ - 96/07

Վերաքննիչ դատարանում որոշում
կայացրած դատարանի կազմը
Նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՐԵԱԿԱՆ ԱԿՍԿԱՏՐ /ԱՅՍՈՒԽԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ/

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

**Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

քարտուղար
դիմող

**Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Վ.ՄԱՐԳՍՅԱՆԻ**

2007թվականի մայիսի 4-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վերոնիկա Սարգսյանի վճռաբեկ բողոքը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ս.Համբարձումյանի 2007 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Վերոնիկա Սարգսյանը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ ինքնակամ կառույց կառուցած և դրանով իր իրավունքները խախտած Պետրոս Գաբրիելյանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պատասխանատու պաշտոնյաների նկատմամբ քրեական գործ հարուցելու խնդրանքով: Այնուհետև Վերոնիկա Սարգսյանը բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարան այն մասին, որ 2006 թվականի հոկտեմբերի 17-ի իր բողոքին ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնյաները ընթացք չեն տալիս: Բողոքաբերը խնդրել է որոշում կայացնել և ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել օրենքով սահմանված կարգով ընթացք տալ իր բողոքին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, 2007 թվականի հունվարի 9-ի որոշմամբ Վերոնիկա Սարգսյանի բողոքը մերժել է՝ նկատի ունենալով, որ վերջինիս մատնանշած հանգամանքները ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել են և բողոքաբերին գրությամբ հայտնվել է,

որ հանցագործության հատկանիշները բացակայում են, իսկ քաղաքապետի որոշումը նա կարող է վիճարկել դատական կարգով:

Վ.Սարգսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով «անօրինական ճանաչել» առաջին ատյանի դատարանի որոշումը և ՀՀ գլխավոր դատախազին պարտավորեցնել ընթացք տալ իր բողոքին: ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ս.Համբարձումյանը 2007 թվականի հունվարի 29-ի որոշմամբ Վ.Սարգսյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը 2007 թվականի հունվարի 9-ի որոշմամբ մերժել է Վ.Սարգսյանի ներկայացրած բողոքը: Վ.Սարգսյանը վերոհիշյալ որոշումը բողոքարկել է վերաքննիչ դատարան, սակայն վերաքննիչ դատարանի դատավոր Ս.Համբարձումյանն իր որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումներն ու գործողությունները «բողոքարկվում են առաջին ատյանի դատարան և դրանց վերաքննությունը օրենքով սահմանված չէ»:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Համարելով, որ իր բողոքն առանց քննության թողնելու մասին վերաքննիչ դատարանի դատավորի միանձնյա կայացրած որոշումն անօրինական է, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, իսկ իր վերաքննիչ բողոքը բերվել է օրենքի պահանջների պահպանմամբ և ենթակա է քննության, վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ս.Համբարձումյանի 2007 թվականի հունվարի 29-ի որոշումը և գործը «ետ ուղարկել նոր կազմով քննության»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

1) Դիմող Վերոնիկա Սարգսյանը, բողոք ներկայացնելով առաջին ատյանի դատարան, հիմնվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի վրա: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն:

Այնուհանդերձ, քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների և որոշումների բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում

են ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, այլ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, 384-րդ հոդվածով և այլն:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Զննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերահաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթը սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելն ըստ էության:

Ներկայացված նյութերից երևում է, որ Վ.Սարգսյանը վերաքննիչ դատարան է բողոքարկել դատախազության գործողությունների դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին էլ. այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Վ.Սարգսյանի բողոքը համապատասխանում էր վերաքննիչ բողոքին ներկայացվող այլ օրենսդրական պահանջներին ևս: Մասնավորապես, այն ներկայացվել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդված), բողոքի բովանդակությունը համապատասխանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Հետևաբար Վ.Սարգսյանն իրավունք ուներ առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չունեց այդ վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 387-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորի կազմով: Այս ընդհանուր իրավանորմից գատ գոյություն չունի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեությունը կանոնակարգող որևէ հատուկ իրավադրույթ, որը սահմաներ քրեական գործ քննող վերաքննիչ դատարանի այլ կազմ, քան երեք դատավորից բաղկացած դատական կազմն է:

Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավասու չէր Վ.Սարգսյանի բողոքը քննել մեկ դատավորի կազմով:

Այսպիսով, խախտվել է օրինականության սկզբունքը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

Գործը մեկ դատավորի կազմով քննելով և լուծելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է քրեական դատավարության ևս մեկ սկզբունք՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»: Օրենքով վերաքննիչ դատարանի մեկ դատավորին վերապահված չէ քրեական գործ քննելու լիազորություն: Ուստի Վ.Սարգսյանը գրկվել է իր գործը այն դատարանում և այն դատավորների կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով, այսինքն՝ իր գործը վերաքննիչ դատարանի երեք դատավորի կազմով քննվելու իրավունքից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի համատեքստում վերաքննիչ դատարանի մեկ դատավորը Վ.Սարգսյանի գործով չի կարող դիտվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Ուստի վերաքննիչ բողոք ներկայացրած անձ Վ.Սարգսյանի գործի քննությունը մեկ դատավորի կազմով խախտում է դիմողի՝ արդարացի դատաքննության իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերաքննիչ դատարանի թույլ տված քրեադատավարական օրենքի խախտումներն էական են, քանի որ դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների խախտումներ են, որոնք թույլ են տրվել դատական քննության ժամանակ, և Վ.Սարգսյանին արդարացի դատաքննության իրավունքից գրկելու ճանապարհով այդ խախտումները անվերապահորեն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

3) Բողոքն առանց քննության թողնելը.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Իսկ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության»: Ուստի, բացի նշված երկու դեպքից, վերաքննիչ դատարանը լիազորված չէ բողոքը թողնել առանց քննության:

Վ.Սարգսյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց չէր, ստորագրված էր, պարունակում էր նշում բողոքարկվող որոշման մասին: Հետևաբար, վերաքննիչ դատարանը լիազորված չէր որոշում կայացնել Վ.Սարգսյանի բողոքն առանց քննության թողնելու մասին:

Տվյալ գործով օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 27-ի՝ Ա.Քրմոյանի վերաբերյալ, Վ.Սարգսյանի վերաբերյալ, Հ.Դանիելյանի վերաբերյալ համանման գործերով ձևավորված մոտեցմամբ, որտեղ Վճռաբեկ դատարանն արդեն արտահայտել է իր դիրքորոշումը բո-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

դրքում բարձրացված իրավական խնդիրների վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 29-ի որոշումը ենթակա է բեկանման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերոնիկա Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ քննության առնելու համար:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-79/07

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների
առաջին ատյանի դատարանում դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Դավթյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Դ.ՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Ս.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ

2007թվականի մայիսի 4-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Տիգրան Համոյի Սայադխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Տիգրան Համոյի Սայադխանյանի կողմից խոշոր չափերի հարկեր վճարելուց խուսափելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով քրեական գործը հարուցվել է 2005 թվականի օգոստոսի 19-ին: 2006 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ Տիգրան Սայադխանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով ներգրավվել է որպես մեղադրյալ: 2006 թվականի մարտի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի դատավճռով Տիգրան Սայադխանյանը մեղավոր է ճանաչվել

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով և դատապարտվել 150.000 ՀՀ դրամ տուգանքի:

Որոշվել է Տիգրան Սայադխանյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 47 միլիոն 22 հազար 600 հարյուր ՀՀ դրամ որպես հարկային պարտավորությունների գծով հաշվարկված պարտքի գումար:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007թվականի ապրիլի 3-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմինը Տիգրան Սայադխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրել հետևյալ արարքների համար.

Տիգրան Սայադխանյանը 1998 թվականի մայիսի 12-ին ՀՀ պետական ռեզիստի մարմինների կողմից գրանցվել է որպես անհատ ձեռներեց, որի մասին նրան տրվել է թիվ 046301 վկայականը:

Նույն՝ 1998 թվականին նա հաշվառվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Խորհրդային տեսչությունում որպես հարկ վճարող՝ իր գործունեության իրավաբանական հասցե նշելով իր կնոջ եղբայր Արմեն Մովսիսյանի փաստացի բնակության վայր հանդիսացող Նոր Նորքի 2-րդ զանգվածի Մոլդովական փողոցի 50-րդ շենքի թիվ 38 բնակարանը: Հաշվառվելով համապատասխան մարմիններում որպես անհատ ձեռներեց և հարկատու՝ Տիգրան Սայադխանյանն իրականացրել է առևտրային գործունեություն, սակայն իր եկամուտների մասին հարկային մարմիններին հայտարարագիր չի ներկայացրել, ինչը հանգեցրել է խոշոր չափերի հարկերի չվճարման: Այսպես՝ 2003 թվականի հունիսի 16-ից մինչև սեպտեմբերի 24-ը ներառյալ նա հանրապետության տարածք է ներմուծել տարբեր տեսակի ապրանքանյութական արժեքներ, հիմնականում՝ կենցաղային տեխնիկա 256738.9 հազար ՀՀ դրամ մաքսային արժողությամբ, իրացրել է դրանք, սակայն այդ իրացման արդյունքում իր եկամուտների մասին հայտարարագիր չի ներկայացրել:

Տիգրան Սայադխանյանի հիշյալ գործունեության մասին հարկային մարմիններին հայտնի է դարձել, երբ մաքսային ծառայությունը նրա ներդրումների մասին սահմանված կարգով տրամադրել է համապատասխան տեղեկատվություն: Արդյունքում կատարվել է համապատասխան ստուգում, որի ընթացքում, հաշվի առնելով ապրանքների իրացման հաշվապահական փաստաթղթերի բացակայությունը, հիմք է ընդունվել գրանցված մաքսային արժեքը, որից ելնելով էլ հաշվարկվել է, որ Տ.Սայադխանյանի չվճարած հարկային պարտավորությունները կազմել են խոշոր չափերի, այն է՝ 19653.5 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ 9886.7 հազար ՀՀ դրամ ԱԱՀ, 8040.4 հազար ՀՀ դրամ եկամտահարկ, 2158.1 հազար ՀՀ դրամ սոցիալական վճարումներ և հանգեցրել այդ գումարի չափով հարկերի չվճարման:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում դատապարտյալ Տիգրան Սալադյանյանը ցուցմունք է տվել, որ տնտեսական գործունեությամբ երբևէ չի զբաղվել, ապրանքներ չի ներմուծել և չի վաճառել: Նա հայտնել է, որ 2003 թվականին ծանոթացել է Արթուր անունով անձի հետ, որն իրեն առաջարկել է արտասահմանյան երկրներից ներմուծված ապրանքները մաքսագերծել իր անվամբ, որին ինքը համաձայնվել է՝ նրան հանձնելով իր անձնագիրը, իր անվամբ բացված անհատ ձեռնարկատիրոջ վկայականը և ձեռնարկության կնիքը: Որոշ ժամանակ անց Արթուրը վերադարձրել է անձնագիրը, վկայականը, կնիքը, իրեն է տվել 2 միլիոն ՀՀ դրամ և հավաստիացրել, որ հարկային պարտավորությունների հետ կապված խնդիրները լուծված են: Երևան քաղաքի բնակիչ Արթուր Բաբայանը ցուցմունք է տվել, որ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով Արաբական Միացյալ Էմիրություններից ապրանքների ներմուծումը կատարել է նաև Տիգրան Սալադյանյանի անվամբ:

Տիգրան Սալադյանյանի նկատմամբ դատավճիռ կայացնելիս Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանին անհայտ են մնացել էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, որոնք ապացուցում են ինչպես դատապարտյալ Տ.Սալադյանյանի կատարած հանցանքի նվազ ծանր լինելը, այնպես էլ այլ անձանց կողմից այդ հանցավոր արարքները կատարելու փաստը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, վճռաբեկ բողոք բերելու հիմք է:

Ելնելով վերոգրյալներից՝ բողոքի հեղինակը խնդրել է Տիգրան Համոյի Սալադյանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի դատավճիռը բեկանել և քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Երևան քաղաքի դատախազությունում Միսակ Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործով նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում որպես վկա հարցաքննված Տիգրան Համոյի Սալադյանյանը ցուցմունք է տվել, որ երբևէ տնտեսական գործունեություն չի իրականացրել, իսկ իր անվամբ ապրանքների ներմուծումն իրականացրել է իրեն անձանոթ անձ: Վերջինս իր անունով ներմուծումներ կատարելու համար վճարել է 2 միլիոն ՀՀ դրամ: Վկա Արթուր Հայկազի Բաբայանը ցուցմունք է տվել, որ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով Արաբական Միացյալ Էմիրություններից ապրանքների ներմուծումը կատարել է նաև Տիգրան Սալադյանյանի անվամբ: Հետագայում իրացրել է ներմուծված ապրանքները, սակայն հարկային մարմիններին հաշվետվություններ չի ներկայացրել և հարկերը չի վճարել: Նա հայտնել է, որ Տիգրան Սալադյանյանից բացի, ներմուծումներ է կատարել նաև այլ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների անուններով: Որպես իր արարքի հետևանք՝ պետությանը պատճառված նյութական վնասի հատուցում, Արթուր Բաբայանը ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվին է վճարել 7 միլիոն ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալներից՝ Երևան քաղաքի դատախազը 2006 թվականի դեկտեմբերի 1-ին որոշում է կայացրել Տիգրան Սալադյանյանի վերաբերյալ քրեական գործով նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցել: Այդ հան-

գամանքների առթիվ կատարված քննության ընթացքում Տիգրան Սայադխանյանը ցուցմունք է տվել, որ 2003 թվականին ծանոթացել է Աբդուլ անունով մի անձի հետ, որն առաջարկել է իրեն արտասահմանյան երկրներից ներմուծված ապրանքները մաքսագերծել իր անվամբ: Նա խոստացել է ներմուծումները կատարելուց հետո վճարել 2 միլիոն ՀՀ դրամ: Ինքը համաձայնվել է և Աբդուլին է հանձնել իր անձնագիրը, իր անվամբ բացված անհատ ձեռնարկատիրոջ վկայականը և ձեռնարկության կնիքը: Որոշ ժամանակ անց Աբդուլը եկել է իր տուն և անձնագրից, վկայականից ու կնիքից բացի՝ տվել է նաև 2 միլիոն դրամ: Նա իրեն հավաստիացրել է, որ հարկային պարտավորությունների հետ կապված խնդիրներն ինքը լուծել է և հեռացել է: Տիգրան Սայադխանյանը հայտնել է նաև, որ երբևէ տնտեսական գործունեությամբ չի զբաղվել, ապրանքներ չի ներմուծել և չի վաճառել: Նա ընդունել է, որ իր արարքի հետևանքով պետությանը պատճառվել է նյութական վնաս, և որպես վնասի հատուցում ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվին վճարել է 350.000 ՀՀ դրամ: Չնայած վերը շարադրված հանգամանքները գոյություն են ունեցել Տիգրան Սայադխանյանի վերաբերյալ գործի նախաքննության և դատական քննության պահին, սակայն նախաքննության մարմնին և գործը քննող դատարանին հայտնի չեն եղել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով քրեական գործերը նորոգվում են, եթե ի հայտ են եկել դատավճիռ կամ որոշում կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը, կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր լինելը:

Քննության նյութերում առկա փաստական տվյալները թույլ են տալիս դատապարտյալ Տիգրան Սայադխանյանի մեղավորության, նրա կատարած հանցագործության հասարակական վտանգավորության մասին անել այլ հետևություն, քան այն, որին հանգել է դատարանը նրա վերաբերյալ դատավճիռ կայացնելիս, ինչպես նաև պարզել այդ հանցագործության կատարմանն այլ անձանց մասնակցությունը կամ այդ հանցագործությունն այլ անձանց կողմից կատարելը: Դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նոր երևան եկած հանգամանքներ են, որոնք գործի նորոգման հիմք են: Նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները վճռաբեկ բողոք բերելու հիմք են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով հանցագործության կատարման բոլոր հանգամանքները ենթակա են բազմակողմանի ստուգման, ինչը հնարավոր չէ դատական քննությամբ: Գործի արդարացի քննության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրան արդարացնող, ինչպես նաև նրա պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա Տիգրան Սայադխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի դատավճիռը պետք է ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Տիգրան Համոյի Սայադխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-67/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան
Գործ ԲԳՀ 128/06

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**

2007 թվականի մայիսի 4-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հրայր Միրզոյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հրայր Միրզոյանի դիմումի հիման վրա ՀՀ զլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից նախապատրաստված նյութերով 2006 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ մերժվել է Երևան քաղաքի նոտար Աշոտ Ղազարյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Հ.Միրզոյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ ՀՀ զլխավոր դատախազության 2006 թվականի հուլիսի 27-ի որոշման դեմ բերված բողոքը մերժել է:

Առաջին ատյանի դատարանի որոշումը Հ.Միրզոյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը բողոքարկել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերջինս 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում

2006 թվականի մայիսի 25-ի փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը իրավասու չէ քննության առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ նյութերը, որը ամրագրված է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 20-րդ որոշման 5-րդ կետում»:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման դեմ Ս.Սաֆարյանը բերել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի մարտի 22-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Հ.Միրզոյանը 1991 թվականին ըստ կտակի ընդունել է ժառանգություն և ստացել ժառանգության վկայական, սակայն նույն տան նկատմամբ 2001 թվականին բացվել է ըստ օրենքի ժառանգություն Հ.Միրզոյանի խորթ մոր անվամբ: Վերջինս 2003 թվականին օտարել է Հ.Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող ժառանգական գույքը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ 2006 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը չի բխումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի պահանջներից:

Մասնավորապես, վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ քրեական գործով ՀՀ վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի խախտում, քանի որ բողոքն առանց քննության թողնելու փաստով Հ.Միրզոյանը գրկվել է օրենքով երաշխավորված իր իրավունքներից և այդ ճանապարհով խոչընդոտվել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը և վեճի ճիշտ լուծումը:

Բացի այդ, վճռաբեկ բողոք բերած անձի կարծիքով՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ և 384-րդ հոդվածների կարգով: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի՝ քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումներն ու գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարանին:

Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ և 387-րդ հոդվածների պահանջները: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ կետի՝ քրեական գործերի քննությունը վերաքննիչ դատարանում իրականացվում է երեք դատավորի կազմով, իսկ 387-րդ հոդվածով սահմանված է, որ գործը վերաքննիչ դատարանում քննվում է երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է:

Ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ արդար դատաքննության իրավունքը և 13-րդ հոդվածը՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Խախտվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում, իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքը:

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումը չի կարող ունենալ բարձրագույն իրավաբանական ուժ, քանի որ համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ ՀՀ-ում բարձրագույն իրավաբանական ուժ ունի Սահմանադրությունը, օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությունը և օրենքներին:

Բողոք բերած անձը խնդրել է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 2007 թվականի փետրվարի 27-ին Վճռաբեկ դատարանը նույնատիպ գործով բավարարել է Հ.Գանիեյանի բողոքը, բեկանել է ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը բողոքն առանց քննության թողնելու մասին և գործն ուղարկել նույն դատարան այլ կազմով քննելու համար:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը և գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով քննելու համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

4.1 Քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը վերացնելու պահանջը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքը.

Հ.Սիրգոյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը պատճառաբանվել է այն հանգամանքով, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2006 թվականի մայիսի 25-ին փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը իրավասու չէ քննության առնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ նյութերը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2006 թվականի մայիսի 25-ին փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումը հետևյալն է. «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»: Այս իրավանորմը քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը վերացնելու պահանջը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու արգելք չի պարունակում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված «սույն օրենսգրքով սահմանված» կարգը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ քննիչի և

հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան:

Բացի այդ, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի՝ սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանվում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը սկսելը կամ շարունակելը կամ գործը լուծի ըստ էության:

Ներկայացված նյութերից երևում է, որ Հ.Միրզոյանը վերաքննիչ դատարան է բողոքարկել քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին, դրանք են՝ այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը վերացնելու պահանջը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ դատարանում քննության (տե՛ս Հ.Դանիելյանի վերաբերյալ գործով որոշում, կայացվել է 27.02.2007թ., կետ 4.2):

Հետևաբար, Հ.Միրզոյանն իրավունք ուներ քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը իրավասու չէր Հ.Միրզոյանի վերաքննիչ բողոքը քննության չընդունելու:

4.2 Վերաքննիչ դատարանում գործի քննությունը մեկ դատավորի կազմով.

Գործի նյութերից երևում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, գործը քննելով մեկ դատավորի կազմով, թույլ է տվել դատավարական իրավունքի մի շարք խախտումներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 387-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորի կազմով: Այս ընդհանուր իրավանորմից գատ գոյություն չունի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեությունը կանոնակարգող որևէ հատուկ իրավադրույթ, որը սահմաներ քրեական գործ քննող վերաքննիչ դատարանի այլ կազմ, քան երեք դատավորից բաղկացած դատական կազմն է:

Հետևաբար, վերաքննիչ դատարանն իրավասու չէր Հ.Միրզոյանի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնել մեկ դատավորի կազմով:

Այսպիսով, խախտվել է օրինականության սկզբունքը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները:

Գործը մեկ դատավորի կազմով քննելով և լուծելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է քրեական դատավարության ևս մեկ սկզբունք՝ արդարադատության իրա-

կանացու միայն դատարանի կողմից: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Օրենքով վերաքննիչ դատարանի մեկ դատավորին վերապահված չէ քրեական գործ քննելու լիազորություն: Ուստի Հ.Միրզոյանը գրկվել է իր գործը այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով, այսինքն՝ իր գործը վերաքննիչ դատարանի երեք դատավորի կազմով քննվելու իրավունքից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի համատեքստում վերաքննիչ դատարանի մեկ դատավորը տվյալ գործով չի կարող դիտվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Ուստի վերաքննիչ դատարանում Հ.Միրզոյանը գործի քննությունը մեկ դատավորի կազմով խախտում է դիմողի արդար դատաքննության իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Բրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Նախկինում ընդունված որոշման մեջ նույնպես ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանում գործը չի կարող քննվել մեկ դատավորի կազմով (տե՛ս Ա.Քրմոյանի վերաբերյալ գործով որոշում, կայացվել է 27.02.2007թ., կետ 4.2):

4.3 Բողոքն առանց քննության թողնելը.

Համաձայն Հ.Միրզոյանի գործով վերաքննիչ դատարանի կողմից որոշման կայացման օրը գործող օրենքի՝ վերաքննիչ բողոքը կարող էր առանց քննության թողնվել միայն հետևյալ երկու դեպքերում.

ա) բողոքը ստորագրված չէ անձի կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մաս)

բ) բողոքը ժամկետանց է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ուստի, բացի նշված երկու դեպքից, վերաքննիչ դատարանը լիազորված չէր Հ.Միրզոյանի բողոքը թողնել առանց քննության:

Հ.Միրզոյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց չէր, այն ստորագրված էր և պարունակում էր նշում բողոքարկվող որոշման մասին: Հետևաբար վերաքննիչ դատարանի կայացրած՝ Հ.Միրզոյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը չէր բխում օրենքի պահանջներից:

Նախկինում ընդունված որոշման մեջ նույնպես ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վերաքննիչ դատարանը կարող է վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության միայն այն դեպքում, երբ այն ստորագրված չէ, կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին, կամ ժամկետանց է (տե՛ս Ա.Քրմոյանի վերաբերյալ գործով որոշում, կայացվել է 27.02.2007թ., կետ 4.3):

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հրայր Միրզոյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բողոքը բավարարել. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը բեկանել, և նյութերն ուղարկել նույն դատարան քննության առնելու համար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-72/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Գործ 397/06թ. կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
դատավորներ՝ Ա.Դանիելյան, Ժ.Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Ա.ԱՎԱԳՅԱՆԻ**

2007թվականի մայիսի 4-ին.

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի դատավճռով Նաիրա Վախթանգի Գելաշվիլին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 ամիս 15 օր ժամկետով, գույքի բռնագրավմամբ:

Պատիժը նշանակվել է կրելու ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում՝ պատժի սկիզբը հաշվելով 2006 թվականի փետրվարի 8-ից:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Նողար Կապիաշվիլին:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, պաշտպան Գ.Մարգարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերստին քննելով գործը, 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճռով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանը կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի 2006 թվականի հուլիսի 7-ի որոշման 9-րդ կետը և ամբաստանյալ Ն.Գելաշվիլուն ազատել առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված լրացուցիչ պատժից՝ գույքի բռնագրավումից:

Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 23-ի որոշմամբ դատապարտյալ Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վճռաբեկ բողոքը ընդունվել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նաիրա Գելաշվիլին դատապարտվել է հետևյալ արարքի համար.

Նա Թբիլիսի քաղաքի այլ բնակիչների հետ 2006 թվականի փետրվարի 5-ին Երևան քաղաքում գնել է տարբեր տեսակի ոսկյա զարդեր: Հաջորդ օրը՝ փետրվարի 6-ին՝ առավոտյան, Թբիլիսի վերադառնալիս, երբ նրանք հասել են Բագրատաշենի մաքսային կետ, մաքսային ստուգման ժամանակ Նաիրա Գելաշվիլին չի հայտնել մաքսային տեսուչի բանավոր հարցմանը ու մաքսային հայտարարագրում չի նշել իր մոտ եղած ոսկյա զարդերի մասին ու մաքսային հսկողությունից թաքցնելով, փորձել է Հայաստանից ապօրինի կերպով Վրաստան արտահանել 694.6 գրամ ընդհանուր քաշով 4.178.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության տարատեսակ ոսկյա զարդեր: Սակայն ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի «Բագրատաշեն» սահմանային վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից թաքցված ոսկյա զարդերը Ն.Գելաշվիլու մոտից հայտնաբերվել ու առգրավվել են:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը խնդրել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռները բեկանել և գործն ուղարկել նոր նախաքննության՝ նկատի ունենալով, որ թույլ են տրվել դատավարական իրավունքի էական խախտումներ, ինչպես նաև այն, որ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվելիք ակտը կարող է էական նշանակություն ունենալ դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի պաշտպանության իրավունքը կանոնակարգող օրենքների միատեսակ կիրառման համար:

Դատապարտյալն իր բողոքում նշել է, որ լինելով Վրաստանի Հանրապետության քաղաքացի, ազգությամբ՝ վրացի, ընդհանրապես չի տիրապետում հայերեն լեզվին: Նախաքննության ողջ ընթացքում իրեն հասկանալի լեզվով չի տրամադրվել ոչ մի դատավարական փաստաթուղթ, այդ թվում նաև կասկածյալի և մեղադրյալի իրավունքների ցանկը: Բողոք քննչական գործողությունները կատարվել են առանց գրավոր թարգմանությունների: Քրեական գործը նախաքննության ծավալով բաղկացած է բացառապես հայերեն լեզվով կազմված նյութերից: Միայն վրացերեն լեզվով մեղադրական եզրակացությունը ստանալուց հետո է իմացել, որ հայերեն լեզվով գրված

ցուցմունքները աղավաղվել են մեղադրանքի օգտին: Դատարանները այդ թարգմանությունները ճանաչել են ճիշտ՝ գնահատելով որպես արժանահավատ, և դրել են մեղադրական դատավճիռների հիմքում: Հայերենից վրացերեն թարգմանելու համար հրավիրված թարգմանիչ Նոռա Վարդանյանը չի կատարել իր՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները՝ չտիրապետելով իրավաբանական տերմինաբանությանը, նա չի կատարել ոչ մի գրավոր թարգմանություն: Գործում բացակայում է թարգմանչի կրթության և որակավորման մասին փաստաթուղթը: Նույն պատճառով մեղադրական եզրակացության թարգմանությունը կատարվել է մեկ այլ անձի կողմից: Բացի այդ, Նոռա Վարդանյանը հանդիսանում է ՀՀ ԱԱԾ տեխնիկական աշխատող:

Այսպիսով, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իր հետևյալ իրավունքները.

- փաստաթղթերի հաստատված պատճենների ստացումը իրեն հասկանալի լեզվով (15-րդ հոդված),

- քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից իրեն փաստացի հնարավորություն տրամադրելը՝ ինքնուրույն, բոլոր չարգելված միջոցներով իրականացնելու իր պաշտպանությունը, անկախ գործին մասնակցող պաշտպանից (19-րդ հոդված),

- որպես մեղադրյալ ներգրավվելու մասին որոշման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալի իրավունքների ցանկի հանձնումն իրեն հասկանալի լեզվով (203-րդ հոդված),

- ինքնուրույն, պաշտպանից առանձին գործի նյութերին ծանոթանալը (266-րդ հոդված):

Խախտվել են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա», «բ» և «գ» կետերով նախատեսված՝ առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին մեղադրյալին անհապաղ և մանրամասն, իրեն հասկանալի լեզվով ծանուցելու, իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավական ժամանակ և հնարավորություն տրամադրելու, թարգմանչի ծառայությունից օգտվելու իրավունքները:

Վերաքննիչ դատարանի նախաձեռնությամբ թարգման Ն.Վարդանյանը հարցաքննվել է որպես վկա, ինչով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասը, բանի որ տեղ գտած խախտումները չէին կարող լրացվել դատավարության մասնակիցների ցուցմունքներով:

Վերաքննիչ դատարանի դատավճռով մեղադրյալի դատավարական իրավունքների վերը նշված խախտումները հաստատվել են, սակայն դատարանը գտել է, որ դրանք չեն համարվում օրենքի էական խախտումներ:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

4.1 Հայերեն լեզվին չտիրապետող անձանց իրավունքների իրականացման երաշխիքները.

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը, որը հանդիսանում է քրեական դատավարության սկզբունքներից մեկը, ամրագրում է, որ քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Դրա հետ մեկտեղ, այն իրավունք է վերապա-

հում յուրաքանչյուրին, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, քրեական դատավարության ընթացքում հանդես գալ այն լեզվով, որին նա տիրապետում է: Նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց անհատույց հնարավորություն է տրվում բարձրագույն օգնությամբ իրականացնել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրենց բոլոր իրավունքները: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում են նույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են:

Այս դրույթները նպատակ են հետապնդում հայերեն լեզվին չտիրապետող անձանց համար երաշխավորելու այն նվազագույն ընթացակարգային (պրոցեդուրային) իրավունքները, որոնք ամրագրված են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

Դատավարության այս սկզբունքը քրեական վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց ոչ միայն պարզաբանել իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու նրանց իրավունքը, այլև դրա իրականացումն ապահովել այնպես, որ չսահմանափակվեն և իրականում իրագործվեն ինչպես գործի քննության ցանկացած փուլում իրենց լեզվով հանդես գալու, այնպես էլ մյուս բոլոր այն իրավունքները, որոնք փոխկապակցված են այդ իրավունքի հետ և երաշխավորված են օրենքով:

Քրեադատավարական օրենքի սկզբունքների փոխկապակցվածությունն արտահայտվում է նաև նրանով, որ առանց հասկանալի լեզվով հանդես գալու ազատության իրացման հնարավորության անհնար է արդարադատության այնպիսի հիմնարար սկզբունքների իրականացումը, ինչպիսիք են պաշտպանության իրավունքի ապահովումը, գործի արդարացի քննությունը, օրինականությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, մրցակցությունը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: Վերջին-

ներս իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի միջոցով: Պաշտպանի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները:

Կասկածյալի և մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ և 65-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը վերջիններիս հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պաշտպանության իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ կասկածյալն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի նաև ձեռքարկվելուց հետո քննիչից անմիջապես ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում, իսկ ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո՝ անմիջապես անվճար ստանալ դրա պատճենը:

Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ մեղադրյալը օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի իմանալ՝ ինչու է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ մեղադրյալն իրավունք ունի արգելանքի վերցվելուց հետո քննիչից անմիջապես անվճար ստանալ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մեղադրանք առաջադրելիս քննիչը պարտավոր է մեղադրյալին բացատրել նույն օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը նրա իրավունքների և պարտականությունների ցանկի հետ հանձնելով մեղադրյալին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասը մեղադրյալին և պաշտպանին իրավունք է վերապահում գործի նյութերին ծանոթանալ ինչպես միասին, այնպես էլ առանձին:

Ինչպես երևում է քրեական գործի նյութերից, Նաիրա Գելաշվիլին հանդիսանում է Վրաստանի Հանրապետության քաղաքացի, ազգությամբ վրացի է և չի տիրապետում հայերեն լեզվին: 2006 թվականի փետրվարի 6-ին ՀՀ մաքսային սահմանով մաքսանենգ ճանապարհով ոսկյա իրեր արտահանելու փաստի առթիվ փետրվարի 8-ին հարուցված քրեական գործով Ն.Գելաշվիլին նույն օրը ձերբակալվել է, հարցաքննվել է որպես կասկածյալ, սակայն իրաժարվել է ցուցմունք տալուց: Հաջորդ օրը՝ փետրվարի 9-ին, կատարվել է կասկածյալ Ն.Գելաշվիլու լրացուցիչ հարցաքննություն, իսկ փետրվարի 10-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով, և նա հարցաքննվել է որպես մեղադրյալ: 2006 թվականի մարտի 22-ի որոշման հիման վրա Ն.Գելաշվիլուն առաջադրված մեղադրանքի ծավալը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով: 2006 թվականի ապրիլի 3-ին Ն.Գելաշվիլին պաշտպանի հետ ծանոթացել է գործի նյութերին, և ապրիլի 7-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան:

Քննիչի կողմից կազմված արձանագրություններից երևում է, որ 2006 թվականի փետրվարի 8-ին Նաիրա Գելաշվիլու հետ կատարած քննչական գործողություններից որպես թարգմանիչ մասնակցել է Ալեքսեյ Էրոյանցը, իսկ փետրվարի 9-ից մինչև նա-

խաբանության ավարտը՝ Նոռա Վարդանյանը, որոնք իրականացրել են բանավոր թարգմանություն:

Ն.Գելաշվիլուն ձեռքակալելիս, որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննելիս, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից Ն.Գելաշվիլուն չի բացատրվել օրենքով հանձնման ենթակա դատավարական փաստաթղթերը՝ կասկածյալի և մեղադրյալի իրավունքների մասին գրավոր ծանուցումը և պարզաբանումը, ձեռքակալման արձանագրության պատճենը, որպես մեղադրյալ ներգրավելու որոշման պատճենը, իրեն հասկանալի լեզվով ստանալու իրավունքը:

Գործի նյութերից երևում է նաև, որ որպես թարգմանիչներ ներգրավված Ա.Էրոյանցի և Ն.Վարդանյանի կողմից գրավոր թարգմանություն չի իրականացվել, և կասկածյալի ու մեղադրյալի կարգավիճակում գտնվող Նաիրա Գելաշվիլուն հանձնված բոլոր փաստաթղթերը կազմված են եղել հայերեն լեզվով:

Դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի իրավունքների ապահովման կարևորագույն երաշխիքներից է նաև թարգմանչի միջոցով գործի նյութերին ծանոթանալու իրավունքի ապահովումը:

Մինչդեռ մեղադրյալին ծանոթանալու համար քրեական գործի նյութերը ներկայացնելու մասին կազմված արձանագրությունից երևում է, որ մեղադրյալ Նաիրա Գելաշվիլուն և նրա պաշտպան Նարինե Սկրտչյանին 2006 թվականի ապրիլի 3-ին ծանոթանալու համար ներկայացվել են քրեական գործի բոլոր նյութերը: Ըստ այդ արձանագրության՝ մեղադրյալ Ն.Գելաշվիլին և նրա պաշտպան Ն.Սկրտչյանը նույն օրը միասին ժամը 10-ից մինչև 18-ը ծանոթացել են գործի բոլոր նյութերին (գ.թ.134): Այսինքն՝ թարգմանիչը գործի նյութերի ծանոթացման գործընթացին չի մասնակցել, այլ միայն թարգմանել է քննիչի կողմից արձանագրված այն փաստը, որ մեղադրյալն ու պաշտպանը միասին ծանոթացել են գործի նյութերին: Թարգմանիչ Ն.Վարդանյանը վերաքննիչ դատարանում հարցաքննվելիս ևս հաստատել է, որ չի մասնակցել քրեական գործի նյութերի ծանոթացմանը (վերաքննիչ դատարանի դատական միստի արձանագրություն):

Փաստորեն, նախաքննություն իրականացնող մարմինը չի ապահովել դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալի իրավունքների իրականացման լրացուցիչ երաշխիքները և չի պահպանել այդ սկզբունքի իրականացման համար էական նշանակություն ունեցող իմպերատիվ պահանջը, այն է՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճենները չեն հանձնվել Նաիրա Գելաշվիլուն այն լեզվով, որին նա տիրապետում է: Բացի այդ, գործի նյութերի ծանոթացմանը թարգմանիչ չի մասնակցել:

Իսկ մեղադրանքի առաջադրումը, որի պարտադիր տարր է նաև որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հանձնումը մեղադրյալին, և գործի նյութերի ծանոթացումը հանդիսանում են քրեական դատավարությունում առանցքային նշանակություն ունեցող այն դատավարական գործողությունները, որոնք հնարավորություն են տալիս պաշտպանական կողմին կառուցել իրենց մարտավարությունը և արդյունավետ կերպով իրականացնել իրենց պաշտպանությունը:

Եթե այդ ընթացակարգերը կատարվում են օրենքով երաշխավորված մեղադրյալի իրավունքների անտեսմամբ, ապա մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային (Արթուր Խաչատուրի Սերոբյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի որոշում, կետ 4.2) :

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համա-

ձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն հասկանալի լեզվով անհապաղ և հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին:

Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի գործով վճռում Եվրոպական դատարանը մեղադրյալի՝ իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու իրավունքի իրացման ձևի կապակցությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Մեղադրական ակտն առանցքային դերակատարություն ունի քրեական դատավարությունում, քանի որ այն մեղադրյալին ներկայացնելու պահից սկսած տվյալ անձը պաշտոնապես ծանուցվում է իրեն առաջադրված մեղադրանքների փաստական և իրավական հիմքերի մասին: Մեղադրյալը, որը չի տիրապետում դատավարության լեզվին, կարող է հայտնվել ոչ բարենպաստ վիճակում, եթե նրան չի տրամադրվում մեղադրական ակտի գրավոր թարգմանությունը» (Kamasinski v.Austria, 19.12.1989, 9783/82, կետ 79):

Այն, որ առաջադրված մեղադրանքի մասին ծանուցումը պետք է արվի մեղադրյալի համար հասկանալի լեզվով, Եվրոպական դատարանն արձանագրել է նաև Բրոզիչեկն ընդդեմ Իտալիայի գործով վճռում: Այս գործում դիմողը՝ ազգությամբ գերմանացի, ստանալով իրեն առաջադրված մեղադրանքի մասին ծանուցումը իտալերեն լեզվով, խնդրել էր, որպեսզի բոլոր փաստաթղթերը թարգմանվեն ՄԱԿ-ի որևէ լեզվով: Մակայն նրա խնդրանքը թողնվել է առանց ուշադրության: Դատարանը նշել է, որ Իտալիայի իշխանություններն այն դեպքում, երբ համոզված չէին, որ դիմողը բավարար չափով է տիրապետում իտալերեն լեզվին, պետք է ապահովվեին դիմողին առաջադրված մեղադրանքի մասին ծանուցման թարգմանությունը նրա մայրենի լեզվով, ինչը չէին արել (Brozisek v.Italy, 19.12.1989, 11152/84, կետ 41):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս գործով դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալ Ն.Գելաշվիլու իրավունքների խախտումները, որոնք արտահայտվել են օրենքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նա տիրապետում է, չտալով, գործի նյութերի ծանոթացմանը թարգմանչին մասնակից չդարձնելով, ինչպես նաև լրացուցիչ երաշխիքների ապահովմանն ուղղված իրավունքները չպարզաբանելով և չապահովվելով, գրկել են վերջինին արդյունավետ պաշտպանություն իրականացնելու հնարավորությունից՝ սահմանափակելով մեղադրանքից պաշտպանվելու փաստացի հնարավորությունը և հանգեցրել են Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրության և քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածների պահանջների խախտումների:

4.2 Թարգմանչին առաջադրվող պահանջները.

Դատավարության լեզվի սկզբունքի իրականացման համար խիստ կարևոր է ոչ միայն թարգմանչի մասնակցությունը գործի քննությանը, այլև այն պահանջների պահպանումը, որոնք օրենսդիրն առաջադրել է քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ անձին որպես թարգմանիչ ներգրավելու հարցում:

Այդ պահանջները նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով: Մասնավորապես, թարգմանիչը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որը պետք է ազատորեն տիրապետի քրեական դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը: Թարգմանիչը պարտավոր է քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանչի՝ իր ուրակավորումը հաստատող փաստաթղթերը, թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին:

Թարգմանիչը դասվում է դատավարության մասնակիցների այն խմբին, որոնց համար պարտադիր չափորոշիչներ են ձեռնհասությունը և գործի ելքով շահագրգռված չլինելը: Գործով որպես թարգման ներգրավված անձը պետք է համապատասխանի այս չափորոշիչներին, ուստի դրանց պարզումը քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է:

Անձին որպես թարգմանիչ ներգրավելու համար անհրաժեշտ է պարզել, որ նա տիրապետում է ինչպես համապատասխան լեզուներին, այնպես էլ թարգմանության առանձնահատկություններին, տերմինաբանությանը, ինչը հնարավոր կդարձնի իրականացնել ճիշտ և լրիվ թարգմանություն: Որպես կանոն, թարգմանիչ պետք է ներգրավվի համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձը, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում: Համապատասխան լեզուներին ազատորեն տիրապետելու և թարգմանչական գործունեություն իրականացնելու փորձ ունենալու փաստը պետք է հաստատվի որոշակի ապացույցով: Այդ նպատակով է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը թարգմանչին պարտավորեցնում ներկայացնել այնպիսի փաստաթղթեր, որոնք կհաստատեն նրա որակավորումը՝ որպես թարգմանիչ: Որպես այդպիսին, օրինակ, կարող են լինել համապատասխան բարձրագույն կամ այլ ուսումնական հաստատություն ավարտելու մասին դիպլոմը, դասընթացներ անցնելու, որպես թարգմանիչ աշխատելու մասին վկայականը, տեղեկանքը կամ այլ փաստաթղթերը, որոնք կհաստատեն տվյալ անձի կողմից անհրաժեշտ լեզվին ազատորեն տիրապետելու փաստը: Այդ փաստաթղթի միջոցով միայն քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է համոզվել անձի ձեռնհասության մեջ:

Բացի ձեռնհասությունից, էական նշանակություն ունի նաև թարգմանչի՝ գործով շահագրգռված չլինելու հանգամանքը: Դրանով է պայմանավորված դատավարությանը մասնակցող անձանց գործառույթների՝ օրենսդրորեն ամրագրված անհամատեղելիությունը թարգմանչի գործառույթի հետ, նույնիսկ անկախ այն հանգամանքից, որ տվյալ անձինք ազատորեն տիրապետում են անհրաժեշտ լեզվին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը, պաշտպանը, ներկայացուցիչը, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցները, ընթերցական, դատական միստի քարտուղարը, փորձագետը, վկան իրավունք չունեն թարգմանիչ լինելու: Հոդվածի այդ պահանջն իմպերատիվ է և չի նախատեսում որևէ բացառություն:

Նշված երկու չափորոշիչներից թեկուզ մեկի բացակայության դեպքում թարգմանիչը չի կարող մասնակցել գործի քննությանը և ենթակա է բացարկման:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ թարգմանիչը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝ առկա է նույն օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը (դատավորին բացարկելը), օրենքով կամ դատարանի դատավճռով իրավունք չունի լինելու թարգմանիչ, դատավորի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ, գտնվում է կողմից ծառայողական կախվածության մեջ, կամ երբ հայտնաբերվում է նրա անձեռնհասությունը:

Գործի նյութերից երևում է, որ Նաիրա Գելաշվիլու ձեռքակալման և որպես կասկածյալ հարցաքննելու ժամանակ որպես հայերենից վրացերեն լեզվի թարգմանիչ մասնակցել է Ալեքսեյ Էրոյանցը (գ.թ. 32, 34): Քննիչի 2006 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ որպես հայերեն-վրացերեն լեզուների թարգմանիչ է ներգրավվել Նոռա

Նիկոլայի Վարդանյանը, որն այդ օրվանից սկսած մինչև նախաքննության ավարտը որպես թարգմանիչ մասնակցել է գործով վարույթին: Ըստ նշված որոշման՝ Նաիրա Գելաշվիլին չի տիրապետում հայերեն լեզվին, ցանկություն է հայտնել իր հետ կապված գործողությունները կատարել վրացերեն լեզվով, ինչից ելնելով Նոռա Վարդանյանը, բնակվող՝ քաղաք Երևան, Երկաթուղայինների 4-րդ փողոց, 4-րդ տուն, ներգրավվել է որպես թարգմանիչ (գ.թ. 38): Այնուհետև կազմվել է արձանագրություն այն մասին, որ հայերեն-վրացերեն լեզուներով թարգմանություն կատարելու համար որպես թարգմանիչ հրավիրված Նոռա Նիկոլայի Վարդանյանը ներկայացվել է Նաիրա Գելաշվիլուն, որը հայտարարել է, որ Նոռա Վարդանյանի վրացերեն խոսակցական իրեն հասկանալի է և ցանկանում է, որպեսզի իր հետ քննչական գործողություններ կատարելիս, վերջինս կատարի թարգմանություններ (գ.թ. 40): Ինչպես Ալեքսեյ Էրոյանցի, այնպես էլ Նոռա Վարդանյանի վերաբերյալ այլ տվյալներ նախաքննության մարմինը չի արձանագրել, վերջիններիս՝ հայերեն և վրացերեն լեզուներին տիրապետելու հանգամանքը հաստատող որևէ փաստաթուղթ, որը հնարավորություն կտար պարզել նրանց ձեռնհասությունը, գործին չի կցել:

Առաջին առյանի դատարանում Նաիրա Գելաշվիլին հայտնել է, որ նախաքննությունն ավարտվելուց հետո ստացել է մեղադրական եզրակացության պատճենը և հուշաթերթիկը, կազմված վրացերեն լեզվով: Մինչդեռ մեղադրական եզրակացության և հուշաթերթիկի՝ վրացերեն լեզվով կազմված օրինակները գործի նյութերում բացակայում են, պարզ չէ, թե ում կողմից են դրանք թարգմանվել:

Վերաքննիչ դատարանում հարցաքննված Նոռա Վարդանյանը հայտնել է, որ Թրիլիսի քաղաքում ավարտել է միջնակարգ դպրոցը, և դրանով է պայմանավորված վրացերեն լեզվի իր իմացությունը, չնայած որ այդ հանգամանքը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել: Ավելին, պատասխանելով պաշտպանի հարցին, թե որքանով է նա տիրապետում իրավաբանական տերմինաբանությանը, մասնավորապես, կարող է արդյոք վրացերեն լեզվով թարգմանել «բացարկ», «արձանագրություն» և այլ իրավաբանական տերմիններ, վերջինս տվել է բացասական պատասխան:

Փաստորեն, նախաքննության մարմինը, Նոռա Վարդանյանից չպահանջելով և գործին չկցելով նրա՝ թարգմանչի որակավորումը հաստատող փաստաթղթեր, չպարզելով վերջինիս ձեռնհասությունը, նրան սույն գործով ներգրավել է որպես թարգմանիչ: Թարգմանչի գործառույթներ իրականացրած Ալեքսեյ Էրոյանցի և մեղադրական եզրակացությունը վրացերեն լեզվով կազմած անձի՝ թարգմանչի որակավորումը հաստատող փաստաթղթերը մույնպես գործում բացակայում են:

Բացի այդ, Նոռա Վարդանյանը վերաքննիչ դատարանում հայտնել է, որ աշխատում է ազգային անվտանգության ծառայությունում՝ կատարելով օպերատորի աշխատանք: Մինչդեռ Նոռա Վարդանյանին որպես թարգմանիչ ներգրավվելիս այս հանգամանքը քննիչի կողմից չի արձանագրվել, և դրա մասին կասկածյալ Նաիրա Գելաշվիլին չի տեղեկացվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ թարգմանիչը բացարկման ենթակա անձ է, և որպեսզի լեզվին չտիրապետող Ն.Գելաշվիլին կարողանար օգտվել թարգմանչի դեմ բացարկ հայտնելու իր իրավունքն իրացնելու իրական հնարավորությունից, նախաքննության մարմինը պարտավոր էր որպես թարգմանիչ ներգրավված Ն.Վարդանյանի և մյուս անձանց վերաբերյալ պարզել

անհրաժեշտ տեղեկությունները և դրանք հայտնել Նաիրա Գելաշվիլուն, ինչպես նաև վերջինիս պարզաբանել թարգմանչի դեմ բացարկ հայտնելու նրա իրավունքը, հիմքերը, ինչը չի արել:

Այսպիսով, սույն գործով նախաքննության մարմնի կողմից խախտվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և 96-րդ հոդվածների պահանջները:

4.3 Դատավարության լեզվի սկզբունքին առնչվող այլ խախտումներ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ն.Գելաշվիլու իրավունքների խախտումները հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքի խախտմանը, անտեսվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի այն պահանջը, որ «Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ ... 2) ... դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ»: Սրա հետևանքով խախտվել է նաև գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պահանջը (գործի արդարացի քննության սկզբունքը), ինչն ազդել է գործով ճիշտ և օրինական որոշում կայացնելու վրա:

Բացի այդ, խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որ այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ: Սույն գործում առկա են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք կազմված են այլ լեզուներով, և դրանց հետ գործին չեն կցվել դրանց հայերեն թարգմանությունները (գ.թ. 8-10, 18-21, 25, 27, 50-52, 86-87, 95-96):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումների՝ դատավարության լեզվի սկզբունքի, մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու, մեղադրյալ Ն.Գելաշվիլու իրավունքների լրացուցիչ երաշխիքները չապահովելու, պաշտպանության իրավունքի և արձանագրված մյուս խախտումների առկայության պայմաններում առաջին ատյանի դատարանը և վերաքննիչ դատարանը դատավճիռ կայացնելիս իրենց հերթին չեն պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար 311-րդ հոդվածի 1-ին կետի և 398-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավճիռը ենթակա է բեկանման՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով, եթե թույլ է տրվել քրեադատավարական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի էական խախտում, որը չի կարող վերացվել դատական քննության ժամանակ:

Հետևաբար, Նաիրա Գելաշվիլու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Նաիրա Վախթանգի Գելաշվիլու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի մայիսի 19-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռները բեկանել և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-111/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Քրեական գործ 102/07թ.
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ՝ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ**
պաշտպան **Հ.ԱԼՈՒՄՅԱՆԻ**

2007 թվականի հունիսի 1-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը Աշոտ Հայկազի Հարությունյանին պատիժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդությունը բավարարելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 14-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանը Ա.Հարությունյանին 2004 թվականի հունվարի 21-ի դատավճռով մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 205-րդ հոդվածի 1-ին մասով և 305-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 7 տարի ժամկետով՝ պատժի կրելու սկիզբը հաշվելով 2003 թվականի մայիսի 6-ը: Ա.Հարությունյանից հոգուտ Վարշամ Դարիբյանի բռնագանձվել է 34 159 008 (երեսուներորս

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

միլիոն հարյուր հիսունհինը հազար ութ) դրամ և 119 000 (հարյուր տասնհինը հազար) ԱՄՆ դոլար, որպես հասցված վնասի փոխհատուցում:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2004 թվականի մայիսի 25-ին քննելով Ա.Հարությունյանի փաստաբան Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքը քաղաքացիական հայցի բավարարման մասով դատավճիռը փոփոխել է և Ա.Հարությունյանից հօգուտ Վ.Ղարիբջանի բռնագանձել է 23 063 108 (քսաներեք միլիոն վաթսուներեք հազար հարյուր ութ) դրամ և 119 000 (հարյուր տասնհինը հազար) ԱՄՆ դոլար՝ որպես հասցված վնասի փոխհատուցում:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2004 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի մայիսի 25-ին դատավճիռը թողնվել է անփոփոխ, իսկ բողոքները՝ առանց բավարարման:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը 2006 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ տվել է Աշոտ Հարությունյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համաձայնություն:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժաչափով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը 2006 թվականի հոկտեմբերի 12-ին ընդունել է որոշում՝ «Աշոտ Հարությունյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմանը չտալ հավանություն»:

Դատապարտյալ Ա.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանը 2006 թվականի դեկտեմբերի 8-ին միջնորդություն է ներկայացրել Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան Ա.Հարությունյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, քննության առնելով Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքը, իր 2007 թվականի մարտի 14-ի որոշմամբ բեկանել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը, բավարարել է Ա.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի միջնորդությունը և դատապարտյալ Ա.Հարությունյանին պայմանական վաղաժամկետ ազատել է պատժի կրումից՝ պատճառաբանելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող օրենքով, իսկ նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 14-ի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի մայիսի 16-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք հեղինակը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանի հետևորդները այն մասին, որ պետք է կիրառել հանցագործության կատարման ժամանակահատվածում գործող օրենքը, չի բխում օրենքի պահանջներից, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված իրավանորմը սահմանում է միայն քրեական օրենսգրքի հետադարձ ուժը, իսկ դատարանը միջնորդություն քննարկելիս պետք է առաջնորդվեր տվյալ պահին գործող քրեադատավարական օրենքի պահանջներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը, որն ամրագրում էր դատապարտյալի և նրա պաշտպանի իրավունքը ներկայացնելու միջնորդագիր՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին, ուժը կորցրել է 2006 թվականի հուլիսի 21-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, իսկ դատապարտյալ Ա.Հարությունյանի պաշտպան Հ.Ալումյանի կողմից Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան միջնորդագիր է ներկայացվել դատապարտյալ Ա.Հարությունյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միայն 2006 թվականի դեկտեմբերի 8-ին, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքն ուժի մեջ մտնելուց 5 ամիս հետո:

Բողոք բերած անձը գտնում է, որ վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պետք է առաջնորդվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, համաձայն որի՝ քրեական գործով վարույթը կարգավորվում է քրեադատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ:

Բացի այդ, վճռաբեկ բողոքի հեղինակի գտնում է, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը, ըստ էության քննելով Հ.Ալումյանի միջնորդությունը, թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց՝ ոչ ժամանակին ներկայացված միջնորդությունը թողնվում է առանց քննության: Սույն գործի նյութերով ապացուցված է, որ Ա.Հարությունյանի պաշտպան Հ.Ալումյանի կողմից միջնորդագիր է ներկայացվել 2006 թվականի դեկտեմբերի 8-ին, երբ արդեն դատարել էր վերջինիս նման միջնորդագիր ներկայացնելու իրավունքը, հետևաբար՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը պետք է առաջնորդվեր դատական քննությունն իրականացնելու ժամանակահատվածում գործող քրեադատավարական օրենքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված կարգով միջնորդությունը թողներ առանց քննության:

Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ հիմնվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի դրույթների վրա՝ այն դեպքում, երբ պետք է առաջնորդվեր ՀՀ գործող քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջներով, համաձայն որոնց՝ ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ ուղղվելու համար պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հատուցելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ դատապարտյալը տուժողին հասցրած վնասը հատուցել է մասնակի՝ նշելով, որ վնասը հատուցվել է 22 000 ԱՄՆ դոլարի չափով, իսկ վնասի

մնացած մասը, որը կազմում է 23 063 108 դրամ և 97 000 ԱՄՆ դոլար, տուժողին չի հատուցել: Հետևաբար՝ եթե վերաքննիչ դատարանը առաջնորդվեր ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի, ՀՀ քրեադատավարական օրենսգրքի 114-115-րդ հոդվածների դրույթներով և եթե նույնիսկ գտներ, որ դատապարտյալի միջնորդությունը ենթակա է քննարկման, ապա պարտավոր էր այն մերժել:

Ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից չի գնահատվել այն հանգամանքը, որ ՀՀ նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի հրամանագրով ստեղծված պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժաչափով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը 2006 թվականի հոկտեմբերի 12-ին ընդունել է որոշում՝ «Աշոտ Հարությունյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմանը չտալ հավանություն», իսկ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածով սահմանված է, որ անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել դատապարտյալ Ա.Հարությունյանի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդությունը բավարարելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 14-ի որոշումն ամբողջությամբ և գործի վարույթը կարճել:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ:

2006 թվականի հուլիսի 21-ին ուժի մեջ է մտել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-67-Ն), որի 5-րդ հոդվածի հիման վրա ուժը կորցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը: Այն ամրագրում էր դատապարտյալի և նրա պաշտպանի իրավունքը դատարան ներկայացնելու դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագիր:

Դատապարտյալ Ա.Հարությունյանի պաշտպան Հ.Ալումյանը Ա.Հարությունյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիր է ներկայացրել Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան միայն 2006 թվականի դեկտեմբերի 8-ին, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

Հետևաբար դատապարտյալ Ա.Հարությունյանի պայմանական վաղաժամկետ ազատելու օրենսդրական կարգը պետք է որոշվի 2006 թվականի դեկտեմբերի 08-ին գործող օրենքի հիման վրա:

Դատարանը չի ընդունում, որ այս հարցում կիրառելի են ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածները, քանի որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու դատավարական կարգը, ներառյալ՝ դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագրով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, դուրս է «արարքի հանցավորություն և պատժելիություն» հասկացության շրջանակից:

Ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության կանոնը գործում է միայն արարքի հանցավորության և պատժելիության հետ կապված նյութաիրավական հարա-

բերությունների նկատմամբ, և ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված իրավանորմը չի կարգավորում դատավարաիրավական հարաբերությունները: Հետևաբար՝ կիրառելի չէ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը, որը սահմանում է քրեական օրենքի հետադարձ ուժը:

Այս հարցում կիրառելի չէ նաև դատապարտյալ Ա.Հարությունյանի կողմից պատիժը կրելու ժամանակահատվածում գործող օրենքը, քանի որ վերաքննիչ դատարանի այդ հետևությունը որևէ իրավական հիմնավորում չունի: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Պատիժների կատարումը կարգավորվում է կատարելու պահին գործող քրեակատարողական օրենսդրությամբ»: Մակայն այս դրույթը ևս կիրառելի չէ, քանի որ անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու դատավարական կարգը, մասնավորապես՝ այն, թե որ սուբյեկտներն իրավունք ունեն դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագրով դիմել դատարան, սահմանվում է ոչ թե ՀՀ քրեակատարողական օրենսգրքով, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Դատարանը գտնում է, որ քննարկվող հարցում կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասը: Համաձայն այդ հոդվածի՝ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածով կարգավորված դատավարական իրավահարաբերությունները կազմում են դատարանում գործի քննության ինքնուրույն վարույթ, ուստի դրանք ներառվում են «դատարանում գործի քննություն» հասկացության ծավալի մեջ: Իսկ դատարանում գործի քննությունը սկսում է այն պահից, երբ անձը համապատասխան դատավարական փաստաթուղթը (բողոքը, միջնորդագիրը) ներկայացնում է դատարան:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական նորմի գործողությանը, ապա այն տարածվում է այն դեպքերի վրա, երբ իրավահարաբերությունն առաջանալուց հետո օրենքը փոխվում է ի վնաս դատավարության մասնակիցների: Տվյալ գործով դատապարտյալ Ա.Հարությունյանի իրավունքը սահմանափակող օրենքն ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 21-ին, իսկ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան համապատասխան միջնորդագիրը ներկայացվել է միայն 2006 թվականի դեկտեմբերի 8-ին: Այսինքն՝ օրենքը ի վնաս դատապարտյալ Ա.Հարությունյանի փոխվել է ոչ թե իրավահարաբերությունն առաջանալուց հետո, այլ դրանից առաջ: Հետևաբար՝ տվյալ գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավական նորմը կիրառելի չէ:

Այսպիսով, դատապարտյալ Ա.Հարությունյանը և իր պաշտպանը 2006 թվականի դեկտեմբերի 8-ի դրությամբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագրով անմիջականորեն դատարան դիմելու իրավունք չեն ունեցել: Այդ պայ-

մաններում առաջին ատյանի դատարանն այն քննելու և ըստ էության որոշում կայացնելու իրավասություն չի ունեցել:

Վերը շարադրվածը հիմք է եզրահանգելու համար, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել նյութական և դատավարական օրենքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են բեկանելու գործով կայացված որոշումները և կարճելու 2006 թվականի դեկտեմբերի 8-ի միջնորդագրի կապակցությամբ հարուցված վարույթը:

Այս պայմաններում բողոքի մյուս փաստարկները քննարկելու անհրաժեշտությունը վերանում է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում քննարկվող հարցերով, կապված պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ օրենքի գործողության հետ, առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Բեկանել դատապարտյալ Աշոտ Հայկազի Հարությունյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին դատապարտյալի ներկայացուցիչ Հ.Ալումյանի միջնորդությունը մերժելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 29-ի, ինչպես նաև դատապարտյալ Ա.Հարությունյանին երկու տարի վեց ամիս տասն օր ժամանակով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 14-ի որոշումները, և կարճել դատապարտյալ Ա.Հարությունյանի ներկայացուցիչ Հ.Ալումյանի կողմից Ա.Հարությունյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան 2006 թվականի դեկտեմբերի 8-ին ներկայացված միջնորդագրի հիման վրա հարուցված վարույթը:

Աշոտ Հայկազի Հարությունյանին վերադարձնել համապատասխան քրեակատարողական հիմնարկ՝ դատավճռով նշանակված պատժի կրումը շարունակելու:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-126/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ**
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ **Գ.ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ**
դատախազ

2007թվականի հունիսի 12-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Զհանգիրյանի վճռաբեկ բողոքը Ստեփան Վարազդատի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Արտյոմ Աբգարի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 362-րդ հոդվածի 1-ին մասով, Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Անհայտ անձանց կողմից նախապես համաձայնության գալով, ապօրինի շինություն մուտք գործելու և զենքի գործադրման սպառնալիքով ավագակային հարձակում կատարելու փաստի առթիվ 2004 թվականի ապրիլի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով հարուցվել է քրեական գործ :

2004 թվականի ապրիլի 17-ին ձերբակալվել են Ստեփան Գալստյանը և Արտյոմ Հակոբյանը, որոնց ապրիլի 20-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով և խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: 2004 թվականի ապրիլի 19-ին ձերբակալվել է Աշոտ Հակոբյանը, որին ապրիլի 22-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2004 թվականի հունիսի 30-ին Արտյոմ Աբգարի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով 2004 թվականի ապրիլի 20-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով:

2004 թվականի հունիսի 30-ին Ստեփան Վարազդատի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով 2004 թվականի ապրիլի 20-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով:

2004 թվականի հունիսի 30-ին Աշոտ Հակոբի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով 2004 թվականի ապրիլի 22-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ, կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով:

2004 թվականի հունիսի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարան:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռով Ստեփան Վարազդատի Գալստյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով՝ 8 (ութ) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով՝ 4 (չորս) տարի ժամկետով, առանց տուգանքի: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական սահմանվել է ազատազրկում 11

(տասնմեկ) տարի ժամկետով, առանց տուգանքի և առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի ապրիլի 17-ից:

Արտյոմ Աբգարի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 362-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով՝ 7 (յոթ) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, առանց տուգանքի, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի և 67-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Արտյոմ Հակոբյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 9 (ինը) տարի ժամկետով, առանց տուգանքի և առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի ապրիլի 17-ից:

Աշոտ Հակոբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով՝ 8 (ութ) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով՝ 3 (երեք) տարի ժամկետով, առանց տուգանքի: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական սահմանվել է ազատազրկում 11 (տասնմեկ) տարի ժամկետով, առանց տուգանքի և առանց գույքի բռնագրավման: Պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի ապրիլի 19-ից:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճռով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռի թողել է անփոփոխ, իսկ ամբաստանյալներ Արտյոմ Հակոբյանի, Ստեփան Գալստյանի և պաշտպանի վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2005 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճռի դեմ բերված ամբաստանյալներ Ստեփան Գալստյանի և Արտյոմ Հակոբյանի վճռաբեկ բողոքները թողել է առանց քննության:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մայիսի 31-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

2.Գործի փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմինը Ստեփան Վարազդատի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Արտյոմ Աբգարի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-

ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով, Աշոտ Հակոբի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, կետերով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրել հետևյալ արարքների համար.

Արտյոն Հակոբյանը, 2002 թվականի հունիսի 6-ին գորակոչված լինելով ժամկետային զինվորական ծառայության և հանդիսանալով ՀՀ ոստիկանության թիվ 1032 գորամասի զինծառայող, Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի նոյեմբերի 28-ի դատավճռով դատապարտված լինելով ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 4-րդ մասով և գտնվելով փորձաշրջանի մեջ, 2004 թվականի հունվարի 23-ից մինչև 25-ը, իսկ վերջին անգամ փետրվարի 3-ից զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնական թողել է գորամասը:

Ավագակությանը ուրիշի գույքը հափշտակելու համար նախնական համաձայնության գալով՝ Ստեփան Գալստյանը, Արտյոն Հակոբյանը և Աշոտ Հակոբյանը 2004 թվականի փետրվարի 29-ին՝ ժամը 20⁴⁰-ի սահմաններում, դիմակավորված, ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի երկու ատրճանակով զինված, հարձակում են կատարել Աճառյան փողոցի 32 շենքի թիվ 2 բնակարանում գտնվող «Արթուր և Նազելի» ՍՊԸ-ի վրա, որի ընթացքում Ստեփան Գալստյանը ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Կարապետյանի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն է գործադրել. ատրճանակով կրակել է վերջինիս ձախ ազդրի շրջանին՝ նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս, որից հետո ՍՊԸ-ի տարադրամի փոխանակման սենյակի չիրկիզվող պահարանից հափշտակել են խոշոր չափերի՝ 2.925.000 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար, ՌԴ ռուբլի և ՀՀ դրամ:

Աշոտ Հակոբյանը կրկին անգամ գույքի գաղտնի հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ և նպատակով, 2004 թվականի մարտի 2-ի լույս 3-ի գիշերը Ավանի Սայաթ-Նովա թաղամասի 8-րդ շենքի երրորդից ութերորդ հարկերում տեղադրված էլեկտրավահանակների ներսից գողացել է բազմաթիվ տուժողների պատկանող 34.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 30 հատ էլեկտրասպահովիչ:

Ավագակությանը ուրիշի գույքը հափշտակելու համար նախնական համաձայնության գալով՝ Արտյոն Հակոբյանը և Ստեփան Գալստյանը, կրկին անգամ, 2004 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 17⁰⁰-ի սահմաններում, դիմակավորված, ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող կարճափող հրացանով և ատրճանակով զինված, հարձակում են կատարել Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի թիվ 1 շենքի տակ գտնվող «Հայխնայրանկ»-ի Խորհրդային մասնաճյուղի թիվ 32 մինիմասնաճյուղի գրասենյակի վրա, որի ընթացքում հրազենի գործադրմամբ գրասենյակի աշխատակցուհիներ Գոհար Ավետիսյանի ու Աննա Միքայելյանի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով բացել են չիրկիզվող պահարանը, սակայն Ա.Միքայելյանի կողմից ձայնային ահազանգման համակարգը միացնելուց հետո դիմել են փախուստի:

Արտյոն Հակոբյանը և Ստեփան Գալստյանը, նախնական համաձայնության գալով, կրկին անգամ, 2004 թվականի ապրիլի 8-ին ապօրինի մուտք են գործել Ռոբերտ Սահակյանին պատկանող Ավան-Առինջ թաղամասի 1-ին հատվածի թիվ 2/1 շենքի տանիքում գտնվող խորդանոցը, որտեղից գաղտնի հափշտակել են 118.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով զինվորական ձեռնային կիսաբաճկոն, հեռադիտակ, մեկ

գույգ կոշիկ, 70 մետր պղնձյա լար, ալյումինե երկու կաթսա և 20 լիտր տարողությամբ ալյումինե ջրի երկու տարա:

Արտյոմ Հակոբյանը և Ստեփան Գալստյանը, նախնական համաձայնության գալով, կրկին անգամ, 2004 թվականի ապրիլի 9-ից 14-ն ընկած ժամանակահատվածում Ավան- Առինջ թաղամասի 3/8, 3/2, 3/12, 1/7, 1/10, 1/15, 2/10, 1/11 և 1/12 շենքերի պատերի վրայից կտրել և գողացել են «Արմենտել» ՀՉ ՓԲԸ-ին պատկանող 186 մետր երկարությամբ 97.500 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ՏՊՊ 50/2 և 100/2 տեսակների հեռախոսային մալուխներ:

Արտյոմ Հակոբյանը և Ստեփան Գալստյանը, նախնական համաձայնության գալով, կրկին անգամ, 2004 թվականի ապրիլի 10-ին Ավան-Առինջ թաղամասի 1-ին հատվածի թիվ 1/3 շենքի հարևանությամբ կայանված Արտաշես Մանասերյանին պատկանող ՎԱԶ-2106 մակնիշի 02 SO 308 պետհամարանիշի ավտոմեքենայից գողացել են 55.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով երկու անվաղող իրենց անվահեծաններով, մեկ մարտկոց, հետևի նստարանը՝ հենարանով, «Արտեչ» ֆիրմայի ձայնագրիչ և ամբարձիչ:

Արտյոմ Հակոբյանը և Ստեփան Գալստյանը, նախնական համաձայնության գալով, կրկին անգամ, 2004 թվականի ապրիլի 11-ի լույս 12-ի գիշերը պատուհանի ապակին կտրելու միջոցով ապօրինի մուտք են գործել Ավան-Առինջ թաղամասի թիվ 180 միջնակարգ դպրոցի փայտամշակման արհեստանոց, որտեղից գաղտնի հափշտակել են 114.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով էլեկտրական սղոց-ֆուգան, երկու հատ էլեկտրական բալզարկա, էլեկտրական գայլիկոնիչ, էլեկտրական մարտկոցային պտտակահան, ամաստե ապակե- կտրիչ և ամրակրակող գործիք:

Արտյոմ Հակոբյանը և Աշոտ Հակոբյանը, նախնական համաձայնության գալով, կրկին անգամ, 2004 թվականի ապրիլի 13-ի գիշերը, Ավան-Առինջ թաղամասի 3/8, 3/2, 3/12 շենքերից գողացել են «Արմենտել» ՀՉ ՓԲԸ-ին պատկանող 78 մետր երկարությամբ 39.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ՏՊՊ 50/2 տեսակի հեռախոսային մալուխներ:

3. Վճարելի բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ոստիկանության Երևանի քննչական վարչությունում թիվ 14102507 քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալ Սերգեյ Անդրեասյանը ցուցմունք է տվել, որ ի թիվս մի քանի ավագակային հարձակումների՝ ինքն այժմ հանգուցյալ Հենրիկ Մամբրեյանի հետ կատարել է նաև Ավանի Աճառյան թաղամասի 32-րդ շենքի 2-րդ բնակարանում տեղակայված «Արթուր և Նազելի» ՄՊԸ-ի աշխատակիցների նկատմամբ 2004 թվականի փետրվարի 29-ի զինված ավագակային հարձակումը, ինչպես նաև խնայբանկի Խորհրդային մասնաճյուղի Ավան-Առինջի մինիմասնաճյուղի աշխատակիցների նկատմամբ 2004 թվականի ապրիլի 2-ի զինված ավագակային հարձակումը:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում հարցաքննված Սերգեյ Անդրեասյանը ցուցմունք է տվել, որ 2004 թվականի փետրվարի 29-ի և ապրիլի 2-ի ավագակային հարձակումները կատարել է ինքը Հենրիկ Մամբրեյանի հետ և մանրամասն նկարագրել է դեպքերի հանգամանքները: Նրա մատնանշած փաստերը հաստատվել են նաև լրացուցիչ հարցաքննված վկաների ցուցմունքներով:

Բացի այդ, թիվ 17104504 գործով որպես վկա հարցաքննված Արտյոմ Հակոբյանը ցուցմունք է տվել, որ գործի նախաքննության ժամանակ Ավանի ոստիկանության բաժնում իրենց ծեծել են և ստիպել են ընդունել ավագակային հարձակումներ կատարելու փաստերը և այդ մասին ցուցմունք տալ: Իրենք բռնությունների ազդեցության տակ տվել են պահանջվող ցուցմունքները, որոնցից դատաքննությունների ընթացքում հրաժարվել են: Իր անմեղությունն ապացուցելու համար մի քանի անգամ ինքնասպանության փորձ է կատարել: Դատապարտյալ Աշոտ Հակոբյանը ևս ցուցմունքներ է տվել, որ իրենք չեն կատարել իրենց մեղսագրված երկու ավագակային հարձակումները և դրանց կատարման փաստերն ընդունել են ծեծի ազդեցության տակ:

Հարուցված վարույթի քննությամբ պարզվել է նաև, որ Ստեփան Գալստյանը պատիժը կրելու ընթացքում 2006 թվականի հունիսի 1-ին մահացել է չարորակ ուռուցքի պատճառով:

Փաստորեն, նոր ի հայտ եկած հանգամանքներով հարուցված վարույթի ընթացքում ի հայտ են եկել Աշոտ Հակոբյանի, Ստեփան Գալստյանի և Արտյոմ Հակոբյանի նկատմամբ դատավճիռ կայացնելիս Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանին անհայտ մնացած էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, որոնք մինչ այդ պարզված հանգամանքների հետ միասին ապացուցում են դատապարտյալների անմեղությունը ավագակային հարձակումներ կատարելու մեջ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, վճռաբեկ բողոք բերելու հիմք է:

Ելնելով վերոգրյալներից՝ բողոքի հեղինակը խնդրել է.

1. Բեկանել Ստեփան Վարազդատի Գալստյանի, Արտյոմ Աբգարի Հակոբյանի և Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 2-ի դատավճիռների մասը և այդ հոդվածներով քրեական գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության:

2. Ստեփան Վարազդատի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով դատավճիռը թողնել անփոփոխ:

3. Արտյոմ Աբգարի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 362-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճիռները թողնել անփոփոխ: Դրանցով դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով նշանակված 2 տարի 6 ամիս ժամկետով, ազատազրկմանը, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից 1 տարի ժամկետով ազատազրկումը և թողնել ազատազրկում 3 տարի 6 ամիս ժամկետով որին ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ մասնակիորեն գումարել նաև Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 6 ամիս ժամկետով ազատազրկումը՝ վերջնական թողնելով կրելու ազատազրկում 4 տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվել 2004 թվականի ապրիլի 17-ից:

4. Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը, որով պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի ժամկետով և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճիռը թողնել անփոփոխ: Նկատի ունենալով, որ Աշոտ Հակոբյանի պատժի սկիզբը հաշվվել է 2004 թվականի ապրիլի 19-ից և նշանակված պատիժն արդեն լրիվ կրել է, նրան ազատ արձակել: ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 235-րդ հոդվածներով Աշոտ Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչությունում թիվ 14102507 քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալ Մերգեյ Անդրեասյանը ցուցմունք է տվել, որ ի թիվս այլ ավագակությունների՝ այժմ հանգուցյալ Հենրիկ Մամբրեյանի հետ կատարել է նաև Ավանի Աճառյան թաղամասի 32 շենքի 2-րդ բնակարանում տեղակայված «Արթուր և Նազելի» ՄՊԸ-ի աշխատակիցների նկատմամբ 2004 թվականի փետրվարի 29-ի և խնայբանկի Խորհրդային մասնաճյուղի Ավան-Առինջի մինի-մասնաճյուղի աշխատակիցների նկատմամբ 2004 թվականի ապրիլի 2-ի ավագակային հարձակումները:

Կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ վերը նշված ավագակությունները կատարելու համար Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ, 235-րդ հոդվածի 2-րդ մասերով դատապարտվել են Ստեփան Վարազդրատի Գալստյանը, Արտյոմ Աբգարի Հակոբյանը և Աշոտ Հակոբի Հակոբյանը: Նույն դատավճռով նրանք ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել են մի շարք գողություններ կատարելու համար:

2007 թվականի մարտի 28-ին Երևան քաղաքի դատախազությունում նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում պարզվել է, որ ոստիկանության Նոր Նորքի քննչական բաժնում քննվող քրեական գործով գողություններ կատարելու համար մեղադրվող Ստեփան Գալստյանը, Արտյոմ և Աշոտ Հակոբյանները 2004 թվականի ապրիլ ամսին հարցաքննվելիս հանդես են եկել մեղայականով և ցուցմունք են տվել, որ կատարել են նաև 2004 թվականի փետրվարի 29-ի և 2004 թվականի ապրիլի 2-ի վերը նշված ավագակությունները: Սակայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում նրանք հրաժարվել են ավագակություն կատարելու մասին նախաքննության ընթացքում տված խոստովանական ցուցմունքներից և հայտնել են, որ դրանք տրվել են իրենց նկատմամբ կիրառված բռնությունների հետևանքով:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննության ընթացքում Մերգեյ Անդրեասյանը ցուցմունքներ է տվել, որ ինքն է Հենրիկ Մամբրեյանի հետ կատարել 2004 թվականի փետրվարի 29-ի և ապրիլի 2-ի ավագակությունները, մանրամասն նկարագրել է դեպքերի այնպիսի հանգամանքներ, որոնց մասին կարող էր իմանալ միայն հանցագործություն կատարողը: Նրա մատնանշած փաստերը հաստատվել են նաև լրացուցիչ հարցաքննված վկաների ցուցմունքներով:

Դատապարտյալ Արտյոմ Հակոբյանը ցուցմունք է տվել, որ նախաքննության ընթացքում Ավանի ոստիկանության բաժնում իրենց ծեծել են, ստիպել են ընդունել ավագակություններ կատարելու փաստերը և դրանց մասին ցուցմունքներ տալ: Բռնությունների ազդեցության տակ իրենք տվել են պահանջվող ցուցմունքները, որոնցից դատարանում հրաժարվել են, իսկ գողություններ կատարելու փաստերն ընդունել են: Ինքը մշտապես պնդել է, որ ավագակություն չեն կատարել, և իր անմեղությունն ավացուցելու համար մի քանի անգամ ինքնասպանության փորձ է կատարել:

Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ի՝ ձերբակալված անձանց բուժզննության մատյանի, ինչպես նաև «Վարդաշեն» ՔԿՀ-ի՝ մարմնական վնասվածքների հաշվառման մատյանի զննությամբ պարզվել է, որ Ստեփան Գալստյանը ՁՊՎ և «Նուբարաշեն» ՔԿՀ է ընդունվել բազմաթիվ մարմնական վնասվածքներով: Նշանակված դատաբժշկական փաստաթղթային փորձաքննությամբ պարզվել է, որ բութ առարկաներով Ստեփան Գալստյանի առողջությանը թեթև վնաս է պատճառվել, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում:

Պարզվել է նաև, որ Արտյոմ Հակոբյանն ու Ստեփան Գալստյանը ձերբակալվել են 2004 թվականի ապրիլի 17-ին, իսկ Աշոտ Հակոբյանը՝ 2004 թվականի ապրիլի 19-ին, սակայն առաջին երկուսը ՁՊՎ մուտք են գործել 2004 թվականի ապրիլի 20-ին, իսկ Աշոտ Հակոբյանը՝ 2004 թվականի ապրիլի 21-ին: Այդ ընթացքում նրանք գտնվել են ոստիկանության Ավանի բաժնում:

Քննությամբ պարզվել է, որ «Վարդաշեն» ՔԿՀ-ում գտնվելու ժամանակ Արտյոմ Հակոբյանը 2004 թվականի դեկտեմբերի 29-ին բազկի երակները կտրելու, իսկ 2005 թվականի մարտի 22-ին, օգոստոսի 16-ին և 2006 թվականի հունիսի 26-ին կախվելու միջոցով փորձել է ինքնասպանություն կատարել: Դրանցից 2005 թվականի մարտի 22-ի և օգոստոսի 16-ի դեպքերով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազությունում ստեղծված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, իսկ 2006 թվականի հունիսի 26-ի դեպքով հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է: 2005 թվականի մարտի 22-ին ինքնասպանության փորձ կատարելն Արտյոմ Հակոբյանը պատճառաբանել է այն բանով, որ ինքը դատապարտվել է չկատարած արարքի համար, և այդ հարցով ոչ ոք իրեն չի հավատում, իսկ 2006 թվականի հունիսի 26-ին ինքնասպանության փորձ է կատարել, քանի որ իրեն խիստ են դատապարտել: Նա նույնաբովանդակ է դիմումներ է ուղարկել «Վարդաշեն» ՔԿՀ-ի պետին և ՀՀ գլխավոր դատախազին:

Դատապարտյալ Աշոտ Հակոբյանը նույնպես ցուցմունք է տվել, որ իրենց մեղսագրված ավագակություններն իրենք չեն կատարել և դրանց կատարման փաստն ընդունել են ծեծի ազդեցության տակ: Նա նշել է, որ դատարանում հրաժարվել է նախաքննության ընթացքում տված ցուցմունքներից, պնդել է, որ ավագակություններն իրենք չեն կատարել: Չնայած դրան, հիմք ընդունելով նախաքննության ընթացքում ծեծի ազդեցության տակ տրված ցուցմունքները՝ իրենց դատապարտել են:

Նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի քննությամբ պարզվել է, որ դատապարտյալ Ստեփան Գալստյանը պատիժը կրելու ընթացքում մահացել է: «Դատապարտվածների հիվանդանոց» ՔԿՀ-ում Ստեփան Գալստյանի անվամբ լրացված հիվանդության նկարագրի զննությամբ պարզվել է, որ նա 2006 թվականի հունիսի 1-ին մահացել է չարորակ ուռուցքի պատճառով:

Չնայած այլ անձանց կողմից ավագակություն կատարելու հանգամանքները դատարանի կողմից որոշում ընդունելու պահին առկա են եղել, սակայն գործի նյութերում չեն արտացոլվել, և դատարանը դրանց մասին տեղյակ չի եղել: Գործի համար էական նշանակություն ունեցող այդ հանգամանքների առկայությունը վկայում է այն

մասին, որ Ստեփան Գալստյանի, Արտյոմ և Աշոտ Հակոբյանների վերաբերյալ դատավճիռն անօրինական է և չիմնավորված:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով քրեական գործերը նորոգվում են, եթե ի հայտ են եկել դատավճիռ կամ որոշում կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը, կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

Քննության նյութերում առկա փաստական տվյալները թույլ են տալիս ավագակցություն կատարելու մեջ դատապարտյալներ Ստեփան Գալստյանի, Արտյոմ և Աշոտ Հակոբյանների մեղավորության մասին անել այլ հետևություն, քան այն, որին հանգել է դատարանը նրանց վերաբերյալ դատավճիռ կայացնելիս, ինչպես նաև պարզել այդ հանցագործությունն այլ անձանց կողմից կատարելը: Դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նոր երևան եկած հանգամանքներ են, որոնք գործի նորոգման հիմք են: Նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները վճռաբեկ բողոք բերելու հիմք են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով ավագակցության կատարման բոլոր հանգամանքները ենթակա են բազմակողմանի ստուգման, ինչը հնարավոր չէ դատական քննությամբ: Գործի արդարացի քննության սկզբունքն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրան արդարացնող, ինչպես նաև նրա պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա Ստեփան Գալստյանի, Արտյոմ և Աշոտ Հակոբյանների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ, 235-րդ հոդվածի 2-րդ մասերով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը պետք է բեկանել և այդ մասով քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել:

Ստեփան Վարագդատի Գալստյանի, Արտյոմ Աբգարի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով և Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, 235-

րոյ հողվածի 2-րդ մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճիռները բեկանել և այդ մասով քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

2. Ստեփան Վարազդատի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով դատավճիռը թողնել անփոփոխ:

3. Արտյոն Աբգարի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով, 362-րդ հողվածի 1-ին մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճիռները թողնել անփոփոխ: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով նշանակված 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկմանը, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հողվածի 4-րդ մասի համաձայն, գումարել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հողվածի 1-ին մասով նշանակված պատժից 1 տարի ժամկետով ազատազրկումը և սահմանել 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկում, որին ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հողվածի հիման վրա մասնակիորեն գումարել Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը և վերջնական թողնել կրելու ազատազրկում 4 (չորս) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվել 2004 թվականի ապրիլի 17-ից:

4. Աշոտ Հակոբի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռով նշանակված 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկումը, որն անփոփոխ է թողնվել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 9-ի դատավճռով, թողնել անփոփոխ: Պատժի սկիզբը հաշվել 2004 թվականի ապրիլի 19-ից: Նկատի ունենալով, որ Աշոտ Հակոբյանը նշանակված պատիժը լրիվ կրել է, նրան անհապաղ ազատ արձակել: Աշոտ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հողվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 235-րդ հողվածի 2-րդ մասով որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնել:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-134/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
Գործ N 54/05 կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Զ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
դատախազ Մ.ՍԱԹԵՎՈՍՅԱՆԻ
քննիչ Հ.ՍԱՐԴԱՐՅԱՆԻ

2007թվականի հուլիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանի վճռաբեկ բողոքը Սուրեն Կոլյայի Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 16-ի դատավճիռների դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2004 թվականի հուլիսի 22-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով հարուցվել է քրեական գործ՝ Վանաձոր քաղաքի բնակիչ Գոգա Առաքելյանին հրազենով սպանելու առթիվ:

Նույն թվականի հուլիսի 28-ին Երևան քաղաքի բնակիչ Սուրեն Կոլյայի Հարությունյանը մեղադրվելով ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն և հայտնել իր կողմից Գ.Առաքելյանի սպանության մասին:

2004 թվականի հուլիսի 29-ին Ս.Հարությունյանը ձերբակալվել է, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կե-

տով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, և կալանքը կիրառվել որպես խափանման միջոց: Նույն թվականի սեպտեմբերի 20-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և Ս.-Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը 2004 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճռով Ս.-Հարությունյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով և դատապարտել է ազատազրկման 10 տարի ժամկետով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, 2005 թվականի փետրվարի 16-ին քննության առնելով ամբաստանյալ Ս.-Հարությունյանի վերաքննիչ բողոքը, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանը նոր ի հայտ եկած հանգամանքներով հարուցված վարույթի քննության արդյունքներով բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ս.-Հարությունյանը դատապարտվել է այն արարքի համար, որ նա 2004 թվականի հուլիսի 22-ին, ժամը 14¹⁵-ի սահմաններում, գտնվելով Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի և Ն.Տիգրանյան փողոցների խաչմերուկին հարակից «Հայէկոնոմբանկի» Արաբկիրի մասնաճյուղի շենքի մոտ, մոտեցել է այդտեղ կանգնած «ԲՄՎ-Մ5» մակնիշի 64 ԼՍ 888 պետհամարանիշի ավտոմեքենային և վրեժ լուծելու նպատակով, մեքենայի առջևի ձախ նստատեղին նստած Վանաձոր քաղաքի բնակիչ Գոգա Ֆելիքսի Առաքելյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, ապօրինի կերպով ձեռք բերած և կրած «Մակարով» տեսակի ատրճանակով վարորդի դրան կողմից երեք անգամ կրակել է նրա գլխին ու սպանել:

3.Նոր ի հայտ եկած հանգամանքներով վարույթ

ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունում 2006 թվականի սեպտեմբերի 6-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ անհայտ անձանց կողմից ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության պետ Շահեն Վարդկեսի Հովասափյանի ծառայողական ավտոմեքենան պայթեցնելու և նրան սպանելու փաստի առթիվ:

Նկարագրված հանցագործության կատարման մեղադրանքով կալանավորվել է Երևան քաղաքի բնակիչ Հայկ Աղվանի Իսրայելյանը:

Նախաքննության ընթացքում «Նուբարաշեն» ՔԿՀ-ի դատապարտյալ Սուրեն Հարությունյանը, հարցաքննվելով որպես վկա, ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը Գ.Առաքելյանի սպանության մեղադրանքով դատապարտվել է անհիմն, քանի որ այդ հանցագործությունը պլանավորել և իրագործել են իր հորեղբոր որդի Արթուր Հարությունյանն ու նրա մտերիմ ընկեր Հայկ Իսրայելյանը, իսկ ինքը, նախնական պայմանավորվածության համաձայն, ներկա է գտնվել հանցագործությանը՝ այն հետագայում իր վրա վերցնելու նպատակով: Հայտնելով դեպքի մանրամասները՝ Ս.-Հարույթ-

յունյանը նշել է, որ Գոգա Առաքելյանի սպանությունից շուրջ մեկ ամիս առաջ Արթուր Հարությունյանի հարցին, թե սպանության իրագործումը հաջողվելու դեպքում կհամաձայնի՞ արդյոք այն իր վրա վերցնել, պատասխանել է դրական:

Ս.Հարությունյանը, ցուցմունք տալով, հայտնել է, որ 2004 թվականի հուլիսի 22-ին Արթուր Հարությունյանի ավտոմեքենայով բարձրացել են Կոմիտասի պողոտայով, իսկ Հայկ Իսրայելյանը եկել է հետևից: Ճանապարհին Արթուր Հարությունյանն իրեն տվել է ատրճանակ՝ իր իսկ անվտանգության համար: Երբ հասել են «Հայէկոնոմբանկի» մոտ, Արթուրը ցույց է տվել Գոգայի ավտոմեքենան: Հետո Արթուր Հարությունյանը հեռացել է:

Ս.Հարությունյանը հայտնել է նաև, որ Հ.Իսրայելյանի հետ միասին 30-ից 40 րոպե սպասել են Գ.Առաքելյանի մեքենայից շուրջ 20 մետր հեռավորության վրա՝ շենքի անկյունում: Նկատելով, որ Գ.Առաքելյանը մոտենում է իր ավտոմեքենայի վարորդի կողմի դռանը՝ Հայկ Իսրայելյանը նրա հետևից արագ քայլերով մոտեցել է նույն ավտոմեքենային, ինքն էլ՝ նրա հետևից 4-5 քայլ հեռավորությամբ: Երբ Գ.Առաքելյանը նստել է վարորդի նստատեղին, Հ.Իսրայելյանը մոտեցել է նրան, ավտոմեքենայի դռան իջեցված ապակուց զենքն ուղղելով Գ.Առաքելյանի վրա, երեք անգամ կրակել է նրա գլխին, այնուհետև դիմել փախուստի, ինքն էլ նրա ետևից:

Ս.Հարությունյանը նաև հայտնել է, որ մեղայականով ներկայանալիս հազին ունեցել է սպանության ժամանակ Հ.Իսրայելյանի հազին եղած հագուստները, որոնք առգրավվել են:

Ս.Հարությունյանն իր ցուցմունքները պնդել է Հ.Իսրայելյանին առերես, որը ժխտել է սպանությանն իր մասնակցության հանգամանքը:

Ս.Հարությունյանի ցուցմունքները ստուգելու նպատակով 2007 թվականի ապրիլի 4-ին կատարվել է քննչական փորձարարություն, որի ժամանակ Ս.Հարությունյանը, պատասխանելով իրեն առաջադրված հարցերին, մանրամասնորեն նկարագրել է Հ.Իսրայելյանի կողմից Գ.Առաքելյանի սպանության դեպքի հանգամանքները, որոնք ամբողջովին համապատասխանում են վերևում նշված նրա ցուցմունքների բովանդակությանը:

2007 թվականի ապրիլի 27-ին Հ.Իսրայելյանից և Ս.Հարությունյանից վերցվել են արյան, քրտինքի, մազերի, մարմնի և հագուստի չափսերի նմուշներ: Ստացված նմուշներով և ձեռքակալման պահին Ս.Հարությունյանի հազին եղած և առգրավված հագուստներով նշանակվել են դատաքրեագիտական և դատակենսաբանական փորձաքննություններ:

2007 թվականի մայիսի 31-ին ստացված դատաքրեագիտական փորձաքննության եզրակացությամբ պարզվել է, որ փորձաքննության ներկայացված սպիտակ վերնաշապիկը, շապիկն ու անդրավարտիքն իրենց չափսերով համապատասխանում են Հ.Իսրայելյանի մարմնի չափսերին և ակնհայտորեն չեն համապատասխանում Ս.Հարությունյանի մարմնի չափսերին:

2007 թվականի հունիսի 1-ին ստացված դատակենսաբանական փորձաքննության եզրակացությամբ պարզվել է, որ փորձաքննության ներկայացված Ս.Հարությունյանի արյան, քրտինքի և մազերի նմուշները պատկանում են Օ խմբին, իսկ Հ.Իսրայելյանինը՝ H ուղեկցող հակաձիմներով B խմբին: Փորձաքննության արդյունքում ներկայացված գլխարկի առաջմասին կեսի դարձերեսին և հովհարի երեսային մակերեսին, շապիկի և վերնաշապիկի օձիքին, թևատակերին, անդրավարտիքի հե-

տին միջին գծի շրջանում հայտնաբերվել է մարդուն պատկանող քրտինք: Քրտինքի հետքերում կլանման-անջատման և հակամարմինների քանակական կլանման ռեակցիաներով հաստատվել է B և H հակածինների առկայություն, որոնք կարող էր առաջացնել B և H հակածիններ ունեցող անձը՝ Հ.Իսրայելյանը: Դրան կարող էր խառնված լինել նաև Ս.Հարությունյանի քրտինքը /միայն H հակածինի հաշվին/: Փորձաքննության ներկայացված վերնաշապիկի, շապիկի և անդրավարտիքի վրա հայտնաբերված և նրանցից վերցված թվով 34 մազանման թելիկները հանդիսանում են մազեր, պատկանում են մարդու, ռեզիոնալ /տեղային/ ծագման են, հիմնականում՝ թափված: Իրենց կազմաբանական /ներկող նյութի հատիկներ, չափս, գույն, դասավորություն, քանակ և այլ/ և իմունոլոգիական հատկանիշներով /նույն B և H հակածինները մազերում/ նման են Հ.Իսրայելյանի կրծքավանդակից պոկված մազերի նմուշներին և կարող էին առաջանալ Հ.Իսրայելյանի մազերի հաշվին: Դրանք չէին կարող առաջանալ Ս.Հարությունյանի մազերի հաշվին:

4. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը գտնում է, որ Ս.Հարությունյանի վերաբերյալ դատավճիռը ենթակա է բեկանման, իսկ քրեական գործը՝ լրացուցիչ նախաքննության վերադարձման, քանի որ Շահեն Հովասափյանի սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության և նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով հարուցված վարույթի շրջանակներում ի հայտ են եկել Ս.Հարությունյանի վերաբերյալ քրեական գործով դատավճիռ կայացնելիս դատարանին անհայտ մնացած հանգամանքներ, որոնք ապացուցում են դատապարտյալ Ս.Հարությունյանի կատարած հանցանքի նվազ ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև Հ.Իսրայելյանի կողմից Գ.Առաքելյանի սպանությունն անմիջականորեն իրագործելու հանգամանքը, որը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, քրեական գործը նորոգելու հիմք է, որն էլ իր հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմք է:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Սուրեն Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի և այն անփոփոխ բողոքելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 16-ի դատավճիռները, իսկ քրեական գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով քրեական գործերը նորոգվում են, եթե ի հայտ են եկել դատավճիռ կամ որոշում կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը, կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել:

Ս.Հարությունյանի նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որով նա մեղավոր է ճանաչվել 2004 թվականի հուլիսի 22-ին կատարված Գ.Առաքելյանի սպանության, ինչպես նաև ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելու և կրելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս և 235-րդ հոդվածի 1-ին մաս):

Մինչդեռ Շ.Հովասափյանի ծառայողական ավտոմեքենան պայթեցնելու և նրան սպանելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում որպես վկա հարցաքննված Ս.Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Գ.Առաքելյանի սպանությունը կատարել է ոչ թե ինքը, այլ Շ.Հովասափյանի սպանության գործով մեղադրյալ Վ.Իսրայելյանը, իսկ ինքը ներկա է գտնվել հանցագործությանը՝ այն հետազայում իր վրա վերցնելու նպատակով:

Դրա հիման վրա հարուցված նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով վարույթի նյութերից երևում է, որ Ս.Հարությունյանի ցուցմունքները ստուգելու նպատակով 2007 թվականի ապրիլի 4-ին կատարված քննչական փորձարարության ժամանակ Ս.Հարությունյանը, պատասխանելով փորձագետների հարցերին, մանրամասնորեն նկարագրել է Վ.Իսրայելյանի կողմից Գ.Առաքելյանի սպանության դեպքի հանգամանքները, որոնք ամբողջովին համապատասխանում են նրա ցուցմունքների բովանդակությանը: Բացի այդ, Ս.Հարությունյանի ցուցմունքները ստուգելու նպատակով նշանակված դատաքրեագիտական և դատակենսաբանական փորձաքննությունների արդյունքում տրված եզրակացություններով ևս Ս.Հարությունյանի ցուցմունքները հաստատվում են:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ի հայտ են եկել Ս.Հարությունյանի նկատմամբ դատավճիռ կայացնելիս դատարանին անհայտ մնացած հանգամանքներ, որոնք կարող են ապացուցել դատապարտյալի կատարած հանցանքի նվազ ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկած-

յալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Հարությունյանի գործով չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Դրանով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով ամրագրված գործի արդարացի քննության սկզբունքը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Դատավճիռը ենթակա է բեկանման՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով, եթե թույլ է տրվել քրեադատավարական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի էական խախտում, որը չի կարող վերացվել դատական քննության ժամանակ»:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածին համապատասխան՝ Ս.Հարությունյանի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի և այն անփոփոխ թողնելու մասին վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 16-ի դատավճիռները պետք է բեկանել, և քրեական գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Ս.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցին, գտավ, որ ընտրված խափանման միջոց կալանքը պետք է թողնել անփոփոխ և Ս.Հարությունյանի կալանքի ժամկետը երկարացնել մեկ ամսով՝ նկատի ունենալով, որ կատարված սպանության գործով նրա մեղակցության աստիճանը դեռևս քննարկման առարկա է, և գործի հանգամանքները հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ նա, մնալով ազատության մեջ, կարող է խոչընդոտել քննությանը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Բեկանել Սուրեն Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին մասերով Երևան քաղաքի Արարկիյր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի փետրվարի 16-ի դատավճիռները, և քրեական գործը վերադարձնել լրացուցիչ նախաքննության: Ս.Հա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

րությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ, միաժամանակ նրա կալանքի ժամկետը երկարացնել մեկ ամիս ժամկետով՝ մինչև 2007 թվականի օգոստոսի 12-ը ներառյալ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-136/07

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշում
Գործ Հ.Ռեժ-17/07 կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Ղազարյան
դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Ս.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
դատախազ Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
հավատարմագրված փաստաբան Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2007 թվականի հունիսի 13-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով հավատարմագրված փաստաբան Արմենուհի Գևորգյանի միջոցով Հրաչ Չալաբի Չալաբյանի բերած վճռաբեկ բողոքը դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնելու և Հ.Չալաբյանին համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ.

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.

Լռուռու մարզի առաջին ատյանի դատարանը Հրաչ Չալաբի Չալաբյանին 1999 թվականի օգոստոսի 6-ի դատավճռով մեղավոր է ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով, 99-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով, 231-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 13 տարի ժամանակով:

Նույն դատարանի 2003 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ դատապարտյալ Հ.Չալաբյանի արարքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 8-րդ կետե-

րին, 185-րդ հոդվածի 2-րդ մասին և 165-րդ հոդվածի 4-րդ մասին, որի արդյունքում վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 11 տարի ժամանակով:

Նշանակված պատժի երկու երրորդը կրելուց հետո ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, նախապես ստանալով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը, միջնորդագիր է ներկայացրել Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան՝ պատիժը կրելուց Հ.Չալաբյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը 2007 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ միջնորդագիրը բավարարել է և ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածին համապատասխան՝ Հ.Չալաբյանին 2 տարի 10 ամիս 5 օր ժամանակով պայմանական վաղաժամկետ ազատել:

Որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել առաջին ատյանի դատարանում գործի քննությանը մասնակցած դատախազ Ա.Ստեփանյանը:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննության առնելով դատախազ Ա.Ստեփանյանի վերաքննիչ բողոքը, 2007 թվականի հունիսի 14-ին որոշում է կայացրել Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնելու և Հ.Չալաբյանին համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին՝ պատճառաբանելով, որ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը քրեակատարողական հիմնարկի միջնորդությունը քննության առնելիս ըստ էության չի գնահատել դատապարտյալի անձը՝ այն, որ նա 2001 թվականին քրեակատարողական հիմնարկի ադմինիստրացիայի կողմից բնութագրվել է նաև բացասաբար, իսկ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանության, ավազակային հարձակման և այլ հանցագործությունների համար դատապարտված անձի՝ պատիժը կրելու ընթացքում ընդամենը մեկ անգամ խրախուսվելը դեռևս բավարար չէ համարելու, որ նա հաստատապես ուղղվել է և նշանակված պատիժը լրիվությամբ կրելու կարիք չունի: Բացի այդ, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի, դատարանը դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդությունը քննության առնելիս պետք է հաշվի առնել նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառած վնասը հարթելու հանգամանքը: Դատապարտյալ Հ.Չալաբյանը մինչև օրս տուժողին պատճառված ընդամենը 45 հազար ՀՀ դրամի վնասն անհիմն պատճառաբանությամբ չի հարթել (ինչը ևս խոսում է նրա՝ ըստ էության չզղջալու և ուղղման ճանապարհին կանգնած չլինելու մասին), որպիսի հանգամանքը առաջին ատյանի դատարանի կողմից ընդհանրապես գնահատականի չի արժանացել:

Հավատարմագրված փաստաբան Արմենուհի Գևորգյանի միջոցով Հրաչ Չալաբյանի Չալաբյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ բերել է վճարելի բողոք:

Վճարելի դատարանը 2007 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով բողոքն ընդունել է վարույթ:

2. Վճարելի բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Որոշում կայացնելիս ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ, 437-րդ, 438-րդ և 394-րդ հոդվածներով:

Մինչդեռ ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ, 437-րդ, 438-րդ հոդվածները վերաքննիչ դատարանին լիազորություն չեն տալիս քննության առնելու անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշման օրինակաճանության և հիմնավորվածության հարցը:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածին համապատասխան, դատարանը լիազորված է որոշում կայացնելու՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին: Բողոքի հեղինակը գտնում է, որ այս հոդվածը չի վերաբերում վերաքննիչ դատարանին, քանի որ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ հոդվածին համապատասխան, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերը լուծվում են դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի որոշմամբ, անկախ այն բանից, թե որ դատարանն է կայացրել դատական որոշումը:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածը, մասնավորապես՝ այդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերը (որոնք վերաբերում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերին) սահմանում են իրավասու դատարաններում (որը տվյալ դեպքում Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանն է) գործի քննության կարգը:

Բողոք բերած անձը գտնում է, որ եթե անգամ վերաքննիչ դատարանը սխալմամբ համարել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածներում «դատարան» արտահայտությունը վերաբերում է նաև վերաքննիչ դատարանին, ապա այդ դեպքում վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ևս մեկ դատավարական սխալ: Այսպես՝ քննարկվող հոդվածները դատարանին օժտում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերը ըստ էության լուծելու իրավասությամբ: Այդ հոդվածներից և ոչ մեկը լիազորություն չի վերապահում դրանցում նշված «դատարանին» ստուգելու մեկ այլ դատարանի որոշման օրինակաճանությունն ու հիմնավորվածությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածին, որի վրա հիմնվել է վերաքննիչ դատարանը, ապա դրանով չի նախատեսված, որ վերաքննիչ դատարանը իրավասու է «առաջին ատյանի դատարանի որոշումը վերացնել»: Դրանով խախտվել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն այն մասին, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով սահմանված են այն որոշումները, որոնք կարող են կայացվել վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության արդյունքում:

Բողոք բերած անձը գտնում է, որ եթե վերաքննիչ դատարանը քննել է գործը, ապա չէր կարող բավարարվել առաջին ատյանի որոշման օրինակաճանությունն ու հիմնավորվածությունը ստուգելով, այլ պարտավոր էր ըստ էության քննության առնել ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի վարչակազմի միջնորդագիրը և լուծում տալ դրան: Մինչդեռ գործի

քննության արդյունքում պետք է լուծում տրվեր հենց հատկապես ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի միջնորդագրին՝ այն կան պետք է բավարարվեր, կան մերժվեր: Վերաքննիչ դատարանը վերացրել է միջնորդագիրը բավարարելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, սակայն ինքը իր հերթին ըստ էության լուծում չի տվել գործին՝ չի մերժել ու չի էլ բավարարել միջնորդագիրը:

Այսինքն, ըստ բողոքի հեղինակի, դատարանների կողմից միջնորդագրին ըստ էության լուծում չի տրվել: Մա հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածներին, որոնց համաձայն՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ի վարչակազմի կողմից ներկայացված և Հանձնաժողովի հավանությունը ստացած միջնորդագրերը դատարանների կողմից պետք է լուծում ստանան՝ պետք է որոշում կայացվի միջնորդագիրը մերժելու կամ բավարարելու մասին:

Բողոքատուն գտնում է, որ վերաքննիչ դատարանը, փաստորեն, խուսափել է արդարադատություն իրականացնելուց՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Բողոք բերած անձը գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը դատախազ Ա.Ստեփանյանի կողմից չէր կարող բողոքարկվել վերաքննիչ դատարան:

Իր վերաքննիչ բողոքում դատախազը հիմնվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի (բողոք բերելու իրավունքը) և 381-րդ հոդվածի (վերաքննիչ բողոքը) վրա: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածում նշված սուբյեկտների կողմից վերաքննիչ բողոք կարող է բերվել առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ: Մինչդեռ Հ.Չալաբյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումն արդեն մտել էր ուժի մեջ, և նա արդեն ազատ էր արձակվել: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածում վերաքննիչ բողոք բերող սուբյեկտների թվում դատախազը նշված չէ: Որպես բողոք բերող սուբյեկտներ են նշվում մեղադրողը և վերադաս դատախազը, սակայն դատախազ Ա.Ստեփանյանն այս գործում մեղադրող կամ վերադաս դատախազ չի հանդիսանում:

Բողոք բերած անձը գտնում է, որ բողոքը բերվել է այնպիսի որոշման դեմ, որը վերաքննիչ դատարան բողոքարկման ենթակա չէ: Մրանով ինչպես բողոք բերողը, այնպես էլ այն քննող դատարանը խախտել են ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի վերը հիշատակված պահանջը:

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն այն մասին, որ գնահատման է ենթակա յուրաքանչյուր ապացույց, չի գնահատել գործում եղած բոլոր այն ապացույցները, որոնք վկայել են այն մասին, որ ինքը ուղղվել է, պատրաստակամություն է ունեցել վճարելու 45 հազար ՀՀ դրամը, և չվճարելը պայմանավորված է եղել նրանով, որ դատավճիռը այդ մասով ներկայացված չի եղել կատարման, և նա հնարավորություն չի ունեցել առնչվելու այն անձի հետ, ում պետք է վճարի գումարը: Այդպիսի գնահատման չարժանացած ապացույցներ են, մասնավորապես, քրեակատարողական հիմնարկի ներկայացուցչի բացատրություններն այն մասին, որ ինքը ցանկացել է վճարել նշված գումարը, սակայն կատարողական թերթի բացակայության պատճառով չի կարողացել անել այդ, դատապարտյալի անձնական գործի նյութերը, որոնցից երևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացված չի եղել, վերաքննիչ դատարանում իր կողմից տրված բացատրությունները, որոն-

ցում նա պնդել է, որ պատրաստ է ցանկացած ժամանակ, այդ թվում՝ հենց նույն այդ պահին կատարելու համապարտության կարգով իր վրա դատավճռով դրված գումարային պարտականությունը:

Ըստ բողոքի հեղինակի՝ գնահատման չարժանացած ապացույցներ են նաև դատապարտյալ Հ.Չալաբյանի անձնական գործում գտնվող՝ 2003 թվականի մայիսի 15-ի, 2003 թվականի սեպտեմբերի 26-ի, 2006 թվականի հունիսի 29-ի, 2006 թվականի օգոստոսի 30-ի, 2006 թվականի դեկտեմբերի 5-ի և 2007 թվականի մարտի 26-ի բնութագրերը, որոնցում դատապարտյալը բնութագրվում է միանշանակ դրական, 2004 թվականի ապրիլի 6-ի և 2006 թվականի հունիսի 28-ի վարքի գնահատման թերթիկները, որոնցում նույնպես առկա են միայն դրական գնահատականներ, խրախուսելու մասին 2006 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 74 որոշումը: Փոխարենը դատարանը գնահատել է միայն 2001 թվականի բացասական բնութագիրը: Բողոք բերած անձը գտնում է, որ սրանով վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով իր վրա դրված՝ գործի բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման պարտականությունը, ինչը հանգեցրել է արդարացի քննության սկզբունքի խախտմանը: Եթե վերաքննիչ դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այս ապացույցները գնահատել մյուս ապացույցների հետ համակցության մեջ, ապա կարող էր համոզվել, որ 2001 թվականին իրեն տրված մասամբ բացասական բնութագիրը և դրան հաջորդող միանշանակ դրական բնութագրերը, տույժերի բացակայությունը, խրախուսանքը հենց ուղղման մասին են վկայում:

Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանը խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 127-րդ հոդվածների վերը նշված պահանջները, դրանով իսկ թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ. խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքները, ինչը խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը և ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Բողոքի հեղինակը գտնում է, որ նշված հանգամանքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին և 406-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան, վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Վերը նշված նկատառումներով խնդրվում է բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշմանը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

3.1. Դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորությունը և մասնավորապես՝ դատախազի կողմից նման բողոք բերելու իրավունքը.

Վճռաբեկ բողոք բերած անձն այս առումով Վճռաբեկ դատարանի առջև ըստ էության բարձրացրել է հետևյալ հարցերը. ա) արդյոք դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա՞ է բողոքարկման վերաքննիչ դատարան, և բ) եթե՝ ենթակա է, ապա արդյոք տվյալ գործով վերաքննիչ բողոք բերած անձը՝ դատախազ Ա.Ստեփանյանը, իրավասու՞ էր վերաքննիչ բողոք բերել:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի՝ վերջնական որոշում է քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթը սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի՝ օրենսգրքի 46-րդ գլխի («Վերաքննիչ բողոք») կանոններով բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Իսկ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Դատարանը գտնում է, որ անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի իմաստով վերջնական որոշում է, քանի որ գործը՝ անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, լուծում է ըստ էության:

Հետևաբար դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա էր բողոքարկման վերաքննիչ դատարան:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ դատապարտյալ Հ.Չալաբյանն ազատ է արձակվել դատավճռի հրապարակման պահին, ուստի Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահին, հետևաբար այն ենթակա չէր վերաքննիչ բողոքարկման: Ի հաստատումը ներկայացված դիրքորոշման՝ բողոք բերած անձը վկայակոչել է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 113-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ «Դատապարտյալը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվում է համապատասխան փաստաթղթերը ստանալու օրը, իսկ եթե այդ փաստաթղթերը ստացվում են աշխատանքային օրվա ավարտից հետո՝ հաջորդ օրվա առավոտյան»:

Դատարանը գտնում է, որ նշված փաստարկն անհիմն է, քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատավճռի կամ որոշման բողոքարկումը կասեցնում է դատավճռի կամ որոշման՝ օրինական ուժի մեջ մտնելը: Իսկ դատական ակտի հրապարակումից անմիջապես հետո անազատության մեջ պահվող անձի ազատ արձակումը պայմանավորված է ոչ թե տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքով, այլ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, ինչպես նաև անձի ազատության կանխավարկածով:

Ինչ վերաբերում է տվյալ գործով վերաքննիչ բողոք բերելու դատախազի իրավունքին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող գործով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը չի սահմանափակվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածով թվարկվածներով: Զրեական դատավարության մասնակիցներին վերաքննիչ բողոք բերելու իրավունք կարող է վերապահվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ դրույթներով ևս:

Այսպես, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները»:

Դատարանի վերջնական որոշումները բողոքարկելու դատախազի լիազորությունը մեկնաբանելով դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը դատախազի պարտադիր մասնակցության դրույթի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք դատախազն ունի:

Հետևաբար՝ դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը դատախազ Ա.Ստեփանյանի կողմից կարող էր բողոքարկվել վերաքննիչ դատարան:

3.2. Դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը քննելիս վերաքննիչ դատարանի իրավասության շրջանակը.

Վճռաբեկ բողոք բերած անձն այս առումով Վճռաբեկ դատարանի առջև ըստ էության բարձրացրել է նաև հետևյալ հարցերը. ա) արդյո՞ք վերաքննիչ դատարանը, քննելով դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը, կարող էր սահմանափակվել միայն նշված որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ, թե պարտավոր էր ըստ էության լուծում տալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցին, և բ) գործի քննության արդյունքում վերաքննիչ դատարանն իրավունք ունե՞ր արդյոք կայացնելու որոշում Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը վերացնելու և դատապարտյալ Հ.Չալաբյանին ազատագրկման ձևով հետագա պատիժը կրելու համար համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին, թե չուներ:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

Այս իրավադրույթը սահմանում է վերաքննության կարգով դատական ստուգման առարկան: Այն ներառում է ոչ միայն նյութական օրենքի կիրառման ճշտությունը և դատավարական օրենքի պահպանումը, այլև գործի փաստական հանգամանքների բացահայտման ճշտությունը:

Բացի այդ, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող եզրափակիչ որոշումների սպառնիչ ցանկը, որ սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով, չի ներառում գործը առաջին ատյանի դատարան ուղարկելը:

Հետևաբար՝ վերաքննիչ դատարանը գործը քննում է ըստ էության և պարտավոր է ըստ էության լուծում տալ տվյալ վարույթի հարուցման հիմք հանդիսացած հար-

ցին, տվյալ դեպքում՝ դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի՝

«Գործի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը թողնում է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման.

2) բեկանում է առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը և կայացնում է արդարացման դատավճիռ կամ կարճում է գործով վարույթը և դադարեցնում՝ քրեական հետապնդումը.

3) բեկանում է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը և կայացնում է մեղադրական դատավճիռ.

4) փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը.

5) բեկանում է դատավճիռը կամ որոշումը և, սույն օրենսգրքի 311 հոդվածի հիմքերով, գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության»:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝

«Եթե պատժի չկրած մասի ընթացքում դատապարտյալը՝

1) չարամտորեն խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, ապա դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին.

2) կատարում է անգզույշ հանցանք, ապա պայմանական վաղաժամկետ ազատումը պահպանելու կամ վերացնելու հարցը լուծում է դատարանը.

3) կատարում է դիտավորյալ հանցանք, ապա դատարանը նրա նկատմամբ պատիժ է նշանակում սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում, երբ կատարվել է անգզույշ հանցանք և դատարանը վերացնում է պայմանական վաղաժամկետ ազատումը»:

Տվյալ գործով վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել «Դատապարտյալ Հրաչ Չալաբի Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնել և դատապարտյալ Հրաչ Չալաբի Չալաբյանին վերադարձնել ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկ՝ ազատագրկման ձևով հետագա պատիժը կրելու համար»: Ընդ որում, գործի նյութերից երևում է, որ դատապարտյալ Հ.Չալաբյանը պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց չի խուսափել, նոր հանցագործություն չի կատարել:

Այսինքն՝ սույն գործով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով չնախատեսված որոշում և օրենքով սահմանված հիմքերի բացակայության պայմաններում փաստորեն կիրառել է Հ.Չալաբյանի պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված): Մինչդեռ այդ ինստիտուտը կարող էր կիրառվել բացառապես դատապարտյալ Հ.Չալաբյանի ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում:

Անգամ եթե ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասում օգտագործված «վերացնել» բառը տառացի նշանակությամբ մեկնաբանելով՝ այն հասկանանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ, 3-

րոյ և 5-րդ կետերով օգտագործված «բեկանել» բառի իմաստով, ապա, միևնույն է, տվյալ գործով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշումը չի բխի օրենքի պահանջներից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որոշումները կարող են կայացվել միայն այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքարկման առարկա է հանդիսացել մեղադրական կամ արդարացման դատավճիռը, այլ ոչ թե որոշումը, ինչպես տվյալ գործով: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա դատավճռի կամ որոշման բեկանումը պետք է զուգակցվի գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետ, ինչը քննության առարկա գործով բացակայում է:

Հետևաբար՝ դատապարտյալ Հ.Չալաբյանին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը ըստ էության քննության չառնելով և դրան ըստ էության լուծում չտալով, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով չնախատեսված որոշում կայացնելով՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը թույլ է տվել օրինականության սկզբունքի խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված), որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի և 398-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեադատավարական օրենքի էական խախտում է և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշման բեկանման հիմք:

3.3. Դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը.

Բողոք բերած անձը Վճռաբեկ դատարանից խնդրել է բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից 2007 թվականի հունիսի 14-ին կայացված որոշումը և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշմանը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Ազատագրման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը»:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի (2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2006 թվականի փետրվարի 4-ը գործողության մեջ եղած խմբագրությամբ)՝

«Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը.

առանձնապես ծանր հանցագործության համար, ինչպես նաև նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձի (եթե պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվել է սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված հիմքերով) նկատմամբ նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը»:

Համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում չի կիրառվում, երբ հանցագործության կատարմամբ մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ առաջացրել է մարդու մահ, և դատապարտյալը ամբողջությամբ չի հարթել տուժողի պատճառված վնասը»:

Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատում և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կիրառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ Հ.Չալաբյանի նկատմամբ հետադարձ ուժով ենթակա է կիրառման 2003 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2006թ. փետրվարի 4-ը գործողության մեջ եղած քրեական օրենքով («միջանկ-

յալ քրեական օրենք») սահմանված իրավանորմը, որն ամրագրում էր առանձնապես ծանր հանցագործություն կատարած դատապարտյալներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար փաստացի կրման ենթակա պատժի մասը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ):

Գործի նյութերից երևում է, որ դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդություն ներկայացնելու օրը նա կրել էր նշանակված պատժի օրենքով սահմանված մասը՝ երկու երրորդը:

Միևնույն ժամանակ պահպանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածներով սահմանված՝ դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդագիր ներկայացնելու դատավարական կարգը. միջնորդագիրն իրավասու դատարան է ներկայացվել միայն այն բանից հետո, երբ ստացվել է համապատասխան անկախ հանձնաժողովի հավանությունը:

2007 թվականի ապրիլի 23-ին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը, դատական նիստում «Կոչ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագրի հիման վրա քննարկելով դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, հանգել է հետևության, որ դատապարտյալ Հ.Չալաբյանը ապացուցել է իր ուղղված լինելը, նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի և բավարարել է միջնորդությունը: Այդ որոշումը դատարանը հիմնավորել է հետևյալ հանգամանքներով. պատիժը կրելու ընթացքում Հ.Չալաբյանը բնութագրվել է դրական, կարգապահական տույժի չի ենթարկվել, մեկ անգամ խրախուսվել է, կատարված հանցանքի համար գոջում է: Դատարանը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ բավարարված քաղաքացիական հայցով Հ.Չալաբյանի՝ համապարտությամբ ունեցած 45 հազար ՀՀ դրամի պարտավորությունը չկատարելու պատճառը կատարողական թերթի բացակայությունն է:

2007 թվականի հունիսի 14-ին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, դատական նիստում քննության առնելով Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու միջնորդությունը բավարարելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ դատախազի բերած վերաքննիչ բողոքը, գտել է, որ առաջին ատյանի դատարանը ըստ էության չի գնահատել դատապարտյալի անձը, մասնավորապես այն, որ Հ.Չալաբյանը 2001 թվականին քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից բնութագրվել է նաև բացասաբար: Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության, ավագակության և այլ հանցագործությունների համար դատապարտված անձի՝ պատիժը կրելու ընթացքում ընդամենը մեկ անգամ խրախուսվելը դեռևս բավարար չէ համարելու, որ դատապարտյալը հաստատապես ուղղվել է և նշանակված պատիժը լրիվությամբ կրելու կարիք չունի: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ դատապարտյալ Հ.Չալաբյանը տուժողին պատճառված 45 հազար ՀՀ դրամ վնասը անհիմն պատժառաքանությամբ չի հարթել, ինչը, ըստ վերաքննիչ դատարանի, առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել, մինչդեռ այն վկայում է Հ.Չալաբյանի՝ ըստ էության չզոջալու և ուղղման ճանապարհին կանգնած չլինելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քրեական վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները անհիմն են, չեն բխում գործի նյութերից և չէին կարող հանգեցնել Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշման փոփոխման:

Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մի քանի, այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձի՝ պատիժը կրելու ընթացքում ընդամենը մեկ անգամ խրախուսվելը դեռևս բավարար չէ համարելու, որ դատապարտյալը հաստատապես ուղղվել է և նշանակված պատիժը լրիվությամբ կրելու կարիք չունի: Այլ հանգամանքների համակցության մեջ մեկ անգամ խրախուսվելու հանգամանքը կարող է վկայել անգամ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձի ուղղված լինելու մասին: Տվյալ գործով նման հանգամանքների համակցությունն առկա է: Այն կազմում են դատապարտյալի անձնական գործում առկա 2003 թվականի մայիսի 15-ի, 2006 թվականի հունիսի 29-ի, 2006 թվականի օգոստոսի 30-ի, 2006 թվականի դեկտեմբերի 5-ի և 2007 թվականի մարտի 26-ի դրական բնութագրերը, 2004 թվականի ապրիլի 6-ի և 2006 թվականի հունիսի 28-ի վարքի դրական գնահատման թերթիկները, ինչպես նաև Հ.Չալաբյանի՝ կարգապահական տույժի ենթարկված չլինելու փաստը:

Ներկայացված նյութերով հիմնավորված չի կարող համարվել վերաքննիչ դատարանի նաև այն դիրքորոշումը, որ Հ.Չալաբյանը տուժողին պատճառված 45 հազար ՀՀ դրամ վնասը չի հարթել անհիմն պատճառաբանությամբ: Հակառակ նման պնդման՝ գործի նյութերից երևում է, որ այս հանգամանքն առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի է առնվել և արժանացել է ճիշտ գնահատականի: Մասնավորապես, առաջին ատյանի դատարանն արդարացիորեն նշել է, որ 45 հազար ՀՀ դրամի պարտավորությունը Հ.Չալաբյանի կողմից չկատարելու պատճառը կատարողական թերթի բացակայությունն է: Դա հաստատվում է հենց վերաքննիչ դատարանի դատական նիստի արձանագրությամբ (գ./թ. 36), որտեղ արձանագրված է Հ.Չալաբյանի հայտարարությունն առ այն, որ ինքը չգիտի, թե կոնկրետ ում պետք է վճարի այդ գումարը, և որ պատրաստ է անմիջապես վճարել այն: Այսպիսով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արգելող նորմը տվյալ գործով ենթակա չէ կիրառման, քանի որ ամբաստանյալ Հ.Չալաբյանը չի ունեցել վնասը ամբողջությամբ հարթելու իրական հնարավորություն:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Չալաբյանի գործով Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը կայացվել է դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու՝ օրենքով սահմանված բոլոր պայմանների պահպանմամբ:

Հետևաբար՝ դատապարտյալ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումն օրինական է, հիմնավորված է գործն ըստ էության ճիշտ լուծող: Մինչդեռ Հ.Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնելու, նրան համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշումն օրինական է հիմնավորված չէ:

Վերը նշված հիմնավորումները հիմք են Հ.Չալաբյանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշումը բեկանելու և Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշմանն օրինական ուժ տալու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում քննարկվող հարցերով, կապված պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորության, բողոքը քննելիս վերաքննիչ դատարանի

րանի իրավասության հետ, առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Բեկանել դատապարտյալ Հրաչ Չալաբի Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշումը վերացնելու և նրան համապատասխան քրեակատարողական հիմնարկ վերադարձնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի որոշումը, և օրինական ուժ տալ դատապարտյալ Հրաչ Չալաբի Չալաբյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 23-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-115/07

ՀՀ քրեական գործերով
վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ թիվ 29100407
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Կ.Ղազարյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար Բ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
դատախազներ Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆԻ
Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2007թվականի հուլիսի 13-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը մեղադրյալ Տարոն Ռազմիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տ.Հակոբյանին կալանքից գրավի կիրառմամբ ազատելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմնի կողմից 2007 թվականի փետրվարի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ այն փաստի առթիվ, որ 2007 թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 05-ի սահմաններում, Տարոն Ռազմիկի Հակոբյանը դուրսավառ հեղուկի օգտագործմամբ հրկիզման եղանակով դիտավորությամբ ոչնչացրել և վնասել է Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհի 10-րդ կիլոմետրին հարող Աղձք գյուղի տարածքում տեղակայված և Վարթես Հագոփյանին պատկանող «Պանդոկ» ռեստորանային համալիրի երկու շենքերը՝ իրենց

հարմարություններով և կահավորված գույքով, ինչպես նաև առանձին կառույց աշխատանքային գրասենյակը՝ տուժողին պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 42 միլիոն դրամի գույքային վնաս:

Տ.Հակոբյանը 2007 թվականի փետրվարի 6-ին ձերբակալվել է, և 2007 թվականի փետրվարի 9-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ բավարարվել է Արագածոտնի մարզային քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Գ.Առաքելյանի հարուցած միջնորդությունը, և Տ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով՝ մինչև 2007 թվականի ապրիլի 6-ը:

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմամբ բավարարվել է ՀԿԳ ավագ քննիչ Գ.Առաքելյանի հարուցած միջնորդությունը, և հաշվի առնելով Տ.Հակոբյանին վերագրվող արարքի բնույթը, հանրային վտանգավորությունը՝ Տ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով՝ նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու համար:

Այդ որոշման դեմ Տ.Հակոբյանի շահերի պաշտպան Զ.Փոստանջյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որում նա խնդրել է մեղադրյալի նկատմամբ կալանավորման փոխարեն ընտրել այլընտրանքային խափանման միջոց՝ կիրառել գրավ՝ պատճառաբանելով, որ քննիչի միջնորդությունը հաստատող ապացույցներ առաջին ատյանի դատարանին չեն ներկայացվել, դատաքննությանը չի մասնակցել պաշտպանը, դատարանը չի քննարկել կալանքը գրավով փոխարինելու նպատակահարմարության հարցը, կալանքի ժամկետը երկարացվել է՝ միայն հաշվի առնելով արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված մյուս հանգամանքները, որով խախտվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթները, համաձայն որոնց՝ գրավի կիրառումը չի կարող կախվածության մեջ դրվել հանցագործության ծանրության աստիճանից:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշմամբ Տ.Հակոբյանի շահերի պաշտպան Զ.Փոստանջյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրվող Տ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխվել է, և Տարոն Հակոբյանը կալանքից ազատվել է գրավի կիրառմամբ: Գրավի չափ է սահմանվել մեկ միլիոն դրամը:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը պատճառաբանվել է այն հանգամանքներով, որ Տ.Հակոբյանը նախկինում արատավորված և դատված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ունի մշտական բնակության վայր և աշխատանք, ամուսնացած է, խնամքին են երկու անչափահաս երեխաներ, ըստ ապրանքագիտական փորձաքննության եզրակացության՝ պատճառված նյութական վնասը կազմում է ոչ թե 42 միլիոն դրամ, այլ 16,5 միլիոն դրամ, վնասված օբյեկտի պատկանելության հարցը վիճարկվում է քաղաքացիական դատավարության կարգով, մեղադրյալը չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, Տ.Հակոբյանի հետագա պատշաճ վարքագիծը և գրավի կիրառման անհրաժեշտությունը երաշխավորում են գյուղապետարանն ու ավագանին, ինչպես նաև ՀՀ ԱԺ մի շարք պատ-

գամավորներ: Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ դատարանը հետևություն է արել, որ կոնկրետ դեպքում մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի է և բխում է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-ր կետի դրույթներից:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի մայիսի 22-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերով:

2. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտում. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավի կիրառումը թույլատրվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար կալանավորված մեղադրյալների համար, մինչդեռ քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով Տ.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համարվում է ծանր հանցագործություն:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը հիմնվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վրա: Մինչդեռ բողոքի հեղինակի կարծիքով՝ Կոնվենցիայի վերլուծությունը վերաքննիչ դատարանին նման հետևության հանգեցրելու հնարավորություն չի ընձեռնում:

Բողոք բերած անձը մատնանշում է, որ վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ մեղադրյալ Տ.Հակոբյանը թշնամական հարաբերությունների մեջ է տուժող Վ.Հագովյանի հետ, և բավարարված չլինելով համապատասխան գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատման վերաբերյալ հարցի քաղաքացիաիրավական լուծմամբ (ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 7-ին օրինական ուժի մեջ մտած վճռով, որը ուժի մեջ է թողնվել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2006 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ՝ նշված շինությունները սեփականության իրավունքով պատկանում են Վ.Հագովյանին)՝ դիտավորությամբ հրկիզել է այն, իսկ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, չի զոջացել կատարածի համար, ավելին՝ օգնության եկած անձանց թույլ չի տվել հանգցնել հրդեհը և նախաքննության ընթացքում տուժողին պատճառված վնասը հատուցելու փորձ չի արել, և այդ կապակցությամբ միմյանց միջև հաստատված թշնամական հարաբերություններից ելնելով ու գտնվելով ազատության մեջ, կարող է կատարել այլ ծանր հանցագործություն:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը եզրահանգում է, որ նախաքննության մարմնի նման հիմնավորումը բխել է և պայմանավորված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջներից. Տ.Հակոբյանը, ազատության մեջ գտնվելով, կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց և խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Բողոքատուն փաստարկում է նաև, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված է, որ Տ.Հակոբյանը զոջում է կատարվածի համար: Մինչդեռ նշված

եզրահանգումը գործի տվյալներով հիմնավորված չէ: Բողոք բերած անձի կարծիքով գործի տվյալներով հիմնավորված չէ վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ մեղադրյալը չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, և որ նրա հետագա պատշաճ վարքագիծը և գրավի կիրառման անհրաժեշտությունը երաշխավորում են Ուջանի գյուղապետարանը և ՀՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորներ: Պատգամավորների կամ գյուղապետարանի նման միջամտությունը բողոքի հեղինակը համարում է միջամտություն արդարադատության իրականացմանը:

Բացի այդ, վերաքննիչ դատարանի որոշման մեջ չի նշվել, թե մեղադրյալի հետագա պատշաճ վարքագիծը և գրավի կիրառման անհրաժեշտությունը ինչով են պայմանավորված:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը մեղադրյալ Ս.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Ս.Հակոբյանին կալանքից գրավի կիրառմամբ ազատելու մասին, և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմանը Ս.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի ժամկետը երկարացնելու մասին:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

3.1. Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հնարավորությունը.

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ «Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով»:

Այսպիսով, ՀՀ ներքին օրենսդրության հիման վրա՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար գրավի կիրառումն անթույլատրելի է, իսկ Ս.Հակոբյանին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության համար, որն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի՝ ծանր հանցագործություն է:

Մինչդեռ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը գտել է, որ «կոնկրետ դեպքով մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի է և բխում է մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից»:

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Մույն հոդվածի 1-ին մասի (c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշ-

տոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը հստակ արտահայտված է սույն գործին փաստական և իրավական առումներով նման Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության (Caballero v. THE UNITED KINGDOM, Application no. 32819/96, 08.02.2000թ.) և Էս Բի Սին ընդդեմ Միացյալ Թագավորության (S.B.C. v. THE UNITED KINGDOM, Application no. 39360/98, 19.06.2001թ.) գործերով վճիռներում: Դրանցում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ այն պայմաններում, երբ գրավի կիրառմամբ անձին ազատ արձակելու հարցի քննարկման հնարավորությունը որոշակի գործերով ի սկզբանե արգելված է օրենսդրությամբ, ապա մինչդատական վարույթի ժամանակ կալանքի հարցի լուծման նկատմամբ դատական վերահսկողության նման սահմանափակումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է (տե՛ս Կաբալերոյի գործով վճռի §§18-21-ը, Էս Բի Սիի գործով վճռի §22-ը և §23-ը):

Այսպիսով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը:

Ըստ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հետևաբար՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմը ՀՀ իրավունքի բաղկացուցիչ մասն է, և ՀՀ իրավասու դատարանները, անկախ անձին մեղազորված հանցագործության ծանրության աստիճանից, լիազորված են քննարկել մեղադրյալին գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հնարավորության հարցը:

3.2. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը.

Քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը բեկանելու մասին վճռաբեկ բողոքի պահանջը բավարարելու կամ մերժելու հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի հետևյալ հարցին. արդյո՞ք Տ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տարոն Հակոբյանին մեկ միլիոն դրամ գրավի կիրառմամբ կալանքից ազատելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումն օրինական է և հիմնավորված[՞], թե՞ ոչ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է ամհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն

ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»: Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի ճանաչել մեղադրյալին գրավով ազատելու հնարավորությունը և նշանակել գրավի գումարը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

- 1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.
- 2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.
- 3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին»:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ նիստին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին»:

Ինչպես երևում է վերը մեջբերված իրավադրույթներից՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցերում առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի իրավասությունն էականորեն տարբերվում է: Առաջին ատյանի դատարանը լիազորված է քննիչի կամ դատախազի միջնորդության հիման վրա ըստ էության լուծում տալ մեղադրյալին կալանավորելու (կալանքի ժամկետը երկարացնելու) կամ կալանքից ազատ արձակելու հարցին: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանը, ինչպես տվյալ միջնորդությունը քննարկելիս, այնպես էլ հետագայում, լիազորված է կալանքը փոխարինելու դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածին համապատասխան՝ վերաքննիչ դատարանն իրավասու է միայն իրականացնելու որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Ընդ որում, այս գործունեությունն իրականացնելիս ՀՀ քրեական վերաքննիչ դատարանն իրավասու չէ ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ բաժնի դրույթներով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի հիման վրա այդ բաժնի դրույթներով պետք է ղեկավարվել միայն առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումների՝ գործն ըստ էության լուծող, վարույթն սկսելը կամ դրա շարունակվելը բացառող որոշումների բողոքարկման և դրանց դատական վերանայման պարագայում: Իսկ մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով ստացել է առանձին օրենսդրական կանոնակարգում:

Հետևաբար՝ մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն իրականացնում է ոչ թե գործի ամբողջ ծավալով ըստ էության քննություն (վերաքննություն), այլ ավելի սահմանափակ գործունեություն՝ համապատասխան որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Մասնավորապես՝ եթե բողոքարկվել է մեղադրյալին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, վերաքննիչ դատարանն իրավասու չէ անդրադառնալ կալանքը գրավով փոխարինելու հարցին: Մինչդատական վարույթի ընթացքում առաջին ատյանի դատարանի կայացրած՝ անձի կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշման բողոքարկման դեպքում կալանքը գրավով փոխարինելու հարցի լուծման լիազորությամբ օրենսդիրը վերաքննիչ դատարանին չի օժտել: Օրենքի այս մեկնաբանությունը հիմնված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի վրա, որը սահմանում է քննարկվող գործերով դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումների սպառնիչ ցանկը, և այն չի ներառում ստորադաս դատարանի որոշման փոփոխումը և ստորադաս դատարանի ընտրած խափանման միջոց կալանքի փոխարեն գրավի կիրառումը:

Այսինքն՝ օրենսդիրն անձին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման՝ վերադատության կարգով դատական ստուգման առարկայի մեջ գրավի հարցի լուծումը չի ներառել: Փոխարենը, այդ դեպքերում պաշտպանության կողմն ազատ է ցանկացած պահի կալանավորված անձին գրավով ազատելու (կալանքը գրավով փոխարինելու) միջնորդություն հարուցել առաջին ատյանի դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս), քանի որ գրավը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս):

Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ ո՛չ մեղադրյալ Ս.Հակոբյանը և ո՛չ էլ նրա պաշտպանն առաջին ատյանի դատարանին չեն դիմել մեղադրյալին կալանքից գրավով ազատելու միջնորդությամբ, այլ նույն պահանջով բողոք են ներկայացրել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան:

Հետևաբար՝ Ս.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու որոշումը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը կայացրել է այն պայմաններում, երբ օրենքով լիազորված չէր նման որոշում կայացնելու: Ուստի դրանով վերաքննիչ դատարանը թույլ է տվել օրինականության սկզբունքի խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված), ինչը քրեատավարական օրենքի

էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ) և որոշումը բեկանելու հիմք:

Ինչ վերաբերում է մեղադրյալ Ս.Հակոբյանի կալանքի ժամկետը երկարացնելու օրինականությանը և հիմնավորվածությանը, ապա այդ հարցը վերաքննիչ դատարան ներկայացված բողոքի պահանջի առարկա չի հանդիսացել, հետևաբար՝ չի վիճարկվել, այն դուրս է մտնում վճռաբեկ դատարանում քննարկվող գործի քննության սահմաններից:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ դատարանը գտավ, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել և օրինական ուժ տալ Ս.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմանը:

Այդ պայմաններում մեղադրյալ Ս.Հակոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը ենթակա է վերացման, իսկ որպես գրավ մուծված մեկ միլիոն ՀՀ դրամը ենթակա է վերադարձման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ խափանման միջոց գրավի կիրառման հարցով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերը շարադրված հիմնավորումներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրվող Տարոն Ռ-ազմիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տարոն Հակոբյանին 1 միլիոն դրամ գրավի կիրառմամբ կալանքից ազատելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը, և օրինական ուժ տալ Ս.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-130/07

Լոռու մարզի առաջին ատյանի
դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Մ.Հարությունյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻԲՈՍՅԱՆԻ**
դատախազներ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**
Լ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2007 թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Արամ Յուրիկի Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով 2000 թվականի մարտի 9-ին քրեական գործ է հարուցվել Արամ Ալեքսանյանի կողմից յուրացման միջոցով իրեն վստահված 480.377 ՀՀ դրամ արժեքով ավտոմեքենայի հափշտակության համար:

Արամ Յուրիկի Ալեքսանյանը 2000 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով: 2000 թվականի մայիսի 3-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը: 2000 թվականի մայիսի 10-ին հայտարարվել է հետախուզում, և գործով վարույթը կասեցվել է: 2004 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ Ա.Ալեքսանյանին մեղսագրված արարքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին:

2006 թվականի հուլիսի 17-ին Ղազախստանի Հանրապետության Մանգիստաուսկի մարզի ՆԳ դեպարտամենտից հաղորդում է ստացվել, որ հետախուզման

մեջ գտնվող Արամ Ալեքսանյանը հայտնաբերվել և ձերբակալվել է: Ա.Ալեքսանյանը 2006 թվականի հուլիսի 19-ին ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը 25.08.2006 թվականին բավարարել է հետախուզման մեջ գտնվող Ա.Ալեքսանյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը, և 2006 թվականի հոկտեմբերի 20-ին Ա.Ալեքսանյանը հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը: Նույն օրվա որոշմամբ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Նախաքննության ընթացքում 2006 թվականի հոկտեմբերի 31-ին Արամ Ալեքսանյանին նախկինում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2006 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Արամ Ալեքսանյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռով Արամ Յուրիկի Ալեքսանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման 4/չորս/ տարի ժամկետով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2/երկու/տարի ժամկետով: Նրա վարքի վերահսկողությունը դրվել է ՀՀ ԱՆ այլընտրանքային պատիժների կատարման բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արամ Ալեքսանյանը 1994 թվականի հուլիսից աշխատել է Վանաձորի թիվ 2981 ավտոշարասյունում որպես վարորդ: Նրան ամրացվել է 1986 թվականի արտադրության «Կամազ-53212» մակնիշի 09-00 ԱԴ-Օ պ/հ բեռնատար ավտոմեքենան: 1994 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ տրանսպորտի նախարարության կողմից կազմված ավտոշարասյան կազմում Ա.Ալեքսանյանը մեկնել է ՌԴ Վոլգոգրադ քաղաք՝ Հայաստան թուրք տեղափոխելու համար, սակայն չհասած Վոլգոգրադ քաղաք, ճանապարհին դուրս է եկել ավտոշարասյունից, դիմել է փախուստի և ավտոմեքենան չի վերադարձրել՝ այն տնօրինելով իր հայեցողությամբ: 1998 թվականի մարտ ամսին Ա. Ալեքսանյանը հարազատի հուղարկավորության առիթով վերադարձել է Հայաստան, հանդիպել է ավտոշարասյան նախկին տնօրեն Հ. Հովհիվյանին, պարտավորվել է շուտափույթ վերադարձնել ավտոմեքենան, նույնիսկ 300 ԱՄՆ դոլար ճանապարհաձախս է վերցրել, սակայն չի կատարել իր պարտավորությունը և իրեն ամրացված 1986 թվականի արտադրության «Կամազ-53212» մակնիշի 09-00 ԱԴ-Օ պ/հ 560.000 ՀՀ դրամ արժեքով բեռնատար ավտոմեքենան յուրացնելու միջոցով հափշտակել է:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

2006 թվականի հուլիսի 17-ին Արամ Ալեքսանյանը հայտնաբերվել է Ղազախստանի Հանրապետության Մանգիստաուսկի մարզի իրավապահ մարմինների կողմից: Ա. Ալեքսանյանին տեղափոխելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից բավարարվել է, և 2006 թվականի հոկտեմբերի 20-ին նա տեղափոխվել է Հայաստան: Ընդ որում, վերջինիս տեղափոխման վերաբերյալ որոշման մեջ նշվել է, որ նա հետախուզվում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքը կատարելու համար, և այդ արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով էլ տրվել է Ղազախստանի Հանրապետության դատախազության համաձայնությունը:

Սակայն Արամ Ալեքսանյանի վերաբերյալ քրեական գործի վերսկսված նախաքննության ընթացքում վերջինիս մեղսագրվող արարքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի պահանջն այն մասին, որ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել: Փաստորեն Արամ Ալեքսանյանը ենթարկվել է քրեական պատասխանատվության այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել, այսինքն՝ խախտվել են ինչպես «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: 2006 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նրա վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Վերջինս նույնպես, անտեսելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Միսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռով Արամ Յուրիկի Ալեքսանյանին դատապարտել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Միաժամանակ բողոքում նշվում է, որ Արամ Ալեքսանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով վերաորակելու դեպքում առաջանում է վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու անհրաժեշտություն, որովհետև ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է 1994 թվականին, հանդիսանում է միջին ծանրության հանցանք, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, եթե միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է 5 տարի ժամանակ, անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով:

Բողոքում խնդրվում է Արամ Յուրիկի Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճիռը բեկանել և փոփոխել. Արամ Յուրիկի Ալեքսանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և նրա նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել՝ վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթն իրականացվում է այդ օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Նույն օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Նշված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով:

«Զաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

Համանման դրույթ է պարունակում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Գործի նյութերից երևում է, որ 2003 թվականի մարտի 9-ին քրեական գործ է հարուցվել 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով (յուրացնելու, վատնելու կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու միջոցով խոշոր չափերով գույքի հափշտակություն), իսկ 2004 թվականի հոկտեմբերի 15-ին նրա արարքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին (յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը խոշոր չափերով): Դազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը բավարարել է նշված հոդվածով հետախուզվող Արամ Ալեքսանյանին Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ միջնորդությունը: Սակայն Հայաստանի Հանրապետություն տեղափոխելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսելուց հետո 2006 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ փոփոխվել է Արամ Ալեքսանյանի մեղադրանքը, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունն առանձնապես խոշոր չափերով), որով նա հանձնված չի եղել, և Ա. Ալեքսանյանը քրեական պատասխանատվության և պատժի է ենթարկվել այդ հոդվածով: Գրանով խախտվել են 1993 թվականի հունվարի 22-ի Սինսկի կոմվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների պահանջները, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հիմք են Արամ Ալեքսանյանի վերաբերյալ դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով բեկանելու և փոփոխելու, այն է՝ նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակելու համար, քանի որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են նման հնարավորություն, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Բացի այդ, գործի նյութերից երևում է, որ Ա. Ալեքսանյանը հանցանքը կատարել է 1994 թվականի սեպտեմբերի 16-ին, իսկ դատավարությունը է 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռով: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործությունը միջին ծանրության հանցագործություն է: ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է հինգ տարի: Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքն ավարտված համարելու պահից: Վաղեմության ժամկետը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից և դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղակայանով ներկայանալու պահից: Ընդ

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

Ինչպես երևում է գործի նյութերից, 1994 թվականի սեպտեմբերին հանցանք կատարած և 2006 թվականի դեկտեմբերի 7-ին դատապարտված Ա. Ալեքսանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է 10 տարուց ավելի և վաղեմության ժամկետի ընթացքը նոր հանցագործությամբ ընդհատված չի եղել, այսինքն՝ անցել են վաղեմության ժամկետները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Հետևաբար Ա. Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով քրեական գործի վարույթը ենթակա է կարճման վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Արամ Յուրիկի Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճիռը բեկանել և փոփոխել: Արամ Ալեքսանյանի արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, քրեական գործի վարույթը կարճել վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ և նրա նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-132/07

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշում
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ս.Ղազարյան
դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Ս.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ**
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
դատախազներ **Ա.ԴԱՎԹՅԱՆԻ**
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մեղադրյալ **Ա.ՃՈՒՂՈՒՐՅԱՆԻ**
պաշտպան **Վ.ԳևորգՅԱՆԻ**

2007 թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ս. Սարգսյանի վճռաբեկ բողոքը Արամ Սեյրանի ճուղղությանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 351-րդ հոդվածով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժանմունքի քննիչ Արամ Սեյրանի ճուղղությանի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, պաշտոնեական կեղծիք կատարելու և անձին քրեական պատասխանատվությունից ազատելու փաստի առթիվ 19.04.2007 թվականին ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինակա- նության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունում ՀՀ քրեական օ- րենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 314-րդ հոդվածի 1-ին մասով և 351-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ, որը 20.04.2007 թվականին ընդունվել է Երևան քաղաքի դատախազության վարույթ:

2007 թվականի մայիսի 10-ին Արամ Սեյրանի Ճուղորդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 351-րդ հոդվածով:

2007 թվականի մայիսի 10-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին առյանի դատարան՝ Արամ Ճուղորդյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին առյանի դատարանի 2007 թվականի մայիսի 10-ի որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի դատախազության դատախազ Ս. Խաչատրյանի միջնորդությունը, և Արամ Սեյրանի Ճուղորդյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը 2 ամիս ժամանակով:

Որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Ա. Ճուղորդյանը:

Քննության առնելով բերված վերաքննիչ բողոքը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի մայիսի 23-ի որոշմամբ փոփոխել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին առյանի դատարանի 2007 թվականի մայիսի 10-ի որոշումը և Արամ Ճուղորդյանին կալանքից գրավով ազատելը ճանաչել է թույլատրելի՝ գրավի չափ սահմանելով 600.000 ՀՀ դրամ: Որպես գրավի գումար սահմանված 600.000 ՀՀ դրամը նույն օրը վճարվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դեպոզիտային հաշվին և Ա. Ճուղորդյանն ազատվել է կալանքից:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ. Սարգսյանը:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նախաքննության մարմնի կողմից Արամ Սեյրանի Ճուղորդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 351-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, աշխատելով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժանմունքում որպես քննիչ, հանդիսանալով պաշտոնատար անձ, Վարուժան Մելքոնյանի կողմից խարդախությամբ խոշոր չափերով գումարներ հափշտակելու փաստի առթիվ իր վարույթում քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում անձնական դրդումներով Վարուժան Մելքոնյանին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու նպատակով 2006 թվականի հոկտեմբեր ամսին քրեական գործում եղած մի շարք փաստաթղթերի բովանդակությունը ենթարկել է փոփոխության՝ դրանցում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելով Վ.Մելքոնյանի կողմից հանցագործությունների կատարման հանգամանքների, այդ թվում՝ կատարման ժամանակի և հափշտակված գումարի չափի վերաբերյալ, ինչպես նաև կազմել է կեղծ փաստաթղթեր: Կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը հիմք ընդունելով՝ Ա. Ճուղորդյանը 10.10.2006 թվականին որոշում է կայացրել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմությունն անցնելու հիմքով Վ. Մելքոնյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին, դրանով իսկ հանցագործությունների կատարման մեջ կասկածվող Վ. Մելքոնյանին ապօրինի ազատել է քրեական պատասխանատվությունից:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը նշել է, որ Ա. Ճուղուրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջներով, քրեական գործի կոնկրետ հանգամանքներով, նրա կողմից կատարված արարքի բնույթով, դրա հասարակական վտանգավորության աստիճանով և մեղադրյալի անձը բնութագրող տվյալներով:

Վ. Մելքոնյանի կողմից խարդախություն կատարելու փաստի և Ա. Ճուղուրյանին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ բազմակողմանի և լրիվ նախաքննություն և պահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել հարցաքննություններ, առերեսումներ, այլ քննչական գործողություններ, պարզել Ա. Ճուղուրյանի կողմից Վ. Մելքոնյանի վրա հնարավոր ապօրինի ազդեցության փաստը, նրանց ցուցմունքներում առկա հակասությունները, ինչպես նաև ստանալ դատաձեռագրաբանական փորձաքննության եզրակացությունը:

Վերոգրյալը հիմք է տալիս ենթադրելու, որ Ա. Ճուղուրյանը, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում և դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով:

Ոստի բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 23-ի որոշումը և ուժի մեջ թողնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 10-ի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, այն է՝ բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է

թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով:

կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց:

խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Այս հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները:

Խափանման միջոց կիրառելու կարգին վերաբերող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությանը:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով մնան ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես

նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Ըստ նույն հոդվածի 5-րդ մասի՝ դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.

որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.

բողոքն առանց բավարարման թողնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ նիստին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին:

Ինչպես երևում է գործի նյութերից, առաջին ատյանի դատարանը 2007 թվականի մայիսի 10-ին քննության է առել Արամ Շուրոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատախազի միջոցառությունը և նկատի ունենալով մեղադրյալին վերագրվող արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հաշվի առնելով, որ նա, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել է կալանավորումը: Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում կալանավորման փոխարեն գրավ կիրառելու մասին դատախազի կամ պաշտպանության կողմի միջոցառություն չի հարուցվել և քննարկման առարկա չի դարձել: Իր նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին որոշումը համարելով անհիմն՝ Ա.Շուրոբյանը վերաքննիչ բողոքում խնդրել է ստուգել դրա հիմնավորվածությունը և վերանայել առաջին ատյանի դատարանի որոշումը: Վերաքննիչ դատարանի դատական նիստում ստուգվել է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու օրինականությունն ու հիմնավորվածությունը: Դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանը 2007 թվականի մայիսի 23-ի որոշմամբ փոփոխել է Արամ Շուրոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը և նրան կալանքից գրավով ազատելը ճանաչել է թույլատրելի: Մինչդեռ դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումների սպառնիչ ցանկը սահմանած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասը վերաքննիչ դատարանին նման իրավունք չի վերապահել: Հետևաբար՝ առաջին ատյանի դատարանի կողմից Ա.Շուրոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու որոշումը վերաքննիչ դատարանը կայացրել է այն պայմաններում, երբ օրենքով լիազորված չէր նման որոշում կայացնելու: Դրանով վերաքննիչ դատարանը թույլ է տվել ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի պահանջների, այնպես էլ օրինականության սկզբունքի խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված), ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ) և որոշումը բեկանելու հիմք: Այս հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի մոտեցումը հստակ արտահայտված է Տարոն Ռազմիկի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշման մեջ (կետ 3.2):

Բացի այդ, վերաքննիչ դատարանի որոշումը չի արտացոլում գործի հետագու-ված հանգամանքների և դրանց հիման վրա արված հետևությունների միջև փոխա-դարձ կապը:

Այսպես՝ վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է, որ «նախաքննության մարմինը առաջին ատյանի դատարանին մեղադրյալ Ա.Շուրուրյանի նկատմամբ որ-պես խափանման միջոց կալանավորումը կիրառելու անհրաժեշտությունը հիմնավո-րող պատճառաբանություն է ներկայացրել այն մասին, որ նա կարող է թաքնվել վա-րույթն իրականացնող մարմնից, սակայն այդ հանգամանքը հիմնավորող որևէ փաս-տական տվյալ չի ներկայացրել: Բացի այդ, մեղադրյալ Ա.Շուրուրյանի անձը հայտ-նի է, վերջինս ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, խնամքին ունի ան-չափահաս երեխա, ունի բարձրագույն կրթություն, նախկինում դատապարտված, ա-րատավորված չի եղել, տվել է խոստովանական ցուցմունքներ, օժանդակել է քննութ-յանը՝ գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու համար, կատարած արար-քի համար անկեղծորեն գոչում է»:

Ելնելով վերոգրյալից՝ վերաքննիչ դատարանը փոփոխել է առաջին ատյանի դատարանի որոշումը և Ա.Շուրուրյանին կալանքից գրավով ազատելը ճանաչել է թույլատրելի:

Վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությունից հետևում է, որ դատա-կան ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանը մի կողմից հիմնավորված չի հա-մարել Ա.Շուրուրյանի նկատմամբ կալանավորման կիրառման անհրաժեշտությունը, մյուս կողմից անտեսել է ինչպես այն հանգամանքը, որ գրավը կալանավորման աշ-լընտրանքային խափանման միջոց է և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստաց-վել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դա-տավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս), այնպես էլ ՀՀ քրեական դա-տավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ դատարանը գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը լուծում է կալա-նավորման մասին որոշումը կայացնելու հետ միաժամանակ, և կալանավորման փո-խարեն կիրառել է գրավ:

Փաստորեն Ա.Շուրուրյանի կալանավորման օրինականության և հիմնավոր-վածության դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանը կայացրել է չպատճառաբանված որոշում: Ուստի անհրաժեշտ է բեկանել մեղադրյալ Ա.Շուրուր-յանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննութ-յան:

Նոր քննությամբ անհրաժեշտ է, կալանավորման միջնորդության հիմնավոր-վածությունը հաստատող նյութերից ելնելով, ՀՀ քրեական դատավարության օ-րենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով դատական ստուգման ենթարկել Ա.Շուրուրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու վերաբեր-յալ որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և հանգել համապատաս-խան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվա-ծով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդ-վածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել մասնակիորեն: Արամ Մեյրանի ճողորյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 10-ի որոշումը փոփոխելու և մեղադրյալ Արամ ճողորյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-153/07

Արմավիրի մարզի առաջին ատյանի
դատարանի գործ թիվ 1- 214/ 2004թ
դատավճիռ կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Հ.Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՍԱՐՏԻԲՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
դատախազ **Ա.ԱՇՐԱՖՅԱՆԻ**

2007թվականի օգոստոսի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Ջհանգիրյանի վճռաբեկ բողոքը Գևորգ Լյովայի Միլիտոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

2000 թվականի ապրիլի 30-ին Արմավիր քաղաքի բնակիչ Սերյոժա Վարոսյանի բնակարանից կատարված գողության փաստի առթիվ 2000 թվականի մայիսի 1-ին հարուցվել է քրեական գործ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմինը 2000 թվականի մայիսի 19-ին որոշում է կայացրել Գևորգ Լևոնի Միլիտոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա 2000 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 12⁰⁰-ից 21⁰⁰-ն ընկած ժամանակահատվածում, տան պատուհանի ապակին հանելու միջոցով մուտք է գործել Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 5ա շենքի 11 բնակարանի բնակիչ Սերյոժա Վարոսյանի բնակարանը և գողացել 500.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա զարդեր:

Նախաքննության մարմնից թաքնվելու կապակցությամբ Գևորգ Միլիտոսյանի նկատմամբ 2000 թվականի մայիսի 19-ին հայտարարվել է հետախուզում, և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2000 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է մինչև Գ.Միլիտոսյանի հայտնաբերումը:

Դրանից հետո Ռ-Դ Տոլյատի քաղաքում կատարած հանցագործության համար Գ.Միլիտոսյանը 2000 թվականի հուլիսի 5-ին ձերբակալվել է, նույն թվականի նոյեմբերի 14-ին նա Տոլյատիի Կենտրոնական դատարանի դատավճռով Ռ-Դ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով:

Նշված պատիժն ամբողջությամբ կրելուց հետո՝ 2004 թվականի հուլիսի 2-ին, ֆեդերալ հետախուզման մեջ գտնվելու կապակցությամբ Գ.Միլիտոսյանն արգելանքի է վերցվել և 2004 թվականի օգոստոսի 12-ին տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն:

2004 թվականի օգոստոսի 13-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է, Գ.Միլիտոսյանին առաջադրված մեղադրանքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին՝ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ բնակարան ապօրինի մուտք գործելով խոշոր չափերի գողություն կատարելու համար:

Դրանից հետո՝ 2004 թվականի օգոստոսի 27-ին, Գ.Միլիտոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է՝ վերջինին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով՝ կրկին անգամ, բնակարան ապօրինի մուտք գործելով գույքի գողության և խոշոր չափերով գույքի գողության փորձի համար:

Նրա վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան: Դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Գ.Միլիտոսյանը մեղավոր է ճանաչվել նշված հոդվածներով և դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով՝ ազատազրկման 3 տարի ժամկետով՝ առանց տուգանքի, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով՝ ազատազրկման 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց տուգանքի: 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառմամբ նվազ խիստ պատիժն առավել խիստ պատժով կլանելու սկզբունքով Գ.Միլիտոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց տուգանքի, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցվել է Ռ-Դ Տոլյատի քաղաքի Կենտրոնական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 14-ի դատավճռով նշանակված ու ամբողջությամբ կրած պատիժը՝ 4 տարին, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում 6 ամիս ժամկետով՝ առանց տուգանքի:

Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ընդունվել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Գևորգ Լյովալի Միլիտոսյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա, 1996 թվականին Ռ-Դ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտված լինելով գույքի գաղտնի հափշտակության համար և դատվածությունը չմարված, կրկին անգամ, խոշոր չափի գույք հափշտակելու նպատակով 2000 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 21-ի սահմաններում, պատուհանի ապակին հանելով, ապօրինի մուտք է գործել Արմավիր քաղաքի Մայաթ-Նովա փողոցի 5ա շենքի 11 բնակարանի բնակիչ Մերյոժա Վարուսյանի բնակարանը և գաղտնի հափշտակել է զգալի չափի՝ 480.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա զարդեր, իսկ պայուսակի

մեջ լցված 110.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ իրերն իր կամքից անկախ պատճառներով չի կարողացել հասփշտակել՝ տան տերերի տուն վերադառնալու պատճառով:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը 2004 թվականի սեպտեմբերի 27-ին Գ.Մլիխտոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով մեղադրական դատավճիռ կայացնելիս Գ.Մլիխտոսյանի կողմից կատարված արարքներին տվել է քրեաիրավական ճիշտ գնահատական, սակայն անտեսել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ համաձայն դրույթ պարունակող 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ Գ.Մլիխտոսյանի հանձնման հարցը լուծելիս Ռուսաստանի դաշնության գլխավոր դատախազությանը հայտնվել է, որ Գ.Մլիխտոսյանին մեղադրանք է առաջադրվել 1961 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով, որով էլ ստացվել է հանձնող կողմի համաձայնությունը, և որն էլ համապատասխանում է 2003 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Փաստորեն Գ.Մլիխտոսյանն առանց Ռ-Դ համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի՝ մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որի համար նա չի հանձնվել:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել և Գ.Մլիխտոսյանի արարքը վերադրակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ մասերով՝ սահմանելով ազատազրկում 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց տուգանքի, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցել 2000 թվականի նոյեմբերի 14-ին Ռ-Դ Տոլյատի քաղաքի Կենտրոնական դատարանի դատավճռով նշանակված ու ամբողջությամբ կրած պատիժը՝ Գ.Մլիխտոսյանին դատապարտելով ազատազրկման 6 ամիս ժամանակով և նկատի ունենալով, որ այդ պատիժը Գ.Մլիխտոսյանն արդեն իսկ կրել է, նրան ազատել պատժի կրումից:

Բողոքում նշվել է նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտն էական նշանակություն կունենա քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի, այնպես էլ միջազգային նորմերի միատեսակ կիրառության համար:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի քրեական հետապնդման սահմանների խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Հասմիկ Կուրդիյանի, Սպարտակ Ալավերդյանի վերաբերյալ գործերով կայացված որոշումներում՝ արձանագրելով, որ միջազգային պայմանագրի և ՀՀ ներպետական օրենսդրության մի շարք նորմերի համաձայն՝ առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավա-

սու մարմնի համաձայնության քրեական հետապնդումը շարունակելու համար Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել (Հասմիկ Գուրգենի Կուրդինյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՎԲ-234/06 որոշում, կետ 4, Սպարտակ Ջանվելի Ալավերդյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ՎԲ-279/06 որոշում, կետ 4):

Սույն գործի նյութերից երևում է, որ Գևորգ Մլիխտոսյանը գողություն կատարելու համար նախաքննության մարմնի 2000 թվականի մայիսի 19-ի որոշմամբ ներգրավվել է որպես մեղադրյալ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բնակարան մուտք գործելու հատկանիշով:

ՌԴ Տոլյատի քաղաքում ձերբակալվելուց հետո Գևորգ Մլիխտոսյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու հարցը լուծելու համար ՌԴ գլխավոր դատախազությանը հայտնվել է, որ վերջինս մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բնակարան մուտք գործելով գողություն կատարելու համար: Այդ մեղադրանքով էլ ստացվել է ՌԴ գլխավոր դատախազության 2004 թվականի հունիսի 15-ի համաձայնությունը՝ Գևորգ Մլիխտոսյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

2004 թվականի օգոստոսի 12-ին Հայաստանի Հանրապետություն տեղափոխելուց հետո Գևորգ Մլիխտոսյանին առաջադրված մեղադրանքը համապատասխանեցվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքին, ապա մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել՝ կրկին անգամ, բնակարան ապօրինի մուտք գործելով գույքի գողության և խոշոր չափերով գույքի գողության փորձի համար:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Գևորգ Մլիխտոսյանը դատապարտվել է նշված հոդվածներով:

Այսինքն՝ բացի այն մեղադրանքից, որով նա 2004 թվականի հունիսի 15-ին հանձնվել էր Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ՝ գողություն՝ բնակարան ապօրինի մուտք գործելով), Գ.Մլիխտոսյանի մեղադրանքը լրացվել է, և վերջինս դատապարտվել է նաև խոշոր չափերով գույքի գողության փորձի և կրկին անգամ գողություն կատարելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետեր և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

Փաստորեն տվյալ դեպքում Գևորգ Մլիխտոսյանն առանց ՌԴ համապատասխան մարմինների համաձայնության ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի մինչև հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Սույն գործի քննության ընթացքում միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառումը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների խախտումները, որոնք ազդել են դատավճռի օրինականության վրա, նույն օրենսգրքի 406-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են հանդիսանում Գևորգ Մլիխտոսյանի վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանելու և այդ մասով գործի վարույթը կարճելու համար, իսկ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատավճռը պետք է թողնել անփոփոխ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գևորգ Լյովայի Սիլիտոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով բեկանել և այդ մասով գործի վարույթը կարճել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով 4 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկում նշանակելու, այն ՌԴ Տոլյատի քաղաքի Կենտրոնական դատարանի դատավճռով նշանակված և ամբողջությամբ կրած պատժի հետ համակցելու և հաշվակցելու մասով թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-184/07

ՀՀ քրեական վերաքննիչ դատարան
Գործ թիվ ՔԳՀ-102/07
որոշումը կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ռ.Ափինյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
դատախազ **Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ**
պաշտպան **Լ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**

2007թվականի հոկտեմբերի 10-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի բողոքը Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով և 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների համար մեղադրվող Ռաշիդ Աշոտի Խաչատրյանին Ռուսաստանի Դաշնությանը հանձնումը մերժելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. սեպտեմբերի 20-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Ռուսաստանի Դաշնության Օրենսդրոգի մարզի դատախազության կողմից 2004թ. հուլիսին ՌԴ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ է հարուցվել մի շարք քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների դրսևորած և 2004թ. հուլիսի 14-24-ը տևած զանգվածային անհնազանդության փաստի առթիվ: Այս գործով 2004թ. հուլիսի 30-ին ձերբակալվել և 2004թ. օգոստոսի 1-ին կալանավորվել է Ռաշիդ Աշոտի Խաչատրյանը: Քրեական հետապնդման մարմնի 2004թ. սեպտեմբերի 26-ի որոշմամբ կասկածյալ Ռ.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Ռ.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2004թ. սեպտեմբերի 26-ի որոշումը քրեական հետապնդման մարմնի 2007թ. մարտի 14-ի որոշմամբ վերացվել է:

Ռուսաստանի Դաշնության Օրենքորդի մարզի դատախազության քննիչի կողմից 2007թ. ապրիլի 27-ին որոշում է կայացվել Ռ.Խաչատրյանին Ռ-Դ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին և 321-րդ հոդվածի 3-րդ մասերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ այն բանի համար, որ նա 1996-2007թթ. ընթացքում Ռ-Դ Օրենքորդի մարզի տարածքում ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու նպատակով ստեղծել է հանցավոր համագործակցություն և ղեկավարել այն: Բացի այդ, Ռ.Խաչատրյանի նախաձեռնությամբ քրեակատարողական հիմնարկներում իրավիճակն ապակայունացնելու և հանցավոր միջավայրում իր «հեղինակությունը» հաստատելու նպատակով, ձևական առիթ ընդունելով թիվ Յուկ-25/4 քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոնում գնդապետ Պ.Սերկուլովի նշանակումը, 2004թ. հուլիսի 14-24-ն ընկած ժամանակահատվածում Օրենքորդի մարզի քրեակատարողական հիմնարկներում կազմակերպել է զանգվածային անհնազանդություններ, որոնք արտահայտվել են դատապարտյալների կողմից սնունդ ընդունելուց հրաժարվելու ձևով, որով խոչընդոտել է քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությունը:

2007թ. մայիսի 30-ին միջազգային հետախուզման մեջ գտնվող Ռ.Խաչատրյանի նկատմամբ Ռ-Դ դատարանի կողմից որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը:

2007թ. հուլիսի 16-ին հետախուզվող Ռ.Խաչատրյանը հայտնաբերվել է ՀՀ տարածքում և կալանավորվել:

2007թ. օգոստոսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Մ.Սարգսյանի կողմից բավարարվել է Ռ-Դ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով և 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների համար մեղադրվող Ռ. Խաչատրյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համար Ռ-Դ քրեական հետապնդման մարմիններին հանձնելու վերաբերյալ Ռ-Դ գլխավոր դատախազության միջնորդությունը:

Ռ.Խաչատրյանի պաշտպան Լ.Մահալյանը հանձնման մասին որոշումը բողոքարկել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարան և խնդրել նրան անհապաղ ազատել կալանքից՝ նշելով, որ Ռ.Խաչատրյանի հանձնման թույլտվությունը տրվել է ներպետական և միջազգային իրավական նորմերի խախտումներով:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ պաշտպանի բողոքը բավարարվել է և Ռ.Խաչատրյանի հանձնումը Ռ-Դ-ին մերժվել:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 2007թ. սեպտեմբերի 28-ին վճռաբեկ բողոք է բերվել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը՝ խնդրելով այն բեկանել:

2. Վճռաբեկ բողոքի հիմնավորումները.

Բողոք բերած անձը գտնում է, որ առանձնապես ծանր հանցագործությունների համար միջազգային հետախուզման մեջ գտնվող Ռ.Խաչատրյանին հանձնելու գործընթացը կատարվել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993թ. Միսկի Կոնվենցիայի պահանջների համաձայն և վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխան:

Բողոքի հեղինակը փաստարկում է, որ վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով 1993թ. Միսկի Կոնվենցիայի 57-րդ հոդվածը և ՀՀ քրեական դատավարության օ-

րենսգրքի 21-րդ հոդվածը, կարող էր մերժել միայն ՌԴ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածով Ռ.Խաչատրյանի հանձնման պահանջը, քանի որ պահանջը ստանալու պահին գործող ՀՀ օրենսդրությամբ Ռ.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում չէր կարող հարուցվել միայն ՌԴ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածով, իսկ ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածով քրեական հետապնդում հարուցելու որևէ խոչընդոտ ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ միջազգային պայմանագրով սահմանված չէ:

3. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993թ. Մինսկի Կոնվենցիային մասնակցող պետություններ են, և այդ կոնվենցիայից բխող փոխադարձ պարտավորությունները Հայաստանի Հանրապետության համար պարտադիր են: Ըստ այդ կոնվենցիայի 57-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պայմանավորվող կողմերը, սույն Կոնվենցիայով նախատեսված պայմաններին համապատասխան, պարտավորվում են պահանջի դեպքում միմյանց հանձնել իրենց տարածքում գտնվող անձանց՝ նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար»:

2007թ. օգոստոսի 3-ին ՌԴ գլխավոր դատախազությունը նշված կոնվենցիայի հիման վրա միջնորդել է ՀՀ գլխավոր դատախազությանը կալանավորելու և հանձնելու ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով և 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների համար մեղադրվող, ՌԴ քաղաքացի Ռաշիդ Աշոտի Խաչատրյանին: Հայաստանի Հանրապետությունն իրավասու է մերժել միջնորդությունը միայն ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՌԴ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար Ռ.Խաչատրյանի հանձնումը պետք է մերժել, քանի որ համաձայն Կոնվենցիայի 57-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ հանձնում չի կատարվում, եթե պահանջն ստանալու պահին հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրության համաձայն, քրեական հետապնդում չի կարող հարուցվել կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով կամ այլ օրինական հիմքով: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում»:

Ռ.Խաչատրյանի նկատմամբ ՌԴ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար 2004թ. սեպտեմբերի 26-ի որոշ-

մամբ քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո այն վերսկսվել է 2007թ. մարտի 14-ին՝ մոտ երկու և կես տարի հետո: Ուստի Հայաստանի Հանրապետության կողմից այդ մեղադրանքով Ռ.Խաչատրյանին հանձնելը կհակասի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքին, հետևաբար՝ նաև 1993թ. Մինսկի Կոնվենցիայի 57-րդ հոդվածին:

Վերոգրյալի հիման վրա՝ Ռ.Խաչատրյանը Ռ-Գ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար մեղադրանքով Ռ-ուսաստանի Դաշնությանը չի կարող հանձնվել:

Միևնույն ժամանակ, վճռաբեկ դատարանը գտնում է, որ չկա որևէ իրավական արգելք Ռ-Գ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար մեղադրանքով Ռ.Խաչատրյանին Ռ-ուսաստանի Դաշնությանը հանձնելու համար: Մասնավորապես, վերաքննիչ դատարանի վկայակոչած «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սույն գործով չի կարող կիրառվել: Համաձայն այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ «Հանձնում չի իրականացվում, եթե հանցագործությունը, որի համար այն հայցվում է, հայցվող կողմը ճանաչում է որպես քաղաքական հանցագործություն կամ քաղաքական հանցագործության հետ կապ ունեցող: Նույն կարգը պետք է կիրառվի, եթե հայցվող կողմն ունի բավարար հիմքեր՝ համարելու, որ սովորական քրեական հանցագործության համար հանձնման վերաբերյալ հարցումը ներկայացված է անձի ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական կարծիքի հետապնդման և պատժման նպատակով, կամ՝ որ այդ անձի դիրքին կարող է վնաս հասցվել այս հանգամանքներից որևէ մեկի պատճառով»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում բավարար հիմքեր չկան եզրահանգելու, որ Ռ.Խաչատրյանի հանձնման պահանջը պայմանավորված է նրա ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական կարծիքի հետապնդման և պատժման նպատակով: Բացի այդ, բավարար հիմքեր չկան հետևություն անելու, որ Ռ-ուսաստանի Դաշնությունը չի կարող ապահովել իր քաղաքացու՝ Ռ.Խաչատրյանի անվտանգությունը:

Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում վերաքննիչ դատարանի նաև այն հետևությունը, որ Ռ-ուսաստանի Դաշնությունում Ռ.Խաչատրյանի համար չի կարող ապահովվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-«գ» կետով երաշխավորված՝ պաշտպան ունենալու իրավունքը: ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած նյութերից երևում է, որ Ռ.Խաչատրյանին փաստաբանական ծառայություններ է մատուցել Օրենքորդ քաղաքի «Կորպուս Յուրիս» փաստաբանական կոլեգիայի փաստաբան Ե.Ա. Պերվոշինան:

Հետևաբար՝ Ռ.Խաչատրյանին պետք է հանձնել Ռ-ուսաստանի Դաշնությանը Ռ-Գ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեղադրանքով քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը, մերժելով Ռ.Խաչատրյանին Ռ-ուսաստանի Դաշնությանը հանձնելը, խախտել է միջազգային և ներպետական նորմերի պահանջները և անտեսել ներկայացված նյութերում առկա տվյալները՝ արդյունքում հանգեցրել սխալ հետևության, որը կայացված դատական ակտը վերացնելու հիմք է:

Ելնելով վերը շարադրված հիմնավորումներից և ղեկավարվելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-405-րդ, 419-րդ, 422-424-րդ, 479-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Ռուսաստանի Դաշնությանը Ռաշիդ Աշոտի Խաչատրյանի հանձնումը մերժելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. սեպտեմբերի 20-ի որոշումը վերացնել:

2. ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Մ.Սարգսյանի կողմից Ռաշիդ Աշոտի Խաչատրյանին ՌԴ քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար Ռուսաստանի Դաշնությանը հանձնելու մասին 2007թ. օգոստոսի 24-ի որոշումը վերացնել:

3. ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Մ.Սարգսյանի կողմից Ռաշիդ Աշոտի Խաչատրյանին ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար Ռուսաստանի Դաշնությանը հանձնելու մասին 2007թ. օգոստոսի 24-ի որոշումը թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-178/07

ՀՀ քրեական վերաքննիչ
դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Մ.Խաչատրյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ **Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ **Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղար **Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ
հավատարմագրված
փաստաբան **Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**

2007 թվականի հոկտեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով տուժող Ռուզաննա Չուբարի Ջաբարյանի կողմից հավատարմագրված փաստաբան Վ.Գևորգյանի միջոցով բերված վճռաբեկ բողոքը դատապարտյալներ Նարեկ Արտաշեսի Ղազարյանի և Արման Գագիկի Համբարձումյանի վերաբերյալ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճռի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճռի դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Նարեկ Արտաշեսի Ղազարյանին և Արման Գագիկի Համբարձումյանին 2007 թվականի մարտի 11-ին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանը 2007 թվականի հունիսի 14-ի դատավճռով Ն.Ղազարյանին և Ա.Համբարձումյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և յուրաքանչյուրին դա-

տապարտել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման:

Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանը նույն դատավճռով վճռել է ամբաստանյալ Ա.Համբարձումյանից հօգուտ տուժող Ռ-ուզաննա Չաքարյանի բռնագանձել 2.017.900 (երկու միլիոն տասնյոթ հազար ինը հարյուր) դրամ՝ որպես գողությանը պատճառված գույքային վնասի հատուցման ենթակա գումար:

Հայցը հանցագործության պատճառով կրած վնասների մասով թողնվել է առանց քննության:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Ա.Համբարձումյանի և տուժող Ռ.Չաքարյանի վերաքննիչ բողոքների հիման վրա 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճռով Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճիռն Ա.Համբարձումյանի մասով փոփոխել է՝ բավարարելով նրա վերաքննիչ բողոքը: Ա.Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով, առանց գույքի բռնագրավման: Վերաքննիչ դատարանը նրա նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և Ա.Համբարձումյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ նշանակելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Մնացած մասով դատավճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի հոկտեմբերի 03-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Նարեկ Ղազարյանը Եղեգնաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 3 հասցեում գտնվող, տուժող Ռ-ուզաննա Չաքարյանին պատկանող հասարակական սպասարկման օբյեկտից գողություն կատարելու նպատակով 2007 թվականի փետրվարի 09-ին գիշերը հանցավոր համաձայնության է եկել Արման Համբարձումյանի հետ: Վերջինս հսկել է օբյեկտի շրջակայքը, իսկ Ն.Ղազարյանը գազատար խողովակի վրայով բարձրացել է հարակից խանութի տանիք, բաց թողնված պատուհանից մուտք է գործել երկրորդ հարկ՝ խաղասարահ, ապա իջել է դրամավոխանակման կետ: Նախապես իր հետ վերցված պտուտակահանով կտրել է դրամավոխանակման կետի դռան ապակին, բացել է դռան կողպեքը և մտել ներս: Նույն պտուտակահանով կտրել է չիրկիզվող պահարանի կողպեքը, բացել դուռը և այնտեղից հափշտակել ընդհանուր թվով 72 կտոր ոսկեդեղն՝ 2.061.900 ՀՀ դրամ արժողությամբ, ինչպես նաև 3.583.000 ՀՀ դրամ գումար, այդ թվում՝ 50 եվրո, 1.314 ԱՄՆ դոլար, 1.120 ռուսական ռուբլի և մնացածը ՀՀ դրամ, վերջինիս մեջ՝ 2-3 կգ մետաղադրամ:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Նարեկ Ղազարյանի և Արման Համբարձումյանի վերաբերյալ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճիռը և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճիռը ենթակա են բեկանման հետևյալ պատճառաբանությամբ:

Ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ համապարտ պարտականության դեպքում պարտատիրոջ իրավունքները սահմանող 362-րդ հոդվածը: Մասնավորապես, այդ հոդվածի պահանջներից չի բխում այն, որ գողությանը տուժող Ռ.-Չաքարյանին պատճառված վնասի չվերականգնված մասը ենթակա է բռնագանձման ամբաստանյալ Ա.Համբարձումյանից՝ 2.017.900 ՀՀ դրամի չափով՝ նկատի ունենալով, որ դեռևս մինչդատական վարույթում Ն.Ղազարյանի կողմից հատուցվել է 3.562.000 ՀՀ դրամ, համապարտության հաշվարկից՝ ավելին: Պարտապաններից մեկի կողմից պարտավորության գումարն ամբողջությամբ կամ մեծ մասով մարելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի համաձայն, չի նշանակում, որ մյուս պարտապանն ընդհանրապես կարող է ազատվել պարտավորության կատարումից:

Անընդունելի է մաս վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Ա.Համբարձումյանի նկատմամբ նշանակված պատիժը խստացնելու հիմքեր չկան, քանի որ նա վերաքննիչ դատաքննության ընթացքում վերականգնել է տուժողին պատճառված և վերականգնման համար իր վրա դրված 2.017.900 ՀՀ դրամից 1.000.000 ՀՀ դրամը՝ պարտավորվելով վերականգնել մնացած 1.017.900 ՀՀ դրամը մեկ ամսվա ընթացքում: Ըստ վճռաբեկ բողոքի հեղինակի՝ փաստորեն, վերաքննիչ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը արդարացնելու համար դատավճռի հիմքում դրել է դատապարտյալի ոչնչով չապահովված և չերաշխավորված խոստումն այն մասին, որ իբր նա 1.017.900 ՀՀ դրամը տուժողին պարտավորվում է վճարել մեկ ամսվա ընթացքում:

Այնուհետև վճռաբեկ բողոքում նշվում է, որ անտեսելով Ն.Ղազարյանի և Ա.Համբարձումյանի կողմից ծանր հանցագործություն կատարելու հանգամանքը՝ առաջին ատյանի դատարանը նրանց նկատմամբ նշանակել է ակնհայտ մեղմ պատիժ, իսկ վերաքննիչ դատարանը Ա.Համբարձումյանի նկատմամբ նշանակված պատիժն անհիմն կերպով պայմանականորեն չի կիրառել:

Այսպիսով, վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է դատապարտյալներ Նարեկ Ղազարյանի և Արման Համբարձումյանի վերաբերյալ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճիռը և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ նրանց նկատմամբ նշանակել համաչափ խիստ պատիժ, ինչպես նաև համապարտության կարգով նրանցից բռնագանձել գողությանը տուժող Ռուզաննա Չաքարյանին պատճառված և չփոխհատուցված 1.017.900 ՀՀ դրամը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանություններով.

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն»

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի՝

«1. Պարտատերերի համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչ-

յուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

2. Համապարտ պարտապաններից մեկի լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից:

3. Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի՝

«1. Պարտապաններից մեկի կողմից համապարտ պարտականությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:

2. Եթե այլ բան չի բխում համապարտ պարտապանների հարաբերություններից, ապա՝

1) համապարտ պարտականությունը կատարած պարտապանը մնացած պարտապանների նկատմամբ ունի հավասար բաժիններով հետադարձ պահանջի իրավունք՝ հանելով իր բաժինը.

2) համապարտ պարտականությունը կատարած պարտապանին համապարտ պարտապաններից մեկի չվճարածը հավասար բաժիններով ընկնում է չվճարած պարտապանի և մնացած պարտապանների վրա»:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված համապարտ պատասխանատվության ինստիտուտը կանոնակարգող իրավադրույթների վերլուծությունից բխում է, որ տուժողի առջև պատասխանատու են բոլոր պարտապանները: Համապարտ պատասխանատվության դեպքում վնաս կրած անձն իրավունք ունի պահանջ ներկայացնելու ինչպես բոլոր պարտապաններին համատեղ, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին, այդ թվում՝ այն պարտապանին, ով ի վիճակի է փոխհատուցել նրա կրած վնասները: Այլ կերպ՝ համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից: Ավելին՝ համապարտ պատասխանները պարտապան են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Սույն գործով տուժող Ռ.Ջաքարյանին դատապարտյալներ Ն.Ղազարյանի և Ա.Համբարձումյանի կողմից վնասը պատճառվել է համատեղ, ուստի նրանք՝ իբրև համապարտ պարտապաններ, տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Այս առումով, անհիմն է առաջին ատյանի դատարանի դատավճռում տեղ գտած հետևությունն այն մասին, որ «...հանցագործությամբ պատճառված գույքային վնասը ենթակա է հատուցման համապարտության կարգով, սակայն նկատի ունենալով, դեռևս մինչդատական վարույթում Ն.Ղազարյանի կողմից հատուցվել է 3.562.000 ՀՀ դրամ, համապարտության հաշվարկից՝ ավելին, ուստի և գործությամբ պատճառված վնասի չվերականգնված մասը, որը կազմում է 2.082.900 ՀՀ դրամ, ենթակա է բռնագանձման 2.017.900 ՀՀ դրամի չափով ամբաստանյալ Ա.Համբարձումյանից...»:

Անընդունելի է մաս հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի չվերականգնված մասը համապարտության կարգով չբռնագանձելը վերաքննիչ դատարանի կողմից: Վերջինիս հետևության հիմքում ընկած է փաստարկն այն մասին, որ Ա.Համբարձումյանը վերաքննիչ դատաքննության ընթացքում վերականգնել է տուժողին պատճառված և վերականգնման համար իր վրա դրված 2.017.900 ՀՀ դրամից 1.000.000 ՀՀ դրամը՝ պարտավորվելով վերականգնել մնացած 1.017.900 ՀՀ դրամը մեկ ամսվա ընթացքում:

Վերը շարադրվածից հետևում է, որ անկախ այն բանից, թե պարտապաններից մեկի կողմից պարտավորության գումարի որքան մասն է վերականգնվել, տուժողին պատճառված և չփոխհատուցված վնասը, կոնկրետ դեպքում՝ 1.017.900 ՀՀ դրամը համապարտության կարգով ենթակա է բռնագանձման երկու պարտապաններից՝ Ն.-Ղազարյանից և Ա.Համբարձումյանից:

Այսպիսով, նկարագրված պայմաններում չկիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշյալ դրույթները՝ ինչպես Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանը, այնպես էլ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ինչը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում:

Ինչ վերաբերում է դատապարտյալներ Ն.Ղազարյանի և Ա.Համբարձումյանի նկատմամբ խիստ պատիժ նշանակելու խնդրանքին, ապա այն ենթակա չէ բավարարման, քանի որ բողոքաբերը չի մատնանշել այն հիմնարար խախտումները, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Վերը նշված դատավարական իրավունքի խախտումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճիռը և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանելու և փոփոխելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ գործով կայացվող դատական ակտը էական նշանակություն կունենա օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

Դատապարտյալներ Նարեկ Արտաշեսի Ղազարյանի և Արման Գագիկի Համբարձումյանի վերաբերյալ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 14-ի դատավճիռը և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի օգոստոսի 03-ի դատավճիռը բեկանել և փոփոխել քաղաքացիական հայցի մասով:

Դատապարտյալներ Նարեկ Արտաշեսի Ղազարյանից և Արման Գագիկի Համբարձումյանից համապարտության կարգով բռնագանձել 1.017.900 ՀՀ դրամ հոգուտ տուժող Ռուզաննա Չուբարի Չաքարյանի՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում:

Դատավճիռների մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-150/07

ՀՀ քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Կ.Ղազարյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ	Տ.ՍԱՀԱԿՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Մ.ՄԻՄՈՆՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
	քարտուղար դատախազ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ քաղաքացիական Ա.ՍԿՐՏՅԱՆԻ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ
	պատասխանողներ	

2007թվականի նոյեմբերի 30-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ զինվորական դատախազ Ա.Խաչատուրյանի վճռաբեկ բողոքը Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմինը 2006 թվականի նոյեմբերի 3-ին Ավետիս Իոսիֆի Սկրտչյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 2006 թվականի նոյեմբերի 27-ին ուղարկել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան:

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճռով Ավետիս Իոսիֆի Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օ-

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

րենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, տրանսպորտի միջոց վարելու իրավունքի զրկումով 2 (երկու) տարի ժամկետով:

Միաժամանակ որոշվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ՀՀ պաշտպանության նախարարություններից համապարտությամբ հոգուտ տուժողի իրավահաջորդ Էդգար Վարդանի Չոհրաբյանի բռնագանձել 1.446.000 ՀՀ դրամ, որից 803.000 ՀՀ դրամ հանցագործության հետևանքով ավտոմեքենային պատճառված նյութական վնասը վերականգնելու և 643.000 ՀՀ դրամ հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերի հատուցման գումար:

Տուժողի իրավահաջորդ Էդգար Չոհրաբյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճռով Ավետիս Սկրտչյանի վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 19-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով փոփոխել է. որոշվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ՀՀ պաշտպանության նախարարություններից համապարտությամբ հոգուտ տուժողի իրավահաջորդ Էդգար Վարդանի Չոհրաբյանի բռնագանձել 4.232.925 ՀՀ դրամ, որից 803.000 ՀՀ դրամը որպես հանցագործության հետևանքով ավտոմեքենային հասցրած նյութական վնասի հատուցում, 643.000 ՀՀ դրամը՝ որպես հուղարկավորության, 295.925 ՀՀ դրամը՝ որպես յոթերորդ օրվա, 346.000 ՀՀ դրամը՝ որպես քառասուներորդ օրվա արարողությունների հետ կապված ծախսերի հատուցում, 925.000 ՀՀ դրամը որպես գերեզմանի կառուցապատման և 1.220.000 ՀՀ դրամը՝ որպես գերեզմանաքարի տեղադրման ծախսերի հատուցում:

Դատավճռի մնացած մասը թողնվել է անփոփոխ:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճռի դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազ Ա. Խաչատուրյանը:

Վճարելի դատարանը 2007 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ավետիս Սկրտչյանը, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ 90453 գործամասի շարքային զինծառայող, վարորդ, 2006 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ժամը 7³⁰-ի սահմաններում, իրեն ամրակցված «Ուրալ-4320» մակնիշի ՊՆ 1868 S զինհամարանիշի ավտոմեքենայով Երևան-Սևան ճանապարհի 10-րդ կմ-ի հատվածում թույլ է տվել ՃԵԿ-ի 1.2 և 1.3 կետերի պահանջներին հակասող գործողություններ, դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի ուղեմաս և ընդհարվել Էդվին Վարդանի Չոհրաբյանի կողմից վարվող «ՎԱԶ-2106» մակնիշի 12 SO 319 պետհամարանիշի ավտոմեքենային: Վթարից հետո Էդվին Չոհրաբյանը տեղափոխվել է Միքայելյանի անվան ԲԿ, որտեղ մահացել է: «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի սեփականատիրոջը պատճառվել է 803.000 ՀՀ դրամի վնաս:

3. Վճարելի բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճարելի բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածի համաձայն՝ տուժողի մահվան հետ կապված վնասի հատուցման համար

պատասխանատու անձիք պարտավոր են հատուցել հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերը, իսկ հուղարկավորությունից հետո հոգեհանգստի, յոթերորդ, քառասուներորդ օրվա, տարվա արարողությունների կազմակերպման համար կատարված անհրաժեշտ ծախսերի հատուցման պարտականությունը նշված հոդվածի պահանջից չի բխում:

Բացի այդ, վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունն իրավաբանական անձ չէ և նրա տնօրինության տակ գտնվող ողջ գույքը, այդ թվում նաև տրանսպորտային միջոցները, տնօրինվում են Հայաստանի Հանրապետության անունից, ուստի նա չէր կարող դատարանում հանդես գալ որպես պատշաճ պատասխանող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ նշված օրենսգրքին կամ այլ օրենքներին համապատասխան վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից, նրանց անունից հանդես են գալիս համապատասխան ֆինանսական մարմինները, եթե այդ պարտականությունը նույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան դրված չէ այլ մարմնի, իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1460-Ն որոշման 2-րդ բաժնի 8-րդ կետի «ժղ» ենթակետի համաձայն՝ պետական մարմինների ապօրինի գործողություններով քաղաքացիներին պատճառված վնասի հատուցման պահանջով ընդդեմ պետության ներկայացված հայցերով դատարանում որպես պատասխանող հանդես է գալիս նշված նախարարությունը: Ուստի բողոքի հեղինակը գտնում է, որ կոնկրետ դեպքում հանցագործությամբ պատճառված նյութական վնասը դատավճռով ենթակա էր բռնագանձման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից, այլ ոչ թե համապարտությամբ նաև ՀՀ պաշտպանության նախարարությունից:

Գտնելով, որ վերաքննիչ դատարանի 06.04.2007 թվականի դատավճռով խախտվել է դատավարության մասնակցի, ի դեմս քաղաքացիական պատասխանող, ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված անձ Ա.Սկրտչյանի նյութական իրավունքը և նկատի ունենալով, որ վճռաբեկ դատարանի կողմից սույն քրեական գործով կայացվելիք դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, բողոքի հեղինակը խնդրել է Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանել և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: Քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով: Քաղա-

քացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քաղաքացիական հայցը հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

Փաստորեն, քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան է կազմում հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասը, որի հարուցման մասին պահանջը հայցվորը ներկայացնում է մեղադրյալին կամ նրա գործողությունների համար պատասխանատվություն կրող անձին: Քաղաքացիական հայցի առարկայի որոշման համար անհրաժեշտ է, որպեսզի վնասն անմիջականորեն հանցագործությամբ պատճառված լինի:

Գործի նյութերով հիմնավորվել է, որ ՀՀ ՊՆ թիվ 90453 գորամասի շարքային զինծառայող, վարորդ, սույն գործով դատապարտյալ Ավետիս Սկրտչյանն իրեն ամրակցված «Ուրալ» մակնիշի ՀՀ ՊՆ 1868 S զինհամարանիշի ավտոմեքենան վարելիս թույլ է տվել ՃԵԿ-ի 1.2 և 1.3 կետերի պահանջներին հակասող գործողություններ և ընդհարվել է տուժող Էդվին Չոհրաբյանի կողմից վարվող «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենային: Վթարի հետևանքով Էդվին Չոհրաբյանը մահացել է, իսկ ՀՀ ոստիկանության փորձագիտական վարչության թիվ 800-ապ տեղեկանքի համաձայն՝ վթարի հետևանքով «ՎԱԶ-2106» մակնիշի 12 SO 319 պետհամարանիշի ավտոմեքենայի սեփականատիրոջը պատճառվել է 803.000 ՀՀ դրամ նյութական վնաս: Ավտոմեքենայի սեփականատիրոջը պատճառված 803.000 ՀՀ դրամ գույքային վնասը հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնաս է, որը քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկա է, անառարկելիորեն ընդունվել է դատավարության մասնակիցների կողմից և իրավացիորեն բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածը, որը վերաբերում է հուղարկավորության ծախսերի հատուցմանը, սահմանում է, որ տուժողի մահվան հետ կապված վնասի համար պատասխանատու անձինք պարտավոր են հատուցել հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերն այն անձին, ով այդ ծախսերը կատարել է: Այս հոդվածը կարգավորում է այն դեպքերը, երբ անձի մահը վրա է հասել վնաս պատճառելու հետևանքով: Հուղարկավորության ծախսերի հատուցումը պետք է լինի այն չափով, ինչ չափով ապացուցված է, որ այդ ծախսերն արվել են փաստացի և անհրաժեշտաբար ու ողջամիտ են իրենց ծավալով:

2006 թվականի փետրվարի 27-ին ընդունված «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ սույն օրենքը կարգավորում է գերեզմանատների և դիակիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները և սահմանում է հուլարկավորության արարողությունների կազմակերպման պետական կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները: Նշված օրենքի 2-րդ հոդվածում, որտեղ շարադրված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, հուլարկավորությունը բնորոշվում է որպես «մարդու մահից հետո նրա մարմինը հողին հանձնելու կամ դիակիզելու արարողություն»: «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածում նշված հուլարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերի շարքն է դասում անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը, դիակերձումը, դագաղի հատկացումը, մահացածի մարմնի (աճյունի) տեղափոխումը գերեզմանատուն, հուլարկավորումը, մետաղե ցուցատախտակի տեղադրումը: Հուլարկավորության հետ կապված ծախսերը պետք է լինեն ողջամիտ ըստ արժեքի և անհրաժեշտ ըստ նպատակահարմարության. դագաղի արժեքը, դիակերձարանի ծառայությունները, դագաղը գերեզման հասցնելը, գերեզման փորելը, թաղման ծիսակարգի ծախսերը (հուլարկավորման կարգը, արարողությունը եկեղեցում, հոգեհացը):

Ինչպես երևում է գործի նյութերից, հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերից, հուլարկավորության և հոգեհացի արարողության համար կատարվել են 643.000 ՀՀ դրամի ծախսեր, որոնք հաշվարկվել են «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ամբողջությամբ ընդգրկել են միայն հուլարկավորության համար անհրաժեշտ ծախսերը, որոնք արվել են փաստացի և անհրաժեշտաբար ու ողջամիտ են իրենց ծավալով և անառարկելիորեն ընդունվել են դատավարության մասնակիցների կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությամբ անմիջականորեն պատճառված 803.000 ՀՀ դրամ գույքային վնասի և հուլարկավորության հետ կապված 643.000 ՀՀ դրամ անհրաժեշտ ծախսերի մասով քաղաքացիական հայցի բավարարումը առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից հիմնավորված և պատճառաբանված է, քանի որ բխում է 2006 թվականի փետրվարի 27-ի «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքից և լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ, 60-րդ, 158-րդ հոդվածների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1087-րդ հոդվածների պահանջներին:

Ինչ վերաբերում է յոթերորդ, քառասներորդ օրվա արարողությունների, գերեզմանի կառուցապատման և գերեզմանաքարի տեղադրման հետ կապված ծախսերին, ապա դրանք հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնաս չեն, դուրս են 2006 թվականի փետրվարի 27-ի «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածով սահմանված հուլարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերից: Այդպիսի հայցերը ներկայացվում, ապահովվում, ապացուցվում, քննվում և լուծվում են ընդհանուր հիմունքներով՝ քաղաքացիական դատավարության կարգով: Պալատը գտնում է, որ վերը նշված պատճառաբանությամբ այդ մասով քաղաքացիական հայցը պետք է թող-

նել առանց քննության: Ընդ որում, նույն օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններին որպես քաղաքացիական պատասխանող ներգրավելուն և նրանցից հօգուտ տուժողի իրավահաջորդի 4.232.925 ՀՀ դրամ համապարտությանը բռնագանձելուն, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար: Նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

Ինչպես երևում է գործի նյութերից, դատապարտյալ Ավետիս Սկրտչյանը հանդիսացել է ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 90453 գորամասի շարքային զինծառայող, վարորդ և ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունը կատարել է իրեն ամրակցված ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանման թիվ 90453 գորամասի «Ուրալ-430» մակնիշի ՊՆ 1868 Տ զինհամարանիշի ավտոմեքենայով: ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների գույքը, այդ թվում նաև տրանսպորտային միջոցները, պետության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունն են: Պետական սեփականության օբյեկտների որոշակի մասը բացառիկ սեփականության իրավունքով պատկանում է միայն Հայաստանի Հանրապետությանը: Դրանց շարքն են դասվում նաև զինված ուժերի ունեցվածքը, պաշտպանական կառույցները և այլն, որոնք սեփականության իրավունքով չեն կարող պատկանել ոչ միայն քաղաքացիներին, այլև իրավաբանական անձանց և համայնքներին:

Պետությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, պատասխանատու է իր և իր մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց անօրինական գործողություններով այլ սուբյեկտներին պատճառած վնասի համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ

պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտը հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Նույն օրենսգրքի 1065-րդ հոդվածը սահմանում է, որ այն դեպքերում, երբ սույն օրենսգրքին կամ այլ օրենքներին համապատասխան վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից, նրանց անունից հանդես են գալիս համապատասխան ֆինանսական մարմինները, եթե այդ պարտականությունը, սույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, դրված չէ այլ մարմնի, իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի թիվ 1460-Ն որոշման 2-րդ բաժնի 8-րդ կետի «ժդ» ենթակետի համաձայն՝ պետական մարմինների ապօրինի գործողություններով քաղաքացիներին պատճառված վնասի հատուցման պահանջով ընդդեմ պետության ներկայացված հայցերով դատարանում որպես պատասխանող հանդես է գալիս նշված նախարարությունը:

Վերը շարադրվածից հետևում է, որ սույն գործով պատասխանող է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, իսկ վնասը հատուցվելու է ոչ թե ՀՀ պաշտպանության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, այլ Հայաստանի Հանրապետության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատարարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել մասնակիորեն:

Ավետիս Իոսիֆի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանել և փոփոխել: Հայաստանի Հանրապետությունից հօգուտ տուժողի իրավահաջորդ Էդգար Վարդանի Չոհրաբյանի բռնագանձել 1 միլիոն 446 հազար ՀՀ դրամ, որից 803 հազար ՀՀ դրամը՝ որպես հանցագործության հետևանքով ավտոմեքենային պատճառված վնասի հատուցում, իսկ 643 հազար ՀՀ դրամը՝ հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերի հատուցում:

Քաղաքացիական հայցի մնացած մասը թողնել առանց քննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

2008 թվականի նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Գործ ՎԲ-01/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 285/07
Նախագահող դատավոր Ա.Պողոսյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
	Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ
	Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով տուժողի իրավահաջորդ Ռ.Գևորգյանի վճռաբեկ բողոքը Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հուլիսի 2-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմնի 04.12.2006 թվականի որոշմամբ Գուրգեն Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 17-ի դատավճռով Գ.Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-

րդ հողվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման երկու տարի ժամկետով՝ երկու տարի ժամկետով զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից: Որոշվել է ամբաստանյալից բռնագանձել 761.900 ՀՀ դրամ՝ հոգուտ «Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության, որպես հանցագործությամբ պատճառված վնաս և 1.500.000 ՀՀ դրամ հոգուտ տուժողի իրավահաջորդ Ռուբեն Գևորգյանի՝ որպես տուժողի թաղման վրա կատարված ծախս:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել ինչպես տուժողի իրավահաջորդ Ռ.Գևորգյանը, այնպես էլ ամբաստանյալ Գ.Մարտիրոսյանը:

Տուժողի իրավահաջորդ Ռ.Գևորգյանի և ամբաստանյալի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2007 թվականի հուլիսի 2-ի դատավճռով Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով փոփոխել է. Գուրգեն Մարտիրոսյանին ճանաչել է մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման երկու տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով երկու տարի ժամկետով: Որոշվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով երկու տարի ժամկետով փորձաշրջան: Վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՎ ալլընտրանքային պատիժների կատարման բաժնի բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Տուժողի իրավահաջորդ Ռուբեն Գևորգյանի և «Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության, իսկ հինգ հարյուր ԱՄՆ դոլար գումարը վերադարձվել է Գուրգեն Մարտիրոսյանին:

Վերաքննիչ դատարանը տուժողի իրավահաջորդ Ռ.Գևորգյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց բավարարման:

ՀՀ վերաքննիչ դատարանի 2007 թվականի հուլիսի 2-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժողի իրավահաջորդ Ռուբեն Գևորգյանը:

Վճռաբեկ դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

Դատապարտյալ Գուրգեն Մարտիրոսյանը աշխատել է ՀՀ «Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունում որպես վարորդ:

2006 թվականի հոկտեմբերի 19-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, իրեն ամբողջով ՎԱԶ-21214 մակնիշի 951 SO 61 պետհամարանիշի ավտոմեքենայով Ստեփանակերտից Երևան ընթանալիս Գորիս-Երևան մայրուղու 16-րդ կիլոմետրում խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների 1.2 և 9.1 կետի 1-ին մասի պահանջները, ընդհարվել իր ընթացքի ուղղությամբ ճանապարհի աջ մասում կայանած ասֆալտփոշի մեխանիզմին, որի հետևանքով ուղևոր Գուրգեն Գևորգյանը մահացել է, Վարուժան Տիտիզյանը ստացել է թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, ինքը՝ դատապարտյալը ստացել է առողջության միջին ծանրության վնաս՝

առողջության տևական քայքայումով, իսկ ավտոմեքենայի որոշ մասեր դուրս են եկել շարքից, ինչով «Հայջրնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատճառվել է նյութական վնաս:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Բողոքում նշվել է, որ վերաքննիչ դատարանը, Գ.Մարտիրոսյանին ազատելով պատժի կրումից, խախտել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները: Վերաքննիչ դատարանը, կրկին անգամ թվարկելով այն նույն մեղմացուցիչ հանգամանքները, որոնք պատիժ սահմանելիս արդեն իսկ հաշվի են առնված եղել առաջին ատյանի դատարանի կողմից, առանց որևէ այլ փաստարկ նշելու կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը, որպես առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելու հիմք, կարող էր դիտել միայն այն, որ Գ.Մարտիրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան հատուցած լիներ հանցագործությամբ պատճառած վնասը կամ վնասը հարթելուն ուղղված այլ գործողություններ կատարել: Նման պայմաններում, ըստ բողոքի հեղինակի, Գ.Մարտիրոսյանի նկատմամբ առանց բավարար հիմքերի պատիժ չկիրառելն անարդարացի է և հակասում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության անխուսափելիության սկզբունքին:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը պահանջել է բեկանել Գ.Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ՀՀ վերաքննիչ դատարանի 2007 թվականի հուլիսի 2-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 17-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի դատավճռի բեկանման պահանջի մասով բողոքը հիմնավոր է, և այն պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննության առնելով Գ.Մարտիրոսյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատժի հարցը, դատավճռում նշել է, որ «առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, ուստի ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, դատավճիռը պատժի մեղմացման առումով պետք է փոփոխել», և որպես պատժի մեղմացում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ որոշել է Գ.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված երկու տարի ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառել:

Պատիժը մեղմացնելը և պատիժը պայմանականորեն չկիրառելը իրենցից ներկայացնում են քրեաիրավական երկու ինքնուրույն ինստիտուտներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է պատիժը պայմանականորեն չկիրառելը, ըստ որի 1-ին կետի՝ եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում

է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Այսինքն՝ դատարանը կայացնելով մեղադրական դատավճիռ՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակում է քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներից (կալանք, ազատազրկում, կարգապահական գումարտակում պահելը) որևէ մեկը՝ սահմանելով դրա չափը, այնուհետև համոզված լինելով, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը փաստացի կրելու՝ որոշում է դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Պատժի մեղմացումը դրսևորվում է հետևյալ ձևով՝ նշանակված հիմնական պատժատեսակը փոխելով ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված առավել մեղմ հիմնական պատժատեսակով, կամ նշանակված պատժաչափը նվազեցնելով, կամ նշանակված լրացուցիչ պատիժը վերացնելով, կամ դրա չափը նվազեցնելով, կամ ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով՝ նշանակել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

6. ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7. ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8. ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը.»:»

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենցից ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը մասնա առաջ որոշում է ամբաստանյալի պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, թե ոչ՝ հաշվի առնելով նշանակված պատիժն առանց փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության հանգամանքը:

Այսպիսով, վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի նշանակված պատժի մեղմացումը կարող է դրսևորվել կամ նշանակված հիմնական պատժատեսակի փոխարեն առավել մեղմ հիմնական պատժատեսակ նշանակելով, կամ նշանակված պատժաչափը նվազեցնելով, կամ նշանակված լրացուցիչ պատիժը վերացնելով, կամ դրա չափը նվազեցնելով, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով:

Վերաքննիչ դատարանի դատավճռով Գ.Մարտիրոսյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի նշանակված հիմնական պատժատեսակը՝ ազատազրկումը, չի փոխարինվել ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված առավել մեղմ հիմնական պատժատեսակով, ազատազրկման չափը՝ երկու տարին, չի նվազեցվել, իսկ նշանակված լրացուցիչ պատիժը՝ տրանսպորտի միջոց վարելու իրավունքից երկու տարի ժամկետով զրկելը, չի վերացվել և դրա չափը չի նվազեցվել:

Հետևաբար Գ.Մարտիրոսյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի նշանակած պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող հանդիսանալ պատժի մեղմացում:

Միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանը, փոփոխելով առաջին ատյանի դատարանի դատավճիռը, որևէ լրացուցիչ փաստարկ չի վկայակոչել իր հետևությունները հիմնավորելու համար: Վերաշարադրելով առաջին ատյանի դատարանի դատավճռի փաստական հանգամանքները՝ վերաքննիչ դատարանը պատիժը պայմանականորեն չի կիրառել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները սպառնիչ չեն: Պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Այլ կերպ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:

Սոցիալական արդարությունը վերականգնելու և պատժի ենթարկված անձի ուղղվելու մասին կարող է վկայել հանցագործությունից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ տուժողին պատճառած վնասը հարթելը կամ այն հարթելուն ուղղված ողջամիտ միջոցներ ձեռնարկելը:

Գ.Մարտիրոսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում ընդունելիս վերաքննիչ դատարանը չի քննարկել պատժի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցը:

Այսպիսով, Գ.Մարտիրոսյանի նկատմամբ որպես պատժի մեղմացում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում ընդունելով՝ վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որով թույլ է տվել նյութական իրավունքի խախտում:

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված և վերը ներկայացված՝ նյութական իրավունքի խախտումներն ազդել են Գ.Մարտիրոսյանի նկատմամբ պատիժը կրելու հարցում ճիշտ որոշում կայացնելու վրա: Այդ խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 397-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են:

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել

նյութական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Նշված խախտումները կարող են խաթարել արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հյաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել մասնակիորեն:

Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հուլիսի 2-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-03/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 262/04
Նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
դատավորներ՝ Ա.Գանիելյան, Ժ.Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Կարեն Լյովայի Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 22-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Կարեն Լյովայի Մարկոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 2004 թվականի փետրվարի 23-ի դատավճռով Կարեն Մարկոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 11 (տասնմեկ) տարի ժամկետով:

Կարեն Մարկոսյանի պաշտպանի և տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2004 թվականի հուլիսի 22-ի դատավճռով՝ քաղաքացիական հայցի մասով փոփոխել է առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ մասնակիորեն բավարարելով տուժողի իրավահաջորդ և քաղաքացիական հայցվոր Ս.Հարությունյանի

վերաքննիչ բողոքը, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց բավարարման:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վերոհիշյալ դատավճռի դեմ բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիման վրա, 2008 թվականի հունվարի 21-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

2003 թվականի մայիսի 14-ին սույն գործով դատապարտյալ Արայիկ Խաչատրյանը հայտնել է Կարեն և Թաթուլ Մարկոսյաններին նույն թաղամասի բնակիչ Ալիկ Հարությունյանի կողմից իր հասցեին անվայելույշ արտահայտություն անելու մասին և առաջարկել հարցը պարզելու համար գնալ նրանց տուն:

Արայիկ Խաչատրյանը և Կարեն Մարկոսյանը մտնելով տան բակ, դուրս են կանչել Ալիկ Հարությունյանի եղբորը՝ Հովհաննես Հարությունյանին: Փողոց են դուրս եկել նաև Ալիկ Հարությունյանը, նրա ընկեր Ռոման Հակոբյանը և ազգական Արսեն Ալեքսանյանը:

Հեռանալով Հարությունյանների տան դարպասից 30-40 մետր, Արայիկ Խաչատրյանը վրդովված հարցրել է, թե ինչու է Ալիկ Հարությունյանը իր հասցեին վիրավորական արտահայտություն թույլ տվել: Արսեն Ալեքսանյանն ու Հովհաննես Հարությունյանը խնդրել են հարցը քննարկել մեկ այլ օր, քանի որ այդ օրը Ալիկ Հարությունյանի ծննդյան օրն է: Արայիկ Խաչատրյանի հետ այդտեղ եկած և քիչ հեռու կանգնած Արմեն Մելտոնյանը արել է արհամարական արտահայտություն, ինչից հետո իրարանցում է սկսվել և վիճաբանությունը վերածվել է կռվի: Խմբով կռվել են Արայիկ Խաչատրյանը, Կարեն և Թաթուլ Մարկոսյանները՝ մի կողմից, և Հովիկ, Ալիկ Հարությունյաններն ու Ռոման Հակոբյանը՝ մյուս կողմից: Այդ ընթացքում Արայիկ Խաչատրյանն ու Թաթուլ Մարկոսյանը բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ ու կոպիտ կերպով խտրատելով հասարակական կարգը՝ հայիռյանքներ են տվել, իսկ Կարեն Մարկոսյանն իր մոտ եղած դանակով դիտավորությամբ հարվածել է Հովհաննես Հարությունյանի սրտի շրջանին: Հովհաննես Հարությունյանը տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ արձանագրվել է , որ նա արդեն մահացած է:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1.Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը, որը չպետք է կիրառել և չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառել:

Ըստ բողոք բերած անձի՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները «ճիշտ չեն գնահատել վիճաբանության առիթը, հանցագործության կատարման շարժառիթը և իրական դրդապատճառները՝ արարքի իրավական որակման հարցում հանգեղով ակնհայտ սխալ եզրակացության», դատարանները Կ.Մարկոսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով որակելու փոխարեն «սխալ

կարգով» որակել են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

2. Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է Կարեն Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 22-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և «նրան դատապարտել ազատազրկման 9 տարի ժամկետով»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է, և այն պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Արարքի ճիշտ քրեաիրավական գնահատման համար խիստ կարևոր է հանցագործության շարժառիթի բացահայտումը հատկապես այն դեպքերում, երբ այն ընդգրկված է քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում, որպես տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ:

Մասնավորապես՝ արարքը որպես խուլիգանական դրդումներով կատարված կամ հասարակ սպանություն որակելու հարցում վճռորոշ նշանակություն ունի հանցագործության շարժառիթների, ինչպես նաև սուբյեկտիվ կողմը բնութագրող այլ հատկանիշների մանրակրկիտ ուսումնասիրությունը: Արարքի ճիշտ որակման համար էական նշանակություն ունի՝ արդյոք սպանությունը կատարվել է խուլիգանական դրդումներով, թե այդպիսի դրդումների բացակայության պայմաններում:

Հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով այն դեպքում, երբ սպանության հիմնական շարժառիթը խուլիգանական է, այսինքն՝ հանցավորի գործողություններում գերակայում է հասարակական կարգի նկատմամբ արհամարհանքը, այլ կերպ՝ երբ սպանությունը տեղի է ունենում որպես աննշան առիթին տրված պատասխան գործողություն և դրանով արտահայտվում է հանցավորի անհարգալից, արհամարհական վերաբերմունքը հասարակության նկատմամբ:

Հակառակ դրան, սպանությունը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով այն դեպքում, երբ հանցագործության հիմնական շարժառիթը խուլիգանական չէ, և բացակայում են սպանության հանցակազմը ծանրացնող կամ մեղմացնող այլ հանգամանքներ:

Նշված հարցում ճիշտ եզրահանգման կարելի է գալ սպանության պահին հանցավորի գործողությունների բնույթի, միջև սպանությունը և դրա կատարումից հետո նրա վարքագծի վերլուծության հիման վրա:

Մույն գործով դատաքննության արդյունքում թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ դատարանները հաստատված են համարել այն հանգամանքը, որ երկուստեք ծեծկռտուքի վերածված վիճաբանության առիթը և պատճառը եղել են տուժողի եղբոր՝ Ալիկ Հարությունյանի և դատապարտյալ Կարեն Մարկոսյանի ընկեր Արայիկ Խաչատրյանի լարված հարաբերություններն ու դրանց պարզաբանումը: Դատավճիռներով հաստատվել է նաև, որ ծեծկռտուքը սկսվել է վիճաբանության մասնակից Ա.Մելքոնյանի անվայելուչ արտահայտությունից, ի պատասխան որի՝ տուժողի եղբայր Ալիկ Հարությունյանը կտրող-ծակող գործիքով մարմնական վնասվածքներ է հասցրել Կարեն Մարկոսյանի ընկեր Արայիկ Խաչատրյանին: Այնուհետև Կարեն Մարկոսյանը, տեսնելով, որ Հովհաննես Հարությունյանը իր հերթին հարվածում է եղբորը, դանակով հարվածել է նրան:

Այսպիսով, թե առաջին ատյանի և թե վերաքննիչ դատարանները հաստատված են համարել այն, որ կռվի վերածված վիճաբանությունը ծագել է ոչ թե չնչին առիթով՝ խուլիգանական դրդումներով, այլ Արայիկ Խաչատրյանի և տուժողի եղբայր Ալիկ Հարությունյանի միջև մինչ այդ ձևավորված անձնական լարված փոխհարաբերությունները պարզելու առիթով: Ընդ որում, վեճի նախաձեռնողը Կարեն Մարկոսյանը չի եղել:

Վերաքննիչ դատարանի դատավճռով հաստատված է համարվել այն, որ «Կարեն Մարկոսյանը իմացել է Հարությունյանների հետ պարզաբանման ենթակա հարցի էությունը», իսկ այդ ընթացքում Կարեն Մարկոսյանի կողմից Հովհաննես Հարությունյանին դանակով հարվածելը եղել է ոչ թե «առանց էական պատճառի», խուլիգանական դրդումներով, ինչպես գնահատել է դատարանը, այլ փոխադարձ վիճաբանության և ծեծկռտուքի պայմաններում, ավելին՝ տուժող Հովհաննես Հարությունյանի կողմից իր եղբորը հարվածելուց հետո:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները ճիշտ չեն գնահատել վիճաբանության առիթը, հանցագործության կատարման շարժառիթը և իրական դրդապատճառները՝ արարքի իրավական որակման հարցում հանգելով ակնհայտ սխալ եզրակացության: Հետևաբար, ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանը, Կարեն Մարկոսյանի արարքը որակելով որպես խուլիգանական դրդումներով կատարված սպանություն, քրեական օրենքը ճիշտ չեն կիրառել: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Քրեական օրենքի (...) ոչ ճիշտ կիրառումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի (...) սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին»: Դրանով իսկ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված՝ ապացույցների գնահատմանը ներկայացվող օրենսդրական պահանջը: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում է ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իր ներքին համոզմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարեն Մարկոսյանի արարքը սխալ է որակվել որպես խուլիգանական դրդումներով սպանություն. նրա արարքում առկա են ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի, այլ նշված հոդվածի 1-ին մասի հատկանիշներ, որով էլ Կարեն Մարկոսյանը պետք է մեղավոր ճանաչվեր և դատապարտվեր: Նկատի ունենալով, որ Կարեն Մարկոսյանի կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանրային վտանգավորության աստիճանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված արարքի համեմատ փոքր է, վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը համապատասխանաբար պետք է մեղմացվի:

Կ.Մարկոսյանի նկատմամբ նշանակվող պատիժը մեղմացնելու հարցում Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև ստորադաս դատարանների դատավճիռներով հաստատված այն հանգամանքները, որ նա նախկինում արատավորված ու դատված չի եղել, խնամքին ունի մանկահասակ երեխա, զոջացել է կատարածի համար և ֆիզիկապես վատառողջ է՝ տառապում է սրտի բնածին արատով և թոքային հիվանդություններով:

Ելնելով վերը շարադրվածից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարեն Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի

2004 թվականի հուլիսի 22-ի դատավճիռը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա պետք է մասնակիորեն՝ Կարեն Մարկոսյանի կատարած արարքի իրավական որակման և պատժի մասով բեկանել և փոփոխել՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս նման փոփոխության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Քննվող բողոքի կապակցությամբ խուլիգանական դրոշումներով սպանության հանցակազմի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արարքի իրավական որակման և պատժի մասով Կարեն Լյովայի Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004 թվականի հուլիսի 22-ի դատավճիռը բեկանել և այն փոփոխել՝ Կարեն Լյովայի Մարկոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և որպես պատիժ նշանակել ազատազրկում 9 /ինը/ տարի ժամկետով:

2. Դատավճռի մնացած մասը թողնել անփոփոխ:

3. Սույն դրոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-11/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 953/07
Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Ժ.Հովսեփյան, Կ.Դազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Սամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1.Սամվել Գրիգորի Հունիկյանի կողմից դանակով դիտավորությամբ Շ.Սոսեյանին թափանցող մարմնական վնասվածքներ պատճառելու փաստի առթիվ 2007 թվականի հուլիսի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2007 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ Ս.Հունիկյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2007 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը և հայտարարվել հետախուզում: 2007 թվականի հուլիսի 20-ին Ս.Հունիկյանը հայտնաբերվել և բերման է ենթարկվել ոստիկանության բաժին:

2007 թվականի հուլիսի 30-ին Ս.Հունիկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նրան նոր մեղադրանք է առաջադրվել Շ.Սոսեյանի կյանքին վտանգ սպառնացող առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

2007 թվականի սեպտեմբերի 11-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռով Ս.Հունիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով:

Գործով մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Ս.Հունիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

4. Դատապարտյալ Սամվել Հունիկյանը 2007 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 23⁰⁰–ի սահմաններում, Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 9-րդ շենքի դիմաց վիճաբանության ժամանակ դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել տուժող Շիրազ Սոսեյանին՝ պատճառելով առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Վիճաբանության և կռվի նախաձեռնողը եղել է ակրոհոլ օգտագործած Ս. Հունիկյանը:

Հանցագործության գործիք է հանդիսացել 9 սմ երկարությամբ շերտ ունեցող 19 սմ երկարությամբ դանակը, որով Ս.Հունիկյանը հարվածներ է հասցրել տուժողի կենսականորեն կարևոր օրգանին՝ կրծքավանդակի ձախ կեսի շրջանին:

Առողջությանը ծանր վնաս պատճառած ծակած-կտրած վերքերի ձևով վնասվածքները թափանցող են, վնասել են թոքն ու բրոնխը և վտանգավոր են կյանքի համար:

Տուժող Շիրազ Սոսեյանին ուղղված դանակի հարվածներից մեկը դիպել է Կարապետ Բաբլոյանին, որն այդ պահին, գրկելով տուժողին, փորձել է մի կողմ տանել: Հարվածի հետևանքով Կարապետ Բաբլոյանի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս: Պարզված չէ տուժող Շ.Սոսեյանին ուղղված դանակի հարվածները կանխելու նպատակով վիճաբանությանը միջամտած Կ.Բաբլոյանի ստացած մարմնական վնասվածքների քանակը և պատճառման մեխանիզմը:

2007 թվականի օգոստոսի 9-ի հ.1296 հետքաբանական և քրեագիտական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Շ.Սոսեյանի վերնաշապիկի առջևի կենտրոնական ձախ հատվածում հայտնաբերվել են թեք դիրքերով թափանցող երեք վնասվածքներ:

Ծանր մարմնական վնասվածքներ ստացած Շ.Սոսեյանը դանակի հետագա հարվածներից փրկվելու համար փախել է դեպքի վայրից և այնտեղ գտնված ամուսիններ Մանվել Լևոնյանի ու Իգարելյա Մանուկյանի ավտոմեքենայով շտապ տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ վիրահատվել է:

Դեպքից հետո Ս.Հունիկյանը դիմել է փախուստի:

5. Առաջին ատյանի դատարանը Ս.Հունիկյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է համարել տուժողին պատճառած նյութական վնասի հատուցումը, հանցագործության բացահայտմանն աջակցելը և տուժողի հետ հաշտվելը: Այդ հանգամանքները դատարանը դիտել է «որպես բացառիկ մեղմացուցիչ հանգամանքներ»: Նշվել է նաև, որ «ծանրացնող հանգամանքներ չկան»:

6. Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի վերը շարադրված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները համարել է հիմնավոր և գտել, որ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում Ս.Հունիկյանի նկատմամբ նշանակվել է արդարացի պատիժ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոնկշյալ հիմնավորումներով.

Ա) Նախաքննության մարմինը և դատարանները, Ս.Հունիկյանի արարքը որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, սխալ քրեաիրավական գնահատական են տվել նրա գործողություններին.

7. Համաձայն բողոքի՝ հանցագործության կատարման հանգամանքները, հանցագործության գործիքը, տուժողին պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթն ու տեղակայումը, Ս.Հունիկյանի վարքագիծը՝ հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, վկայում են այն մասին, որ վերջինս գիտակցել է, որ իր գործողությունները տուժողին մահ պատճառելու իրական հնարավորություն են պարունակում և գործել է ոչ թե նրա առողջությանը ծանր վնաս պատճառելու, այլ նրան կյանքից գրկելու ուղղակի դիտավորությամբ և միայն հանգամանքների պատահական բերումով, Ս.Հունիկյանի կամքից անկախ հանգամանքներով նրան չի հաջողվել իրագործել իր հանցավոր մտադրությունն ու հանցագործությունը հասցնել տրամաբանական ավարտին: Սակայն վերոնշյալ էական հանգամանքներն անտեսվել են

ինչպես նախաքննության մարմնի, այնպես էլ դատարանների կողմից և նրա արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական:

2007 թվականի օգոստոսի 9-ի հ.1296 հետքաբանական և քրեագիտական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն Շ.Սոսեյանի վերնաշապիկի առջևի կենտրոնական ձախ հատվածում հայտնաբերվել են թեք դիրքերով թափանցող երեք վնասվածքներ: Հետևաբար, Ս.Հունիկյանը տուժողի կրծքավանդակի շրջանում հնարավոր է, որ հասցրել է ոչ թե երկու, այլ իրականում երեք հարված, ինչը նույնպես վկայում է տուժողին կյանքից զրկելու նրա ուղղակի դիտավորության մասին: Նշված հանգամանքը պարզելու կամ հերքելու ուղղությամբ քրեական վարույթն իրականացնող մարմինը քննություն չի կատարել:

Պատշաճ ու բավարար քննություն չի կատարվել նաև տուժող Շ.Սոսեյանին ուղղված դանակի հերթական հարվածները կանխելու նպատակով վիճաբանությանը միջամտած Կ.Բարլոյանին Ս.Հունիկյանի կողմից դանակով հասցված մարմնական վնասվածքների քանակն ու պատճառման մեխանիզմը պարզելու ուղղությամբ:

Կ.Բարլոյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ նրա մոտ հայտնաբերվել են ձախ նախաբազկի ստորին երրորդականի ու դաստակի թիկնային մակերեսի շրջանների ծակած-կտրած վերքեր՝ նախաբազկի մկանների, առաջին մատի երկար ու կարճ տարածիչ ջլերի, գատիչ ջլի և ճաճանչային նյարդի թիկնային ճյուղի վնասումներով: Սակայն նախաքննության մարմնի կողմից չի պարզվել, թե դանակի քանի հարվածի հետևանքով են պատճառվել այդ վնասվածքները:

Բ) Ս.Հունիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ նշանակելով՝ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

Ց. Բողոք բերող անձը գտնում է, որ Ս.Հունիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ նշանակելիս առաջին ատյանի դատարանը նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել տուժողին պատճառած նյութական վնասի հատուցումը, հանցագործության բացահայտմանն աջակցելը և տուժողի հետ հաշտվելը: Դատարանը որևէ ծանրացնող հանգամանք չի մատնանշել՝ անտեսելով, որ նա հանցագործությունը կատարել է ալկոհոլի ազդեցության տակ, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է: Բացի այդ, դատարանը չի հիմնավորել, թե ինչպես դեպքի վայրից փախուստի դիմած, հետախուզման մեջ գտնվող և դեպքից միայն 10 օր հետո ոստիկանության աշխատակիցների կողմից հայտնաբերված և բերման ենթարկված Ս.Հունիկյանը կարող էր աջակցել հանցագործության բացահայտմանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառելիս դատարանը դատավճռի պատճառաբանական մասում պետք է ուղղակիորեն մատնացույց աներ, թե ամբաստանյալի պատասխանատվությունը մեղմացնող կոնկրետ որ հանգամանքներն է համարում բացառիկ և ինչ հիմնավորմամբ, որպիսիք բացակայում են թե առաջին ատյանի և թե վերաքննիչ դատարանների դատավճիռներում: Նման պայմաններում նշանակված պատիժը չի համապատասխանում Ս.Հունիկյանի կատարած արարքի բնույթին ու հասարակական վտանգավորության աստիճանին և չի կարող ծառայել քրեական օրենքով ամրագրված պատժի նպատակների իրագործմանը:

Փաստորեն, պատիժ նշանակելիս դատարանները խախտել են ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու սկզբունքը:

9. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերող անձը պահանջել է բեկանել Սամվել Հունիկյանի վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռները, քրեական գործն ուղարկել Երևանի քրեական դատարան՝ նոր քննության՝ Ս.Հունիկյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով վերաորակելու և նրա նկատմամբ հոդվածի սանկցիայի սահմաններում, առանց ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման, ազատազրկման ձևով պատիժ նշանակելու համար:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռարեկ դատարանը գտավ, որ Սամվել Հունիկյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռները պետք է բեկանել և քրեական գործն ուղարկել Երևանի քրեական դատարան՝ նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

Ա) ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը.

11. ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն սպանության՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելու հանցավորձի համար: ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հանցավորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:

Սպանության փորձը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, երբ հանցավորը գիտակցել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է մեկ ուրիշի մահը վրա հասնելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկացել է դրանց առաջանալը, սակայն մահացու հետևանքը վրա չի հասել նրա կամքից անկախ պատճառներով (զոհի ակտիվ դիմադրությունը, այլ անձանց միջամտությունը, տուժողին ժամանակին բժշկական օգնություն ցույց տալը և այլն):

12. Հանցավորի դիտավորության ուղղվածության մասին հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցագործության եղանակը և գործիքը, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականոթն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն:

13. Ինչպես երևում է գործի նյութերից, վիճաբանության և կռվի նախաձեռնողը եղել է հարբած վիճակում գտնված Սամվել Հունիկյանը, որը 9 սմ երկարությամբ շեղբ ունեցող 19 սմ երկարությամբ դանակով երկու հարված է հասցրել տուժողի կենսակամորեն կարևոր օրգանին՝ կրծքավանդակի ձախ կեսի շրջանին: Առողջությանը ծանր վնաս պատճառած ծակած-կտրած վերքերի ձևով վնասվածքները թափանցող են, վնասել են թոքն ու բրոնխը և վտանգավոր են կյանքի համար: Տուժող Շիրազ Սոսեյանին ուղղված դանակի հարվածներից մեկը դիպել է Կարապետ Բաբլոյանին, որն այդ պահին, գրկելով տուժողին, փորձել է մի կողմ տանել: Հարվածի հետևանքով Կարապետ Բաբլոյանի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս: Ծանր մարմնական վնասվածքներ ստացած Շ.Սոսեյանը դանակի հետագա հարվածներից փրկվելու համար փախել է դեպքի վայրից և այնտեղ գտնված ամուսիններ Մամվել Լևոնյանի ու Բզաբեյլա Մանուկյանի ավտոմեքենայով շտապ տեղափոխվել է հիվանդանոց: Դեպքից հետո Սամվել Հունիկյանը դիմել է փախուստի և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Նա հայտնաբերվել և ձերբակալվել է ոստիկանության աշխատակիցների ջանքերով:

14. Հետքաբանական և քրեագիտական համալիր փորձաքննության 2007 թվականի օգոստոսի 9-ի հ. 1296 եզրակացության համաձայն՝ Շ.Սոսեյանի վերնաշապիկի առջևի կենտրոնական ձախ հատվածում հայտնաբերվել են թեք դիրքերով կտորի թափանցող երեք վնասվածքներ:

Սակայն նախաքննության մարմինը և դատարանները, առանց հաշվի առնելու գործի փաստական հանգամանքները և հանցավորի դիտավորության ուղղվածության վերաբերյալ տվյալները, Ս.Հունիկյանի արարքը որակել են ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, որով էլ նա դատապարտվել է:

Այսպես, նախաքննության մարմնի և դատարանների կողմից հաստատված է համարվել, որ դատապարտյալ Ս.Հունիկյանը տուժող Շ.Սոսեյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանին դանակով հարվածել է երկու անգամ: Սակայն այս հետևությունը չի բխում գործի օբյեկտիվ տվյալներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման սկզբունքի խախտման արդյունքում անտեսվել է այն փաստը, որ հետքաբանական և քրեագիտական համալիր փորձաքննությամբ տուժողի վերնաշապիկի առջևի կենտրոնական ձախ հատվածում հայտնաբերվել են թեք դիրքով կտորի թափանցող երեք վնասվածքներ (գ.թ.120-122): Ս.Հունիկյանի դիտավորության ուղղվածության հարցը լուծելիս ոչ միայն քննության առարկա չի դարձել և չի գնահատվել տուժողի վերնաշապիկի կտորի թափանցող երրորդ վնասվածքի առկայության հարցը, այլև Շ.Սոսեյանին ուղղված, սակայն Կ.Բաբլոյանին դիպած և միջին ծանրության մարմնական վնասվածք պատճառած դանակի հարվածը:

15. Բացի այդ, Կ.Բաբլոյանի դատաբժշկական փորձաքննության 2007 թվականի հուլիսի 12-ի թիվ 1053 եզրակացության համաձայն՝ տուժողի մոտ հայտնաբերվել են ձախ նախաբազկի ստորին երրորդականի ու դաստակի թիկնային մակերեսի շրջանների ծակած-կտրած վերքեր՝ նախաբազկի մկանների, առաջին մատի երկար ու կարճ տարածիչ ջլերի, զատիչ ջլերի և ճաճանչային նյարդի թիկնային ճյուղի վնասումներով: Այս ուղղությամբ նույնպես պատշաճ քննություն չի կատարվել և չի պարզվել, թե Կ.Բաբլոյանը դանակի քանի հարված է ստացել, ինչպիսին է մարմնական վնասվածքների պատճառման մեխանիզմը:

Պատշաճ գնահատման չի արժանացել նաև այն հանգամանքը, որ դատապարտյալ Ս.Հունիկյանը հանցագործությունը մինչև վերջ չի հասցրել իր կամքից անկախ պատճառներով, այն է՝ կովին միջամտել և դատապարտյալին խանգարել է հարվածել Կ.Բարբոյանը, ծանր վնասվածքներ ստացած տուժող Շ.Սոսեյանը դանակի հետագա հարվածներից խուսափելու համար դիմել է փախուստի, դեպքին ակամատես Մ.Լևոնյանն ու Խ.Մանուկյանը դանակահարվածին ավտոմեքենայով շտապ հասցրել են հիվանդանոց, որտեղ տուժողը վիրահատվել է:

16. Նախաքննության մարմինը և դատարանները, խախտելով ապացույցների գնահատումն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, պատշաճ գնահատման չեն ենթարկել Ս.Հունիկյանի արարքի ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող վերը նշված հանգամանքները: Ուստի դատարանի հետևություններն այն մասին, որ դատապարտյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն, չի կարելի ճանաչել հիմնավորված:

17. Փաստորեն սույն գործի քննության ընթացքում թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ), ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և դատավճիռները բեկանելու հիմք է:

Նոր դատական քննությանը անհրաժեշտ է վերը շարադրված հարցերի շուրջ կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ պատշաճ գնահատման ենթարկել գործում եղած ապացույցները և հանգել համապատասխան հետևության:

Բ) ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը.

18. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը՝

1. Գործի բացառիկ հանգամանքները.

2. Խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

Նշված հոդվածի համաձայն՝ բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել պատժի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա: Պատիժը մեղմացնելու բացառիկ հիմքին հավասարազոր է խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը, որը պատիժը մեղմացնելու հարցում ունի նույն դերը, ինչ գործի բացառիկ հանգամանքն է: Նշված հարցերի հետ կապված Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է նաև Պ.Բայրամյանի /2007 թվականի հունիս/ և Հ.Հաբեշյանի /2007 թվականի օգոստոս/ վերաբերյալ գործերով:

19. Գործի նյութերից երևում է, որ Ս.Հունիկյանին մեղսագրված արարքը դասվում է ծանր հանցագործությունների շարքը: Գտնվելով ակոհողի ազդեցության տակ,

նա է եղել վիճարանության և կռվի նախաձեռնողը, դանակի մի քանի հարված է հասցրել տուժողի կենսականորեն կարևոր օրգանին՝ պատճառելով առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Այս պայմաններում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները Ս.Հունիկյանի նկատմամբ պատիժ նշանակելիս խախտել են պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն ամրագրած ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ պատժի տեսակն ու չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված են յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքները: Այդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները հաստատվում են միայն ապացույցների հիման վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքն ակոհողի ազդեցության տակ կատարելը: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը, ելնելով հանցագործության բնույթից, կարող է ծանրացնող չհամարել այս հոդվածի 14-րդ կետում մատնանշված հանգամանքը:

21. Գործի նյութերից երևում է, որ դատապարտյալ Ս.Հունիկյանը Շ.Սոսեյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս է պատճառել՝ գտնվելով ակոհողի ազդեցության տակ: Այս հանգամանքը հիմնավորվում է վկաներ Լևոն Մանվելյանի (զ/թ 76-78, 165-167), Իգաբեկա Մանուկյանի (զ/թ 73-75, 167-169), տուժող Շիրազ Սոսեյանի (զ/թ 40-42, 172-174), ինչպես նաև դատապարտյալ Սամվել Հունիկյանի (զ/թ 90-93) ցուցմունքներով:

Չնայած այս փաստական հանգամանքների առկայությանը՝ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները դատավճիռներում նշել են, որ ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ չկան (զ/թ 182, 204): Եվ դա այն դեպքում, երբ անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների բացարձակ մեծամասնությունը կատարվում է ակոհողի ազդեցության տակ, ընդ որում, որպես կանոն, այդ վիճակը նպաստում է նման հանցանքների կատարմանը:

Ս.Հունիկյանի կողմից ակոհողի ազդեցության տակ Շ.Սոսեյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելը ծանրացնող չհամարելու որևէ հիմնավորում դատարանները չեն բերել:

22. Հակառակ դրան՝ առաջին ատյանի դատարանը, առանց որևէ ապացույցի, որպես Ս.Հունիկյանի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք նշել է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հանցագործությունը բացահայտելուն աջակցելը: Հանցագործությունը բացահայտելուն աջակցելը կարող է արտահայտվել նախաքննության մարմնին և դատարանին այնպիսի տեղեկություններ հաղորդելով, որոնք նրանց համար հետաքրքրություն են ներկայացնում և վերջիններիս մինչ այդ անհայտ են եղել (հանցավորը մատնանշում է հանցագործության գործիքի գտնվելու տեղը, ներկայացնում է իրեղեն ապացույցներ, օգնում է քննչական փորձարարությունների կազմակերպմանն ու անցկացմանը և այլն):

Մույն գործով դատարանը չի հիմնավորել, թե դեպքի վայրից փախուստի դիմած, հետախուզման մեջ գտնվող և դեպքից միայն 10 օր անց ոստիկանության աշխատակիցների ջանքերով հայտնաբերված մեղադրյալ Ս.Հունիկյանն ինչպես է աջակցել հանցագործության բացահայտմանը, մանավանդ որ, ինչպես երևում է նախաքննության ընթացքում նրա տված ցուցմունքներից, վերջինս հարբած լինելու պատճառով չի կարողացել անգամ մտաբերել իր և տուժողի միջև ծագած վիճաբանության պատճառը, դեպքի մյուս մանրամասները:

Չբերելով հանցագործությունը բացահայտելուն աջակցելը հիմնավորող ոչ մի ապացույց՝ առաջին ատյանի դատարանն այն համարել է Ս.Հունիկյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, որը տուժողին պատճառած նյութական վնասի հատուցման և տուժողի հետ հաշտվելու հետ միասին դիտել է «որպես բացառիկ մեղմացուցիչ հանգամանքներ», որոնց առկայության պայմաններում Ս.Հունիկյանի նկատմամբ կիրառելի է համարել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը, որը դիտվել է «որպես բացառիկ մեղմացուցիչ հանգամանք», արհեստածին է, քանի որ գործի նյութերում այդ հանգամանքը հիմնավորող ոչ մի փաստական տվյալ չկա:

Իր հերթին վերաքննիչ դատարանը, անտեսելով այդ ակնհայտ փաստը, դատավճռում նշել է, որ առաջին ատյանի դատարանը բավարար չափով հաշվի է առել Ս.Հունիկյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները (գ/թ 204):

Միաժամանակ դատարանների կողմից անտեսվել է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող, գործի տվյալներով լիովին հաստատված՝ ակոհոլի ազդեցության տակ հանցանք կատարելու հանգամանքը:

23. Փաստորեն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները հանցագործությունը բացահայտելուն աջակցելու և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության մասին իրենց հետևությունները չեն հիմնավորել և չեն պատճառաբանել, որով թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում:

Բացի այդ, անհիմն կերպով Ս.Հունիկյանին վերագրելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքը՝ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը և ծանրացնող չհամարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքը՝ հանցանքն ակոհոլի ազդեցության տակ կատարելը, դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել են քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման և չեն կիրառել այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

24. Ինչ վերաբերում է դատարանների կողմից բացառիկ ճանաչված հանգամանքներին՝ տուժողին պատճառած նյութական վնասը հատուցելուն և տուժողի հետ հաշտվելուն, ապա դրանք չեն վկայում այն հասարակական փտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Ս.Հունիկյանի կատարած հանցագործությանը:

Դրանք էականորեն չեն նվազեցնում դատապարտյալի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Ս.Հունիկյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմք չեն:

Փաստորեն, հաշվի չառնելով գործի վերը նշված հանգամանքները, Ս.Հունիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակվել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և դատապարտյալի անձին:

25. Արհեստածին մեղմացնող հանգամանքը՝ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը, բացառիկ հանգամանք համարելով, իսկ ավերակող ազդեցության տակ հանցանք կատարելը ծանրացնող չհամարելով և դրանց արդյունքում Ս.Հունիկյանի նկատմամբ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելով՝ դատարաններն արդարադատություն իրականացնելիս թույլ են տվել նյութական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտում:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանները սխալ հետևության են հանգել Ս.Հունիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի մպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին:

Դատարանը Ս.Հունիկյանի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված դատավճռի կայացմանը:

27. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա պատիժը մեղմ լինելու պատճառաբանությամբ բեկանել Ս.Հունիկյանի վերաբերյալ դատական ակտերը և գործն ուղարկել Երևանի քրեական դատարան՝ նոր քննության:

28. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, երբ ակնհայտ մեղմ պատիժ է նշանակվել դատապարտյալի նկատմամբ և չարդարացված բարելավվել է նրա վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել:

Սամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել Երևանի քրեական դատարան՝ նոր քննության:

Սամվել Հունիկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՍԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-13/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 649/07
Նախագահող դատավոր Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Մ.Խաչատրյան, Կ.Ղազարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

Ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Հակոբ Գազիկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. Նախաքննության մարմնի 2007 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ Հակոբ Գազիկի Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության մարմնի 2007 սեպտեմբերի 17-ի որոշմամբ Հ. Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Գործը 2007 թվականի սեպտեմբերի 26-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Գավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Աջափնյակ և Գավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով Հ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 /երեք/ տարի ժամկետով:

3. Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Հակոբ Հովհաննիսյանը և պաշտպան Էդուարդ Աղաջանյանը:

Ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանի և պաշտպան Էդ.Աղաջանյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պատժի մասով փոփոխել է Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը: 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Հակոբ Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտել ազատազրկման՝ 1 /մեկ/ տարի ժամկետով:

4. ՀՀ վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

2008 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

5. Դատապարտյալ Հակոբ Հովհաննիսյանը 2007 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 13⁰⁰ –ի սահմաններում, Երևան քաղաքի Բաշինջաղյան 1-ին փողոցի վրա գտնվող թիվ 156 միջնակարգ դպրոցի մոտ Արա Խաչատրյանի հետ անձնական փոխհարաբերությունների շուրջ ծագած վիճաբանության ժամանակ մարմնական վնասվածքներ հասցնելու նպատակով հետապնդել և դանակով հարվածել է վիճաբանությանը միջամտող անչափահաս Նարեկ Թումասյանին և ղիտավորությամբ նրա առողջությանը պատճառել կյանքին վտանգ սպառնացող՝ ծանր վնաս:

6. Դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ Հ.Հովհաննիսյանի հարազատների կողմից կամովին հատուցվել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը, որ նա գղջացել է կատարածի համար, ինչպես նաև այն, որ տուժողը նշել է, որ հաշտվել է ամբաստանյալի հետ և խնդրել նրա նկատմամբ մեղմ պատիժ նշանակել:

Վերը նշված հանգամանքների հետ մեկտեղ դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Քրեական վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ «ամբաստանյալը անչափահաս տուժողին չի ճանաչել, նրա նկատմամբ թշնամություն և մարմնական վնասվածք հասցնելու որևէ ղիտավորություն չի ունեցել, ուստի նրա գործողությունները վերջին հաշվով պայմանավորված են սույն գործով վկա Արա Խաչատրյանի անօրինական գործողությունների ու նրա կողմից դրսևորած վարքագծի հետևանքով ամբաստանյալի տղամարդկային արժանապատվությունը նսեմացնելու հետ»:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրային վտանգավորության աստիճանը, և դրանք համակցության մեջ ճանաչել է բացառիկ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ նշանակելով խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 64-րդ հոդվածների պահանջները, ինչը հանգեցրել է քրեական օրենքի սխալ կիրառման:

Բողոքում նշվել է, որ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ վերաքննիչ դատարանի նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է, անհամաչափ կատարած արարքի բնույթին և հասարակական վտանգավորության աստիճանին, որն էլ հանգեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի խախտմանը:

Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները: Համաձայն այդ հոդվածի՝ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության վտանգավորության աստիճանով և բնույթով, մինչդեռ ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որը չի կարող ծառայել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակներին:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի այնպիսի խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարել է արդարադատության բուն էությունը:

8. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Հակոբ Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ արդյոք Հ.Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը որպես բացառիկ զնահատելով՝ վերաքննիչ դատարանը պահպանե՞լ է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները:

Սույն որոշման 6-րդ կետի 2-րդ մասում նշված հանգամանքը որպես մեղմացնող ճանաչելը և Հ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս այն հաշվի առնելը.

10. Նախորդ կետում նշված հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը. վերաքննիչ դատարանի կողմից սույն որոշման 6-րդ կետի 2-րդ մասում նշված հանգամանքը կարո՞ղ է հանդիսանալ մեղմացնող հանգամանք:

11. Այս հարցի հետ կապված՝ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը հետևյալն է.

«Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները» (տե՛ս Պ.Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007թ. հունիսի 1-ի որոշումը):

12. Վերաքննիչ դատարանի կողմից մեղմացնող ճանաչված հավելյալ հանգամանքները հետևյալներն են. ամբաստանյալն անչափահաս տուժողին չի ճանաչել, նրա նկատմամբ թշնամություն և մարմնական վնասվածք հասցնելու որևէ դիտավորություն չի ունեցել, իսկ ՀՀ նովհաննիսյանի գործողությունները վերջին հաշվով պայմանավորված են գործով վկա Ա.Խաչատրյանի անօրինական գործողությունների ու նրա կողմից դրսևորած վարքագծի հետևանքով ամբաստանյալի տղամարդկային արժանապատվությունը նսեմացնելու հետ:

13. Վերաքննիչ դատարանի դատավճռում նշված այն հետևությունը, որ «ամբաստանյալը անչափահաս տուժողին (...) մարմնական վնասվածք հասցնելու որևէ դիտավորություն չի ունեցել», հիմնավոր չէ, քանի որ ՀՀ նովհաննիսյանը դատապարտվել է ուղղակի դիտավորությամբ տուժողին դանակով հարվածելու և կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս պատճառելու համար: Քննարկվող հանգամանքի առկայությունը գործով ձեռք բերված ապացույցներով ոչ միայն չի հաստատվում, այլև ուղղակիորեն հերքվում է, ուստի այդ հանգամանքն իրական չէ՝ սույն որոշման 10-րդ կետի «ա)» ենթակետի իմաստով:

14. Հաստատված ճանաչելով այն հանգամանքը, որ վկա Արա Խաչատրյանը թույլ է տվել «անօրինական գործողություններ»՝ վերաքննիչ դատարանը չի պահպանել ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները, քանի որ չի մատնանշվել, թե կոնկրետ ինչ դրսևորում են ունեցել վկա Ա.Խաչատրյանի «անօրինական գործողությունները»: Ուստի նշված հանգամանքը չի համապատասխանում սույն որոշման 10-րդ կետի «գ)» ենթակետում ամրագրված չափանիշին:

15. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»: Օրենքի այս պահանջի հիման վրա՝ դատարանը պարտավոր է դատավճռում շարադրված հետևությունների և դրանց հիմք կազմող փաստերի միջև ապահովել տրամաբանական (պատճառահետևանքային) կապ:

Քննության առարկա գործով բացակայում է տրամաբանական կապն այն հանգամանքների միջև, որ «ամբաստանյալը անչափահաս տուժողին չի ճանաչել, նրա նկատմամբ թշնամություն (...) չի ունեցել» և, որ ՀՀ նովհաննիսյանի «գործողութ-

յունները վերջին հաշվով պայմանավորված են սույն գործով վկա Արա Խաչատրյանի անօրինական գործողությունների ու նրա կողմից դրսևորած վարքագծի հետևանքով ամբաստանյալի տղամարդկային արժանապատվությունը նսեմացնելու հետ»։ Գործի նյութերով հիմնավորված չէ նաև պատճառափաստականության կապը «վկա Արա Խաչատրյանի (...) կողմից դրսևորած վարքագծի», «ամբաստանյալի տղամարդկային արժանապատվությունը նսեմացնելու» և կատարված հանցագործության՝ տուժող Ն.-Թումասյանի առողջությանը դիտավորությանը ծանր վնաս պատճառելու միջև։

Դրա հետ մեկտեղ հաստատված է այն փաստը, որ Հ.Հովհաննիսյանը հետապնդել, բռնել, դանակով հարվածել ու ծանր մարմնական վնաս է պատճառել մի անձի, որը որևէ առնչություն չունի դատապարտյալի «տղամարդկային արժանապատվությունը» ենթադրաբար նսեմացնելու հետ։

16. Հետևաբար՝ վերաքննիչ դատարանի կողմից սույն որոշման 6-րդ կետի 2-րդ մասում նշված հանգամանքը չի կարող է հանդիսանալ դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք։

Դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման իրավաչափությունը.

17. Այս առումով Վճռաբեկ դատարանը քննության է առնում հետևյալ հարցը. Հ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված մեղմացնող հանգամանքների համակցությունը՝ այն, որ դատապարտյալն «ընդունում է իր կողմից կատարած արարքը, անկեղծորեն զղջում է, կամովին հատուցել է հանցագործությանը պատճառված նյութական վնասը, տուժողը հաշտվել է ամբաստանյալի հետ և խնդրել է վերջինիս նկատմամբ նշանակել ավելի մեղմ պատիժ», կարո՞ղ էր «բացառիկ» ճանաչվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի իմաստով։

18. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, (...) կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ (...)»։

19. Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը հետևյալն է. « (...) բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ։ Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը։ Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա» (տե՛ս Հ.Հաբեշյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի որոշումը)։

Օրենքում օգտագործված «բացառիկ» բառը ենթադրում է, որ տվյալ փաստական հանգամանքը կամ դրանց համակցությունը դուրս են գալիս սովորականի շրջանակներից։ Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացած մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը պետք է այն աստիճան առանձնահատուկ լինեն, որ վերածվեն բացառության։

20. Նախորդ կետում նշված չափանիշների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ վերաքննիչ դատարանի կողմից բացառիկ ճանաչված հանգամանքների համակցությունը դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի հանրային վտանգավորությունը չէր կարող նվազեցնել էականորեն, և այդ հանգամանքներն այն աստիճան առանձնահատուկ չեն, որ տվյալ գործը վերածեն բացառության:

21. Հետևաբար՝ Հ.Հովհաննիսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը որպես բացառիկ գնահատելով՝ վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածն առանց բավարար հիմքի կիրառելու արդյունքում Հ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ: Դրա արդյունքում խախտվել են արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրող ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածը, պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներն ամրագրող ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը, ինչպես նաև պատժի նպատակներն ամրագրող ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը:

Սույն գործով վերաքննիչ դատարանի թույլ տված նյութական իրավունքի խախտումների բնույթը և իրավական հետևանքները:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով վերաքննիչ դատարանի թույլ տված քրեական օրենքի խախտումներն առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են: Սիւնույն ժամանակ արդարադատության արդյունավետության շահից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ուժ տալ սույն գործով Երևանի Ա.ջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռին:

24. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցավորի տղամարդկային արժանապատվությունը նսեմացնելու արհեստածին հանգամանքը հաստատված ճանաչելով, այն որպես հանցավորի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք հաշվի առնելով և արդյունքում՝ ամբաստանյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ ակնհայտ անարդարացի պատիժ նշանակելով՝ վերաքննիչ դատարանն արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել նյութական իրավունքի ակնհայտ ու կուպիտ խախտումներ:

25. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում թույլ են տրվել նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատա-

վարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել:

Հակոբ Գագիկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի դատավճիռը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-25/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 19-636/08
Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
դատավորներ՝ Ա.Հովհաննիսյան, Գ.Մելիք-Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազներ

Զ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. «Հայկական երկաթուղի» ՓԲԸ «Իջևանի գծի ուղեմաս» մասնաճյուղի երկաթգծից կատարված գողության փաստի առթիվ 2007 թվականի մարտի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2007 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Վաչիկ Մնացականյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգ-

րավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2007 թվականի հուլիսի 26-ին Վ.Մնացականյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

2007 թվականի հուլիսի 31-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան:

2. Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 14-ի դատավճռով Վաչիկ Մնացականյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նա դատապարտվել է ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ անձնական գույքի 50 տոկոսի բռնագրավմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Մնացականյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ անձնական գույքի 50 տոկոսի բռնագրավմամբ:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Սպարտակ Մարտիրոսյանը, Սերգեյ Գրիգորյանը, Արթուր Ավագյանը և Արթուր Մակիյանը, որոնք վերաքննիչ բողոք չեն բերել:

Ամբաստանյալ Վաչիկ Մնացականյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հունվարի 18-ի դատավճռով պատժի մասով փոփոխել է Վ.Մնացականյանի վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրան դատապարտել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտել է ազատազրկման 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Վ.Մնացականյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի մարտի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2.Գործի փաստական հանգամանքները.

4. Վաչիկ Մնացականյանը 2007 թվականի հունվարին, գողություն կատարելու նպատակով հանցագործության մեջ ներգրավելով դատապարտյալներ Սպարտակ Մարտիրոսյանին, Սերգեյ Գրիգորյանին, Արթուր Ավագյանին, Արթուր Մակիյանին և

Վահան Դարագուլյանին, «Հայկական երկաթուղի» ՓԲԸ «Իջևանի գծի ուղեմաս» մասնաճյուղի երկաթգծի Իջևան-Ագատամուտ 42-րդ կմ-ի 7-9-րդ պիկետներից գողացել են 260 գծամետր զիծ Ռ- 50 տեսակի երկաթուղային ռելսեր՝ պետությանը պատճառելով 2.340.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

2007 թվականի փետրվարի կեսերին Վ.Մնացականյանը կրկին անգամ, նախապես համաձայնության գալով և հանցագործության մեջ ներգրավելով դատապարտյալներ Սպարտակ Մարտիրոսյանին, Արթուր Ավագյանին, Արթուր Մակիյանին և Վահան Դարագուլյանին, «Հայկական երկաթուղի» ՓԲԸ «Իջևանի գծի տեղամաս» մասնաճյուղի երկաթգծի Իջևան-Գոշավանք 58-րդ կմ-ի 7-9-րդ պիկետներից գողացել են 200 գծամետր զիծ Ա 50 տեսակի երկաթուղային ռելսեր՝ պետությանը պատճառելով 1.800.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

2007 թվականի մարտի կեսերին Վ.Մնացականյանը կրկին անգամ, նախապես համաձայնության գալով և հանցագործության մեջ ներգրավելով դատապարտյալներ Սպարտակ Մարտիրոսյանին, Արթուր Ավագյանին, Արթուր Մակիյանին և Վահան Դարագուլյանին, «Հայկական երկաթուղի» ՓԲԸ «Գյումրիի գծի ուղեմաս» մասնաճյուղի երկաթգծի պահեստային գծահատվածից գողացել են 220 մետր ԱՌ- 50 տեսակի երկաթուղային ռելսեր՝ պետությանը պատճառելով 990.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

2007 թվականի մարտի վերջերին Վ.Մնացականյանը կրկին անգամ, նախապես համաձայնության գալով և հանցագործության մեջ ներգրավելով դատապարտյալներ Սերգեյ Գրիգորյանին, Սպարտակ Մարտիրոսյանին, Արթուր Ավագյանին, Արթուր Մակիյանին, նույն տեղամասից գողացել են 110 մետր ԱՌ- 50 տեսակի երկաթուղային ռելսեր՝ պետությանը պատճառելով 495.000 ՀՀ դրամի նյութական վնաս, և 2007 թվականի ապրիլի 2-ի լույս 3-ի զիշերը նույն տեղամասում իր կամքից անկախ պատճառներով բռնվել է երկաթուղային ռելսերի գողության փորձ կատարելու ժամանակ:

Այսպիսով՝ դատապարտյալ Վաչիկ Մնացականյանը, նախապես համաձայնության գալով և հանցագործության մեջ ներգրավելով դատապարտյալներ Սպարտակ Մարտիրոսյանին, Սերգեյ Գրիգորյանին, Արթուր Ավագյանին, Արթուր Մակիյանին և Վահան Դարագուլյանին, 2007 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում մի քանի անգամ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ի «Իջևանի գծի ուղեմաս» և «Գյումրիի գծի ուղեմաս» մասնաճյուղերի երկաթգծերից գողությամբ հափշտակել են 62.5 տոննա ընդհանուր քաշով երկաթուղային ռելսեր՝ ընկերությանը պատճառելով 5.625.000 ՀՀ դրամի նյութական վնաս, իսկ 2007 թվականի ապրիլի 3-ի լույս զիշերը երկաթգծի ռելսերի գողության փորձ կատարելու ժամանակ բռնվել են Գյումրու գծային ոստիկանության աշխատակիցների կողմից:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հանցագործությունների նախաձեռնողը, կազմակերպիչը և ուղղորդողը եղել է Վ.Մնացականյանը, որը հանցակիցներին վստահեցրել ու սրտապնդել է, որ գործի տերն ու պատասխանատուն ինքն է, իր ասածները պետք է անեն և եթե բռնվեն, նրանք որևէ գործ չունեն: Նա է վաճառել գողացված ռելսերը և տնօրինել գումարները:

6. Առաջին առյուծի դատարանը Վ. Մնացականյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է համարել հանցագործության մեջ նրա առանձնապես ակտիվ դերը:

7. Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ առաջին ատյանի դատարանը դատավճռում փաստել է Վ.Մնացականյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող այնպիսի հանգամանք, որը չի բխում գործի փաստական հանգամանքներից, այն է՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, գտել է, որ այն պետք է հանել ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների շարքից, քանի որ ամբաստանյալ Վ.Մնացականյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իրեն մեղսագրված արարքները կատարել է սույն գործով մյուս ամբաստանյալների հետ փոխադարձ համաձայնությամբ:

8. Առաջին ատյանի դատարանը Վ.Մնացականյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է համարել, որ նա խոստովանել է մեղքը, գոջում է կատարածի համար, բնութագրվում է դրական, ակտիվորեն մասնակցել է արցախյան ազատամարտին և ՀՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտերին, ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահը և ԼՂՀ-ի նախագահի անվտանգության հարցերով խորհրդակցանք միջնորդել են նրան մեղմ վերաբերել, կամովին հատուցել է «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ին պատճառված վնասից 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

9. Վերաքննիչ դատարանը նույնպես վերը նշված հանգամանքները համարել է պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ: Դրա հետ միասին վերաքննիչ դատարանը նոր մեղմացնող հանգամանքներ է դիտել Վ.Մնացականյանի խնամքին չաշխատող կնոջ գտնվելը, հանցանքները բացահայտելուն ակտիվորեն աջակցելը և առաջիկայում վնասն ամբողջությամբ հատուցելու պատրաստակամությունը:

10. Ելնելով դրանից՝ վերաքննիչ դատարանը դատավճռում նշել է, որ «վերագրյալ հանգամանքները էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ուստի վերոշարադրյալ հանգամանքներն իրենց համակցությամբ դիտում է որպես բացառիկ հանգամանքների համակցություն և գտնում է, որ ՀՀ քր. օր. 64 հոդվածի կիրառմամբ ամբաստանյալ Վաչիկ Մնացականյանի նկատմամբ հնարավոր է նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ»:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Վ.Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ պատիժ նշանակելով՝ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը:

12. Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը պատիժ նշանակելիս թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը և նշանակել ակնհայտ մեղմ պատիժ, որը հանգեցրել է պատժի մասով չիմնավորված դատավճիռ կայացնելուն: Դատարանը պատիժ սահմանելիս անտեսել է այն կարևոր հանգամանքը, որ Վ.Մնացականյանը հանցագործության կատարման մեջ ունեցել է առանձնապես ակտիվ դեր, նա է նախաձեռնել ու կազմակերպել բազմադրվագ գողությունները, հանցագործության կատարմանը ներգրավել է հանցավոր խմբի մյուս անդամներին, նրանց օգտագործել որպես

բանվորական ուժ՝ վճարելով չնչին գումարներ, իսկ հափշտակությամբ ձեռք բերված ամբողջ դրամական միջոցները տնօրինել է անձամբ: Վերաքննիչ դատարանը ամբաստանյալի պատժի մեղմացումը պատճառաբանել է նաև նրանով, որ վերջինս պարտավորվել է պետությանը պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնել, սակայն առաջին ատյանի դատարանի դատավճից հետո՝ ավելի քան 3 ամսվա ընթացքում, պետությանը պատճառված 5.345.000 դրամ վնասից ոչ մի լումա չի վերականգնել:

13. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, Վ. Մնացականյանին դատապատելով 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, համաձայն որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու, նոր հանցագործությունները կանխելու համար:

14. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, որոնց համաձայն՝ պատժի տեսակն ու չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

15. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում Վ.Մնացականյանի վերաբերյալ հանցանքը մեղմացնող նոր հանգամանքներ չի հայտ չեն ելել, որով հնարավոր կլիներ պատճառաբանել սահմանված պատժի ակնհայտ մեղմացումը:

Թեև վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս վկայակոչել է նույն օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածները, սակայն առանց բավարար հիմնավորման կայացրել է այդ հոդվածների պահանջներից չբխող, իրականում դրանց հակասող և քրեական գործի տվյալներին չհամապատասխանող դատավճիռ:

16. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերող անձը պահանջել է Վաչիկ Ալբերտի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և քրեական գործն ուղարկել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ Վ.Մնացականյանի նկատմամբ արարքի հանցավորությանը, նրա անձը բնութագրող տվյալներին համապատասխան խիստ պատիժ սահմանելու համար:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Վաչիկ Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճիռը պետք է բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 14-ի դատավճիռն հետևյալ պատճառաբանությամբ.

18. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն ամրագրել է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը:

Պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

21. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկը՝

գործի բացառիկ հանգամանքները.

խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը:

Ինչպես նշված է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածում, բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել պատժի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա:

Պատիժը մեղմացնելու բացառիկ հիմքին հավասարագոր է խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը: Պատիժը մեղմացնելու հարցում դա ունի նույն դերը, ինչ գործի բացառիկ հանգամանքն է: Նշված հարցերի հետ կապված Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է նաև Պ.Բայրամյանի (2007 թվականի հունիս), Հ.Հաբեշյանի (2007 թվականի օգոստոս) և Ս.Հունիկյանի (2008 թվականի փետրվար) վերաբերյալ գործերով:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված են յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքները: Այդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները հաստատվում են միայն ապացույցների հիման վրա: Քանի որ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների պարզումն էական նշանակություն ունի հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելու համար, անհրաժեշտ է բազմակողմանի հետազոտել մեղմացնող և ծանրացնող հանգամանքների առկայության մասին վկայող գործի նյութերը՝ դատավճռում նշելով ընդունված որոշման շարժառիթը:

Առաջին ատյանի դատարանը որպես Վ.Մնացականյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առել հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը: Այս ծանրացուցիչ հանգամանքը հաշվի է առնվում հանցակիցների նկատմամբ պատիժ նշանակելիս: Խոսքն այն մասին է, որ հանցագործությանը մասնակցել են երկու կամ ավելի անձինք, և նրանցից մեկը կամ մի քանիսը (կազմակերպիչը, դրդիչը, առանձին ղեպերում՝ կատարողներինց մեկը և այլն) դրսևորել են առանձին ակտիվություն:

Հանցակիցների նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանի կողմից հաշվի են առնվում հանցագործության կատարման անձի փաստացի մասնակցության բնույթն ու աստիճանը, այդ մասնակցության նշանակությունը հանցագործության նպատակների հասնելու մեջ, նրա ազդեցությունը պատճառված կամ հնարավոր վնասի բնույթի և չափի վրա: Հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը բնութագրում է անձի մասնակցության աստիճանը. նրան է պատկանում նախաձեռնությունը, նա հանդես է գալիս որպես հանցագործության ոգեշնչող և առավել հաստատակամորեն է ձգտում հասնել հանցավոր արդյունքի: Ընդ որում, օրենքը ոչ թե խոսում է հանցագործության մեջ անձի պարզապես ակտիվ դերի մասին, այլ մատնանշում է նրա առանձնապես ակտիվ դերը: Այստեղից հետևում է, որ հանցագործության մեջ հանցավորի վարքագիծը պետք է արտահայտվի ոչ թե պարզապես ինչ-որ առաջարկությունների, նախաձեռնությունների ձևով, այլ առանձնաձևաբար, աչքի ընկնելու, օրինակ՝ կազմակերպչականության, մյուս մասնակիցների համախմբման, կարգապահության պահպանման, առաջնորդելու բոլոր դրսևորումներով և այլն: Այդպիսի անձը հանցագործության մյուս մասնակիցների մեջ առավել մեծ վտանգ է ներկայացնում:

23. Գործի նյութերից երևում է, որ բազմադրվագ գողությունները նախաձեռնել և կազմակերպել է Վ.Մնացականյանը, որպես համակատարող անմիջականորեն մասնակցել է դրանց, Կապան քաղաքից Երևան է կանչել գողող Ս.Մարտիրոսյանին, բանվորներ Ս.Գրիգորյանին, Ա.Ավագյանին, Ա.Մակիյանին, նրանց հավատարել,

վատահեցրել է, որ բռնվելու դեպքում պատասխանատուն ինքն է, մյուսները գործ չունեն և պետք է կատարեն իր ասածները, նախապես ընտրել է հափշտակության համար հարմար տեղամասերը, որտեղ իր կողմից վարած «Կամագ» մակնիշի ավտոմեքենայով տարել է վերը նշված անձանց, անձամբ վաճառել է ռելսերը և տնօրինել գումարները՝ հանցակիցներին տալով դրանց աննշան մասը:

Վերը նշված հանգամանքները հիմնավորվում են գործի նյութերով: Այսպես՝ Վաչիկ Մնացականյանը իր ցուցմունքներում հայտնել է, որ ինքն է կազմակերպել գողությունները, հափշտակված ռելսերի վաճառքից գողողին ու բանվորներին տվել է չնչին գումարներ (հ.1, գ.թ 19-21, 70-73, 80-81, 137-138, հ.2, գ.թ 283-285, 353-354):

Դատապարտյալ Սպարտակ Մարտիրոսյանը նշել է, որ Վաչիկն է կազմակերպել գողությունները, թե ում է վաճառել ռելսերը, տեղյակ չեն: Վաչիկն իրենց ասել է, որ «եթե բռնվեմք, տերը ես եմ, պատասխանը ես եմ տալու, դուք գործ չունեք, ինչ ասում եմ, այն էլ արեք»: Իրենք հավատացել են Վ.Մնացականյանին և կատարել նրա ասածները (հ.1, գ.թ 26-27, 108-109, հ.2, գ.թ 286-287):

Դատապարտյալներ Արթուր Մակիյանը, Արթուր Ավագյանը և Սերգեյ Գրիգորյանը ցուցմունքներ են տվել, որ իրենց ընտանիքները գտնվել են սոցիալապես ծանր վիճակում, և գողությունները կատարել են Վ.Մնացականյանի առաջարկությամբ, որն իրենց հավատացրել է, որ գործի տերը ինքն է, իրենք գործ չունեն, դրա համար էլ մասնակցել են գողություններին (հ.1, գ.թ 28-29, 30-31, 32-33, 126-127, 148-149, հ.2, գ.թ 288-289, 290-291, 364, 369-370, 375):

24. Անտեսելով գործի վերը նշված փաստական հանգամանքները՝ վերաքննիչ դատարանը գտել է, որ հանցագործության մեջ Վ.Մնացականյանի առանձնապես ակտիվ դերը «պետք է հանել ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների շարքից» այն անհիմն պատճառաբանությամբ, թե նա «իրեն մեղսագրված արարքները կատարել է սույն գործով մյուս ամբաստանյալների հետ փոխադարձ համաձայնությամբ»:

25. Հակառակ դրան՝ վերաքննիչ դատարանը, առանց որևէ փաստական տվյալ բերելու, որպես Վ.Մնացականյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է նշել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հանցագործությանն ակտիվորեն աջակցելը, ինչպես նաև նրա խնամքին չաշխատող կնոջ գտնվելը և առաջիկայում վնասն ամբողջությամբ հատուցելու պատրաստակամությունը:

26. Փաստորեն, վերաքննիչ դատարանը հանցագործությունը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը, խնամքին չաշխատող կին ունենալը և առաջիկայում վնասն ամբողջությամբ հատուցելու պատրաստակամությունը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ համարելու մասին իր հետևությունները չի հիմնավորել և չի պատճառաբանել, որով թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում:

27. Բացի այդ, անհիմն կերպով Վ.Մնացականյանին վերագրելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքը՝ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը և ծանրացնող չհամարելով ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքը՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. կիրառել է քրեական օրեն-

քի այն հողվածը, որը ենթակա չէր կիրառման և չի կիրառել այն հողվածը, որը ենթակա էր կիրառման:

28. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված փաստարկների առկայության պայմաններում անհիմն են վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ առաջին ատյանի դատարանը Վ.Մնացականյանի նկատմամբ պատժատեսակի և պատժաչափի հարցը քննելիս բավարար չափով ստուգման ու գնահատման չի ենթարկել նրա կողմից կատարած արարքների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, գործի կոնկրետ տվյալները և նշանակել է անարդարացի պատիժ:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը Վ.Մնացականյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հողվածի սանկցիայի սահմաններում նրա նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, որը համապատասխանում է հանցագործության ծանրությանը և դատապարտյալի անձին:

Վերաքննիչ դատարանի դատավճռում շարադրված և բացառիկ ճանաչված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մնացած հանգամանքները, որոնք պատիժ նշանակելիս հաշվի է առել նաև առաջին ատյանի դատարանը, չեն վկայում այն հասարակական վտանգավորության մասին, որը բնորոշ է Վ.Մնացականյանի կատարած հանցագործությանը: Դրանք էականորեն չեն նվազեցնում դատապարտյալի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Վ.Մնացականյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու օբյեկտիվ հիմք չեն:

29. Փաստորեն վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով գործի վերը նշված հանգամանքները, Վ.Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և դատապարտյալի անձին:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության:

31. Վերաքննիչ դատարանը Վ.Մնացականյանի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված դատավճռի կայացմանը:

32. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մատով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու հիմք են:

Քանի որ գործի նյութերով հերքվում են վերաքննիչ դատարանի դատավճռում նշված՝ Վ.Մնացականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառելու մասին բոլոր փաստարկները և հաստատվում պատիժ նշանակելու վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել վերաքննիչ դատարանի դատավճիռը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

33. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, երբ ակնհայտ մեղմ պատիժ է նշանակվել դատապարտյալի նկատմամբ և չարդարացված բարելավվել է նրա վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

34. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բեկանել Վաչիկ Արբերտի Մնացականյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 18-ի դատավճիռը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի նոյեմբերի 14-ի դատավճռին:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-48/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 520/07
Նախագահող դատավոր՝ Գ.Սելիք-Սարգսյան
դատավորներ՝ Կ.Ղազարյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ**

քարտուղար
մասնակցությամբ
դատախազներ

**Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Լ.ՂԱԶԱՐՅԱՆԻ
Հ.ԱՅՎԱԶՅԱՆԻ**

2008 թվականի հուլիսի 25-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ զինվորական դատախազի վճռաբեկ բողոքը Ալիկ Ռ-ուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և Ռ-աֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճիռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. Աղվան Հարությունի Հարությունյանի մահվան փաստի առթիվ 2006 թվականի ապրիլի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2006 թվականի մայիսի 19-ի որոշմամբ Ռ-աֆիկ Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ, և 2006 թվականի մայիսի 20-ի որոշմամբ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Նախաքննության մարմնի 2006 թվականի մայիսի 20-ի որոշմամբ Ալիկ Մաթևոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2006 թվականի հոկտեմբերի 16-ին Ռ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով:

2006 թվականի հոկտեմբերի 16-ին Ա.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով:

2006 թվականի նոյեմբերի 14-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 29-ի դատավճռով Ալիկ Մաթևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 8 (ութ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 9 (ինը) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Ռաֆիկ Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ռ.Հարությունյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Համլետ Ազիզյանը, որը վերաքննիչ բողոք չի բերել:

Ամբաստանյալների, պաշտպանի, մեղադրողների և տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի մայիսի 29-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

4. 2008 թվականի հունիսի 12-ին տուժողի իրավահաջորդ Հարություն Հարությունյանից ստացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որով նա խնդրել է դատավճիռը բեկանել, գործը քննել լրիվ ծավալով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր որոշ

սպանությունը կատարել են ոչ միայն 2 դատապարտյալները, այլ նաև սպայական կազմի ներկայացուցիչները:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալներ Ալիկ Մաթևոսյանին և Ռաֆիկ Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար.

Ալիկ Մաթևոսյանը ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 83117 գորամասի «Կրուգ-2» հենակետում որպես ավագ օպերատոր, իսկ Ռաֆիկ Հարությունյանը՝ ռադիոլուկացիոն հանգույցում որպես վարորդ-էլեկտրամեխանիկ: Կոչումով նրանք եղել են շարքային:

2006 թվականի մարտ ամսին Ալիկ Մաթևոսյանը ռադիոլուկացիոն հանգույցի ժամկետային շարքային զինծառայող Աղվան Հարությունի Հարությունյանից ուզել է վերջինիս առաջնորդել խոստանալով այն վերադարձնել սարքին վիճակում, և ի հավաստումն խոստումն ինքն իր հասցեին տվել է հայիոյանք: Երկու-երեք օր անց Ալիկ Մաթևոսյանն Աղվան Հարությունյանին վերադարձրել է առաջնորդել խոստանված վիճակում, որի հետևանքով հանգույցի բուժկետում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Ալիկ Մաթևոսյանը նույն հանգույցի ժամկետային զինծառայող Ռաֆիկ Հարությունյանի հետ միասին, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները, նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված, ծեծել են Աղվան Հարությունյանին:

6. 2006 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 15-ի սահմաններում, անձնակազմի հրահանգավորման նպատակով հանգույց եկած ավտոծառայության պետ մայոր Սերգեյ Աբրահամյանը դիտողություն է արել չսափրված և համազգեստի խախտումով ներկայացած Ա.Հարությունյանին և դժգոհ մնալով նրա պահվածքից՝ հայիոյել է վերջինիս: Ա.Հարությունյանը նույնպես հայիոյել է մայոր Ս.Աբրահամյանին և կայանի ուղղությամբ դիմել է փախուստի: Քիչ անց Ա.Հարությունյանը վերադարձել է և Ս.Աբրահամյանի հրամանով շարված հանգույցի անձնակազմի առջև ներողություն խնդրել նրանից: Ժամը 16-ի սահմաններում Ա.Մաթևոսյանը ռադիոլուկացիոն հանգույցի ավագների սենյակում բացատրություն է պահանջել Ա.Հարությունյանից, թե ինչու է նա ներողություն խնդրել իրեն մայր հայիոյած մայոր Ս.Աբրահամյանից, այնուհետև նրան դիտողություն է արել իր հետ խոսելիս «արա» բառը գործածելու համար:

7. Այնուհետև իր անձի կարծեցյալ գերազանցությունը հաստատելու և համաժառայողների շրջանում չհեղինակազրկվելու նպատակով Ալիկ Մաթևոսյանը, նախնական պայմանավորվածության համաձայն, ժամը 22-ին Ռաֆիկ Հարությունյանին կանչել է «Կրուգ-2» հենակետի և ռադիոլուկացիոն հանգույցի միջև ընկած «Խաչ» կոչվող վայրը, որտեղ նրան հայտնել է, որ ինքը Աղվան Հարությունյանին կախելու է կամ վերջինս պետք է ինքնուրույն կախվի: Ալիկ Մաթևոսյանը Ռաֆիկ Հարությունյանին հարցրել է, թե որտեղից կարող են հայթաթել համապատասխան պարան և աթոռ, ինչին Ռաֆիկ Հարությունյանը պատասխանել է, որ դրանց տեղը գիտի: Միասին գնացել են ռադիոլուկացիոն հանգույցի հենակետ, ՊՌՎ-18 մակնիշի կապի հատուկ ավտոմեքենայից վերցրել են կանաչ գույնի նստատեղով առանց հենակի աթոռ, իսկ ԱԳ-10 տեսակի դիզելային գեներատորի միջից՝ պարան և սպիտակ մեկուսիչով պատված մալուխ:

Այնուհետև անտառի խորքում գտնվող հաստաբուն ծառի մոտ Ալիկ Մաթևոսյանը Ռաֆիկ Հարությունյանին է տվել լուսարձակով կրակայրիչը, բարձրացել է ծառի վրա, կանգնել գետնից 2,75 մետր բարձրության վրա գտնվող ճյուղին և դրան կապել պարանը, ինչը Ռաֆիկ Հարությունյանը կրակայրիչի միջոցով լուսավորել է:

Ճյուղին կապելով պարանը՝ Ալիկ Մաթևոսյանն իջել է ծառից, աթոռը դրել է պարանի տակ, բարձրացել դրա վրա, պարանի վրա կապելու միջոցով օղակ է արել, այն հարմարեցրել պարանոցին զցելու համար, որից հետո Ռաֆիկ Հարությունյանին ուղարկել է հանգույցի տարածք՝ Աղվան Հարությունյանին կանչելու համար:

8. Ռաֆիկ Հարությունյանը գնացել է հանգույց և ճաշարանից դեպի գորանոց տանող ճանապարհին հանդիպելով Աղվան Հարությունյանին՝ վերջինիս ասել է, որ Ալիկ Մաթևոսյանն իրեն կանչում է: Երկուսով գնացել են ծառի մոտ, որտեղ նրանց է սպասել Ալիկ Մաթևոսյանը: Տեսնելով Աղվան Հարությունյանին՝ Ալիկ Մաթևոսյանն ինքն իր հասցեին հայիոյանք է տվել և ասել է, որ կամ ինքն է Աղվանին կախելու, կամ էլ նա ինքը պետք է կախվի:

Չթողնելով, որ Աղվան Հարությունյանը պատասխանի, Ալիկ Մաթևոսյանը շարունակել է նվաստացնել վերջինիս պատիվն ու արժանապատվությունը, շահարկելով մայրը Ս.Աբրահամյանի կողմից Աղվան Հարությունյանին մայր հայիոյելու հանգամանքը: Ալիկ Մաթևոսյանը փորձել է բռնել Աղվան Հարությունյանի ձեռքից՝ աթոռին բարձրացնելու նպատակով, սակայն վերջինս գտնվելով ընկճված և ճնշված վիճակում, ետ է հրել Ալիկ Մաթևոսյանի ձեռքը և հայիոյանք տալով ասել, որ ինքը թույլ չի տա իրեն կախել, այլ ինքնուրույն կկախվի: Այնուհետև բարձրացել է աթոռին, պարանի օղն անցկացրել է պարանոցին և իջեցրել ձեռքերը:

9. Ալիկ Մաթևոսյանն անմիջապես բռնել է նրա ձեռքերը, տարել մեջքի ետևը, Ռաֆիկ Հարությունյանին առաջարկել է կապել դրանք մալուխով, սակայն վերջինս հրաժարվել է այդ անել՝ պատճառաբանելով, որ իր մատնահետքերը կմնան մալուխի վրա:

Աղվան Հարությունյանին ինքն իրեն օգնելու հնարավորությունից զրկելու նպատակով Ալիկ Մաթևոսյանը նախապես բերված և կտրված մալուխով դաստակների շրջանում կապել է նրա ձեռքերը:

Տեսնելով, որ Ալիկ Մաթևոսյանը բռնել է աթոռի հենակի երկաթյա ձողերից, Ռաֆիկ Հարությունյանը շրջվել է և մի բանի մետր քայլել հանգույցի ուղղությամբ, որի ընթացքում Ալիկ Մաթևոսյանն իր անձի առավելություններն ընդօգնելու մոլուցքով տարված, չնչին առիթով Աղվան Հարությունյանին սպանելու դիտավորությամբ վերջինիս ոտքերի տակից հրել է աթոռը և Աղվան Հարությունյանին ապօրինաբար զրկել կյանքից:

10. Ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարաններն Ալիկ Մաթևոսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետից նույն հոդվածի 1-ին մասով վերադրակելիս գտել են, որ ամբաստանյալի և տուժողի միջև ձևավորված կայուն անձնական անբարյացակամ հարաբերությունները վերջնական արդյունքում դարձել են սպանության շարժառիթ, ուստի հիմքեր չկան արարքը խուլիգանական դրդումներով որակելու համար: Դատավճռում նշվել է. «Ամբաստանյալի կողմից սեփական անձի առավելություններն ընդօգնելու մոլուցքն առկա լինելով նրա մոտ անձնական անբարյացակամ փոխհարաբերությունների հետ միասին վկայում են նրա մոտ վրեժխնդիր լինելու մասին որպես հաստուցում տուժողի գործողությունների»:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերած անձը գտնում է, որ վերաքննիչ դատարանը, անփոփոխ բողոքներով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են հանդիսանում վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանելու համար, մասնավորապես դատարանների հետևությունները հիմնված չեն գործի հանգամանքների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման վրա, որոնց վերլուծությունից բխում է, որ խուլիզանական դրոշմներով կատարված սպանության հիմքում ընկած է դատապարտյալների եսամոլությունը, որը սերված է եղել հասարակական շահերն անտեսելուց, օրենքների և բարոյական նորմերի պահանջներն արհամարհելուց: Նրանք իրենց հակասոցիալական պահանջմունքները բավարարելու կապակցությամբ առաջացած խոչընդոտները վերացնելու հարցում ներքին բավականության զգացումով, իրենց սեփական անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքով տարված, դիմել են ծայրահեղ միջոց սպանության՝ կախաղանի միջոցով: Դատապարտյալների նախաձեռնությամբ հրահրված վիճաբանությունը վեր է ածվել խուլիզանական դրոշմներով կատարված սպանության, որով նրանք վրեժխնդիր են եղել չնչին առիթով արված արդարացի դիտողության համար:

12. Գործի նյութերով հիմնավորվել է, որ Ալիկ Մաթևոսյանը և Ռաֆիկ Հարությունյանը գործառնալու են եղել են հեղինակություն, մյուս զինծառայողների համեմատ գտնվել են արտոնյալ կարգավիճակում, իրենց վարքագծով և պահվածքով իշխել են մյուս զինծառայողների նկատմամբ: Չինվորների միջև առաջացած բոլոր վեճերը, վիճելի հարցերի պարզաբանումը կատարվել է նրանց միջոցով: Չինծառայողները նրանց են դիմել իրենց հուզող բոլոր հարցերով և խնդիրներով, նրանք ազատ տեղաշարժվել են գործառնալու տարածքով: Ալիկը հաճախ առանց թույլտվության գնացել է ռադիոլուկացիոն հանգույց, իսկ Ռաֆիկը՝ «Կրուգ 2» հենակետ, քնել են ընդհանուր գործունեության առանձնացված սպաների հանգստյան սենյակում:

13. Բացի այդ, դատարանները հաշվի չեն առել, որ Ա.Հարությունյանին սպանելու դիտավորությունն իրականացվել է դատապարտյալների փոխադարձ համաձայնությամբ, որի ընթացում նրանք գործել են համատեղ՝ սպանություն կատարելու միասնական դիտավորությամբ: Միավորելով իրենց ջանքերը նրանք ձգտել են միասնական արդյունքի և յուրաքանչյուրն իր ներդրումն է ունեցել ընդհանուր գործում: Հանցագործության նպատակը երկուսի համար էլ եղել է միասնական, ինչի համար նրանք պետք է ենթարկվեն պատասխանատվության՝ ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կատարելու համար:

Իսկ եթե առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները գտել են, որ Ռաֆիկ Հարությունյանն իր գործողություններով միայն օժանդակել է Ալիկ Մաթևոսյանին, ապա արդյոք նա չի օժանդակել խուլիզանական դրոշմներով կատարված սպանությանը: Նույնիսկ այն դեպքում, երբ օժանդակողը հանցագործությունը կատարելու ժամանակ աջակցություն է ցույց տալիս հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, ապա արարքը վերաճում է համակատարման:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ բողոք բերած անձը գտել է, որ թե՛ առաջին ատյանի, և թե՛ վերաքննիչ դատարանները Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի կատարած արարքների քրեաիրավական որակման հարցում հանգել են սխալ եզրակացության: Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի արարքը նախաքննության մարմնի կողմից ճիշտ է որակվել, և նրանք ենթակա են քրեական պատասխանատվության:

նատվության ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով նախատեսված հանցագործության կատարման համար:

14. Ելնելով վերագրյալից՝ բողոք բերող անձը պահանջել է բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճիռն ըստ մեղադրանքի Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով դատապարտելու համար:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

Ա) ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի կիրառումը.

16. Սպանության գործերով կարևոր նշանակություն ունեն տուժողին կյանքից զրկելու շարժառիթներն ու նպատակը: Այդպիսի յուրաքանչյուր գործով պետք է պարզել մեկ ուրիշին մահ պատճառելու շարժառիթները, նպատակը և եղանակը, ինչպես նաև հետագոտել արարքին ճիշտ իրավական գնահատական տալու և հանցավորի նկատմամբ արդարացի պատիժ սահմանելու համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Այն դեպքերում, երբ հանցագործության շարժառիթն ընդգրկված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում որպես տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշ, դրա բացահայտումը խիստ կարևոր նշանակություն ունի արարքի ճիշտ քրեաիրավական գնահատականի համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծանրացնող հանգամանքներում՝ խուլիգանական դրոշումներով սպանության համար:

17. Խուլիգանական դրոշումներով սպանությունը կատարվում է հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերի նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի հողի վրա, երբ հանցավորի վարքագիծը բացահայտ մարտահրավեր է հասարակական կարգին և պայմանավորված է իրեն շրջապատին հակադրելու, նրա նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցադրելու ցանկությամբ:

Իրենց բովանդակությամբ խուլիգանական դրոշումները ներկայացնում են բարդ շարժառիթ, որի մեջ միահյուսվում են անսահման եսամարտությունը, խեղաթյուրված պատկերացումներն անձնական ազատությունների սահմանների մասին, բիրտ ուժի պաշտամունքը, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքը, «փնքնախստատման» պահանջը, սանձարձակությունը, անպարկեշտ վարքագիծը, ցինիզմը, դաժանությունը, հանդգնությունը, ակնհայտ աննշան վիրավորանքի, չնչին առիթով ճիշտ

արված դիտողության համար վրեժ լուծելը և այլն: Նշված շարժառիթների ամբողջությամբ բնորոշ է յուրաքանչյուր խուլիգանության, սակայն խուլիգանական դրոշումներով սպանություն կատարելիս դրանց միանում է նաև մարդկային կյանքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքն ընհանրապես՝ անկախ տուժողի անձից:

Խուլիգանական դրոշումներով սպանություն կատարելիս հանցավորը գործում է ոչ այնքան տուժողի հետ ունեցած անձնական փոխհարաբերություններից ելնելով, որքան հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտումից:

Սպանության այս տեսակին բնորոշ են ոչ թե անձնական, այլ խուլիգանական շարժառիթները, այսինքն՝ դրոշումներ, մղումներ, որոնք ցույց են տալիս բացահայտ անհարգալից վերաբերմունք համակեցության կանոնների և բարոյականության տարրական նորմերի նկատմամբ:

Փաստորեն խուլիգանական դրոշումներով սպանությանը հատուկ է բազմաթիվ, այդ թվում նաև մրցակցային շարժառիթների առկայությունը, որի պայմաններում կարևոր է այն հիմնական, առաջատար, գլխավոր շարժառիթը, որով ղեկավարվել է հանցավորը սպանություն կատարելիս:

Բոլոր դեպքերում, երբ սպանության հիմնական շարժառիթը խուլիգանական է, հանցավորի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

18. Խուլիգանական դրոշումներով կատարվող սպանություններում որոշակի դեր ունի նաև վրեժի զգացումը, որը կարող է առաջանալ ինչպես տուժողի օրինական, այնպես էլ անօրինական գործողությունների հետևանքով: Վրեժ լուծելով՝ հանցավորը ցանկանում է բավարարում ստանալ տուժողի գործողությունների աղոյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց: Այն դեպքերում, երբ սպանությունը տեղի է ունենում որպես աննշան առիթին տրված պատասխան գործողություն, դրանով արտահայտվում է և՛ հանցավորի անհարգալից, արհամարհական վերաբերմունքը հասարակության, և՛ վրեժի զգացումը տուժողի նկատմամբ: Այստեղ նույնպես անհրաժեշտ է հարցը լուծել առաջատար, գլխավոր, գերակայող շարժառիթը բացահայտելու միջոցով: Եթե հանցավորի գործողությունները պարունակում են հասարակական կարգի կոպիտ խախտման, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին նետված բացահայտ մարտահրավերը, իրեն շրջապատին և հասարակությանը հակադրելու և հակազդելու ցանկությունը, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման» պահանջը, եսամոլությունը, սանձարձակությունը, կատաղի, անպարկեշտ վարքագիծը, ցինիզմը, դաժանությունը, աննշան վիրավորանքի, չնչին առիթով ճիշտ արված դիտողության համար վրեժ լուծելը և այլն, ապա նրա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ որպես խուլիգանական դրոշումներով կատարված սպանություն:

19. Խուլիգանական դրոշումներով սպանությունն անհրաժեշտ է տարբերել նաև վեճի կամ կռվի ժամանակ կատարվող սպանություններից: Դրա համար անհրաժեշտ է պարզել, թե ինչն է վեճի ու կռվի առիթ և պատճառ հանդիսացել, ով է եղել դրանց հրահրողը, ինչ է իրենից ներկայացնում հանցավորի և տուժողի անձը, ինչպիսիք են եղել նրանց փոխհարաբերությունները, գործողությունների բնույթը, ով է նրանցից ակտիվ կողմը, որոնք են վեճի ու կռվի ընթացքում կատարված սպանության շարժառիթները:

Որոշ դեպքերում վեճն ու կռիվը սպանության կատարման հանգամանքներ են, մինչդեռ դրանց շարժառիթները կարող են բոլորովին տարբեր լինել: Վեճը կամ կռիվը խուլիգանական վարքագծի փուլերից մեկն է, իսկ սպանությունը՝ դրա ավարտը: Բոլոր դեպքերում շարժառիթը բացահայտելու համար կարևոր նշանակություն ունի հանցավորի գործողությունների բազմակողմանի վերլուծությունը ինչպես սպանություն կատարելու պահին, այնպես էլ մինչև սպանությունը և դրանից հետո: Այստեղ ևս մրցակցող շարժառիթների դեպքում անհրաժեշտ է պարզել սպանության հիմնական շարժառիթը, որով էլ պայմանավորված՝ արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով կամ նույն հոդվածի 1-ին մասով:

Նշված հարցերի հետ կապված Վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է նաև Կարեն Մարկոսյանի վերաբերյալ գործով (2008 թվականի փետրվար):

20. Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով որակելու համար սպանության կատարման տեղը (վայրը) նշանակություն չունի: Այդպիսի սպանությունը կարող է կատարվել ոչ միայն հասարակական վայրում, պարտադիր չէ նաև մարդկանց ներկայությունը:

21. Խուլիգանական դրդումներով սպանությունը հաճախ կատարվում է առանց տեսանելի առիթի կամ աննշան առիթն օգտագործվում է որպես պատրվակ սպանություն կատարելու համար: Որպես հանցագործության արտաքին պատճառ՝ առիթը սերտորեն կապված է հանցավորի ներքին դրդումների հետ: Ուստի հանցագործությունների անմիջական առիթների հետազոտումն ու վերլուծությունը հնարավորություն են տալիս լավ հասկանալու կոնկրետ արարքի պատճառները, բացահայտելու դրա բուն շարժառիթները: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աննշան առիթի առկայության հարցն անհրաժեշտ է լուծել՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից:

22. Գործի նյութերով հիմնավորվել է, որ Ալիկ Մաթևոսյանը և Ռ-աֆիկ Հարությունյանը գորամասում հեղինակություն են եղել, մյուս զինձառայողների համեմատ գտնվել են արտոնյալ վիճակում, իրենց վարքագծով և պահվածքով իշխել են նրանց վրա: Զինվորների միջև առաջացած բոլոր վեճերը լուծվել, իսկ վիճելի հարցերը պարզաբանվել են Ա.Մաթևոսյանի և Ռ-Հարությունյանի միջոցով, իրենց հուզող հարցերով և խնդիրներով զինձառայողները դիմել են նրանց: Ա.Մաթևոսյանն ու Ռ-Հարությունյանն ազատ տեղաշարժվել են գորամասի տարածքով: Ալիկը հաճախ առանց թույլտվության գնացել է ռադիոլուկացիոն հանգույց, իսկ Ռ-աֆիկը՝ «Կրուգ 2» հենակետ, քնել են ընդհանուր գորանոցից առանձնացված սպաների հանգստյան սենյակում: Նույնիսկ սպաները չեն փորձել հակադրվել նրանց:

Դեպքի օրը՝ 2006 թվականի ապրիլի 28-ին, Ա.Մաթևոսյանն ու Ռ-Հարությունյանը սպաների հանգստյան սենյակում, սպաների ներկայությամբ քնության առարկա են դարձրել գորամասի ճաշարանում շարքային Խաչատուր Բաբայանի և ռադիոլուկացիոն կայանի պետ, կոչումով ավագ Համլետ Ազիզյանի միջև տեղի ունեցած վիճաբանության հարցը, որի ընթացքում Ալիկ Մաթևոսյանի ներկայությունից և աջակցությունից ոգևորված շարքային Խ.Բաբայանը բռունցքով հարվածել է ավագ Հ.Ա. Ազիզյանին: Դրանից անմիջապես հետո վերջինիս Ալիկ Մաթևոսյանը հանձնարարել է իր մոտ կանչել Աղվան Հարությունյանին, որից բացատրություն է պահանջել մայրը Ս.Աբրահամյանից ներողություն խնդրելու համար և այդ ընթացքում դիտողություն է արել հաճախակի «արա» բառը գործածող Ա.Հարությունյանին՝ գոռուցնելով նրան իր հետ խոսելիս «արա» բառով չդիմել: Նույն օրը երեկոյան, որոշելով, որ կամ ինքն է կախելու Աղվան Հարությունյանին կամ Աղվանն ինքն է կախվելու, Ալիկ Մաթևոսյան-

ընդ Ռաֆիկ Հարությունյանի օգնությամբ կախաղան է պատրաստել և կախել նրան՝ ապօրինաբար դիտավորությամբ գրկելով կյանքից:

23. Ամբաստանյալ Ալիկ Մաթևոսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասից նույն հոդվածի 1-ին մասով վերադրակելիս դատարանները նշել են. «բանի որ դեպքից շուրջ մեկ ամիս առաջ ամբաստանյալների կողմից տուժողին ծեծի ենթարկելը, դրանից հետո նրանց անձնական փոխհարաբերությունների լարվածությունը, դեպքի օրը տեղի ունեցած միջադեպը, երբ Ս.Աբրահամյանի հետ կապված տեղի ունեցած դեպքի կապակցությամբ նրանց միջև վերհիշվել է նախկին լարված հարաբերությունները, դեպքին անմիջապես նախորդող պահին նրա արած հայտարարությունը տուժողին կախելու մասին, վկայում են նրանց միջև ձևավորված կայուն անձնական անբարյացակամ հարաբերությունների մասին, որը վերջնական արդյունքում էլ դարձել է սպանության շարժառիթը, հետևաբար սպանության կատարումը խուլիզանական դրդումներով որակելու հիմքեր չկան: Ամբաստանյալի կողմից սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքը առկա լինելով նրա մոտ անձնական անբարյացակամ փոխհարաբերությունների հետ միասին վկայում են նրա մոտ վրեժխնդիր լինելու մասին որպես հատուցում տուժողի գործողությունների»:

Փաստորեն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հանգել են հետևության, որ սպանությունը կատարվել է անձնական հարաբերություններից ծագած վրեժի հողի վրա:

24. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները ճիշտ չեն գնահատել Ալիկ Մաթևոսյանի գործողությունների շարժառիթները և հանգել են սխալ հետևության, թե սպանությունը կատարվել է վրեժի հողի վրա:

Ինչպես նշվել է սույն որոշման 18-րդ կետում, վրեժը պատճառված վնասի, բարոյական կամ ֆիզիկական վիրավորանքների դիմաց իբրև հատուցում կատարվող գիտակցական գործողություն է, որը կարող է առաջանալ մարդկանց ամենատարբեր արարքներից: Վրեժ լուծելով՝ հանցավորը ցանկանում է բավարարում ստանալ տուժողի գործողության արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց:

Նախաքննությամբ և դատաքննությամբ հիմնավորվել է, որ առողիծայնարկիչի շուրջ եղած վիճարանության ընթացքում Ալիկ Մաթևոսյանն ու Ռաֆիկ Հարությունյանն են ծեծել Աղվան Հարությունյանին, Ալիկն է Աղվանից բացատրություն պահանջել նրան մայր հայի հյույժ մայր Ս.Աբրահամյանից ներողություն խնդրելու համար:

Այս պայմաններում, ընդունելով Ալիկ Մաթևոսյանի մոտ այնպիսի խուլիզանական շարժառիթի առկայությունը, ինչպիսին սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքն է, դատարանները դատավճռում չեն նշել, թե Աղվան Հարությունյանի որ գործողությունների արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց է ամբաստանյալը, վրեժ լուծելով, ցանկացել բավարարում ստանալ:

Ինչ վերաբերում է այն բանին, որ Ալիկ Մաթևոսյանի հետ խոսելու ընթացքում Աղվան Հարությունյանը հաճախ է գործածել Ալիկին ոչ հաճելի «արա» բառը, որի համար վերջինիս դիտողությանն է արժանացել, ապա քննության չի առնվել և չի գնահատվել այդ աննշան առիթը սպանության համար պատրվակ օգտագործելը որպես խուլիզանական դրդում դիտելու հանգամանքը:

Բացի այդ, նույնիսկ այն դեպքում, երբ նշելով Ալիկ Մաթևոսյանի կողմից իր սեփական անձի առավելություններն ընդգծելու մոլուցքի՝ խուլիզանական շարժառիթի առկայության մասին, դատարանը Աղվան Հարությունյանի սպանությունը դիտել է վրեժի հողի վրա կատարված, այնուամենայնիվ չի հիմնավորել, թե ինչու այս երկու

մրցակցող շարժառիթների պայմաններում առաջատար, գլխավոր շարժառիթ է համարել վրեժխնդրությունը, այլ ոչ թե խուլիգանական դրոշմը:

25. Դատարաններն անտեսել են նաև այն հանգամանքը, որ Ալիկ Մաթևոսյանն է տնօրինել Աղվան Հարությունյանի կյանքը, որոշել նրա ապրել-չապրելու հարցը, գտել է, որ նա անպայման պետք է զրկվի կյանքից, այն էլ՝ կախվելու միջոցով, ինքն է Ռ-աֆիկի օգնությամբ իր ձեռքով պատրաստել կախաղան, այնտեղ է կանչել Աղվանին և իր հասցեին հայհոյանք տալով, նրան հայտնել, որ կամ ինքն է կախելու Աղվանին կամ էլ նա ինքը պետք է կախվի: Այնուհետև, շարունակելով նվաստացնել կախաղանը տեսած, վախեցած, ընկճված և ճնշված վիճակում գտնվող Աղվան Հարությունյանի պատիվն ու արժանապատվությունը, շահարկելով մայրը Ս.Աբրահամյանի կողմից Աղվանին մայր հայհոյելու հանգամանքը, Ալիկ Մաթևոսյանը նրա ձեռքերը տարել է մեջքի հետևը, մալուխով կապել և կախել է տուժողին:

Վերը նշված հանգամանքները դատարանները հետազոտել են միակողմանի, որի հետևանքով քննության առարկա չի դարձել այն հարցը, թե արդյոք Ալիկ Մաթևոսյանի գործողություններն իրենցից չեն ներկայացնում հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին նետված մարտահրավեր, իրեն շրջապատին և հասարակությանը հակադրելու և հակազդելու ցանկություն, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցք, «ինքնահաստատման» պահանջ, ցինիզմ, դաժանություն, աննշան առիթը սպանության պատրվակ օգտագործել: Արդյունքում Ալիկ Մաթևոսյանի արարքը վերադրակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, որով էլ նա դատապարտվել է:

26. Փաստորեն, խախտելով ապացույցների գնահատումն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել Ալիկ Մաթևոսյանի արարքի ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող վերը նշված հանգամանքները: Դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը կատարելու մասին դատարանների հետևությունները չեն բխում գործի փաստական տվյալներից և չեն կարող ճանաչվել հիմնավորված ու պատճառաբանված:

Սույն գործի քննության ընթացքում թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ), հանգեցրել է արարքի չիմնավորված վերադրակման, ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և դատավճիռը բեկանելու հիմք է:

Նոր դատական քննությամբ անհրաժեշտ է վերը շարադրված հարցերի շուրջ կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ պատշաճ գնահատման ենթարկել գործում եղած ապացույցները և հանգել համապատասխան հետևության:

Բ) ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի և 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերի կիրառումը.

27. Նախաքննության մարմինն Ալիկ Մաթևոսյանին և Ռ-աֆիկ Հարությունյանին մեղադրանք է առաջադրել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից սպանության համար:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները գտել են, որ Ռ-Հարությունյանը սպանության համակատարող չէ, այլ օժանդակել է Աղվան Հարությունյանի սպանությանը, ուստի Ալիկ Մաթևոսյանի արարքը որակվել էր ՀՀ քրեական օրենսգրքի

104-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Ռ-աֆիկ Հարությունյանի արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասով:

28. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ

հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից

գործողությունների համատեղությունը

հանցակցության դիտավորյալ բնույթը

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործության կատարմանը: Հանցակցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիտավորյալ մեղքով և միայն դիտավորյալ հանցագործություններում:

29. ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, որդիչը և օժանդակողը: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անգողությանը: Եթե կատարողները երկու կամ ավելի անձինք են, ապա այդպիսի հանցակցությունը կոչվում է համակատարում, որի դեպքում հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է կատարի հանցագործության օբյեկտիվ կողմը: Համակատարում նշանակում է, որ երկու կամ ավելի անձինք անմիջականորեն կատարում են հանցագործության օբյեկտիվ կողմը:

Համակատարում չէ հանցագործությանը այնպիսի մասնակցությունը, երբ անձանցից մեկը տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հանդիսացող ոչ մի գործողություն չի կատարել, այլ միայն օժանդակել է հանցագործությանը:

30. ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խո-

չընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները: Ընդ որում, սուբյեկտիվ կողմից օժանդակությունը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ ինքը մասնակցում է կատարողի կողմից իրականացվող հանցագործությանը և ցանկանում է մասնակցել:

Օժանդակողը կատարողից տարբերվում է այն բանով, որ նա հանցագործության օբյեկտիվ կողմն անմիջականորեն չի կատարում, այլ կամ հանցագործությունը նախապատրաստելու պրոցեսում, կամ դրա ավարտման փուլում կատարողին օգնություն է ցույց տալիս հանցագործության ավարտման ռեալ (իրական) հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Օժանդակողը հանցագործության անմիջական կատարմանը չի մասնակցում, այլ տրամադրելով հանցագործության կատարման համար անհրաժեշտ միջոցներ կամ գործիքներ, վերացնելով խոչընդոտները և այլն, օգնում է կատարողին իրականացնել հանցակիցների դիտավորությունը:

31. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը քրեական պատասխանատվություն է նախատեսել մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

Փաստորեն ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն համարելով մի խումբ անձանց կողմից սպանություն կատարելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետն ըստ էության տարբերություն չի դնում, թե խումբը սպանությունը կատարել է նախնական համաձայնությամբ, թե առանց նախնական համաձայնության:

Այս երկու դեպքում էլ պարտադիր պայման է երկու կամ ավելի կատարողների, համակատարողների առկայությունը, որոնցից յուրաքանչյուրը պետք է անմիջականորեն լրիվ կամ մասամբ կատարի հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ գործողություններ: Այսպիսով՝ խմբի կողմից կատարված սպանությունը նախատեսում է առնվազն երկու համակատարող: Եվ եթե սպանությունն անմիջականորեն կատարվել է մեկ անձի կողմից, սակայն դրա կատարմանը մասնակցել են այլ հանցակիցներ՝ կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող, ապա արարքը չի կարող համարվել խմբի կողմից կատարված սպանություն:

32. Գործի նյութերից երևում է, որ Աղվան Հարությունյանի սպանությունը կատարել է Ալիկ Մաթևոսյանը, որը կախելու միջոցով տուժողին դիտավորությամբ գրկել է կյանքից: Ռաֆիկ Հարությունյանն անմիջական մասնակցություն չի ունեցել սպանության հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների կատարմանը, չի օգնել Ալիկ Մաթևոսյանին տուժողին կյանքից գրկելուն, այլ գիտենալով տուժողին սպանելու դիտավորության մասին, օժանդակել է Ա.Մաթևոսյանին միջոցներ, գործիքներ տրամադրելով (պարան, մալուխ, աթոռ և այլն):

Փաստորեն Ռաֆիկ Հարությունյանը տուժողի սպանության համակատարող չի եղել: Աղվան Հարությունյանին դիտավորությամբ կյանքից զրկել է Ալիկ Մաթևոսյանը, իսկ Ռաֆիկ Հարությունյանն աջակցել է հանցագործության կատարմանն օժանդակության ձևով: Քանի որ սպանությանն օժանդակելու ձևով հանցակցությունը խումբ չի կազմում, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված սպանությունը որակյալ դարձնող հատկանիշը՝ սպանությունը մի խումբ անձանց կողմից կատարելը, որը մեղսագրվել է Ա.Մաթևոսյանին և Ռ.Հարությունյանին, անհիմն է:

Վերը շարադրվածից հետևում է, որ բողոքի այն փաստարկները, թե Ա.Մաթևոսյանն ու Ռ.Հարությունյանը սպանության համակատարողներ են, և տուժողի սպանությունը կատարվել է մի խումբ անձանց կողմից, անհիմն են:

33. Ինչ վերաբերում է Ռաֆիկ Հարությունյանի՝ որպես հանցակցի պատասխանատվությանը, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպիչը, դրոշիչը և օժանդակողը ենթակա են պատասխանատվության կատարված հանցանք նախատեսող հոդվածով՝ հղում կատարելով սույն օրենսգրքի 38-րդ հոդվածին, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք միաժամանակ եղել են հանցագործության համակատարողներ:

Այս պայմաններում Ռաֆիկ Հարությունյանի՝ որպես սպանությանն օժանդակողի, պատասխանատվության հարցը պետք է լուծվի նոր քննությամբ՝ սպանությունն անմիջականորեն կատարած Ալիկ Մաթևոսյանի գործողություններին ճիշտ քրեաիրավական գնահատական տալուց հետո:

Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բեկանելը պայմանավորված է այն բանով, որ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով թույլ տրված վերը նշված խախտումները, որոնց հետևանքով դատապարտյալների նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ և անհիմն, չարդարացված բարելավվել է նրանց վիճակը, հանգեցրել են դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի ելքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատավճռի՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել: Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 1-ին մասով և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով ՀՀ

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 38-րդ հոդվածի 5-րդ, 104-րդ հոդվածի 1-ին մասերով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵՇԳ/0025/01/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵՇԳ/0025/01/08 որոշում
Նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
դատավորներ՝ Ա.Պողոսյան, Հ.Ասատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿԻՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը Սպարտակ Կարենի Նարոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հունիսի 11-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 30-ի դատավճռով Սպարտակ Նարոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել 1 /մեկ/ տարի ժամկետով ազատազրկման:

2. Ամբաստանյալ Սպարտակ Նարոյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր 2008 թվականի հունիսի 11-ի որոշմամբ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 30-ի դատավճիռը պատժի մատով փոփոխել է, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Սպարտակ Նարոյանի նկատմամբ նշանակել է տուգանք 200.000 /երկուհարյուր հազար/ ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա, հաշվի առնելով Սպարտակ Նարոյանի կալանքի տակ գտնվելու ժամկետը, տուգանքի ձևով նշանակված պատիժը մեղմացրել է և նշանակել տուգանք 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հունիսի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է վճռաբեկ բողոք:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, 2008 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Սպարտակ Նարոյանը դատապարտվել է հետևյալ արարքի համար.

Սպարտակ Նարոյանի ծանոթ, նույն գործով դատապարտված Տիգրան Հովհաննիսյանը 2005թ. սեպտեմբերի 8-ին, ժամը 16-ի սահմաններում, գործով չպարզված «ԳԱԶ-31» մակնիշի տաքսի ավտոմեքենայով Երևանի Նոր Խարբերդի ջրանցքի ավիով ընթանալիս նկատել է տուժող Գարիկ Առաքելյանին և պահանջել է կանգնեցնել ավտոմեքենան: Ապա դուրս է եկել ավտոմեքենայից, մոտեցել տուժողին և հարցնելով, թե ինչու վերջինս չի բերել 5 լիտր բենզին գնելու համար դեռևս մեկ ամիս առաջ խոստացած գումարը՝ ապտակել է նրան: Գ.Առաքելյանն էլ ապտակել է Ս.Հովհաննիսյանին, որից հետո վերջինս գետնից վերցրած քարով հարվածել է Գ.Առաքելյանի գլխին, ապա նստելով տաքսի ավտոմեքենան՝ հեռացել է: Դրանից շուրջ 2 ժամ անց՝ 17.45-ի սահմաններում, Գ. Առաքելյանը տուն վերադառնալու ճանապարհին՝ Նոր Խարբերդի 8-րդ փողոցում հանդիպել է նախ կնոջը՝ Լիլիթ Վարդապետյանին, ապա նաև մորը՝ Կարինե Առաքելյանին ու բարեկամուհուն՝ Արևիկ Գրիգորյանին, իսկ քիչ անց նրանց մոտ կանգնել է նույն տաքսի ավտոմեքենան, որից դուրս են եկել Ս.Նարոյանը, Տ.Հովհաննիսյանը, Ա.Կարապետյանը: Վերջիններս շուրջ 15 րոպե բարձրաձայն հայկոյել, բռունցքներով և ոտքերով դիտավորությանը բազմաթիվ հարվածներ են հասցրել Գ.Առաքելյանի մարմնի տարբեր մասերին՝ չենթարկվելով իրենց խուլիգանական գործողությունները խափանող՝ տուժողի մոր, կնոջ և բարեկամուհու պահանջներին: Արդյունքում Գ.Առաքելյանը հարվածից ընկել և կորցրել է գիտակցությունը, իսկ Ս.Նարոյանը, Տ.Հովհաննիսյանը և Ա.Կարապետյանը դիմել են փախուստի:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոք բերած անձը գտնում է, որ Սպարտակ Նարոյանի նկատմամբ վերաքննիչ դատարանը պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտմամբ: Դա հանգեցրել է քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման և ազդել գործի ելքի վրա՝ խաթարելով արդարադատության բուն էությունը: Վերաքննիչ դատարանն անտեսել է ինչպես կատարված հանցագործության վտանգավորության աստիճանն ու բնույթը, այն կատարելու հանգամանքները, այնպես էլ հանցանքը կատարած Սպարտակ Նարոյանի անձը բնութագրող տվյալները: Հանցագործության կատարումից հետո Սպարտակ Նարոյանը դիմել է փախուստի և երեք տարի՝ մինչև հայտնաբերվելը, գտնվել հետախուզման մեջ:

Բողոքի հեղինակը համարում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի սանկցիայով սահմանված պատժի նվազ խիստ տեսակը չէր կարող ապահովվել պատժի նպատակները, ուստի առաջին ատյանի դատարանը, հաշվի

առնելով պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկում նախատեսող հողվածի սանկցիայով իրավացիորեն նշանակել է 1 /մեկ/ տարի ժամկետով ազատազրկում:

6. Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրում է բեկանել Սպարտակ Նարոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հողվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հունիսի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 30-ի դատավճիռն:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հողվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հողվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հողվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

8. Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս հանդգլի, որ դրանով կհասնի պատժի վերը նշված նպատակներին, որոնք փոխկապակցված և փոխհամաձայնեցված են (մեկ նպատակը ենթադրում է մյուսները և յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին): Այսինքն՝ պատժի նպատակներին հասնելու երաշխիք է հանցագործություն կատարած անձի նկատմամբ արդարացի, արարքի ծանրությանը և հասարակական վտանգավորությանը համապատասխան պատիժ նշանակելը:

9. Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հողվածի 2-րդ մասի՝ հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, որոշիչ հանգամանքներ են պատժի տեսակը և չափը որոշելու հարցում: Այսինքն՝ դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության համար վտանգավորության աստիճանի վրա (հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, վնասի չափը և այլն): Դատարանը հանրության համար վտանգավորության բնույթը որոշելու ժամանակ պետք է պարզի և հաշվի առնի նաև պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը հանցանքի կատարման պահին:

10. Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հողվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Դրանք հնարավորություն են

տալիս պատկերացում կազմել հանցագործության` հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը: Դրանք բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում են պատժի վրա:

11. Քրեական օրենքի Ընդհանուր մասի վերը թվարկված դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի, այնպես էլ պատժաչափի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա` նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

12. Ինչպես երևում է գործի նյութերից, 2005 թվականի սեպտեմբերի 8-ին, 5 լիտր բենզին գնելու համար խոստացված գումարը Գ.Առաքելյանի կողմից չտալու պատճառաբանությամբ, Ս.Նարոյանը, Տ.Հովհաննիսյանը, Ա.Կարապետյանը և քննությամբ ինքնությունները չպարզված ևս չորս անձ մոտ 15 րոպե բարձրաձայն հայտնել, բռնցքներով և ոտքերով դիտավորությամբ բազմաթիվ հարվածներ են հասցրել Գ.Առաքելյանի մարմնի տարբեր մասերին` չենթարկվելով իրենց խուլիգանական գործողությունները խափանող` տուժողի մոր, կնոջ և բարեկամուհու պահանջներին: Արդյունքում Գ.Առաքելյանը ստացած հարվածից ընկել է գետնին և կորցրել գիտակցությունը, իսկ Ս.Նարոյանը, Տ.Հովհաննիսյանը, Ա.Կարապետյանը և քննությամբ ինքնությունները չպարզված չորս անձինք դիմել են փախուստի: Այնուհետև Սպարտակ Նարոյանը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից, որի համար նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և քրեական գործի վարույթը կասեցվել է: Չեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նա հայտնաբերվել է մոտ 3 տարի անց` 2008 թվականի մարտի 24-ին և ներկայացվել քրեական վարույթն իրականացնող մարմնին: Գործի քննության ընթացքում Սպարտակ Նարոյանն օգտվելով իր իրավունքից` հրաժարվել է ցուցմունքներ տալ դեպքի մանրամասների և մասնակիցների վերաբերյալ, ինչի արդյունքում մինչև վերջ չի բացահայտվել հանցագործությունը` անհայտ են մնացել Ս.Նարոյանի, Տ.-Հովհաննիսյանի և Ա.Կարապետյանի հետ միասին խուլիգանություն կատարած անձինք:

13. Որպես անձը բնութագրող տվյալ վերաբնիչ դատարանը պետք է հաշվի առներ այն, որ Սպարտակ Նարոյանը հրաժարվել է ցուցմունքներ տալ դեպքի մանրամասների և մասնակիցների վերաբերյալ, ինչի հետևանքով դեռևս 2005 թվականի սեպտեմբերի 8-ին կատարված հանցավոր արարքին մասնակցած ևս չորս անձանց ինքնությունը պարզել չի հաջողվել և այդ կապակցությամբ քննիչը որոշում է կայացրել քրեական գործից մաս անջատելու մասին: Բացի այդ, վերաբնիչ դատարանն անտեսել է Սպարտակ Նարոյանի` երեք տարի հետախուզման մեջ լինելու հանգամանքը, ինչը ևս որպես անձը բնութագրող տվյալ պետք է պարտադիր հաշվի առնվեր պատժի հարցը լուծելիս:

14. Այսպիսով, վերաբնիչ դատարանն օբյեկտիվ ստուգման ու գնահատման չի ենթարկել Սպարտակ Նարոյանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները,

նրա անձը բնութագրող տվյալները: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, բնույթը, որոնք բարձրացնում են Սպարտակ Նարոյանի կատարած հանցագործության վտանգավորության աստիճանը: Արդյունքում Սպարտակ Նարոյանի նկատմամբ նշանակվել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով և չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և հանցավորի անձին:

15. Վերաքննիչ դատարանը Սպարտակ Նարոյանի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չհիմնավորված դատավճռի կայացմանը:

16. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մատով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի սանկցիայով նախատեսված պատժի նվազ խիստ տեսակը տվյալ դեպքում չէր կարող ապահովել պատժի նպատակները, ուստի առաջին ատյանի դատարանն իրավացիորեն Սպարտակ Նարոյանի նկատմամբ նշանակել է հոդվածի սանկցիայով սահմանված առավել խիստ պատժատեսակը, ինչն արդարացի է և համապատասխանում է կատարված հանցագործության ծանրությանը և հանցավորի անձին:

18. Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Սպարտակ Նարոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հունիսի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 30-ի դատավճռին:

19. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բեկանելը պայմանավորված է նրանով, որ վերաքննիչ դատարանում գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, երբ ակնհայտ մեղմ պատիժ է նշանակվել ամբաստանյալի նկատմամբ և չարդարացված բարելավվել է նրա վիճակը, հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

20. Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատարանի որոշման՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հեղվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ դատական

ակտը բեկանելու Վճռաբեկ դատարանի լիազորության կիրառումը անհրաժեշտ է հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոհիշյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքնության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

22. Դատական ակտը բեկանելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

23. Քննվող բողոքի կապակցությամբ՝ արդարացի պատիժ նշանակելու հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սպարտակ Կարենի Նարոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հունիսի 11-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 30-ի դատավճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵԿԴ/0034/01/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԿԴ/0034/01/08 որոշում
Նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան
դատավորներ՝ Ա.Պողոսյան, Հ.Ասատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՍԿԻՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

թ.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը Սարգիս Մմբատի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 13-ի դատավճռով Սարգիս Մմբատի Մարգարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել 1 /մեկ/ տարի ժամկետով ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա դատարանը որոշել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանելով փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով:

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով Սարգիս Մմբատի Մարգարյանի վերաբերյալ քրեական գործը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր 2008 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

դատարանի 2008 թվականի մարտի 13-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ, իսկ վերաքննիչ բողոքը մերժել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է վճռաբեկ բողոք:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, 2008 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Սարգիս Սմբատի Մարգարյանը 2007 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 09.10-ի սահմաններում, «Գոռ» տաքսի ծառայության ՎԱԸ 21-07 մակնիշի 09 SU 269 պետհամարանիշի ավտոմեքենան ոգելից խմիչքների ազդեցության տակ վարելու ժամանակ, Երևան քաղաքի Խանջյան-Տիգրան Մեծ փողոցների խաչմերուկում չի ենթարկվել երթևեկությունը կարգավորող, նշված վայրում ծառայողական պարտականություններ կատարող իշխանության ներկայացուցիչ, ճանապարհային ոստիկանության տեսուչ Գևորգ Վարդանյանի օրինական պահանջներին, դուրս գալով ավտոմեքենայից՝ հայտոյանքներ է տվել նրա հասցեին, ձեռքերով ու ոտքերով հարվածելով Գևորգ Վարդանյանի մարմնի տարբեր մասերին՝ գործադրել է վերջինիս առողջության համար ոչ վտանգավոր բռնություն:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակը գտնում է, որ Սարգիս Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը համարելով իրավաչափ և թույլատրելի՝ դատարանները քրեական օրենքը ճիշտ չեն կիրառել, թույլ տալով նյութական իրավունքի այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում կայացված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

6. Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրում է բեկանել Սարգիս Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ նոր քննության՝ «Ս.Մարգարյանի նկատմամբ հոդվածի սանկցիայի շրջանակներում, առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման, ազատագրված անոթ պատիժ նշանակելու համար»:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7.Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Փաստորեն պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ նշանակելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը:

9. Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը:

10. Ինչպես երևում է քրեական գործի նյութերից, հանդիսանալով տաքսու վարորդ և պատասխանատու լինելով ուղևորների անվտանգ փոխադրման համար, Սարգիս Մարգարյանը 2007 թվականի դեկտեմբերի 20-ին, առավոտյան ժամը 09.10-ի սահմաններում տաքսի ավտոմեքենան վարել է ալկոհոլի ազդեցության տակ, Երևան քաղաքի Խանջյան-Տիգրան Մեծ փողոցների խաչմերուկում չի ենթարկվել երթևեկությունը կարգավորող ճանապարհային ոստիկանության տեսուչ Գևորգ Վարդանյանի օրինական պահանջներին, ավտոմեքենան խաչմերուկի միջնամասում կանգնեցնելով՝ ստեղծել է խցանում և դուրս գալով ավտոմեքենայից՝ հայիոյանքներ է տվել տեսուչ Գևորգ Վարդանյանին, ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, պոկել ուսադիրը: Վիճաբանության հետագա ընթացքը կանխվել է Սարգիս Մարգարյանի վարած տաքսի ավտոմեքենայի ուղևորի և դեպքի վայրում եղած այլ վարորդների միջամտությամբ, որից հետո Սարգիս Մարգարյանը նստել է ավտոմեքենան և հեռացել դեպքի վայրից:

11. Սարգիս Մարգարյանի կողմից հանցագործության կատարման վերը նշված հանգամանքները վկայում են նրա անձի հասարակական վտանգավորության բարձր աստիճանի մասին և բացառում են նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

12. Այս պայմաններում ստորադաս դատարանի մատնանշած՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (իրեն մեղավոր ճանաչելը,

կատարածի համար գոչալը, ամուսնացած լինելն ու խնամքին երկու անչափահաս երեխայի առկայությունը, դրական բնութագրվելը, երիտասարդ տարիքը, նախկինում դատապարտված և արատավորված չլինելը, ինչպես նաև տուժողի դիրքորոշումը) չեն նվազեցնում Սարգիս Մարգարյանի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սարգիս Մարգարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ դատարանի հետևությունները հիմնավորված չեն: Վերաքննիչ դատարանը օբյեկտիվ ստուգման ու գնահատման չի ենթարկել Սարգիս Մարգարյանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները, հաշվի չի առել օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, բնույթը, որոնք բարձրացնում են Սարգիս Մարգարյանի կատարած հանցագործության վտանգավորության աստիճանը:

14. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները թեև սպառնիչ չեն, այնուհանդերձ, պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (տես՝ Գ.Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 1-ի ՎԲ-01/08 որոշումը): Մինչդեռ, Սարգիս Մարգարյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները:

15. Ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սխալ հետևության են հանգել Սարգիս Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը հասնելու հնարավորության մասին:

16. Այսպիսով, Սարգիս Մարգարյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չհիմնավորված դատական ակտի կայացմանը:

17. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարու-

յան օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

18. Նկատի ունենալով, որ Մարգիս Մարգարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի բխում օրենքի պահանջներից, և այդ հիմքով վճռաբեկ բողոք է բերել դատախազը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

19. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բեկանելը պայմանավորված է նրանով, որ վերաքննիչ դատարանում գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված որոշումը չի համապատասխանում արդարության պահանջներին:

20. Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատարանի որոշման՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

21. Քննվող բողոքի կապակցությամբ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մարգիս Սմբատի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԱՎԴ-2/0059/01/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
գործ հ. ԱՎԴ-2/0059/01/08
Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
դատավորներ՝ Ս.Ավետիսյան, Ս.Սիմոնյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՍԿԻՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերած անձ Հուսիկ Բաղդասարյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը Հուսիկ Սուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լևոն Տեր-Պետրոսյանի և մի խումբ անձանց կողմից պետական իշխանությունը յուրացնելու փաստի առթիվ 2008 թվականի փետրվարի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2008 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Հուսիկ Սուրենի Բաղդասարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2008 թվականի մարտի 18-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

2. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 31-ի դատավճռով Հուսիկ Սուրենի Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով:

Ամբաստանյալ Հուսիկ Բաղդասարյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի մայիսի 21-ի որոշմամբ պատժի մասով փոփոխել է Հ.Բաղդասարյանի վերաբերյալ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 31-ի դատավճիռը և նրան դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հավատարմագրված փաստաբանը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. 2008 թվականի փետրվարի 24-ին որոշում է կայացվել քննչական խումբ կազմելու մասին և ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչին հանձնարարվել է ղեկավարել խմբի գործողությունները:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ բավարարել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչի միջնորդությունը և թույլատրել խուզարկություն կատարել Հուսիկ Բաղդասարյանի բնակության վայրում՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի 38-րդ շենքի թիվ 14 բնակարանում:

6. 25.02.2008 թվականին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետին ուղարկվել է առանձին քննչական գործողություն կատարելու հանձնարարություն, որով խնդրվել է կատարել խուզարկություններ Արարատի մարզի մի շարք բնակիչների բնակության վայրերում՝ այդ թվում նաև Հուսիկ Բաղդասարյանի բնակարանում:

7. 2008 թվականի փետրվարի 26-ին խուզարկություն է կատարվել Հուսիկ Բաղդասարյանի բնակության վայրում՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի 38-րդ շենքի թիվ 14 բնակարանում և կազմվել է խուզարկություն կատարելու մասին արձանագրություն, համաձայն որի՝ Հուսիկ Բաղդասարյանը կամովին ներկայացրել է իրեն պատկանող զենքը և զինամթերքը, այդ թվում նաև 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները:

8. 2008 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Հուսիկ Սուրենի Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 1999 թվականին ապօրինի կերպով ձեռք է բերել և իր բնակարանում պահել ռազմամթերք հանդիսացող 7,62 մմ տրամաչափի 16 հատ փամփուշտներ, որոնք 2008 թվականին խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել են նրա բնակարանից:

9. Հանդիսանալով ՀՀ որսորդների միության հասարակական կազմակերպության անդամ և ունենալով զենք կրելու իրավունք՝ Հուսիկ Բաղդասարյանը 1999 թվականին Երևանի «Որսորդ» խանութից ձեռք է բերել «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող իրացան և դրա համար նախատեսված 7.62մմ տրամաչափի փամփուշտներ, որոնք սահմանված կարգով գրանցել է, իսկ 2004 թվականին՝ վերագրանցել:

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության 27.03.2008 թվականի թիվ 20/1203 գրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության ՓԶՎ փորձագետի «N 380»-08 եզրակացությանը ներկայացված 1998 թվականի գործարանային արտադրության 7.62մմ տրամաչափի 22651 համարի «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից ստուգողական վեց կրակոցների արդյունքում ստացված փորձանմուշները /գնդակներ և պարկուճներ/ ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության հանրապետական գնդակապարկուճադարանում վերցված են համապատասխան հաշվառման 2004 թվականից: Վերը նշված որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից /երկու պահունակներով՝ յուրաքանչյուր պահունակից երեքական փամփուշտներ/ փորձանմուշներ ստանալու նպատակով ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչությունից ներկայացվել են 6 հատ 7,62մմ տրամաչափի /7.62.54R/ որսորդական փամփուշտներ. 4 հատը՝ «7.62.54R WOLF», իսկ 2-ը՝ «7.62.54R 00 VE» գործարանային դրոշմվածքներով:

10. ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության փորձագետների 2008 թվականի մարտի 13-ի թիվ 380 եզրակացության համաձայն՝ Հ.Բաղդասարյանի բնակության վայրից խուզարկությամբ հայտնաբերված 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները պիտանի են օգտագործման համար և հանդիսանում են ռազմամթերք:

Հ.Բաղդասարյանի բնակարանից խուզարկությամբ հայտնաբերված 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները նախատեսված են «ՊԿ» տեսակի գնդացիքներից, «ՄՎԴ» տեսակի նշանառու իրացաններից և այլ տեսակի մարտական զենքերից կրակելու համար, սակայն դրանք նախատեսված չեն Հ.Բաղդասարյանի բնակարանից խուզարկությամբ հայտնաբերված 7.62մմ տրամաչափի «Տիգր» տեսակի 22651 գործարանային համարի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից կրակելու համար:

11. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները, Հ.Բաղդասարյանի հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, գտել է, որ սույն քրեական գործի շրջանակներում բավարար հիմքեր չկան նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման համար:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոք բերած անձը գտնում է, որ դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներին, իսկ դատարանի պատճառաբանությունները բացարձակ անհիմն են, քանի որ նշված ապացույցները ձեռք չեն բերված օրենքով սահմանված կարգով և չէին կարող հանդիսանալ ապացույց Հուսիկ Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված համարելու համար:

13. Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Հուսիկ Բաղդասարյանն ունեցել է մարտական զենք, ինչպես նաև «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող

ինքնալից կարարին հրացան պահելու և կրելու իրավունք: Նրա այդ իրավունքը հաստատված է գործում գտնվող ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից սահմանված կարգով տրված թույլտվությամբ: Այսինքն՝ նա ունեցել է մարտական զենքից և հրացանից կրակվող ցանկացած տիպի փամփուշտ ձեռք բերելու և պահելու իրավունք: Հետևաբար նա ունեցել է նաև իր օրինական կարգով ունեցած զենքերից կրակվող 7,62 մմ տրամաչափի փամփուշտները ձեռք բերելու և պահելու իրավունք: Հուսիկ Բաղդասարյանը հայտնել է, որ իր բնակարանում հայտնաբերված 7,62 մմ տրամաչափի փամփուշտները նա գնել է Մաշտոցի պողոտայի վրա գտնվող «Որսորդ» խանութից՝ հրացանի հետ միասին, որոնք եղել են ազատ վաճառքում, այսինքն՝ դրանք ձեռք են բերվել օրինական հիմքով: Եվ եթե նույնիսկ համարվի, որ Հ.Բաղդասարյանն ապօրինի կերպով ձեռք է բերել ու պահել ռազմամթերք հանդիսացող փամփուշտներ, ապա առկա է արարքի «ոչ դիտավորությամբ» կատարելը: Ուստի սխալ է վերաքննիչ դատարանի եզրահանգումը, թե Հ.Բաղդասարյանը նշված արարքը կատարել է ուղակի դիտավորությամբ:

14. Գատարանը պետք է անթույլատրելի համարեր 2008 թվականի փետրվարի 26-ի խուզարկության արձանագրությունը, քանի որ այն կազմվել է տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի ավագ հետաքննիչ Միրզոյանի կողմից:

15. Սույն գործով փորձաքննությունը կատարվել է դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ, փորձագետների թիվ 380 եզրակացությունը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածի պահանջներին, ուստի այն դատարանի կողմից պետք է համարվեր անթույլատրելի ապացույց, ինչը դատարանը չի արել:

16. Գատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ Հուսիկ Բաղդասարյանը նշված փամփուշտները կամովին ներկայացրել է խուզարկությանը մասնակից ոստիկաններին, որը նշված է խուզարկության արձանագրության մեջ: Այս դեպքում պետք է կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված պահանջը, որի համաձայն՝ սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում: Մինչդեռ դատարանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ պահանջը և ապօրինի նրան ենթարկել է քրեական պատասխանատվության:

17. Չնայած վերաքննիչ դատարանը նշել է, որ Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը պատիժ նշանակելիս հաշվի չի առել Հ.Բաղդասարյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, թվարկել է դրանք, սակայն այդ ամենն ավելի շուտ կրում է ձևական բնույթ, որով փորձել է օրինական տեսք տալ առաջին ատյանի դատարանի ակնհայտ անարդար դատավճռին և իբր թե մեղմացնել դրա անբարենպաստ հետևանքները:

18. Գտնելով, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները հանգեցրել են ծանր հետևանքների, ինչպես նաև սույն գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ բողոք բերած անձը պահանջել է բողոքը ընդունել վարույթ, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշումը, փոփոխել դատա-

կան ակտը և Հուսիկ Բաղդասարյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

19. Ապօրինի կերպով ռազմամթերք հանդիսացող 16 հատ մարտական փամփուշտների ձեռք բերելու և պահելու մեջ Հուսիկ Բաղդասարյանի մեղավորությունը հաստատված է նրա բնակարանում խուզարկություն կատարելու մասին արձանագրությամբ, իրեն նա պապացույց 16 հատ 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտներով, ՀՀ ոստիկանության փորձագիտական վարչության փորձագետների 2008 թվականի մարտի 13-ի թիվ 380 եզրակացությամբ, ինչպես նաև դատարանին տրված նույն վարչության 27.03.2008 թվականի թիվ 20/1203 գրությամբ:

Որոշման հիմքում դրված վերը նշված ապացույցները վերաքննիչ դատարանը հետազոտել է դատաքննության ժամանակ և դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել է ճիշտ եզրակացության: Այս ապացույցների առկայության պայմաններում կատարված հանցագործության մեջ Հ.Բաղդասարյանի մեղավորության մասին վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտել:

Այսպես՝ անհիմն է բողոքի այն փաստարկը, թե դատարանը պետք է անթույլատրելի համարեր 2008 թվականի փետրվարի 26-ի խուզարկության արձանագրությունը, քանի որ այն կազմվել է տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի ավագ հետաքննիչ Միրզոյանի կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ: Նույն հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է իր կողմից նախապատրաստվող նյութերով և քրեական գործով հետաքննության մարմնին նրա համար պարտադիր գրավոր հանձնարարություններ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին: Իսկ նշված հոդվածի 10-րդ կետը սահմանում է, որ նա լիազորված է առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարել հետաքննության մարմնին:

Քրեական գործի նյութերից /գ.թ. 4/ երևում է, որ 24.02.2008 թվականի որոշմամբ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Մարությանի կողմից հարուցվել է քրեական գործ, և այն ընդունվել է վարույթ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ /գ.թ.5/ ստեղծվել է քննչական խումբ, և Մ.Մարությանին հանձնարարվել է դե-

կավարել խմբի գործողությունները: 25.02.2008 թվականին ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության պետին ուղարկվել է առանձին քննչական գործողություն կատարելու հանձնարարություն, որով խնդրվել է խուզարկություններ կատարել Արարատի մարզի մի շարք բնակիչների բնակության վայրերում՝ այդ թվում նաև Հուսիկ Բաղդասարյանի բնակարանում /գ.թ. 10/: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ քննիչը առանձին քննչական գործողության կատարումը հանձնարարել է հետաքննության մարմնին, որն էլ օրինական կարգով կատարել է խուզարկությունը:

20. Անհիմն է բողոքի այն փաստարկը, թե Հուսիկ Բաղդասարյանը 16 հատ 7,62մմ տրամաչափի փամփուշտները կամովին ներկայացրել է խուզարկությանը մասնակից ոստիկաններին, հետևաբար նա պետք է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ազատվեր քրեական պատասխանատվությունից:

Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Սույն գործով ռազմամթերք հանդիսացող 16 հատ 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտները հանձնվել են ապօրինի զենք ու ռազմամթերք հայտնաբերելու և առգրավելու հետ կապված քննչական գործողություն կատարելու ընթացքում, որը վերը շարադրված պատճառաբանությամբ կամովին հանձնում չէ և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ չի կարող:

21. Անհիմն է նաև բողոքի այն փաստարկը, թե Հուսիկ Բաղդասարյանը նշված արարքը կատարել է «ոչ դիտավորությամբ», այսինքն՝ բացակայում է ուղղակի դիտավորությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. անձը գիտակցում է, որ ապօրինի կերպով ձեռք է բերում, իրացնում, պահում, փոխադրում կամ կրում զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր, գիտակցում է իր գործողությունների՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այդ գործողությունները:

Գործի նյութերից երևում է, որ Հուսիկ Բաղդասարյանը նախկինում ՀՀ ՊՆ մախարարության համակարգում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, ունի զինվորական մայրի կոչում, մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախի ինքնապաշտպանության մարտերին, քաջատեղյակ է զենքի ու ռազմամթերքի մարտական և ոչ մարտական լինելու մասին, իրազեկ է եղել, որ այդ փամփուշտները մարտական են, դրանց ապօրինի շրջանառությունը «Ձեռքի մասին» ՀՀ օրենքի խախտում է և քրեական պատասխանատվության հիմք, սակայն ռազմամթերք հանդիսացող այդ

փամփուշտները նա ապօրինի կերպով ձեռք է բերել ու պահել, այսինքն՝ գործել է ուղղակի դիտավորությամբ:

22. Անհիմն է նաև փորձագետների թիվ 380 եզրակացությունն անթույլատրելի ապացույց համարելու մասին բողոքի փաստարկը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված եզրակացությունը հիմնված է փորձագետներին տրամադրված բոլոր օբյեկտների հետազոտման վրա, բովանդակում է սպառնիչ պատասխաններ առաջադրված բոլոր հարցերին, դրանք չեն հակասում գործի փաստական հանգամանքներին, փորձաքննությունն նշանակելիս և անցկացնելիս թույլ չեն տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, այն գնահատվել է ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված դատարանի ներքին համոզմամբ, ուստի այդ եզրակացությունն անթույլատրելի ապացույց համարելու հիմքեր չկան:

23. Անհիմն է նաև բողոքի այն փաստարկը, թե Հ.Բաղդասարյանի բնակարանում հայտնաբերված 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտները նա գնել է Երևանի Մաշտոցի պողոտայի վրա գտնվող «Ռստրոյ» խանութից՝ «Տիգր» տեսակի հրացանի հետ միասին, որոնք եղել են օրինական վաճառքում: Ինչպես երևում է ՀՀ ոստիկանության փորձաքննազիտական վարչության 27.03.2008 թվականի թիվ 20/1203 գրությունից, ՀՀ ոստիկանության ՓԲՎ փորձագետի «N 380»-08 եզրակացությանը ներկայացված 1998 թվականի գործարանային արտադրության 7.62մմ տրամաչափի «22651» համարի «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից ստուգողական վեց կրակոցների արդյունքում ստացված փորձանմուշտները /գնդակներ և պարկուճներ/ ՀՀ ոստիկանության փորձաքննազիտական վարչության հանրապետական գնդակապարկունադարանում վերցված են համապատասխան հաշվառման 2004 թվականից: Վերը նշված որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից /երկու պահումակներով՝ յուրաքանչյուր պահումակից երեքական փամփուշտներ/ փորձանմուշտներ ստանալու նպատակով ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչությունից ներկայացվել են 6 հատ 7.62մմ տրամաչափի /7.62.54R/ որսորդական փամփուշտներ. 4 հատը՝ «7.62.54R WOLF», իսկ 2-ը՝ «7.62.54R 00 VE» գործարանային դրոշմվածքներով:

Մինչդեռ ՀՀ ոստիկանության փորձաքննազիտական վարչության փորձագետների 2008 թվականի մարտի 13-ի թիվ 380 եզրակացությունից երևում է, որ Հ.Բաղդասարյանի բնակության վայրից խուզարկությամբ հայտնաբերված 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները այիտանի են օգտագործման և հանդիսանում են ռազմամթերք: Նույն եզրակացության համաձայն՝ դրանք հրացանային մարտական փամփուշտներ են, որոնք նախատեսված են «ՊԿ» տեսակի գնդացիներից, «ՍՎԳ» տեսակի նշանառու հրացաններից և այլ տեսակի մարտական զենքերից կրակելու համար և նախատեսված չեն Հ.Բաղդասարյանի բնակության վայրից խուզարկությամբ հայտնաբերված 7.62մմ տրամաչափի «Տիգր» տեսակի 22651 գործարանային համարի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից կրակելու համար:

24. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ պատճառաբանված չէ վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, թե Հ.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմքեր չկան:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Փաստորեն պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի հանձնվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը մնան հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Ինչպես երևում է գործի նյութերից, Հ.Բաղդասարյանն առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցանք, նախկինում արատավորված չի եղել, մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախի ինքնապաշտպանության մարտերին, ունի մայրի զինվորական կոչում, երկար տարիներ հրամանատարական տարբեր պաշտոններ է զբաղեցրել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում, ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է Արիության մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգևատրվել է անվանական զենքով, խնամքին ունի 3 անչափահաս երեխա, որոնցից մեկը՝ մինչև 14 տարեկան: Հուսիկ Բաղդասարյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների չկան:

Հաշվի առնելով Հ.Բաղդասարյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Հ.Բաղդասարյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը:

25. Գործում Հ.Բաղդասարյանի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում որոշում կայացնելով նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը մերժելու մասին՝ վերաբնիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. չի կիրառել օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Դ-ա հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող չհիմնավորված որոշման կայացման:

26. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի դատական ակտը, քանի որ վերջինիս կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնել նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշումը բեկանել և փոփոխել. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Հուսիկ Բաղդասարյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ազատազրկումը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Հուսիկ Բաղդասարյանին անհապաղ ազատել պատիժը կրելուց:

2. Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-76/08

Հայաստանի Հանրապետության
քրեական և զինվորական գործերով
վերաքննիչ դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 184/06
նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան
դատավորներ՝ Ա.Խաչատրյան, Մ. Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը Լյովա Գառնիկի Շահինյանի վերաբերյալ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի դատավճռով Լյովա Գառնիկի Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-189 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքների համար և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման վեց տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 38-189 հոդվածի 3-րդ մասով ազատազրկման՝ երկու տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժների մասնակի գումարման սկզբունքի կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժին՝ 6 տարի ժամկետով ազատազրկմանը, մասնակիորեն

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-189 հոդվածի 3-րդ մասով նշանակված երկու տարի ժամկետով ազատազրկման 1 տարին և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 7 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման՝ պատժի կրման սկիզբը հաշվելով 2005 թվականի փետրվարի 22-ից: Բացի այդ, դատարանը վճռել է Լ.Շահինյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 2.655.400 դրամ՝ որպես հանցագործությանը պետությանը պատճառված վնասի հատուցում:

2. 2006 թվականի փետրվարի 21-ին Լ.Շահինյանը, իսկ 2006 թվականի փետրվարի 22-ին Լ.Շահինյանի շահերի պաշտպան Լուսինե Սահակյանը առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի դատավճիռը բողոքարկել են ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ դատավճիռը բեկանելու և արդարացման դատավճիռ կայացնելու պահանջով:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, քննության առնելով Լ.Շահինյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքները, 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ Լ.Շահինյանի և նրա պաշտպան Լ.Սահակյանի վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

3. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռի դեմ Լ.Շահինյանի և նրա պաշտպան Լ.Սահակյանի կողմից 2006 թվականի հուլիսի 21-ին և 2006 թվականի հուլիսի 24-ին վճռաբեկ բողոքներ են բերվել՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու պահանջով:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2006 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է՝ տրամադրելով մեկամսյա ժամկետ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

2006 թվականի սեպտեմբերի 7-ին Լ.Շահինյանը վերակազմելով վճռաբեկ բողոքը, այն ներկայացրել է վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ բողոքը վերադարձվել է:

2006 թվականի դետեմբերի 29-ին Լ.Շահինյանի պաշտպան Լ.Սահակյանը, իսկ 2007 թվականի հունվարի 22-ին Լ.Շահինյանը այլ հիմքով վճռաբեկ բողոք են բերել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռի դեմ՝ դարձյալ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու պահանջով: ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ վերոնշյալ վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռի դեմ 2008 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից բերվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստա-կան հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

4. Լ.Շահինյանը 2001 թվականի փետրվարի 26-ին հիմնադրել է «Շալե Կոնսալտինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և նշանակվել է այդ ընկերության տնօրեն: Ընկերությունն իրականացրել է խորհրդատվական գործունեություն, բայց աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվություն չի ունեցել: 2001 թվականի մարտին Լ.Շահինյանը ծանոթացել է աուդիտորական գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող «Աուդիտ Խորհրդատու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր Սուրեն Մանուկյանի հետ և նրա համաձայնությամբ դարձել նաև հիշյալ ընկերության տնօրենը:

2001 թվականի ապրիլի 16-ին Լ.Շահինյանը որպես մասնագետ աշխատանքի է ընդունել իր ուսանողական ընկեր Լևոն Հովհաննիսյանին, իսկ 2001 թվականի ապրիլի 20-ին, երբ նշանակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնում, «Շալե Կոնսալտինգ» և «Աուդիտ Խորհրդատու» ՍՊ ընկերությունների տնօրեն է նշանակել Լ.Հովհաննիսյանին: Սակայն փաստացի հանդիսանալով «Շալե Կոնսալտինգ», «Աուդիտ Խորհրդատու», իսկ ավելի ուշ նաև «Աուդիտ Խորհուրդ Մերվիս» ՍՊ ընկերությունների ղեկավար՝ 2002-2003թթ. ընթացքում Լ.Հովհաննիսյանի հետ նախնական համաձայնությամբ, կեղծ փաստաթղթեր կազմելու և օգտագործելու միջոցով, յուրացման եղանակով հափշտակել է «Աուդիտ Խորհրդատու» և «Աուդիտ Խորհուրդ Մերվիս» ՍՊ ընկերություններին պատկանող առանձնապես խոշոր չափերի, համապատասխանաբար 60.0 մլն և 16.0 մլն դրամ գումարները:

5. Լ.Շահինյանը 2001-2002թթ. ընթացքում կազմակերպել է, առանց ծառայությունների մատուցման, Լ.Հովհաննիսյանի կողմից «Շալե Կոնսալտինգ» ՍՊ ընկերության անունից «Աուդիտ Խորհրդատու» ՍՊ ընկերության համար խորհրդատվական ծառայություններ մատուցելու վերաբերյալ կեղծ փաստաթղթերի կազմումն ու տրամադրումը, որի արդյունքում 2001-2002թթ-ի ընթացքում, «Աուդիտ Խորհրդատու» ՍՊ ընկերության միջոցներից «Շալե Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը վճարվել է 7.965.900 դրամ գումար, որի հետևանքով պետական բյուջե չի վճարվել 2.655.400 դրամի ԱԱՀ-ի և շահութահարկի գումար՝ պետությանը պատճառելով նույնքան գումարի առանձնապես խոշոր վնաս:

Լ.Շահինյանը, միաժամանակ հանդիսանալով «Շալե Կոնսալտինգ» և «Աուդիտ Խորհրդատու» ընկերությունների գործադիր տնօրեն, 2001 թվականի ապրիլի 18-ին խորհրդատվական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր է կնքել երկու ընկերությունների միջև, որում որպես «Աուդիտ Խորհրդատու» ՍՊ ընկերության տնօրեն է ներգրավվել Լ.Հովհաննիսյանին այն դեպքում, երբ վերջինս ընկերության աշխատող չի եղել, համապատասխան լիազորագիր և ընկերության անունից հանդես գալու իրավունք չի ունեցել:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստաթղթերը և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Վճռաբեկ բողոքում նշվում է՝ թեև նախաքննությամբ և դատաքննությամբ հիմնավորվել է, որ Լ.Շահինյանը կազմակերպել է առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթերի կազմումն ու տրամադրումը, որի հետևանքով «Աուդիտ Խորհրդատու» ՍՊ ընկերության կողմից պակաս է հաշվարկվել և պետ. բյուջե չի վճարվել 1.327.700 դրամ ԱԱՀ-ի և 1.327.700 դրամ շահութահարկի գումար, որի հետևանքով պետությանը պատճառվել է նույնքան գումարի վնաս, սակայն հանրուրեն վտանգավոր արարքը կատարվել է 2001-2002 թթ-ին: Նշված ժամանակահատ-

վածում գործող քրեական օրենսգրքով կեղծ փաստաթղթերի կազմումն ու տրամադրումը արգելված, հետևաբար և քրեորեն հետապնդելի արարքներ չեն եղել: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ բողոք բերող անձը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նոր-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս հաշվի չի առել ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված դրույթները:

7. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով բեկանել Երևանի Կենտրոն և Նոր-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատական ակտերը և այդ մասով վարույթը կարճել:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է հետևյալ հարցը. իրավաչափ էր արդյոք կեղծ ձեռնարկատիրության կազմակերպման համար Լ.Շահինյանին դատապարտելը՝ այն դեպքում, երբ նրան մեղսագրվող արարքները կատարվել էին նախքան կեղծ ձեռնարկատիրության հանցակազմի ամրագրումը քրեական օրենսգրքում:

9. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր արարքը կատարելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

ՀՀ իրավական ակտերի մասին օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝ «Իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում: Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին»:

Արարքը քրեականացնող կամ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքի համար պատասխանատվությունը խստացնող օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիությունը բխում է մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային-իրավական ակտերից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազ-

գալին դաշնագրի 15-րդ, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածների դրույթներից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ որ չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: Չի կարող մասնակցվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին»:

Արարքը քրեականացնող կամ քրեական օրենսգրքով արգելված արարքի համար նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը խստացնող օրենքի հետադարձ ուժի անթույլատրելիության շեշտադրմանն են ուղղված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Մասնավորապես՝ Ս.Ու.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության և Ս.Վ.ն ընդդեմ Միացյալ Թագավորության (C.R. v. The United Kingdom, 1995թ., գանգատ N 20190/92, կետ 32; S.W. v. The United Kingdom, 1995թ., գանգատ N 20166/92, կետ 34) գործերով որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այն դիրքորոշումն է արտահայտում, որ 7-րդ հոդվածով սահմանված երաշխիքը հանդիսանում է իրավունքի գերակայության անբաժան տարրը, կարևոր տեղ է զբաղեցնում Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության համակարգում: Դա հատկապես դրսևորվում է այն հանգամանքով, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ դրանից որևէ բացառություն չի թույլատրվում նույնիսկ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ: 7-րդ հոդվածը պետք է մեկնաբանել կամ կիրառել այնպես, ինչպես բխում է նրա առարկայից և նպատակներից, որպեսզի ապահովվի կամայական հետապնդումից, դատապարտումից և պատժից արդյունավետ պաշտպանությունը:

Գ-ն ընդդեմ Ֆրանսիայի (G. v France, 1995թ., գանգատ N 15312/89) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ միայն օրենքով կարող է սահմանվել, թե որ արարքներն են համարվում հանցագործություններ և ինչ պատիժներ են նախատեսվում դրանց կատարման համար, և արգելվում է օրենքի հետադարձ ուժը, եթե դա ի վնաս մեղադրյալի է:

Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի (Kokkinakis v. Greece, 1993թ. գանգատ N 14307/88, կետ 52), գործով՝ 7-րդ հոդվածը (1-ին մաս) չի սահմանափակվում միայն ի վնաս մեղադրյալի օրենքի հետադարձ ուժի արգելմամբ: Այն սահմանում է ավելի ընդհանուր բնույթի սկզբունք, այն է՝ հանցագործության սահմանումը և դրանց համար պատիժը պետք է նախատեսվի միայն օրենքով, և որ քրեական օրենքը չպետք է լայնորեն մեկնաբանվի ի վնաս մեղադրյալի, օրինակ՝ անալոգիայի կիրառմամբ, ինչը նշանակում է, որ հանցագործությունները պետք է հստակորեն սահմանվեն օրենքով: Այս պահանջը կատարված է համարվում, եթե անձը կարող է համապատասխան նորմերի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում մասնադատարանի մեկնաբանության միջոցով իմանալ, թե որ գործողությունների և անգործության համար կարող է ենթարկվել պատասխանատվության:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:

Սույն գործով դատապարտյալ Լ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել յուրացման և վատնման և կեղծ ձեռնարկատիրության կազմակերպման համար: Յուրացման և վատնման հանցակազմը նախատեսված է ինչպես ՀՀ 1961թ., այնպես էլ գործող՝

2003թ. քրեական օրենսգրքում, մինչդեռ կեղծ ձեռնարկատիրության հանցակազմն առաջին անգամ նախատեսվել է ՀՀ 2003թ. քրեական օրենսգրքում. 1961թ. օրենքում այն նախատեսված չի եղել:

Սույն գործի քննության ընթացքում պարզվել է, որ Լ.Շահինյանին մեղսագրվող 38-189-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարվել է 2001-2002 թթ.-ի ընթացքում, այսինքն այն ժամանակահատվածում, երբ կեղծ ձեռնարկատիրությունը քրեական օրենսգրքով արգելված, հետևաբար և քրեորեն պատժելի չէր, ուստի և ՀՀ քրեական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով չէր կարող հանցակցությամբ կատարվել:

Ստացվում է, որ սույն գործով Լ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել այնպիսի արարքի հանցակցելու համար, որը դրա կատարման պահին գործող քրեական օրենքով հանցագործություն չի համարվել: Այսինքն՝ արարքի քրեականացման մասով հետադարձ ուժ է տրվել 2003 թվականի քրեական օրենսգրքին, ինչը Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը, անթույլատրելի է համարում:

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճռով անփոփոխ թողնելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի դատավճիռը, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը: Չբեկանելով առաջին ատյանի դատարանի ակտը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որը ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը (...): Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որոշում է կայացնում ինչպես առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատական ակտերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի մասով բեկանելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Բողոքը բավարարել: Լյովա Գառնիկի Շահինյանի նկատմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի փետրվարի 7-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 14-ի դատավճիռները մասնակիորեն բեկանել և ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցնել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Լյովա Գառնիկի Շահինյանի նկատմամբ

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

նշանակված 7(յոթ) տարի ազատազրկումը պակասեցնելով 1(մեկ) տարով՝ թողնել կրելու ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով:

2. Դատավճիռների մնացած մասերը թողնել անփոփոխ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

2008 թվականի դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Գործ ՎԲ-17/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ 105/07
Նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան
դատավորներ՝ Ս.Ղազարյան, Ս.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով հավատարմագրված փաստաբան Արթուր Ղազարյանի միջոցով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքը թիվ 55200706 քրեական գործով Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Մխիթարյանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի «Քրեական գործը կարճելու մասին» որոշման 2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասը հաստատելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Մխիթարյանը 2006 թվականի մարտի 6-ին Սեյրան Այվազյանի կողմից համազրուղացիներին և ոստիկանության աշխատակիցներին մարմնական վնասվածքներ հասցնելու փաստի առիթով հարուցել է թիվ 55200706 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (երկու կամ ավելի անձանց սպանության փորձ) հատկանիշներով:

Ս.Այվազյանի քույրը՝ Անահիտ Այվազյանը, 2006թ. ապրիլի 11-ի քննիչի որոշմամբ թիվ 55200706 քրեական գործով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

2006 թվականի հոկտեմբերի 3-ին քննիչը որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ հանցանք կատարած անձը՝ Ս.Այվազյանը, մահացել է:

Նույն որոշմամբ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի չորս աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է նրանց գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով:

2. «Թիվ 55200706 քրեական գործի վարույթը կարճելու մասին» քննիչի 2006թ. հոկտեմբերի 3-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազություն: 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ Դ-81 գրությամբ վերջինս պատասխանել է, որ որոշումը կայացվել է օրենսդրությանը համապատասխան:

2006թ. հոկտեմբերի 3-ի քննիչի որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազին: 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ Դ-81 գրությամբ վերջինս հայտնել է, որ որոշումը վերացնելու հիմքեր չկան:

Քննիչի նույն որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետի տեղակալ Բ.Աղայանը 2007թ. հունվարի 19-ի թիվ 15-87-06 գրությամբ բողոք բերողին հայտնել է, որ կայացված որոշման օրինականությունը ստուգվել է ՀՀ գլխավոր դատախազությունում. որոշումն օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

3. 2007թ. հունիսի 27-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ պահանջելով թիվ 55200706 քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշման 2-րդ կետը վերացնել:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. սեպտեմբերի 12-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը 2007թ. սեպտեմբերի 27-ին բերել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքն առանց բավարարման:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007թ. հոկտեմբերի 23-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանը հավատարմագրված փաստաթան Ա.Դազարյանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել:

2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ

հողվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

5. Թիվ 55200706 քրեական գործով իրականացված նախաքննությամբ պարզվել է հետևյալը.

2006 թվականի մարտի 6-ին՝ ժամը 12.00-ից մինչև 17.00-ի սահմաններում, գտնվելով հոգեպես անհավասարակշիռ վիճակում, Ս.Այվազյանն իր մոտ գտնվող դանակով Լոռու մարզի Օձուն գյուղում փորձել է սպանել նույն գյուղի բնակիչներ Հ.-Չոբանյանին և Ե.Պետրոսյանին, ինչպես նաև ոստիկանության տեղամասային տեսուչ Վ. Բոշյանին:

Այնուհետև ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի պետի հրամանով ոստիկանության վեց ծառայողներ՝ Հ.Գևորգյանը, Ն.Նանինյանը, Ա.Սահակյանը, Ա.Աբգարյանը, Ռ.Մոսինյանը և Հ.Գրիգորյանը, Ս.Այվազյանին վնասազերծելու նպատակով հարկադրաբար բացել են նրա տան դուռն ու ներս մտել, սակայն նրան վնասազերծել չի հաջողվել: Այն ժամանակ, երբ ոստիկանների խումբը հեռանում էր, Ս.Այվազյանն իր տան պատշգամբում դանակով հարվածել է ՀՀ ոստիկանության ավագ տեղամասային տեսուչ Հ.Գևորգյանին: Վերջինիս վիրավորվելը տեսնելով՝ ՀՀ ոստիկանության չորս աշխատակիցներ՝ Ա.Սահակյանը, Ա.Աբգարյանը, Ռ.Մոսինյանը և Հ.Գրիգորյանը, իրենց հաշվեցուցակային զենքերից կրակել են Ս.Այվազյանի ուղղությամբ: Այսվերոյի հիվանդանոց տեղափոխելիս ստացած հրազենային վնասվածքներից վերջինս մահացել է:

Ս.Այվազյանի ուղղությամբ Հ.Գրիգորյանը կրակել է մեկ անգամ, Ա.Սահակյանը՝ ութ, Ա.Աբգարյանը՝ երեք, և Ռ.Մոսինյանը՝ երեք:

6. Քրեական գործով տուժող Հ.Գևորգյանը հարցաքննվել է 2006թ. մարտի 7-ին (քրեական գործ, 46-րդ էջ), վկա Հ.Գրիգորյանը՝ 2006թ. մարտի 14-ին (քրեական գործ, 83-րդ էջ), վկա Ն.Նանինյանը՝ 2006թ. մարտի 15-ին (քրեական գործ, 89-րդ էջ), իսկ վկա Ա.Աբգարյանը՝ 2006թ. մարտի 16-ին (քրեական գործ, 92-րդ էջ):

7. Ա.Այվազյանի դիակի դատաբժշկական փորձաքննություն իրականացրած փորձագետի եզրակացության մեջ նկարագրված հրազենային գնդակային տապը կրակոցներից առաջացած վերքերից վեցն ունեցել են «հետևից առաջ» ուղղությունը (քրեական գործ, 276-րդ էջ):

8. Թիվ 55200706 «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» 2006թ. հոկտեմբերի 3-ի քննիչի որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում նշված է. «... որոշեցի ... ՀՀ Ոստիկանության ԼՄՎ Ոստիկանության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Հրայր Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել նրանց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով»:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և 175-րդ հոդվածը: Դատարանի հիմնավորումը, որ նախաքննության մարմինը թիվ 55200706 քրեական գործի շրջանակներում կատարել է քննություն և անհրաժեշտություն չի եղել առանձին քրեական գործ հարուցել Ս.Այվազյանին կյանքից զրկելու կապակցությամբ, անհիմն է: Բողոքի հեղինակը փաստարկում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «ղեպքը» հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն է, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «քրեական գործը» քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ:

Բողոքաբերը նշում է, որ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածը: Դատարանի հիմնավորումը, թե ոստիկանության աշխատակիցների արարքում բացակայում է հանցակազմը, անհիմն է, քանի որ տվյալ դեպքի համար հանցակազմի առկայության կամ բացակայության հարցի վերջնական լուծումը կարող է տեղի ունենալ տվյալ ուղղությամբ առանձին քրեական գործի շրջանակներում՝ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն կատարելուց հետո: Իսկ քրեական գործ հարուցելու և նախաքննություն իրականացնելու համար առկա են հանցակազմի բոլոր հատկանիշները:

10. Ըստ բողոքի հեղինակի՝ անհիմն է նաև դատարանի այն հիմնավորումը, որ Ս.Այվազյանին կյանքից զրկել են նրա կողմից անօրինական բռնությունից՝ կատարված և կատարվող հարձակումից պաշտպանվելու և այն կանխելու համար, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ծառայողները գործել են անհրաժեշտ պաշտպանության վիճակում և նրանց կողմից Ս.Այվազյանի նկատմամբ անհրաժեշտ պաշտպանության վիճակում և նրանց կողմից Ս.Այվազյանի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում (...)»:

Ըստ բողոքաբերի՝ տվյալ դեպքում ոստիկանության աշխատակիցների կողմից զենքի գործադրումը և դրանով մահ պատճառելը չի կարող դիտվել անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված, քանի որ անձի կյանքի համար վտանգավոր բռնություն կամ աղյախի բռնության իրական սպառնալիք չի եղել:

Բացի այդ, նախաքննական մարմինը իր որոշմամբ չի նշել, թե ոստիկանության աշխատակիցների կողմից Ս.Այվազյանին կյանքից զրկելն արարքի հանցավորությունը բացառող հատկապես որ հանգամանքի առկայությամբ է իրավաչափ (անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու): Իսկ դատարանը իրավունք չունի նույն հետևությանը հանգելու, քանի որ նախաքննության մարմինը տվյալ հանգամանքի ուղղությամբ նախաքննություն չի իրականացրել, և արարքի հանցավորությունը բացառող կոնկրետ հանգամանքի առկայությունը չի հիմնավորվել:

11. Բողոքի հեղինակը նշում է, որ խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը: Անհիմն է դատարանի այն հիմնավորումը, որ բաց է թողնվել նախաքննության մարմնի որոշումը բողոքարկելու՝ օրենքով սահմանված ժամկետները, քանի որ գործով տուժողի իրավահաջորդը բողոքարկել է

դատախազության քննիչի որոշումը, սակայն վերադաս դատախազը օրենսգրքով սահմանված կարգով 7 օրվա ընթացքում որոշում չի կայացրել, այլ բողոքը մերժել է գրությամբ:

Բացի այդ, նախաքննության մարմինը մեկ որոշմամբ երկու գործողություն է իրականացրել. կարճել է քրեական գործը և մերժել է քրեական գործի հարուցումը: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը՝ բողոքը բերելու օրվա դրությամբ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու ժամկետի սահմանափակումներ չի նախատեսել: Այսինքն՝ բողոքի հեղինակը գտնում է, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրությունը, որը չէր սահմանում գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը դատարան բողոքարկելու ժամկետ:

12. Ըստ բողոքի հեղինակի՝ խախտվել է նաև կյանքի իրավունքը սահմանող ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 2-րդ հոդվածը, ինչպես նաև նույն կոնվենցիայի 13-րդ արձանագրության 1-ին հոդվածը: Մասնավորապես, անհիմն է դատարանի այն հիմնավորումը, թե ոստիկանության աշխատակիցները գործել են իրենց լիազորությունների շրջանակում և օրենքի հիման վրա:

13. Բողոքատուն փաստարկում է, որ խախտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը: Մասնավորապես, դատարանը չի կիրառել գործով կիրառման ենթակա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մակեդոն և այլոք ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով վճիռը՝ փաստական հանգամանքների տարբերության պատճառաբանությամբ:

14. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

1. Առաջին ատյանի դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու իրավաչափությունը.

15. Բողոքը բերած անձը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը և քրեական վերաքննիչ դատարանն իրավասու՞ էին ըստ էության քննության առնել տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքները, թե պարտավոր էին մերժել այն ժամկետանց լինելու հիմքով:

16. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների (...) կողմից (...) կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին

դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև 2007թ. ապրիլի 7-ն ուժի մեջ եղած խմբագրության՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»:

17. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...)»:

18. Վճռաբեկ դատարանը համաձայնում է բողոքաբերի այն հիմնավորմանը, որ տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի՝ դատախազությանն ուղղված բողոքը բավարարելուց հրաժարվելու հետևանքով ծագած իրավահարաբերությունները կարգավորվում էին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև 2007թ. ապրիլի 7-ն ուժի մեջ եղած խմբագրությամբ, որը չէր սահմանում դատախազի որոշման դատական բողոքարկման հստակ ժամկետ:

Սակայն Վճռաբեկ դատարանը չի ընդունում բողոքի հեղինակի այն մեկնաբանությունը, որ սույն գործով կիրառման ենթակա օրենսդրությամբ սահմանված չէր դատարան դիմելու որևէ ժամկետային սահմանափակում: Վճռաբեկ դատարանը ճիշտ է համարում քրեական վերաքննիչ դատարանի այն հիմնավորումը, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված՝ դատական բողոքարկման մեկամսյա ընդհանուր ժամկետը:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքն առաջին ատյանի դատարան է բերվել միայն 2007թ. հունիսի 27-ին, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված դատական բողոքարկման մեկամսյա ժամկետը սույն գործով չի պահպանվել:

19. Այս պայմաններում գործի էությունը քննության առարկա դարձնելով՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային շրջանակներից:

20. Հետևաբար՝ Լուռու մարզի առաջին ատյանի դատարանը և քրեական վերաքննիչ դատարանն իրավասու չէին ըստ էության քննության առնելու տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքները, այլ պարտավոր էին մերժել դրանք ժամկետանց լինելու հիմքով:

21. Վերը շարադրված հիմնավորումները բավարար են բողոքը մերժելու համար: Այնուհանդերձ, նկատի ունենալով, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները սույն գործը քննության են առել ըստ էության և իրենց որոշումներում շա-

րադրել են ըստ էության հիմնավորումներ, ինչպես նաև ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթից՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

II. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների կիրառելիությունը.

22. Այս կապակցությամբ բողոքի հեղինակը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. քրեական վերաքննիչ դատարանը իրավասու՞ էր արդյոք մերժել Մակկանը և այլոք ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են:

23. Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (նույնաբովանդակ իրավանորմ նախատեսված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում)՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով (...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

24. Մակկանը և այլոք ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով վճռում (27 սեպտեմբերի 1995թ., *McCann v. The United Kingdom*, զանգատ թիվ 18984/91) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ մեկ այլ անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար մյուս անձին կյանքից զրկելը պետք է լինի բացարձակ անհրաժեշտություն: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ եթե չկա մեկ այլ անձին կյանքից զրկելու իրական սպառնալիք, ապա կյանքի իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող իրավաչափ լինել (տե՛ս վճռի 148-րդ կետը):

25. Քրեական վերաքննիչ դատարանը սույն գործով գտել է, որ վերը նշված Մակկանի գործով վճիռը տվյալ գործով կիրառելի չէ, քանի որ երկու գործերի փաստական հանգամանքները տարբեր են:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի

դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել մեծ ընդհանրություն:

27. Սույն գործով վերաքննիչ դատարանը պետք է լուծեր վերը նշված Մակկանի վճռի հիմնավորումներում բովանդակվող ընդհանրական և ոչ թե կոնկրետ դրույթների կիրառելիության հարց: Ուստի սույն գործի ու Մակկանի գործի փաստական հանգամանքների նմանության աստիճանը պետք է որոշվեր այդ լուսի ներքո: Այսպես, թե՛ Մակկանի գործով և թե՛ քննության առարկա գործով պետության անունից գործող և որոշակի դեպքերում զենք կիրառելու լիազորություն ունեցող անձինք, ենթադրաբար անհրաժեշտ պաշտպանության վիճակում, հրազենի կիրառմամբ կյանքից զրկել են ենթադրյալ վտանգի աղբյուր հանդիսացող անձին (անձանց): Այս պայմաններում սույն գործի և Մակկանի գործի փաստական հանգամանքների նմանությունը քանակապես և որակապես բավարար էր Մակկանի գործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելու համար:

28. Հետևաբար՝ քրեական վերաքննիչ դատարանը իրավասու չէր մերժել Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են:

III. Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քննությունը

29. Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քննության իրավաչափության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը. Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ իրականացվել է արդյոք որևէ քրեադատավարական քննություն:

30. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթի եւ հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

2. Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը:

(...)»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրվող ա-

րարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: (...)»: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

31. Քննության առարկա գործի նյութերի վերլուծությունը հնարավորություն չի տալիս միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ և իրականացվել է նախնական քննություն:

Մի շարք հանգամանքներ վկայում են այն մասին, որ թիվ 55200706 քրեական գործը հարուցվել է Ս.Այվազյանի կողմից կատարված գործողությունների և ոչ թե նրան կյանքից զրկելու փաստի կապակցությամբ: Այսպես՝

ա) Թիվ 55200706 քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու կամ ավելի անձանց սպանության փորձ), իսկ դա չի համապատասխանում Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի որևէ հնարավոր իրավաբանական որակմանը:

բ) Թիվ 55200706 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ լուծվել է նաև Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը. որոշվել է նրա ուղղությամբ կրակած ոստիկանների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել (տե՛ս վերը՝ 8-րդ կետ): Դրանից ուղղակիորեն հետևում է, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քրեական գործ հարուցված չէր եղել:

32. Միևնույն ժամանակ որոշ հանգամանքներ վկայում են այն մասին, որ թիվ 55200706 քրեական գործը հարուցելու հիմք հանդիսացած փաստերի շրջանակը ներառել է նաև Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստը, և այդ կապակցությամբ իրականացվել է նախնական քննություն: Այսպես՝ նշված քրեական գործը հարուցելու մասին որոշման նկարագրական մասում ամրագրված է, որ «Այվազյանը վնասազերծվել և մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Ալավերդու քաղաքային հիվանդանոց, որտեղ և մահացել է» (քրեական գործ, 1-ին էջ): Քննիչի 2006թ. ապրիլի 11-ի որոշմամբ Ս.Այվազյանի բույրը՝ Անահիտ Այվազյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ: Որոշման մեջ նշված է «... հանցագործությամբ քաղ. Սեյրան Այվազյանին պատճառվել է ֆիզիկական վնաս, մահ ...» (քրեական գործ, 163-րդ էջ):

Բացի այդ, քրեական գործով մի շարք ապացույցներ վերաբերել են Ս.Այվազյանին կյանքից զրկելու հանգամանքներին: Մասնավորապես.

ա) Դեպքի վայրի զննության արձանագրությունը (քրեական գործ, 29-37-րդ էջեր),

բ) Ս.Այվազյանի դիակի և հագուստի զննության արձանագրությունը (քրեական գործ, 52-54-րդ էջեր),

գ) Ս.Այվազյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը (քրեական գործ, 273-276-րդ էջեր),

դ) Ս.Այվազյանի հագուստի դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը (քրեական գործ, 314-317-րդ էջեր),

ե) Ս.Այվազյանի վրա կրակած և այդ դեպքին ակնատես եղած ոստիկանների ցուցմունքները (Հ.Ս.Գևորգյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 46-51-րդ էջեր, Հ.Շ.Գրիգորյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 83-85-րդ էջեր, Ն.Վ.Նանինյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 89-91-րդ էջեր, Ա.Ս.Արզարյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 92-96-րդ էջեր):

33. Այսպիսով, որոշակի հանգամանքներ վկայում են այն մասին, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ, այնուամենայնիվ, որոշակի քրեադատավարական քննություն իրականացվել է:

34. Վճռաբեկ դատարանն այնուհետև քննության է առնում այն հարցը, թե Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քննությունն արդյո՞ք պատշաճ է եղել:

35. Ռամսահայր և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով վճռի (15 մայիսի 2007թ., Ramsahai and others v. The Netherlands, գանգատ թիվ 52391/99) 324-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը սահմանել է. «Որպեսզի պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննությունը համարվի «արդյունավետ»՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է՝ նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն եւ նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարի հետ կապված ապացույցները: (...):»:

Ռամսահայի գործով վճռի 326-րդ կետում նշված է. «(...) ոստիկաններ Բրունսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը քննարկել միմյանց և այլոց հետ»:

Ռամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. «(...) ոստիկաններ Բրունսը և Բալստրան դեպքից հետո չեն պահվել իրարից մեկուսի և չեն հարցաքննվել գրեթե երեք օր (...)»:

Չնայած, (...) չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամատերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն»:

36. Ռամսահայի գործն իր փաստական հանգամանքներով էապես նման է քննության առարկա գործին. երկու գործերում էլ արարքի հանցավորությունը ենթադրաբար բացառող հանգամանքներում ոստիկանները զենքի գործադրմամբ մահ են պատճառել ենթադրաբար հանցանք կատարած անձին: Երկու գործերի էական ընդհանրություն է նաև այն, որ ոստիկաններից բացի՝ զենք գործադրելու այլ անմիջական ակնատեսներ չեն եղել:

Ոստի շճ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (շճ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) ուժով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 35-րդ կետում նշված հիմնավորումները քննության առարկա գործով ենթակա են կիրառման:

37. Ս.Այվազյանի մահվան կապակցությամբ իրականացված քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ գործով հարցաքննվել են դեպքին ականատես ոչ բոլոր ոստիկանները: Մասնավորապես, ոստիկանների կողմից Ս.Այվազյանի ուղղությամբ կրակելու պահին դեպքի վայրում գտնված վեց ոստիկաններից երկուսը՝ Գ.Մելքոնյանը և Ռ.Մոսիմյանը, չեն հարցաքննվել: Դա նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի իրականացրել առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու Ս.Այվազյանին կյանքից զրկելու հետ կապված ապացույցները:

Ինչ վերաբերում է մյուս չորս ոստիկաններին, ապա Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նրանց հարցաքննության ժամկետները: Այսպես՝ վկա Հ.Գրիգորյանը

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

հարցաքննվել է դեպից 8 օր հետո, վկա Ն.Նանինյանը՝ 9 օր հետո, իսկ վկա Ա.Աբգարյանը՝ 10 օր հետո (տե՛ս վերը՝ 6-րդ կետը):

Այդ ընթացքում ոչինչ չի ձեռնարկվել նրանց միմյանցից մեկուսի պահելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած չկա որևէ ապացույց այն մասին, որ ոստիկանները գաղտնի համաձայնության են եկել միմյանց հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն:

Քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ բավարար չափով չի պարզվել Ս.Այվազյանի ուղղությամբ կրակոցներ արձակելու մեխանիզմը. մասնավորապես, համապատասխան գնահատականի չի արժանացել Ս.Այվազյանի վրա արձակված կրակոցների ուղղությունը: Այսպես, քննությամբ ողջամիտ բացատրություն չի տրվել այն փաստին, որ Ս.Այվազյանի ուղղությամբ վեց կրակոց արձակվել է հետևից (տե՛ս վերը՝ 7-րդ կետը):

38. Նախորդ կետում շարադրվածն ինքնին բավարար է այն հետևության համար, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քննությունը պատշաճ չի եղել:

Հաշվի առնելով սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը մերժել: Թիվ 55200706 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-22/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
ՔԳ-Հ-22/08, Նախագահող դատավոր՝ Մ.Սիմոնյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

քարտուղար Բ.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Արա Զոհրաբյանի միջոցով դիմող Ռ-որերտ Սուքիասյանի բերած վճռաբեկ բողոքը գույքի վրա կալանք դնելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Ա.Զոհրաբյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունվարի 16-ի որոշումն ուժի մեջ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. «Պիցցա Դի Ռ-ումա» ՍՊ ընկերության ղեկավար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2007 թվականի հոկտեմբերի 25-ին «Պիցցա Դի Ռ-ումա» ՍՊ ընկերության տնօրեն Գևորգ Լևոնի Սաֆարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

2. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ կալանք է դրվել «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ հանրային սննդի սպասարկման գործնություն իրականացնող օբյեկտների՝ Երևանի Արովյան փողոցի թիվ 1/1, Խորենացի փողոցի թիվ 31/2, Խորենացի փողոցի թիվ 43, Թումանյան փողոցի թիվ 32, Իսահակյան փողոցի թիվ 12, «Օղակաձև զբոսայգի մեծ շատրվաններին կից» /Շալե/ և Տիգրան Մեծ-Խանջյան փողոցների հատման անկյունի /Քուին-Բուրգեր/ տարածքներում գտնվող անշարժ գույքի վրա:

2007 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 7081/16 գրությամբ ՀՀ ԿԱ ՀՊԾ քննչական բաժնի քննիչը Ռոբերտ Սուքիասյանին հայտնել է, որ նա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի կարգով գույքի վրա կալանք դնելու մասին 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը կարող է բողոքարկել դատախազին:

2007 թվականի դեկտեմբերի 3-ին Ռոբերտ Սուքիասյանը դիմում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին, որով խնդրել է վերացնել գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշումը:

2007 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 11-32-07 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վարչության պետի տեղակալը Ռոբերտ Սուքիասյանին հայտնել է, որ 2007 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված նրա դիմումը թողնվել է առանց քննության, քանի որ դիմումատուի ինքնությունը պարզելու, դիմումին կից ներկայացված լուսապատճե փաստաթղթերի բնօրինակներն ուսումնասիրելու նպատակով Ռ.Սուքիասյանը հրավիրվել է ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն առանց որևէ պատճառաբանության նա չի ներկայացել:

3. 2008 թվականի հունվարի 8-ին Ռոբերտ Սուքիասյանի ներկայացուցիչ Արա Ջոհրաբյանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան բողոք է ներկայացրել՝ պահանջելով վերացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի հունվարի 16-ի որոշմամբ մերժել է գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ Ռոբերտ Սուքիասյանի բողոքը:

Դիմող Ռոբերտ Սուքիասյանի ներկայացուցիչ Արա Ջոհրաբյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ ուժի մեջ է թողել գույքի վրա կալանք դնելու մասին որոշման դեմ Ռոբերտ Սուքիասյանի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունվարի 16-ի որոշումը:

4. Դիմող Ռոբերտ Սուքիասյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Արա Ջոհրաբյանի միջոցով:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի մարտի 20-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

5. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ կալանք է դրվել «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ հանրային սննդի սպասարկման գործունեություն իրականացնող օբյեկտների տարածքներում գտնվող անշարժ գույքի վրա:

ՀՀ ԿԱ ՀՊԾ քննչական բաժնի քննիչը 2007 թվականի նոյեմբերի 29-ին Ռոբերտ Սուքիասյանին գրություն է ուղարկել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի կարգով գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին:

2007 թվականի դեկտեմբերի 3-ին Ռոբերտ Սուքիասյանը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը վերացնելու մասին դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին:

Դիմումատուի ինքնությունը պարզելու, դիմումին կից ներկայացված լուսապատճե փաստաթղթերի բնօրինակներն ուսումնասիրելու նպատակով դիմող Ռ.Սուքիասյանը հրավիրվել է ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն նա առանց որևէ պատճառաբանության չի ներկայացել:

ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ռ.Սուքիասյանի դիմումը թողնվել է առանց քննության:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով:

Բողոք բերած անձը նշել է, որ դատարանի կողմից խախտվել են սեփականության իրավունքը պաշտպանող ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածների, 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի, անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրած ՀՀ Սահմանադրության 21-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածների, գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ, 233-րդ հոդվածների, քննիչի, դատախազի որոշումների և գործողությունների՝ դատարան բողոքարկելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջները:

7. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերող անձը պահանջել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունել, ամբողջությամբ բեկանել և փոփոխել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի փետրվարի 13-ի որոշումը՝ կայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչա-

կան բաժնի քննիչի՝ գույքի վրա կալանք դնելու մասին 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը վերացնելու մասին որոշում:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել, բեկանել ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանների դատական ակտերը, և կայացնել նոր դատական ակտ հետևյալ պատճառաբանությամբ.

8. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչ-յուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը սահմանում է, որ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին:

Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներն ու գործողությունները մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտ են, իսկ նշված սուբյեկտների որոշումների և գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական վերահսկողության առարկա են:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում նշված սուբյեկտների՝ բողոքարկման ենթակա որոշումների ու գործողությունների շրջանակն ընդգրկում է ինչպես քննչական և դատավարական գործողություններն ու որոշումները, այնպես էլ բազմաթիվ ընթացակարգային ու քննության կազմակերպմանը վերաբերող հարցեր, որոնք շատ դեպքերում նախնական քննության նկատմամբ դատախազական հսկողության օբյեկտ են: Այդ են վկայում ինչպես մինչդատական

վարույթում նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները (բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին) լուծելու՝ դատախազի բացառիկ լիազորությունը, այնպես էլ նույն օրենսգրքի 237-րդ հոդվածով սահմանված գույքի վրա կալանք դնելու մասին որոշման բողոքարկումը դատախազին:

Այդ է պատճառը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական վերահսկողության կարգով բերված բողոքները չեն կարող միանգամից ներկայացվել դատարան: Նշված հոդվածում թվարկված սուբյեկտները պարտավոր են իրենց բողոքները ներկայացնել նախ դատախազին, և եթե վերջինս չի բավարարում նրանց բողոքները, ապա բողոքարկման սուբյեկտները նոր միայն իրավունք են ձեռք բերում բողոք ներկայացնելու դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի բովանդակությունից հետևում է, որ դատախազի կողմից բողոքը չբավարարելու տակ օրենսդիրը նկատի ունի բողոքը մերժելը: Միաժամանակ՝ դատարան բողոք ներկայացնելու հիմք է մաս բողոքի վերաբերյալ դատախազից պատասխան չստանալը:

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց որոշումների և գործողությունների դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան, եթե տեղեկություն է ստացվել դատախազի կողմից բողոքը մերժելու մասին կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել:

Վարույթի նյութերից երևում է, որ 2007 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ ԿԱ ՀՊԾ քննչական բաժնի քննիչը կայացրել է գույքի վրա կալանք դնելու մասին որոշում և Ռոբերտ Սուքիասյանին գրավոր հայտնել, որ այդ որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի կարգով կարող է բողոքարկվել դատախազին: Ռ.Սուքիասյանը 2007 թվականի դեկտեմբերի 3-ին դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշումը:

13. ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վարչության պետի տեղակալը 2007 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 11-32-07 գրությամբ դիմողին հայտնել է, որ «ՀՀ գլխավոր դատախազին 2007 թվականի դեկտեմբերի 3-ին հասցեագրված Ձեր դիմումը թողնվել է առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ՝ դիմումատուի ինքնությունը պարզելու, դիմումին կից ներկայացված լուսապատճե փաստաթղթերի բնօրինակներն ուսումնասիրելու նպատակով Դուք հրավիրվել եք ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն առանց որևէ պատճառաբանության չեք ներկայացել»:

Այսպիսով, Ռ.Սուքիասյանի կողմից դատախազին հասցեագրված դիմումը թողնվել է առանց քննության, որի մասին հայտնվել է դիմողին: Իսկ դա նշանակում է, որ բացակայում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված դատարան դիմելու իրավունք վերապահող այնպիսի հիմքերը, ինչպիսիք են բողոքը մերժելու մասին տեղեկություն ստանալը կամ դրա վերաբերյալ պատասխան չստանալը:

14. Անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը՝ դատախազի կողմից բողոքը մերժելու մասին տեղե-

կության բացակայության պայմաններում, երբ բողոքը թողնվել է առանց քննության, որի մասին գրավոր հայտնվել է դիմողին, ընդհանուր իրավասության դատարանն ըստ էության քննել է գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշման դեմ բերված դիմողի բողոքը և այն մերժել:

15. Իր հերթին վերաքննիչ դատարանը, ստուգելով ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջի խախտումը վերացնելու փոխարեն դատարանի որոշումը թողել է ուժի մեջ:

16. Դատավարական իրավունքի այդ խախտումը, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի համաձայն, վերը նշված դատական ակտերը բեկանելու հիմք է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով անհրաժեշտ է կայացնել նոր դատական ակտ՝ մերժել վճռաբեկ բողոքը, բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և առանց քննության թողնել դիմողի բողոքը, որը վերջինիս հնարավորություն կտա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի պահպանմամբ դատարան բողոքարկել քննիչի որոշումը:

17. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել, բեկանել գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի որոշման դեմ դիմող Ռ.Սուքիասյանի բերած բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունվարի 16-ի և այն ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի փետրվարի 13-ի որոշումները, և դիմողի բողոքը թողնել առանց քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-32/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
Կ-287/07 Նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան
դատավորներ՝ Ե.Դարբինյան, Ա.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏՏԻՄՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

քարտուղար
մասնակցությամբ
դատախազ
քննիչ

Ք.ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
Ա.ԴՈԼԻՆՅԱՆԻ
Վ.ԳԱՀՐԱՍՄԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2006 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներով Արթուր Ժորայի Ալեքսանյանը և Արմեն Ժորայի Ալեքսանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով ներգրավվել են որպես մեղադրյալ:

Արմավիրի մարզի դատախազության քննիչը 2006 թվականի սեպտեմբերի 12-ին միջնորդություններ է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի դատա-

րան Արթուր Ալեքսանյանի և Արմեն Ալեքսանյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին:

2. Քննիչի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներով Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներով Արթուր Ալեքսանյանի և Արմեն Ալեքսանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանք՝ երկու ամիս ժամկետով:

4. Արթուր Ալեքսանյանի և Արմեն Ալեքսանյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 12-ի օրինական ուժի մեջ մտած որոշումներն Արթուր և Արմեն Ալեքսանյանների պաշտպանը 2007 թվականի դեկտեմբերի 21-ին բողոքարկել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարան:

5. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ Արթուր Ալեքսանյանի և Արմեն Ալեքսանյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նյութերը միացվել են մեկ վարույթում:

Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ բեկանել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումները և վերացրել Արթուր ու Արմեն Ալեքսանյանների նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը:

6. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

7. Արթուր և Արմեն Ալեքսանյանները համագյուղացի Ջավեն Առաքելյանի հետ նախկինում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ վերջինիցս վրեժխնդիր լինելու նպատակով, Ջ.Առաքելյանին ապօրինաբար կյանքից գրկելու՝ սպանելու դիտավորությամբ նախապես համաձայնության գալով միմյանց հետ, վերցրել են քրեական գործով դեռևս չպարզված դանակներ և 2006 թվականի սեպտեմբերի 6-ին՝ ժամը 20³⁰-ի սահմաններում, Մարգարա գյուղի խաղահրապարակից Ջ.Առաքելյանին կանչել են մեկուսի վայր՝ գյուղապետարանի հարևանությամբ գտնվող այգի, որտեղ Արմեն Ալեքսանյանի կողմից Ջավեն Առաքելյանի պարանոցին դանակով հարվածելուց անմիջապես հետո Արթուր Ալեքսանյանն իր մոտ եղած դանակով հարվածել է Ջ.Առաքելյանի գոտկային ձախ շրջանին և կարծելով, թե նա մահացել է՝ դիմել են փախուստի: Անմիջապես օգնության հասած համագյուղացիների ջանքերով Ջ.Առաքելյանը շտապ տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ բժշկական միջամտության շնորհիվ նրա կյանքը փրկվել է: Այսինքն՝ Արթուր և Արմեն Ալեքսանյանների կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

8. Նախաքննության մարմնի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներով Արթուր և Արմեն Ալեքսանյանները ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով ներգրավվել են որպես մեղադրյալ և նրանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

9. Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումները կայացրել է 2006 թվականի սեպտեմբերի 12-ին:

10. Այդ որոշումների դեմ Արթուր և Արմեն Ալեքսանյանների պաշտպանը վերաքննիչ բողոք է բերել 2007 թվականի դեկտեմբերի 21-ին, այսինքն՝ շուրջ 1 տարի 3 ամիս անց:

11. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նյութերը միացվել են մեկ վարույթ:

12. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ բեկանել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումները և Արթուր ու Արմեն Ալեքսանյանների նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացրել է:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոք բերած անձը գտնում է, որ մեղադրյալների կողմից բաց է թողնվել առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկելու՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետը, և վերաքննիչ դատարանը վարույթ է ընդունել ու քննարկել ժամկետանց բողոք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի (մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18.12.2007 թվականի փոփոխությունները և լրացումները) համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում է առաջին ատյանի դատարանի դատավճռի կամ որոշման հրապարակվելու օրվանից 15 օրվա ընթացքում:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումը կայացրել է 2006 թվականի սեպտեմբերի 12-ին, մինչդեռ վերաքննիչ բողոքը դատարան է ներկայացվել 2007 թվականի դեկտեմբերի 21-ին:

14. Չեն պահպանվել նաև բողոքարկման ժամկետները վերականգնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի պահանջները և վերաքննիչ բողոք բերող անձինք, առանց առաջին ատյանի դատարանի դիմելու և բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հարցը լուծելու, բողոք են ներկայացրել վերաքննիչ դատարան՝ նշելով, որ բողոքարկվող որոշումների մասին իմացել են 20.12.2007 թվականին և այդ պատճառով բողոքը ներկայացրել են հաջորդ օրը: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը չի քննարկել և չէր էլ կարող քննարկել բողոքարկման ժամկետը վերականգնելու հարցը, քանի որ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, պարտավոր էր բողոքը թողնել առանց քննության:

15. Բացի այդ, վերաքննիչ դատարանը Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն հաշվի չի

առել տվյալ պահին մեղադրյալներին մեղսագրվող արարքների բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը՝ այն, որ նրանք խուսափել են քննությունից, նրանց նկատմամբ հայտարարված է եղել հետախուզում, չի պարզել հետախուզման մեջ գտնվող մեղադրյալների դատարան ներկայանալու իրական հանգամանքները, այլ դա դիտել է որպես «ինքնակամ ներկայանալ», որն ըստ բողոք բերած անձի՝ կիրառելի չէ հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ և պետք է հանդիսանալ հատուկ քննարկման առարկա:

Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերող անձը պահանջել է բեկանել Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներին:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճարելի դատարանը գտավ, որ Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը պետք է բեկանել և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներին հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից պաշտպանի վերաքննիչ բողոքը քննության առնելու իրավաչափությունը.

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18.12.2007 թվականի փոփոխությունները և լրացումները) համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում է առաջին ատյանի դատարանի դատավճռի կամ որոշման հրապարակվելու օրվանից 15 օրվա ընթացքում: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բաց թողնված ժամկետի վերականգնման համար շահագրգիռ անձը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում է վարույթն իրականացնող մարմնին: Իսկ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածը սահմանում է բողոքարկման ժամկետը վերականգնելու կարգը, որի համաձայն՝ հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատավճիռ կամ որոշում կայացնող դատարանի առաջ միջնորդել վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը 15-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և

քննել գործը՝ պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածում և 383-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված պահանջները:

18. Վարույթի նյութերից երևում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումների դեմ, որով բավարարվել են քննիչի միջնորդությունները և Արթուր ու Արմեն Ալեքսանյանների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանք երկու ամիս ժամկետով, վերջիններիս պաշտպանը վերաքննիչ բողոք է բերել 1 տարի 3 ամիս 9 օր անց՝ 2007 դեկտեմբերի 21-ին:

19. Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ, 379-րդ և 380-րդ հոդվածների պահանջները, պաշտպանի վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ, դատական ստուգման է ենթարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, և բեկանելով այդ որոշումները՝ վերացրել է մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը:

Նշված դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործի ելքի վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի հիման վրա, վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Վերը շարադրվածը վկայում է, որ արդարադատություն իրականացնելիս դատարանը թույլ է տվել դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

20. Նկատի ունենալով, որ վերաքննիչ դատարանը պաշտպանի բողոքը քննության է առել ըստ էության և իր որոշման մեջ շարադրել է ըստ էության հիմնավորումներ, ինչպես նաև ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառնության՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ կիրառման համար:

2. Նյութերը մեկ վարույթում միացնելու մասին վերաքննիչ դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը

21. Ինչպես երևում է վարույթի նյութերից, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով, 2007 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մեկ վարույթում միացրել է Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին նյութերը:

Քրեական գործերի միացումն ու անջատումն ամրագրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը:

Քրեական գործերի միացումը նախնական քննության՝ օրենքով նախատեսված ընդհանուր պայմաններից մեկն է, որի նպատակը քրեական գործերի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության մասին օրենսդրության պահանջի ճշգրիտ իրականացման ապահովումն է: Քրեական գործերի միացման պայմանն արդեն իսկ հարուցված և քննվող գործերի առկայությունն է, քանի որ մեկ վարույթում կարող են միացվել միայն քրեական գործերը, բայց ոչ նյութերը:

Այս պայմաններում Արթուր և Արմեն Ալեքսանյանների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման փաստով հարուցված մեկ միասնական քրեական գործի շրջանակ-

ներում նրանց նկատմամբ խափանման միջոց կալանք ընտրելու մասին նյութերը մեկ վարույթում միացնելը ոչ միայն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի պահանջներից, այլ հակասում է դրանց:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը վերացնելու հիմնավորվածությունը.

22. Ինչպես երևում է վարույթի նյութերից, վերաքննիչ դատարանը նշել է, որ Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու նպատակով քննիչի կողմից ներկայացված նյութերում չեն բերվել այնպիսի տվյալներ, որոնցով կհաստատվեր հատկապես խափանման միջոցի այդ տեսակը կիրառելու անհրաժեշտությունը, այն պարագայում, երբ Ալեքսանյան եղբայրները նախկինում որևէ կերպ արատավորված չեն եղել, բնութագրվում են դրական և վատատուջ են:

Վերաքննիչ դատարանի այդ հետևություններն անհիմն են և չեն բխում վարույթի նյութերից: Այսպես՝ Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին միջնորդություններում նշվել է, որ մեղադրյալները կատարել են ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցագործություն, որի համար սահմանված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, նրանք խուսափում և թաքնվում են քննությունից: Քրեական վարույթ իրականացնող մարմնից թաքնվելու, վերջինիս կանչով առանց հարգելի պատճառի չներկայանալու մասին են վկայում վարույթի նյութերում Ալեքսանյան եղբայրների նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ որոշումների առկայությունը, հանցանք կատարելուց 1 տարի 3 ամիս 9 օր անց վերաքննիչ դատարան նրանց ներկայանալը: Առաջին ատյանի դատարանը, քննելով քննիչի միջնորդությունները և հաշվի առնելով մեղադրյալներին վերազրկող արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նրանք կարող են թաքնվել և խոչընդոտել քրեական գործի քննությանը, բավարարել է միջնորդությունները:

23. Վճարելի դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը կոնկրետ և որոշակի իրավախախտում կատարելու համար ողջամիտ կասկածի հիման վրա օրենքով սահմանված կարգով, օրինական հիմքով Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել է կալանքը: Նրանց վերաբերյալ որոշումները կայացվել են համապատասխան իրավասու մարմնի կողմից, լիովին բխում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածների պահանջներից:

24. Քանի որ վարույթի նյութերում առկա տվյալներով հերքվում են Ալեքսանյան եղբայրների նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու որոշման հիմքում դրված վերաքննիչ դատարանի փաստարկները և հաստատվում նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին որոշումների օրինական և հիմնավորված լինելը, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանել Արթուր և Արմեն Ալեքսանյանների նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատա-

վարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Արթուր Ժորայի Ալեքսանյանի և Արմեն Ժորայի Ալեքսանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանք ընտրելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումներին:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵԿԴ/0031/11/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԿԴ/0031/11/08 որոշում
Նախագահող դատավոր՝ Հ.Ասատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ՍԿԻՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վալերի Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ Մ.Բաղալյանի 2008 թվականի փետրվարի 29-ի որոշմամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Վալերի Գրիգորյանի կողմից կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստի առթիվ:

2. Քրեական գործ հարուցելու մասին որոշումը Վ.Գրիգորյանը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 2008 թվականի մարտի 21-ի որոշմամբ բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. 2008 թվականի մարտի 31-ին Վ.Գրիգորյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը վերացնելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

4. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Վ.Գրիգորյանի բողոքը մերժել է:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

5. Վ.Գրիգորյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշումը և բավարարել իր բողոքը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի մայիսի 6-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով Վ.Գրիգորյանը բերել է վճռաբեկ բողոք:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ուղարկել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով բողոքը մերժել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, 2008 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Վալերի Գրիգորյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «որոշումն օրինական է, դիմողի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել, որոշումը վերացնելու հիմքեր չկան»:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի մայիսի 6-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա պատճառաբանելով սխալ պատճառաբանված, սակայն գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ այդպիսի որոշման՝ դատական կարգով բողոքարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ հոդվածով նախատեսված չէ:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը գտնում է, որ որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության և դատավարական իրավունքի խախտումներով. վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը հակասում է օրենքի տառին և կամայական է. քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկումն իրավաչափ է, քանի որ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա հանդիսանում է դատական վերահսկողության առարկա. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնաբանելով և կիրառելով որպես վերաքննիչ բողոքը մերժելու հիմք՝ վերաքննիչ դատարանը անհիմն կերպով սահմանափակել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքը:

Բողոք բերած անձը գտնում է նաև, որ քրեական գործը հարուցվել է առանց օրինական առիթի և բավարար հիմքերի:

10. Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջում է վերանայել վերաքննիչ դատարանի դատական ակտը և դատախազին պարտավորեցնել վերացնելու իր նկատմամբ կայացված՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անթույլատրելի համարելով քրեական գործ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկումը, իր որոշումը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ. «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրավական կարգավորումները տրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլխում, որի մեջ է ներառված նաև օրենսգրքի 290-րդ հոդվածը:

Նշված գլխի 278-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

Օրենքի բովանդակությունից հետևում է, որ մինչդատական վարություն քրեական հետապնդում իրականացնող մարմինների ոչ բոլոր գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան: Բողոքարկման ենթակա որոշումների ցանկը օրենսդիրը նախատեսել է քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներում, այդ թվում նաև 290-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ դատարան կարող են բողոքարկվել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ դարձյալ օրենսգրքով նախատեսված դեպքերում: Իսկ նույն հոդվածի 1-ին մասը սահմանում է օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դեմ բողոքները դատարան ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, և առաջադրում պայման՝ որ նրանց բողոքները պետք է բավարարված չլինեն դատախազի կողմից:

Այստեղից հետևում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ դատական կարգով այդպիսի որոշման բողոքարկում ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, ոչ քրեական գործ հարուցելու կարգը սահմանող 182-րդ հոդվածով և ոչ էլ որևէ այլ հոդվածով նախատեսված չէ»:

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության ոլորտից բացառելը միայն այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ հոդվածում սահմանված չէ, որ այն կարող է բողոքարկվել դատական կարգով, թերի է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դատական վերահսկողության առարկա կարող են լինել հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների բոլոր այն որոշումները և գործողությունները, որոնք խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը: Անձի իրավունքները և օրինական շահերը խախտելու դեպքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների

որոշումները և գործողությունները դատական բողոքարկման առարկա լինելու հանգամանքն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքից, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ... համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Ինչը ենթադրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նույնպես կարող է դատական բողոքարկման առարկա լինել, եթե այն խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասին, որում թվարկվում են բողոքարկման ենթակա որոշումները, որի վրա հիմնվելով, վերաքննիչ դատարանը հիմնավորել է իր որոշումը, ապա այն 290-րդ հոդվածի 1-ին մասի համեմատ կրում է լրացուցիչ բնույթ, քանի որ նրանում օգտագործվում է «նաև» շաղկապը, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ նրանում սպառնիչ չի թվարկված դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումները:

Այսպիսով՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման:

13. Քանի որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բողոքարկման ենթակա որոշումների շարքում, ուստի, որպեսզի մինչդատական վարույթի ընթացքում քրեական գործ հարուցելու մասին որոշումը լինի դատական բողոքարկման առարկա, ապա պետք է պարզել, թե քրեական գործ հարուցելու մասին որոշումը խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը, թե ոչ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ, այլ կերպ՝ փաստի առթիվ, և որևէ անձի համար քրեական դատավարությունում այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում, ուստի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ քրեական դատավարությունում որևէ մեկի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում:

Այսպիսով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա լինել չի կարող, քանի որ քրեական դատավարությունում քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ անձի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում:

15. ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի պնդումն այն մասին, որ վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշմամբ սահմանափակվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր իրավունքը, անհիմն է, և հետևանք այն բանի, որ նա սխալ է մեկնաբանում ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

16. Վերոհիշյալ հոդվածի 1-ին մասում ամրագրված որևէ իրավունք վերաբնդի դատարանը չի խախտել այն պարզ պատճառով, որ ինչպես նշվեց վերևում, քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ և քրեական դատավարությունում անձի համար այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում, հետևաբար որևէ անձի իրավունքները և օրինական շահերը քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ չի խախտվում, իսկ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում խոսվում է «խախտված իրավունքները վերականգնելու» մասին:

17. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ դրույթին (իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք), ապա այս իրավունքը վերաբերում է քրեական գործի դատական քննության փուլին, և իր այդ իրավունքից Վալերի Գրիգորյանը կկարողանա օգտվել, երբ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվի դատարան ըստ էության քննելու համար:

18. Նկատի ունենալով, որ քրեական գործ հարուցվում է «քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ», և այդ որոշումը որևէ անձի համար իրավական որևէ հետևանք չի առաջացնում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է նաև բողոքաբերի այն պնդումը, թե «քրեական գործը հարուցվել է անձի դեմ, ինչի հետևանքով Վալերի Գրիգորյանը փաստացիորեն հայտնվել է կասկածյալի կարգավիճակում»:

Նախ՝ սույն գործով քրեական գործ հարուցելու մասին որոշման եզրափակիչ մասում ուղղակիորեն նշված է, որ քրեական գործը հարուցվել է, ոչ թե անձի դեմ, այլ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի կապակցությամբ, այսինքն՝ փաստի առթիվ, ինչպես պահանջում է օրենքը:

Այսպես՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման եզրափակիչ մասում գրված է. «Վալերի Գրիգորյանի կողմից կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստի առթիվ հարուցել քրեական գործ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով»:

Երկրորդ՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի՝ կասկածյալ կարող է ճանաչվել այն անձը՝

1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով.

2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված:

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հստակ տալիս է այն հիմքերը, որոնց հիման վրա անձը դառնում է կասկածյալ, և դրանց մեջ քրեական գործ հարուցելու մասին որոշումը չի նշվում:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսդրության իմաստով քրեական գործ հարուցելու հիմնական նպատակը ոչ թե անձին դատավարական կարգավիճակ տալն

է, այլ օրինական քննության համար քրեադատավարական հիմք ստեղծելն է, որը հնարավորություն է տալիս արդյունավետ քննություն իրականացնելու նպատակով օգտագործել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր իրավական գործիքները՝ քննչական գործողություններ, դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն:

20. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերով օրենքի էական խախտում թույլ չի տրվել, ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

21. Զննվող բողոքի կապակցությամբ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի չափանիշների, քրեական դատավարությունում քրեական գործ հարուցելու փուլի նշանակության վերաբերյալ հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վալերի Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշում թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-43/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի դատավճիռ
քրեական գործ թիվ 65/08
Նախագահող դատավոր՝ Ս.Ավետիսյան
դատավորներ՝ Մ.Սիմոնյան, Ա.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով հավատարմագրված փաստաթղթերի միջոցով քաղաքացիական պատասխանող Կարեն Քոսյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Նախաքննության մարմինը 2007 թվականի մարտի 7-ի որոշմամբ հարուցել է թիվ 10102407 քրեական գործը:

Թամարա Սեդրակյանին և Աննա Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2007 թվականի մարտի 22-ին Անուշավան Բարսամյանը ճանաչվել է տուժող, իսկ նույն թվականի սեպտեմբերի 26-ին՝ քաղաքացիական հայցվոր:

Մեղադրական եզրակացությունը կազմվել է 2007 թվականի հոկտեմբերի 1-ին, և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

Քաղաքացիական հայցվոր Ա.Բարսամյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ Թ.Սեդրակյանի, Ա.Ղազարյանի, Է.Շաբոյանի, Վ.Չաքարյանի և Կ.Քոսյանի՝ խնդրելով անվավեր ճանաչել առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումը:

2. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճռով Թամարա Սեդրակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-67-րդ հոդվածների հիման վրա վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 /ինը/ տարի ժամկետով: Նույն դատավճռով Աննա Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 /վեց/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Բավարարվել են տուժողների, այդ թվում՝ Անուշավան Բարսամյանի քաղաքացիական հայցերը:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճռով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ ամբաստանյալների, քաղաքացիական պատասխանող Է.Սարգսյանի և քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ Վ.Քոսյանի վերաքննիչ բողոքները մերժվել են:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել քաղաքացիական պատասխանող Կ.Քոսյանը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի հունիսի 16-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

5. Թամարա Սեդրակյանը և Աննա Ղազարյանը, Վալերի Զաքարյանի նախաձեռնությամբ, առանձնապես խոշոր չափերի արժեքներ ունեցող բնակարանների նկատմամբ խարդախությամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով, ստեղծել են կազմակերպված խումբ և կատարել են հանցավոր գործունեության դերաբաշխում: 2006 թվականի ապրիլից մինչև 2007 թվականի փետրվարը, իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով, նրանք վարձակալել են ընդհանուր առմամբ ութ՝ առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարաններ, որից հետո փաստաթղթեր և բնակարանների առուվաճառքի պայմանագրեր կեղծելու միջոցով այդ բնակարաններից վեցի նկատմամբ ձեռք են բերել սեփականության իրավունք: Այնուհետև այդ բնակարաններից չորսը վաճառել, իսկ երկուսը գրավադրել են տարբեր անձանց: Մյուս երկու բնակարանների նկատմամբ նրանք սեփականության իրավունք ձեռք բերել չեն կարողացել իրենց կամքից անկախ հանգամանքներով:

6. Մասնավորապես՝ կրկին անգամ ուրիշին պատկանող առանձնապես խոշոր չափի արժեք ունեցող բնակարանի նկատմամբ խարդախությամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով, գործելով կազմակերպված խմբի շրջանակներ-

րում, Վալերի Չաքարյանը, բնակարանների վարձակալության հայտարարությունների միջոցով ընտրել, իսկ Աննա Ղազարյանը 2006 թվականի նոյեմբերի 13-ին վարձակալել է Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 27-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող և Անուշավան, Արմեն, Ջուլիետտա Բարսամյանների ու Կարինե Միրզոյանին պատկանող, առանձնապես խոշոր չափի՝ 12.270.000 ՀՀ դրամ արժողության բնակարանը: Այնուհետև Վալերի Չաքարյանը պատրաստել է կեղծ լիազորագիր, ըստ որի՝ իբր բնակարանի համասեփականատերերը 21.10.2006թ. լիազորել են Աննա Ղազարյանին նշված բնակարանի նկատմամբ կատարելու մի շարք գործարքներ: Աննա Ղազարյանը և Թամարա Մեղրակյանը համասեփականատերերի և նոտարի փոխարեն ստորագրել են այդ կեղծ լիազորագիրը և դրա վրա կատարել համապատասխան կեղծ գրառումներ: Այնուհետև Աննա Ղազարյանն այդ կեղծ լիազորագիրը ներկայացնելով ՀՀ ԿԱ ԱԳԿ Պ/Կ-ի Շենգավիթի տարածքային ստորաբաժանում, ստացել է նշված բնակարանի սեփականության վկայականի կրկնօրինակը, որի հիման վրա Վալերի Չաքարյանը պատրաստել է բնակարանի առուվաճառքի կեղծ պայմանագիր, ըստ որի՝ իբր Անուշավան, Արմեն, Ջուլիետտա Բարսամյանները և Կարինե Միրզոյանը իրենց բնակարանը 29.11.2006թ. վաճառել են Աննա Ղազարյանին: Այնուհետև Աննա Ղազարյանը կեղծ պայմանագիրը ներկայացնելով ՀՀ ԿԱ ԱԳԿ Պ/Կ-ի Շենգավիթի տարածքային ստորաբաժանում, 12.12. 2006թ. սեփականության իրավունք է ձեռք բերել այդ բնակարանի նկատմամբ: Խարդախությամբ հիշյալ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո՝ 20.12.2006թ. Աննա Ղազարյանը բնակարանը վաճառել է Կարեն Քոսյանին:

7. Առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննության ընթացքում տուժող Ա.Բարսամյանի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ամբաստանյալ Ա.Ղազարյանի և Անուշավան, Արմեն, Ջուլիետտա Բարսամյանների, Կարինե Միրզոյանի միջև կնքված կեղծ առուվաճառքի պայմանագիրը և դրա հիմքով Ա.Ղազարյանի անվամբ Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 27-րդ շենքի թիվ 15 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը, Ա.Ղազարյանի և Կ.Քոսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիմքով կատարված պետական գրանցումը:

8. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճռով բավարարվել է տուժող Ա.Բարսամյանի ներկայացրած քաղաքացիական հայցը և առաջին լինելու հիմքով անվավեր է ճանաչել Աննա Ղազարյանի և Կարեն Քոսյանի միջև Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 27-րդ շենքի թիվ 15-րդ բնակարանի նկատմամբ 20.12.2006թ. կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ Պ/Կ-ի Շենգավիթի տարածքային ստորաբաժանում կողմից 22.12.2006թ. Կարեն Քոսյանին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը: Դատավճռով վերականգնվել է տուժող Ա.Բարսամյանի և մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 27-րդ շենքի թիվ 15-րդ բնակարանի նկատմամբ:

9. Ամբաստանյալներ Ա.Ղազարյանի և Թ.Մեղրակյանի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ Վ.Քոսյանի, քաղաքացիական պատասխանող Է.Սարգսյանի վերաքննիչ բողոքների հիման վրա վերաքննելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008թ. փետրվարի 14-ի դատավճռով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոք բերած անձը գտնում է, որ Վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ, 154-րդ, 158-րդ և 159-րդ հոդվածների պահանջները:

11. Ըստ բողոքի հեղինակի՝ քաղաքացիական հայցն իր դեմ հարուցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններին հակառակ, իր դեմ չէր կարող քաղաքացիական հայց հարուցվել և իր վրա չէր կարող գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալների գործողությունների համար, քանի որ ինքն «ընդամենը բարեխիղճ ձեռք բերող է»: Իսկ ներկայացված հայցադիմումը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

12. Բացի այդ, դատարանը չի անդրադարձել կեղծ պայմանագրին և դրա հիման վրա գրանցված Աննա Ղազարյանի սեփականության իրավունքին: Դատարանը նաև վերականգնել է քաղաքացիական հայցվորի սեփականության իրավունքն այն դեպքում, երբ հայցադիմումում նման պահանջ չի ներկայացվել:

13. Բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճիռը «քաղաքացիական հայցի մասով՝ ըստ հայցի Անուշավան Բարսամյանի ընդդեմ Կարեն Քոսյանի և մյուսների ու այդ մասով քաղաքացիական հայցը թողնել առանց քննության»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Քրեական դատավարության կարգով քաղաքացիական պատասխանատվության ենթակա անձանց շրջանակը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է այդ օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված կանոններից հետևում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը կարող է հա-

րուցվել միայն կասկածյալի, մեղադրյալի կամ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի դեմ, ում վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով արգելված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար: Այդպիսի անձինք են հանդիսանում, օրինակ՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները, շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեություն իրականացնող անձինք, որոնք օրենքի ուժով պատասխանատու են մեղադրյալի գործողությունների համար:

16. Ինչպես երևում է գործի նյութերի ուսումնասիրությունից, Անուշավան, Արմեն, Ջուլիետա Բարսամյանների և Կարինե Միրզոյանի սեփականությունը հանդիսացող բնակարանը խարդախությամբ հափշտակելուց հետո Աննա Ղազարյանը, իրականում իրեն չպատկանող բնակարանը վաճառել է Կարեն Քոսյանին, իսկ վերջինս այն գնել է առանց տեղյակ լինելու կատարված հանցագործությանը:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարեն Քոսյանի նկատմամբ քրեական դատավարության կարգով քաղաքացիական հայց չէր կարող հարուցվել, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար: Իսկ Կարեն Քոսյանը սույն գործով ոչ մեղադրյալ է հանդիսանում, ոչ էլ այնպիսի անձ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

18. Վերոհիշյալ հոդվածների բովանդակությունից ակնհայտ է, որ օրենսդիրը սահմանափակել է այն անձանց շրջանակը, ում դեմ քրեական դատավարության կարգով կարող է քաղաքացիական հայց հարուցվել: Ուստի Կարեն Քոսյանը սույն քրեական գործով վարույթի ընթացքում որպես քաղաքացիական պատասխանող չպետք է հանդես գար, իսկ ներկայացված քաղաքացիական հայցը պետք է թողնվեր առանց քննության, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արգելք չի հանդիսանում հայցը հետազայում քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու համար:

Հայցադիմումի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համապատասխանության հարցը

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, հայցադիմումը պետք է նաև բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:

Ինչպես երևում է Կարեն Քոսյանի դեմ ներկայացված հայցադիմումի բովանդակությունից, այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին: Հայցվորը չի պատճառաբանել, թե ինչու պետք է Կարեն Քոսյանը գույքային պատասխանատվություն կրի մեղադրյալի գործողությունների համար: Հայցադիմումը չի բովանդակում նաև խնդրանք վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին: Փոխարենը հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել ամբաստանյալ Ա.Ղազարյանի և Անուշավան, Արմեն, Ջուլիետա Բարսամյանների ու Կարինե Միրզոյանի միջև կնքված կեղծ առուվաճառքի պայմանագիրը և դրա հիմքով Ա.Ղազարյանի անվամբ Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի 27-րդ շենքի թիվ 15 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը, Ա.Ղազարյանի և Կ.Քոս-

յանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիմքով կատարված պետական գրանցումը:

20. Այսպիսով, ինչպես առուվաճառքի պայմանագիրը անվավեր ճանաչելու, այնպես էլ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին հայցալին պահանջները քրեական դատավարության ընթացքում ներկայացնելը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, և քրեական գործի հետ մեկտեղ քննության ենթակա չէ:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները Կարեն Քոսյանի դեմ ներկայացված քաղաքացիական հայցի մասով թույլ են տվել դատական սխալ, այն է՝ քրեական գործի հետ համատեղ քննվել և լուծում է տրվել մի հարցի, որը քրեական դատավարության կարգով լուծման ենթակա չէ, այլ կարող է իր լուծումը ստանալ քաղաքացիական դատավարության կարգով:

22. Ինչ վերաբերում է բողոքում բարձրացված մյուս հարցերին, մասնավորապես այն հարցին, որ վերականգնելով քաղաքացիական հայցվորի սեփականության իրավունքը «բատարանը դուրս է եկել հայցադիմումի ծավալներից», ինչպես նաև այն, որ դատարանը լուծում տալով քաղաքացիական հայցին՝ չի անդրադարձել կեղծ պայմանագրին և դրա հիման վրա գրանցված Աննա Ղազարյանի սեփականության իրավունքին, ապա Վճռաբեկ դատարանը այդ հարցերին ըստ էության չի անդրադառնում, քանի որ Վճռաբեկ դատարանի՝ վերը շարադրված դիրքորոշումից բխում է, որ այս հարցերը պետք է իրենց լուծումը ստանան քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցվելու դեպքում:

23. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատավարական իրավունքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են գործով կայացված դատական ակտը մասնակիորեն բեկանելու և քաղաքացիական հայցը առանց քննության թողնելու համար:

24. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճիռը մասնակիորեն՝ Անուշավան Բարսամյանն ընդդեմ Կարեն Քոսյանի և մյուսների քաղաքացիական հայցի մասով, պետք է բեկանել և քաղաքացիական հայցը թողնել առանց քննության՝ տուժողին իրավունք վերապահելով իր սեփականության իրավունքի վերականգնման հարցով հայց հարուցելու քաղաքացիական դատավարության կարգով:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ քրեական դատավարության կարգով քաղաքացիական պատասխանատվության ենթակա անձանց շրջանակի, ինչպես նաև հայցադիմումի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանության հարցերի վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

26. Վճռաբեկ դատարանը Ավետիս Սկրտչյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի ՎԲ-150/07 որոշմամբ անդրադարձել է քրեական դատավարության կարգով քաղաքացիական պատասխանատվության ենթակա անձանց շրջանակին վերաբերող հարցին՝ արտահայտելով իր համանման դիրքորոշումը բարձրացված իրավական այս խնդրի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

վարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 14-ի դատավճռի՝ Անուշավան Բարսամյանի քաղաքացիական հայցի մասը բեկանել և հայցը թողնել առանց քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԱՎԴ/0022/06/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԱՎԴ/0022/06/08
նախագահող դատավոր՝ Ա. Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏՏԻՄՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով հավատարմագրված փաստաբան Ն.Ա.Վետիսյանի միջոցով մեղադրյալ Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումների դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Նախաքննության մարմնի կողմից 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

2. Ա.Ավետիսյանը 2008 թվականի մարտի 7-ին ձերբակալվել է, 2008 թվականի մարտի 8-ին ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

3. 2008 թվականի մարտի 8-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Վ.Հարությունյանը Ա.Ավետիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 8-ի որոշմամբ բավարարվել է քննիչ Վ.Հարությունյանի միջնորդությունը, Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամանակով և մերժվել է Ա. Ավետիսյանի նկատմամբ կիրառված

խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու՝ պաշտպան Հ. Մնացականյանի միջնորդությունը:

4. Որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Ա.Ավետիսյանի շահերի պաշտպան Լ.Սիմոնյանը՝ պահանջելով որոշում կայացնել Ա.Ավետիսյանի նկատմամբ ընտրված կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և կալանքից ազատելու մասին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 8-ի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքն՝ առանց բավարարման:

5. 2008 թվականի ապրիլի 28-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Վ.Հարությունյանը մեղադրյալ Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է մասնակի, Ա.Ավետիսյանի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մեկ ամիս ժամանակով և մերժվել է Ա. Ավետիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու՝ պաշտպան Լ. Սիմոնյանի միջնորդությունը:

6. Որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Ա.Ավետիսյանի շահերի պաշտպան Լ.Սիմոնյանը՝ պահանջելով որոշում կայացնել Ա.Ավետիսյանի նկատմամբ ընտրված կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և կալանքից ազատելու մասին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքն՝ առանց բավարարման:

7. 2008 թվականի մայիսի 27-ին նախաքննական մարմնի կողմից կայացվել է որոշում Ասլան Ավետիսյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով նոր մեղադրանք առաջադրելու մասին:

8. Ա.Ավետիսյանի շահերի պաշտպան Լ.Սիմոնյանը 2008 թվականի հունիսի 3-ին միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան մեղադրյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանն Ա.Ավետիսյանի շահերի պաշտպան Լ.Սիմոնյանի 2008 թվականի հունիսի 3-ի միջնորդությունը թողել է առանց քննության՝ նկատի ունենալով, որ մինչդատական վարույթն ավարտվել է, և Ա.Ավետիսյանի վերաբերյալ գործն արդեն իսկ ուղարկվել է դատարան:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Ավետիսյանը հավատարմագրված փաստաբան Ն.Ավետիսյանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

10. 2008 թվականի մարտի 8-ին Ա.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 2-րդ մասով նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններում նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի պարտություն կրելուց հետո, վերջինիս և նրա մի խումբ համախոհների կողմից ներգրավվելով երկրում ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելուն ուղղված օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված հրապարակային լայնածավալ միջոցառմանը, նրանց ուղղորդմամբ և հրահրմամբ անմիջական մասնակցություն է ունեցել Երևան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից սկսած Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և կենտրոնական փողոցներում հրագեների, պայթուցիկ նյութերի և այլ հարմարեցված առարկաների գործադրմամբ իրականացված սպանությունների, բռնությունների, ջարդերի, հրկիզումների, գույքի ոչնչացման և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով կազմակերպված զանգվածային անկարգություններին:

11. 2008 թվականի մայիսի 27-ին նախաքննական մարմնի կողմից կայացված որոշմամբ Ասլան Ավետիսյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, այն բանի համար, որ թեև մեղադրյալ Ա.Ավետիսյանը ներկա է գտնվել զանգվածային անկարգություններին, սակայն անմիջական մասնակցություն չի ունեցել դրանց, այլ զանգվածային անկարգությունները դադարեցնելու վերաբերյալ ուստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու, վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելու կոչեր է արել:

12. Նախաքննության մարմինը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ /գ.թ. 38, 39/ նշել է, որ Ա.Ավետիսյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով: Այսինքն՝ քննիչը սահմանափակվել է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով /Խափանման միջոց կիրառելու հիմքերը/ նախատեսված խափանման միջոց կիրառելու 1-ին և 2-րդ հիմքերը թվարկելով, սակայն այդ հանգամանքը հիմնավորող որևէ պացույց չի ներկայացրել: Իսկ դատարանները կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշում են կայացրել՝ հիմնվելով միայն քննիչի միջնորդության մեջ բերված հիմնավորումների վրա:

Դատական ստուգման արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2008 թվականի մայիսի 19-ին կայացված որոշմամբ, որով անփոփոխ է թողնվել ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի՝ Ա. Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու

մասին որոշումը, որպես հիմնավորում ուղղակիորեն նշվել է կալանքի տակ պահելու հիմքերի /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 1,2-րդ կետեր/ և պայմանների /հիմնավոր կասկածի առկայություն, ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 3-8 տարի ժամկետով ազատազրկում/ առկայությունը:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, վիստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Բողոքատուն գտնում է, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, որի համաձայն՝ քննիչը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ պետք է շարադրի այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը: Քննիչն իր միջնորդությունը հիմնավորող որևէ նյութ չի կցել գործին, իսկ դատարանները, հիմնվելով նախաքննական մարմնի սուբյեկտիվ կարծիքի վրա, այն բավարարել են:

Քննիչի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության վրա հիմնված՝ դատարանների այն հետևությունը, որ «գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտման, ինչպես նաև նախաքննության ավարտման համար անհրաժեշտ է մեկ ամիս ժամանակ», անհիմն է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ դա քննիչի պարտականությունն է և ոչ թե մեղադրյալին կալանքի տակ պահելու հիմք: Բացի այդ, քննիչն իր որոշման մեջ չի նշել որևէ հիմք, թե Ասլան Ավետիսյանը, ազատության մեջ գտնվելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված ինչ անօրինական գործողություններ կարող է կատարել և ինչպես կարող է խոչընդոտել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությանը:

Դատարանների որոշումները չեն համապատասխանում նաև նմանատիպ գործերով Եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներին:

14. Բողոքատուն նաև գտնում է, որ դատարանները կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումներ կայացնելիս անհիմն են մերժել Ա.Ավետիսյանի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները: Ըստ բողոքի՝ գրավը հանդիսանում է կալանքի այլընտրանքային խափանման միջոց, և կալանքը հիմնավորող հիմքերի պատճառաբանությամբ չի կարող կալանքից գրավով ազատելը մերժվել կամ ճանաչվել անթույլատրելի:

Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները մերժելիս դատարանների կողմից չի նշվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում սպառիչ թվարկված որևէ հիմք, որն իրավունք կտար Ասլան Ավետիսյանին գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի:

15. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի՝ Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մա-

յիսի 19-ի որոշումները և որոշում կայացնել Ասլան Ավետիսյանին կալանքից ազատելու մասին:

Մերժելու դեպքում բողոքատուն խնդրել է Ասլան Ավետիսյանին կալանքից գրավով ազատելը ճանաչել թույլատրելի և սահմանել գրավի չափը:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումների օրինակնանությունը և հիմնավորվածությունը:

16. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն օրենքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում՝

(...)

3) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, կամ երբ դա անհրաժեշտ է նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

Մարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ (...):»

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի (...) մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակն ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը»:

18. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ավետիսյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում թե առաջին ատյանի և թե վերաքննիչ դատարանները բավարարվել են միայն օրենքով նախատեսված կալանավորման հիմքերի օրենսդրական ձևակերպումների շարադրանքով, և իրենց որոշումները չեն պատճառաբանել փաստական հանգամանքների հիման վրա կատարված ողջամիտ ենթադրություններով: Մինչդեռ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՀ Սահմա-

նադրության 4-րդ հոդված): Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրությունները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակագրվելու անթույլատրելիության սկզբունքներից:

19. Նշված սկզբունքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կբովանդակագրվի:

20. Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա:

21. Բացի ՀՀ Սահմանադրությունից և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից, Վճռաբեկ դատարանի՝ 19-րդ և 20-րդ կետերում ներկայացված մոտեցումները բխում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումից: Մասնավորապես, Եվրոպական դատարանը Յագսին ու Սաժին ընդդեմ Թուրքիայի /8 հունիսի 1995թ. Yagci and Sargin v. Turkey, գանգատ թիվ 16419190, կետ 52 / գործով վճռում նշել է. «Դատարանն անշուշտ ոչ մի դեպքում թույլատրելի չի համարի որևէ դատական որոշում, որը հիմնված կլինի ստանդարտ ձևակերպումների վրա, առանց արդարադատությունից թաքնվելու վտանգի առկայության պատճառների որևիցե պարզաբանման»:

Մեկ այլ գործով վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ «...անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ներպետական դատարանները հաստատել և համոզիչ կերպով ներկայացրել են այնպիսի կոնկրետ փաստեր, որոնք հիմնավորել են իրենց կողմից արված հետևություններն առ այն, որ դիմողը կարող է փախուստի դիմել, խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը կամ կատարել նոր հանցագործություն: ...Ներպետական իշխանությունների պարտականությունն է կալանքի ժամկետի երկարացման հիմքերին համապատասխանող կոնկրետ փաստերի առկայությունն ապացուցելը: ...» /տես Մամեդովայի գործով վճռի կետեր 73, 75/:

22. Հետևաբար՝ մեղադրյալ Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով: Ընդ որում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկվելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող

նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից:

II. Կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը բացառապես նրան մեղսագրվող հանցագործության ծանրությամբ և քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորելու իրավաչափության մասին.

23. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի՝ խափանման միջոց կարող է կիրառվել «միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1. վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.

2. կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3. տարիքը և առողջական վիճակը.

4. սեռը.

5. զբաղմունքի տեսակը.

6. ընտանեական դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7. գույքային դրությունը.

8. բնակության մշտական վայրի առկայությունը.

9. այլ էական հանգամանքներ»:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում օգտագործվող «խափանման միջոցի կիրառում» հասկացությունը տարածվում է ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանքի ժամկետը երկարացնելու նկատմամբ: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ: Ուստի անձին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումն անհրաժեշտ է հիմնավորվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերով, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքները:

25. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում սահմանվել են կալանքի ժամկետի երկարացման հիմքերի առավել կոնկրետ չափանիշներ:

Մասնավորապես, մի շարք գործերով Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... թեև անձին սպառնացող պատժի խստությունը հանդիսանում է փախուստի դիմելու կամ նոր հանցանք կատարելու հավանականությունը

զմահատելու կարևոր տարր, ազատությունից զրկելը երկարաձգելու անհրաժեշտությամբ չի կարող զմահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը» /տես. Mamedova v. Russia, 1 հունիսի 2006թ. վճիռը, զանգատ թիվ 7064/05/ կետ 74, Panchenko v. Russia 2005թ. փետրվարի 8-ի վճիռը, զանգատ թիվ 45100/98, կետ 102, Ilijkov v. Bulgaria, 2001թ. հուլիսի 26-ի վճիռը, զանգատ թիվ 33977/96, կետ 81/:

Բացի այդ, Եվրոպական դատարանը, Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի գործով /1 հունիսի 2006թ. Mamedova v. Russia, զանգատ թիվ 7064/05/ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն առ այն, որ կալանավորված անձը կատարել է հանցագործություն, հանդիսանում է անհրաժեշտ պայման կալանքի ժամկետի երկարացման օրինականության համար: Այնուհանդերձ, որոշակի ժամանակ անց դա դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե դատական իշխանությունների կողմից ներկայացված մյուս հիմքերը շարունակել[՞] են արդյոք արդարացնել ազատությունից զրկելը: Եթե նման հիմքեր եղել են, «համապատասխան» և «բավարար», ապա դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու մարմինները դրսևորել[՞] են արդյոք «պատշաճ ջանասիրություն»:

26. Կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

Իսկ ինչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է զմահատվի գործում առկա մնացած, մասնավորապես չէ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված հանգամանքների համատեքստում: Այդ առումով կարող է քննության առարկա դառնալ նաև դեռևս չկատարված քննչական գործողությունների բնույթը, դրանց օբյեկտիվության վրա մեղադրյալի կողմից ազդեցություն գործելու հնարավորությունը:

27. Այսպիսով, Ա.Ավետիսյանի կալանքի ժամկետը երկարացնելիս ստորադաս դատարանները պարտավոր էին բավարար փաստերի ներքո հիմնավորված ճանաչել չէ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված մեկ կամ մի քանի հիմքի առկայությունը: Բացի այդ, բավարար չափով պետք է հիմնավորվեր տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը» և դրա հիման վրա բավարար փաստերի ներքո հիմնավորեր նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը:

28. Այնուամենայնիվ, յուրաքանչյուր գործով կալանքի տևողությունը կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ կան հասարակական շահի իրական պահանջների հատուկ հատկանիշներ, որոնք ինքնուրույնաբար, չվտանգելով անմեղության կանխավարկածը, գերակշռում են չէ Սահմանադրությամբ և չէ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

29. Այս չափորոշիչներով գնահատելով Ա.Ավետիսյանի կալանքի ժամկետի տևողությունը երկարացնելու գործընթացը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի համապատասխանել անձի ազատության և անձեռնմխելության իրավունքին վերաբերող ինչպես երկրի ներքին օրենսդրության, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի հիմնարար պահանջներին:

III Գրավի կիրառմամբ անձին կալանքից ազատ արձակելու հարցի քննարկման պահանջը և գրավի անթույլատրելիության դեպքերի մեկնաբանումը.

30. Վճռաբեկ բողոք բերած անձն այս առումով Վճռաբեկ դատարանի առջև ըստ էության բարձրացրել է հետևյալ հարցը. ընդհանուր իրավասության դատարանն իրավունք ունի՞ր արդյոք Ա.Ավետիսյանին կալանքից գրավով ազատելը մերժել ու դա ճանաչել անթույլատրելի՝ կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորված լինելու պատճառաբանությամբ:

31. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի. «Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան»:

32. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանդորմից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը /Տես Վճռաբեկ դատարանի Տարոն Ռ-ազմիկի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշումը (կետ 3.1): Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ, Վճռաբեկ դատարանի որոշումներով, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված է, որ դատարանը կարող է կալանքի փոխարեն կիրառել գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց:

33. Ինչպես երևում է՝ Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումներից, գրավի կիրառումը մերժվել է այն նույն հիմքով, որով հիմնավորվել է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման անհրաժեշտությունը:

34. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա, ինչը սույն գործով բացակայում է:

35. Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոքի հեղինակի այն պնդումը, որ դատարանն իրավունք ունի մեղադրյալին գրավով ազատելը ճանաչել անթույլ-

լատրելի միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում նշված դեպքերում: Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անձին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլատրելի. մասնավորապես, երբ առկա է անձի կողմից թաքնվելու կամ գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վտանգ, կամ երբ դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:

36. Այդ առումով Եվրոպական կոնվենցիային չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, որ դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը առանձին դեպքերում ճանաչել անթույլատրելի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքով գրավից ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքով գրավից ազատելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառնիչ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խախտման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը:

37. Հետևաբար, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները չեն խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ շարադրելով այլ շարժառիթներ:

IV Սույն որոշման իրավական արժեքը.

38. Սույն որոշման 16-րդ-29-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտը բեկանելու համար:

Սակայն բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր, դրանք կորցրել են իրենց իրավական նշանակությունը: Ուստի Վճռաբեկ դատարանի սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

39. Բացի այդ, գործի նյութերից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նոյր-Մարաշ համայնքների դատարանի կողմից 2008 թվականի հուլիսի 16-ին կայացվել է դատավճիռ, որով Ասլան Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 6 ամիս ժամկետով, որն Ա.Ավետիսյանն ամբողջությամբ կրել է: Պատիժը կիրառելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առել Ա.Ավետիսյանին անազատության մեջ պահելու ողջ ժամանակահատվածը:

40. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք այլևս իրավաբանորեն գոյություն չունեն, ինչպես նաև Ա.Ավետիսյանի նկատմամբ քրեական վարույթի ողջ համատեքստում չեն հանգեցրել նրան անազատության մեջ ավելի երկար պահելուն, քան դատարանի դատավճռով սահմանված ժամկետն է:

41. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գոր-

ծառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ասլան Հովհաննեսի Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և կալանքը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵԿԴ/0225/06/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0225/06/08
Նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

քարտուղար Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով մեղադրյալ Անուշ Սանասարի Ղավալյանի պաշտպան, Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ հիմնադիր տնօրեն Գևորգ Սաֆարյանի կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ ԿԱ ՀՊԾ քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. Անուշ Ղավալյանը 2008 թվականի մարտի 21-ին ձերբակալվել է, մարտի 24-ին ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով:

3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 24-ի որոշմամբ մասնակիորեն բավարարվել է մե-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

դադրյալ Անուշ Ղավալյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը, և Անուշ Ղավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանք՝ 20 օր ժամկետով:

4. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ մասնակիորեն բավարարվել է մեղադրյալ Անուշ Ղավալյանի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը, և Անուշ Ղավալյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մեկ ամսով՝ մինչև 2008 թվականի մայիսի 10-ը:

5. 2008 թվականի ապրիլի 10-ին Անուշ Ղավալյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով:

6. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 7-ի որոշմամբ մասնակիորեն բավարարվել է մեղադրյալ Անուշ Ղավալյանի նկատմամբ ընտրված կալանքը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը, և Անուշ Ղավալյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մեկ ամսով՝ մինչև 2008 թվականի հունիսի 10-ը: Միաժամանակ մերժվել է Ա.Ղավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

7. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 9-ի որոշմամբ մասնակիորեն բավարարվել է մեղադրյալ Անուշ Ղավալյանի նկատմամբ ընտրված կալանքը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը և Անուշ Ղավալյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 20 օրով՝ մինչև 2008 թվականի հունիսի 30-ը: Միաժամանակ մերժվել է Ա.Ղավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

8. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Ա.Ղավալյանի պաշտպանը:

9. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ առանց քննության է թողել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքը:

10. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Անուշ Ղավալյանի պաշտպան, Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

11. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել 2008թ. հունիսի 13-ին:

12. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ նյութերն ընդունել է վարույթ և նշանակել դատական ստուգման 2008 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 16⁰⁰-ին:

13. 2008 թվականի հունիսի 28-ին ՀՀ ԿԱ ՀՊԾ քննչական բաժնի պետի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան այն մասին, որ «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ ղեկավար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ քննվող քրեական գործով նախաքննությունն ավարտվել է, և Անուշ Ղավալյանի ու մյուսների վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 2008 թվականի հունիսի 19-ին ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

14. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը գտել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտը սահմանափակվում է նախաքննության ավարտով, հետևաբար քրեական գործի նախաքննությունն ավարտվելու և գործը դատարան ուղարկելու պահից տվյալ դատարանն է իրավասու քննարկել ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականությունն ու հիմնավորվածությունը: Նշված պատճառաբանություններով վերաքննիչ դատարանը 2008 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ առանց քննության է թողել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոիշյալ հիմնավորումներով.

15. Բողոք բերած անձը գտնում է, որ իր բողոքն առանց քննության թողնելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասը բովանդակում է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի սպառնիչ ցանկը, որում բացակայում է նախաքննության ավարտման պատճառաբանությամբ բողոքն առանց քննության թողնելու հիմքը: Այդ պատճառաբանությամբ բողոքն առանց քննության թողնելով՝ վերաքննիչ դատարանը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:

17. Բողոքում նշվում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները, քանի որ ըստ էության չքննելով կալանավորման օրինականության և հիմնավորվածության հարցը՝ չի ապահովել կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը: Վերաքննիչ դատարանը խախտել է նաև մույն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դատարանի մատչելիության սկզբունքը:

18. Բողոք բերած անձը նշում է նաև, որ վերաքննիչ դատարանը սխալ հետևություն է արել այն մասին, որ Երևանի քրեական դատարանն է իրավասու դատական ստուգման ենթարկել կալանավորման որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը: Ինչպես Երևանի քրեական դատարանը, այնպես էլ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, հա-

մաճայն օրենքի, հանդիսանում են առաջին ատյանի դատարաններ, ուստի քրեական դատարանը չի կարող ունենալ և չունի օրենքով նախատեսված լիազորություն՝ նույն ատյանի մեկ այլ դատարանի դատական ակտը վերանայելու համար: Այդպիսի լիազորությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օժտված է վերաքննիչ դատարանը, որը չկատարելով իր պարտականությունը՝ հրաժարվել է արդարադատության իրականացումից:

19. Բողոքում նշվում է նաև, որ վերաքննիչ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարան մուտք է եղել 2008 թվականի հունիսի 13-ին, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ այդ պահից սկսած վերաքննիչ դատարանը պարտավոր էր Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանից պահանջել ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերը և երեք օրվա ընթացքում իրականացնել ընտրված խափանման միջոցի օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը: Մինչդեռ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացրել է 13 օր անց՝ 2008 թվականի հունիսի 26-ին: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը բողոքը չի քննել ողջամիտ ժամկետում և չի կատարել անհապաղ որոշում կայացնելու իր պարտականությունը: Բողոք բերող անձը նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում առկա «ողջամիտ ժամկետում դատաքննություն», «կալանավորման օրինականության վերաբերյալ անհապաղ որոշում կայացնել» ձևակերպումները նպատակ են ունեցել երաշխավորել կալանավորման հարցի և դրա օրինականության ու հիմնավորվածության անհապաղ դատական ստուգումը:

20. Բողոք բերած անձը նշում է նաև, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը նիստ էր նշանակել 2008 թվականի հունիսի 30-ին, որը ՀՀ կառավարության որոշմամբ համարվել էր ոչ աշխատանքային օր, իսկ 2008 թվականի հուլիսի 1-ին առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թվականի հունիսի 9-ի որոշման դեմ պաշտպանի բերած բողոքն առանց քննության թողնելու մասին:

21. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բողոքն ընդունել վարույթ, ամբողջությամբ բեկանել ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1.ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ և 381-րդ հոդվածների կիրառման մասին.

22. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ շրջափակելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Նշված հոդվածի իմաստով, վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկո-

դուրյան շրջանակներում ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվող ակտերը վերանայող դատարան, որի խնդիրն է նշված ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Ընդհանուր իրավասության դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման կայացումը և վերջիններիս՝ վերաքննության կարգով վերանայումը իրականացվում են տարբեր դատավարական գործառույթների շրջանակներում: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումը կայացվում է մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության, իսկ նշված ակտերի՝ վերաքննիչ դատարանի կողմից վերանայումը՝ վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատարանի որոշումների ստուգման և վերանայման գործառույթի շրջանակներում: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանը անթույլատրելի է համարում անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումները վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքի սահմանափակումը՝ ելնելով այն հանգամանքից՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, թե դատական քննության փուլում գտնվող գործի շրջանակներում են դրանք բողոքարկվել:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375.4-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ հոդվածով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմք նախատեսված չէ, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բողոքն առանց քննության թողնելու հիմքերի ցանկը սպառիչ է:

Սույն գործով կայացված՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման հիմքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դրել է քրեական գործի նախաքննությունն ավարտված և գործը դատարան ուղարկված լինելու հանգամանքը, որպիսին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված չէ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բողոքարկվել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ, որն առանց քննության թողնելու ենթակա չէր: Բողոքը բերվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, ուստի ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը պարտավոր էր այն վարույթ ընդունել և որոշման կայացմամբ իր դիրքորոշումն արտահայտել Ա.Ղավալյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշման օրինական և հիմնավոր լինելու կամ չլինելու վերաբերյալ:

II. Մինչդատական վարույթն ավարտված լինելու դեպքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման՝ քրեական դատարանի իրավասությանը վերապահելու իրավաչափության մասին.

24. ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դա-

տարանները: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ մասնագիտացված դատարաններն են քրեական դատարանները, քաղաքացիական դատարանները և վարչական դատարանը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

ՀՀ օրենսդրության նշված կարգավորումից հետևում է, որ ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված դատարանները հանդիսանում են նույն ատյանի դատարանի տարբեր օղակներ: Մասնագիտացված դատարանները, հանդիսանալով առաջին ատյանի դատարանի ինքնուրույն օղակ, իրավասու չեն նույն ատյանի այլ օղակի՝ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշումների օրինականության ու հիմնավորվածության դատական ստուգում իրականացնել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման մեջ արտահայտված մոտեցումն այն մասին, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված ակտի օրինականության ու հիմնավորվածության ստուգում գործի դատական քննության փուլում պետք է իրականացվի Երևանի քրեական դատարանի կողմից, հակասում է ՀՀ ներպետական օրենսդրությանը:

III. Վերաքննիչ դատարանի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի ու 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտման մասին:

25. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննությանը ներկայանալու երաշխիքներով: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

Ինչպես նշվեց վերևում, ՀՀ ներպետական քրեադատավարական օրենսդրությունը որևէ փուլային սահմանափակում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշման բողոքարկման համար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը պետք է օրենքով սահմանված ժամկետում ձեռնամուխ լինել Անուշ Դավայանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգմանը, մինչդեռ դա չի արել՝ դրանով խոչընդոտելով կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքի իրականացմանը: Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքի հեղինակի այն փաս-

տարևը, որ առանց օրենքով նախատեսված հիմքերի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հանգեցնում է դատարանի մատչելիության իրավունքի /արդարադատության մատչելիության իրավունքի/ խախտման, որը նախատեսված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Սույն գործի շրջանակներում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, դուրս գալով ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից և կայացնելով գործն առանց քննության թողնելու մասին որոշում, չի գործել որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: «Օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկնաբանել է Սոկուրենկոն և Ստրիգուին ընդդեմ Ուկրաինայի գործով (20 հուլիսի 2006թ., գանգատներ թիվ 29458/04 և 29465/04) որոշման մեջ, որում նշվում է, որ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ գանգատարկվող վարույթի կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման իմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

IV.Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով դատավարական ժամկետները պահպանած չլինելու մասին.

26. Անդրադառնալով բողոք բերած անձի այն փաստարկներին, որ սույն գործը քննության նշանակելիս վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական ժամկետի խախտում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պնդումները մասամբ են հիմնավոր: Ինչպես երևում է գործի նյութերից, բողոքը վերաքննիչ դատարանում մուտք է եղել 13.06.2008թ.՝ ուրբաթ օրը և մակագրվել է դատավորին երկուշաբթի օրը՝ 16.06.2008թ.: Գործով նախագահողը առաջին ատյանի դատարանից նյութերը պահանջել է 18.06.2008թ.՝ չնայած դրանք անհապաղ պահանջելու օրենքի պահանջին: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանից նյութերն ուղարկվել են 24.06.2008թ. և հաջորդ օրը մուտք եղել վերաքննիչ դատարանում: 26.06.2008թ. դատավորը որոշում է կայացրել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նյութերը վերաքննիչ դատարանի վարույթ ընդունելու և դատական ստուգման նշանակելու մասին՝ դատական նիստը նշանակելով 2008թ. հունիսի 30-ի երկուշաբթի օրը: Մակայն 2008 թվականի հունիսի 30-ին նշանակված դատական նիստը տեղի չի ունեցել, քանի որ այդ օրը ՀՀ կառավարության որոշմամբ համարվել է ոչ աշխատանքային օր:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը խախտել է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը անհապաղ պահանջելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված պահանջը: Ինչ վերաբերում է բուն դատական ստուգման համար նախատեսված ժամկետի խախտման մասին պնդումներին, ապա դրանք հիմնավոր չեն, քանի որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը ստանալով՝ վերաքննիչ դատարանը նշանակել է դատա-

կան նիստի օրը և ժամը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը: Նշված հոդվածի համաձայն՝ կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինակա- նությունը և հիմնավորվածությունը դատարանը ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինակաճանությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերը ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում: Մինևույն ժամանակ վերաքննիչ դատարանը պետք է հնարավորինս արագացնեք կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշ- ման օրինակաճանությունը և հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելու գործընթացը՝ անհրաժեշտ ջանք գործադրեք պահանջված նյութերը հնարավորինս արագ ստանալու համար, ինչպես նաև ձեռնարկեք բոլոր միջոցները կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը 2008թ. հունիսի 25-ին ստացված լինելու պայմաններում դատական ստուգումը հունիսի 26-ին կամ 27-ին իրականացնելու հա- մար, մանավանդ որ բողոքը ստացվել էր 13.06.2008թ.:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում- ներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406- լրդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են վերաքննիչ դատարանի՝ սույն գործով կայացված դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

28. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշումն ամբողջությամբ պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

29. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահ- մանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատա- վարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դա- տարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջ- նական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵՔԴ/0299/01/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0225/06/08
նախագահող դատավոր՝ Հ. Ասատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ. ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ
Ս. ՄԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԻՆԻՎԱՐՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ա. Գավալյանի պաշտպան, հավատարմագրված փաստաբան Արա Ջոհրաբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2007 թվականի հոկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Գևորգ Սաֆարյանի կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

2. 2008 թվականի մարտի 24-ին Անուշ Սանասարի Գավալյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

3. 2008 թվականի հունիսի 19-ին Անուշ Գավալյանի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, և 2008 թվականի հունիսի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

4. Երևանի քրեական դատարանը 2008 թվականի հուլիսի 8-ին «քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշում է կայացրել, որով անդրադառ-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

նալով նաև Ա.Ղավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցին՝ որոշել է Ա.Ղավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողնել անփոփոխ:

5. Որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Երևան քաղաքի քրեական դատարանը 2008 թվականի հուլիսի 8-ի «քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշման մեջ անդրադարձել է նաև Ա.Ղավալյանին կալանքի տակ պահելու խնդրին և որոշում կայացրել ընտրված խափանման միջոց կալանքն անփոփոխ թողնելու մասին:

8. Պաշտպանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք ներկայացվել է 2008 թվականի հուլիսի 8-ի «քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշման դեմ մասնակի՝ խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասով:

9. Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվել է՝ պատճառաբանելով, որ նշված որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկվելու ընթացակարգ դատավարության օրենսգրքով սահմանված չէ, հետևաբար այն չի ընդգրկվում վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումների ցանկում:

3.Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.1

10. Բողոք բերող անձը նշում է, որ վերաքննության կարգով բողոքարկվել է Երևանի քրեական դատարանի կողմից 2008 թվականի հուլիսի 8-ի կայացված՝ «քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշումը մասնակիորեն՝ Ա.Ղավալյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասով, որը քրեական դատավարության օրենսգրքի 376.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննության կարգով ենթակա է բողոքարկման:

11. Ըստ բողոք բերող անձի՝ վերաքննիչ դատարանը քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների նկատմամբ կիրառել է սահմանափակ մեկնաբանում և որպես վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումներ դիտարկել բացառապես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ընթացքում կայացված որոշումները, որոնք վերաբերում են առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումներին:

Բողոքաբերը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից չի բխում այն, որ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումները պետք է կայացված լինեն բացառապես մինչդատական վա-

րույթի նկատմամբ դատական վերահսկողության ընթացքում: Ըստ նրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկման համար օրենսդիրն ամրագրել է միայն հետևյալ պայմանների առկայությունը՝

1.բողոքարկման ենթակա են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումները,

2.բողոքարկվող որոշումները պետք է կայացված լինեն առաջին ատյանի դատարանի կողմից:

Բողոք բերած անձը նշում է, որ մինչդատական վարույթի ընթացքում դատական վերահսկողություն իրականացնելիս դատարաններն այլ որոշում, մասնավորապես ընտրված խափանման միջոցը փոփոխելու իրավասությամբ օժտված չեն: Այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումներ են հանդիսանում առաջին ատյանի դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները: Ըստ բողոք բերող անձի՝ սրանով ևս փաստվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման իրավունքը չի կարելի մեղ մեկնաբանման ենթարկել և սահմանափակել միայն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտով:

12. Ըստ բողոք բերող անձի՝ կամայականորեն վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հանգեցնում է դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը, որը նախատեսված է «Մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով: Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը հրաժարվել է արդարադատության իրականացումից՝ բողոքում ներկայացված հարցերը թողնելով առանց ըստ էության քննության: Ընդ որում, բողոքաբերի կարծիքով, դատարանի նման որոշումը չի եղել օրինական և չի հիմնվել օրենքով նախատեսված առանց քննության թողնելու հիմքերի վրա, ինչի արդյունքում Անուշ Ղավալյանը գրկվել է դատարանի կողմից իր գործի ըստ էության քննության իրավունքից:

13. Բողոքաբերը նշում է նաև, որ վերաքննիչ դատարանը իր որոշմամբ ոչ միայն սահմանափակել է Անուշ Ղավալյանի՝ դատարանի մատչելիությունը, որի ասպեկտներից մեկն է վերադատության կարգով բողոքների դատական քննության իրավունքը, այլև խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները, քանի որ նախ՝ ըստ էության չքննելով կալանավորման օրինականության և հիմնավորվածության հարցը՝ չի ապահովել կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը, և երկրորդ՝ այդ հարցը չի քննել ողջամիտ ժամկետում և չի կատարել անհապաղ որոշում կայացնելու իր պարտականությունը:

14. Ըստ բողոք բերած անձի՝ վերաքննիչ դատարանը խախտել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջն առ այն, որ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Սույն պարագայում Վերաքննիչ դատարանը խախտել է Ա.Ղավալյանի՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ իր նկատմամբ կայացված՝ կիրառված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն ընձեռել է միայն տեսականորեն: Այդ իրավունքի իրականացումը գործնականորեն չի ապահովվել:

15. Վերագրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրում է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը, իսկ քրեական դատարանում գործը կոլեգիալ կազմով քննելիս նաև դատական կազմի մյուս դատավորները հետազոտում են գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1.դատական քննության նշանակելու մասին.

2.քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.

3.քրեական գործի վարույթը կասեցնելու մասին.

4.գործը մեղադրողին վերադարձնելու մասին.

5. քրեական գործը ըստ ընդդատության ուղարկելու մասին.

6.ինքնաբացարկի մասին:

17. Գործը դատական քննության նշանակելու մասին որոշման կայացման կարգը սահմանվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի երկրորդ մասով, որի համաձայն՝ դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ պետք է բովանդակվեն՝ մեղադրյալի մասին նշում, քրեական օրենքը, որի խախտումը վերագրվում է մեղադրյալին, որոշում՝ խափանման միջոցները և պատճառված վնասի ապահովման միջոցները վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին, որոշումներ՝ դատավարության մասնակիցների հարուցած միջոցառումների, բացարկների և այլ հայտարարությունների առթիվ, որոշում՝ դատարանի կազմի մասին, որոշում՝ մեղադրյալի ընտրած կամ վերջինիս համար նշանակված անձին որպես պաշտպան թույլատրելու մասին, դատական նիստին կանչման ենթակա անձանց ցանկը, տեղեկություններ՝ դատական քննության տեղի և ժամանակի մասին, որոշում՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին, որոշում՝ դատավարության մասնակիցների նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու մասին:

18. Վերոնշյալ հոդվածի բովանդակությունից երևում է, որ գործը դատական քննության նշանակելու փուլում առաջին ատյանի դատարանը, ի թիվս այլ որոշումների, որոշում է կայացնում նաև մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, իսկ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում՝ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի կապակցությամբ: Խափանման միջոցի վերաբերյալ որոշումը փաստաթղթային ձևակերպման առումով ներառվում է գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ, սակայն ըստ էության հանդիսանում է ինքնուրույն դատավարական որոշում:

Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի իմաստով այն դատավարական ձևի շրջանակներում արտահայտում է դատարանի դիրքորոշումը՝ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, իսկ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում՝ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի վերաբերյալ:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերաց-

նելու, սույն օրենսգրքում նախատեսված դեպքերում խուզարկության, առգրավման, բժշկական հաստատություններում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են ինչպես մինչդատական, այնպես էլ դատական քննության փուլում կայացվող որոշումները: Վճռաբեկ դատարանը համաձայն չէ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա այն ձևակերպման հետ, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասում խոսքը գնում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ընթացքում կայացված որոշումներին, որոնք վերաբերում են կալանքը որպես խափանման միջոց ընտրելուն, փոփոխելուն կամ վերացնելուն (...)»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ մոտեցումը հակասում է ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը որևէ փուլային սահմանափակում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու որոշումների բողոքարկման համար: Քրեադատավարական օրենքն ամրագրում է միայն նշված որոշումների՝ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված լինելու փաստը, հետևաբար Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում դատական քննության ընթացքում կայացված՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումների՝ 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով բողոքարկման իրավունքի սահմանափակումը նախաքննության ավարտման պատճառաբանությամբ:

21. Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոխվի դրա իմաստը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի տառացի մեկնաբանման արդյունքում ստացվում է, որ դատական կարգով բողոքարկման ենթակա են միայն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները: Քրեադատավարական օրենքը որևէ նշում չի պարունակում որպես խափանման միջոց ընտրված կալանքն անփոփոխ թողնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության մասին, մինչդեռ սույն գործով բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի՝ Անուշ Ղավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին որոշումը: Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կայացված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով չի կարող բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

22. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշում է նաև, որ վերաքննիչ դատարանը իր որոշմամբ խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները, քանի որ նախ՝ ըստ էության չքննելով կալանավորման օրինականության և հիմնավորվածության հարցը՝ չի ապահովել կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը, և երկրորդ՝ այդ հարցը չի քննել ողջամիտ ժամկետում և չի կատարել անհապաղ որոշում կայացնելու իր պարտականությունը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Ձեր-

բակաված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունը ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննությանը ներկայանալու երաշխիքներով», իսկ 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

Ինչպես նշվեց վերևում, ՀՀ ներպետական քրեադատավարական օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանափակում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման հնարավորությունը՝ անկախ այն հանգամանքից՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, թե գործը դատական քննության նախապատրաստելու փուլում է այն կայացվել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երաշխիքը հիմք է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը բավարարված համարելու համար:

23. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշում է նաև, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ խախտել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում (29 նոյեմբեր 1988թ, Brogan and Others v. The United Kingdom, զանգատ թիվ 11209/84, 11234/84, 11266/84, 11386/85, կետ 68, 25 մայիսի 1993թ Brannigan and McBride v. The United Kingdom, զանգատ թիվ 14553/89, 14554/89, կետ 76) արտահայտել է այն մտտեցումը, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներն ավելի խիստ են, քան 13-րդ հոդվածի պահանջները: 5-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պահանջները հանդիսանում են որպես 13-րդ հոդվածի lex specialis նորմ, որը կիրառվում է 5-րդ հոդվածի կապակցությամբ: «Եվ քանի որ չկա ավելի խիստ պահանջի՝ 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, Դատարանը անհրաժեշտ չի համարում քննել կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջները բավարարվել են, թե՛ ոչ (...): Նման գործերով միայն պետք է պարզել, թե արդյոք կա 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում»:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չի խախտվել նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջները:

24. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ քրեական դատարանը, առանց քննության թողնելով անձի նկատմամբ կալանքն անփոփոխ թողնելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոքը, կայացրել է ըստ էության ճիշտ որոշում: Սակայն դատարանը ճիշտ չի պատճառաբանել այդ որոշումը: Բողոքը պետք է առանց քննության թողնվեր ոչ թե այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քրեադատավարական օրենքը չի նախատեսում նշված որոշման բողոքարկման ընթացակարգ, այլ այն պատճառաբանությամբ, որ բողոքարկվել է այնպիսի դատավարական ակտ, որն ընդհանրապես ենթակա չէ բողոքարկման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

վարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵԿԴ/0050/11/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
ԵԿԴ/0050/11/08
Նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ
Դ.ԱՎԵՏՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

քարտուղար Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ, Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Արա Զոհրաբյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.«Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերության ղեկավար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ կալանք է դրվել «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ հանրային սննդի սպասարկման գործնություն իրականացնող օբյեկտների, այդ թվում նաև Խորենացի փողոցի թիվ 43 հասցեում «Նարեկ» ՍՊ ընկերությանը պատկանող անշարժ գույքի վրա:

3. 2008 թվականի ապրիլի 29-ին Ընկերությունը դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, խնդրելով վերացնել քննիչի կողմից 2007 թվականի նոյեմբերի

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

6-ի որոշումը՝ «Նարեկ» ՍՊ ընկերությանը պատկանող ք.Երևան, Խորենացի 43 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը:

2008 թվականի ապրիլի 29-ի դիմումի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունը որևէ պատասխան չի ներկայացրել:

4. 2008 թվականի հունիսի 9-ին Ընկերությունը դիմում-բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել քննիչի կողմից 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը՝ «Նարեկ» ՍՊ ընկերությանը պատկանող ք.Երևան, Խորենացի 43 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ առանց քննության է թողել «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի բողոքը:

6. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը:

7. «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել գույքի վրա կալանք դնելու մասին որոշման դեմ «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի բողոքը առանց քննության թողնելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշումը:

8. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանը:

9. Վճռաբեկ դատարանը 2008 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

10. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

11. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 03.05.2006 թվականին տրված թիվ 2112823 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Կենտրոն համայնքի Մ.Խորենացի փողոցի թիվ 43 շենքը սեփականության իրավունքով պատկանում է «Նարեկ» ՍՊ ընկերությանը:

12. «Նարեկ» ՍՊ ընկերությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող Մ.Խորենացի փողոցի թիվ 43 հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասը 26.12.2006 թվականի վարձակալության պայմանագրով վարձակալության է հանձնել «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերությանը:

13. 2008 թվականի փետրվարի 26-ին «Նարեկ» ՍՊ ընկերության և «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերության միջև կնքվել է համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

14. 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանումը թիվ ԵԼ-86 գրությամբ մերժել է «Նարեկ» ՍՊ ընկերությանը սահմանա-

փակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրումը, քանի որ ՀՀ ԿԱ ՀՊՇ քննչական բաժնի կողմից 06.11.2007 թվականին կալանք է դրված Մ.Խորենացի փողոցի թիվ 43 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

15. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի բողոքը թողել է առանց քննության՝ գործի նախաքննությունն ավարտված լինելու պատճառաբանությամբ:

16. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

3.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

17. Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը:

Այդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ յուրաքանչյուր անձ, ում իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի գործողություններով և որոշումներով՝ դրանք բողոքարկելու իրավական հնարավորություն է վերապահվում անկախ այն հանգամանքից, թե քրեական գործը ինչ փուլում է գտնվում: Նշված հոդվածով նախատեսված խախտումները կարող են կատարվել բացառապես քրեական գործի մինչդատական վարույթի շրջանակներում, իսկ երբ գործն անցել է դատական քննության փուլ, նշված հոդվածում թվարկված սուբյեկտները չեն կարող իրենց որոշումներով ու գործողություններով խախտել դատավարության մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասը չպետք է պայմանավորել բացառապես մինչդատական վարույթի ընթացքում բողոքարկման հնարավորությամբ: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության համար կարևոր է միայն, որ խախտումը տեղի ունեցած լինի մինչդատական փուլում:

18. Բողոք բերած անձը գտնում է, որ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Այդ հոդվածի համաձայն՝ բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոքը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքըը հստակ և սպառիչ սահմանել է, թե մինչդատական վարույթ իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումները որքան ժամկետում կարող են բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան: Ուստի, վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ մինչդատական վարույթի դատական վերահսկողությունը սահմանափակված է մինչդատական վարույթի ժամկետներով, իսկ տվյալ դեպքում քրեական գործով մինչդատական վարույթն ավարտված է, չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին:

19. Բողոք բերած անձը նշում է, որ անհիմն է դատարանի այն պատճառաբանությունը, թե քանի որ գործը գտնվում է քրեական դատարանում, վերջինն է իրականացնելու գույքի վրա կալանք դնելու որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Ընդհանուր իրավասության դատարանը սխալ հետևություն է արել այն մասին, որ Երևանի քրեական դատարանն է իրավասու դատական ստուգման ենթարկելու գույքի վրա կալանք դնելու որոշման օրինականությունն և հիմնավորվածությունը: Ինչպես Երևանի քրեական դատարանը, այնպես էլ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, համաձայն օրենքի, հանդիսանում են առաջին ատյանի դատարաններ, ուստի քրեական դատարանը չի կարող ունենալ և չունի օրենքով նախատեսված լիազորություն՝ նույն ատյանի մեկ այլ դատարանի դատական ակտը վերանայելու համար: Այդպիսի լիազորությամբ օրենքի համաձայն օժտված է վերաքննիչ դատարանը, որը չկատարելով իր պարտականությունը՝ հրաժարվել է արդարադատության իրականացումից:

20. Խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:

Բողոք բերած անձը գտնում է, որ գործի քննության մինչդատական վարույթի ընթացքում ընդունված և օրենքի ուժով դատական ստուգման ենթակա որոշումների դեմ բերված բողոքները չեն կարող առանց քննության թողնվել գործի նախաքննությունն ավարտված լինելու պատճառաբանությամբ, քանի որ բողոքն առանց քննության թողնելու մեծ հիմք օրենքով նախատեսված չէ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ բողոքը ճանաչելով հիմնավորված, դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա բերված բողոքի քննության արդյունքում դատարանը որևէ այլ որոշում կայացնելու լիազորություն չունի: Մինչդեռ, բողոքն առանց քննության թողնելու որոշում կայացնելով՝ առաջին ատյանի դատարանը դուրս է եկել իրեն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակից, իսկ վերաքննիչ դատարանն էլ անհիմն կերպով օրինական ուժի մեջ է թողել նշված որոշումը:

21. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի մեկնաբանության մասին.

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այլ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Նշված հոդվածի իմաստով դատական կարգով բողոքարկման ենթակա են մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունները և որոշումները, որոնք կայացվել են մինչև գործն ըստ էության լուծելու համար դատարան ու-

դարկելը: Սահմանելով հետագա դատական վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հետաքննության և նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման որևէ սահմանափակում չի նախատեսում՝ կապված գործի քննության դատավարական փուլի հետ: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, նախաքննության ավարտված լինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դատական բողոքարկման համար:

Ելնելով վերագրյալից՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա այն մոտեցմանը, որի համաձայն՝ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը սահմանափակված է մինչդատական վարույթի ժամկետներով (...)»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիրքորոշումը ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ չնախատեսված ժամկետային սահմանափակման է ենթարկում նախնական քննության մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման իրավունքը՝ դրանով իսկ հակասելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասին, որը բողոքը մերժելու կամ դրա վերաբերյալ մեկ ամսվա ընթացքում պատասխան չստացվելուց հետո վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան բողոք ներկայացնելու մեկամսյա ժամկետից բացի որևէ այլ ժամկետ չի սահմանում:

II. Մինչդատական վարույթն ավարտված լինելու դեպքում անշարժ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգումը քրեական դատարանի իրավասությանը վերապահելու իրավաչափության մասին:

23. ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դատարանները: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ մասնագիտացված դատարաններն են քրեական դատարանները, քաղաքացիական դատարանները և վարչական դատարանը:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

ՀՀ օրենսդրության նշված կարգավորումից հետևում է, որ ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված դատարանները հանդիսանում են նույն ատյանի դատարանի տարբեր օղակներ: Մասնագիտացված դատարանները, հանդիսանալով առաջին ատյանի դատարանի ինքնուրույն օղակ, իրավասու չեն նույն ատյանի այլ օղակի՝ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշումների օրինականության ու հիմնավորվածության դատական ստուգում իրականացնել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման մեջ արտահայտ-

ված մոտեցումն այն մասին, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված ակտի օրինականության ու հիմնավորվածության ստուգում գործի դատական քննության փուլում պետք է իրականացվի Երևանի քրեական դատարանի կողմից, հակասում է ՀՀ ներպետական օրենսդրությանը: Նշված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Ա.Դավալյանի վերաբերյալ գործով 28.11.2008թ. որոշման մեջ:

III. Գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից առանց քննության թողնելու իրավաչափության մասին.

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով դատարանը պարտավոր է բողոքի քննության արդյունքներով կայացնել կամ ներկայացված բողոքը մերժելու կամ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու մասին որոշում, մինչդեռ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է ներկայացված որոշումն առանց քննության թողնելու մասին որոշում, ինչը Վճռաբեկ դատարանի կարծիքով հանդիսանում է ՀՀ քրեադատավարական օրենսդրության խախտում: Սույն գործով քրեական վերաքննիչ դատարանը կայացրել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին որոշում՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ վերջինս դուրս է եկել իր իրավասության շրջանակներից և կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով չնախատեսված որոշում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2008թ. որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննության առնել այն փաստը, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ չնախատեսված որոշում, և իր որոշմամբ վերացնել և ոչ թե անփոփոխ թողնել վերջինս: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պետք է անդրադառնար այն հարցին, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, չի գործել որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

Նշված հարցի վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի գործով (20 հուլիսի 2006թ., գանգատներ թիվ 29458/04 և 29465/04) որոշման մեջ, որում նշվում

է, որ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ զանգատարկվող վարույթի կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման իմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատավարական իրավունքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են սույն գործով կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործը քննած առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշումները ամբողջությամբ պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշումը ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ LԳ/0162/06/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
գործ հ. LԳ/0162/06/08
Նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

քարտուղար

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով մեղադրյալ Գևորգ Սուրիկի Շահինյանի պաշտպանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Գևորգ Սուրիկի Շահինյանի կողմից բռնություն գործադրելու սպառնալիքով և հասարակական կարգի պահպանության պարտականությունն իրականացնող անձանց դիմադրություն ցույց տալով խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ 2008 թվականի հուլիսի 28-ին Լոռու մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. Գևորգ Շահինյանը 2008 թվականի հուլիսի 29-ին ձերբակալվել է, հուլիսի 31-ին ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

3. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բավարարվել է մեղադրյալ Գևորգ Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Վանաձորի քննչական բաժանմունքի քննիչի միջնորդությունը, Գևորգ Շահինյանի նկատմամբ որպես խափանման

միջոց ընտրվել է կալանք 2 ամիս ժամկետով, և մերժվել է Գ.Շահինյանի նկատմամբ ընտրված կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

4. Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել Գ.Շահինյանի պաշտպանը:

5. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ առանց քննության է թողել Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքը:

6. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշման դեմ հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել Գևորգ Շահինյանի պաշտպանը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

2.Գործի փաստական հանգամանքները.

7. Գևորգ Սուրիկի Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 21⁵⁰-ի սահմաններում, իրեն պատկանող «Վազ 21214» մակնիշի 55 ՍՕ 355 պետհամարանիշի ավտոմեքենայով Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 24 շենքի մոտ, ճանապարհի երթևեկելի գոտում խախտել է ՃԵԿ-ի պահանջները և չենթարկվելով ճանապարհային ոստիկանության աշխատակիցների՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու օրինական պահանջներին՝ դիմել է փախուստի: Այնուհետև, ժամը 22⁰⁰-ի սահմաններում, Գևորգ Շահինյանը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 34 շենքի դիմաց նշված հարցի շուրջ վիճաբանության մեջ է մտել ՀՀ ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ վաշտի հրամանատար Մերուժան Կարապետյանի, նույն վաշտի առաջին դասակի ՃՊՄ տեսուչներ Սիբայել Ստեփանյանի, Արծրուն Սինասյանի և Սմբատ Քառյանի հետ, որի ընթացքում բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով հասարակության նկատմամբ, դիտավորյալներ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը՝ շուրջ 30 րոպե հայհոյանքներ է տվել նրանց հասցեին, ինչը գուցորդվել է նաև Մերուժան Կարապետյանի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով և հասարակական կարգի պահպանության պարտականությունն իրականացնող անձանց դիմադրություն ցույց տալով:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել 2008 թվականի օգոստոսի 7-ին: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ նյութերն ընդունել է վարույթ և նշանակել դատական ստուգման 2008 թվականի օգոստոսի 25-ին՝ ժամը 16⁰⁰-ին:

9. 2008 թվականի օգոստոսի 25-ին Լուռու մարզի դատախազության դատախազ Խ.Մուրադյանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան այն մասին, որ քրեական գործն ըստ մեղադրանքի Գևորգ Սուրիկի Շահինյանի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

10. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը գտել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտը սահմանափակվում է նախաքննության ավարտով, հետևաբար քրեական գործի նախաքննությունն ավարտվելու և գործը դատարան ուղարկվելու պահից տվյալ դատարանն է իրավասու քննարկել ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի օրինակաչությունն ու հիմնավորվածությունը: Նշված պատճառաբանությամբ վերաքննիչ դատարանը 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ առանց քննության է թողել Լուու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը:

3.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքում նշվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինակաչության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Սակայն վերաքննիչ դատարանը, չկիրառելով վերը նշված հոդվածը, խախտել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերությունը, 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը:

Դատարանը դատական ստուգման չի ենթարկել Լուու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշման օրինակաչությունն ու հիմնավորվածությունը: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերության, 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի և դատավարական նորմի համադրումը թույլ է տալիս մեկնաբանելու, որ ստորադաս դատարանի՝ կալանավորման մասին որոշումը բողոքարկելու միջոցով վերադաս դատարանում ստուգման ենթարկելու իրավունքը պատկանում է յուրաքանչյուր կալանավորված անձի: Հետևաբար վերադաս դատարանի պոզիտիվ պարտականությունն է ստուգման ենթարկել անձին կալանավորելու մասին որոշումը, անկախ նրանից՝ գործի նախաքննությունն ավարտվել է, թե՛ ոչ:

12. Բողոքում նշվում է նաև, որ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Դատարանը վերաքննիչ բողոքը կարող է թողնել առանց քննության, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի սպառնիչ ցանկը, սակայն վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության վերոհիշյալ հոդվածով չնախատեսված հիմքով:

13. Բողոք բերած անձը գտնում է, որ վճռաբեկ դատարանի կողմից կայացվող որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ և 381-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բողոքն ընդունել վարույթ, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշումը և ընդունել նոր դատական ակտ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ և 381-րդ հոդվածների մեկնաբանության մասին.

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից: Նշված հոդվածի իմաստով վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվող ակտերը վերանայող դատարան, որի խնդիրն է նշված ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Ընդհանուր իրավասության դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման կայացումը և վերջիններիս՝ վերաքննության կարգով վերանայումը իրականացվում են տարբեր դատավարական գործառույթների շրջանակներում: Վճռաբեկ դատարանն այն տեսակետն է արտահայտում, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավունքի սահմանափակումը՝ ելնելով այն հանգամանքից՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, թե գործի դատական քննության փուլում գտնվող գործի շրջանակներում են դրանք բողոքարկվել, անթույլատրելի է: Նշված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն արտահայտված է Ա.Ղավալյանի գործով 28.11.2008թ. որոշման մեջ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը պարտավոր էր պատասխանել իր առջև դրված մի հարցի՝ արդյոք Լուու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը Գևորգ Շահինյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին հիմնավոր և օրինական է, թե՛ ոչ:

15. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ խախտել է նաև Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, երբ կալանավորումն անօրինական է: Փաստորեն վերաքննիչ դատարանը մասնա՝ ըստ էության չքննելով կալանավորման օրինականության և հիմնավորվածության հարցը՝ չի ապահովել կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը, և երկրորդ՝ այդ հարցը չի քննել ողջամիտ ժամկետում և չի կատարել անհապաղ որոշում կայացնելու իր պարտականությունը:

Նշված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն իր արտահայտությունն է ստացել Ա.Ղավալյանի գործով 28.11.2008թ. որոշման մեջ: Նշված ո-

որոշման մեջ նաև Վճռաբեկ դատարանն այն կարծիքն է արտահայտել, որ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ հարցը քննելու իրավասություն ունեցող դատարանի կողմից առանց օրենքով նախատեսված հիմքերի, կամայականորեն վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը համագեցնում է դատարանի մատչելիության իրավունքի /արդարադատության մատչելիության իրավունքի/ խախտմանը, որը նախատեսված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով:

16. Գործի նյութերից երևում է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բավարարվել է մեղադրյալ Գևորգ Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Վանաձորի քննչական բաժանմունքի քննիչի միջնորդությունը, Գևորգ Շահինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանք 2 ամիս ժամկետով, և մերժվել է Գ.Շահինյանի նկատմամբ ընտրված կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը: Իսկ 2008 թվականի օգոստոսի 25-ին Գևորգ Շահինյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է նույն դատարան: Փաստորեն, համաձայն վերաքննիչ դատարանի որոշման, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը պետք է կրկին անգամ դատական ստուգման ենթարկեր իր իսկ կողմից կայացված՝ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականությունն ու հիմնավորվածությունը, սակայն նշված դատարանը նման իրավասություն չունի: Այդպիսի լիազորությամբ օժտված է միայն վերաքննիչ դատարանը, այսինքն՝ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման իրավասությունը վերապահված է բացառապես քրեական վերաքննիչ դատարանին:

Դատավարական իրավունքի վերը նշված խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի համաձայն, դատական ակտը բեկանելու հիմք են (տե՛ս Ա.Ղավալյանի գործով Վճռաբեկ դատարանի 28.11.2008թ. որոշումը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի օգոստոսի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ԵԿԴ/0235/06/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0235/06/08
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս. ՄԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով հավատարմագրված փաստաբան Արա Չոհրաբյանի միջոցով մեղադրյալ Կարինե Վահանի Մնացականյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2007 թվականի հոկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Գևորգ Սաֆարյանի կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

2. Նշված քրեական գործի շրջանակներում 2008 թվականի մարտի 28-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել Կարինե Վահանի Մնացականյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին՝ նրան հայտնաբերելու պահից երկու ամիս ժամանակով:

3. 2008 թվականի օգոստոսի 25-ին Կարինե Մնացականյանի պաշտպաններ Ա.Խաչատրյանի և Դ.Գիրգորյանի կողմից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 28-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

4. 2008 թվականի օգոստոսի 26-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Կ.Մ.նացականյանի պաշտպանների վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնված լինելու պատճառաբանությամբ:

5. 2008 թվականի սեպտեմբերի 9-ին Կ.Մ.նացականյանի պաշտպան Ա.Խաչատրյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու համար:

6. 2008 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը պաշտպանի միջնորդությունը մերժել է: Նշված որոշման դեմ պաշտպանը 2008 թվականի սեպտեմբերի 29-ին վերաքննիչ բողոք է բերել՝ խնդրելով վերացնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումը և որոշում կայացնել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ:

7. 2008 թվականի հոկտեմբերի 9-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պաշտպան Ա.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ 2008 թվականի հոկտեմբերի 27-ին հավատարմագրված փաստաբանի միջոցով բերվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Բ.Դավենյանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի գրության համաձայն՝ քրեական գործը ըստ մեղադրանքի Կարինե Մնացականյանի ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված մեղադրական եզրակացությամբ 2008 թվականի սեպտեմբերի 30-ին ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Կ.Մ.նացականյանի պաշտպան Ա.Խաչատրյանի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման մեջ անդրադարձել է նաև Կ.Մ.նացականյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականության և հիմնավորվածության ստուգման հարցին՝ նշելով, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտը սահմանափակվում է նախաքննության ավարտով, ուստի Կ.Մ.նացականյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու և այն բավարարելու դեպքում Կ.Մ.նացականյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը չի կարող ստուգման ենթարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերող անձը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին վերապահված է ընտրված խափանման միջոցի օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում իրականացնելու գործառույթը: Այն ենթադրում է, որ վերաքննիչ քրեական դատարանը ոչ թե ընտրում է խափանման միջոց, դրանով իսկ նախաքննության նկատմամբ անմիջականորեն իրականացնելով դատական վերահսկողության գործառույթ, այլ դատական ստուգման է ենթարկում ստորադաս դատարանի կողմից կայացված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Այլ կերպ ասած, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի լուծման խնդիրն է հանդիսանում այն հարցը, թե Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից Կ.Մնացականյանին կալանքի տակ պահելու մասին որոշումը հիմնավոր և օրինական է, թե՛ ոչ: Ըստ էության, այս հարցի քննարկումը որևիցե կերպ չէր կարող պայմանավորվել նախաքննության ավարտման պատճառաբանությամբ և չէր կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման կայացման համար: Բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու չէր դատական ակտի վերանայման իր իրավասությունը վերապահել Երևանի քրեական դատարանին, քանի որ դատական ակտերի՝ վերադատության կարգով դատական ստուգման ենթարկելու իրավասությունը ՀՀ օրենսդրությամբ վերապահված է բացառապես վերաքննիչ քրեական դատարանին, որն իրավասու է դատական ստուգման ենթարկել առաջին ատյանի դատարանների երկու օղակների՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների ակտերը:

12. Բողոք բերած անձը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375.4-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:

Ի հիմնավորումն պնդման՝ բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից և կայացրել է որոշում, որը տվյալ դեպքում իրավասու չէր կայացնել: Կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փաստորեն հրաժարվել է արդարադատության իրականացումից՝ դրանով իսկ խախտելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6.1-րդ հոդվածով նախատեսված դատարանի մատչելիության իրավունքը:

13. Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր որոշմամբ ոչ միայն սահմանափակել է Կ.Մնացականյանի՝ դատարանի մատչելիությունը, որի ասպեկտներից մեկն է վերադատության կարգով բողոքների դատական քննության իրավունքը, այլև խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները, քանի որ նախ՝ ըստ էության չքննելով կալանավորման օրինականության և հիմնավորվածության հարցը՝ չի ապահովել կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը, և երկրորդ՝ այդ հարցը չի

քննել ողջամիտ ժամկետում և չի կատարել անհապաղ որոշում կայացնելու իր պարտականությունը:

14. Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջում է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) ընդհանուր իրավասության դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49-րդ գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված հոդվածը սպառնիչ չի թվարկում վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումները՝ անձին հնարավորություն տալով ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բողոքարկել նաև առաջին ատյանի դատարանի՝ օրենքով նախատեսված կարգով կայացված այլ որոշումները:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում են առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

Նույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոքներ կայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտ կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողն-

ված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար: Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382-րդ հոդվածում և 383-րդ հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները:

Այսինքն՝ դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու միջնորդության քննարկման արդյունքում դատական ակտը կայացրած դատարանը կայացնում է որոշում, որի բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասում, անուղղակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 8-րդ կետում:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելուց քրեական հետապնդման մարմնի հրաժարումը կարող է բողոքարկվել դատախազին: Բաց թողնված ժամկետը վերականգնելուց դատարանի հրաժարումը վերադաս դատարան բողոքարկման ենթակա չէ, սակայն վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով:

Այնհայտ է, որ առկա է հակասություն միևնույն հարցի կարգավորմանն ուղղված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի դրույթների միջև:

Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության առկայության դեպքում առաջնությունը տալիս է ընդհանուր մասի դրույթներին, ուստի ենթադրվում է, որ ներպետական օրենսդրությամբ ամրագրված կարգավորման մեխանիզմին համապատասխան՝ սույն գործով կիրառման ենթակա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասը:

18. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5.4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

19. Սույն գործով բողոքարկվող ակտն ուղղակիորեն կապված է անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման հետագա բողոքարկման հնարավորության հետ, և առաջինի բողոքարկման իրավունքի սահմանափակումը անխուսափելիորեն հանգեցնում է երկրորդի բողոքարկման իրավունքի սահմանափակմանը, ինչը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանի որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության ընձեռումը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այլ նորմերը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ և 380-րդ հոդվածի 2-րդ մասերի միջև առկա կոլիզիան անհրաժեշտ է լուծել՝ նախապատվություն տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասին:

20. Սույն գործով բողոքարկվել է վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն առանց քննության է թողել՝ գործով մինչդատական վարույթն ավարտված լինելու պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի մոտեցումը հակասում է ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասը, սպառնիչ թվարկելով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերը, դրանցում չի նշում գործի քննության դատական փուլի ավարտմանը վերաբերող որևէ հիմք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բողոքարկվել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը պարտավոր էր վարույթ ընդունել և որոշման կայացմամբ իր դիրքորոշումն արտահայտել վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետի վերականգնման թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ:

21. Վճռաբեկ դատարանը համաձայն չէ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ տեղ գտած այն ձևակերպմանը, որ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը սահմանափակվում է նախաքննության ավարտով: Այն պահին, երբ քրեական գործի նախաքննությունն ավարտվել է և գործն ուղարկվել է դատարան, տվյալ դատարանն է իրավասու քննարկել ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի օրինականությունն ու հիմնավորվածությունը (...)»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված որոշումների, մասնավորապես՝ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու և վերացնելու մասին որոշումների բողոքարկման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հանգում է նրան, որ անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավունքի սահմանափակումը դատավարության փուլի ավարտման պատճառաբանությամբ հակասում է ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը (նշված հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Ա. Ղազարյանի գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի ԵԶԲԴ/0299/01/08 որոշման մեջ):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատա-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

վարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Կարինե Վահանի Մնացականյան վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ ՎԲ-73/08

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
գործ 144/08Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
Դատավորներ՝ Ս.Համբարձումյան, Գ.Մելիք-Սարգսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

քարտուղար Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Արմեն Զախարի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արմեն Բաբալարյանի և Արմեն Աբրահամյանի կողմից փոխադարձ ծեծի փաստի առթիվ 2007 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2007 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ Արմեն Աբրահամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2007 թվականի հոկտեմբերի 10-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Մյունխիքի մարզի առաջին ատյանի դատարան:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունվարի 25-ի դատավճռով Արմեն Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և դատապարտվել կալանքի 1 (մեկ) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Արմեն Բաբալարյանը, որը վերաքննիչ բողոք չի բերել:

Ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Արմեն Աբրահամյանի մասով բեկանել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունվարի 25-ի դատավճիռը, կարճել է վերջինիս նկատմամբ քրեական գործի վարույթը և դադարեցրել քրեական հետապնդումը՝ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Արմեն Աբրահամյանի կողմից ստացվել է վճռաբեկ բողոքի պատասխան, որով վերջինս խնդրել է վճռաբեկ բողոքը վարույթ չընդունել՝ պատճառաբանելով, որ ինքը որևէ հանցանք չի կատարել, Ա.Բաբալարյանի նկատմամբ որևէ բռնություն չի գործադրել:

2. Գործի փաստական հանգամանքները.

4. Արմեն Չախարի Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2007 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 18-ի սահմաններում, խոտհարքի տարածքի պատկանելիության հարցի շուրջ վիճաբանության մեջ է մտել Արմեն Բաբալարյանի հետ, որի ընթացքում ծեծել և բռնի գործողություններ է կատարել նրա նկատմամբ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

5.Քրեական գործը հարուցվել է 2007 թվականի հուլիսի 25-ին Արմեն Աբրահամյանի կնոջ՝ Արաքսյա Մակունցի հայտարարության հիման վրա:

6. Քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով Արաքսյա Մակունցի իրավունքների և օրինական շահերի խախտում թույլ չի տրվել, նրան անմիջականորեն բարոյական, ֆիզիկական և գույքային վնաս չի պատճառվել:

3. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոիշխյալ հիմնավորումներով.

7. Բողոք բերած անձը գտնում է, որ վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և անօրինական, քանի որ դատարանը ճիշտ չի գնահատել ձեռք բերված ապացույցները, սխալ է մեկնաբանել օրենքը, անտեսել է հանցագործության վերաբերյալ Ա.Աբրահամյանի կնոջ կողմից վերջինիս խնդրանքով ոստիկանության բաժին ներկայացրած հայտարարությունը, իսկ հետագայում նաև Ա.Աբրահամյանի և Ա.Բաբալարյանի կողմից կատարվածի շուրջ տրված բացատրությունները, որոնք անհիմն գնահա-

տելով որպես բողոքի բացակայության և գործի վարույթը բացառող հիմք, կայացրել է այնպիսի դատական ակտ, որը խաթարում է արդարադատության բուն էությունը:

8. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերող անձը պահանջել է Արմեն Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունվարի 25-ի դատավճռին:

4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդումն այն բոլոր դատավարական գործողություններն են, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չբույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը սահմանում է մասնավոր հետապնդման, այսինքն՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի սպառիչ ցանկը, որոնց մեջ մատնանշված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածների ուժով մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է դիմողի՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամարտահայտությունից:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, եթե բացակայում է դիմողի բողոքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ դիմող հանդիսանում է յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին կամ հավատարմագրված փաստաբանին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չբույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատ-

ճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Վերոնշյալ երկու հոդվածների վերլուծությունից բխում է, որ մասնավոր մեղադրանքի գործերով «ղիմող» եզրույթը ավելի լայն է, քան «տուժողը»: Քրեական դատավարությունում «ղիմող» կարող է հանդիսանալ յուրաքանչյուր ոք, ով իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին կամ հավատարմագրված փաստաբանին: Անձը «տուժող» ճանաչվում է այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվող ստուգողական գործողությունների արդյունքում պարզվում է, որ անձի իրավունքների խախտումը արդյունք է քրեական օրենքով արգելված արարքի կատարման, և այդ արարքի կատարման հետևանքով դիմողին անմիջականորեն պատճառվել է կամ կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

«Դիմողը» քրեադատավարական գործունեության ոլորտ ներգրավվում է սեփական նախաձեռնությամբ, առանց վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման, մինչդեռ գործով «տուժող» ճանաչվելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմինները կայացնում են ինքնուրույն դատավարական որոշում: Այսինքն՝ նյութերի նախապատրաստման փուլում ՀՀ քրեադատավարական օրենսդրության իմաստով տուժող չկա, «տուժող» քրեադատավարական սուբյեկտը քրեական դատավարությունում ի հայտ է գալիս քրեական գործի հարուցումից հետո կամ գործի հարուցման հետ միաժամանակ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասում առկա այն ձևակերպումը, որի համաձայն՝ «(...) հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա (...)», հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությանը, քանի որ նշված ձևակերպմամբ ստացվում է, որ մասնավոր հետապնդման գործ հարուցելու մասին որոշում կայացվում է տվյալ դատավարական փուլում գոյություն չունեցող սուբյեկտի բողոքի հիման վրա: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում թվարկված մասնավոր հետապնդման գործերով վարույթի հարուցման հիմք պետք է դիտել ոչ թե տուժողի, այլ դիմողի բողոքը, որի բացակայության դեպքում վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

13. Վճռաբեկ դատարանը մասնավոր հետապնդման գործերով «ղիմող» դիտում է այն անձանց, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները:

Վերոնշյալ մոտեցումից բացառություն է այն դեպքը, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ Արմեն Աբրահամյանի և Արմեն Բաբալարյանի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում նրանք ծեծել և բռնի գործողություններ են կատարել միմյանց նկատմամբ: Կռվից հետո քրեական հետապնդման մարմնին բողոք է ներկայացրել Արմեն Աբրահամյանի կինը՝ Արաքսյա Մաքունցը, ում Արմեն Աբրահամյանի և Արմեն Բաբալարյանի գործողություններով անմիջականորեն չի պատճառվել և չէր էլ կարող պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Բողոքի հիման վրա հարուցվել է քրեական գործ և Արմեն Աբրահամյանին ու Արմեն Բաբալարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել, որը հետագայում հիմք է հանդիսացել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի համար նրանց ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու և դատապարտելու համար:

15. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, այնպես էլ առաջին ատյանի դատարանը թույլ են տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ մասնավոր հետապնդման վարույթ հարուցվել է ոչ թե դիմողի, այսինքն՝ այն անձի կողմից, ում իրավունքները խախտվել են քրեական օրենքով արգելված արարքի կատարմամբ, այլ երրորդ անձի կողմից, ում վնաս չի պատճառվել: Ո՛չ նախաքննության, ո՛չ դատական մարմինները ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքի վրա, որ վարույթ հարուցվել է ոչ պատշաճ սուբյեկտի բողոքի հիման վրա, այսինքն՝ գործի հարուցման հիմքը բացակայում է: Վճռաբեկ դատարանն այն դիրքորոշումն է արտահայտում, որ սույն գործով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, այն է՝ դիմողի բացակայության պատճառաբանությամբ գործով վարույթի կարճումն օրինական է և բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև 183-րդ հոդվածի 1-ին մասի իմաստից:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի այն պատճառաբանությունը, թե հանցագործության վերաբերյալ Արաքսյա Մաքունցը հայտարարությունը տվել է իր ամուսնու ցուցումով և քրեական գործը հարուցվել է հայտարարության հիման վրա նախապատրաստված նյութերով, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածների պահանջներից: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ հետևության, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա կարճել քրեական գործի վարույթը և դադարեցրել քրեական հետապնդումը:

Վերը շարադրվածը վկայում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքով նյութական կամ դատավարական օրենքի էական խախտումներ թույլ չեն տրվել, այդ առումով վերաքննիչ դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ, 35-րդ և 183-րդ հոդվածների պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը մերժել: Արմեն Ջախարի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Գործ LՂ/0197/06/08

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ LՂ/0197/06/08
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնում 2008թ. ապրիլի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 53102008 քրեական գործը:

Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ Տիգրան Վահրադյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2008թ. օգոստոսի 30-ին Տ.Վահրադյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ բավարարվել է քննիչի միջնորդությունը, և Տ.Վահրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ բավարարվել է պաշտպանի միջնորդությունը՝ Ս.Վահրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը գրավով փոխարինելու մասին: Որպես գրավի առարկա է սահմանվել 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամը:

3. Որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազության դատախազը՝ խնդրելով վերացնել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Ս.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

5. Ս.Վահրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Ֆրեդո և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն, «Վորլդ Վիժն ինտերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի Ստեփանավանի տարածքային զարգացման ծրագրի /ՏՁԾ/ ղեկավար, իր վաղեմի ծանոթ Վահագն Ալֆրեդի Գրիգորյանից 2007թ. կեսերին տեղեկանալով նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հիշյալ մասնաճյուղի կողմից կազմակերպվելիք «Տավարաբուծության զարգացումը Ստեփանավանի ՏՁԾ համայնքներում» ծրագրի շրջանակներում շուրջ 32 մլն դրամով 110 գլուխ հղի կովերի մատակարարման մրցույթի մասին, Վ.Գրիգորյանի հետ նախնական համաձայնությամբ, իր ղեկավարած ընկերության և այլ անձանց անուններից բազմաթիվ կեղծ փաստաթղթեր, այդ թվում իր մորաքրոջ դուստր անհատ ձեռնարկատեր Հերմինե Ղուկասյանի կողմից իբր 110 գլուխ կովեր մատակարարվելու, դրանք «Ֆրեդո և ընկերներ», «Օագիս Սիթի» և «Վահան և Տիգրան» ՍՊԸ-ին հանձնելու վերաբերյալ կեղծ ակտեր և այլ փաստաթղթեր կազմելու միջոցով, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել են հիշյալ մասնաճյուղի առանձնապես խոշոր չափերի՝ 32.285.000 ՀՀ դրամը, որը ծախսել են իրենց կարիքների համար:

6. Բննիչի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ - հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Ս.Վահրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ:

Բննիչի նույն օրվա որոշումներով նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և միջնորդություն է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է:

7. 2008թ. սեպտեմբերի 8-ին Ս.Վահրադյանի պաշտպան Ի.Գազարովան դիմել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Ս.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին: Ս.-

Վճարելի դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

Վահրադյանն ինքնակամ ներկայացել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշված միջնորդության քննարկմանը և մասնակցել է իր նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ դատական նիստին: Նիստի ընթացքում հայտնաբերվելով ոստիկանության աշխատակցի կողմից՝ Ս.Վահրադյանը բերման է ենթարկվել ոստիկանության Լոռու մարզային վարչություն:

8. 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է պաշտպանի միջնորդությունը և Ս.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել է գրավով:

3. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

9. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ բավարարվել է Ս.Վահրադյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել 2 ամիս ժամկետով կալանքը: Օգոստոսի 30-ի որոշման մեջ դատարանը նշել է, որ «Ս.Վահրադյանի հանցանքը հիմնավորված է իր և վկաների ցուցմունքներով, կազմված կեղծ փաստաթղթերով ու այլ ապացույցներով»:

10. 2008թ. սեպտեմբերի 8-ին Ս.Վահրադյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով Ս.Վահրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոխարինել գրավով:

11. 2008թ. սեպտեմբերի 17-ին Ս.Վահրադյանն ինքնակամ ներկայացել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ հայտնաբերվել և բերման է ենթարկվել ոստիկանության Լոռու մարզային վարչություն՝ ի կատարումն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ 2008թ. օգոստոսի 30-ի որոշման:

12. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ - հոդվածի 4-րդ մասը, Ս.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխարինվել է գրավով:

13. Դատական ստուգման արդյունքում ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ անփոփոխ է թողել ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը:

4.Վճարելի բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոք բերած անձը գտնում է, որ նախաքննության ընթացքում Ս.Վահրադյանն ամեն կերպ փորձել է խոչընդոտել քննությանը, խեղաթյուրել ճշմարտությունը և այդ նպատակով ուղղորդել վկաներին: 2008թ. օգոստոսի 30-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ս.Վահրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նույն օրը նրա

նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան: Գատարանը, հիմնավոր համարելով մեղադրյալ Ս.Վահրադյանի հանցանքն ու հաստատելով, որ նա թաքնվել է ու խուսափում է քրեական վարույթն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը:

15. 2008թ. սեպտեմբերի 17-ին նույն դատարանը նույն դատավորի նախագահությամբ մեղադրյալ Ս.Վահրադյանի պաշտպանի միջնորդության հիման վրա անդրադարձել է Ս.Վահրադյանի խափանման միջոցին և կալանքը փոխարինել է գրավով, որով փաստորեն հակասել է իր իսկ կողմից 2008թ. օգոստոսի 30-ին կայացրած որոշմանը:

16. Մեղադրյալ Ս.Վահրադյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքի առավել քան բավարար հիմնավորում էր նրա՝ հետախուզման մեջ գտնվելը, իսկ դատարանը հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ այլ խափանման միջոց ընտրելով, ամբողջությամբ հակասել է իր իսկ կողմից դեռևս 2008թ. օգոստոսի 30-ին կայացրած որոշմանը:

17. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննության առնելով առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը, այն թողել է օրինական ուժի մեջ, մինչդեռ սույն քրեական գործով ձեռք բերած նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Ս.Վահրադյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութեր թաքցնելու կամ կեղծելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու ճանապարհով:

18. Բողոք բերած անձը գտնում է, որ Ս.Վահրադյանի գործով կայացրած դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառման և «սպազայում արդարացի պատիժ նշանակելու համար»:

19. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի սեպտեմբերի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

5.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1. Մինչդատական վարույթի ընթացքում անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցի դատական քննարկմանը նրա մասնակցությունը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին. մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի դատական քննարկմանը մեղադրյալի մասնակցության միակ եղանակը նրան դատարան տանելն է, թե մեղադրյալը կարող է նաև ներկայանալ ինքնակամ:

21. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահման-

վում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը (...):»

22. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով

(...):»

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե (...) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «(...) ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի (...):»

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «անհապաղությունը» ՀՀ քրեական դատավարության իմաստով ձերբակալման եռօրյա ժամկետն է, որից հետո անձը կամ ազատ է արձակվում, կամ մինչդատական վարույթ իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվում է կալանավորումը:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝

«Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժա-

մասնակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունից բխում է, որ «տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն» կոնվենցիոնալ պահանջը ՀՀ ներպետական իրավունքում արտացոլված է դատարանում կալանավորման միջնորդության քննարկմանը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվող մեղադրյալի մասնակցությունն ապահովելու՝ այդ մարմնի պարտականության մեջ:

26. Այնուհանդերձ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված «տարվում է» արտահայտությունը մեկնաբանելով ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրության տրամաբանության ենթատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալի ներկա գտնվելը դատարանում կարող է տեղի ունենալ ինչպես նախաքննության մարմնի կողմից նրան հարկադրաբար դատարան տանելով, այնպես էլ դատական նիստին մեղադրյալի ինքնակամ ներկայանալով: Կալանավորման հարցի քննարկմանը մեղադրյալի մասնակցությունն ազատությունից զրկելու օրինականության ապահովման հիմնական երաշխիքն է, որը չի կարող արհեստականորեն նեղացվել՝ ելնելով դատարանում անձի ներկայությունը ապահովելու դատավարական եղանակներից:

27. Հետևաբար՝ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի դատական քննարկմանը մեղադրյալը կարող է մասնակցել նաև ինքնակամ ներկայանալով: Այսինքն՝ Տ.Վահրադյանը, իր նկատմամբ խափանման միջոցի դատական քննարկմանը ինքնակամ ներկայանալով (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), գործել է օրինականության սահմաններում:

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին. երբ հետախուզման մեջ գտնվող անձը հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, նա պե՞տք է արդյոք անհապաղ տարվի դատավորի մոտ:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) քննիչի որոշման հիման վրա, սույն օրենսգրքով սահմանված կարգով, հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ - պարբերության համաձայն՝ «Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման նախորդ կետում նշված իրավադրույթները, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով, չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից: Նշված իրավանորմերը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում՝ առանց հնարավորություն ընձեռելու,

որ հետախուզման արդյունքում հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեադատավարական օրենքում ամրագրված նման կարգավորումը, կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:

31. Սույն որոշման նախորդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը հիմնվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Այսպես, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը՝ Եվրոպական դատարանը Լադենտն ընդդեմ Լեհաստանի գործով վճռում նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ (Ladent v. Poland, 2008թ., գանգատ N 11036/03, կետ 75): Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը դիրքորոշումը հետևյալն է. այն, որ դատարանը հեռակա որոշում է կայացրել անձին կալանավորելու մասին այն պայմաններում, երբ անձը թաքնվում էր արդարդատությունից և գտնվում էր միջազգային հետախուզման մեջ, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Սակայն Թուրքմենստանից դիմումատուի վերադառնալուց և Ռուսաստանում ձերբակալվելուց հետո, Կոնվենցիայի 5-րդ - հոդվածի 3-րդ կետի հիման վրա, նա պետք է անհապաղ հասցվեր դատավորի մոտ (Garabaev v. Russia, 2007թ., բողոք N 38411/02, կետ 101):

32. Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ ձերբակալված կամ կալանավորված անձանց ազատությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողությունը կարևորագույն երաշխիք է ընդդեմ ազատությունից զրկված անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և իրավակիրառ մարմինների կողմից իշխանության չարաշահման (տե՛ս McKay v. The United Kingdom, 2006թ., գանգատ N 543/03, կետ 32):

Վճռաբեկ դատարանը ևս կարևորում է քրեական դատավարության շրջանակներում ազատությունից զրկված անձին անհապաղ դատարան ներկայացնելու երաշխիքային նշանակությունը:

33. Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը:

34. Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Վահրադյանի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ նրա ի հայտ գալուց հետո անհապաղ դատավորի մոտ տարվելու համար: Այդ հանգամանքը չէր կարող ազդել նաև Ս.Վահրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու խնդրանքի իրավունքի իրացման վրա:

II. Ս.Վահրադյանի նկատմամբ գրավի կիրառումը.

35. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, կայացնելով Ս.Վահրադյանի նկատմամբ ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ որոշում, հակասե՞լ է արդյոք նախկինում իր կայացրած կալանավորման որոշմանը:

36. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ (...): Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը:

Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

37. Նախորդ կետում մեջբերված իրավանդորմերի վերլուծությունից բխում է, որ գրավը, լինելով կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կարող է կիրառվել միայն այն մեղադրյալի նկատմամբ, որի նկատմամբ առկա է խափանման միջոց կալանք ընտրելու մասին դատարանի որոշումը:

Այս պարագայում եթե Վճռաբեկ դատարանն ընդունի, որ Ս.Վահրադյանին կալանավորելու և կալանքը գրավով փոխարինելու մասին դատական ակտերի միջև առկա է հակասություն, ապա դրանով գործնականում անհնարին կդարձնի խափանման միջոց գրավի կիրառման հնարավորությունը՝ ընդհանուր իրավասության դատարաններին կաշկանդելով իրենց կայացրած կալանավորման որոշումներով: Մինչդեռ անձի ազատության կանխավարկածը և մինչդատական վարույթի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը կարող են երաշխավորված լինել միայն այն պայմաններում, երբ կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս դատարանը ազատ լինի:

38. Ուստի բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ առկա է հակասություն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած կալանավորման և գրավի մասին որոշումների միջև, անհիմն է և չի բխում ոչ ներպետական իրավունքից,

ոչ էլ դրա մասը կազմող միջազգային իրավունքի նորմերից: Լռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դրսևորած մոտեցումն իրավաչափ է ինչպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրության իմաստով:

III. Տ.Վահրադյանին կալանավորելու որոշումը և նրա անմեղության կանխավարկածը.

39. Սույն գործով Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին. խախտվել է արդյոք Տ.Վահրադյանի անմեղության կանխավարկածը, երբ նրան կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված է համարվել:

40. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝

«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետետեությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

(...)

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

41. Վճռաբեկ դատարանն իր մտահոգությունն է արտահայտում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերում, մասնավորապես Տ.Վահրադյանին կալանավորելու որոշման մեջ անձի մեղավորության հարցերի քննարկման կապակցությամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա սահմանադրական և քրեադատավարական կարևորագույն սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի խախտում է:

42. Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը ձեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչդեռ խափանման միջոցը կիրառման նպատակով տարբերվում է պատժից:

Խափանման միջոցի կիրառման նպատակը քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելն է: Մասնավորապես, կալանքի, որպես խափանման միջոցի, կիրառման վարույթը միտված չէ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանն ու գնահատմանը: Այդ վարույթի նշանակությունն այն է, որ քննարկվի և լուծվի կալանավորված անձին հասարակությունից ժամանակավորապես մեկուսացնելու և հսկողության ներքո պահելու անհրաժեշտության հարցը՝ ելնելով գործի քննության շահերից:

Այլ կերպ՝ կալանավորման նպատակն է՝ նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի (կասկածյալի) դիմակայության կանխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը, ոչ թե նրան պատժելը կատարած հանցանքի, քննության ընթացում դրսևորած ոչ պատշաճ վարքագծի համար:

43. Խափանման միջոցի մասին որոշումն ընդունվում է, եթե գոյություն ունեն այդ որոշումը պարտադրող հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս), և եթե այդ հանգամանքները վերանում են, ապա քննիչը (դատարանը) մինչև գործն ըստ էության լուծելը պարտավոր է այդ որոշումը վերացնել: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անճանական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա (տե՛ս Ա.Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշման 20-րդ կետը):

Հակառակ դրան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ անձի հանցագործությունը հիմնավորված ճանաչելը հիմք է պատիժ կիրառելու համար: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցագործության մեջ անձի մեղավորությունը պետք է հաստատվի «ողջամիտ ենթադրություններից» շատ ավելի բարձր ապացուցողական չափանիշով՝ վերաբերելի փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

44. Այսպիսով, Տ.Վահրադյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նրա հանցանքը հիմնավորված ճանաչելով՝ դատարանը խափանման միջոցին հաղորդել է պատժի տարրեր, ինչն արգելված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով: Հետևաբար՝ Տ.Վահրադյանին կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված համարելը նրա անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի խախտում է:

45. Սույն որոշման 40-44-րդ կետերից բխում է, որ կալանավորումը, լինելով մեղադրյալի (կասկածյալի) դատավարական պատշաճ վարքագիծն ապահովող միջոց, կրելով ժամանակավոր և պայմանական բնույթ, չի կարող կանխորոշել հետագայում անձի մեղավորությունը մեղսագրված արարքում, առավել ևս նշանակվող «արդարացի պատիժը»:

46. Այսպիսով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անփոփոխ թողնելով Տ.Վահրադյանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը, դատական ակտը բեկանելու հիմք հանդիսացող նյութական կամ դատավարական օրենքի խախտում թույլ չի տվել: Հետևաբար, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը, հաշվի առնելով սույն որոշման մեջ բերված պատճառաբանությունները, պետք է թողնել անփոփոխ, իսկ բերված բողոքն առանց բավարարման:

47. Սույն գործով բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու սահմանադրական գործառույթի, ինչպես նաև իրավունքի զարգացման օրենսդրական գոր-

Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2006-2008թթ

ծառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Տիգրան Մայիսի Վահրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*



ԱՍՈԴԻԿ

Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ՝ 70x100 1/32, քուրթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 1000 :
Ք. Երևան, Թումանյան 15, բն. 4 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am